



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԳԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

А.Н.ОСТРОВСКИЙ



ПЬЕСЫ

ЕРЕВАН
«СОВЕТАКАН ГРОХ»,
1987.

Է.Ե.ՕՍՏՐՈՎՍԿԻ



ԴՐԱՄԱԿ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1987

Դրամա հինգ գործողությամբ

ԱՆՁԻՆՔԻ

Կազմեց
ԳՈՐԱ ՆՍԱՅԱՆԸ

- ՍԱՎԵԼ ՊՐՈԿՈՑՆԵՎԻՉ ԴԻԿՈՅ—Վաճառական, քաղաքի նշանավոր դեմքերից մեկը:
- ԲՈՐԻՍ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ—Դիկոյի եղբորորդին, երիտասարդ, բավականին կրթված:
- ՄԱՐՅԱ ԻԳՆԱՏԵՎՆԱ ԿԱԲԱՆՈՎԱ—(ԿԱԲԱՆԻՆԱ)—Հարուստ վաճառականի կին, այրի:
- ՖԻՆՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ ԿԱԲԱՆՈՎ—Նրա որդին:
- ԿԱՏԵՐԻՆԱ—Տիխոնի կինը:
- ՎԱՐՎԱՌԱ—Տիխոնի քույրը:
- ԿՈՒԼԻԳԻՆ—Քաղքենի, ինքնու-ժամագործ, որ հետամուտ է «պերպետուում-մոբիլին» գտնելու:
- ՎԱՆՅԱ ԿՈՒԴՐՅԱՇ—Երիտասարդ, Դիկոյի գործակատարը:
- ՇԱՊԿԻՆ—Քաղքենի:
- ՖԵՎԼՈՒՇԱ—Ուխտավոր կին:
- ԳԼԱՇԱ—Կարանավայի տանը ծառայող աղջիկ:
- ՏԻԿԻՆ՝ երկու սպասավորով—70 տարեկան, կիսախելագար մի կին:
- Այր և կին քաղաքացիներ:

Գործողությունը տեղի է ունենում Վոլգայի ափին, Կալինով քաղաքում, ամառը: Ց-րդ և 4-րդ գործողությունների միջև անցնում է 10 օր: Հասարակական այգի Վոլգայի բարձր ափին: Վոլգայից այն կողմ՝ գյուղական պատկեր: Բեմի վրա երկու նստառան և բփեր:

Օստրովսկի, Ա. Ն.
0 714 Պիեսներ: (Կազմ. Դ. Եսայանը, թարգմ.՝ Տ. Հախումյան, Ֆ. Մելոյան, և ուրիշներ).— Եր., Սովետ. գրող, 1987 608 էջ: (Ռուս, դաս. գ-րան):

Հատորն ընդգրկում է ռուս նշանավոր դրամատուրգ Ա. Ն. Օստրովսկու հանրահայտ պիեսները՝ «Ամպրոպ», «Անտառը», «Եկամտարիք պաշտոն», «Գայլեր և ոչխարներ» և այլն: Պիեսները, «Ամպրոպից» բացի, տրվում են նոր թարգմանությամբ:

4702010100(117) 87<Տ>
0 705(01)87

ԳՄԴ 8401

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կույրերը նստած է նստահանի և նայում է գետից այն կողմ:
Կուրբայն ու Շապկինը զրոսնում են:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—(Երգում է): «Անհուն ու լուռ դաշտում ահա, բարձրում այս հարթավայր...»: (Դադարում է երգելուց): Հրաշք է, ուղղակի պետք է ասել հրաշք: Կուրբայն՝ եղբայր իմ սիրելի, հիսուն տարի ես ամեն օր նայում եմ Վոլգայի հեռուն և աչքս ոչ մի կերպ չի կշտանում:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ի՞նչ է որ:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—Արտասովոր տեսարան է: Զմայլելի: Մարդու սիրտ է փառավորվում:

ԿՈՒԴՐՅԱՇ—Լավ դու էլ:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—Հրաշալի՞ք է: Իսկ դու ասում ես «լավ»... Կամ ձանձրացել եք նայելուց, կամ շեք հասկանում՝ ինչ գեղեցկություն է սփռված բնության մեջ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դե, լավ, կարելի՞ է քեզ հետ վիճել: Դու մեր անտիկն ես, քիմիկոսն ես...

ԿՈՒԻԼԻԳԻՆ—Մխիթանիկը, ինքնուս մեխանիկը:

ԿՈՒԴՐՅԱՇ—Միևնույն բանն է:

Լուրջում:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—(Մի կողմ ցույց տալով): Մի նայի՛ր, Կուրբայն եղբայր, այն ո՞վ է ձեռքերն այնպես թափահարում:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դա՞: Դիկոյն է եղբորորդուն հայհոյում:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—Տեղ է գտել:

ԿՈՒԴՐՅԱՇ—Նրա համար ամեն տեղ էլ տեղ է: Ումի՞ց պետք է վախենա... Բորիս Գրիգորիչն է ընկել նրա ճանկը, նրան էլ թամբել ու թշում է...

ՇԱՊԿԻՆ—Սավել Պրոկոֆիչի նման հայհոյախոս մեկն էլ կը-

ճարվի՞, տեսնես... Մարդու անմեղ տեղը կնախշի՞ կը-
թողնի:

ԿՈՒԴՐՅԱՇ—Պինդ մարդ է:

ՇԱՊԿԻՆ—Կաբանիխան էլ պակասը չի:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դե, նա գոնե ինչ որ անում է, բարեպաշտության դիմակով է անում... Իսկ սա՞ ուղղակի ոնց որ կատաղած շուն լինի:

ՇԱՊԿԻՆ—Հախիցը եկող չկա, դրա համար էլ հուր ու կայծակ է թափում:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ափսոս, ինձ նման տղաներ քիչ կան մեզանում, թե չէ նրան ձեռաց խելքի կրեբրեինք:

ՇԱՊԿԻՆ—Ի՞նչ պիտի անեիր:

ԿՈՒԴՐՅԱՇ—Աչքը մի լավ կվախեցնեիր:

ՇԱՊԿԻՆ—Այսինքն ինչպե՞ս:

ԿՈՒԴՐՅԱՇ—Այսպես, մի շորս-հինգ հոգով մութ փողոցում նրա հետ մի քիչ սրտանց կխոսեիր, կկակղեր: Մեր տված դասի համար ոչ ոքի խոսք էլ չէր ասի... Միայն ման կզար ու շորս կողմը կնայեր:

ՇԱՊԿԻՆ—Զուր չէ, որ նա քեզ ուզում էր զինվոր տալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ուզում էր, բայց հո չտվե՞ց... Դե, նույնն է, թե բան դուրս չեկավ: Զի՞ տա նա ինձ զինվոր... Զգում է, որ ես իմ գլուխն էժան չեմ ծախի... Նա ձեզ համար է սարսափելի, իսկ ես հետը խոսելու ձևը գիտե՞մ...

ՇԱՊԿԻՆ—Հավատա՞մ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Էլ ի՞նչ «հավատամ»... Ես այստեղ կուպիտ մարդու համբավ ունեմ, էլ ինչի՞ համար է ինձ պահում: Նշանակում է, ես նրան հարկավոր եմ: Դե՛, ուրեմն, ես նրանից չեմ էլ վախենում, թող ի՞նքն ինձանից վախենա:

ՇԱՊԿԻՆ—Հիմա կասես, որ նա քեզ չի էլ հայհոյում:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ինչպե՞ս չի հայհոյում: Առանց դրան նա շնչել չի կարող: Միայն թե ես էլ պարտք չեմ մնում: Նա ինձ մի խոսք, ես նրան՝ տասը... Կթքի, վերջ ի վերջո, ու կգնա... Զէ, ես նրա առջև վիզս չեմ ծռի:

ԿՈՒԻԼԻԳԻՆ—Ուրեմն ի՞նչ, նրանի՞ց օրինակ վերցնենք: Ավելի լավ է դիմանալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դե, որ դու այդքան խելոքն ես, այդ դեպքում գնա, առաջ նրան քաղաքաւարություն սովորեցրու, հետո նոր մեր գլխին քարոզ կարդա: Ափսոս, որ նրա աղջիկները դեռ երեխա են, ոչ մեկը մեծ չի:

ՇԱՊԿԻՆ— Թե չէ ի՞նչ պիտի անեիր:

ԿՈՒԴՐՅԱՇ— Խաթրը չէի կտարի... Աղջիկների նկատմամբ ես շատ անաստվածն եմ...

Անցնում են Դիկոյը և Բարիսը: Կուլիգինը զլաւարկը հաւում է:

ՇԱՊԿԻՆ— (Կուրբայաշին): Քաշվենք մի կողմ, թե չէ ո՞վ է իմանում, մեկ էլ տեսար կպավ:

Անցնում են մի կողմ:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ր Յ

Նռան, Դիկոյը և Բարիսը:

ԳԻԿՈՅ— Ի՞նչ է, շուր ծեծելո՞ւ ես եկել այստեղ, ձրիակերս Գրողի տարած:

ԲՈՐԻՍ— Տոներ են: Տանը նստեմ ի՞նչ անեմ:

ԴԻԿՈՅ— Որ ուզենաս, գործ կգտնվի: Մեկ ասացի քեզ, երկու ասացի՝ չհամարձակվես աչքիս առաջը տնկվել: Հնար չկա: էլ ուրիշ տեղ չկա՞, ի՞նչ է: Ուր որ գնամ, դու արգեն այնտեղ ես: Թո՛ւհ, անիծված: Դե, ի՞նչ ես սյան պես ցցվել, ո՞ւմ են ասում:

ԲՈՐԻՍ— Ես էլ լսում եմ, ուրիշ էլ ի՞նչ պիտի անեմ:

ԴԻԿՈՅ— (Նայելով Բարիսին): Կորի՛ր: Ես քեզ նման ճիզվիտի հետ խոսել անգամ չեմ ուզում: (Գնալով): Պատիժ է, էի, թո՛ւհ: (Թ՛ում և գնում է):

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ր Յ

Կուլիգին, Բարիս, Կուրբայաշ, Շապկին:

ԿՈՒԴՐՅԱՇ— Եվ ի՞նչ գործեր ունեք նրա հետ, պարոն, ուղղակի չենք հասկանում: Գլո՞ւխ ունեք մզտն ապրելու և հայհոյանքը տանելու...

ԲՈՐԻՍ— Ի՞նչ գլուխ, Կուլիգին, ակամայի՛ց է:

ԿՈՒԴՐՅԱՇ— Բայց ինչո՞ւ ակամայից, թույլ տվեք հարցնել Եթե կարելի է, պարոն, ասացեք, խնդրում եմ:

ԲՈՐԻՍ— Ինչո՞ւ չէ, կարելի է և ասել: Մեր տատին՝ Անֆիսա Միխայլովնային, ճանաչո՞ւմ էիք:

ԿՈՒԴՐՅԱՇ— Դեհ, ինչպե՞ս չէ, իհա՛րկե:

ԿՈՒԴՐՅԱՇ— Ինչպես չէ:

ԲՈՐԻՍ— Հորս աչքով աչք շուներ տեսնելու, որովհետև նա ամուսնացել էր ազնվատոհմ օրիորդի հետ: Հենց այդ պատճառով էլ հայրս ու մայրս ապրում էին Մոսկվայում: Մայրս պատմում էր, որ ինքը երեք օր անգամ շէր կարողանում ապրել ազգականների հետ, շատ արտասովոր էր թվում նրան այս կյանքը:

ԿՈՒԴՐՅԱՇ— Դե, իհարկե, ի՞նչ խոսք: Մեծ սովորություն պետք է ունենալ դրա համար, պարոն:

ԲՈՐԻՍ— Մեր ծնողները Մոսկվայում մեզ լավ էին դաստիարակում, ոչինչ չէին խնայում: Ինձ տվին Առևտրական ճեմարան, իսկ քրոջս՝ գիշերօթիկ դպրոց: Բայց երկուսն էլ հանկարծ խուլերայից մեռան, ես և քույրս մնացինք որբ: Հետո լուր առանք, որ մեր տատն էլ այստեղ է վախճանվել և կտակ արել, որ հորեղբայրս՝ երբ մենք շափահաս դառնանք, հատկացնի մեզ հասանելիք բաժինը, միայն մի պայմանով:

ԿՈՒԴՐՅԱՇ— Ի՞նչ պայմանով, պարոն:

ԲՈՐԻՍ— Եթե մենք հարգանքով վերաբերվենք նրան:

ԿՈՒԴՐՅԱՇ— Դա նշանակում է, պարոն, որ դուք ձեր ժառանգությունը երբեք չեք տեսնի:

ԲՈՐԻՍ— Ահ, ո՛չ, դա դեռ քիչ է, Կուլիգին: Նա սկզբից դեռ հոգիներս կհանի, կստորացնի քեֆը տվածին չափ, վերջն էլ, այնուամենայնիվ, այն կլինի, որ կամ ոչինչ չի տա, կամ մի ողորմելի բաժին կհանի և դեռ ամեն տեղ էլ կպատմի, որ խղճացել տվել է, թե չէ մենք դրան էլ արժանի չէինք:

ԿՈՒԴՐՅԱՇ— Դե, դա արդեն մեր վաճառական դասի սովորությունն է: Այնպես որ, եթե դուք հարգանքով էլ վերաբերվեք նրան, ո՞վ կարող է արգելել, որ նա շատի, Թե դուք անպատկառ եք:

ԲՈՐԻՍ—Դե, իհարկե: Նա հիմա էլ արդեն ասում է երբեմն.
«Ես ինքս երեխաներ ունեմ, ինչո՞ւ պիտի օտարներին տամ... Դրանով ես հարազատներիս եմ զրկելու...»:

ԿՈՒԴԻՑԻՆ—Վատ են, ուրեմն, ձեր գործերը, պարոն:

ԲՈՐԻՍ—Նթե մենակ ես լինեի, ոչինչ: Կթողնեի ամեն ինչ ու կհեռանայի: Բայց քույրս մեղք է: Հորեղբայրս նրան էլ էր բերել տալիս, մորս ազգականները շթողին: Գրեցին, թե հիվանդ է: Ի՞նչ օրեր պիտի քաշեր այստեղ, երևակայել դժվար է:

ԿՈՒԴԻՑԱՇ—Դե, իհարկե: Նրանք մի՞թե մարդու հետ վարվել գիտեն:

ԿՈՒԴԻՑԻՆ—Բայց ինչպե՞ս եք ապրում նրա տանը, պարոն, իբրև ի՞նչ եք ապրում:

ԲՈՐԻՍ—Իբրև ի՞նչ պիտի լինեմ... Ոչինչ: «Ապրիր,— ասում է,— ինձ մոտ, արա՛ ինչ որ կհրամայեն, իսկ ոռճիկ՝ ինչքան որ կտամ»: Այսինքն՝ մի տարուց հետո քե՛ֆն ինչ ուզենա, կանի:

ԿՈՒԴԻՑԱՇ—Դե, դա նրա սովորութունն է: Մեզանում ոչ ոք չպիտի համարձակվի խոսել ոռճիկի մասին, այնպես կհայհոյի, որ աշխարհն իրարով կանի: «Դու,— ասում է,— որտեղից գիտես, թե մտքումս ինչ կա... Մի՞թե դու կարող ես իմ սրտում եղածն իմանալ: Գուցե մտքովս անցնում է՝ քեզ հինգ հազար եմ տալիս...»: Դե այ՛ի ոչ հետք խոսիր: Միայն թե՛ մինչև այսօր նրա մտքով դեռ այդպիսի բան չի անցել...

ԿՈՒԴԻՑԻՆ—Դե, ի՞նչ արած, պարոն: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է մի կերպ հաճոյանալ նրան:

ԲՈՐԻՍ — Բանն էլ հենց այն է, Կուլիգին, որ դա ոչ մի կերպ հնարավոր չէ: Նրան իր հարազատներն էլ հաճոյանալ չեն կարողանում, ուր մնաց, որ ես:

ԿՈՒԴԻՑԱՇ—Եվ ո՞վ կարող է նրան հաճոյանալ, երբ նրա ամբողջ կյանքը հենց հայհոյանքի վրա է հիմնված: Հիմնականում՝ փողի պատճառով: Ոչ մի հաշիվ չի կարող տեսնել առանց հայհոյանքի: Ոմանք համաձայնում են հրաժարվել սեփական փողից, միայն թե նա ձեռք քաշի: Վայ է, թե մեկը հենց առավոտից նրան զայրացնի, ամբողջ օրն արդեն բոլորի հոգին կհանի:

ԲՈՐԻՍ—Հորեղբորս կինը ամեն առավոտ լալով աղաչում է բոլորին. «Տեր աստված, շքարկացնե՛ք, հոգյակներս, շքարկացնե՛ք...»:

ԿՈՒԴԻՑԱՇ—Բայց կարկի՞ր բան է... Շուկա որ ընկավ, իմացիր, որ վերջացավ: Բոլորին կնախշի: Թեկուզ վնասով ծախիր ապրանքդ, միևնույն է, առանց հայհոյելու չի հեռանա: Եվ այդպես էլ կշարունակի ամբողջ օրը:

ՇԱՊԿԻՆ—Մի խոսքով՝ մարտիկ ասա ու սրժի:

ԿՈՒԴԻՑԱՇ—Եվ այն էլ ինչպիսի՞ մարտիկ...

ԲՈՐԻՍ—Իսկ վայն եկել է, թե նրան այնպիսի մի մարդ վիրավորեց, որին ինքը չի համարձակվում հայհոյել... Այստեղ արդեն տնեցիների հոգին կհանի:

ԿՈՒԴԻՑԱՇ — Մի՞ ասեք: Մի օր կոտորվեցինք ծիծաղից: Այնպես պատահեց, որ հուսարի մեկը՝ Վուլգայի վրա սրան հայհոյեց: Ա՛յ թե հրաշքներ էր գործում:

ԲՈՐԻՍ—Ասո՞ւմ ես: Իսկ ի՞նչ հալի էին տնեցիները: Դրանից հետո բոլորն էլ մոտ երկու շաբաթ թաքնվում էին տանիքներում և նկուղներում:

ԿՈՒԴԻՑԻՆ — Այս ի՞նչ է: Ոնց որ թե ժողովուրդը ժամերգությունից դուրս եկավ:

Բեմի խորհից անցնում են մի քանի եզօր:

ԿՈՒԴԻՑԱՇ—Գնանք զբոսնելու, Շապկին: Այստեղ ինչո՞ւ ենք կանգնել:

Գրոյս են տալիս և գնում են:

ԲՈՐԻՍ—էհ, Կուլիգին, շատ դժվար է այստեղ ինձ համար՝ սովոր չեմ: Բոլորն այնպես են նայում ինձ, կարծես ավելորդ եմ, խանգարում եմ իրենց: Այստեղի սովորութուններին անծանոթ եմ: Հասկանում եմ, որ այս բոլորը մեր հարազատ ուսականն է, և, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չեմ կարողանում ընտելանալ:

ԿՈՒԴԻՑԻՆ—Եվ երբեք էլ չեք ընտելանա, պարոն:

ԲՈՐԻՍ — Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ:

ԿՈՒԴԻՑԻՆ—Դաժան բարքեր են մեր քաղաքում, տեր իմ, դաժան: Քաղքենիների շրջանում դուք ոչինչ չեք տեսնի, պարոն, բացի կոպտությունից և մերկամարմին աղբա-

տությունից: Ու մենք երբեք չենք կարող դուրս պրծնել այդ կեղևից: Որովհետև ազնիվ աշխատանքով երբեք հանապազօրյա հացից ավելի չեք կարող վաստակել: Իսկ ով փող ունի, տեր իմ, նա աշխատում է ստրկացնել աղքատին, որպեսզի նրա անվարձ աշխատանքով ավելացնի իր հարստությունը: Դուք գիտե՞ք, թե ձեր հորեղբայր Սավել Պրոկոֆիլը ի՞նչ էր պատասխանել քաղաքապետին: Գյուղացիները զանգատի էին գնացել քաղաքապետի մոտ, թե՛ Սավել Պրոկոֆիլը ոչ մեկի հետ կանոնավոր հաշիվ չի տեսնում: Դե, քաղաքապետն էլ ասում է նրան. «Լսի՛ր, Սավել Պրոկոֆիլ, դու կանոնավոր հաշիվ տես գյուղացիների հետ: Ամեն օր գանգատի են գալիս ինձ մոտ»: Իսկ ձեր հորեղբայրն այսպես ձեռքը խփել է քաղաքապետի ուսին և ասել. «է՛հ, արժե՞ արդյոք, որ մենք, ձերդ ազնվություն, այդպիսի դատարկ բաների մասին խոսենք: Տարվա մեջ ինձ մոտ այնքան մարդ է ծառայում... Դուք,— ասել է,— այսքանը միայն հասկացեք. դե՛հ, ամեն մեկին ես շատ-շատ մի երկու կոպեկ պակաս պիտի վճարեմ, իսկ այդ կոպեկներից իմ գրպանում հազարներ են գոյանում: Նրանց համար դա ոչինչ չարժե, իսկ ինձ մեծ օգուտ է»: Ահա թե ինչ, պարոն: Իսկ իրար հետ ինչպե՞ս են: Մեկը մյուսի առևտուրն է վտանգում, և այն է՝ ոչ այնքան շահախնդրությունից, որքան նախանձից: Թշնամանում են իրար հետ: Խաբելով, իրենց ապարանքներն են բերում հարբեցող գրագիրներին, այնպիսի գրագիրների, տեր իմ, որոնք մարդկային կերպարանքը կորցրել են: Եվ որանք մի շնչին ողորմության համար չարամիտ ու զրպարտիչ մատնություններ են գրում մերձավորների հասցեին: Եվ սկսվում է, տեր իմ, երկար ու խայտառակ դատ ու դատաստանը, ու դրան վերջ չկա: Դատվում են, դատվում են այստեղ, հետո էլ նահանգ են գնում, իսկ այնտեղ արդեն նրանց սպասում են և ուրախությունից ձեռքներն են շփում... Հեքիաթը շուտ է ասվում, բայց գործը շուտ չի արվում... Դե, և քաշքշում են նրանց, քաշքշում են այստեղ ու

այնտեղ, իսկ նրանք դեռ ուրախ են այդ քաշքշոցին, նրանց ուզածն էլ հենց այդ է: «Ես ասում է, ծախսի տակ կընկնեմ, բայց նրա հոգին էլ քթածակերից դուրս կըգա»... Նույնիսկ ուզում էի այս ամենը ոտանավորով նկարագրել...

ԲՈՐԻՍ— Իսկ դուք ոտանավոր գրել կարողանո՞ւմ եք:

ԿՈՒԼԻԳԻՆ— Հների ձեռով, տեր իմ: Կարդացել եմ ժամանակին Լոմոնոսովի, Դերժավինի գործերը... Իմաստուն մարդ էր Լոմոնոսովը, բնագետ էր... Բայց, տեսեք, էլի մեզնից էր, հասարակ դասից:

ԲՈՐԻՍ— Դե, գրեք, էլի: Դա շատ հետաքրքրական կլինի:

ԿՈՒԼԻԳԻՆ— Ինչպե՞ս կարելի է, տեր իմ: Կուտեն, ողջ-ողջ կուլ կտան: Ես առանց այդ էլ տուժում եմ իմ երկար լեզվի համար: Բայց, ի՞նչ արած, չեմ կարողանում, սիրում եմ լեզուս թրջել: Ուզում էի մի քիչ էլ ընտանեկան կյանքի մասին պատմել ձեզ, պարոն, բայց մնա մի ուրիշ անգամ... Իսկ լսելու բան շատ կա...

Մտնում են Ֆեկուշևն և մի ուրիշ կին:

Ֆեկուշև— Վեհություն է, սիրելիս, վեհություն... Երեղություն աստվածային... էլ ի՞նչ կարելի է ասել: Երանելի երկրում եք ապրում... Եվ վաճառականությունն էլ ամբողջը բարեպաշտ ժողովուրդ է՝ բազում բարեմասնություններով զարգարյալ... Առատաձեռնությամբ և անթիվ նվիրաբերություններով... Ես այնքան գոհ եմ, սիրելիս, այնքան գոհ եմ, որ էլ չափ չկա... Մեզ անտեր շթողնելու համար առավել կբազմանա տիրոջ առատաձեռնությունը, մանավանդ Կաբանովների տանը:

Գնում են:

ԲՈՐԻՍ— Կաբանովների՞:

ԿՈՒԼԻԳԻՆ— Սուտ բարեպաշտի մեկն է, տե՛ր իմ: Աղքատներին բաժին է հանում, իսկ յուրայինների կյանքը կերել է:

Լուսրյուն:

Այ թե ես այդ պերպետու-մոբիլը կգտնեի:
ԲՈՐԻՍ—Ի՞նչ կանեիր այն ժամանակ:

ԿՈՒԼԻԳԻՆ—Ի՞նչ եք ասում, սյարոն: Անգլիացիները, չէ՞ որ, դրա համար միլիոն են տալիս: Ես ամբողջ այդ գումարը հասարակության օգտին կգործադրեի, նրան օգնելու համար: Քաղաքներս անապատներ պիտի տալ: Թե չէ, աշխատող ձեռքեր կան, իսկ գործ չկա:

ԲՈՐԻՍ — Իսկ դուք հույս ունե՞ք այդ պերպետու-մոբիլեն գտնելու:

ԿՈՒԼԻԳԻՆ—Անպայման, տեր իմ: Միայն թե կարողանամ հիմա մոզելի համար փող գտնել: Մնաք բարով, տեր իմ:

(Գնում է):

Տեսարան չորրորդ

ԲՈՐԻՍ—(Մեռակ): Մեղք է, որ հիասթափեցնեմ: Ինչքան լավ մարդ է: Ինքն իրեն երազում է ու երջանիկ է: Իսկ ինձ, ըստ երևույթին, վիճակված է հենց այսպես էլ կործանել իմ երիտասարդությունն այս խուլ անկյունում: Արդեն բոլորովին սպանվածի նման եմ ման գալիս, բայց, տես, որ հազար ու մի հիմարություն է խելքիս փչում... Եվ ի՞նչ տեղն է, ախր... Ես կարո՞ղ եմ, միթե, սիրաբանություններ անել... Քշված եմ ու հալածված, և, համեցեք՝ հիմարաբար էլ սիրահարվել եմ: Եվ այն էլ ո՞ւմ: Մի կնոջ, որի հետ ինձ երբեք խոսել անգամ չի հաջողվի:

Լուսյուն:

Բայց և այնպես մտքիցս երբեք չի հեռանում: Ահա նա: Գալիս է ամուսնու հետ, դե, սկեսուրն էլ հետն է: Ահ, մի՞թե հիմար չեմ ես: Նայիր մի անկյունից և գնատուն: (Գնում է):

Հակառակ կողմից գալիս են Կարանովան, Կարանովը, Կատերինան և Վարվառան:

Տեսարան հինգերորդ

Կարանովան, Կարանով, Կատերինա և Վարվառան:

ԿԱՐԱՆՈՎԱ—Եթե ուզում ես մորդ խոսքը լսել, ապա հենց որ տեղ հասար՝ արա այնպես, ինչպես որ քեզ հրամայել եմ:

ԿԱՐԱՆՈՎ—Ես կարո՞ղ եմ ձեր խոսքը չլսել, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դե, հիմա մեծերին այնքան էլ չեն հարգում: ՎԱՐՎԱՌԱ—(Ինքն իրեն): Ապա մի փորձիր քեզ չհարգել, ինչպե՞ս չէ:

ԿԱՐԱՆՈՎ—Ես, կարծեմ, ձեր կամքից երբեք էլ դուրս չեմ եկել, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Կհավատայի ես քեզ, սիրելիս, եթե միայն աշքովս տեսած և ականջովս լսած չլինեի, թե զավակներն այժմ ինչպես են հարգում ծնողներին: Գոնե նայնքանը միայն հիշեին, թե ինչքա՞ն, ինչքա՞ն հիվանդություններ են քաշում մայրերն իրենց երեխաների ձեռքից:

ԿԱՐԱՆՈՎ—Ես, մայրիկ...

ԿԱՐԱՆՈՎԱ—Եթե ծնողը մեկ-մեկ էլ ձեր հպարտությունը վիրավորող մի խոսք ասի, ապա, ես կարծում եմ, կարելի է և դիմանալ: չը՞, ինչպե՞ս ես կարծում:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց, ախր, մայրիկ, այդ ե՞րբ է եղել, որ ես չեմ համբերել ու դիմացել:

ԿԱՐԱՆՈՎԱ—Մայրդ ծեր է, հիմար է, իսկ դուք, ջահելներդ, խելոքներդ, մեր՝ հիմարներիս հանդեպ չպիտի պահանջկոտ լինեք:

ԿԱՐԱՆՈՎ—(Հառաչելով, մի կողմի վրա): Ահ, տեր աստված (Մորը): Բայց մի՞թե մենք կհամարձակվենք մտածել անգամ, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Ծնողներն, ախր, եթե խստապահանջ են լինում, չէ՞ որ ձեզ սիրելուց է, ձեզ սիրելուց են երբեմն և նախատում, ուզում են ձեզ լավն ու բարին սովորեցնել: Դե, իսկ հիմա այդ բանը շատերին դուր չի գալիս: Եվ ահա, գնում են զավակները այստեղ ու այնտեղ բամբասելու, թե՛ մայրիկս շատախոս է, փրկե՛-

փրկեցող է, թե նա մեզ օր ու արև չի տալիս: Իսկ, տեր մի՛ արասցե, հարսիդ մի թարս բան ասես, կսկսվի իսկույն խոսք ու զրույցը, թե կեսուրս հոգիս հանել է և այլն...

ԿԱՐԱՆՈՎ—Բայց մի՛ թե, մայրիկ, մենք բան ենք խոսել ձեր մասին:

ԿԱՐԱՆՈՎԱ—Չեմ լսել, սիրելիս, չեմ լսել, չեմ ուզում սուտ խոսել: Եթե լսած լինեի, ես քեզ հետ, սիրելիս, այն ժամանակ այսպես չէի խոսի... (Հառաչում է): Ահ, ծանրը մեղք է, ծանր... Եվ դժվար է, մի՛ թե, մեղանչի... Սրտին մոտիկ զրույց կբացվի, և կմեղանչես, կզայրանաս: Ոչ, սիրելիս, ասա իմ մասին ինչ որ ուզում ես: Ով կարող է, ախր, արգելել, որ շխոսեն, երեսիդ եթե սիրտ շանեն՝ հետևիցդ հո՞ կխոսեն:

ԿԱՐԱՆՈՎ—Թող չորանա լեզուս, եթե...

ԿԱՐԱՆՈՎԱ—Բավական է, լավ, մի՛ երգվիր: Մեղք է: Ես արդեն վաղուց եմ տեսնում, որ կինդ քեզ համար մորիցդ ավելի սիրելի է: Այն օրից, ինչ ամուսնացել ես, ես այլևս առաջվա սերը չեմ տեսնում քեզնից:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց, ախր, դա ինչի՞ց է երևում, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Ամեն բանից, սիրելիս, ամեն բանից: Մայրը եթե շատ բան աչքով շտեսնի էլ, նրա սիրտը հո՞ իմաստուն է, սրտով կարող է զգալ: Թե միգուցե կի՞նդ է քեզ ինձնից հետ քաշում, չգիտեմ:

ԿԱՐԱՆՈՎ—Ահ, ոչ, մայրիկ, ինչե՞ր եք ասում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինձ համար, մայրիկ, թե՛ դու, թե՛ հարազատ մայրս՝ նույնն եք, և Տիխոնն էլ քեզ սիրում է նույնպես:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դու կարող էիր և լուել, երբ որ քեզ չեն հարցնում: Մի՛ պաշտպանիր, սիրելիս, չեմ վիրավորի: Չէ՞ որ նա նաև ի՛մ որդին է, դու այս երբեք մի՛ մոռանա: Ի՞նչ պատահեց, որ ձեռաց դուրս պրծար, աչքիս առաջ տնկվեցիր: Որ ցույց տաս, թե ինչպես ես սիրում մարդո՞ւղ: Դե, գիտենք, գիտենք, երեսանց դու այդ բոլորին էլ ցույց ես տալիս:

ՎԱՐՎԱՌԱ—(Ինճե իրեն): Տեղ գտավ խրատներ կարգալուս:

ԿԱՏԵՐԻՆԱ—Իմ մասին, մայրիկ, դու այդ իզուր ես ասում:

Ի՞նչ մարդկանց առջև, ի՞նչ մեն-մենակ, ես միշտ էլ նույնն եմ և ոչ մի բան էլ չեմ ուզում ցույց տալ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դե, ես քո մասին խոսել էլ չէի ուզում: Այնպես, տեղն եկավ՝ ասացի:

ԿԱՏԵՐԻՆԱ—Շենց տեղն էլ գար, ինչո՞ւ ես ինձ վիրավորում: **ԿԱՐԱՆՈՎԱ**—Ի՞նչ մի մեծ բան ես: Ու ձեռաց էլ վիրավորվում ես:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ո՞վ կուզենա, ախր, զրպարտության զոհ դառնալ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Գիտեմ, գիտեմ, որ իմ խոսքերը ձեզ դուր չեն գալիս, բայց, դե, ի՞նչ արած, ես ձեզ համար օտար չեմ և իմ սիրտը ցավում է ձեզ համար: Ես վաղուց եմ տեսնում, որ դուք ազատություն եք ուզում: Դեհ, թող այդպես լինի, դրան էլ կարժանանաք, ազատ էլ կապրեք, երբ որ ես այլևս չեմ լինի: Այն ժամանակ արեք, ինչ որ ուզում եք, էլ ձեզ վրա մեծ չի լինի: Եվ ո՞վ գիտե, գուցե հիշեք ինձ...

ԿԱՐԱՆՈՎ—Բայց մենք, մայրիկ, ախր, օր ու գիշեր ազոթում ենք աստծուն, որ առողջություն և ամեն տեսակ բարիք տա ձեզ և ձեր գործերին ամենայն հաջողություն:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դե, լավ, վերջ տուր, խնդրում եմ: Շատ հարավոր է, որ սիրում էիր մորդ, քանի դեռ ամուսին էիր: Չիմա դու գլո՞ւխ ունես ինձ հետ, ջահել կնոջ տեր ես:

ԿԱՐԱՆՈՎ—Մեկը մյուսին չի խանգարում... Կինն իր հերթին, իսկ դեպի ծնողս ես, իհարկե, հարգանք և սեր ունեմ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Ուրեմն, կինդ կփոխանակե՞ս մորովդ: Որ սպասես էլ, ես դրան չե՛մ հավատա:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց, ախր, ինչո՞ւ պիտի փոխանակեմ: Ես երկուսիդ էլ սիրում եմ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դե, իհարկե, հեքիաթներ պատմիր... Ես տեսնում եմ արդեն, որ խանգարում եմ բոլորիդ:

ԿԱՐԱՆՈՎ—Մտածեք ինչպես որ ուզում եք, կամքը ձերն է: Ես չգիտեմ միայն, թե ինչո՞ւ եմ այսքան դժբախտ մարդ ծնվել, որ ոչ մի բանով չեմ կարողանում ձեզ գոհացնել:

ԿԱՌԱՆՈՎԱ.—Ի՞նչ ես գու էլ որք ձևանում: Ի՞նչ ես պոռշնիրդ կախ պցել... Դու ի՞նչ ամուսին ես: Ապա մի նայիր ինքդ քեզ: Սրանից հետո կինդ քեղնից երկյուղ կունենա՞:

ԿԱՌԱՆՈՎ.—Բայց, ախր, ինչո՞ւ պիտի երկյուղ ունենա: Ինձ համար բավական է և այն, որ նա ինձ սիրում է:

ԿԱՌԱՆՈՎԱ.—Ինչպե՞ս թե, ինչպե՞ս թե երկյուղ չունենա: Դու, ի՞նչ է, ցնդե՞լ ես... Քեզնից որ երկյուղ չունենա, ինձնից հո չի ունենա ու չի ունենա... էլ ի՞նչ կարգ կլինի տան մեզ այդ դեպքում: Չէ՞ որ դու նրա հետ օրինավոր ամուսնություն մը ես ապրում: Թե՞ ձեզ համար օրենքն էլ ոչ մի նշանակություն չունի: Դե, եթե գրեթե այդպիսի ապուշ մտքեր ունես, գոնե զգուշանայիր և կնոջդ մտք դուրս չտայիր: Եվ մեկ էլ՝ քրոջդ մտք, նա էլ, չէ՞ որ մարդու պիտի գնա... Լավ ես անում. թո՞ղ լսի խոսքերդ, և հետո ամուսինն էլ մեզ շնորհակալություն կասի լավ խրատներդ համար... Տեսնո՞ւմ ես ինչ խելքի տեր ես և դեռ ուզում ես քո կամքով ապրել:

ԿԱՌԱՆՈՎ.—Ահ, մայրիկ, ես իմ կամքով չեմ էլ ուզում ապրել... Ես ինչպե՞ս կարող եմ ապրել իմ կամքով:

ԿԱՌԱՆՈՎԱ.—Ուրեմն, քո ասելով, միայն սիրով ու փաղաքշանքով պիտի վերաբերվել կնոջ հետ: Ուրեմն ձա՞յն էլ չի կարելի բարձրացնել նրա վրա, սպառնա՞լ էլ չի կարելի...

ԿԱՌԱՆՈՎ.—Բայց, ախր, ես...

ԿԱՌԱՆՈՎԱ.—(Տախաբար): Թեկուղ սիրեկան էլ ունենա: Այո՞: Ա՞յս էլ ոչինչ քո կարծիքով: Հը՞: Դե, խոսիր...

ԿԱՌԱՆՈՎ.—Ախր, աստված վկա, մայրիկ...

ԿԱՌԱՆՈՎԱ.—(Բոլորովին սառնարյուն): Հիմար: (Հառաչում է): Կարելի՞ է խոսել հիմարի հետ: Միայն մեղքի տակ կքնկենա...

Կարծրություն:

Ես գնում եմ տուն:

ԿԱՌԱՆՈՎ.—Մենք էլ շուտով կգանք, միայն մի երկու անգամ բուլվարով անցնենք:

ԿԱՌԱՆՈՎԱ.—Ինչպես ուզում եք: Միայն թե տես, որ ձեզ շատ շտապանմ: Գիտես, որ ես այդ չեմ սիրում:
ԿԱՌԱՆՈՎ.—Ոչ, մայրիկ, աստված մի արասցե:
ԿԱՌԱՆՈՎԱ.—Այ, այդպես... (Գնում է):

Տ Ե Ս Ի Ր Ա Ն Վ Ե Գ Ե Բ Ո Ր Դ

Նրանք, առանց Կարանովի:

ԿԱՌԱՆՈՎ.—Ահա, տեսնում ես, քո պատճառով մայրս շարունակ ինձ նախատում է: Այսպես էլ կյա՞նք կլինի:
ԿԱՏԵՐԻՆԱ.—Բայց, ախր, ես ինչո՞վ եմ մեղավոր:

ԿԱՌԱՆՈՎ.—Ես գիտե՞մ, թե ո՞վ է մեղավոր:

ՎԱՐՎԱՌԱ.—Դու ի՞նչ գիտես որ...

ԿԱՌԱՆՈՎ.—Մի ժամանակ գլուխս տանում էր. «Ամուսնացիր, հա ամուսնացիր, գոնե,— ասում էր,— պակաս թե տեսնեմ քեզ»: Իսկ հիմա օր ու արև չի տալիս, հոգիս հանել է և բոլորը քո պատճառով:

ՎԱՐՎԱՌԱ.—Բայց մի՞թե նա մեղավոր է: Մայրիկը վրան հարձակվում է, և դու էլ՝ նույնպես: Եվ դեռ ասում ես, թե սիրում ես կնոջդ: Սիրտս տխրում է քեզ նայելիս (Երեսը դարձնում է):

ԿԱՌԱՆՈՎ.—Դե, ասում ես դու էլ: Ես ի՞նչ կարող եմ անել:

ՎԱՐՎԱՌԱ.— Գիտցիր քո գործը, լո՞ր, եթե ավելի լավ ոչինչ չես կարող անել: Ի՞նչ ես կանգնել, ասես փշերի վրա լինես: Անքերիցդ էլ տեսնում եմ, թե ուզածդ ինչ է:

ԿԱՌԱՆՈՎ.—Իսկ ի՞նչ է որ:

ՎԱՐՎԱՌԱ.—Հայտնի է ինչ է: Սավել Պրոկոֆիլի մոտ ես ուզում գնալ, խմել ես ուզում նրա հետ: Ի՞նչ է, այդպես չէ՞:

ԿԱՌԱՆՈՎ.—Կոստեցիր...

ԿԱՏԵՐԻՆԱ.—Միայն թե, Տի՛շա, շուտ վերադարձիր, թե չէ մայրիկն էլի կսկսի նախատել:

ՎԱՐՎԱՌԱ.—Իսկապես, շուտ արա, թե չէ հո գիտե՞ս...

ԿԱՌԱՆՈՎ.—Ինչպես չգիտեմ:

ՎԱՐՎԱՌԱ—Մենք էլ գլուխ չունենք քո պատճառով նախա-
տինք բնդունելու:

ԿԱՔԱՆՈՎ—Ես իսկույն կգամ: Սպասեցեք ինձ: (Գնում է):

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Յ Ե Ր Ո Ր Ղ

Կատեբեա և Վարվառ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ուրեմն դու, Վարյա, խղճո՞ւմ ես ինձ:

ՎԱՐՎԱՌԱ—(Մի կողմ նայելով): Դե, իհարկե, մեղք ես:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ուրեմն դու ինձ սիրո՞ւմ ես, հա՞: (Ձեռմազին համբուրում է նրան):

ՎԱՐՎԱՌԱ—Ախր, ինչու պիտի շփրեմ, որ...

ԿԱՏԵՐԻՆԱ—Ախ, շնորհակալ եմ քեզնից... Դու այնքան լավն
ես, ես ինքս էլ քեզ անշափ սիրում եմ:

Լուսյուն:

Գիտե՞ս ինչ անցավ մարդվս, Վարյա:

ՎԱՐՎԱՌԱ—Ի՞նչ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինչո՞ւ մարդիկ չեն թռչում:

ՎԱՐՎԱՌԱ—Չեմ հասկանում, թե ի՞նչ ես ասում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ասում եմ՝ ինչո՞ւ մարդիկ թռչունների նման
չեն թռչում: Գիտե՞ս, ինձ երբեմն այնպես է թվում, թե
ես թռչում եմ: Երբ կանգնած ես լեռան դադաթին, ուղ-
գակի ուզում ես թռչել, հազիվ ես զսպում քեզ: Հնար
լինե՞ր՝ կվազեի այսպես, ձեռքերս կբարձրացնեի և կը-
թռչեի: Չփորձե՞մ հիմա: (Ուզում է վազել):

ՎԱՐՎԱՌԱ— Ինչե՞ր ես հնարում:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Հառաչում է): Ինչ ուրախ ու կայտառ էի, Վար-
յա: Չէր տանը ես բոլորովին թառամել եմ:

ՎԱՐՎԱՌԱ—Դու կարծում ես, ես չե՞մ տեսնում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Մի՞թե այսպիսին էի ես: Ապրում էի՝ ոչ մի հոգս
չունեի, ինչպես թռչունը, ազատ ու անկախ: Մայրս
իր կյանքը չէր խնայում ինձ համար, զուգում, զարդա-
րում էր ինձ տիկնիկի նման, չէր ստիպում, որ գործ
անեմ... Ինչ որ սիրտս ուզում էր, այն էլ անում էի:

Գիտե՞ս ինչպես էի ապրում ես աղջիկ ժամանակս: Այ, հիմա կպատմեմ քեզ: Առավոտները վաղ վեր կկենա-
լի: Եթե ամառ էր՝ կգնայի պաղ աղբյուրի մոտ, կլվաց-
վեի, ջուր կբերեի հետս և տան բուրբ, բուրբ ծաղիկ-
ները կչրհի: Ես շա՛տ-շա՛տ ծաղիկներ ունեի: Հետո
մայրիկիս հետ կգնայի եկեղեցի: Բոլո՞րս՝ ուխտավոր
կանայք էլ. մեր տունը միշտ լիքն էր ուխտավոր կա-
նանցով: Իսկ եկեղեցուց վերադառնալուց հետո կնըս-
տեինք որևէ գործի. ավելի հաճախ՝ ոսկեթելով թավիչ
ասեղնագործելու. իսկ ուխտավոր կանայք էլ կսկսեին
պատմել, թե որտեղ են եղել, ինչեր են տեսել, կամ՝
սրբերի կյանքից, և կամ թե սաղմոսներ կերգեին: Այս-
պես էր անցնում ժամանակը մինչև ճաշ: Հետո պառավ-
ները կպառկեին հանգստանալու, իսկ ես կզբոսնեի
պարտեզում: Այնուհետև կգնայինք ժամերգության, իսկ
երեկոյան՝ նորից պատմություններ ու երգեր... Այնքա՛ն,
այնքան լավ էր:

ՎԱՐՎԱՌԱ—Ախր, նույնն էլ մեզ մոտ է...

ԿԱՏԵՐԻՆԱ—Հա, բայց այստեղ ամեն ինչ կարծես բռնու-
թյամբ է կատարվում: Ես անշափ սիրում էի եկեղեցի
գնալ: Կարծես, դրախտ էի մտնում, և ոչ ոքի չէի տես-
նում և չէի էլ իմանում, թե երբ է վերջանում արարո-
ղությունը: Կարծես ամեն ինչ կատարվում ու անցնում
էր մի վայրկյանում: Մայրիկը միշտ ասում էր, թե եր-
բեմն բուրբը ինձ էին նայում դարմացած: Գիտե՞ս, արե
օրերին գմբեթի կատարից լուսեղեն մի սյուն է իջնում
դեպի ցած, և այդ սյան մեջ ծուխն է գալարվում ամ-
պերի նման. ինձ թվում էր, թե հրեշտակներ եմ տես-
նում այդ սյան մեջ, հրեշտակներ, որոնք թռչում էին
ու երգում: Կամ թե՛ պատահում էր, աղջիկ ժամանակս,
արթնանում եմ գիշերը, մեր տանն էլ գիշերները ամեն
տեղ կանթեղներ էին վառվում, և մի որևէ անկյունում
աղոթում, աղոթում եմ մինչև լույս... Կամ թե վաղ առա-
վոտյան կիջնեի պարտեզ. արևը դեռ նոր էր. սկսում
ծագել, կընկնեի ծնկաչոք և կաղոթեի ու լաց կլիներ
և ինքս էլ չէի իմանա, թե ինչո՞ւ եմ աղոթում, ինչո՞ւ եմ
լալիս... Գիտեի միայն, որ ոչինչ չեմ ուզում և գո՛հ եմ

ամեն բանից... Իսկ ի՞նչ երազներ էի տեսնում, Վարենկա, ի՞նչ երազներ... Կամ տաճարներ ոսկեկառույց, կամ ինչ-որ արտասովոր այգիներ, և ամեն տեղ անտեսանելի ձայներ են երգում և բուրում են մշտադալար նոճիները, և սարերն ու ծառերը, կարծես այնպես շեն, ինչպես որ իրականում, այլ՝ ինչպես որ նկարում են սրբապատկերների վրա: Կամ թե՛ մեկ էլ տեսնում էի, իբր թռչում եմ, թռչում եմ օդում: Հիմա էլ երբեմն տեսնում եմ երազներ, բայց այլևս այն չէ:

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ է ապա:

ԿԱՏԵՐԻՆԱ.— (Դադարից հետո): Ես կմեռնեմ շուտով:

ՎԱՐՎԱՌԱ.— Ինչե՞ր ես խոսում: Բավական է:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ձէ, Վարյա, ես գիտեմ, որ մեռնելու եմ: Ահ, սիրելիս, զգում եմ, որ ինչ-որ վատ բաներ են կատարվելու... Ինչ-որ հրաշք: Ծրբեք այսպես չէր եղել: Ինչ-որ արտասովոր բան կա իմ մեջ... Կարծես նորից եմ սկսում ապրել, կամ... ինքս էլ չգիտեմ...

ՎԱՐՎԱՌԱ.— Բայց ի՞նչ է պատահել քեզ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— (Քոնելով նրա ձեռքը): Ահա թե ինչ, Վարյա, ինչ-որ մեղք է կատարվելու... Այնպիսի ահ ու երկյուղ է պատել սիրտս, այնպիսի երկյուղ... Կարծես կանգնած եմ անդունդի եզրին և ինչ-որ մեկը հրում է ինձ այնտեղ, իսկ ոչ մի հենարան ես չունեմ... (Քոնում է գլուխը):

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ է պատահել քեզ... Առո՞ղջ ես:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Առողջ եմ... Ծրանի հիվանդ լինեի, թե չէ վատ է: Ինչ-որ ցնորք է պաշարել ինձ: Եվ ոչ մի տեղ չեմ կարող փախչել նրանից: Սկսում եմ մտածել և ոչ մի կերպ չեմ կարողանում հավաքել մտքերս: Աղոթել եմ սկսում՝ չի գոհացնում և աղոթքը: Լեզվով ինչ-որ խոսքեր եմ շնչում, իսկ մտքերս բոլորովին ուրիշ տեղ են: Կարծես սատանան ականջիս շարունակ հանցավոր մըտքեր է շնչում: Եվ այնպիսի բաներ են պատկերանում աչքիս, որ ինքս ինձնից ամաշում եմ: Ի՞նչ է սա, Վարյա: Դժբախտություն է գալու գլխիս, դժբախտություն: Գիշերները չեմ կարողանում քնել, շարունակ ինչ-որ շշուկներ եմ լսում, ինչ-որ մեկը կարծես քնքշորեն

խոսում է հետս, կարծես շոյում է ինձ, մնչում է աղավնյակի նման: Այլևս չեն գալիս, Վարյա, առաջավա երազները. այն ծառերը դրախտային, սարերը՝ այլ՝ կարծես, գրկում է ինձ մեկը ջերմագին և տանում է հեռու, հեռու, և ես հետևում եմ նրան, գնում եմ...

ՎԱՐՎԱՌԱ.— Ինչ ես ասում...

ԿԱՏԵՐԻՆԱ.— Բայց ինչո՞ւ եմ ասում քեզ այս ամենը. դու չէ՞ որ աղջիկ ես դեռ:

ՎԱՐՎԱՌԱ.— (Շուրջը նայելով): Խոսիր, ես քեզնից վատն եմ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ահ, ինչ ասեմ ես քեզ: Ամաշում եմ, Վարյա: ՎԱՐՎԱՌԱ.— Ասա, ոչինչ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ահ, Վարյա, այնքա՛ն վատ եմ լինում, այնքա՛ն... Շունչս ուղղակի կտրվում է տան մեջ, քիչ է մնում փախչեմ գնամ... Եվ այնպիսի մտքեր են գալիս, որ եթե իմ կամքը լիներ, ես հիմա սուրալիս կլինեի նավակով Վոլգայի վրա՝ երգով ու խաղով, կամ թե մի լավ տրոյկայով, գրեված...

ՎԱՐՎԱՌԱ.— Միայն թե ոչ մարդուդ հետ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Իսկ դո՞ւ որտեղից գիտես:

ՎԱՐՎԱՌԱ.— Ա՞յդ էլ չիմանամ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ահ, Վարյա, հանցավոր եմ իմ մտքերը: Որքան եմ լացել ու ողբացել ինքս ինձ, ինչե՛ր ասես, որ չեմ արել. հնար չկա, կատարվելու է այդ մեղքը, ոչ մի տեղ չեմ կարող փախչել... Ձէ՞ որ դա լավ չէ, Վարյա, չէ՞ որ դա մահացու մեղք է, որ ես ուրիշին եմ սիրում:

ՎԱՐՎԱՌԱ.— Ինչպե՞ս դատապարտեմ ես քեզ: Ես ինքս էլ մեղքեր ունեմ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Բայց ի՞նչ անեմ ես: Այլևս դիմադրելու ուժ չունեմ: Գլուխս ուր առնեմ կորչեմ: Մի վատ բան կանեմ ես կարոտից, Վարյա:

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ ես ասում: Ի՞նչ եղավ քեզ: Ահա, սպասիր, եղբայրս վաղը կգնա, մի բան կմտածենք, գուցե և հնարավոր կլինի տեսնվել...

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ոչ, ոչ... Պետք չէ: Ինչե՛ր ես ասում: Ցնորվե՛լ ես, աստված իմ:

ՎԱՐՎԱՌԱ.— Ինչո՞ւ այդպես վախեցար:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Եթե գոնե մեկ անգամ տեսնվեմ նրա հետ,

կփախչեմ տնից, այլևս ոչ մի գնով տուն չեմ վերադառնա:

ՎԱՐՎԱՌԱ.— Դեռ սպասիր՝ հետո կտեսնենք:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ոչ, ոչ, էլ շատես այդ խոսքը, լսել անգամ չեմ ուզում:

ՎԱՐՎԱՌԱ.— Ապա ինչո՞ւ ես այդպես հայրումաշ լինում: Թեկուզ կարոտից էլ մեռնես, կխղճա՞ն քեզ: Ինչպե՞ս չէ, սպասիր: Այնպես որ՝ իղուր ես քեզ այդպես տանջում:

Գայիս է գավազանով ճարտատ տիկինը և ետևից՝ եռանկյուն գլխակներով երկու սպասավոր:

Տ Ե Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Նրանք և տիկինը ծառայողներով:

ՏԻԿԻՆ.— Ի՞նչ է, սիրունիկներս: Ի՞նչ եք անում այստեղ: Զահեղների՞ եք սպասում, կավալերների՞: Ուրա՞խ եք: Այո՞: Ուրախացնո՞ւմ է ձեզ ձեր գեղեցկությունը: Բայց ահա, ահա թե ուր է հասցնում գեղեցկությունը: (Յույց է տալիս Վոլգան): Ահա, ահա, ուղի՞ղ այս անհատակը:

Վարվառան ծպտում է:

ՏԻԿԻՆ.— Ի՞նչ եք ծիծաղում: Մի՛ խնդացեք: (Գավազանը զարկելով գեանի՛ն): Բոլորդ էլ այրվելու եք անմար կրակներում, բոլորդ էլ եռալու եք անկուշտ ու անհազ ձյութի մեջ... (Գնալով): Ահա, ահա թե ուր է տանում գեղեցկությունը: (Գնում է):

Տ Ե Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Ղ

Կատերինա և Վարվառա:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ահ, ինչպես վախեցրեց: Ամբողջ մարմնով շողում եմ: Կարծես իմ բախտն էր գուշակում:

ՎԱՐՎԱՌԱ.— Գլխիդ գա ասածդ, անիծված քաֆթան:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Այդ ի՞նչ ասաց, Վարյա, այդ ի՞նչ ասաց:

ՎԱՐՎԱՌԱ.— Դատարկ բաներ: Շատ պետքս էր լսել, թե ինչ էր դուրս տալիս: Նա բոլորին էլ նույնն է գուշակում: Ողջ կյանքը՝ ջահելությունից սկսած, մեղանչել է: Ապա մի հարցուփորձ արա, տես ինչե՞ր կպատմեն: Եվ ահա մահից վախենում է: Ինչից որ ինքը վախենում է, դրանով էլ ուրիշներին է վախեցնում: Քաղաքում երեխաներն անգամ թաքնվում են նրանից, փայտով է սպառնում նրանց և գոռում է (նմանեցնելով նրան). «Բոլորդ էլ այրվելու եք կրակներում»:

ԿԱՏԵՐԻՆԱ.— (Աչքերը փակելով): Ա՛հ, ա՛հ, մի ասա այդպես... Սիրտս մարում է:

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ կա վախենալու: Հիմար պառավ է...

ԿԱՏԵՐԻՆԱ.— Վախենում եմ, մահու շափ վախենում եմ... Շարունակ աչքիս առաջ է գալիս:

Լուրյուն:

ՎԱՐՎԱՌԱ.— (Շուրջը նայելով): Այս ի՞նչ է, եղբայրս շի գալիս... Ահա, կարծես փոթորիկ է սկսվելու:

ԿԱՏԵՐԻՆԱ.— (Սարսափով): Փոթորի՞կ: Տուն վազենք, շո՞ւտ:

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ ես ասում, ցնորվե՞լ ես, ի՞նչ է: Առանց եղբորս դու ինչպե՞ս կարող ես տուն վերադառնալ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ո՛չ, ո՛չ, տուն... տուն՝ գնանք... Աստված նրա հետ:

ՎԱՐՎԱՌԱ.— Լավ, ինչո՞ւ ես այդպես վախենում, փոթորիկը դեռ հեռու է:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Դե, եթե հեռու է, այդ դեպքում մի քիչ էլ սպասենք: Բայց լավ է, գնանք տուն: Գնա՛նք, Վարյա:

ՎԱՐՎԱՌԱ.— Ախր եթե մի բան լինելու է, տանն էլ շեռ կարող թաքնվել:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Այնուամենայնիվ տանը լավ է, ավելի հանգիստ է... Տանը ես կչոքեմ սրբապատկերների առջև ու կաղոթեմ:

ՎԱՐՎԱՌԱ.— Ես չգիտեի էլ, որ դու այդքան վախենում ես ամպ ու որոտից: Իսկ ես չեմ վախենում:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ինչպե՞ս չվախենամ, սիրելիս: Ամեն մարդ էլ պիտի վախենա: Սարսափելին այն չէ, որ կարող է

խփել և սպանել քեղ, այլ այն, որ մահը կարող է վրա հասնել հենց այն սյահին, երբ դու մերկ ևս թո բոլոր մեղքերով և խարդախ մտքերով... Ես մահից չեմ վախենում, բայց երբ մտածում եմ, որ ներկայանում եմ աստծուն այնպես, ինչպես որ կանգնած եմ ահա այստեղ, քեզ հետ, այս խոսակցութիւնից հետո, ահա թե ի՞նչն է սարսափելին: Ախր ինչե՞ր են մտքումս: Ինչպիսի՞ մեղք, ասելն անգամ սոսկալի է...

Որոտ:

Ահ...

Մտնում է Կարանովը:

ՎԱՐՎԱՌԱ—Ահա, եղբայրս եկավ: (Կարանովին): Վագիր, շուտ վազիր...

Որոտ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ահ, շո՛ւտ, շո՛ւտ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Սենյակ Կարանովների տանը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ո Վ Ջ Ի Ն

Գրչան կտփկուում է ճագոտաները: Մտնում է Ֆելուշան:

ՖԵԿԼՈՒՇԱ—Անուշիկ աղջիկ, անվերջ գործի վրա ես: Ի՞նչ ես անում, անուշիկս:

ԳԼԱՇԱ—Պարոնիս ճանապարհի իրերն եմ պատրաստում:

ՖԵԿԼՈՒՇԱ—Չի՛նի՞ տեղ է գնում մեր աչքի լույսը:

ԳԼԱՇԱ—Գնում է:

ՖԵԿԼՈՒՇԱ—Եվ երկա՞ր ժամանակով է գնում, սիրելիս:

ԳԼԱՇԱ—Չէ, կարճ ժամանակով:

ՖԵԿԼՈՒՇԱ—Դեհ, բարի լինի նրա բարի ճանապարհը, իսկ տիրուհիդ ողբալու՞ է, թե՞ ոչ:

ԳԼԱՇԱ—Չգիտեմ, ի՞նչ ասեմ քեզ:

ՖԵԿԼՈՒՇԱ—Իսկ նա երբեք ողբո՞ւմ է:

ԳԼԱՇԱ—Չեմ տեսել դեռ:

ՖԵԿԼՈՒՇԱ—Շատ եմ սիրում, սիրուն աղջիկ, երբ որեւէ մեկը կարողանում է լավ ողբալ...

Լուսյուն:

Իսկ դու, աղջիկս, այն աղքատ կնոջը հետևիր մի քիչ, բան շթոցնի հանկարծ:

ԳԼԱՇԱ—Ձեզնից ո՞վ բան կհասկանա, դուք բոլորդ էլ իրար վրա խոսելու սովոր եք: Ինչ է, վա՞տ եք ապրում... Այնպես, ինչպես որ մեր տանն եք ապրում, սրանի՞ց էլ լավ պիտի ապրեք... Մինչդեռ շարունակ կովում եք իրար հետ և բամբասում իրար... մեղքից չեք վախենում:

ՖԵԿԼՈՒՇԱ—Անկարելի է, սիրելիս, առանց մեղքի ապրել, աշխարհում ենք ապրում: Ահա թե ինչ կասեմ ևս քեզ, սիրուն, աղջիկս, ձեզ՝ հասարակ մահկանացուներից, ամեն մեկիդ մի հատիկ թշնամի է գայթակղում, իսկ մեզ՝ ուխտավոր մարդկանցս, որիս վեց, որիս էլ տասներկու շար ոգիներ են ուղեկցում... Եվ ահա, հարկավոր է դրանց բոլորին էլ հաղթահարել: Դժվար է, աղջիկս:

ԳԼԱՇԱ—Բայց ինչո՞ւ է ձեզ այդքան շատ բաժին ընկել:

ՖԵԿԼՈՒՇԱ—Այդ, աղջիկս, սատանան է անում, նախանձում է, որ մենք արդար կյանք ենք վարում: Իսկ ես, սիրունիկս, ցնդածի մեկը չեմ, ես այդ մեղքից ազատ եմ... Մի հատիկ մեղք ես էլ ունեմ, դա ճիշտ է, ինքս էլ գիտեմ, որ ունեմ: Սիրում եմ կուշտ ուտել: Բայց դե՞ ի՞նչ կա որ... Թուլությանս պատճառով է աստված տվել ինձ այդ ախորժակը:

ԳԼԱՇԱ—Իսկ դու, Ֆեկլուշա, շա՞տ տեղեր ես շրջել:

ՖԵԿԼՈՒՇԱ—Չէ, սիրելիս: Ես թուլությանս պատճառով հեռու

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Կատերիճա և Վարվառա:

տեղեր շեմ եղել, բայց լսել եմ, շա՛տ տեղերի ու շա՛տ բաների մասին եմ լսել: Ասում են, այնպիսի երկրներ կան, սիրունիկս, որտեղ մեր թագավորի նման՝ ուղղափառ թագավորներ էլ չկան, այլ սուլթաններ են երկիրը կառավարում: Մի երկրում գահի վրա բազմել է տաճկական սուլթան Մահնուզը, մյուս երկրում էլ՝ պարսկական սուլթան Մահնուզը: Եվ դատ են անում նրանք, սիրունիկ աղջիկս, բոլոր մարդկանց գլխին, և ինչ որ որոշում են, բոլորն էլ անիրավ է: Ու չեն կարողանում նրանք, աղջիկս, ոչ մի գործ կանոնավոր դատել: այդ էլ նրանց ճակատին է գրված: Մեր օրենքն արդար է, իսկ նրանցը, աղջիկս, անարդար է: Ինչ որ մեր օրենքով այսպես է դուրս գալիս, նրանցով՝ ուղղակի հակառակը: Եվ նրանց բոլոր դատավորներն էլ այդ երկրներում նույնպես անիրավ ու անարդար են, և մարդիկ նրանց հենց այդպես էլ դիմում են. «Դատիր ինձ, ով անիրավ դատավոր...»: Իսկ կա և մի ուրիշ երկիր, որտեղ բոլոր մարդիկ շան գլուխներով են...

ԳԼԱՇԱ — Բայց ինչո՞ւ են շան գլուխներով:
ՖԵԿԼՈՒՇԱ — Անհավատության պատճառով: Էհ, գնամ ես, աղջիկս, շոքեմ առևտրականների մեջ, գուցե մի բան էլ ինձ բաժին հասնի աղքատությանս համար: Մնաս բարով...
ԳԼԱՇԱ — Գնաս բարով:

Ճեկուղան գեռվ է:

Ի՛նչ տեսակ երկրներ են եղել: Եվ ի՛նչ հրաշքներ ասեա՞ որ աշխարհում չկան: Իսկ մենք այստեղ նստել ենք ու ոչինչ չգիտենք: Գեռ լավ է, որ բարի մարդիկ կան, գալիս են մեկ-մեկ և պատմում են, թե ինչ է կատարվում աշխարհիս երեսին, թե չէ՝ հենց այսպես հիմար էլ պիտի մեռնեիրք:

Նեռ են գալիս Կատերիճա և Վարվառա:

ՎԱՐՎԱՌԱ—(Գլաշային): Տար կապոցները, Գլա՛շա: Ձիերը պատրաստ են: (Կատերիճային): Զահեկ են քեզ մարդու տվել, չեն թողել, որ մի քիչ երկար աղջիկ մնաս ու զվարճանաս... Հենց դրանից էլ սիրտդ չի կշտացել:

Գլաշան գեռվ է:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ու երբեք էլ չի՛ կշտանա:
ՎԱՐՎԱՌԱ—Ինչո՞ւ:
ԿԱՏԵՐԻՆԱ—Այդպես եմ ծնվել, տաքարյուն: Ես դեռ հազիվ վեց տարեկան էի, և տես, թե մի օր ինչ էի արել: Զգիտեմ ինչպես՝ վիրավորել էին ինձ տանը, իսկ դա պատահեց երեկոյան, մութ էր արդեն, ես փախել էի տանից դեպի Վոլգան, նստել էի նավակ և հրել նավակը ափից: Գտել էին ինձ մյուս առավոտյան միայն՝ տանից տասը վերստ հեռավորության վրա:
ՎԱՐՎԱՌԱ—Իսկ տղաները քեզ վրա երբեք այնպես չե՞ն նայել:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինչպե՞ս չէ՛, նայել են:
ՎԱՐՎԱՌԱ—Իսկ դո՞ւ, մի՞թե ոչ ոքի չես սիրել:
ԿԱՏԵՐԻՆԱ — Չէ, միայն ծիծաղել եմ:
ՎԱՐՎԱՌԱ—Գիտե՞ս, Կատյա, դու, ախր, Տիխոնին չես սիրում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Չէ, ինչո՞ւ, սիրում եմ: Նա իմ մեղքը շատ է գալիս:
ՎԱՐՎԱՌԱ—Չէ՛, չե՛ս սիրում: Երբ որ մեղքդ է գալիս, ուրեմըն՝ չես սիրում: Եվ սիրելու բան էլ չունի, ինչ որ ճիշտ է, ճիշտ է: Եվ դուր ես դու ինձնից թաքցնում: Ես վաղուց եմ նկատել արդեն, որ դու մի մարդու սիրում ես:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Սարսափած): Բայց ինչի՞ց ես նկատել:
ՎԱՐՎԱՌԱ—Ի՛նչ ծիծաղելի ես խոսում, Կատյա: Երեխա՞ եմ ես, ի՛նչ է: Ահա քեզ առաջին նշանը. նրան տեսնում ես, թե չէ, անմիջապես դեմքդ փոխվում է:

Եվ շատ ուրիշ բաներ...

ԿԱՏԵՐԻՆԱ.—(Աշխարհ կախ): Բայց ո՞ւմ:

ՎԱՐՎԱՌԱ.—Դե, դու ինքդ էլ գիտես, ինչի՞ համար տամ նրա անունը:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Չէ, ասա, ասա նրա անունը:

ՎԱՐՎԱՌԱ.—Բորիս Գրիգորիչին:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Դե, իհա՛րկե, իհա՛րկե նրան, Վա՛րենկա... Մի-այն թե դու, Վարենկա, ի սեր աստժո...

ՎԱՐՎԱՌԱ.—Դե, այդ էր պակաս: Դու, տես, որ ինքդ հանկարծ բերնիցդ շթոցնես:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Ստեղ, ախր ես չգիտեմ... Թաքցնել ոչինչ չեմ կարողանում:

ՎԱՐՎԱՌԱ.—Դե, իսկ առանց դրան չի լինի: Դու մի լավ մտածիր, թե որտեղ ես ապրում: Մեր ամբողջ տունն էլ հենց դրա վրա է կառուցված: Ես էլ ստախոս չէի, բայց սովորեցի, երբ որ պետք եղավ: Երեկ ես զբոսնելիս տեսա նրան, խոսեցի հետը:

ԿԱՏԵՐԻՆԱ.—(Կարճ լուրջունից հետո, աշխարհ կախ): Դե, և ի՞նչ:

ՎԱՐՎԱՌԱ.—Շատ բարև ուղարկեց: Ափսոս, ասում է, որ տեղ չունենք տեսնվելու:

ԿԱՏԵՐԻՆԱ.—(Ավելի խոնարհելով աշխարհ): Որտե՞ղ պիտի տեսնվենք: Եվ ինչի՞ համար...

ՎԱՐՎԱՌԱ.—Այնքան տխուր էր, որ...

ԿԱՏԵՐԻՆԱ.—Մի՞ խոսիր նրա մասին, աստվածդ սիրես, մի՞ խոսիր: Ես նրան ճանաչել անգամ չեմ ուզում: Ես պիտի սիրեմ իմ ամուսնուն: Տիշա, հոգյակ իմ սիրելի, ոչ մեկի հետ չեմ փոխի քեզ... Ես մտածել անգամ չէի ուզում, իսկ դու ինձ շփոթեցնում ես:

ՎԱՐՎԱՌԱ.—Մի՞ էլ մտածիր, քեզ ո՞վ է ստիպում որ:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Դու ինձ ամենևին չես խղճում: Ասում ես՝ մի՞ մտածիր, իսկ ինքդ հիշեցնում ես: Մի՞թե ես ուզում եմ մտածել նրա մասին, բայց ի՞նչ անեմ, որ մտքիցս չի հեռանում: Ինչի վրա էլ որ մտածում եմ, էլի նա շարունակ աչքիս առաջն է: Եվ ուզում եմ կոտրել ինձ,

բայց չեմ կարողանում: Գիտե՞ս, որ այս գիշեր սառա-նան նորից գայթակղեցնում էր ինձ: Քիչ էր մնում, որ տանից գնայի:

ՎԱՐՎԱՌԱ.—Դու ինչ-որ շատ տարօրինակն ես: Է՛հ, աստված քեզ հետ: Իսկ իմ կարծիքով՝ արա, ինչ ուզում ես, միայն թե՛ ոչ ոք չիմանա:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Ես այդպես չեմ ուզում: Եվ ինչ մի լավ բան կա դրանում: Ավելի լավ է համբերել, քանի դեռ կարողանում եմ:

ՎԱՐՎԱՌԱ.— Իսկ որ համբերությունդ հատեց՝ ի՞նչ կանես:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Ի՞նչ կանես:

ՎԱՐՎԱՌԱ.— Հա, ի՞նչ կանես:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ինչ որ սիրտս ուզեց՝ այն էլ կանես:

ՎԱՐՎԱՌԱ.—Փորձիր ապա՝ արա, կյանքդ կուտեն այստեղ:

ԿԱՏԵՐԻՆԱ.— Ինձ ի՞նչ կա որ, ես էլ կհեռանամ ու վերջ:

ՎԱՐՎԱՌԱ.—Ո՛ւր կգնաս, ախր, գլխիդ տեր, ամուսին ունես:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Է՛հ, Վարյա, դու չգիտես իմ բնավորությունը: Իհարկե, տեր մի՞ արասցե, որ այդ բանը պատահի: Բայց եթե ինձ համար այստեղ շատ անտանելի դարձավ, այն ժամանակ ոչ մի ուժ չի կարող ինձ այստեղ պահել: Պատուհանից դուրս կգցեմ ինձ, Վոլգան կնետվեմ: Չուզենամ այստեղ ապրել, չե՛մ ապրի, թեկուզ վրիպ կտրեն:

Լուրջուն:

ՎԱՐՎԱՌԱ.—Գիտե՞ս ինչ, Կատյա: Տիխոնը որ գնա, արի մենք էլ պարտեզում քնենք, հովնոցում:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Ախր, ինչո՞ւ, Վարյա:

ՎԱՐՎԱՌԱ.—Քեզ համար միևնույն չէ՞:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Վախենում եմ ես անսովոր տեղում քնել:

ՎԱՐՎԱՌԱ.— Ի՞նչ կա վախենալու, Գլաշան մեզ հետ կլինի:

ԿԱՏԵՐԻՆԱ.—Երկյուղալի է, ինչքան շինի: Բայց լավ, թո՛ղ այդպես լինի:

ՎԱՐՎԱՌԱ.—Ես քեզ չէի կանչի, բայց մայրիկն ինձ մենակ չի թողնի, իսկ ինձ շատ է հարկավոր:

ԿԱՏԵՐԻՆԱ.—(Նրան նայելով): Ինչի՞դ է հարկավոր:

ՎԱՐՎԱՌԱ—(Միծաղելով): Գուշակություններ կանենք այն-տեղ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Կատա՞կ ես անում, երևի:

ՎԱՐՎԱՌԱ— Իհարկե, կատակ եմ անում:

Լուսրյուն:

ԿԱՏԵՐԻՆԱ— Բայց ո՞ր մնաց Տիխոնը:

ՎԱՐՎԱՌԱ— Ինչի՞դ է պետք հիմա:

ԿԱՏԵՐԻՆԱ— Չէ, այնպես, հարցնում եմ: Չէ՞ որ շուտով գնում է:

ՎԱՐՎԱՌԱ— Դուները փակել, նստել են մայրիկի հետ: Կըրծում է նա հիմա Տիխոնին, ժանգի պես:

ԿԱՏԵՐԻՆԱ— Ախր ինչի՞ համար:

ՎԱՐՎԱՌԱ— Ոչ մի բանի, հենց այնպես, խելք է սովորեցնում: Երկու շաբաթ ճանապարհ է գնալու, աչքիցը հեռու: Ինքդ դատիր: Սրտից արյուն է գնում, որ Տիխոնն իր սեփական կամքին է մնալու: Եվ հիմա նստած հրամաններ է տալիս նրան, մեկը մյուսից դաժան, հետո էլ սրբապատկերի մոտ կտանի, կստիպի, որ նա երզվի, որ ամեն ինչ այնպես կկատարի, ինչպես իրեն հրամայված է:

ԿԱՏԵՐԻՆԱ— Ազատության մեջ էլ նա ոնց որ կաշկանդված լինի:

ՎԱՐՎԱՌԱ— Հա, ինչպես չէ՞, կաշկանդված է: Գնաց թե չէ, իսկույն սկսելու է խմել: Հիմա նստել և ինքն իրեն մտածում է՝ երբ պիտի ազատվի, գնա:

Մտնում են Կարանովան և Կարանովը:

Տեսարան երրորդ

Երան, Կարանովա և Կարանով:

ԿԱՐԱՆՈՎԱ— Դե, դու հիշում ես բոլո՞րը, ինչ որ ասացի:

Տես, հա, շմոռանաս: Ականջիդ օղ արա:

ԿԱՐԱՆՈՎ— Հիշում եմ մայրիկ, հիշում եմ:

ԿԱՐԱՆՈՎԱ — Դե, այժմ ամեն բան պատրաստ է: Ձիերը եկել

են, մնում է, որ մնաս բարով ասես, աստված քեզ հետ:

ԿԱՐԱՆՈՎ— Հա, մայրիկ, ժամանակն է:

ԿԱՐԱՆՈՎԱ— Դե՛:

ԿԱՐԱՆՈՎ— Ի՞նչ եք հրամայում:

ԿԱՐԱՆՈՎԱ — էլ ի՞նչ ես կանգնել, ապա: Կա՞րգը չգիտես, ի՞նչ է: Հրամայի՛ր կնոջդ, թե ինչպես պիտի ապրի առանց քեզ:

Կատերինան խոնարհում է աչքերը:

ԿԱՐԱՆՈՎ— Դե, նա կարծում եմ, առանց ասելու էլ գիտես:

ԿԱՐԱՆՈՎԱ— Է՛լ ինչեր: Դե, դե, հրամայիր: Ես պիտի լսեմ, թե դու նրան ի՞նչ ես հրամայում, իսկ հետո կվերադառնաս, կհարցնես այդպե՞ս է կատարել արդյոք քո հրամանները:

ԿԱՐԱՆՈՎ— (Կանգնելով Կատերինայի դեմ): Կլսես մայրիկին, Կա՛տյա:

ԿԱՐԱՆՈՎԱ— Ասա, որ սկեսրոջ հետ կոպտություններ չանի:

ԿԱՐԱՆՈՎ— Կոպտություն չանես:

ԿԱՐԱՆՈՎԱ— Որ հարգի սկեսրոջն, ինչպես հարազատ մորը:

ԿԱՐԱՆՈՎ— Կհարգես մայրիկին, Կատյա, ինչպես քո հարազատ մորը:

ԿԱՐԱՆՈՎԱ— Որ ձեռքերը ծալած, խանութի պես չնստի:

ԿԱՐԱՆՈՎԱ— Մի գործ կանես տանն առանց ինձ:

ԿԱՐԱՆՈՎԱ— Որ շարունակ փողոց չնայի պատուհանից:

ԿԱՐԱՆՈՎԱ— Բայց, ախր, մայրիկ, նա երբ է...

ԿԱՐԱՆՈՎԱ— Դե, դե:

ԿԱՐԱՆՈՎԱ— Լուսամուտից փողոց չնայես:

ԿԱՐԱՆՈՎԱ— Որ քո բացակայությամբ աչքը չզգի ջահելների:

ԿԱՐԱՆՈՎԱ — Ախր, ինչե՞ր եք ասում, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎԱ — (Խստությամբ): Դե, կոտորատվելու ժամանակ է: Պիտի կատարես ինչ որ մայրդ ասում է: (Ժպտալով): Ինչքան չի՛նի՛ հրաման որ տրված է, լավ է:

ԿԱՐԱՆՈՎԱ— (Շփոթված): Զահելների վրա աչք չդրես:

Կատերինան խոտորեն նայում է երան:

ԿԱՐԱՆՈՎԱ—Դե, իսկ հիմա խոսեցեք իրար հետ, եթե բան ունեք ասելու: Գնանք, Վարվառա:

Գնում են:

Տեսարան չորրորդ

Կարանով և Կատրինա (կանգնած է կարծես ֆուրացած):

ԿԱՐԱՆՈՎ—Կատյա:

Լուրջուն:

Դու ինձ վրա բարկանում ես, Կատյա:

ԿԱՏՐԻՆԱ—(Կարճ լուրջունից հետո՝ գլուխն օտարելով): Ոչ:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց, ինչո՞ւ ես այդպես: Դե, ներքի ինձ:

ԿԱՏՐԻՆԱ—(Կի ճույն գրառյամբ, քեթևորեն շարժելով գլուխը): Աստված քեզ հետ: (Մածկելով երեսը): Վիրավորեց նա ինձ:

ԿԱՐԱՆՈՎ—Ամեն բան սրտիդ մտտիկ որ առնես, թողախա կընկնես: Ինչո՞ւ ես լսում նրան: Նա էլ, ախր, մի բան պիտի խոսի, չէ՞: Դե, թող խոսի: Դու էլ ականջիդ ետևը պցիր: Դե, մնաս բարով, Կատյա:

ԿԱՏՐԻՆԱ—(Փարվելով ամուսնուն): Տիշա, մի՛ գնա: Ի սեր աստծո, մի՛ գնա: Աղաչում եմ քեզ, սիրելիս:

ԿԱՐԱՆՈՎ—Չի՛ կարելի, Կատյա, Մայրիկը որ ուղարկում է, ես ինչպե՞ս կարող եմ շքնալ:

ԿԱՏՐԻՆԱ—Դե, տա՛ր, ի՞նձ էլ տար հետդ:

ԿԱՐԱՆՈՎ—(Ազատվելով նրա գրկից): Ա՛հ, չի կարելի:

ԿԱՏՐԻՆԱ—Ինչո՞ւ չի կարելի, Տի՛շա:

ԿԱՐԱՆՈՎ—Ի՞նչ մի հաճույք է քեզ հետ գնալը: Դո՞ք առանց այն էլ հոգիս հանել եք: Ես ուղղակի շփտեմ, թե ինչպես դուրս պրծնեմ գնամ, իսկ դու՛ ինձ էլ տար:

ԿԱՏՐԻՆԱ—Դու մի՞թե շես սիրում ինձ: Տիշա:

ԿԱՐԱՆՈՎ—Սիրում եմ, ի՞նչ խոսք էր դա: Միայն թե այսպիսի ստրկության մեջ ի՞նչ տեսակ գեղեցկուհուց ասես, որ շես փախի: Ախր, դու մտածիր մի քիչ. լավ թե վատ, այնուամենայնիվ, տղամարդ եմ, Ողջ կյանքս

որ այսպես ապրեմ, կփախչեմ կնոջիցս էլ: Հիմա, որ մտածում եմ, թե մի երկու շաբաթ գլխիս ոչ մի փոթորիկ չի պայթելու և ոտքերիս էլ այս շղթաները չեն լինելու, ես էլ կարո՞ղ եմ մտածել կնոջս մասին:

ԿԱՏՐԻՆԱ— Այդ խոսքերիցդ հետո ես քեզ էլ ինչպե՞ս սիրեմ:

ԿԱՐԱՆՈՎ— Խոսքերս սովորական խոսքեր են: Ես քեզ ուրիշ էլ ի՞նչ տեսակ խոսքեր ասեմ: Ո՞վ է իմանում, թե ինչից ես վախենում: Չէ՞ որ դու մենակ շես մնում, մայրիկն էլ քեզ հետ է մնում:

ԿԱՏՐԻՆԱ—Մի՛ ասա ինձ նրա մասին, մի՛ տանջիր դու իմ սիրտը: Ահ, սև, սև իմ բախտ... (կաց է լինում): Ո՞ւր գնամ կորչեմ: Ո՞ւմ օգնությանը դիմեմ: Ես կործանվում եմ, Տիշա:

ԿԱՐԱՆՈՎ—Դե, լավ, բավական է:

ԿԱՏՐԻՆԱ—(Մտանելում է ամուսնուն և հավում նրան): Տիշա, սիրելի՛ս, եթե դու մնայիր կամ ինձ էլ տանեիր քեզ հետ, ինչպե՞ս կսիրեի քեզ, ինչպե՞ս կգորգորեի քեզ, հոգյակս: (Փաղափշում է նրան):

ԿԱՐԱՆՈՎ—Չեմ հասկանում քեզ, Կատյա: Մեկ այնպես է լինում, որ խոսք դուրս շես քաշի քեզնից, ո՞ւր մնաց թե փաղաքշանք: Մեկ էլ, ինքդ ես գալիս ու վզովս ընկնում:

ԿԱՏՐԻՆԱ—Տիշա, ո՞ւմ հույսին ես թողնում ինձ, Տի՛շա... Փորձա՛նք է պատահելու առանց քեզ... փորձա՛նք է պատահելու:

ԿԱՐԱՆՈՎ—Դեհ, որ չի կարելի, ես էլ ի՞նչ կարող եմ անել:

ԿԱՏՐԻՆԱ—Դե, որ այդպես է, մի ահա՛վոր երգում առ ինձանից...

ԿԱՐԱՆՈՎ—Ի՞նչ երգում:

ԿԱՏՐԻՆԱ—Ահա թե ինչ. որ ես քո բացակայությամբ չհամարձակվեմ ոչ մի դեպքում որևէ օտարի հետ, ո՞չ տեսնվել, ո՞չ խոսել, որ ես քեզնից դատ ոչ մեկի մասին մտածել անգամ չհամարձակվեմ:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց, ինչի՞ է պետք այդ երգումը:

ԿԱՏՐԻՆԱ—Հանգստացրո՞ւ իմ սիրտը, արա՛ այդ բարու-թյունն ինձ համար:

ԿԱՐԱՆՈՎ—Ինչպե՞ս կարելի է երաշխավոր լինել ինքն իր համար, ո՞վ գիտե, ինչ կարող է պատահել:

ԿԱՏՆՐԻՆԱ—(Մտնել շոֆեյով նրա առջև): Քո՞ղ շարժանանամ հորս ու մորս տեսության, թո՞ղ մեռնեմ՝ առանց մեղքերիս թողության, եթե ես...

ԿԱՐԱՆՈՎ—(Բարձրացնելով նրան): Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում: Ինչ մեղք ես գործում: Լսել անգամ չեմ ուզում:

Կարանվայի ձայնը. «Ժամանակն է, Տիխոն»: Մըտնում են Կարանվան, Վարվառան, Գլաշան:

Տեսարան հինգերորդ

Նրանք, Կարանվա, Վարվառա և Գլաշա:

ԿԱՐԱՆՈՎ—Դե, Տիխոն, ժամանակն է: Աստված քեզ հետ (Նստում է): Նստեք բոլորդ:

Բոլորը նստում են: Լուսյուն:

Դե՛հ, գնաս բարով: (Նլնում է: Նլնում են և մյուսները):

ԿԱՐԱՆՈՎ—(Մոտենալով մորը): Մնաք բարով, մայրիկ:

ԿԱՐԱՆՈՎ—(Գետինը ցույց տալով): Խոնարհվի՛ր, խոնարհվիր:

Կարանովը մինչև գետին խոնարհվում է և ապա համբուրվում է մոր հետ:

Հրաժեշտ տուր կնոջը:

ԿԱՐԱՆՈՎ—Մնաս բարով, Կա՛տյա:

Կատերինան փարվում է ամուսնու վզով:

ԿԱՐԱՆՈՎ—Ի՞նչ ես վզիցը կախվում, անամո՞թ: Սիրեկանիցդ հո չե՞ս բաժանվում: Քո ամուսինն է, քո գլխի տերը, թե՞ կարգը չգիտես, խոնարհվի՛ր:

Կատերինան խոնարհվում է մինչև գետին:

ԿԱՐԱՆՈՎ — Մնաս բարով, քույրիկ: (Համբուրվում է Վարվառայի հետ): Մնաս բարով, Գլա՛շա: (Համբուրվում է

Գլաշայի հետ): Մնաք բարով, մայրիկ: (Գլուխ է խոնարհում):

ԿԱՐԱՆՈՎ—Գնաս բարով: Հեռավոր ճանապարհ, ազիտորդ արցունք:

Կարանովը գնում է: Նրա ետևից՝ Կատերինան, Վարվառան, Գլաշան:

Տեսարան վեցերորդ

ԿԱՐԱՆՈՎ—(Մենակ): Ահա՛: Սա է ջահելությունը, տեսա՞ք: Ուղղակի ծիծաղելի է սրանց նայելը: Հարազատներս չլինեին, մի կուշտ կծիծաղեի: Ու ոչինչ էլ չգիտեն, ո՞չ մի կարգ ու կանոն: Մարդավարի մնաս բարով ասել էլ չգիտեն: Դեռ լավ է, եթե տան մեջ մեծեր կան. տունը նրանց վրա է հենվում, քանի նրանք ողջ են: Ու հիմա՛ր էլ են, ախր, ազատություն են ուզում: Իսկ որ ազատ են մնում, ծաղր ու ծանակի առարկա են դառնում կարգին մարդկանց առջև: Իհարկե, ոմանք և խղճում են, բայց ավելի շատ ծիծաղում են: Եվ չի՞ էլ կարելի չծիծաղել: Հյուր են կանչում՝ մարդկանց նստեցնել չգիտեն, կամ թե, մեկ էլ տեսար, մոռացան ազգականներից որևէ մեկին: Միծաղ է ու ծիծաղ: Այսպես է, որ քանդվում են հին կարգերը: Տներ կան, որ ուղղակի ներս մտնել չես ուզում, իսկ որ մտնում ես, թքում ես և շուտ դեպի դուրս: Ի՞նչ է լինելու, երբ որ ծերունիները բոլորն էլ մեռնեն, ինչպե՞ս է լինելու աշխարհի բանը, ուղղակի չեմ հասկանում: Է՛հ, գոնե լավ է, որ ոչինչ չեմ տեսնելու...

Մտնում են Կատերինան և Վարվառան:

Տեսարան յոթերորդ

Կարանվա, Կատերինա, Վարվառա:

ԿԱՐԱՆՈՎ—Աշխարհ էիր զարմացնում, թե ամուսնուդ շատ ես սիրում: Տեսնում եմ, տեսնում եմ հիմա քո սերը:

ուրիշ կանոնավոր կինը մարդան ճանապարհելուց հետո գոնե մի ժամ ու կես ողբում է պատշգամբում փրոզած: Իսկ քո վեջն էլ չէ:

ԿԱՏՈՐԻՆԱ— Կարիք չկա: Ու չեմ, էլ կարող: Ինչո՞ւ պիտի մարդկանց ծիծաղեցնեմ:

ԿԱՐԱՆՈՎԱ— Մի մեծ հունար չէ: Եթե սիրեիր, կսովորեիր: Թե որ կանոնավոր չես կարողանում, գոնե երեսանց ցույց տայիր: Ինչքան չիհի՜ ավելի լավ է: Թե չէ երևում է, որ խոսքեր են միայն: Դեհ, ես գնում եմ աղոթելու, շխանգարեք ինձ:

ՎԱՐՎԱՌԱ — Ես դուրս եմ գնում:

ԿԱՐԱՆՈՎԱ — (Քեհեջաբար): Ի՞նձ ինչ: Գնա՛: Զվարճացի՛ր, մինչև որ քո հերթն էլ կհասնի: Կձանձրանաս տանը նստելուց:

Գնում եմ Կարանավան և Վարվառն:

Տեսարան ուրերորդ

ԿԱՏՈՐԻՆԱ— (Մեճակ, մտազբաղ): Հիմա արդեն խազաղու-թյուն կիջնի մեր տան վրա: Ահ, ինչ ձանձրալի է: Գոնե մեկնումեկի երեխաները լինեին: Ափսոս, որ ես չունեմ երեխաներ... Ամբողջ օրը կնստեի ու կզբազվեի նրանցով... Սիրում եմ, շատ եմ սիրում նրանց հետ խոսել, հրեշտակների են նման:

Լսարյուճ:

Ծրեխա ժամանակս մեռած լինեի, ինչքան լավ կլինեիր: Հիմա կնայեի երկնքից ողջ աշխարհին, և կլցվեիր սիրտը ուրախությամբ կամ թե անտեսանելի կթռչեիր ուր որ սիրտս ուղենար... Կթռչեիր դեպի դաշտ ու ծաղկից ծաղիկ կցատկոտեի, թիթեռների կի նման: (Մտածում է): Ահա՛ թե ինչ կանեմ: Մի որևէ գործ կսկսեմ՝ խոստմանս համաձայն, կգնամ շուկա, կտոր կառնեմ ու կըսկըսեմ սպիտակեղեն կարել, իսկ հետո կբաժանեմ աղքատներին: Նրանք էլ ինձ համար կաղաթեն աստօժուն: Կնստենք այսպես Վարվառայի հետ կար անելու և չենք

է Եկատի, թե ինչպես է անցնում ժամանակը, ու մեկ էլ Տիշան կգա:

Մտնում է Վարվառն:

Տեսարան իններորդ

Կատերինա և Վարվառն:

ՎԱՐՎԱՌԱ— (Հայելու առջև զլխարկն է հագնում): Ես հիմա գնում եմ գրոսնելու: Իսկ Գլաշան պարտեզում կզցի մեր անկողինները: մայրիկը թույլ տվեց: Պարտեզում, մորենիների ետևում, մի փոքրիկ դռնակ կա: Մայրիկը կողպում է դուռն ու բանալին էլ պահում է իր մոտ: Ես բանալին վերցրել եմ, իսկ տեղը ուրիշն եմ դրել, որ չնկատի: Ա՛ո, գուցե պետք է գալիս: (Բանալին առալիս է): Եթե տեսնեմ, կասեմ որ գա դռնակի մոտ:

ԿԱՏՈՐԻՆԱ — (Վախեցած ետ մղելով բանալին): Ի՞նչ ես անում: Հարկավոր չէ:

ՎԱՐՎԱՌԱ— Քեզ հարկավոր չէ, ի՞նձ պետք կգա: Վերցրո՛ւ, չի կծի քեզ:

ԿԱՏՈՐԻՆԱ— Ախր, այդ ինչե՞ր ես մտածել դու, անամոթ աղջիկ: Կարելի՞ է միթե: Մտածե՛լ ես, արդյոք: Զէ, չէ, հարկավոր չէ:

ՎԱՐՎԱՌԱ— Դեհ, ես շատ խոսել չեմ սիրում: Ու ժամանակ էլ չունեմ: Պիտի գնամ ման գալու... (Գնում է):

Տեսարան տասներորդ

ԿԱՏՈՐԻՆԱ— (Մեճակ): Այս ինչե՞ր է անում: Ինչե՞ր ասես, որ չի հնարում: Խենթ է, ուղղակի խենթ է: Ահա՛, ահա՛ կործանումը, ահա սա է: Վերցնեմ՝ գցեմ հեռուն, գցեմ գետի ջրերը, որ երբեք չգտնեն: Այրում է ձեռքերս ատուխի նման: (Մտածելով): Այսպես էլ ահա՛ կործանվում ենք... Ստրկության մեջ ո՞ւմ սիրտն է ուրախ: Ինչե՞ր ասես որ խելքիդ չի փչի: Առիթ է լինում, տեսնում

Պատկեր առաջին

Փողոց: Կարաճովների տան դարպասը: Դարպասի մաս
նստարան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կարաճովան և Ֆեկուշան նստած են:

ես, խելքները ոմանք կորցնում են ու առանց հաշիվ
տալու նետվում փորձության գիրկը: Բայց, ախր, կարե-
լի՞ է, միթե, առանց հաշիվ տալու, առանց մտածելու:
Դժվա՞ր է միթե կրակի մեջն ընկնել: Հետո թեկուզ ողջ
կյանքդ լացիր ու տանջվիր,— ստրկությունդ ավելի դառն
կլինի:

Լուսբյուն:

Իսկ դառն է, դառն է գերությունը, ո՞վ չի ողբում դրա
ձեռքից: Եվ ամենից շատ մենք, կանայքս: Ահա, թեկուզ
հենց ես... Ապրում, տանջվում եմ, ու չկա ո՛չ մի լույս:
Ու չի՞ էլ լինի երևի: Քանի գնում, ծանրանում է: Ու հի-
մա էլ այս մեղքն է վրա գալիս: (Մտածում է): Եթե
սկեսուրս չլինե՞ր... փշրե՞լ է նա իմ սիրտը... Նրա պատ-
ճառով ատելի է դարձել ինձ այս տունը, զզվելի են
նույնիսկ պատերը... (Մտախոհ նայում է բանալիին):
Գե՞ն գցեմ: Իհարկե, պիտի դեն գցեմ: Եվ ինչպե՞ս է
ընկել իմ ձեռքը: Կործանելու, ինձ գայթակղեցնելու հա-
մար: (Ականջ է դնում): Ա՛հ, ո՞վ է գալիս: Սիրտս դող
ընկավ... (Պահում է բանալին գրպանում): Չէ՛, մարդ
չկա... Եվ ինչի՞ց այսպես վախեցա ու բանալին էլ պա-
հեցի: Երեկ այդպես էլ հարկավոր է, որ այնտեղ լինի:
Երեկ բախտս էլ այդպես է ուզել... Եվ, ախր, ի՞նչ մի
մեծ մեղք է, եթե ես գոնե մեկ անգամ գեթ հեռվից
տեսնեմ նրան: Եվ հենց խոսեմ էլ: Ի՞նչ մեծ հանցանք
է, որ իսկ մարդու ապա ի՞նչ ասեմ: Բայց չէ՞ որ նա
ինքն էլ չուզեց: Ո՞վ գիտե՞ գուցե այլևս ողջ կյանքումս
այսպիսի առիթ չլինի... լացի՛ր այն ժամանակ ու ողբա,
որ եղավ այսպիսի դեպք ու չկարողացար օգտվել... Բայց,
ախր, ինչե՞ր եմ խոսում, ինչու եմ խաբում ինքս ինձ:
Թեկուզ մահս էլ գա, պետք է տեսնեմ նրան: Ո՞ւմ առջև
եմ կեղծում: Գե՞ն գցեմ բանալին: Չէ, աշխարհում
ուժ չկա, որ ստիպի ինձ այդպես վարվելու: Նա ի՛մն է
այժմ... Թո՞ղ լինի, ինչ որ լինելու է, իսկ Բորիսին ես
պիտի տեսնեմ... Ա՛հ, շտապի՛ր, ո՞վ գիշեր...

Ֆեկուշուհ—Աշխարհիս վերջն է, Մարֆա Իգնատենա, վե՛րջն
է, բոլոր նշաններից է երևում, որ վերջն է: Դեռ ձեր
քաղաքում դրախտ է ու խաղաղություն, իսկ ուրիշ քա-
ղաքներում ուղղակի Սողոմ է, աղմուկ, աղաղակ, ան-
վերջ կառքեր, գնալ-գալ, ժողովուրդն ուղղակի գլուխը
կորցրածի պես է. մեկն այս կողմ, մյուսն՝ այն կողմ...
ԿԱՔԱՆՈՎԱ—Շտապելու բան չունենք, սիրելիս, դրա համար
էլ ապրում ենք առանց շտապելու:

Ֆեկուշուհ—Ոչ, անուշիկս, այստեղ նրա համար է խաղաղ,
որ շատերը, հենց թեկուզ դուք, առաքինություններով,
ինչպես ծաղիկներով են զարդարված: Դրա համար էլ
ամեն ինչ այնպե՛ս զովաշունչ է ու բարեպատշաճ: Թե
չէ այս վազվառուքն, ախր, ինչ է նշանակում: Ունայ-
նությո՞ւն է, ախր: Հենց, ասենք, Մոսկվայում, մարդիկ
վազում են ետ ու առաջ և հայտնի չէ ինչո՞ւ: Ունայնու-
թյունն էլ հենց ա՛յդ է, անուշս,— ունայնամիտ ժողո-
վուրդ է, Մարֆա Իգնատենա, դրա համար էլ վազվզում
է: Նրան թվում է, թե մեծ գործի վրա է, շտապում է
խեղճը, մարդկանց չի ճանաչում, աչքին այնպես է
երևում, թե մեկը կանչում է, իսկ տեղ է հասնում՝ դա-
տարկ է, մարդ չկա, ու գնում է տխուր ու մտախոհ...
Մեկ ուրիշին էլ թվում է, թե իբր ինքը ինչ-որ մեկի
ետևից է վազում, որ հասնի: Կողմնակի մարդու հա-
մար էլ հո պարզ է, որ ոչ ոք չկա, իսկ նրան, այնու-
ամենայնիվ, թվում է, ունայնությունից է թվում, թե՛

ահա մեկը կա, որին ինքը պիտի հասնի: Ունայնությունը, ախր, մշուշի նման է, ոնց որ ամպ լինի: Չեզ մտտ, ահա, այսպիսի անուշ երեկո է ու, այնուամենայնիվ, ոչ ոք տանից դուրս չի գալիս, իսկ Մոսկվայում հիմա զբոսանքներ են ու խաղեր, փողոցներում դղրդոց է, աղմուկ, աղաղակ: Է՛հ, ի՞նչ ասեմ, Մարֆա Իգնատևնա, սկսել են հրեղեն օձ լծել ու բոլորն էլ, հասկանում ես, արագության համար է:

ԿԱՔԱՆՈՎԱ— Լսել եմ, սիրելիս, լսել եմ:

ՖեկլՈՒՇԱ— Իսկ ես, անուշս, հո՞ իմ աչքով եմ տեսել: Իհարկե, կան մարդիկ, որ ունայնությունից ոչինչ չեն տեսնում: Այգպիսիների համար գա ձեքենա է կոչվում ու նրանց աչքին այդպես էլ երևում է, իսկ ես տեսել եմ, թե նա թաթերն ինչպես է դնում (մառնեք շում է), այսպես: Դե, և հառաչում է, որ միայն լավ ապրող մարդիկ են լում:

ԿԱՔԱՆՈՎԱ— Անվանել ինչպես ուզում ես, կարելի է: Թեկուզ մեքենա անվանիր: Ժողովուրդը հիմար է, ամեն բանի էլ կհավատա, իսկ ինձ ոսկու մեջ էլ թաղես, նրանով ճանապարհ չեմ գնա:

ՖեկլՈՒՇԱ— Ի՞նչ կարիք կա, անուշս: Տերն ազատի մեզ այդպիսի աղետից: Մեկ էլ, թե ինչ տեսիլք երևաց ինձ Մոսկվա քաղաքում: Առավոտը շուտ այսպես գնում եմ ես փողոցով և տեսնում եմ. բարձր, մի շատ բարձր տան կտորի վրա նստած է մեկը և դեմքը՝ սև: Դե, ինքնեք էլ հասկանում եք, ով էր: Ու ձեռքերն էլ այնպես է անում, կարծես բան է թափում ներքև, բայց ոչինչ չի թափվում: Այստեղ ես գլխի ընկա, որ նա որո՞մ է սերմանում, իսկ ժողովուրդն էլ ցիրեկը՝ վազվատուկի ժամանակ, աննկատելի կհավաքի: Դրա համար է, որ նրանք այդպես վազվզում են, դրա համար է, որ նրանց կանայք բոլորն էլ այնպես նիհար են ու չեն գիրանում... Գարծես ինչ-որ բան են կորցրել, կամ փնտրում են, ու դեմքերն էլ այնքան տխուր են, ուղղակի խղճալի:

ԿԱՔԱՆՈՎԱ— Ամեն բան կլինի, սիրելիս, մեր ժամանակներում ի՞նչ կա զարմանալի:

ՖեկլՈՒՇԱ— Մանր օրեր են, Մարֆա Իգնատևնա, անուշս,

Ժածր օրեր են: Ու ժամանակն էլ սկսել է փոքրանալ: **ԿԱՔԱՆՈՎԱ**— Այդ ինչպե՞ս, սիրելիս, այսինքն փոքրանալ:

ՖեկլՈՒՇԱ— Իհարկե, մենք չենք կարող, ետուզեո՞ւ մեջ մենք ինչպե՞ս կնկատենք: Բայց, ահա, խելացի մարդիկ նրկատել են, որ մեզանում արդեն ժամանակն էլ սկսել է կարճանալ: Կար ժամանակ, որ ամառն ու ձմեռը այնքան էին երկարում, երկարում, որ ուղղակի վերջանալուն սպասելով սիրտդ ճաքում էր: Իսկ հիմա չես էլ նկատում, թե ինչպես են թռչում օրերը: Բուպենքը, ժամերը, օրերը էլի նույնն են, կարծես, բայց ժամանակը, մեր մեղքերի համար, քանի գնում՝ կարճանում է ու կարճանում: Ահա թե ինչ են ասում խելացի մարդիկ:

ԿԱՔԱՆՈՎԱ— Դեռ ավելի վատ կլինի, սիրելիս:

ՖեկլՈՒՇԱ— Միայն թե մենք չտեսնեինք այդ ամենը:

ԿԱՔԱՆՈՎԱ— Գուցե՞ս տեսնենք:

Մտնում է Դիկոյ:

Տեսարան երկրորդ

Երան և Դիկոյ:

ԿԱՔԱՆՈՎԱ— Այդ ի՞նչ ես այսպես ուշ թափառում, կնքահայր:

Դիկոյ— Իսկ ո՞վ պիտի ինձ արգելի:

ԿԱՔԱՆՈՎԱ— Ո՞վ կարգելի: Ու՞մ է հաքկավորս:

Դիկոյ— Նշանակում է, կարիք էլ չկա խոսելու: Ի՞նչ է, տե՞ր կա իմ գլխիս: Դու ո՞վ ես այստեղ, ինչուքո՞ւ ես, ի՞նչ սատանա ես աշատեղ:

ԿԱՔԱՆՈՎԱ— Դե, գիտե՞ս, դու կոկորդո շատ էլ մի պատուի: Գնա, ինձանից էժանը գտի՞ր՝ ես մի քիչ թանկ եմ քեզ համար: Գնա, ուր որ գնում էիր... Տուն գնանք, Ֆեկլուշա (Կանգնում է):

Դիկոյ— Մպասիր, կծքամայր, սպասիր: Մի՛ բարկանա: Դեռ կհասնես՝ տունդ սարերի ետևը չի, ահա՛ քո տունը:

ԿԱՔԱՆՈՎԱ— Եթե բանի ես եկել, ուրեմն մի՛ գոռու: Կանոնավոր խոսիր:

ԳԻԿՈՅ—Ոչ մի գործ էլ չունեմ, պարզապես գլուխս տաք է և ուրիշ ոչինչ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Ուրեմն ի՞նչ, սպասում ես, որ ես գովե՞մ քեզ դրա համար, ի՞նչ է:

ԳԻԿՈՅ—Ոչ գովիր և ոչ էլ նախատիր: Այլ, ուրեմն, խմած եմ ես և՛ վերջացավ: Մինչև որ չքնեմ, հնար չկա, ուրեմն:

ԿԱՔԱՆՈՎԱ—Դե գնա և քնիր:

ԳԻԿՈՅ—Բայց, ախր, ո՞ւր գնամ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Գնա տուն: Ո՞ւր պիտի գնաս որ:

ԳԻԿՈՅ—Իսկ եթե ես չեմ ուզում տուն գնալ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Իսկ ինչո՞ւ, ամոթ չի՞նի հարցնելը:

ԳԻԿՈՅ—Որովհետև այնտեղ պատերազմ է:

ԿԱՔԱՆՈՎԱ—Ախր, կովոզն ո՞վ է: Այնտեղ միակ կովոզը հենց դու ես որ կաս:

ԳԻԿՈՅ—Հետո ի՞նչ, որ ես եմ: Ի՞նչ դուրս եկավ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Ի՞նչ: Ոչինչ: Դե, մի մեծ փառք էլ չի, որովհետև ողջ կյանքումդ կովում ես հենց միայն կանանց հետ:

ԳԻԿՈՅ—Դե, նշանակում է, նրանք պետք է հպատակվեն ինձ: Ապա ի՞նչ, ե՞ս պիտի հպատակվեմ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Ուղղակի զարմացած եմ մնացել. այդքան ժողովուրդ կա թո տանը և ոչ մի կերպ չեն կարողանում ուզածդ կատարել:

ԳԻԿՈՅ—Հա, էլի: Հապա ե՞ս ինչ եմ ասում:

ԿԱՔԱՆՈՎԱ—Լավ, ինձնից ի՞նչ ես ուզում:

ԳԻԿՈՅ—Ահա թե ինչ: Աղոթիր ինձ համար, որ բարկությունս իջնի: Ամբողջ քաղաքում միայն դու ես, որ կարողանում ես աղոթել ինձ համար:

ԿԱՔԱՆՈՎԱ—Գնա, Ֆեկուշա, ասա թող մի բան պատրաստեն ուտելու:

Ֆեկուշան գեռվ է:

Գնանք ներս:

ԳԻԿՈՅ—Չէ, ես ներս չեմ մտնի: Ներսում ես ավելի եմ վատանում:

ԿԱՔԱՆՈՎԱ—Բայց ինչո՞վ են քեզ բարկացրել:

ԳԻԿՈՅ—Դեռ վաղ առավոտվանից է:

ԿԱՔԱՆՈՎԱ—Երեի փող են ուզել:

ԳԻԿՈՅ—Կարծես խոսքները մեկ են արժել, անիծվածները: Ամբողջ օրը մեկ սա է գլուխս տանում, մեկ՝ մյուսը:

ԿԱՔԱՆՈՎԱ—Ուրեմն հարկավոր է, որ ուզում են:

ԳԻԿՈՅ—Հասկանում եմ, որ պետք է, բայց ի՞նչ անեմ, որ սիրտս այդպիսին է: Գիտեմ էլ, ախր, որ պետք է տալ, բայց արի տես, որ հոժարություն չեմ կարողանում: Բարեկամս, տես, որ ես էլ քեզ պարտք եմ, բայց արի խնդրիր, որ տամ՝ կհայհոյեմ: Դրա համար է, որ միայն մի խոսք, մի ակնարկ արին թե չէ փողի մասին, արդեն ներսս ամբողջ սկսում է այրվել ու վերջ: Դե, պարզ է, որ այդ բոպեին կհայհոյեմ, անմեղ տեղը կհայհոյեմ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Գլխիդ վրա մեծ չկա, դրա համար էլ հպարտանում ես:

ԳԻԿՈՅ—Չէ, կնքամայր, լո՛ւր: Դու ինձ լսիր: Տես, թե գրեխիս ինչ բաներ են եկել: Մի անգամ, պասին էր, մեծ պասին: Դե, ես էլ պաս էի պահում: Ու սատանայի պես այնպես եղավ, որ եկավ գյուղացու մեկը փող ուզելու, փայտ էր բերել: Հենց այդ ժամանակ պիտի գա՞ր: Մեղանչեցի՞ չդիմացա: Հայհոյեցի, այնպես հայհոյեցի, որ դրանից լավ էլ հնար չկար. քիչ էր մնում ծեծելի: Ա՛յ, թե ինչ տեսակ սիրտ է իմ սիրտը: Հետո էլ թողություն էի խնդրում, մինչև գետին էի խոնարհվում մուծիկի առջև: Ահա, թե ինչեր է անում իմ սիրտը: Այստեղ, բակում, ցեխի մեջ էի խոնարհվում, մարդկանց առջև:

ԿԱՔԱՆՈՎԱ—Իսկ ինչո՞ւ ես դու դիտմամբ սիրտդ բարկացնում: Լավ չէ, ախր, կնքահայր:

ԳԻԿՈՅ—Ինչպե՞ս թե՛ դիտմամբ:

ԿԱՔԱՆՈՎԱ—Տեսել եմ, գիտեմ: Հենց որ տեսնում ես քեզնից որևէ բան են ուզում խնդրել, իսկույն վերցնում ու հարձակվում ես տանեցիներից մեկն ու մեկի վրա, որ զայրանաս, որովհետև գիտես արդեն, որ եթե զայրացած ես, քեզ ոչ ոք չի մոտենա: Ահա թե ինչ:

ԳԻԿՈՅ—Հետո, որ ի՞նչ: Ո՞վ չի ափսոսում իր բարիքը:

Գալիս է Գլաշան:

ՔԱՆՈՒՄ—Մարֆա Իգնատևնա, պատրաստ է, համեցեք:
ԿԱՐԱՆՈՎԱ—Դեհ, կեքահայր, մտիր: Անուշ արա ինչ որ
աստված տվել է:
ԴԻԿՈՅ—Դեհ, լավ:
ԿԱՐԱՆՈՎԱ—Համեցեք: (Առաջ է բողբուում Գիկոյին և գնում
է նրա ետևից):

Գառն ձեռքեր կոճիկ կանգնած է գոտն մտո:

ՎԱՇԱ — Ոնց որ թե Բորիս Գրիգորին է գալիս: Զլինի՞
հորեղբորն է փնտրում, թե՛ այնպես զբոսնում է: Երևի
զբոսնում է:

Մտնում է Բորիս:

Տեառան երրորդ

Գառա, Բորիս, ապա Կուրբան:

ԲՈՐԻՍ—Հորեղբայրս ձեր տա՞նն է:

ՎԱՇԱ—Դու, ի՞նչ է, ուզում ես տեսնե՞լ նրան: Մեր տանն է:

ԲՈՐԻՍ—Տանից ուղարկել են իմանալու, թե որտեղ է: Դե, որ
այստեղ է, թող նստի. ո՞վ է կարոտել: Տանը հո ուրախ
են, որ գնացել է:

ՎԱՇԱ—Մեր տիրուհին պիտի նրա կինը լինեք, շուտով
կկոտրեիր նրա կամքը: Բայց ի՞նչ եմ հիմաքի նման
կանգնել ու զրուցում: Մնա՞ս բարո՞ղ: (Գնում է):

ԲՈՐԻՍ—Ահ, տեր աստված, գոնե մի աչքի ծայրով նայեի
նրան: Տուն մտնել չի կարելի, այստեղ անկողն հյարեր
չեն գալիս: Ի՞նչ կյանք է, աստված իմ: Ապրում ենք
նույն քաղաքում, գրեթե կողք-կողքի, իսկ տեսնվում
ենք հազիվ շաբաթը մեկ անգամ, այն էլ եկեղեցում
կամ ճանապարհին, ահա և ամբողջը:

Լուսյուն:

Եթե բոլորովին շտեմնվեի, ավելի թեթև կլինեիր: Թե չե՛
տեսնում ես այսպես կցկտաբ, ախ՛ էլ ժարդկանց ներ-

կայությամբ, և հարյուրավոր աչքեր են նայում քեզ վրա:
Միայն սիրող է կարատվում: Ու քեզ էլ շես կարողանում
հաղթել: Գնում ես զբոսնելու և միշտ այնպես է լինում,
որ դուրս ես գալիս այստեղ: Եվ ինչո՞ւ եմ գալիս, ինչո՞ւ
Տեսնել նրան երբեք չի կարելի, իսկ խոսք ու զրույց թե
դուրս եկավ՝ նրան պիտի պցեն փորձանքի մեջ: Այս ինչ
քաղաք է... (Գնում է: Նսան դեմ է գալիս Կուրբանը):

ԿՈՒՐԲԱՆ—Ի՞նչ է, տեր իմ, բարեհաճում եք գրասնե՞լ:

ԲՈՐԻՍ—Այո, այնպես ման եմ գալիս... Շատ լավ եղա-
նակ է:

ԿՈՒՐԲԱՆ—Շատ լավ է, տեր իմ, այս ժամին զբոսնելու: Խա-
ղաղություն, օգբ մաքուր, վուլգայի այն ափից ծաղկանց
հոտ է բուրում, երկինքը պարզ...

Բացվեց անդունդը, լի աստղեր,
Աստղերն անթիվ, անդունդը՝ սև...

Գնանք բուլվար, տեր իմ, այնտեղ հիմա ոչ ոք չկա:

ԲՈՐԻՍ—Գնանք:

ԿՈՒՐԲԱՆ—Այ թե ինչ քաղաք է, պարոն, մեր քաղաքը:
Բուլվար են շինել, բայց շեն զբոսնում: Զբոսնում են
միայն տես օրերին, այն էլ ձեռքնում են, թե զբոսնում
են՝ զգեստներն են ցույց տալիս: Միայն հարթած գրա-
գիրն է, որ տեսնում ես, գրեթե ոչ ոք է քարշ գալիս:
Աղքատ մարդը, տեր իմ, ժամանակ չունի, նա օր ու
գիշեր գործի վրա է: Եվ օրեկան հազիվ միայն երեք
ժամ է բնում: Իսկ հարուստներն ի՞նչ են անում: Ինչո՞ւ
նրանք չպիտի զբոսնեին ու մաքուր օդ շնչեին: Բայց
չէ՛: Բոլորի դուներն էլ վաղուց արդեն փակ են և շներն
արձակված: Դուք կարծում եք, գործո՞վ են զբաղված,
կամ աստօ՞ն են ազոթում: Ոչ, տեր իմ: Եվ ոչ էլ գո-
ղերից են փակվում, այլ որպեսզի օտար մարդիկ չտես-
նեն, թե ինչպես են կրծում հարազատների հոգին ու
մարմինը և ճնշում իրենց ընտանիքը: Եվ որքա՞ն, որ-
քա՞ն արցունք է թափվում այս փակ դուների ետևում՝
աներևույթ և անխելի... Եվ ինչո՞ւ եմ ասում ձեզ այս
բոլորը, ինքներգ էլ գիտեք հենց ձեր օրինակով: Եվ
ինչքա՞ն մութ ու մռայլ ցոփություն կա այս կողպեք-

ների այն կողմում, ինչպիսի՞ հարեցողություն: Եվ ամեն բան այնպես գաղտնի է. ոչ ոք չի տեսնում, ոչ ոք չգիտե. հայտնի է միայն աստծուն: Դու, ասում է, տես ինձ մարդամիջում և փողոցում, իսկ ընտանիքիս հետ, ասում է, գործ չունես, դրա համար, ասում է, ես կողպեքներ ունեմ և կատաղած շներ: Ընտանիքն, ասում է, գաղտնի բան է ու խորհրդավոր... գիտե՞նք այդ գաղտնիքները: Այդ գաղտնիքներից հենց միայն ինքն է ուրախանում, իսկ մյուսները գայլերի նման են ոռնում: Եվ ի՞նչ էլ գաղտնիք է: Ո՞վ չի իմանում: Կողոպտել որբերին, ազգականներին, բարեկամներին, կողպել տնեցիներին այնպես, որ իր արածների մասին ծպտուն անգամ չհանեն: Ահա՛ և ողջ գաղտնիքը: Է՛հ, աստված նրանց հետ: Իսկ դուք գիտե՞ք, տեր իմ, ովքե՞ր են զբոսնում մեզ մոտ: Զահել տղաներն ու աղջիկները: Սրանք էլ մի երկու ժամ են գողանում գիշերվա քնից. դե, և զբոսնում են զուլգերով: Ահա հենց մի զուլգը:

Երևում են Կալոյաշն ու Վարվառն: Համբուրվում են:

ԲՈՐԻՍ—Համբուրվում են:

ԿՈՒԻԻԳԻՆ—Այդ մեզ մոտ նշանակություն չունի:

Կալոյաշը գնում է, իսկ Վարվառն մտնում է դարպասին և կանչում Բորիսին: Սա գալիս է:

Տեսարան չորրորդ

Բորիս, Կուիգին, Վարվառն:

ԿՈՒԻԻԳԻՆ—Ես, տեր իմ, բուլվար կգնամ: Ինչո՞ւ խանգարեմ ձեզ: Այնտեղ էլ կսպասեմ:

ԲՈՐԻՍ—Լավ, ես հիմա կգամ:

Կուիգինը գնում է:

ՎԱՐՎԱՌԱ — (Կլիաշորը ֆաշելով): Կաբանովի այգու ետևի ձորակը գիտե՞ս:

ԲՈՐԻՍ—Գիտեմ:

ՎԱՐՎԱՌԱ—Դե, կգաս այնտեղ, որ մթնեց:

ԲՈՐԻՍ—Ինչո՞ւ:

ՎԱՐՎԱՌԱ—Ինչ հիմարն ես: Կգաս այնտեղ՝ կիմանաս: Թե ինչու: Դե, գնա, գնա, քեզ այնտեղ սպասում են:

Բորիսը գնում է:

ԶՃանաչեց էլ: Դե թող հիմա մտածի: Իսկ ես արդեն գիտեմ, որ Կատերինան չի համբերի, դուրս կթուլի (Մտնում է ներս):

Պատկեր երկրորդ

Գիշեր է: Քփերով ծածկված մի ձօռակ: Վերևում Կաբանովների այգու ցանկապատը և դռակը: Վերեից՝ արտնետք:

Տեսարան առաջին

ԿՈՒԻԻԳԻՆ — (Գալիս է կիրառով): Մարդ չկա: Այս ինչո՞ւ է ուշանում: Դե, լավ, կնստենք, կսպասենք: (Նստում է ֆաշին): Եվ ձանձրույթից երգ կերպենք: (Երգում է):

«Երբ կազակը Դոնի ձին տանում էր ջրի, Դոնն մոտ էր արդեն էն շահել պատանին, Նա կանգնած էր ու լուս մտածմունք էր անում, Թե ես ո՞նց իր սիրուն, իր կնոջն սպանի: Ու կնիկն էլ նրա աղբրսում էր մարդուն, Աղաշում ու լացում էր, մազերն էր քանդում,— Սիրելիս իմ, ասում էր, սրտիս իմ արև, Դու ինչո՞ւ ես լուսով իմ գուլիք շարդում: Խփիր ու սպանիր ինձ գիշերը երբ գա, Որ իմ խեղճ մանուկները ննջեն, չզգան, Օտարն ու մոտիկը իմ մահը չզգան...»:

Մտնում է Բորիսը:

Տեսարան Երկրորդ

Կողմը և Բորիս:

ԿՈՒԴՐՅԱՇ—(Գաղտնու՞մ է եզո՞մբուց): Տեսնո՞ւմ եք: Խոհեմ է: Խոհեմ, բայց տես, որ սա էլ է սկսել...

ԲՈՐԻՍ—Այդ դո՞ւ ես, Կուզո՞յալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ես եմ, Բորիս Գրիգորիչ:

ԲՈՐԻՍ—Դու ինչո՞ւ ես այստեղ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ե՛ս: Արեմն պետք է, որ այստեղ եմ: Առանց պատճառի չէի գա: Իսկ դո՞ւք ինչու եք եկել:

ԲՈՐԻՍ—(Նայելով շուրջը): Այ թե ինչ, Կուզո՞յալ: Ես պետք է մնամ այստեղ, իսկ քեզ համար, կարծում եմ, միևնույն է, դու կարող ես և ուրիշ տեղ գնալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ոչ, Բորիս Գրիգորիչ, ես տեսնում եմ, որ դուք առաջին անգամն է այստեղ եք, իսկ ես արդեն տաքացրած տեղ ունեմ այստեղ ու ճանապարհն էլ ինքս եմ բաց արել: Ես ձեզ սիրում եմ, տեր իմ, ու պատրաստ եմ ձեզ համար ամեն ծառայություն անելու, բայց գիշերով դուք ինձ այս ճանապարհին չպատահեք, թե չէ, տեր մի արասցե, մեղք դուրս կգա: Պայմանը պայման է:

ԲՈՐԻՍ—Քեզ ի՞նչ պատահեց, Վանյա:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ի՞նչ Վանյա, Վանյա: Ինքս էլ գիտեմ, որ Վանյա եմ: Իսկ դուք անցեք ձեր ճանապարհով ու, վերջ: Գտի՛ր քեզ համար մեկը ու հետը քեֆ արա, և ոչ ոք էլ քեզ խոսք չի ասի: Էսկ արթններինը ձեռք մի՛ տա: Մեզանում այդպիսի կարգ կա: Թե չէ, տղաները ոտքերդ կշարդեն: Ես իմիս համար... չգիտեմ էլ, թե ի՞նչ կարող եմ անել... Վերջ կկտրեմ:

ԲՈՐԻՍ—Ի՞նչու ես բարկանում... Իմ մտքովն էլ չի անցնում քո ձեռքից խել: Ես չէի էլ գա, եթե չպատվիրեիր:

ԿՈՒԴՐՅԱՇ—Իսկ ո՞վ է պատվիրել:

ԲՈՐԻՍ—Չճանաչեցի, մութ էր: Ինչ-որ մի ջահել աղջիկ էր, կանգնեցրեց ինձ փողոցում և ասաց, որ ես հենց այստեղ գամ, Կաբանովների այգու ետևը, այս ճանապարհի մոտ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Բայց ո՞վ էր, ախր, այդ աղջիկը:

ԲՈՐԻՍ—Լսիր, Կուզո՞յալ, քեզ հետ կարելի՞ է անկեղծ խոսել, ոչ ոքի չե՛ս ասի:

ԿՈՒԴՐՅԱՇ—Խոսեք, մի՛ վախենաք: Ինձ ասած, ոնց որ մեռելին ասած:

ԲՈՐԻՍ—Ես այստեղ ոչինչ չգիտեմ, ո՞չ ձեր կարգերը, ո՞չ սովորությունները, իսկ բանն այնպես է, որ...

ԿՈՒԴՐՅԱՇ—Սիրահարվե՞լ եք ինչ է, մեկին:

ԲՈՐԻՍ—Այո՛, Կուզո՞յալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դա վատ չէ, ոչինչ: Մեզանում այդ կողմից ազատ է: Աղջիկներն իրենց ուզածի պես քեֆ են բաշում, հայր ու մայրը չեն խառնվում: Գծվարը ամուսնացածների գործն է:

ԲՈՐԻՍ—Իմ ցավն էլ հենց այդ է, ախր:

ԿՈՒԴՐՅԱՇ—Չլինի թե ամուսնացածի եք սիրել:

ԲՈՐԻՍ—Այո, Կուզո՞յալ:

ԿՈՒԴՐՅԱՇ—է՛հ, Բորիս Գրիգորիչ, պետք է ձեռք բաշել:

ԲՈՐԻՍ—Չե՛լտ է ասել. ձեռք բաշիր: Քեզ համար դա գուցեև միևնույն է: Դու մեկից ձեռք կբաշես, մի ուրիշը կբաշես: Իսկ ես այդպես չեմ կարող, ես մեկին որ սիրեցի...

ԿՈՒԴՐՅԱՇ—Դա նշանակում է, ախր, որ դուք նրան բոլորովին կործանել եք ուզում, Բորիս Գրիգորիչ:

ԲՈՐԻՍ—Տեր մի՛ արասցե, տեր մի՛ արասցե: Չէ՛, Կուզո՞յալ, ինչպե՛ս կարելի է: Ես կուզենամ միթե նրա մահը: Ես միայն մի քիչ տեսնել եմ ուզում, ավել ինձ ոչինչ հարկավոր չէ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ո՞վ կարող է իր համար երաշխավորել: Իսկ ժողովուրդն այստեղ, ինքներք գիտեք, ի՞նչ ժողովուրդ է: Գլուխը կուտեն ու գերեզման կզնեն:

ԲՈՐԻՍ—Ահ, մի՛ ասի այդպես, Կուզո՞յալ, խնդրում եմ, մի՛ վախենի ինձ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Իսկ նա ձեզ սիրո՞ւմ է:

ԲՈՐԻՍ—Չգիտեմ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Բայց դուք գոնե մեկ անգամ տեսնվե՞լ եք, թե՞ չէ:

ԲՈՐԻՍ—Ես միայն մեկ անգամ հորեղբորս հետ եղել եմ նը-

բանց տանը: Միշտ եկեղեցումն եմ տեսնում, բուլվարում ենք հանդիպում: Ահ, Կուղբյաշ, եթե իմանայիր, ինչպե՞ս է նա ազդեցում: Ի՞նչ հրեշտակային ժպիտ է լինում դեմքին, ուղղակի կարծես լույս է տարածվում: ԿՈՒԴՐՅԱՇ—Ուրեմն դա ջահել Կարանովա՞ն է, հա՞:

ԲՈՐԻՍ—Նա՛ է, Կուղբյաշ:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ահա թե ի՞նչ... Դեհ, պատիվ ունեմ շնորհավորելու:

ԲՈՐԻՍ—Ի՞նչը:

ԿՈՒԴՐՅԱՇ—Դե, իհարկե: Ուրեմն ձեր գործը գլուխ է դալիս, երբ որ նա պատվիրել է գալ այստեղ:

ԲՈՐԻՍ—Բայց մի՞թե նա է պատվիրել:

ԿՈՒԴՐՅԱՇ—Հապա էլ ո՞վ:

ԲՈՐԻՍ—Ձէ, դու կատակ ես անում: Այդ չի՛ կարող լինել: (Բռնում է գլուխը):

ԿՈՒԴՐՅԱՇ—Ի՞նչ եղավ ձեզ:

ԲՈՐԻՍ—Ես կխենթանամ ուրախությունից:

ԿՈՒԴՐՅԱՇ—է՛լ ինչ: Ի՞նչ խենթանալու բան կա: Միայն թե տեսեք, գլխներիդ փորձանք չբերեք: Ու նրան էլ փորձանքի մեջ չպցեք: Ասենք, նրա մարդը թեև հիմար է, բայց սկեսուրը շատ դաժանն է:

Վարվառան դուրս է գալիս գոնակից:

Տեսարան երրորդ

Նաեմ և Վարվառան, ապա Կատերինան

ՎԱՐՎԱՌԱ—(Դռնակի մոտ երգում է):

«Էն ափին, գետափին,
էն վարար ջրաճամփին,
իմ վանելուան էստեղ...»

ԿՈՒԴՐՅԱՇ—(Շարունակում է):

Ապրանքներ է գնել:

Սուրում է:

ՎԱՐՎԱՌԱ—(Իջնում է շավղով ցած և երեսը գլխաշորով ծածկում՝ մոտենում է Բորիսին): Դու սպասիր այստեղ, երիտասարդ: Մի բան էլ քո ձեռքը կընկնի: (Կուղբյաշին): Գնա՛նք դեպի Վոլգան:

ԿՈՒԴՐՅԱՇ—Ի՞նչ եղավ քեզ: Այսքան էլ կսպասեցնե՞ն, Գիտես, որ չեմ սիրում:

Վարվառան գրկում է նրան մի ձեռքով ու գնում են:

ԲՈՐԻՍ—Կարծես երազ եմ տեսնում: Այս գիշերը, երգերը, հանդիպումները: Գնում են իրար գրկած: Այնքան նոր է այս ինձ համար, այնքան լավ է, ուրախալի... Ահա ես էլ եմ սպասում: Իսկ ի՞նչ եմ սպասում՝ չգիտեմ ու պատկերացնել էլ չեմ կարող, միայն սիրտս է բաբախում ու զոզում են բոլոր ջղերս: Երևակայել անգամ չեմ կարող, թե ի՞նչ պիտի ասեմ նրան, շունչս կտրվում է և ոտքերս զոզում են: Այսպես է միշտ, անմիտ սիրտս որ հանկարծ տաքանում է, հնար չկա զսպելու... Ահա գալիս է:

Կատերինան, մեծ, սպիտակ գլխաշորն օսերին, կամազով իջնում է շավղով: Աչքերը հառել է գետին: Լուսլույս:

Այդ գո՞ւք եք, Կատերինա Պետրովնա:

Լուսլույս:

Ուղղակի չգիտեմ, թե ինչպես շնորհակալ լինեմ ձեզնից:

Լուսլույս:

Եթե միայն իմանայիք, Կատերինա Պետրովնա, թե ինչպես եմ սիրում ձեզ: (Ուզում է բռնել նրա ձեռքը):

ԿԱՏԵՐԻՆԱ—(Վախեցած և առանց աչքերը բարձրացնելու): Ձեռք մի՛ տա ինձ, ձեռք մի՛ տա... Ա՛խ, ա՛խ...

ԲՈՐԻՍ—Մի՛ բարկանաք:

ԿԱՏԵՐԻՆԱ—Հեռացի՛ր ինձնից: Հեռացի՛ր, գնա, անիծված: Դու գիտե՞ս, որ այս մեղքը ես երբեք չեմ կարող բավել: Երբե՛ք: Քարի նման է ծանրանալու սրտիս վրա: Մանր քարի:

ԲՈՐԻՍ—Մի՛ վրեղեք ինձ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինչո՞ւ ես եկել: Ինչո՞ւ ես եկել, իմ սևաբեր սա-

տանա... Ես չե՞ որ ամուսնացած եմ, ես չե՞ որ մինչև մահ ու գերեզման պիտի ապրեմ նրա հետ, մինչև մահ ու գերեզման:

ԲՈՐԻՍ—Գուր ինքներդ եք պատվիրել:

ԿԱՏԵՐԻՆԱ—Հասկացիր, ախր, շար իմ ոտիս, մինչև մահ ու գերեզման...

ԲՈՐԻՍ—Ավելի լավ էր՝ ես ձեզ երբեք չտեսնեի:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Հուզված): Եվ ի՞նչ եմ պատրաստում ես ինձ համար, գիտե՞ս դու այդ: Գիտե՞ս, որտեղ է այսուհետև իմ տեղը:

ԲՈՐԻՍ—Հանգստացե՛ք: (Բռնում է նրա ձեռքը): Նստե՛ք:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինչո՞ւ ես դու իմ մահը ցանկանում:

ԲՈՐԻՍ—Ես ինչպե՞ս կարող եմ ձեր մահը ցանկանալ, երբ սիրում եմ ձեզ աշխարհումս ամեն բանից ավելի, ինձնից էլ ավելի...

ԿԱՏԵՐԻՆԱ—Ձէ, չէ: Կործանեցի՞ր դու ինձ:

ԲՈՐԻՍ—Ես մի՞թե չարագործ եմ:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Պլուխն օրոհելով): Կործանեցի՞ր, կործանեցի՞ր, կործանեցի՞ր:

ԲՈՐԻՍ—Տե՛ր մի արասցե: Ավելի լավ է ես ինքս կործանվեմ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ախր, ինչպե՞ս չես կործանել, երբ ես, ահա գիշերով տունը թողած գալիս եմ քեզ մոտ:

ԲՈՐԻՍ—Այդպիսին էր ձեր կամքը:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ես կամք չունեմ: Եթե ես կամք ունենայի, քեզ մոտ չէի գա: (Աչքերը բարձրացնում է ու նայում Բորիսին):

Կարճ բարբյուր:

Հիմա քո կամքն է իշխում ինձ, մի՞թե դու չես տեսնում: (Փառվում է նրան):

ԲՈՐԻՍ—(Գրկելով նրան): Կյանք ու արև՝ իմ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Գիտե՞ս ինչ: Հիմա ես հանկարծ մեռնել ցանկացա:

ԲՈՐԻՍ—Ինչո՞ւ մեռնել, երբ որ կյանքը մեզ համար այնքան լավ է:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ձէ, ես չեմ ապրելու: Ես արդեն գիտեմ, որ չեմ ապրելու:

ԲՈՐԻՍ—Մի՛ ասիր այդ խոսքերն, աղաչում եմ, մի՛ կոտրիր իմ սիրտը:

ԿԱՏԵՐԻՆԱ—Հա, քեզ համար ի՞նչ կա որ... Գու ազատ կազակ ես, իսկ ես...

ԲՈՐԻՍ—Ոչ ոք չի իմանա մեր սերը: Մի՞թե ես քեզ չեմ խղճա:

ԿԱՏԵՐԻՆԱ—է՛հ, ի՞նչ կարիք կա ինձ խղճալու: Ոչ ոք էլ մեղավոր չէ, ինքս եմ արել: Մի՛ խղճա, կործանիր ինձ: Թո՛ղ բոլորն էլ իմանան, բոլորն էլ թող տեսնեն, թե ինչե՛ր եմ անում: (Գրկում է Բորիսին): Երբ ես քեզ համար մեղքից չվախեցա, կվախենա՞մ միթե մարդկանց դատաստանից: Ասում են, դեռ լավ էլ է լինում, երբ որ որևէ մեղքիդ համար այստեղ, աշխարհում ես կրում քո տանջանքը:

ԲՈՐԻՍ—է՛հ, ի՞նչ կարիք կա դրա մասին մտածելու, ուրախ եգի՞ր, որ մենք հիմա բախտավոր ենք:

ԿԱՏԵՐԻՆԱ—Իսկապես... Միտք անել ու լաց լինել պարազ ժամանակ էլ կարող եմ:

ԲՈՐԻՍ—Իսկ ես արդեն վախեցա: Կարծում էի, կվռնդես ինձ:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Փապալով): Վռնե՞լ: Ձէ՛, ո՛ւշ է արդեն: Մեր սրտի բա՞նն է, միթե: Եթե դու չգայիր, ես երևի ինքս կգայի քեզ մոտ:

ԲՈՐԻՍ—Ես չգիտեի էլ, թե դու ինձ սիրում ես:

ԿԱՏԵՐԻՆԱ—Վաղո՞ւց եմ սիրում: Կարծես, հենց իմ մեղքի համար ես եկել դու մեզ մոտ: Այն օրից, ինչ քեզ տեսել եմ, գլուխս կորցրել եմ: Հենց առաջին անգամից, թվում է, որ մատով կանչեիր ինձ, կգայի քո ետևից... զնա թեկուզ մինչև աշխարհի ծայրը, միևնույն է, կգայի ու ետ էլ չէի նայի:

ԲՈՐԻՍ—Իսկ նա երկա՞ր ժամանակով է գնացել, ամուսինդ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Երկու շաբաթով:

ԲՈՐԻՍ—Օ՛, ուրեմն քե՞ֆ կանենք... Ժամանակ շատ կա:

ԿԱՏԵՐԻՆԱ—Քե՞ք կանենք, իսկ ապա... (Մտածում է): Որ գցեն նորից կողպեքի տակ՝ մահ է: Իսկ եթե չկողպեն, մի հնար կգտնեմ քեզ հետ տեսնվելու:

Գալիս են Կալոյաշն ու Վարվառան:

-Տ Ե Ա Ր Ա Ն Հ Ո Ր Ր Ո Ր Ղ

Նժանք, Կուղբաշը և Վարվառան

ՎԱՐՎԱՌԱ — Դե, ի՞նչ է, հարմարվեցի՞ր:

Կատերինան երեսը բաճեցում է Բարիսի կրծքին:

ԲՈՐԻՍ — Հարմարվեցի՞նք:

ՎԱՐՎԱՌԱ — Գնայիք մի քիչ ման գայիք, իսկ մենք կսպասենք: Երբ որ հարկավոր լինի, Վանյան ձայն կտա:

Բորիսն ու Կատերինան զենում են: Կուղբաշն ու Վարվառան նստում են քարին:

ԿՈՒԴՐՅԱՇ — Իսկ դուք լավ եք մտածել՝ այգու դռնակով դուրս գալ: Մեզ համար դա նույնիսկ շատ հարմար է:

ՎԱՐՎԱՌԱ — Բոլորն իմ արածն է:

ԿՈՒԴՐՅԱՇ — Դե, դու վարպետ ես: Իսկ մայրդ հանկարծ չի՞ նկատի:

ՎԱՐՎԱՌԱ — Է՛, որտեղի՞ց: Նրա մտքո՞վն էլ չի անցնի:

ԿՈՒԴՐՅԱՇ — Իսկ եթե հանկա՞րծ, հակառակի պես:

ՎԱՐՎԱՌԱ — Նրա առաջին քունը շատ խորն է, ա՛յ, առավոտները իսկույն արթնանում է:

ԿՈՒԴՐՅԱՇ — Դե, ախր, ո՞վ գիտես: Հանկարծ, թարսի պես արթնացավ:

ՎԱՐՎԱՌԱ — Է՛, ի՞նչ անենք: Մեր դռնակը, այն, որ բակի մեջն է, ներսի կողմից է փակված: Կծեժի, կծեժի, ու կգնա: Իսկ առավոտյան մենք կասենք, որ շատ խորն էինք քնել, շենք լսել: Գլաշան էլ հսկում է: Բան որ լինի, ձայն կտա: Առանց դրան չի լինի, ինչպե՞ս կարելի է: Մեկ էլ տեսար փորձանքի մեջ ընկար:

Կուղբաշը կիբառի վրա մի քանի ակող է վերցնում: Վարվառան նեճվում է նրա ուսին: Կուղբաշն ուղադրություն շղարձեցի, կամացուկ նվագում է:

(Հորանջելով): Ինչպե՞ս իմանանք, հիմա ժամը քանիսն է:

ԿՈՒԴՐՅԱՇ — Մեկի մոտ է:

ՎԱՐՎԱՌԱ — Որտեղի՞ց գիտես:

ԿՈՒԴՐՅԱՇ — Պահակը զանգեր տվեց:

ՎԱՐՎԱՌԱ — (Հորանջելով): Դե, ժամանակն է: Ապա ձայն տուր: Վաղը մենք շուտ կգանք, ավելի շատ կզբոսենք:

ԿՈՒԴՐՅԱՇ — (Սուլում է և բարձրաձայն երգում):

«Բոլորը տուն, բոլորը տուն,
ճ՛ս եմ, որ տուն չեմ ուզում...»:

ԲՈՐԻՍ — (Թեմի ետևից): Հսո՛ւմ եմ:

ՎԱՐՎԱՌԱ — (Ելնում է): Դե, գնաս բարով: (Հորանջում է, ապա՝ համբուրում է նրան սառն, ինչպես վաղուց ծանոթ մեկին): Վաղը, տեսեք, մի քիչ շուտ եկեք: (Նայում է այն կողմը, ուր զնացել են Բորիսն ու Կատերինան): Հերիք եղավ ձեզ, հարյուր տարով հո՞ չեք բաժանվում, վաղը կտեսնվե՞նք: (Հորանջում և նմկատում է):

Ներս է վազում Կատերինան, նրա ետևից Բորիսը:

Տ Ե Ա Ր Ա Ն Հ Ի Ն Չ Ե Ր Ո Ր Ղ

Կուղբաշ, Վարվառա, Կատերինա և Բարիս:

ԿԱՏԵՐԻՆԱ — (Վարվառային): Դե, գնանք, գնանք: (Բարձրաճում են շավղով: Կատերինան ետ է նայում): Մնաս բարով:

ԲՈՐԻՍ — Մինչև վաղը:

ԿԱՏԵՐԻՆԱ — Հա, հա, մինչև վաղը: Երազումդ ինչ որ տեսնես, պատմիր:

Մտնելում է դռնակին:

ԲՈՐԻՍ — Անպատճառ:

ԿՈՒԴՐՅԱՇ — (Երգում է կիբառի նվագակցությամբ):

«Սեր արա, սեր մինչ ի մութ,
Մինչ ի ալ-վառ մայրամուտ,—
Սյ լիլի-լիլ, մինչ ի մութ,
Մինչ ի ալ-վառ մայրամուտ»:

ՎԱՐՎԱՌԱ — (Գրեակի մտ):

«ես շահել եմ մինչ ի շող,
Մինչ ի անմար սիրադող,—
Այ, լիլի-լիլ, մինչ ի շող,
Մինչ ի անմար սիրադող...»:

Գնում են:

ԿՈՒԴՐՅԱՇ — (Երգում է):

«Երբ իջնում է շող մթին,—
Յեր իմ, շահ ես իմ սրտին...»:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՂՈՐԳ

Առաջին պլանում ինչ-որ հեռակառույց է կամարավոր, այժմ
աստիճանաբար բանդվող շինություն մի նեղ գալիքիս:
Տեղ-տեղ կանաչ է քփեր: Կամարներից այն կողմ՝ գիտափ
և Վոլգայի տեսարանը:

Տեսարան առաջին

Մի հանր գրասենյակ կին է տղամարդ անցնում են կամար-
ների ետևից:

1-ին—Անձրև է կաթում: Փոթորիկ չբարձրանա՞:

2-րդ—Անպայման կբարձրանա:

1-ին— Լավ է, որ թաքնվելու տեղ կա:

Բոլոր մտնում են կամարների տակ:

Կին—Եվ որքան էլ ծողովուրդ կա բուլվարում: Թրբ տոնա-
կան, բոլորը դուրս են թափվել: Կանայք էլ այնպես
դուզվել-զարդարվել են:

1-ին—Մի տեղ կմտնեն՞:

2-րդ—Դու տես, թե հիմա ինչքան մարդ է լցվելու այստեղ:

1-ին—(Ձենելով պատերը): Իսկ այստեղ, եղբայր իմ, երևում

է, մի ժամանակ պատերը նկարազարդված են եղել
Գեո հիմա էլ տեղ-տեղ երևում է:

2-րդ—Դե, իհարկե, ապա ի՞նչ էիր կարծում: Իսկ հիմա տես-
նում ես, ամեն ինչ թողել են անտեր, դրա համար էլ
քանդվում է, խոտ է բուսնել ամեն տեղ... Հրդեհից հե-
տո այլևս ոչ ոք տիրություն չի արել: Դու, ասենք, այդ
հրդեհը շե՞ս էլ հիշի, համարյա քառասուն տարի է ան-
ցել:

1-ին—Ի՞նչ ես կարծում, եղբայր իմ, ի՞նչ է եղել այստեղ
նկարված: Շատ դժվար է հասկանալ:

2-րդ—Դա՞: Դա դեհենական կրակ է:

1-ին—Այո, ճիշտ որ:

2-րդ—Ու գնում են այնտեղ ամեն կողման տեր մարդիկ:

1-ին—Այո, այո, հիմա հասկանում եմ:

2-րդ—Եվ ամեն աստիճանի:

1-ին—Արաբներն էլ:

2-րդ—Արաբներն էլ:

1-ին—Իսկ սա ի՞նչ է, եղբայր իմ:

2-րդ—Սա էլ՝ կիտվայի վերումն է: Տեսնո՞ւմ ես՝ կոփվ է:
Այսինքն թե մերոնք ինչպես էին կոփել կիտվայի դեմ:

1-ին—Իսկ դա ի՞նչ բան է, այդ կիտվան:

2-րդ—Հենց կիտվան է որ կա:

1-ին—Իսկ, օրինակ, ասում էին, թե նա երկնքից էր ընկել
մեր գլխին:

2-րդ—Հաստատ շեմ կարող ասել: Երկնքից է, դեհ, թող եր-
կընքից լինի:

Կին—Խելքիդ զոռ տուր, տեսնեմ: Բոլորն էլ գիտեն, որ եր-
կընքից է ընկել, ու որտեղ ինչ կոփվ է եղել նրա դեմ,
այնտեղ հիշատակի համար գերեզմանաթմբեր են շին-
ված:

1-ին—Եվ իսկապես էլ, եղբայր իմ, հենց ճիշտ այդպես էլ
դուրս է գալիս:

Մտնում է Գիլյոյը և նրա ետևից գլխաբաց Կուլիգներ:
Բարբը ողջունում են և հարգալիբ գիբ են բեզունում:

Յեասարան երկրորդ

Նրանք, Գիւյս և Կուփփէ:

ԳԻԿՈՅ—Գրողը տանի, ամբողջովին շուր դառանք: (Կուփփէ-երին): Ձե՛րք քաշիր ինձանից: Ձե՛րք քաշիր: (Ձայրացած): Հիմար մարդ:

ԿՈՒԼԻԳԻՆ—Սավել Պրոկոֆիչ, ախր, դրանից, ձերդ ազնվություն, բոլոր բնակիչների համար էլ օգուտ կլինի:

ԳԻԿՈՅ—Կորի գնա: Ի՞նչ օգուտ: Ո՞ւմ է հարկավոր այդ օգուտը:

ԿՈՒԼԻԳԻՆ—Հենց, թեկուզ ձեզ, ձերդ ազնվություն, Սավել Պրոկոֆիչ, Որբա՞ն լավ կլինի հենց այստեղ, բուլվարում էլ հարմարեցնելու իսկ ի՞նչ ծախս կա, որ: Սախար կուպեկանոց է: Քարե սյուն... (Ձեռներով ցույց է տալիս յուրախանջուր առարկայի շափր): Պղնձ տախտակ, այսպես կլոր, և մի հատ էլ սայրածող, սովորական մի սայրածող (ցույց է տալիս շափր): Իսկ ես արդեն կհարմարեցնեմ և թվանշաններն էլ ինքս կփորագրեմ: Եվ հիմա դուք, ձերդ ազնվություն, երբ որ բարեհաճում եք դրոսնել, կամ ուրիշները, որ նույնպես, ուրեմն, գրոսնում են, իսկույն մոտենում եք և տեսնում՝ ժամը բանիսն է: Թե՛ չէ՛՝ այսքան գեղեցիկ տեղ է և հրաշալի էլ տեսարան է, ու կարծես դատարկ է: Մեզ մոտ էլ, ձերդ ազնվություն, անցորդ ճամփորդներ են լինում, գալիս են այստեղ մեր տեսարանները դիտելու, ինչքան շինի՛ աչքի համար լավ է:

ԳԻԿՈՅ— Եվ ի՞նչ ես գլուխս տանում քո հիմար ցնդաբանություններով: Ես գուցե քեզ հետ իսկի խոսե՛լ էլ չեմ ուզում: Դու գեռ պետք է իմանայիր, տրամադրություն ունե՛մ քեզ նման հիմարին լսելու, թե՞ ոչ: Ես, ի՞նչ է, քո բնկե՛րն եմ: Սրան նայեք, ինչ կարևոր գործ է գտել: Ու գոտով էլ խցկվում է խոսելու:

ԿՈՒԼԻԳԻՆ—Եթե ես իմ անձնական գործով խցկվեի, դե, այն ժամանակ, խփապես մեղավոր կլինեի: Թե՛ չէ, ձերդ ազնվություն, հա տեսնո՞ւմ եք, որ ես բնդհանուր շահի համար եմ ասում: Եվ ինչ մեծ բան է ընդհանուր օգ-

տին մի տասը ոտբլին: Իսկ ավելին, տեր իմ, չի պահանջվի:

ԳԻԿՈՅ—Իսկ գուցե դու գողանալ ես ուզում, ո՞վ գիտե:

ԿՈՒԼԻԳԻՆ—Երբ որ ես իմ աշխատանքը ձրիաբար եմ կատարում, էլ ի՞նչ կարող եմ գողանալ, ձերդ ազնվություն: Ինձ բոլորն էլ ճանաչում են, իմ մասին ոչ ոք էլ վատ բան չի ասի:

ԳԻԿՈՅ—Թող ճանաչեն, իսկ ես քեզ ճանաչել չեմ ուզում:

ԿՈՒԼԻԳԻՆ—Ինչո՞ւ եք վիրավորում ազնիվ մարդուն, տեր իմ, Սավել Պրոկոֆիչ:

ԳԻԿՈՅ—Հիմա, ի՞նչ է, հաշիվ տամ քեզ: Ես քեզնից կարեվոր մարդկանց էլ հաշիվ չեմ տալիս: Այդպես եմ ուզում մտածել քո մասին այդպես էլ մտածում եմ: Ուրիշների համար դու ազնիվ մարդ ես, իսկ ես կարծում եմ, որ դու ավագակ ես ու վերջացավ: Ա՜յդ էիր ուզում իմանալ, ինձնից: Դե, իմացիր ուրեմն: Ասում եմ, որ ավագակ ես ու վե՛րջ: Ի՞նչ է, դա՞տ ես բաց անելու իմ գեմ: Ուրեմն իմացիր, որ դու որդ ես: Կուզենամ՝ կներեմ, կուզենամ՝ կտորբեմ:

ԿՈՒԼԻԳԻՆ—Տերը ձեզ հետ, Սավել Պրոկոֆիչ: Ես, տեր իմ, փոքր մարդ եմ, ինձ վիրավորելը դժվար գործ չէ: Բայց ես, ձերդ ազնվություն, ահա թե ինչ կասեմ ձեզ. «ե ցնցոտիներում հարգո է առաքինությունը»:

ԳԻԿՈՅ—Չհամարձակվե՛ս հանդուգն խոսքեր ասել: Լսո՞ւմ ես:

ԿՈՒԼԻԳԻՆ—Ոչ մի հանդուգն խոսք ես ձեզ չեմ ասում, տեր իմ: Իսկ այս էլ ասում եմ, որովհետև գուցե ես ցանկություն ունենաք որևէ բան անել քաղաքի համար: Կարողություն դուք շատ ունեք, ձերդ ազնվություն, միայն թե բարի ցանկություն լինեք: Այ, թեկուզ հենց այս ասեմք, մեզ մոտ շատ հաճախ են լինում ամպրոպներ, բայց երբեք չենք ուզում շանթարգելներ շինել:

ԳԻԿՈՅ—(Հպարտորեն): Ունայնություն է բոլորը:

ԿՈՒԼԻԳԻՆ—Ի՞նչ ունայնություն, երբ որ փորձեր են եղել:

ԳԻԿՈՅ—Դա՞ ինչ նոր բաներ են՝ քո այդ շանթերի արգելքները:

ԿՈՒԼԻԳԻՆ—Պողպատյա:

ԳԻԿՈՅ — (Ձայրույթով): Դե, է՛լ ինչեր:

ԿՈՒԼԻԳԻՆ — Պողպատյա ձողեր:

ԳԻՆՈՅ — (Ավելի և ավելի զայրաճալով): Լօնցիներ, որ ձողեր, գրողը տանի, հասպ ուրի՞շ էլ ինչ: Հենց հա՛ ձողեր ու ձողեր: Հետո՞:

ԿՈՒԼԻԳԻՆ — Ուրիշ ոչինչ:

ԳԻԿՈՅ — Բայց, ախր, ամպրոպն ի՞նչ բան է, քո խելքով: Հը՞: Դե, խոսի՛ր:

ԿՈՒԼԻԳԻՆ — Էլ եկարականություն է:

ԳԻԿՈՅ — (Ոտեր գեանին զարկելով): Դա՛ ինչ բան է՛ էլեւտըրականություն... Հապա էլ ո՞նց ավազակ չես: Ամպրոպը մեզ ուղարկվում է որպես պատիժ, որ մենք զզանք, իսկ դու ուղում ես ինչ-որ ձողերով ու ճիպոտներով, — տե՛ր, մեղա քեզ, աստված, — պաշտպանվել: Դու, ի՞նչ է, թո՛ւրք ես: Ասա տեսնեմ, թո՛ւրք ես: Հը՞: Չա՛յն հանիր:

ԿՈՒԼԻԳԻՆ — Սավել Պրոկոֆիչ, ձերդ ազնվություն, Գերծավինն ասել է.

Մարմնով հանգչում եմ ավազում,
Մարով՝ շանթեր եմ կաշկանդում:

ԳԻԿՈՅ — Այդ խոսքերիդ համար, ահա, քաղաքապետի մոտ որ ուղարկենք, նա քեզ այն ժամանակ շանթեր ցույց կտա: Հե՛յ, ականջ դրեք, հարգելիներ, տեսեք ինչե՛ր է խոսում:

ԿՈՒԼԻԳԻՆ — Ի՞նչ անեմ, պիտի լռեմ: Իսկ երբ որ իմ ձեռքին միլիոն կլինի, այն ժամանակ ես կխոսեմ ձեզ հետ: (Ձեռքը բախ է տալիս, գնում է):

ԳԻԿՈՅ — Ի՞նչ է, գողությունն ես անելու: Թռե՛ք, բռնե՛ք դրան: Այսպես էլ կեղծ մարդու: Եվ ի՞նչ տեսակ մարդ պիտի լինել այս ժողովրդի հետ գլուխ դնելու համար: Ուղղակի չեմ հասկանում: (Դիմելով ժողովրդին): Եվ դուք, անիծյալներ, ում ասես, որ մեղքի մեջ չեք գցի: Ահա իսկի միտք չունեի այսօր բարկանալու, իսկ նա, հակառակի պես, բարկացրեց: Գետինը մտնի: (Ձայրացած): Կտրվե՛ց անձրևը, ի՞նչ է:

1-ին — Կարծես թե կտրվեց:

ԳԻԿՈՅ — Կարծես թե իսկ դու, հիմար, գնա և տես: Թե չէ՛ կարծես:

1-ին — (Դուրս գալով կամարների տակից): Կտրվել է:

Դիպը գնում է և բայրը նրա ետևից: Մի քիչ ժամանակ բեմը դատարկ է: Ապա կամարների տակ առաջ մըտնում է Կարգառան և բաճակելով՝ նայում է:

Տեսարան երրորդ

Վարվառան, ապա Բարբը:

ՎԱՐՎԱՌԱ — Կարծես նա է:

Բեմի խորհից անցնում է Բարբը:

Սը՛սս...

Բարբը նայում է շուրջը:

Արի այստեղ (Ձեռնով կանչում է):

Բարբը գալիս է:

Ի՞նչ անենք կատերինային, ախր: Ասա խնդրեմ:

ԲՈՐԻՍ — Ի՞նչ է որ:

ՎԱՐՎԱՌԱ — Խաթա է ուղղակի: Ամառինն է եկել, գիտե՞ս, թե ոչ: Չէինք էլ սպասում, բայց եկավ:

ԲՈՐԻՍ — Չէ, չգիտեի:

ՎԱՐՎԱՌԱ — Աղջիկն ուղղակի գլուխը կորցրել է:

ԲՈՐԻՍ — Ուրեմն, հենց այն տասն օրն էր միայն, որ ես կյանք տեսա: Սրանից հետո էլ երբեք երեի շենք հանդիպի իրար:

ՎԱՐՎԱՌԱ — Ա՛հ, դու էլ: Ախր մի լսիր, տես, ի՞նչ է կատարվում: Գողում է, տենդը բռնածի պես: Գունատ է, շարունակ այս ու այն կողմ է վազվզում, իսկական ցնորված, կարծես թե բան է փնտրում խելազարի աչքերով: Առավոտը լաց եղավ, ի՞նչ լաց, ողբում էր: Ի՞նչ պիտի անենք, տեր աստված:

ԲՈՐԻՍ — Գուցե կանցնի մի կերպ:

ՎԱՐՎԱՌԱ — Դե, հագիվ թե, Աչք չունի մարդու երեսին նա-

յնու: Մայրիկն էլ արդեն կարծես նկատում է այդ, ման է գալիս և շարունակ օձի նման ծուռ աչքով է նայում, իսկ նա էլ գրանից ավելի է վատանում: Ուղղակի տանջանք է նայելը ու վախենում էլ եմ ես:

ԲՈՐԻՍ—Ինչի՞ց ես վախենում:

ՎԱՐՎԱՌԱ—Դու նրան չես ճանաչում: Նա, ախր, շատ տարօրինակն է: Ամեն բան սպասելի է նրանից: Այնպիսի բաներ կանի, որ...

ԲՈՐԻՍ—Ահ, տեր աստված, հապա ի՞նչ անենք: Դու հետը խոսեիր գոնե: Մ'իթե նրան համոզել չի լինի:

ՎԱՐՎԱՌԱ—Փորձել եմ: Լսել էլ չի ուզում: Ավելի լավ է շմուտենալ:

ԲՈՐԻՍ—Բայց ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող է անել:

ՎԱՐՎԱՌԱ—Ահա թե ինչ, կրկնի մարդու ոտքերը և ամեն բան կպատմի նրան: Ա՛յ, թե ինչից եմ վախենում:

ԲՈՐԻՍ—(Վախեցած): Կարո՞ղ է այդպիսի բան լինել:

ՎԱՐՎԱՌԱ—Նրանից ամեն բան սպասելի է:

ԲՈՐԻՍ—Որտե՞ղ է նա հիմա:

ՎԱՐՎԱՌԱ—Ամուսնու հետ հենց նոր բուզվար գնացին և մայրիկն էլ հետնենք է: Ուզում ես դու էլ գնա: Բայց չէ, մի՛ գնա, որ տեսնի, բոլորովին կշփոթվի:

Նեովում ամպերի օրոտ:

Չլինի՞ ամպրոպ է: (Դուրս է նայում): Անձրև է: Ահա ժողովուրդն էլ գալիս է: Պահվի՛ր այնտեղ մի անկյունում, իսկ ես այստեղ կկանգնեմ, որ բան չմտածեն:

Մտեմ եմ մի բանի մտղ՝ զանազան կոչման և սեփ:

Տեսարան չորրորդ

Զանազան մաղիկ, հետո կարեւոր, կարեւոր, կատարեան և կույրիկներ:

1-ին—Երևի տիկինը շատ է վախենում, որ այդպես շտապում է թաքնվել:

Կին—Միևնույն է, ինչքան ուզում ես թաքնվիր: Եթե ճակատիդ գրված է, ո՞ր պիտի փախչես:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Ներս վազելով): Ահ, վարվառա: (Բռնում և ամուր սեղմում է նրա ձեռքը):

ՎԱՐՎԱՌԱ—Հանգստացիր, ի՞նչ եղավ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Մահս է:

ՎԱՐՎԱՌԱ—Ուշքի եկ, Կատյա, ուշքի եկ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Չէ՛, չե՛մ կարող: Ոչինչ չեմ կարող: Սիրտս շատ է ցավում արդեն:

ԿԱՐԱՆՈՎԱ—(Ներս մտնելով): Հենց այդ է, որ մարդ այնպես պիտի ապրի, որ ամեն բուռն պատրաստ լինի ամեն բանի... որ այդպես ահ ու դողը չընկնի:

ԿԱՐԱՆՈՎ—Ախր, նա ինչ առանձին մեղքեր պիտի ունենա, մայրիկ: Բոլորն էլ նույն մեղքերն են, ինչ որ մեր ամենքի մեղքերը, նա ուղղակի բնությունից է վախկոտ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Իսկ դու որտեղի՞ց գիտես: Ուրիշի հոգին մութ է:

ԿԱՐԱՆՈՎ—(Կատակով): Դե, գուցե առանց ինձ մի բան եղել է, իմ օրով կարծես ոչինչ չկար:

ԿԱՐԱՆՈՎԱ—Գուցեև առանց քեզ:

ԿԱՔԱՆՈՎ—(Կատակով): Մեղա եկ, Կատյա, եթե արդեն մեղք ես գործել: Միևնույն է, ինձից չես թաքնվի, ներողություն կանես, ամեն բան գիտեմ:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Նայում է նրա աչքերին): Ահ, սիրելիս:

ՎԱՐՎԱՌԱ—Դե, ի՞նչ ես կպել ու հոգին հանում: Չե՛ս տեսնում, որ առանց այն էլ վրան հալ չկա:

Բարիք գուրս է գալիս ամբոխի միջից և ողբալուով է կարանավի:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Ճշում է): Ա՛հ:

ԿԱՐԱՆՈՎ—Ինչի՞ց վախեցար: Կարծում էիր օտա՞ր մարդ է: Մանոթ է: Հորեղբայրդ ողջ-առո՞ղջ է:

ԲՈՐԻՍ—Փառք աստծո:

ԿԱՏԵՐԻՆԱ—(Վարվառային): Է՛լ ինչ է ուզում ինձից... Բավական չէ, որ ես այսքան տանջվում եմ: (Վարվառային հենված հեկեկում է):

ՎԱՐՎԱՌԱ—(Բարձրաձայն, որ մայրը լսի): Մենք առանց այն էլ շվարել ենք, չգիտենք, ի՞նչ անենք սրան, իսկ

այստեղ դեռ ինչ-որ օտարներ են խառնվում... (Նշան է պետք բարձրին, սա հեռանում է մինչև մուտքը):

ԿՈՒԿԻՆՆԱ — (Գալիս է մինչև կենտրոն և դիմում է ամբոխին): Եվ ինչից եք վախենում, ասացեք խնդրեմ: Ամեն մի կանաչ, այժմ, ամեն մի ծաղիկ խնդում ու հրճվում է, իսկ մենք թաքնվում ենք, կարծես, վախենում ենք ինչ-որ աղետից: Կայծակը կխփի: Կայծակ չէ, դա, աստվածային բարիք է: Այո՛, բարիք: Չեզանում ամեն ինչ ասածո բարկություն է, ահեղք: Հյուսիսամասին շողա՛ դմայվե՛լ է պետք ու զարմանալ բնության իմաստության վրա. «եռվար երկրից ելնում է լույսը»: Իսկ դուք սարսափում և հորինում եք. պատերազմ է լինելու կամ սով ահագին: Գիտավոր ասող է սուրում. աչքդ չես պուկի թե հնարք լինի, գեղեցկություն է: Աստղերից հոգնել ենք արդեն, ամեն օր նույնն է, իսկ սա նորություն է: Նայիր ու զմայլվիր: Իսկ դուք վախենում եք աչք բարձրացնել անգամ, ահ ու դող եք ընկնում: Ամեն բանից էլ ձեզ համար սարսափ եք ստեղծել: Է՛հ, մարդիկ եք դուք էլ: Իսկ ես ահա չեմ վախենում: Գնանք, տեք խմ:

ՌՐԻՍ — Գնանք, այստեղ ափելի ահավոր է:

Գնում են:

Տեսարան հինգերորդ

Երան, առանց բարձի և Կուլիգինի:

ԿԱՐԱՆՈՎԱ — Տեսնո՞ւմ եք քարոզները: Այս ինչե՛ր են կատարվում, ի՞նչ ժամանակներ են եկել, ի՞նչ ուսուցիչներ են դուրս եկել: Երբ որ ծերերն են այդպես դատում, էլ շահելներից ի՞նչ կարելի է պահանջել:

ԿԻՆ — Ողջ երկիրն է բռնել: Ասես գլխարկի տակ լինենք, 1-ին — Մի նայի՛ր, ինչպես է գլորվում կծիկի նման, կարծես ամպ չէ, ինչ-որ կենդանի բան է շուտ գալիս նրա փորում: Եվ գալիս է, ուղղակի մեղ վրա է գալիս:

2-րդ — Ահա ասում եմ, շնորհա՛ս իմ խոսքը, այս փոթո-

րիկը այսպես թեթև չի՛ անցնի: Ծիշտ եմ ասում, որովհետև գիտեմ: Կամ կխփի մեկնումեկին, կամ տուն կըվառի: Ա՛յ, կտեսնես, որովհետև ահա տես, ի՞նչ արտասովոր գույն է:

ԿԱՏՈՐԻՆԱ — (Ականջ դնելով): Ինչե՛ր են ասում նրանք, ասում են մարդու է խփելու...

ԿԱՐԱՆՈՎ — Հայտնի բան է, դատարկ տեղը դուրս են տալիս: **ԿԱՐԱՆՈՎԱ** — Քեզնից մեծերին դու մի՛ դատապարտիր: Նրանք քեզնից ավել են հասկանում: Ծեր մարդիկ շատ նշաններ գիտեն ամեն ինչ իմանալու համար: Ծեր մարդը խոսքերն իզուր տեղը քամուն չի՛ տա:

ԿԱՏՈՐԻՆԱ — (Ամուսնուն): Տիշա, ես գիտեմ, ո՞ւմ է խփելու: **ՎԱՐՎԱՌԱ** — (Կատերինային կամացով): Գու գոհե մի խոսիր:

ԿԱՐԱՆՈՎ — Որտեղի՞ց գիտես:

ԿԱՏՈՐԻՆԱ — Ի՛նձ է խփելու: Աղոթեցեք այն ժամանակ ինձ համար:

Գալիս է տիկինն իր սպասավորներով: Կատերինան ճիչ արձակելով բաժնվում է:

Տեսարան վեցերորդ

Երան և տիկինը:

ՏԻԿԻՆ — Ո՛ւր ես թաքնվում: Զո՛ւր ես փախչում: Երևում է, վախենում ես, չե՛ս ուզում մեռնել: Ապրե՛լ ես ուզում: Եվ ինչպե՞ս չուզենաս... Տեսնո՞ւմ եք, ի՞նչ գեղեցկուհին է... Հա՛, հա՛, հա՛, գեղեցկություն: Իսկ դու աղոթիր աստծուն, որ գեղեցկությունդ հետ առնի քեզնից: Գեղեցկությունն, ախր, մեր մահն ու կործանումն է: Քեզ էլ որ կործանես ու մարդկանց էլ գայթակղեցնես, այն ժամանակ ինչպե՞ս ես խնդալու քո գեղեցկությամբ: Անթի՛վ, անթի՛վ մարդկանց պիտի գցես մեղքի հուրը: Թեթևամիտները մենամարտի են դուրս գալիս, նիզակներով սպանում. են իրար: Զվարճալի է: Ծերունիները, ալեհներ ու բարեպաշտ մարդիկ մոռանում են մահն ու

գեհեհը, դայթակղվում են գեղեցկությամբ: Իսկ ո՞վ է պատասխան տալու: Բոլորի համար դո՞ւ պիտի պատասխան տաս: Գեղեցկուհու համար ամենալավը ջուրն է, ջրի անդունդը: Եվ շուտո՞վ: Շուտո՞վ:

Կատերեան բաճկում է:

Ո՞ր ես թաքնվում: Աստծուց էլ հո չե՞ս կարող թաքնվել:

Ամպի արտ:

Բոլորդ, բոլորդ այրվելու եք անմարելի կրակում: (Գծում է):

ԿԱՏԵՐԵԱՆ—Ա՛հ, մեռն՞ում եմ:

ՎԱՐՎԱՌԱ—Եվ ի՞նչ ես տանջվում դու էլ իսկապես: Անցիր մի կողմ և աղոթիր, սիրտդ կթեթևանա:

ԿԱՏԵՐԵԱՆ—(Մտածելով է պատին և ծունկ է շոճում, ապա արագ վեր է ցատկում): Ա՛հ, դժոխք, դժոխք: Հուր գեհեհական:

Կարանովան, Կարանովը և Վարվառան շրջապատում են նրան:

Սիրտս կտրտվում է: էլ չե՛մ կարող դիմանալ: Մայրի՛կ, Տիխո՞ն: Մեղավոր եմ ես և աստծու առաջ, և ձեր առաջ: Ե՛ս չէի միթե երդվում, որ առանց քեզ չեմ նայի ոչ ոքի երեսին: Հիշո՞ւմ ես: Հիշո՞ւմ ես: Իսկ դու գիտե՞ս, թե ես, անպատկառս, ինչե՛ր եմ արել առանց քեզ: Հենց առաջին գիշերն էլ գնացել եմ տանից...

ԿԱՐԱՆՈՎ—(Շփոթված և արտասովալից աչքերով փաշում է նրա քեփից): Հարկավոր չի, մի՛, մի՛ ասա... Ի՞նչ ես անում: Մայրիկն այստեղ է:

ԿԱՐԱՆՈՎ—(Խտուրթյամբ): Խոսիր, խոսիր, երբ որ արդեն սկսել ես:

ԿԱՏԵՐԵԱՆ—Եվ բոլոր այս տասը գիշերներն էլ ես դուրան եմ եղել (Հեկեկում է):

Կարանովն ուզում է գրկել նրան:

ԿԱՐԱՆՈՎ—Քո՞ղ նրան: Ո՞ւմ հետ:

ՎԱՐՎԱՌԱ—Սուտ է խոսում, ինքն էլ չի հասկանում, թե ի՞նչ է ասում:

ԿԱՐԱՆՈՎ—Դու լսիր: Ա՛հա՛ թե ինչ: Գե, ո՞ւմ հետ, ապա:
ԿԱՏԵՐԵԱՆ— Բորիս Գրիգորիչի:

Ամպի արտ:

Ա՛հ: (Ուշաքափ ընկնում է ամուսնու ձեռքերի վրա):
ԿԱՐԱՆՈՎ— Ի՞նչ է, որդյակս: Ո՞ր է տանում, ապա, ազատությունը: Ասո՞ւմ էի, լսել անգամ չէիր ուզում: Ա՛հա՛, ա՛յս էիր ուզում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՂ

Առաջին գործողության գեղարար: Մթերալ:

Տ Ե Ա Ր Ա Ն Ա Ո Ա Ջ Ի Ն

Կուլիգներ նստած է նստառանին: Կարանով՝ անցնում է բուլվարով:

ԿՈՒԼԻԳԻՆ—(Երգում է):

Գիշերն իր խավարն է սփռել երկերին,
Եվ հիմն էլ իշել է հոգեած ալքերին...

(Նկատելով Կարանովին): Բարե ձեզ, տեր իմ, հեռո՞ւ եք շտապում:

ԿԱՐԱՆՈՎ—Տուն: Լսե՛լ ես, եղբայր, մեր գործերի մասին: Ողջ ընտանիքս տակնուվրա է եղել:

ԿՈՒԼԻԳԻՆ—Լսե՛լ եմ, լսե՛լ եմ, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ — Ես Մոսկվա էի գնացել, գիտե՞ս: Գնալուց առաջ մայրս քարոզներ էր, որ կարդում էր գլխիս: Իսկ ես, հենց որ դուրս եկա տանից, քեֆերն սկսեցի: Այնպես էի ուրախացել, որ ազատվել եմ: Ու ողջ նանդապարհին խմում էի, Մոսկվայում էլ խմում էի, այնպե՞ս էի խմում, որ էլ պատմելու հնար չկա: Որ, ուրեմն, ամ-

բողջ տարվա տեղը դուրս դա: Ու ոչ մի անգամ էլ տան մասին չհիշեցի: Եվ եթե հիշեի էլ, կանցնե՞ր իսկի մըտքովս, թե ի՞նչ է կատարվում այստեղ: Լսե՛լ ես:

ԿՈՒԼԻԳԻՆ—Լսել եմ, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ—Դժբախտ մարդ եմ ես հիմա, եղբայր իմ: Հենց այնպես, իզուր տեղը կործանվում եմ:

ԿՈՒԼԻԳԻՆ—Մայրիկդ, բայց, շատ խիստն է:

ԿԱՐԱՆՈՎ—Դե, իհարկե: Հենց ամեն բանի պատճառն էլ նա է: Իսկ ես, ասա խնդրեմ, ե՞ս ինչի համար եմ կործանվում: Ահա, գնացել էի Դիկոյի մոտ, դե, խմեցինք մի քիչ, կարծում էի լավ կլինի՝ չէ՛, ավելի վատ է, Կուլիգին: Հո տեսնո՞ւմ ես, ինչ արեց կինս իմ դեմ: Ավելի վատ ի՞նչ կարող է լինել:

ԿՈՒԼԻԳԻՆ—Դժվար բան է, տեր իմ: Դժվար է ձեր դատավորը դառնալ:

ԿԱՐԱՆՈՎ—Ձէ, սպասիր: Դրանից էլ վատ բան հո չէ՞ր կարող անել: Դրա համար, ախր, սպանելը քիչ է: Ահա, մայրիկն ասում է, ողջ-ողջ պիտի թաղել, որ նա իր պատիժը կրի: Ժող նս սիրում եմ նրան, մեղքս գալիս է, որ մատով անգամ դիպչեմ: Մի քիչ ծեծեցի, և այն էլ մա՛յրս հրամայեց: Մեղքս գալիս է, երբ նայում եմ վրան, հասկացի՞ր դու այս, Կուլիգին: Մայրս նրան կրծում, հալումա՞շ է անում, իսկ նա քայլում է, ոնց որ մի անլեզու սովեր: Միայն լաց է լինում ու հալչում է մոմի նման: Եվ ահա նրան նայելով, տանջվում եմ ես էլ...

ԿՈՒԼԻԳԻՆ—Պետք է, տեր իմ, մի կերպ խաղաղությամբ գործը վերջացնել: Դուք, լավ կլինի, ներեիք նրան և այլևս երբեք երեսու՛ր շտայիք: Ծրեի ինքներդ էլ անմեղներեց չեք...

ԿԱՐԱՆՈՎ—Ո՞վ է ասում, որ... իհարկե:

ԿՈՒԼԻԳԻՆ—Եվ այնպես որ, հարբած ժամանակ էլ չկշտամբեիք: Նա ձեզ համար լավ ամուսին կլինե՞ր, տեր իմ, բուռիցն էլ լավը գուցե:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց հասկացի՞ր, ախր, Կուլիգին, ես ոչի՛նչ էլ չեմ տեսնում, իսկ մայրիկը, նրա հետ խոսե՞լ կարելի է...

ԿՈՒԼԻԳԻՆ—Ժամանակն է արդեն, տեր իմ, որ դուք ձեր խելքով ասրեք:

ԿԱՐԱՆՈՎ—Բայց ի՞նչ անեմ, պատուվեմ ես, ի՞նչ է: Չունես, ասում են, սեփական խելք: Եվ ուրեմն, ապրի՞ր ուրիշի խելքով: Իսկ ես էլ ահա կգնամ ու վերջին անգամ էլ կխմեմ: Թո՞ղ այն ժամանակ մայրիկը նստի ու իմ հոգսը քաշի, եթե հիմար եմ:

ԿՈՒԼԻԳԻՆ—Է՛հ, տեր իմ, տեր իմ: Իսկ Բորիս Գրիգորին ի՞նչ հալի է:

ԿԱՐԱՆՈՎ—Իսկ նրան, սրիկային, ուղարկում են Տյախտա, շինացիների մոտ: Հորեղբայրն ինչ-որ ծանոթ վաճառականի մոտ է ուղարկում գործի: Երեք տարով:

ԿՈՒԼԻԳԻՆ—Պե, իսկ նա՞, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ—Նա էլ իրեն կորցրել է, լաց է լինում: Այսօր վրա պրծանք նրան ես ու հորեղբայրը, էլ ի՞նչ հայհոյանք ասես, որ շթափեցինք գլխին. լուում է: Ոնց որ վայրենի է դարձել: Ինձ, ասում է, ի՞նչ ուզում եք արեք՝ միայն թե նրան մի՞ տանջեք: Նա էլ է խղճում Կատյային:

ԿՈՒԼԻԳԻՆ—Լավ մարդ է նա, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ—Արդեն պատրաստվել է, ձիանքն արդեն եկել են: Այնպես է տանջվում, որ էլ ի՞նչ ասեմ: Եվ տեսնում եմ, որ ուզում է մնաս բարով ասել: Բայց, դե շատ բան է ուզում: Այսքանն էլ հերիք է: Թշնամի է, ախր, նա ինձ, Կուլիգին: Պատառ-պատառ պիտի անեի նրան, որ իմանաք...

ԿՈՒԼԻԳԻՆ—Թշնամիներին պետք է ներել, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ—Փորձի՛ր ապա մայրիկիս հետ խոսել, տես, ի՞նչ կասի քեզ: Այդպես, եղբայր Կուլիգին, մեր ողջ ընտանիքն այժմ շարդ ու փշուր է եղել: Վարվառային մայրս կշտամբեց, կշտամբեց, նա էլ չդիմացավ ու կորավ: Ելավ ու գնաց:

ԿՈՒԼԻԳԻՆ—Ո՞ր գնաց:

ԿԱՐԱՆՈՎ—Ո՞վ գիտե: Ասում են Կուդրյաշի հետ, Վանկայի հետ է փախել, և նրան էլ ոչ մի տեղ չեն գտնում: Այս մեկն արդեն, Կուլիգին, ուղղակի պետք է ասել, որ մորս ձեռքիցն էր, որովհետև սկսել էր նեղել նրան և դուռը

վրան կողպել: «Մի՛ կողպե՛ք, — ասում էր, — ավելի վատ կլինի»: Գե՛հ, այդպես էլ եղավ: Հիմա ես ի՞նչ անեմ, ասա խնդրեմ: Սովորեցրո՛ւ ինձ, ինչպես ապրեմ սրանից հետո: Տունը ատելի է դարձել, մարդկանցից ամաշտեմ եմ, գործ եմ ուզում անել, ձեռքերս թուլանում են: Ահա տուն եմ գնում հիմա, բայց ի՞նչ սրտով:

Գալիս է Գաշան:

ԳԱՇԱ.— Տիխոն Իվանովիչ, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ.— Է՛լ ինչ կա:

ԳԱՇԱ.— Տանը լավ չէ, տեր իմ:

ԿԱՐԱՆՈՎ.— Տեր աստված, իրար վրա է գալիս: Ասա, ի՞նչ է պատահել:

ԳԱՇԱ.— Ձեր տիրուհին, ախր...

ԿԱՐԱՆՈՎ.— Գե, ի՞նչ է... Մահացե՛լ է:

ԳԱՇԱ.— Ձէ, տեր իմ: Ինչ-որ տեղ է գնացել, շենք կարողանում գտնել: Հալից ընկանք փնտրելով:

ԿԱՐԱՆՈՎ.— Գե, Կուլիգին, պետք է, եղբայր իմ, գնալ փրկուրել: Ես, գիտե՛ս ինչից եմ վախենում: Չլինի թե հանկարծ սպանի իրեն: Ախր, այնպե՛ս է տանջվում, այնպե՛ս է տանջվում, որ էլ ի՞նչ ասեմ... Մարդու սիրտ է կտրտվում նայելիս... Իսկ դուք ի՞նչ էիք անում: Ինչո՞ւ թողիք, որ գնա: Վաղո՞ւց է գնացել:

ԳԱՇԱ.— Վաղուց չէ, տեր իմ: Մեր մեղքն է, ի՞նչ ասեմ, լավ չհայեցիք: Ախր, այն էլ ասենք, ամեն ժամ հո շե՞ս կարող հսկել:

ԿԱՐԱՆՈՎ.— Գե, էլ ո՞ւր ես կանգնել՝ վազիր:

Գաշան գնում է:

Մենք էլ գնանք, Կուլիգին:

Գնում են:

Մի-պան բնը դատարի է: Հախառակ կողմից գալիս է Կատարիան և գանգաղ շտափում է դեպի բն:

ԿԱՏԵՐԻՆԱ — (Մեճակ)՝: Չկա, Ոչ մի տեղ չկա: Ի՞նչ է անում հիմա դժբախտը: Գոնե մնաս բարով ասեի, իսկ հետո... Թեկուզ և մահը գար... Ինչո՞ւ նրան էլ դրժբախտացրի: Ինչո՞ւ: Թեթևացա՞վ, արդյոք, իմ ցավը: Թո՞ղ մենակ կործանվեի... Թե չէ, ինձ էլ կործանեցի, նրան էլ կործանեցի: Ինձ անպատվություն, նրան՝ հավիտենական կշտամբանք: Այո՞: Ինձ անպատվություն, նրան՝ հավիտենական կշտամբանք: Հիշեի, գոնե, ի՞նչ խոսքեր էր ասում նա ինձ: Ինչպե՛ս էր շոյում, սիրում ինձ, ի՞նչ խոսքեր էր ասում: (Բռճում է գլուխը): Չեմ հիշում: Մոռացե՛լ եմ, բոլորը մոռացել եմ: Գիշերները, գիշերները ծանր են ինձ համար: Բոլորը գնում են քնելու, ես էլ եմ գնում: Բոլորի համար ոչինչ, իսկ ինձ համար՝ ասես գերեզման եմ մտնում: Այնքա՛ն ահավոր է խավարում: Մի տեսակ աղմուկ է բարձրանում և երգում են, կարծես թաղում են մեկին, և այնպես կամացո՞ւկ, հազիվ լսելի, և հեռո՞ւ-հեռո՞ւ ինձնից... Այնքան եմ ուրախանում, երբ լույսը բացվում է: Իսկ վեր կենալ չեմ ուզում: Էլի նույն մարդիկ, նույն խոսքե՛րը, նույն ցա՞վը... Ինչո՞ւ են այդպես նայում ինձ: Ինչո՞ւ հիմա այլևս չեն սպանում: Ինչո՞ւ այսպես արին: Առաջ, ասում են, սպանում էին: Թո՞ղ վերցնեին ու Վոլգան գցեին ինձ: Ես ուրախ կլինեի: «Որ պատժենք, — ասում են, — մեղքդ սրտիցդ կվերանա, — չէ՛, դու ապրի՛ր ու տանջվի՛ր քո մեղքից...»: Ա՛հ, տանջվել եմ արդեն: Դեռ շա՛տ պիտի տանջվեմ արդյոք: Էլ ինչի՞ համար ապրեմ հիմա, ինչի՞: Էլ ոչինչ հարկավոր չէ ինձ, ոչինչ հաճելի չէ. օրվա լույսն էլ հաճելի չէ... Իսկ մահը չի՞ գալիս: Կանչում, ձայն ես տալիս նրան, չի՞ գալիս: Ինչ էլ որ տեսնում եմ, ինչ էլ որ լսում եմ, միայն այստեղ (ցայց է տալիս սիրտը), այստեղ է ցավ տալիս... Եթե գոնե

¹ Ամբողջ մանուկը և բոլոր հաջորդ պեսարաններում խոսում է երկաթաբեկիչով և կրկնելով խոսքերը՝ մտախառն և կարճա՝ ինքնամոռացության մեջ, (Մուսք. ճեղիմակի):

նրա հետ ապրեի, գուցեն մի ուրախութիւն տեսնեի...
Բայց էլ մե՛կ է, կործանել եմ արդեն իմ հոգին... Ա՛հ,
որքան եմ կարոտել նրան: Եթե արդեն էլ քեզ չեմ տես-
նելու, լսի՛ր ինձ գոնե հեռվից: Հողմե՛ր խելահեղ, տա-
րե՛ք նրան իմ վիշտն ու կարո՛տը: Ա՛հ, տեր աստված,
ի՛նչ տխրութիւն է... (Մտածելով է փփին և բարձր, ամ-
բողջ ձայնով մեկ): Խնդութիւն իմ, կյա՛նք իմ, հոգիս
սիրո՛ւմ է քեզ: Զա՛յն տուր ինձ... (լաց է լինում):

Մտնում է Բորիս:

Տեսարան երրորդ

Կատերինա և Բորիս

ԲՈՐԻՍ—(Նրան շնչառելով): Աստված իմ, նրա ձայնն է:
Բայց ո՛ւր է ինքը: (Նայում է ջուրջը):
ԿԱՏԵՐԻՆԱ—(Վազում է մոտ և փարվում է նրան): Տեսա
ես քեզ վերջապես... (Լալիս է նրա կրճփին):

Լսարյուն:

ԲՈՐԻՍ—Ահա և լաց եղանք միասին... Աստված մեզ գրա՛ն
էլ արժանացրեց:

ԿԱՏԵՐԻՆԱ—Դու ինձ չե՞ս մոռացել:

ԲՈՐԻՍ—Ինչպե՞ս կարող եմ մոռանալ: Ինչե՛ր ես խոսում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ահ, ո՛չ, ես այդ չէի ուզում ասել: Դու չե՞ս
բարկանում:

ԲՈՐԻՍ—Ինչի՞ համար բարկանամ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Դե, ների՛ր ինձ, ների՛ր: Չէի ուզում քեզ վատու-
թիւն անել... Բայց կամքիս տերը չէի, ի՛նչ էի խոսում,
ի՛նչ էի անում, ոչինչ չէի հասկանում...

ԲՈՐԻՍ—Հանգստացիր, Կա՛տյա... Ինչե՛ր ես ասում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Իսկ դո՞ւ: Ի՛նչ պիտի անես:

ԲՈՐԻՍ—Գնում եմ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ո՛ւր ես գնում:

ԲՈՐԻՍ—Հեռո՛ւ եմ գնում, Կատյա՛, Սիրիո:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ինձ էլ տար հետդ այստեղից:

ԲՈՐԻՍ—Երազունք չունեմ, Կատյա: Իմ կամքով չեմ գնում,
հորեղբայրս է ուղարկում, արդեն ձիերն էլ պատրաստ
են, ես միայն մի բուպեով թուլլովութիւն առա հեռա-
նալու, ուզում էի գոնե հրաժեշտ տալ այն տեղին, որ-
տեղ մենք հանդիպել էինք իրար...

ԿԱՏԵՐԻՆԱ—Աստված քեզ հետ, գնա՛, իմ մասին շտխրես...
Գուցե սկզբում միայն դժվար լինի, հետո կընտելանաս,
կմոռանաս:

ԲՈՐԻՍ—Ինձ համար ինչո՞ւ ես մտածում: Ես ազատ թռչուն
եմ: Դո՛ւ ինչ պիտի անես: Սկեսուրդ ի՛նչ է ասում:

ԿԱՏԵՐԻՆԱ—Տանջում է ինձ, փակած է պահում: Բուրբին էլ
ասում է, և ամուսնուս էլ. «մի՛ հավատացեք սրան, խո-
րամանկ է»,— ասում է: Եվ բուրբին էլ ամբողջ օրը հե-
տեկիցս ման են գալիս և ուղղակի երեսիս ծիծաղում են:
Ամեն խոսքի մեջ քեզնով են կշտամբում:

ԲՈՐԻՍ—Իսկ ամուսի՞նդ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Մեկ լավ է, քնքշությամբ է վարվում, մեկ էլ՝
բարկանում է, և շարունակ խմում: Բայց ատո՛ւմ եմ,
ատո՛ւմ եմ ես նրան: Նրա փաղաքշանքը հիմա ծեծից
էլ վատ է ինձ համար:

ԲՈՐԻՍ— Ծանր է քո օրը, Կատյա:

ԿԱՏԵՐԻՆԱ—Ա՛հ, այնքա՛ն է ծանր, այնքա՛ն, որ ավելի լավ
է մեռնել...

ԲՈՐԻՍ—Եվ ո՞վ կարող էր իմանալ, թե մենք, մեր սիրո հա-
մար, այսքան պիտի տանջվեինք: Ավելի լավ էր կորչի
գնալի ես այն ժամանակ:

ԿԱՏԵՐԻՆԱ—Երանի շտեսնեի ես քեզ: Ուրախութիւն քիչ տե-
սա, իսկ ցա՛վ, ցա՛վ անսահման: Եվ դեռ ինչքա՛ն պի-
տի տեսնեմ... Է՛հ, բայց ինչո՞ւ մտածել գալիքի մա-
սին: Ահա՛ տեսա քեզ հիմա, և դա ոչ ոք այլևս չի՞
կարող ինձինց խել: Իսկ ավելին ես չե՛մ էլ ուզում: Ես,
ախր, քեզ տեսնել էի ուզում միայն: Եվ ահա, սիրտս
այնքա՛ն թեթևացավ, կարծես մի քար գլորվեց ուսե-
րիցս: Ես, ախր, կարծում էի, թե դու բարկացած ես ինձ
վրա, անիծում ես ինձ...

ԲՈՐԻՍ—Ի՛նչ ես ասում, Կատյա...

ԿԱՏԵՐԻՆԱ—Ահ, ոչ, ես շարունակ այն չեմ ասում, ինչ որ

ուզում եմ ասել... Տխուր էի առանց քեզ, ահա թե ինչ,
և ահա տեսա վերջապես:

ՔՈՐԻՍ — Չտեսնե՞ն հանկարծ մեզ այստեղ, իրար հետ:

ԿԱՏԵՐԻՆԱ — Սպասի՛ր, սպասի՛ր: Ի՞նչ էի ուզում քեզ ասել
Մոռացա: Ինչ-որ բան էի ուզում ասել: Ամեն ինչ իրար
է խառնվել գլխումս, ոչինչ չեմ կարողանում մտաբերել:

ՔՈՐԻՍ — Գնալու ժամանակն է, Կատյա:

ԿԱՏԵՐԻՆԱ — Սպասի՛ր, սպասի՛ր:

ՔՈՐԻՍ — Ի՞նչ էիր ուզում ասել, Կատյա:

ԿԱՏԵՐԻՆԱ — Հիմա կասեմ: (Մտածելուց հետո): Հա: Որ գը-
նաս, ճանապարհին ոչ մի աղքատի առանց ողորմու-
թյան բաց չթողնես, ամենքին էլ կտաս և կասես, որ
աղոթեն իմ մեղավոր հոգու փրկության համար:

ՔՈՐԻՍ — Ահ, եթե այդ մարդիկ իմանային, ինչքան ծանր է
ինձ քեզանից բաժանվելը: Տա աստված, որ մի օր էլ
ներանք նույնքան տանջվեն, որքան ես՝ այսօր: Մնաս
բարով, Կատյա: (Գրկում է նրան և ուզում է գնալ): Ա՛հ,
ոճրագործներ, հրեշնե՛ր: Թե ձեռքիս ուժ կլինե՛ր...

ԿԱՏԵՐԻՆԱ — Սպասի՛ր, սպասի՛ր: Թող մի վերջին անգամ էլ
քեզ նայեմ: (Նայում է նրա աչքերին): Գեհ, էլ բավա-
կան է: Հիմա տեր ընդ քեզ: Գնա՛, շուտ արա գնա:

ՔՈՐԻՍ — (Մի քանի քայլ գնում և կանգնում է): Կատյա, սիր-
տըս լավ բան չի գուշակում: Բան հո չե՞ս մտածել,
Կատյա: Կտանջվեմ ճանապարհին քո մասին մտա-
ծելով:

ԿԱՏԵՐԻՆԱ — Բան չկա, բան չկա: Գնա՛ քո ճանապարհը:

Բարիև ուզում է մտածել նրան:

Չէ, չէ, հարկավոր չէ, բավական է:

ՔՈՐԻՍ — (Հեկեկալով): Գեհ, աստված քեզ հետ: Միայն մի
բան է մնում խնդրել աստծուց, որ նա շուտով կանչի
ներան իր մոտ, որ երկար չտանջվի... Մնաս բարով:
(Գլուխ է խնձարեում):

ԿԱՏԵՐԻՆԱ — Գնաս բարով:

Բարից գնում է, Կատերինան երկար նայում է նրա ե-
տեք և մի պահ մնում է կանգնած խոռ մտածումների
մեջ:

Տեսարան չորրորդ

ԿԱՏԵՐԻՆԱ — (Մեճակ): Ո՛ր գնամ հիմա: Գնամ տո՞ւն: Ոչ,
ինձ համար թե՛ տուն, թե՛ գերեզման՝ միևնույն է: Այո՛,
թե՛ տուն, թե՛ գերեզման... Թե՛ գերեզման... Գերեզ-
մանում ավելի լավ է... Գերեզմանը ծառի տակին...
այնքան լավ է... Արևը տաքացնում է, անձրևը շրում...
Գարնանն այնտեղ կանաչ դուրս կգա, փափուկ ու
նուրբ... Թռչուններ կնստեն ծառի վրա, երգեր կդաշ-
լայլեն, ձագեր կհանեն... Մաղիկներ կբացվեն. դեղին
կարմիր, կապույտ, ամեն տեսակ... (Մտածում է):
Ամեն տեսակ... Այնքան խաղա՞ղ է, այնքան լա՞վ...
Եվ ցավս էլ այնպե՛ս մեղմանում է, ու կյանքի մասին
մտածել էլ չեմ ուզում... Նորի՞ց ապրել: Ո՛չ, ո՛չ, հար-
կավոր չէ... Լավ չէ... Ատելի՛ են և՛ մարդիկ, և՛ պատերը,
և՛ տունը: էլ չեմ գնա այնտեղ: Ո՛չ, ո՛չ, էլ չեմ գնա...
Որ գնամ, նորից պիտի քաշ գան հտեհցս, նո-
րից պիտի խոսեն... Իսկ ինչի՞ս է պետք հիմա այդ
ամենը... Ահա, մթնում է նորից, մթնում է, և նորից
երգում են ինչ-որ տեղ... Ի՞նչ են երգում: Զգիտեմ,
դժվար է հասկանալ... Ա՛հ, մեռնե՛լ հիմա... Ի՞նչ են
երգում... Միևնույն է, մահն ինքը կգա, թե ես ինքս...
Իսկ ապրել չի՞ կարելի... Մեղք է: Ոչ ոք չի աղոթի ինձ
համար: Ով սիրում է, նա կաղոթի... Զեռքերը խաշա-
ձևում են դազաղում: Ահա այսպես... Մտաբերեցի...
Իսկ եթե բռնեն ինձ այստեղ, տուն կվերադարձնեն
բռնությունը... Ա՛հ, շո՛ւտ, շո՛ւտ... (Մտտենում է ա-
փիւն: Բարձրաձայն): Սե՛ր իմ, խնդու՞թյա՛ն իմ... Մնաս
բարով: (Գնում է):

Մտնում են Կարանովան, Կարանովը, Կուլիգինը և լապտե-
րավոր սպասավորը:

Տեսարան հինգերորդ

Կարանովա, Կարանով և Կուլիգին:

ԿՈՒԼԻԳԻՆ — Ասում են, այստեղ նրան տեսել են:
ԿԱՐԱՆՈՎ — Բայց ճի՞շտ է, որ:

ԿՈՒՂԻԳԻՆ—Ուղղակի նրա անունն են տալիս:

ԿԱՐԱՆՈՎ—Դե փառք աստժո, որ գոնն ողջ են տեսել:

ԿԱՐԱՆՈՎԱ—Իսկ դու արդեն վախեցար, արդեն լաց ես չիս նում: Արժե՞ որ... Մի՛ վախենա. դեռ մենք նրա երեսից շատ ենք տանջվելու:

ԿԱՐԱՆՈՎ—Ո՞վ կարող էր իմանալ, թե նա այստեղ կգա Այստեղ այնքան մարդ է լինում, ո՞ւմ մտքովը կանցնե՞ր հենց այստեղ թաքնվել:

ԿԱՐԱՆՈՎԱ—Տեսնո՞ւմ ես, ինչեր է անում: Ա՛յ թե ինչ է: Ինչպե՞ս է ուզում իր ասածն անել...

Ձանգան կողմերից մարդիկ են գալիս լողտեղեկում:

ՄԵԿԸ—Ի՞նչ է, գտա՞ք:

ԿԱՐԱՆՈՎԱ—Հենց այդ է, որ չէ: Կարծես գետնի տակն է անցել:

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ—Ա՛յ քեզ քան... Հանելուկ է, էլի... Եվ ո՞ր կարող էր գնալ...

ՄԵԿԸ—Կգտնվի՞ր...

ՄՅՈՒՍԸ—Իհարկե, ո՞նց չի գտնվի՞ր...

ԵՐՐՈՐԴ—Ինքն իրեն կգա:

Մի ձայն քեմի ետեից. «Հե՛յ եղբայր»:

ԿՈՒՂԻԳԻՆ—(Սփից): Ո՞վ է ճշում... Ի՞նչ է պատահել:

Մի ձայն. «Մի կին չուրք բնկավ... Կուլիգինը և մի բանի նոցի վագում են դեպի գետը»:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Է Գ Ե Ր Ո Ր Գ

Նրանք, առանց Կուլիգինի:

ԿԱՐԱՆՈՎ—Դա նա է, տե՛ր աստված... (Ուզում է վազել, Կարանովան բռնում է նրա քեից): Թողե՛ք ինձ, մայրիկ, թողե՛ք, ես կհանեմ նրան, իսկ թե ոչ, ապա ինքս էլ... Ի՞նչ պիտի անեմ առանց նրա...

ԿԱՐԱՆՈՎԱ—Չե՛մ թողնի, իսկի մտքովը էլ չանցկացնես... Նրա պատճառով ինքդ քեզ կործանե՞ս... Արժե՞ արդյոք

նա, թի՛չ էր խայտառակե՞ք մեզ, ա՛յս էլ բերեց զՂԻՆԵՐԻՍ...

ԿԱՐԱՆՈՎ—Թողե՛ք:

ԿԱՐԱՆՈՎԱ—Առանց քեզ էլ կհանեն: Կանիժեմ, եթե գնացել ես:

ԿԱՐԱՆՈՎ—(Յնկաշմբ): Գոնն նայեմ մեկ անգամ էլ:

ԿԱՐԱՆՈՎԱ—Կհանեն, կնայես:

ԿԱՐԱՆՈՎ—(Ոտի կանգնելով: Ժողովրդի): Ի՞նչ է, պիտի ինձ քեզ, ոչինչ չի՞ երևում:

1-ԻՆ—Մոթ է ներքեում, ախր, բան չի երևում:

Թեմի ետեից աղմուկ:

2-ՐԴ—Կարծես բան են ասում, բայց չի լսվում:

1-ԻՆ—Կուլիգինի ձայնն է:

2-ՐԴ—Ահա ճրագներով քայլում են ափին:

1-ԻՆ—Այստեղ են գալիս: Ահա և նրան էլ բերում են:

Ժողովրդի մի մասը վերադառնում է:

ՆՐԱՆՑԻՑ ՄԵԿԸ—Ապրի՛ Կուլիգինը: Այստեղ մտաիկ էր ընկել, հենց ափի մոտ... Ծրագով, իհարկե, ջուրը լավ է երևում: Դե, Կուլիգինն էլ հագուստը տեսավ ու հանեց...

ԿԱՐԱՆՈՎ—Ո՞ղջ է:

ՄԻ ՈՒՐԻՇԸ—Որտեղի՞ց: Բարձրից էր պցել իրեն, իսկ այստեղ անդունդ է, երևի հենց խարսխի վրա էր ընկել ու վնասվել էր դժբախտը: Բայց ոնց որ ողջ լինի, տղե՛րք: Մի փոքրիկ վերք կա, միայն քունքի վրա ու մեկ էլ միայն մի կաթիլ արյուն...

Կարանովը ուզում է վազել, բայց դեմ է գալիս Կուլիգինը ժողովրդի հետ, բերում են Կատերինային:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ո Ր Գ

Նրանք և Կուլիգինը:

ԿՈՒՂԻԳԻՆ—Ահա ձեզ ձեր Կատերինան: Արե՛ք այժմ, ինչ ո՞ր ուզում եք... Նրա մարմինն այստեղ է, վերջերե՛ք: Իսկ

հոգին. հոգին այլևս ձերը չէ... նա կանգնած է հիմա
այն դատավորի առաջ, որը ձեզնից ավելի է ողորմած...
(Ինու՞մ է մարմինը գետնին ու փախչում է):

ԿԱՐԱՆՈՎ — (Նետվում է դեպի Կատերինան): Կա՛տյա, Կաա-
յա՛...:

ԿԱՐԱՆՈՎԱ — Բավական է, սրա համար ողբալն էլ մեզք է:

ԿԱՐԱՆՈՎ — Մայրի՛կ... Դո՛ւք սպանեցիք նրան... Դո՛ւք,
դո՛ւք, դո՛ւք...:

ԿԱՐԱՆՈՎԱ — Ինչե՛ր ես դուրս տալիս... Գլուխդ կորցրե՛լ
ես... Մոռացե՛լ ես, ում հետ ես խոսում:

ԿԱՐԱՆՈՎ — Դո՛ւք սպանեցիք նրան... Դո՛ւք: Դո՛ւք:

ԿԱՐԱՆՈՎԱ — (Ուղղուն): Դեհ, ես քեզ հետ տանը կխոսեմ:
(Խոնարհ գլուխ է տալիս ժողովրդին): Շնորհակալ եմ
ձեզանից, բարի մարդիկ, ձեր ծառայության համար:

Բոլորը զլսվե են տալիս երան:

ԿԱՐԱՆՈՎ — չիմա քեզ համար լավ է, Կատյա... Իսկ ես
ինչո՞ւ եմ ապրելու, ինչո՞ւ եմ տանըվելու... (Ընկնում
է կնոջ դիակի վրա):

Ա Ն Տ Ա Ռ Ը

Առատկերգություն հինգ գործողությամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԱԶԻՆ

ԱՆՁՆԵՐ

ՌԱԻՍԱ ՊԱՎԼՈՎՆԱ ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — այրի, մոտ հիսուն
տարեկան, շատ հարուստ կալվածատիրուհի, հագնվում
է համեստ, համարյա սգազգեստով է, գանձատուփը մըշ-
տապես ձեռքին:

ԱԿՍԻՆՅԱ ԴԱՆԻԼՈՎՆԱ (ԱԿՍՅՈՒՇԱ) — սրա
հեռավոր ազգականուհին, շքավոր մի աղ-
ջիկ՝ մոտ քսան տարեկան, հագնված է
մաքուր, բայց աղքատ, աղախնից մի քիչ
լավ:

ԵՎԳԵՆԻ ԱՊՈՂԼՈՆԻՉ ՄԻԼՈՆՈՎ — մոտ քա-
ռասունհինգ տարեկան, հարթ սանրված
մազերով, նրբաճաշակ հագնված, վարդա-
գույն փողկապով:

ՌԱՐ ԿԻՐԻԼԻՉ ԲՈԴԱԵՎ — մոտ վաթսուն
տարեկան, պաշտոնաթող հեծելազորային,
ալեհեր, հարթ խուզվածքով, մեծ բեղերով
և այտամորուքներով, սև սերթուկով, լրիվ
կոճկված, զինվորականի նման կրծքին
խաչեր ու մեդալներ, ձեռքին հենակ, մի
քիչ խուլ:

ԻՎԱՆ ՊԵՏՐՈՎ ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — անտառի
առևտրով զբաղվող վաճառական:

ՊՅՈՏՐ — նրա որդին:

ԱԼԵԹՅԵՅ ՍԵՐԳԵՅԻՉ ԲՈՒԼԱՆՈՎ — գիմնադիական ուսում-
նառությունը կիսատ թողած երիտասարդ:

Գլուխի ծակա-
յալի հարուստ
հարևանները:

ԿԱՐՊ — Գուրմիժակայայտի ապաստանորդը:

ՌԻԼԻՏԱ — մասանապետուհի:

Պավառական և ուղիք մտ հինգ վերստ հեռավորության վրա գտնվող Գուրմիժակայայտի գառասակերտը: Մեծ դահլիճ: Գիմաքը՝ երկու դուռ, մեկը մուտքի դուռն է, մյուսը՝ սեղանատան: Հսկողատեսներին աչ՝ դեպի պարտեզ բացվող մի դուռ և մի յուսամուտ, ձախ՝ երկու դուռ, մեկը ներսի սենյակներն է տանում, մյուսը՝ միջանցք: Հնամենի հարուստ կռեկարտաբ, եպիեղի հայելիներ, ծաղիկներ, յուսամուտի մոտ՝ փոքրիկ աշխատասեղան, ձախ կողմը՝ կյո սեղան և մի ֆանի բազկաթոռ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ճ ա ջ ի ն

Կարող կանգնած է պարտեզի դռան մոտ: Ենք է մըտնում Ակոյաչան:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ռախսա Պավլովնան կանչել է ինձ:

ԿԱՐՊ — Ճիշտ այդպես, միայն թե հենց նոր հյուրեր եկան, այնպես որ՝ այգում են:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Գրպանից մի համակ հանելով): Լսի՛ր, Կարպ Սավիլիչ, դու չե՛ր կարող...

ԿԱՐՊ — Ի՞նչ եք կամենում:

ԱԿՍՅՈՒՇԱ — ...հանձնել: Դու լավ գիտես, թե ում:

ԿԱՐՊ — Բայց ինչպե՞ս, օրիորդ: Ախր հիմա մի տեսակ անհարմար է: Չգիտեմ ճիշտ է, թե չէ, տիրուհին ուզում է ձեզ պարոնի փոքր տղային տալ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Է՛հ, պետք չէ, ո՛նց կուզես: (Շրջվում է դեպի յուսամուտը):

ԿԱՐՊ — Դե լավ, տղերք: Ձեզ համար կարելի է... (Վերցնում է համակը):

ԱԿՍՅՈՒՇԱ — (Լուսամուտից հայելով): Ռախսա Պավլովնան անտառը ծախե՛ց:

ԿԱՐՊ — Մախեսցի վան Պետրովիչին: Ամեն ինչ ծախում ենք, իսկ թե ինչո՞ւ չգիտես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Չի ուզում, որ ժառանգներին մնա, իսկ փողը կարելի է և ուրիշներին տալ:

ԿԱՐՊ — Էդպես է երևի: Խնայցի է մտածված:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ասում է, թե ինքն ուզում է այդ փողերն ինձ օժիտ տալ:

ԿԱՐՊ — Տա՛ աստված:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Շատ լուրջ): Աստված մի արասցե, Կարպ Սավիլիչ:

ԿԱՐՊ — Դե՛, ինչպե՞ս կամենաք: Ասածս էն է, որ ավելի լավ կլինի օժիտի վրա գնան, քան էնտեղ, որտեղ մյուս փողերն էին գնում...

ԱԿՍՅՈՒՇԱ — Որտեղ մյուս փողերը... Իսկ ո՞ւր էին գնում մյուս փողերը:

ԿԱՐՊ — Դե, գուք, օրիորդ, դա չեք էլ կարող հասկանալ, իսկի լեզուս էլ չի պատվում, որ ձեզ ասեմ: Աչխեսի Սերգեյիչն է գալիս: (Հեռանում է դռնից):

Ակոյաչան դուրս է եայում յուսամուտից, մտնում է Բուլանովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Պ

Ակոյաչա, Բուլանով, Կարպ, հետո Ուլիսա:

ՌՈՒԼԱՆՈՎ — (Կարպին): Դե ինչ, ինձ համար գլանակ լըցրե՛լ ես:

ԿԱՐՊ — Ո՛չ, ամենևին:

ՌՈՒԼԱՆՈՎ — Ինչո՞ւ ոչ: Չէ՞ որ ես քեզ պատվիրել էի:

ԿԱՐՊ — Հետո՞ ինչ, որ պատվիրել էիք: Այդ ե՞րբ էի լցնելու:

ՌՈՒԼԱՆՈՎ — Չէ, դուք այստեղ շատ եք մեծամտացել: Ահա՛ թե ինչ. ես պիտի ասեմ Ռախսա Պավլովնային:

ԿԱՐՊ — Չե՛ք ասի, դուք նրա մոտ նույնիսկ վախենում եք ծխել:

ՌՈՒԼԱՆՈՎ — Վախենում եք... Որ լցված լինեն և՛ վերը: Տասն անգամ քեզ շեն ասելու: (Տեսնելով Ակոյաչային, մոտենում է նրան և անպարկեշտությամբ ձեռքը դնում նրա ուսին):

ԱԿՍՅՈՒՇԱ — (Առաջ ջրվեղով): Ի՞նչ եք անում: Գժվե՛լ եք:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Վիրավորվելով): Ա՛հ, ներեցեք: Ի՞նչ էք դըքսուհու նման նայում, սիրունի՛կս:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Համարյա արցունքներն աչքերին): Ինչո՞ւ եք ինձ վիրավորում: Ես ձեզ ոչինչ չեմ արել: Ես ձեր բոլորիդ խաղալի՞քն եմ, ինչ է: Ես էլ ձեզ նման մարդ եմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Անտարբեր): Չէ՛, լո՛ւրջ եմ ասում, դուք իսկապե՛ս ինձ դուր եք գալիս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ահ, ես ի՞նչ գործ ունեմ դրա հետ: Ի՞նչ իրավունք ունեք ինձ ձեռք տալու:

ԲՈՒՂԱՆՈՎ — Չեմ հասկանում, թե ինչու եք անընդհատ բարկանում: Շա՛տ մի երևելի բան եք: Ձեռք տալ էլ չի կարելի: Քոնն է, ու ձեռք չտաս: Այդ ո՞վ էր ինձ արգելելու:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Խիստ): Իսկ եթե ձե՛րը չէ, եթե ուրիշինն է: Այն ժամանակ ի՞նչ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ա՛յդ ինչ քմահաճույք է: Ձանձրացել եմ արդեն: Այդպես դուք ամբողջ գործը կփչացնեք:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՞նչ գործ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչ գործ... Իբր չգիտեք: Ահա թե ինչ գործ. Ռախսա Պավլովնան ուզում է, որ ես ամուսնանամ ձեզ հետ, իսկ ինչ որ կամենում է Ռախսա Պավլովնան...

ԱԿՍՅՈՒՇԱ — Այն էլ պետք է լինի՞:

ԲՈՒՂԱՆՈՎ — Իհարկե՛: Ես և դուք չքավոր մարդիկ ենք... Սպասենք, մինչև դո՞ւրս անեն: Ո՛չ, խոնարհաբար շնորհակալ եմ: Ը՛րբ եմ գնալու: Նորից մորս մո՛տ: Ուրիշի գոանք հացկատա՞կ դառնամ:

ԿԱՐՊ — Ցա՛ծը խոսեք, պա՛րոն, Ուլիտան գալիս է:

Ահա է գալիս Ուլիտան և իճ-որ բռն է փնտրում:

Ի՞նչ եք փնտրում այստեղ:

ՈՒՂԻՏԱ — Ես ոնց որ մոռացա...

ԿԱՐՊ — Ուղի՛նչ էլ չեք մոռացել, իզո՞ւր եք ձևացնում: Դուք ձեր սենյակն ունեք, մենք այստեղ ոտք չենք դնում:

Ուլիտան գնում է:

Ա՛յ, այդպես ավելի լավ է... Ամենաանիծված կիկեք:

ԲՈՒՂԱՆՈՎ — Պարզ հաշիվ է, դժվար չէ հասկանալը:

ԱԿՍՅՈՒՇԱ — Դե՛, ես հասկանում եմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ուրեմն էլ ի՞նչ կա համառելու: Ո՞ւմ առաջ եք այստեղ անմատչելի ձևանում: Չէ՞ որ Ռախսա Պավլովնան խոստանում է շատ փող տալ, էլ ի՞նչ է պետք, Երկու ձեռքով խաչ պիտի հանեք:

ԱԿՍՅՈՒՇԱ — Բան կա՞ փողով կարելի է գնել, բան էլ կա՞ հնարավոր չէ:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Արհամարհական ժպտալով): Փիլիսոփայություն է: (Լուրջ): Դուք փողի գինը չգիտեք, դրա համար էլ այդպես եք խոսում: Երևում է, կարիքի մեջ չեք եղել: Իսկ այստեղի կյանքը հաճելի է... Փողի համար մարդիկ իրենց հոգին են սատանին ծախում, ուր մնաց՝ հրաժարվեն:

Երևում է Ուլիտան:

ԿԱՐՊ — Ի՞նչ եք ետուառաջ անում, էստեղ ձեզ չե՞ն տեսել: Սա ընդունարան է:

ՈՒՂԻՏԱ — Ներս մտնե՛լ էլ չի կարելի:

ԿԱՐՊ — Էդ ինչի՞ դադար չեք առնում: Խենթ կատվի պես դե-սուպեն եք ընկնում: Ուրիշ բան է՞ թե կանչեին:

Ուլիտան գնում է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Չոռով սիրելի չես դառնա, Ալեքսեյ Սերգեյիչ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ես իմ ուզածին կհասնեմ, ինձնից պրծում չունեք: Մեկ է, ինձնից լավին այստեղ չեք գտնելու:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Ցածրաձայն): Մխալվում եք: Որ փնտրեմ, կգտնեմ, իսկ գուցեև արդեն գտել եմ: (Կարպին): Եթե Ռախսա Պավլովնան հարցնի, ես իմ սենյակում եմ: (Գնում է):

Տեսարան երրորդ

Ուլիտան և Կարպ:

ԿԱՐՊ — (Մտախեղությամբ): Ա՛հ, պարո՛ն, պարո՛ն:

ԲՈՒՂԱՆՈՎ — Իսկ ի՞նչ է, որ Կա՛րպ:

ԿԱՐՊ — Շատ եք շահել:

ՔՈՒՂԱՆՈՎ — Գիտեմ, որ շահել եմ:

ԿԱՐՊ — Իսկ դա լավ չէ:

ՔՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչ կարող եմ անել:

ԿԱՐՊ — Ձեր օգտին չէ... Աշխատեք փոխվել...

ՔՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչ էլ որ անեմ՝ հո տարիքս մեկեն չի ավելա-
նալու. դեռ նոր եմ գիմնադրայից դուրս եկել:

ԿԱՐՊ — Գիմնադրան ի՞նչ, Մարդ կա գիմնադրայում էլ չի
եղել, բայց ի՞նչ ճարպիկն է:

ՔՈՒՂԱՆՈՎ — Իսկ ինչի՞ մեջ է ճարպիկ:

ԿԱՐՊ — Ամեն ինչի, մանավանդ՝ գլխացավանքից հետո
մնալու:

Ուրիտան երևում է միանգեֆից:

էլի՛: Թ՛ուհ: Զբվի՛ր, անիծված:

ՈՒՂԱՆՈՎ — (Հեռանալով): Բո՛հ:

ՔՈՒՂԱՆՈՎ — (Մտախոհ): Այո՞... Դե, ինչ կա որ:

ԿԱՐՊ — Հենց էդ է որ՝ «այո»: Ինչի՞ եք օրիորդին նեղացնում:
Դրանից ի՞նչ օգուտ:

ՔՈՒՂԱՆՈՎ — Համենայն դեպս...

ԿԱՐՊ — Ձգույշ պետք է լինել, պարոն, իզուր չի Ուլիտան
հոտոտում, իսկույն տեղ կհասցնի: Տիրուհուն դուր
կգա՞ որ: Դեռ հայտնի չէ, թե Ռախսա Պավլովնան ձեզ
որպես ինչ կպահի: Ճիշտ է, տիրուհի է, բայց դե կնկա
գործ է. հնչ գլխի շես ընկնի, թե մտքներին ինչ է: Մեկ
այս է, մեկ էլ տեսար՝ բոլորովին ուրիշ բան. ոչ թե շա-
բաթվա, օրվա մեջ յոթն անգամ մտքները փոխում են:
Ա՛յ, դուք ասում եք ամուսնանալ: Իսկ գուցե ստիպեն
ուրիշ բան անել: Դուք ձեր կամքի տերը չեք. ձեզ կե-
րակրելու են բերել, որովհետև ձեր մայրը չբավոր է...
Իսկ դուք ուզում եք... Ավելի լավ է միշտ նրա երեսին
նայեք:

ՔՈՒՂԱՆՈՎ — Երեսի՞ն:

ԿԱՐՊ — Անպայման... Քայլեր ետևից ու նայեք, որովհետև
նրանից կախում ունեք... Իսկ հետո, ժամանակի ընթաց-
քում, խոսակցությունից կամ էլ մի ուրիշ բանից կարող
եք հասկանալ... Տիրուհին գալի՛ս է: (Գնում է):

Բալանովը ազգում է մազերն ու սրբում բեգերը: Գու-
լիս են Գուրմիսկայան, Միրանովը և Բոգանը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Պ

Գուրմիսկայա, Միրանով, Բոգան, Բալանով:

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — Ես ձեզ ասել եմ, պարոնայք, և նորից եմ
կրկնում. ինձ ոչ ոք չի հասկանում, բացարձակապես ոչ
ոք: Ինձ հասկանում են միայն մեր նահանգապետը և
հայր Գրիգորին...

ՄԻՆՈՆՈՎ — Եվ ես, Ռախսա Պավլովնա:

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — Կարո՞ղ է:

ՄԻՆՈՆՈՎ — Ռախսա Պավլովնա, հավատացե՛ք ինձ, ամենայն
վե՛հ ու գեղեցիկ բան...

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — Հավատում եմ, անկեղծորեն հավատում
եմ. նստեցե՛ք, պարոնայք:

ՔՈՒՂԱՆՈՎ — (Հազալով): Ձանձրացրին:

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — Ի՞նչ եք ասում:

ՔՈՒՂԱՆՈՎ — (Կոպիտ): Ոչի՛նչ: (Նստում է քիչ հեռու):

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — (Նկատելով Բուլանովին): Ալեքսի՛ս, Ալեք-
սի՛ս: Դուք երազ՞ում եք: Պարոնայք, ձեզ եմ ներկայաց-
նում երիտասարդ ազնվական Ալեքսեյ Սերգեյիչ Բուլա-
նովին:

Բալանովը գլուխ է տալիս:

Շատ հետաքրքիր է նրա ճակատագիրը, հիմա կպատմեմ
ձեզ: Ալեքսի՛ս, զրոսնե՛ք պարտեզում, բարեկամս:

Բալանովը գնում է: Գուրմիսկայան ու Միրանովը երս-
տում են սեղանի մոտ:

ՄԻՆՈՆՈՎ — Ձեր ազգականն է, հավանաբար:

ԳՈՒՐՄԻժՍԿԱՅԱ — Ո՛չ, ազգական չէ՛: Բայց մի՞թե միայն
ազգականներն ունեն մեր կարեկցության իրավունքը:
Մարդիկ բոլորն էլ մեր մերձավորներն են: Պարոնայք,
մի՞թե ես ինձ համար եմ ապրում: Իմ ամբողջ ունեց-
վածքը, իմ բոլոր փողերը աղբատներին են պատկանում:

Բոգանը ականջ է դնում:

Ես գանձապահն եմ միայն իմ փողերի, իսկ դրանց տերը
աղքատներն ու դժբախտներն են:

ԲՈՂԱԵՎ — Քանի դեռ կենդանի եմ, ոչ մի կոպեկ չեմ վճարի.
Թող վերգրեն կալվածքը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՞ւմ չեք վճարի:

ԲՈՂԱԵՎ — Զեմատվոյին, ասում եմ:

ՄԻԼՈՆՈՎ — Է՛հ, Ուար Կիրիլի՛չ, խոսքը զեմատվոյի մասին չէ:

ԲՈՂԱԵՎ — Ո՛չ մի օգուտ, կողոպուտ է և՛ վերջ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Բարձր): Մո՛տ նստեք, դուք մեզ չեք լսում:

ԲՈՂԱԵՎ — Այո՛, չե՛մ լսում, (Նստում է սեղանի մօտ):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այս երիտասարդը, պարոնայք, իմ ընկերուհիներից մեկի որդին է: Ընկերուհուս հետ ես անցյալ տարի Պետերբուրգում հանդիպեցի: Նախկինում, շատ առաջ մենք իրար հետ հարազատ քույրերի պես էինք ապրում: Բայց հետո բաժանվեցինք. ես այրիացա, իսկ նա ամուսնացավ: Ես նրան խորհուրդ չէի տալիս. իմ փորձն իմ մեջ գարշանք էր ծնել ամուսնական կյանքի նկատմամբ:

ԲՈՂԱԵՎ — Ամուսնական կյանքի, բայց ո՞չ տղամարդկանց:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ուա՛ր Կիրիլի՛չ:

ԲՈՂԱԵՎ — Դե՛, ես որտեղի՞ց գիտեմ: Ես հարցնում եմ միայն: Զէ՞ որ տարբեր են լինում բնավորությունները:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Կատակով): Տղամարդկանց նկատմամբ նույնպես, մանավանդ՝ ձեր նման տղամարդկանց:

ԲՈՂԱԵՎ — (Հեծակիւ հեծվելով փոքր-ինչ բարձրանում է տեղից ու գլուխ տալիս): Մեծապես շնորհակալ եմ ձեզնից դրա համար:

ՄԻԼՈՆՈՎ — Ռախա Պավլովնան իր խտտակեցությամբ զարդարում է մեր ամբողջ նահանգը. մեր բարոյական մըթնոլորտը, եթե կարելի է այսպես ասել, բուրում է նրա առաքինությամբ:

ԲՈՂԱԵՎ — Մի վեց տարի սրանից առաջ, երբ լուր առանք, թե գալիս եք կալվածքում ապրելու, մենք բոլորս վախեցանք առաքինութունից. կանայք սկսեցին հաշտվել

ամուսինների հետ, երեխաները՝ ծնողների. շատ տներում նույնիսկ սկսեցին ցածրաձայն խոսել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կատա՛կ եք անում, կատա՛կ: Իսկ դուք կարծում եք, առանց պայքարի՞ եմ ձեռք բերել այս հարգանքը: Բայց մենք շեղվում ենք մեր խոսակցութունից: Երբ հանդիպեցինք Պետերբուրգում, ընկերուհիս վաղուց արդեն այրիացել էր և, իհարկե, խորապես զղջացել, որ չի լսել իմ խորհուրդները: Նա արցունքն աչքերին ինձ ներկայացրեց իր միակ որդուն: Տղան, ինչպես տեսնում եք, հասակ է առնում:

ԲՈՂԱԵՎ — Զինվորացու է արդեն:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դուք արտաքինին մի նայեք: Խեղճը թույլ է առողջութունից և, պատկերացնո՞ւմ եք ինչպիսի դժբախտություն՝ այդ պատճառով էլ նա ետ մնաց ընկերներից: Այնպես որ՝ դեռ գիմնադրայում էր, և, կարծեմ, նույնիսկ միջին դասարաններում: Բեղերն արդեն դուրս էին եկել, մտքերն ուրիշ տեղ էին, կանայք սկսել էին նրանով հետաքրքրվել, իսկ նա պետք է շարաձճի լակոտների հետ դպրոց գնար: Դա վերավորում էր նրան. նա ձանձրանում էր, խույս տալիս մարդկանցից, միայնակ թափառում էր խուլ փողոցներում:

ԲՈՂԱԵՎ — Զլինի՞ նևսկու պողոտայում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Նա տառապում էր, տառապում էր և մայրը, բայց ցավը դարձանելու միջոցներ չուներ: Կալվածքը լրիվ քայքայվել էր, որդին ուսում պիտի առներ, որ մորը կերակրեր. բայց սովորելու ո՛չ ժամանակ ուներ և ո՛չ էլ ցանկություն: Դե, հիմա, պարոնայք, դատեք ինձ, ինչպես կուզեք: Ես որոշեցի միանգամից երեք բարի գործ կատարել:

ԲՈՂԱԵՎ — Երե՞ք: Հետաքրքի՞ր է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հանգստացնել մորը, միջոցներ հատկացնել որդուն և ամուսնացնել ազգականուհուս հետ:

ԲՈՂԱԵՎ — Իրոք՝ երեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ամառն այստեղ անցկացնելու կանչեցի երիտասարդին: Թող ծանոթանան իրար, հետո կամուսնացնեմ ու չավ օժիտ կտամ ազգականուհուս: Իսկ չիմա, պարոնայք, ես հանգիստ եմ. ձեզ արդեն հայտնի է իմ

մտադրութիւնները: Չնայած որ վեր եմ կասկածներից, բայց, եթէ շար լեզուներ գտնվեն էլ, կարող եք բացատրել, թե ինչն ինչոց է:

ՄԻՆՈՆՈՎ — Ամեն մի վեհ ու գեղեցիկ բան կատանա իր գնահատականը, Ռահա Պավլովնա: Ո՞վ կհամարձակվի...

ՔՈՒՆԵՎ — Իսկ ինչո՞ւ չպիտի համարձակվեն: Ոչ մեկին արգելել չես կարող, գրա համար ցնեզուրա չկա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի դեպ, ինձ քիչ է հետաքրքրում հասարակական կարծիքը. ես բարի գործ եմ անում և պիտի անեմ, խոսելը՝ ինչ ուզում եմ, թող խոսեն: Վերջին ժամանակներս, պարոնայք, ինձ մի սարսափելի կանխազգացում է տանջում, մոտալուտ մահվան միտքը ոչ մի բոպե հանգիստ չի տալիս ինձ: Պարոնայք, ես շուտով կմեռնեմ, ես նույնիսկ ուզո՞ւմ եմ, ուզո՞ւմ եմ մեռնել:

ՄԻՆՈՆՈՎ — Ի՞նչ եք ասում: Ի՞նչ եք ասում: Ապրեցե՛ք, ապրեցե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, ո՛չ, մի էլ խնդրեք:

ՄԻՆՈՆՈՎ — Ախր, արցունք, գառը արցունք ենք թափելու:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, պարոնայք, եթէ այսօր կամ վաղը շմեռնեմ, համենայն դեպս, շուտով մեռնելու եմ: Ես իմ պարտքը պիտի կատարեմ ժառանգներիս հանդեպ: Պարոնայք, օգնեցե՛ք ինձ ձեր խորհուրդներով:

ՄԻՆՈՆՈՎ — Հիանալի է, հիանալի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես մի՛ մոտիկ հարազատ ունեմ՝ ամուսնու ազգականը: Ազգականուհուս ես հույս ունեմ ամուսնացնել, քանի դեռ կենդանի եմ: Ազգականիս ես չեմ տեսել տասնհինգ տարի և նրա մասին ո՛չ մի տեղեկություն չունեմ, բայց նա կենդանի է, ես գիտեմ: Հուսով եմ, որ ինձ ոչինչ չի խանգարի դարձնելու նրան իմ միակ ժառանգը:

ՄԻՆՈՆՈՎ — Կարծո՞ւմ եմ:

ՔՈՒՆԵՎ — Խոսելու բան էլ չկա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ենթահակալ եմ ձեզնից: Ինքս էլ էի այդպես մտածում: Ազգականս ինձ չի մոռանում, ամեն տարի նվերներ է ուղարկում, բայց նամակ չի գրում: Հայտնի չէ, թե որտեղ է և գրել նրան չեմ կարող: Մինչ-

դեռ նրան պարտք էլ եմ: Նրա հոր պարտապաններից մեկը ինձ հանձնեց իր հին պարտքը. չնայած մեծ գումար չէ, բայց ճնշում է ինձ: Նա ասես թաքնվում է ինձնից. նվերները ես ստացել եմ Ռուսաստանի տարբեր ծայրերից՝ մեկ Արխանգելսկից, մեկ Աստրախանից, մեկ Քիշնևից, մեկ Իրկուտսկից:

ՄԻՆՈՆՈՎ — Իսկ ինչո՞վ է զբաղվում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Չգիտե՛մ: Ես նրան գինձորական ծառայության էի պատրաստել: Հոր մահից հետո տասնհինգ տարեկան տղան մնաց համարյա առանց որևէ միջոցի: Չնայած ես ինքս էլ ջահել էի, բայց հաստատուն ընկալումներ ունեի կյանքի վերաբերյալ և դաստիարակում էի նրան իմ մեթոդով: Ես գերադասում եմ խիստ, պարզ, ինչպես ասում են՝ սև փողերով դաստիարակությունը: Ժլատությունը չէ պատճառը, ո՛չ, այլ սկզբունքը: Ես համոզված եմ, որ հասարակ, անուս մարդիկ ավելի երջանիկ են ապրում:

ՔՈՒՆԵՎ — Իզո՞ւր: Սև փողով ոչ մի լավ բան չես գնի, մանավանդ՝ երջանկություն:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց չէ՞ որ նա իր դաստիարակությունից չի տրտնջում, նա նույնիսկ շնորհակալ է ինձնից: Ես, պարոնայք, դեմ չեմ կրթությանը, բայց և կողմ էլ չեմ: Բարբերի այլասերվածությունը երկու ծայր ունի՝ տգիտությունն ու շափից ավելի կրթվածությունը. գեղեցիկ բարբերը դրանց մեջտեղում են:

ՄԻՆՈՆՈՎ — Հիանալի է, հիանալի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես ուզում էի, որ այդ տղան ինքն անցնի կյանքի դաժան դպրոցը, ես նրան յունեկերության պատրաստեցի և թողեցի սեփական միջոցների հույսին:

ՔՈՒՆԵՎ — Այդպես ավելի հանգիստ է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Երբեմն ես նրան փող էի ուղարկում, բայց, խոստովանում եմ, քի՛չ, շատ քիչ:

ՔՈՒՆԵՎ — Եվ նա, հասկանալի է, սկսեց գողություն անել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Սխալվում եք: Ահա տեսեք, թե ինչ է գրում նա ինձ: Այս նամակը ես միշտ մոտս եմ պահում: (Հաճում է համակր զանձառափից և տալիս Միլոնովին): Կարդացե՛ք, Եվգենի Ապոլլոնիչ:

ՄԻՆՈՆՈՎ — (Կարգում է): «Սիրելի ազգականուհի և բարերարուհի Ռաիսա Պավլովնա: Սույն շարադրանքն իմ կողմից համապատասխանում է իմ կյանքի հանգամանքներին, նամակ եմ գրում ձեզ կարիքից վշտացած, բայց ոչ հուսահատված, Օ՝ ճակատագիր, ճակատագիր: Իմ սեփական տգիտության բեռան տակ, ընկերներիս առաջ ամոթահար, կարիերայիս անհաջողությունները տանում եմ դեպի նվաճում»:

ՔՈԴԱԵՎ — Առայժմ գովելի քիչ բան կա ձեր և նրա համար: **ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Լսե՛ք շարունակությունը:

ՄԻՆՈՆՈՎ — «Բայց չեմ սարսափում: Իմ առջև փա՛ռքն է, փա՛ռքը: Չնայած ձեր խղճուկ ողորմությունն ինձ շատ անգամներ է հասցրել աղքատության ու կործանման եզրին, բայց համբուրում եմ ձեր ձեռքը: Անշփահաս, պատանեկան տարիներից մինչև չափահաս դառնալս ես խարխափում էի անհայտության մեջ, բայց հիմա իմ առջև ամեն ինչ բաց է»:

ՔՈԴԱԵՎ — Եվ չե՞ք ամաչում, որ ձեր ազգականը, ծնունդով ազնվական, կոշկակարի նման է գրում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բանը խոսքերը չեն: Իմ կարծիքով հիանալի է գրված, այստեղ ես անաղարտ զգացմունք եմ տեսնում:

Մտնում է Կարգը:

ԿԱՐՊ — Իվան Պետրով վոսմիբրատովն է եկել որդու հետ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ներեցե՛ք, պարոնա՛յք, որ ձեր ներկայությամբ ընդունելու եմ այդ մուժիկին:

ՔՈԴԱԵՎ — Միայն թե զգույշ եղեք, նա շատ մեծ խաբեբա է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գիտե՛ք, նա ընտանիքի շատ լավ հայր է: Դա մեծ բան է:

ՔՈԴԱԵՎ — Ընտանիքի հայրը՝ ընտանիքի հայր է, բայց ամենից լավ է խաբում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Չե՛մ հավատում, չե՛մ հավատում, չի՛ կարող պատահել:

ՄԻՆՈՆՈՎ — Մենք ձեզ հետ խոսքներս կարծես մեկ ենք արել: Ես ինքս էլ չեմ պաշտպան եմ ընտանիքի մարդկանց ու

ընտանեկան հարաբերությունների: Ուա՛ր Կիրիլլը, մարդիկ ե՞րբ էին երջանիկ, Վրանների տակ, Շատ ափսոս, որ մենք հեռացել ենք այդ նախնական պարզ կյանքից, որ մեր կրտսեր եղբայրների նկատմամբ մեր հայրական հարաբերությունների ու հայրական միջոցառումների կիրառումը դադարեց: Խստություն վերաբերմունքի մեջ և սեր հոգում՝ որքա՛ն ներդաշնակ-ներբազեղ է: Հիմա մեր մեջ հայտնվեց օրենքը, հայտնվեց և սառնությունը. առաջ, ասում են, կամայականություն է եղել, բայց փոխարենը, եղել է նաև ջերմություն, Ինչի՞ համար են շատ օրենքները: Ի՞նչ կարիք կա ճշտելու հարաբերությունները: Թող սիրտը դրանք որոշի: Թող յուրաքանչյուրը գիտակցի իր պարտքը: Օրենքը մարդկանց հոգիներում է գրված:

ՔՈԴԱԵՎ — Այդ այդպես է, եթե միայն քիչ լինեն խաբեբաները, թե չէ չափից ավելի շատ են:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Կարպի՛ն): Գնա կանչիր Իվան Պետրովին:

Կարգը գնում է: Մտնում են վոսմիբրատովը և Պյոտը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ Ի Ն Չ Ե Ր Ո Ղ

Գումիթսկայա, Միլոնով, Բոզաև, Վոսմիբրատով, Պյոտը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Նստի՛ր, Իվան Պետրովիչ:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — (Գլուխ է տալիս ու նստում): Պյոտը, նըստի՛ր:

Պյոտը նստում է դռան մտ, արոտի ծայրին:

ՄԻՆՈՆՈՎ — Կհրամայեք կարողալ-վերջացնե՛լ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կարդացե՛ք, նա չի խանդարի:

ՄԻՆՈՆՈՎ — (Կարգում է): «Կարի՛ք, դու անըմբռնելի ես: Շնորհակալ եմ ձեզից, շնորհակալ եմ: Շուտով իմ անունը կպսակվի անմահությանը, իսկ դրա հետ նաև ձերը եր-

բեր չի մեռնի հետնորդներին, երեսանների, և թոռների համար... մեկ անգամ ևս շնորհակալութիւն ևս հայտնում ամեն ինչի, ամեն ինչի համար: Ծառայութիւնների համար ձեր խոնարհ ազգական, բնութիւն զավակ, դժբախտութիւն փայփայած, Գուրմիժակի»:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Վերցնելով նամակը): Շնորհակալութիւն, Եվզենի Ապոլլոնիչ: Ա՛յ, եկեք հարցնենք հասարակ մարդուց, նա ճիշտը կասի: Իվան Պետրովիչ, լա՛վ է գրված այս նամակը:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Առաջին տեսակի: Այ, եթե մեկը էդպես խնդիրը գրեր, էլ պակաս տեղ չէր ունենա:

ՄԻՆՈՆՈՎ — Այս նամակը, ախր, տասներկու տարվա է: Ի՞նչ է անում հիմա ձեր ազգականն իր աղմուկ հանած փառքով:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես ձեզ ասում եմ՝ չգիտե՛մ:

ՔՈՂԱՆՎ — Մեկ էլ տեսար՝ զարմացրեց:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչ էլ որ լինի, ես հպարտանում եմ այս նամակով և շատ գոհ եմ, որ մարդկանց մեջ երախտագիտութիւն գտա: Պետք է ճշմարիտն ասել, ես նրան շատ եմ սիրում: Ես ձեզ խնդրում եմ, պարոնայք, վաղը չէ մյուս օրը համեցեք իմ տուն ճաշի: Հավանաբար շեք մերժի կտակիս տակ ստորագրելու: Կարծում եմ, այն պատրաստ կլինի. եթե չլինի էլ, համենայն դեպս, շնորհ արեք:

ՔՈՂԱՆՎ — Կգամ:

ՄԻՆՈՆՈՎ — Հավատացե՛ք, ամենայն վեհ ու գեղեցիկ բան...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իհարկե, եթե խիստ դատելու լինենք, ես ժառանգիս առջև փոքր-ինչ մեղավոր եմ. կալվածքից ես որոշ բան վաճառել եմ:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Էդպես է, տիրուհի, ահագին բան, մանավանդ, երբ բարեհաճում եք մայրաքաղաքներում ապրել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես շատ շուտ օգնում եմ: Մերձավորի համար չեմ փոսոսում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Էդպե՛ս է: Վերցնենք հենց ձեզ. դուք ձեր ունեցվածքի տերն եք, ամեն մարդ էլ կենդանի արարած է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ հիմա, արդեն մի յոթ տարի կլինի, ես բոլորովին այլ կերպ եմ ապրում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Էդ մեկը ճիշտ է: Ոչ մի լուր չի պտտվում, թե դուք էնպես... մշտական կյանք եք վարում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛հ, դե ես առաջ էլ... բայց խոսքը դրա մասին չէ: Ես ասում եմ, որ շատ խնայողաբար եմ ապրում:

ՔՈՂԱՆՎ — Ներեցեք: Խոսքը ձեր մասին չէ: Մի շղայնացեք, խնդրում եմ: Բայց իրոք մեզանում շատ ազնվականական կալվածքների կանայք հիմնահատակ կործանեցին: Եթե տղամարդը վատնում է, նրա վատնումի մեջ, այնուամենայնիվ, ինչ-որ իմաստ կա. կանացի հիմարութիւնը սահմաններ չի ճանաչում: Եթե սիրեկանին խալաթ է պետք նվիրել, նա հացը ժամանակից շուտ ջրի գնով կվաճառի, սիրեկանին ծոպավոր թասակ է պետք՝ նա անտառը, խնայված լավագույն շինափայտը կվաճառի առաջին պատահած խաբեբային:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Այստեղ դուք, ձերի աղնվութիւն, իրավացի եք: Քանի որ դրանց, կանանց դասին, ինչ բանում էլ ազատութիւն տաս, խեր չկա:

ՔՈՂԱՆՎ — Դու այդ կարծիքի՞ն ես:

ՄԻՆՈՆՈՎ — (Վստիքբառով): Ա՛խ, Վանյա՛, Վանյա՛, ի՞նչ կոպիտն ես:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Ընդհանրապես է ասվում, պարո՛ն:

ՄԻՆՈՆՈՎ — Այնուամենայնիվ, Վանյա, զգուշ պետք է լինել, բարեկամս... Դու, ահա, սխալվում ես, կանանց պատճառով չեն կործանվում կալվածքները, այլ այն, որ ազատութիւնը շատ է:

ՔՈՂԱՆՎ — Ի՞նչ ազատութիւն: Այդ ո՞ւր է:

ՄԻՆՈՆՈՎ — Ա՛հ, Ուա՛ր Կիրիլիչ, ես ինքս ազատութիւն կողմնակից եմ, ես ինքս դեմ եմ կաշկանդիչ միջոցառումներին... Դե, իհարկե, ժողովրդի, բարոյապես անշափահասների համար անհրաժեշտ են... Ինքներդ ասեք, ախր, այսպես ո՞ւր կհասնենք, Վաճառականները սնանկանում են, ազնվականները փողը վատնում... Ընդունեք, որ, ի վերջո, անհրաժեշտ կլինի օրենքով սահմանափակել յուրաքանչյուրի ծախսերը, շափ սահմանել ըստ դասերի, դասակարգերի ու պաշտոնների:

ԲՈՒՆԵՎ — Դե ի՛նչ, նախագիծ ներկայացրեք: Հիմա նախագծերի ժամանակ է, բոլորը ներկայացնում են: Մի՛ վախեցեք, չե՛ք զարմացնի, ձերինից ավելի հիմարն էլ կա:

Ելեա՛մ է տեղից, Միլեովը՝ նայեցես:
Գլոխ է տալիս: Վասմիրբատովը է Պյատը ոտի եե կանգնում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Ճանապարհներով նրանց): Պարոնա՛յք, ես ձեզ սպասում եմ վաղը չէ մյուս օրը:

Միլեովը և Բազաը գնում են:

Տ Ե ս ար ան վ Ե ց Ե ր ո ր ր ր

Գաւմիժեկայա, Վասմիրբատով, Պյատ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Նստի՛ր, Իվա՛ն Պետրովիչ:
ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — (Նստելով): Պյո՛տր, նստի՛ր:

Պյատը նստում է:

Բարեհաճել եք կանչե՞լ, տիրուհի՛:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, շատ էի ուզում քեզ տեսնել: Փողերը բերի՞ր:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Չէ՛, տիրուհի՛, անկեղծ ասած՝ չեմ բերել: Բայց թե որ պետք է՝ հրամայեք, հենց վաղը կբերեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Խնդրում եմ: Օդի չե՞ս ուզում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Չէ, ազատեք ինձ դրանից: Մեզ համար անժամանակ խմելը... Մենք էլ ենք, ախր, մարդ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու բո՛լորը բեր, ինչպիս պայմանավորվել էինք:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Լսո՛ւմ եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես չեմ հիշում, կարծեմ...

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Դե դուք նեղություն մի քաշեք անհանգրստանալ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կարծեմ հազար հինգ հարյուր էր (Փրկարեկով գանձատուփի մեջ): Ո՛ր է գրությունը: Մի՞թե վայր գցեցի: Չե՛մ գտնում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Լա՛վ փնտրեք, տիրուհի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց, բոլոր դեպքերում, այդքանն ինձ չի բավարարում: Մի տեղամաս անտառ էլ չե՞ս գնի:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Իսկ ինչի՞ չեք ուզում ամբողջը ծախել: Ինչների՞դ է պետք... Ախր, անտառը, տիրուհի, հավատացե՛ք, տեղով մեկ փորձանք է. գյուղացիք գողանում են՝ դե գնա ու հետները դատվիր: Թե որ քաղաքին մոտ է անտառը, ամեն մի փախստական, ամեն մի թափառաշրջիկ ապաստան է գտնում այնտեղ, դե, աղախինները նույնպես, կանանց սեռի համար... Որովհետև դրանք սնկի են գնում կամ հատապտուղ հավաքելու, բայց բոլորովին հակառակն է ստացվում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, ամբողջը ես հիմա չեմ վաճառի. ի՛նչ կալվածք առանց անտառի: Գեղեցիկ չէ: Գուցե ժամանակը գա... Իսկ դու գնիր քաղաքին մոտ գտնվող տեղամասը:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Չնայած հիմի փող չունեմ, բայց ինչի՞ շահեմ, թե որ ձեռնառու գնով տաք: Իսկ ես, ի՛նչ թաքցրեմ, ձեր դուռն ուրիշ ապրանքի ետևից էի եկել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Չե՛մ հասկանում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Ազգականուհի ունեք, չունևոր աղջիկ...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հետո՞ ինչ:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Չգիտեմ ուրիշ տեղ, թե էստեղ՝ տեսնել է նրան տղաս:

Պյատը ոտի է կանգնում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Սա՛:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Պյոտրը: Ես ձեզ ասեմ՝ գառի նման տղա է: Հենց իր հիմարության ու թուլամորթության պատճառով էլ հավանել է: Դե, ինչ խոսք, մեր գինը մեծ չէ, իսկ թե աստված տա հաջողվի էս գործը, մի շորս հազարի անտառ տաք նրան ապրուստի համար, մեզ էդքանն էլ հերիք է: Ձեր թեթև ձեռքով կթուփոջանա ու կապրի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես շատ շնորհակալ եմ ձեզինից, բայց, բարեկամներս, կներեք: Նա արդեն փեսացու ունի, իմ տանն է ապրում: Գուցե քաղաքում ինչ-ինչ հիմարու՞ք:

թյուններ են դուրս տալիս, բայց դուք իմացեք, նա է
 փեսացուն:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — (Պյոտրին): Լսո՞ւմ ես: Իսկ դու ներս ես
 խցկվում: Հորդ իզուր հիմար վիճակի մեջ ես դնում: Ես
 քեզ ցույց կտամ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Զկարծեք, թե անարժան եմ համարում
 ձեզ: Նրա համար քո որդին շատ էլ լավ գույգ է: Եթե
 այնպես է ստացվել, որ փեսացուն ազնվական է, դա մի
 առանձին շնորհ է, ինքը դրան արժանի էլ չէ:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Հասկանո՞ւմ եմք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Սա եղած գործ է, և վերջացնենք այդ
 մասին խոսակցությունը: Անտառի մասին խոսենք: Գնի՛ր,
 Իվան Պետրովիչ:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Փող չունեմ, փող չունեմ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Զի՛ կարող պատահել:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Թե որ խելքի մոտ գին ասեք, կարելի է:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ ինչքան կտայիր դրան:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — (Մտածելով): Մի հինգ հարյուրը կբավա-
 կանացնի՞ր ձեզ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՛նչ ես ասում, ի՛նչ ես ասում: Նրա հա-
 մար հազար հինգ հարյուր, իսկ սա հինգ հարյուրո՞ւմ: Զէ՞
 որ սա ավելի մեծ է և ավելի լավը:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Ճի՛շտ է: Ներո՞ղ եղեք: Ես էնպես, բերանի-
 ցըս թռավ, առանց մտածելու, և հետո չեմ էլ ուզում
 գլխիս գործ սարքել: Ձեր գի՞նն ինչ է:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Երկու հազարից ոչ պակաս: Ինձ այդ-
 քան առաջարկել են:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Ինձնից ձեզ խորհուրդ՝ տվե՛ք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, ես չեի ուզում ձեզ վիրավորել:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Դրա համար շատ շնորհակալ եմ ձեզնից,
 միայն թե ահա ինչ կասեմ. շարժե նեղություն քաշել:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իվան Պետրովիչ, ամո՞թ է: Ես որք եմ:
 Իմ բախտն անիծված է: Որքին նեղացնելը մեղք է: Դու
 ասածուն մի մոռանա:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Թե որ մենք ասածուն՝ մեր գթասիրտ արար-
 չին մոռանանք, էդ ժամանակ, տիրուհի, գնալու տեղ
 չենք ունենա: Հենց էդ պատճառով էլ մենք առանց աս-

արծու չենք կարող, քանի, որ, ուրեմն, նա՛ է մեր ապա-
 վենը:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այդպես է, իհարկե: Ինքը մտածիր, չէ՞,
 որ այդ փողերը ես բարի գործերի համար եմ ուզում:
 Աղջիկը հասունացել է, մի առանձնապես խելոք էլ չէ:
 ուզում եմ ամուսնացնել՝ քանի դեռ կենդանի եմ, ինչ
 մի լավ բան կլինի, թե որ ինձնից հետո մնա առանց
 հսկողության. գիտե՛ս հիմիկվա ժողովրդին: Ինքը էլ
 հայր ես, կարող ես դատել, դո՛ւ էլ աղջիկ ունես, հա-
 ճելի՞ր կլինի քեզ...
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Իսկ եթե աղջիկը խաբեբայի մեկն է...
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իվան Պետրովիչ, այդ ի՛նչ խոսքեր են:
 Դու գիտես, ես չեմ սիրում: Դե՛, լսի՛ր: Միայն քեզ հա-
 մար հինգ հարյուր ուրբի գիշում եմ, հազար հինգ հար-
 յուրով եմ տալիս:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Մեզը օգուտ չի մնա:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, այլևս խոսել էլ չեմ ուզում: Ամո՞թ
 քեզ, ամո՞թ:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Մի քիչ թանկ է, բայց դե ոչինչ: (Ձեռք
 քափ տալով): Առաջներում ձեզնից օգուտ ունեցել եմ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Միայն թե փողն ինձ հենց վաղն է պետք:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Դեռ քնից զարթնած չեք լինի, կբերե՛նք:
 Իսկ դուք, որպեսզի վաղը նեղություն չտաք ձեզ, գրու-
 թյուն պատրաստեք, որ այսինչ պարապուտներում կըտ-
 բելու համար ծախված անտառի փողը լրիվ ստացել եք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ուրեմն դու կբերես ուղիղ երեք հազա՞ր:
ՎՈՍՄԻՐԱՍՆՈՎ — Ինչքան որ պետք է, էնքան էլ կբերենք:
 Առաջվա փողերի համար գրություն ունեք, իսկ սրա հա-
 մար՝ ձե՛ր կամքն է, թեկուզ հրաժարվեք էլ: Մեր խոս-
 քին չեք հավատում, ամեն մի շեղած բանի համար թուղթ
 ու գրություն եք վերցնում, էդ ինչի՞ր վրա եք կասկածում:
 Ես անգրագետ մարդ եմ, պատահում է՝ չեմ էլ իմանում,
 թե ինչ է գրած թղթում: Էս տղային էլ տանջում եմ, ձեռ
 քաշելու համար հետո ման եմ տալիս: Մնացեք բարով:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնաք բարով:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Յ Ե Ր Ր Ո Ղ

Գարմիժակայա, Կարպ, ճեսո՝ Ակոյունա և Ուլիտա:

ԱԿՐՊ — Տիրուհի, բարեհաճեցեք օրհորդին հարցնել, նա սպասում է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կանչի՛ր:

Կարպը գնում է:

Խորամանկ, հանդուգն աղջիկ: Մեզը ո՛չ երախտագիտութիւն կա, ո՛չ հաճոյանալու պատրաստակամութիւն: Պատիժ է գլխիս:

Մտնում է Ակոյունան:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Աչքերը խոճարհեղով, ցածրաձայն), Ի՞նչ եք կամենում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կարծում եմ, գիտես, թե ինչու եմ Ալեքսեյ Սերգեյիչին կանչել ավել այստեղ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Գիտե՛մ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դո՛ւ, խնդրո՛ւմ եմ, շատ մի երևակայիր քեզ: Դա մտադրութիւն է միայն: Գուցեև խելքահան լինես և հետո սխալվես: (Միծաղելով): Մեղքս կգաս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինչո՞ւ պիտի խելքահան լինեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, աստված իմ: Մի՞թե հարմար գույզ չէ: Նա դեռ հարցնե՛ւմ է: Բայց նախ պիտի տեսնեմ, արժանի՞ ես դու նրան: Ես ինքս էլ եմ ասում, որ նա քո փեսացուն է, ուրիշներն էլ թող ասեն, բայց ես դեռ պիտի մտածեմ, լսո՛ւմ ես, պիտի մտածեմ:

Մտնում է Ուլիտան:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես էլ հարցնելու բան ունեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես գիտեմ, թե դու երբ պետք է հարցնես, ինձ մի՛ սովորեցրու: Իսկ հիմա ես ուզում եմ, որ բոլորը նրան քո փեսացուն համարեն, ինձ այդպիսի է պետք: Բայց աստված շանի՛ կոկետութիւն անես հետք կամ էլ որևէ անզսպութիւն թույլ տաս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՞նչ անզսպութիւն: Ի՞նչ եք ասում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Չլինի՞ մտածում ես վիրավորվել: Շա՛տ սիրալիրն ես: Իմացի՛ր, հոգայ՛կս, քո մասին ինչ ուզեմ կմտածեմ: Դու փողոցի աղջիկ ես, տղաների հետ սահնակ էիր քշում:

ԱԿՍՅՈՒՇԱ — Հո միշտ սահնակ չէիր քշում, ես վեց տարեկանից գիշեր-ցերեկ օգնում էի մորս, իսկ տոներին, ճիշտ է, տղաների հետ սահնակ էի քշում: Ի՞նչ արած, խաղալիք ու տիկնիկ չեմ ունեցել: Բայց չէ՞ որ տասը տարեկանից ձեր տանն եմ ապրում և մշտապես աչքիս առաջ օրինակ ունեմ...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Վատ հակումները մանկուց են արմատավորվում: Ուրեմն մի՛ ջղայնացիր, սիրելիս, եթե քեզ վրա շատ խիստ հակողութիւն լինի: (Միծաղելով): Չնայած նա քո փեսացուն է, բայց դեռ խակ է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Փեսացո՛ւ: Ո՞ւմ է պետք այդպիսի փեսացուն:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե՛, դա քո հասկացողութիւնից վեր է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ո՛չ լավն է, ո՛չ էլ խելացի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դուրս ես տալիս: Դու հիմար ես, իսկ նա խելացի է, լավը, կրթված: Էլ ո՞նց կլինի: Դու դիտմամբ ես ասում: Հո կույր չե՞ս: Միայն թե ուզում ես ինձ ջղայնացնել:

ԱԿՍՅՈՒՇԱ — Չեզ ի՞նչ կա որ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչպե՞ս թե ինչ: Ե՛ս եմ ընտրել, ի՛մ ճաշակով: Դու նրան ի՞նչ ընկեր, աշխարհիկ կանայք են նրանով հրապուրվել:

ԱԿՍՅՈՒՇԱ — Դա նրանց պատիվ չի բերում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Օ՛հ, օ՛հ, դատողութիւններն է անում: Իսկ դու ի՞նչ ես հասկանում պատվից ու անպատվութիւնից:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես փողոցում մեծացած աղջիկ եմ, աշխարհիկ տիկին չեմ: Բայց չեմ հրապուրվի այդպիսի գանձով:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ ես քեզ հրամայում եմ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ախր ես չեմ ամուսնանալու նրա հետ, ինչի՞ համար է այս կոմեդիան:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կոմեդիա՞, ինչպե՞ս ես համարձակվում: Թող որ հենց կոմեդիա լինի. ես քեզ հագցնում ու կերակրում եմ և կստիպեմ կոմեդիա խաղալ: Դու իրավունք

շունես խառնվելու իմ մտադրութիւններին, ինձ այգպե՛ս է պետք և՛ վերջ: Դու հարս ես, նա՛ փեսա. միայն թե նստած կմնաս քո սենյակում հսկողութիւն տակ: Ահա՛ իմ կամքը:

ԱՎՅՅՈՒՇԱ — (Նայում է նրա աչքերին): Աւրիշ ոչի՛նչ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ոչի՛նչ, գնացի՛ք:

Ակոյալան գնում է:

Ո՛ր, սպասի՛ր: Քեզինք լավերն էլ են եղել, բայց իմ դուրուկի տակ են պարել:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Գ

Գուրմիծակայա և Ուլիտա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այստե՛ղ արի:

ՈՒԼԻՏԱ — Ի՞նչ եք կամենում, տիրուհի՛ս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մո՛տ արի, նստի՛ր աջտեղ և ըփր:

ՈՒԼԻՏԱ — (Մտածելով և նստում է հատակին): Հսո՛ւմ եմ, տիրուհի՛ս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու ինձ ճանաչում ես: Գիտես, թե ինչ խիստ եմ հետևում ամբողջ տանը:

ՈՒԼԻՏԱ — Գիտեմ, ինչպե՛ս լիմանամ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես Ակոյալային չեմ հավատում, նա խորամանկ աղջիկ է: Նա հաճախ է հանդիպում Արքային Սերգեյիչի հետ. ես չէի ուզենա, որ Ակոյալան նրա մոտ իր զգացմունքներին ազատութիւն տար: Իմ ներկայութիւնս, պարզ է, չի համարձակվի, բայց ես հո միշտ նրա կողքին չեմ. նրանք կարող են հանդիպել և՛ պարտեզում, և՛ սենյակներում: Ահա և քեզ խնդրում եմ, նույնիսկ հրամայում...

ՈՒԼԻՏԱ — Հասկանո՞ւմ եմ, տիրուհիս, հասկանո՞ւմ եմ: Ձեր ձեռքը, շնորհ արեք: (Համբարում է Գուրմիծակայայի ձեռքը): Զարմանք բան է, թե ինչպես եմ ձեզ հասկանում: Վաղուց եմ աչքս վրաները պահում, ստվերի պես եմ հետևում, քաջ շին կարող անել առանց ինձ. որտե՛ղ նրանք, այնտե՛ղ էլ ես:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Մտածելով): Քեզ էլ հենց նրա համար եմ սիրում, որ հասկացող ես:

ՈՒԼԻՏԱ — (Ոգեւորված): Հասկացո՞ղ եմ, տիրուհի՛ս, հասկացո՞ղ: Երեկ շրջադեպստս լրիվ բրբրեցի, մացառների միջով էի սողում, եղինջները դազեցին ամբողջ մարմինս. աչանջ էի դնում, թե ինչ են խոսում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Զգե՛ս աղ ես պատաստե՛ր: Եղածը մեծ բան չէ, սրանից հետո էլ մի արտասա. ես շատ ունեմ, քո վատի փոթարե՛ն լա՛վք կտամ:

ՈՒԼԻՏԱ — (Խորհրդալուր): Քիչ առաջ հենց այստեղ հանդիպեցի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Եվ ի՞նչ:

ՈՒԼԻՏԱ — Այդ հիմար կարպը խանգարեց. էլի ինչ-որ բան կարելի էր նկատել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Եվ ի՞նչ նկատեցիր:

ՈՒԼԻՏԱ — Ակոյալան նրա նկատմամբ շատ սիրաճիր էր. իսկ նա կարծես հենց այնպես... (ձեռքով ցույց է տալիս): Զգացնել էր տալիս, որ ես, ահա, չեմ ուզում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՞... Հո չե՞ս սխալվում: (Նայում է աչքերին):

ՈՒԼԻՏԱ — Եվ էսպես նույնիսկ... (Ձեռքով ցույց է տալիս):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մի՛թե:

ՈՒԼԻՏԱ — Եվ կարծես... կարելի է տեսնել, որ նա այնքան էլ չէ... թե ահա ուշքը գնում է...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինձ թվում է՝ խաբում ես:

ՈՒԼԻՏԱ — Մի՛ ասա, տիրուհիս, էդպիսի բաներում իմ աչքը, չի խաբի... Եվ ոնց որ նրա մտքինն ուրիշ բան է...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Թե մտքինն ինչ է, դու դա չես կարող իմանալ... Ինձ թվում է, շատ ես առաջ ընկնում:

ՈՒԼԻՏԱ — Հապա թափածո ջանքերը...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչքան էլ ջանք թափես, ուրիշի մտքինը չես գուշակի, ուրեմն իզուր տեղը շտապիտես շարժի:

Լսողյուն:

Ուլիտա՛, մենք հասակակիցնե՛ր ենք...
ՈՒԼԻՏԱ — Տիրուհիս, ես մեծ կլիներմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես դրա կարիքը չունեմ, իզուր ես ասում...

Մա էլ գիտեմ, դո՛ւ էլ, որ հասակակիցներ ենք:

ՈՒԼԻՏԱ — Ճիշտ եմ ասում, տիրուհիս, ինձ միշտ թվում է...
Բայց ինչ կարիք կա հաշվելու. երկուսս էլ որք ենք, հուսակառուր այրիններ...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Է՛հ, դու այնքան էլ հուսակառուր չես:
Հիշո՞ւմ ես, որ մեր տանն ի՛նչ եկավ գլխիդ: Է՛լ մեղմուսթյուն, է՛լ խստություն, ոչինչ չէր օգնում:

ՈՒԼԻՏԱ — Այո, պատահել է, տիրուհիս, իսկապես պատահել է, բայց անցած-գնացած բան է: Իսկ ահա վերջին վեց տարում, ինչպես որ դուք եք էդպես խաղաղ ապրում...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, չեմ նկատել...

ՈՒԼԻՏԱ — Թող գետինը մտնեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լսի՛ր, Ուլիտա՛, Ասա՛ ինձ, միայն թե անկեղծ... Երբ որ գեղեցիկ երիտասարդ ես տեսնում... որե՛է բան չես զգում կամ էլ մտքովդ չի՞ անցում, թե հաճելի կլինե՞ր սիրելը...

ՈՒԼԻՏԱ — Էդ ի՛նչ եք ասում, էս պառավ հալի՞ս: Մտքիցս թռել է, տիրուհիս, ամեն ինչ մոռացել եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Է՛հ, դու դեռ ի՛նչ պառավ: Չէ՛, դու ասա:

ՈՒԼԻՏԱ — Դե, քանի որ հրամայում եք...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, հրամայում եմ:

ՈՒԼԻՏԱ — Երբ մեկ-մեկ միտքդ հեռուներն է թռչում... (Քե՛հշուրյամբ): Սիրտդ քաշում է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Մտախոհ): Հեռացի՛ր, զգվելի՛:

Ուլիտան վեր է կենում, մի կողմ փախում ու խեք-խեք նայում: Գուրմիժսկայան ելնում է տեղից և մտե՛նում պատուհանին:

Իսկ նա վատ տղա չէ: Նա ինձ վրա անմիջապես հաճելի տպավորություն թողեց: Ա՛հ, դեռ ինչքա՛ն շահել եմ հոգով: Ինձ թվում է, ես մինչև յոթանասուն տարեկան ընդունակ կլինեմ սիրահարվելու... Եվ եթե իմ լրջախոհությունը չլինե՞ր... Նա ինձ չի նկատում... (Ձևո՛ղվ է անում): Ա՛խ. սիրունի՛կս... Այո, կյանքի հաստատուն կանոն...

ենքը շատ բան են նշանակում: (Շրջվում է ու տեսնում Ուլիտային): Իսկ դու դեռ այստե՞ղ ես: Դե՛, գնա՛նք, մեկի տեղ քեզ երկու շոր կնվիրեմ:

Գնում են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԿ

ԱՆՉԻՆՔ

ԱԿՅՈՒՆՇԱ:

ՊՅՈՏՐ:

ՆԵՐՅՈՆԿԱ-ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎԻ սպասավոր տղան:
ԳՆԵՆԱԿԻ ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ } հետիոտն

ՊԲԿԱԿԻ ՍՉԱՍՏԻՎՅԵՎ } ճանապարհորդներ

Անտառ. բեմի խոփից իրար ճակատակ երկու ոչ լայն ճաճապարհներ են գալիս ու, անկյուն կազմելով, հատվում ճախարեմի մտ: Երկված սյուն, ուրի վրա, ճաճապարհների ուղղությամբ. մակագրություններով երկու առիտակ է խփված. աչի վրա՝ «Դեպի Կալինով ֆաղաֆ», ձախի վրա՝ «Դեպի տիկ. Գուրմիժսկայայի «Պենկի» կալվածք»: Սյուն մտ՝ ցածր լայն կրեզ, սյան ետևում, ճաճապարհների կազմած եռանկյան մեջ, մարդու հասակից ոչ բարձր կարվածքի բփռու: Վերջապես է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Պկայուշան գալիս է անտառի ծախ կողմից և նստում կոճղին: Պյոտրը գալիս է անտառի աջ կողմից, իսկ ճեռա՝ Տերյոնկան:

ՊՅՈՏՐ — (Բարձր): Տերյո՛նկա:

Անտառից դուրս է գալիս տղան:

Բարձրացիր ծայրի այն ծառը, և, ուրեմն, աչքդ չկտրես ճանապարհից... Չքնես հանկարծ, թե չէ մեկը ցախաքլորի տեղ կդնի ու կխփի: Լսո՞ւմ ես:

ՏԵՐՅՈՆԿԱ — (Երկրորդ): Լո՛ւմ եմ:

ՊՅՈՏՐ — Ուրեմն, մեծ ախպեր, հենց որ հայրիկն երևաց, ծառից գլխկոնծի կտաս ե ուղիղ այտեղ: (Շրջում է նրան ու բեթևակի խփում վզին): Դե՛, գնա՛:

Տերյոնկան գնում է:

Այո, խնդրում եմ, եղբայրս, պի՛նդ կաց:

Տերյոնկան գնում է անտառ:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Մտտենալով Պյոտրին): Բարև՛, Պետյա՛:

ՊՅՈՏՐ — (Համբուրելով նրան): Թա՛րև, գործերդ ո՞նց են:

ԱԿՍՅՈՒՇԱ — Նո՛ւյնը, մի քիչ վատ:

ՊՅՈՏՐ — Իսկ մեզ էնպես է հասել, թե իբր շատ լավ են:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՞նչ ես հնարում:

ՊՅՈՏՐ — Ազնվակառի հե՛տ ես պսակվում: Երևի թե ավելի լավն է, դեռ տարբեր լեզուներ էլ գիտի. էն էլ քիչ բան չի, որ կարճ վերարկու է հագնում, ոչ թե մեզ նման:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Փակելով նրա բեռանք): Դե՛, հերի՛ք խոսես, վե՛րջ տուր: Ախր, գիտես, որ դա լինելու բան չի, էլ ի՛նչ ես կպել:

ՊՅՈՏՐ — Էդ ո՞նց է, ուրեմն, շի՛նելու բան, երբ քոռակինդ ինքը անցյալ օրը...

ԱԿՍՅՈՒՇԱ — Մի՛ վախենա, մի՛ վախենա:

ՊՅՈՏՐ — Լավ կլինի դու առանց քաշվելու ասես՝ ո՞ւմն ես դու: Քո՞նն ես, թե՞ ուրիշինը:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՛մը, սիրելի՛ս, ի՛մը: Թվում է, ինձ շին էլ ստիպի: Այստեղ ինչ-որ ուրիշ բան կա:

ՊՅՈՏՐ — Մերժո՞ւմ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Նման մի բան:

ՊՅՈՏՐ — Իսկ անցյալ անգամ հոգիս դուրս եկավ: Հայրս հենց որ քո մասին խոսք պահեց, նա թե՛ «նշանված է»: Կհա-վատա՞ս, քանի նրանք խոսում էին, ասես եռացրած ջուր լցրած լինեին գլխիս: Իսկ հետո հայրս երկու ժամից ազել հայհոյում էր ինձ. մեռած-մեռած, նորից էր հայհո-յում: Դու, առում է, ինձ տիրուհու մոտ հիմար դրու՞թյան մեջ դիր:

ԱԿՍՅՈՒՇԱ — Նա ինձ ուրախությամբ կտար մեկին կպրծներ, փողն է ափսոսք գալիս: Իսկ հայրդ դեռ օժի՛տ է փընտ-րում:

ՊՅՈՐ — Երեք հազարից պակաս հոժաք չի: «Թե որ,— ասում է,— քեզ համար երեք հազար չվերցնեմ, քեզ կերակրե-լըն էլ,— ասում է,— շարժեր: Թեկուզ այժի հետ,— ասում է,— կպսակեմ, միայն թե փողով լինի»:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՛նչ արած, երեք հազար որտեղի՞ց գտնեմ: Դու ինձ հարցրի՛ր՝ ումն ես: Իսկ դո՛ւ, դո՛ւ ումն ես: Քո գլխի տերը դո՞ւ ես:

ՊՅՈՏՐ — Ես ի՛նչ, իմ մասին խոսել էլ շարժի: Տաժանակիթ եմ ես, ոտուձեռս հավիտյան կապկպված տաժանա-կիր:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինչո՞ւ ես այդպես սառն ու տխուր:

ՊՅՈՏՐ — Ինչի՞ս վրա ուրախանամ, Ես արդեն անտառում քայլում ու ծառերին եմ նայում, թե որ հյուզն է պինդ: Քո կյանքն էլ, ինչքան գիտեմ, իմից ուրախ չէ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես ո՛չ տխուր եմ, ո՛չ ուրախ. ես վաղուց ար-դեն մեռած եմ: Իսկ դու առժամանակ մոռացիր վիշտդ, քանի դեռ քեզ հետ եմ:

ՊՅՈՏՐ — Դե դա էդպես է, բայց մեկ է՝ ուրախանալու քիչ բան կա:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ա՛խ, դու հիմար: Ինչո՞ւ չպիտի ուրախանաս. ի՛նչ աղշիկ է քեզ սիրում:

ՊՅՈՏՐ — Ինչի՞ պիտի ինձ չսիրեն, Ես հո անկնունք մորդվա չե՛մ: Ձեր պարտականությունն էլ հենց դա է:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Ջղայնացած): Հեռացի՛ր այստեղից, եթե այդ-պես է:

ՊՅՈՏՐ — Իզուր ես ջղայնանում: Գլուխս հի՛մի չի աշխատում. երեք օր է միաք եմ անում, բայց խելքս ինչ-որ բան չի կորում: Տալիս-առնում եմ, բայց...

ԱԿՍՅՈՒՇԱ — (Դեռ ջղային): Այդ ինչի՞ մասին ես մտածում: Լավ կլինեիր իմ մասին մտածեիք, չէ՞ որ մտածել պետք է:

ՊՅՈՏՐ — Հենց քո մասին էլ մտածում եմ, Երկու բան կա: Մեկն էն է, որ կպնեմ հորս: Այսօր, ասե՛նք, Կհայհոյի, իսկ ես վաղը էլի նույնը: Է՛հ, վաղը, թեկուզ ծեծի էլ,

վաղը չէ մյուս օրը պոկ չեմ գա: Էնքան, մինչև ձանձրա-
նա հայհոյելուց: Էդպես օր-օրի, որ ոչ մի օր արանք
չմնա: Կամ ճղոնով ինձ կսպանի, կամ իմ ասածով
կգնա ու գործը կվերջանա:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Խորհելով): Իսկ մյուսն ինչ է:

ՊՅՈՏՐ — Իսկ մյուսն առաջինից լավն է: Ես մի երեք հար-
յուր ուրբի սեփական փող ունեմ, իսկ եթե բախտս բե-
րեց, ձեռքս հորս փողերին հասավ, ուրեմն, երևի, ինչքան
ասես կունենամ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իսկ հետո ի՞նչ:

ՊՅՈՏՐ — Իսկ հետո արդեն՝ «ցալս պատմեմ՝ դարման արեք»,
տրոյկա ենք նստում ես ու դու՝ «է՛խ, սիրելիներս»: Մո-
տենում ենք Վոլգային: Մ... շոգենավ ենք նստում: Ներ-
քե արագ է սլանում, գետափով չեն հասնի: Մի օր՝ Կա-
զանում, մյուս օրը՝ Սամարայում, երրորդ օրը՝ Սարա-
տովում. ապրիլ սրտիդ ուզածի պես, անկարելի բան
մեզ համար չի լինի:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իսկ եթե ծանոթների հանդիպեցիր:

ՊՅՈՏՐ — Թե որ հիմա մի աչքս կկոցեմ, իսկական շիլ եմ.

չե՛ն ճանաչի: Էդպես հետո մի երեք օր ման կգամ: Պատ-
մեմ, քեզ, թե մի անգամ հետս ինչ պատահեց: Մի ան-
գամ հայրս գործով Նիժնի ուղարկեց, ապսպրեց շուշա-
նամ: Իսկ Նիժնիում ծանոթների հանդիպեցի, համոզ-
եցին կիսկովո գնալ: Ի՞նչ անեմ: Տանը որ իմացան՝
վա՛յ ինձ: Ուրիշի կապա հազա, թուշս կապեցի, գնում
եմ: Շոգենավում մեկ էլ տեսնեմ՝ հորս ծանոթը: Քեզ
ասեմ, չե՛մ փախչում նրանից, համարձակ քայլում եմ,

իսկ նա մի գլուխ ինձ է նայում: Ահա, տեսնեմ, մոտե-
նում է: «Դուք,— ասում է,— որտեղի՞ց եք գալիս»: «Միշկինից»,— ասում եմ: Իսկ էդտեղ ես կյանքումս չեմ
եղել: «Ձեր դեմքը,— ասում է,— ոնց որ ծանոթ է»: «Ջարմանալու բան չկա»,— ասում եմ: Ասում եմ ու մի
կողմ քաշվում: Նա նորից է մոտ-մոտ անում, երրորդ
անգամ փորփրում է: Արյունը գլուխս է տալիս: «Ինձ
էլ ձեր դեմքն է ծանոթ»,— ասում եմ:— Հո միասին Կա-
զանի բանտում չե՛նք նստել»: Ասում եմ բոլորի աչքի

առաջ: Չգիտեր, ոնց պոկ գար ինձնից. կարծես հրաքանով
թրխկացրած լինեի: Հո հանդիպում չէր:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իսկ որ փողերը ծախսեցինք-վերջացրինք, հե-
տո ի՞նչ պիտի անենք:

ՊՅՈՏՐ — Հենց էդ է, որ դեռ չեմ մտածել: Կամ վերադառ-
նալ ու մեղա գալ, կամ մի թեք դարափ ընտրել, որ
խոր լինի ու ձագարի պես պտույտ գա, և կա՛ցնի պես,
ինչպես կա՛ցիններն են լողում, Դեռ մտածել է պետք...

ԱԿՍՅՈՒՇԱ — Չէ՛, Պյոտր, դու ավելի լավ է առաջինը փոր-
ծիր:

ՊՅՈՏՐ — Չանձրացնե՛մ, ուրեմն:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո՛: Դե, թե որ դա էլ... կմտածենք: Դու վա-
ղը մի քիչ ուշ արի պարտեզ, մերոնք շուտ են քնում:

ՊՅՈՏՐ — Կա՛վ:

Վազելով գալիս է Տերյոնկան:

Ի՞նչ:

ՏԵՐՅՈՆԿԱ — Հայրի՛կդ: (Իսկույն փախչում է):

ՊՅՈՏՐ — (Փութով): Ուրեմն վե՛րջ: Փախա՛նք: Մնաս բարով:

Համբուրվում են ու բաժանվում:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ր Ո Ղ

Այ կոզմում խորից երևում է նեշաստիվցեր: Մտտ երե-
տանհից տարեկան է, բայց դեմով շատ ավելի մեծ է
երևում, խոշոր քեղերով քիստե տղամարդ է: Կտրուկ,
խոր ու շարժուն դիմագծերի հետեերն են անհանգիստ ե
անգուստ կյանքի: Հագին պարուսիներ երկար վերաբալ է,
գլխին՝ գորշ, շատ հին լայնեզր շյապա: Ռուսական եր-
կարանիտ մեծ կոշիկներով է. ձեռքին հաստ, ուստոտ փայտ,
մեջքին փակվող պայուսակի նման համպրով կա: Նա,
բոտ երևայրին, հոգեած է, շուտ-շուտ կանգ է առնում,
շունչ փաշում, հոգեերի տակից մաշյլ հայացք նեպում
չուրջ: Այդ նույն ժամանակ մյուս կողմից երևում է
Սշաստիվցեր. նա փոստունն անց է, դեմին ասես կար-
մբով ներկած, գլխի մտղերը նման են մաշված ժոքրու,
քեղերն ու սրածայր փոքրիկ մորուր ցանցառ են, ջեկ-

մոխրագույն, շարժուն աչկերը միաժամանակ և՛ ծագրոց են, և՛ երկշոտ: Երկնագույն փողկապով է, կարճ պիջակով, կարճ ու ձիգ անգրավարտիճով, գունավոր կիսաեռփայլ ափսեով, գլխին մանկական հովհարով զլիարկ: Այդ ամենը շատ հին են ու մաշված: Ուսին, փայտից կախված է լուստորին շատ բեթև վեռարկու և ծաղկավար կառուցված փարաքած մի կապոց: Հագնած է, ծանր շունչ է փշուր, հայում շուրջը չզիտես բախձառ, բե ուրախ մայրուով: Մտնե՞նում են:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Մառյլ): Արկա՛շկա:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ե՛ս եմ, Գեհնադի Դեմյանիչ: Եղած-չեղածս այս է:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Որտեղեց և ուր:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Վոլոգդայից՝ Կերչ, Գեհնադի Դեմյանիչ: Իսկ դո՛ւք:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Կերչից Վոլոգդա: Ուտը՞ով ես գալիս:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Սեփական ոտքերով, Գեհնադի Դեմյանիչ: (Կիսաճանոյական, կիսաճաղրական տոնով): Իսկ դո՛ւք, Գեհնադի Դեմյանիչ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Թավ բասով) Կառեթո՛ւմ: (Տափացած):

Մի՛թե շես տեսնում: Ինչո՞ւ ես հարցնում: Ավանա՛կ:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Երկշոտ): Չէ, ես հենց էնպես...

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Նստե՛նք, Արկադի:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Բայց որտե՞ղ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Յույց տալով կոճը): Ես՝ այստեղ, իսկ դու՝ որտեղ ուզում ես: (Նստում է, հանում ճամպրուկը և դնում կողքին):

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Այդ ի՞նչ պայտասակ է:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Հրաշալի բան է: Ինքս եմ կարել, եղբայր, ճանապարհի համար: Թեթև է ու տարողունակ:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Նստում է կոճի մոտ, գետնին): Լավ է, եթե մեզը դնելու բան ունես: Ի՞նչ եք դրել մեզը:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մի երկու շոր, եղբայր, լավը, Պոլտավայում մի հրեա է կարել: Այն ժամանակ Իլինսկում¹,

¹ Իլինսկ — Ամենամյա մարդաշատ տոնավաճառ Պոլտավայում, որ սկսվում է հուլիսին, Եսայի մարգարեի տոնակատարության օրը, և ձգվում մինչև ամսվա վերջը:

բենեֆիսից հետո, շատ շոր կարել տվի: Մալովի գլխարկ է, եղբայր, երկու կեղծամ, մի լավ աթրճանակ էլ կա, Պյատիգորսկում թղթախաղով մի շերքեղից տարա: Փականքը փշացել է, մի անգամ, որ ոտս Տուլա ընկավ, կպատվիրեմ սարքին: Ափսոս ֆրակ չունեմ, ունեի, Քիշնևում Համլետի զգեստի հետ փոխեցի:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Բայց ինչնե՞րի՞դ է պետք ֆրակը:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ինչպես տեսնում եմ, Արկաշա, դեռ շատ ես հիմար: Դե, ասենք, Կոստրոմա հասա, Յարոսլավլ, Վոլոգդա, Տվեր, ընդունվեցի թատերախումբ, չպե՞տք է նահանգապետին, ոստիկանապետին ներկայանամ, քաղաքում այցելու թյուններ անեմ: Կոմիկներն այցելու թյուններ չեն անում, որովհետև նրանք խեղկատուկներ են, իսկ ողբերգու դերասանները մարդիկ են, եղբայր: Իսկ քո կապոցի մեջ ի՞նչ կա:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Գրադարա՛ն:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մե՞ծ է:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մի երեսուն պիես և նոտաներ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Բասով): Դրամաներ կա՞ն:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Երկու հատ միայն, մնացածը ողբերգուներ են:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ինչի՞ ես այդ աղբը հետդ ման տալիս:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Փող արժե: Բուտաֆորական մանր-մանր բաներ կան, շքանշաններ...

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Եվ այդ բուրբը թոցրե՛լ ես...

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Իսկի մեղք էլ չեմ համարում, ոտճիկն ուշացնում են:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Իսկ շորե՞րդ որտեղ են:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Եղածն էս է, վաղուցվանից ուրիշը չունեմ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Է, իսկ ձե՞՞ն ինչ ես անելու:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ես, Գեհնադի Դեմյանիչ, մաշել-վերջացրել եմ: Հեռավոր ճամփորդության ժամանակ, ճիշտ է, դժվար է. ով՞ տեղ, տեղորո՞ն՝ իր խելքով: Արխանգելսկ տանելիս մեծ գորգի մեջ փաթաթեցին: Կայարանում գորգը բաց արին, իսկ կառք նստելիս նորից փաթաթեցին:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Տա՞ք էր:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ոչի՛նչ, տե՛ղ հասանք: Իսկ ցուրաք երեսուն

աստիճանից շատ էր: Չմեռային ճամփա Դվինայով,
ափին մոտ էին գնում: քամին հյուսիսից էր, հանդիպա-
կաց: Ասում եք Վոլոգդա՞ եք գնում: Բայց հիմա այնտեղ
թատերախումբ էլ չկա:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Իսկ դու՞ Կե՞րչ: Կերչում նույնպես, եղ-
բայր, թատերախումբ չկա:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ի՞նչ արած, Գեննադի Դեմյանիչ, կգնամ
Ստավրոպոլ կամ էլ Թիֆլիս, այնտեղից արդեն էնքան
էլ հեռու չէ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մենք քեզ հետ վերջին անգամ Կրեմենչու-
գո՞ւմ տեսնվեցինք:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Կրեմենչուգո՞ւմ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Դու այն ժամանակ սիրեկաններ էիր
խաղում: Իսկ դրանից հետո, եղբայր, ի՞նչ գործի էիր:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Հետո կոմիկոսիայն անցա: Կոմիկաներն էլ
չափից ավելի շատացել են: Կրթություն ստացածներն
առաջ են ընկնում: աստիճանավորներ, սպաներ, համալ-
սարանականներ՝ բոլորը բեմ են խցկվում: Ապրել չի լի-
նում: Կոմիկոսիայնից հուշարարության անցա: Իսկ դա
գիտե՞ք ինչ ծանր բան է վե՛հ հոգու տեր մարդու համար,
Գեննադի Դեմյանիչ: Հուշարարություն...:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Հոգոց հանելով): Բոլորիս վերջն էլ դա
է, եղբայր Արկադի:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մի ճանապարհ ունեիր, Գեննադի Դեմյա-
նիչ, այն էլ են փակում:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Նրանից է, որ հեշտ է. մեծ բան չէ խեղ-
կատակություն անելը: Իսկ փորձիր ողբերգակ լինել
Ա՛յդ պատճառով էլ մարդ չկա:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Բայց այդ կրթվածների խաղը բանի՞ նման
չէ, Գեննադի Դեմյանիչ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Չէ, ի՞նչ խաղ: Զրիկություն է:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ժամանակ են սպանում:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ժամանակ են պանդում, եղբայր: Իսկ ինչ-
պե՞ս են բեմադրում, թեկուզ հենց մայրաքաղաքներում:
Ինքս եմ տեսել. սիրեկանը՝ տենոր, ռեզոնյորը՝ տենոր,
կոմիկն էլ՝ տենոր (բառով), պիեսում հենց հիմքն է

պակասում: Գնացի տեսնի էլ, հեռացա՞: Էդ ինչո՞ւ ես
այժամորուք պահում:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Իսկ ի՞նչ է որ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Վա՛տ է, Ռուս մարդ ես, թե՞ ոչ: Ի՞նչ
զգվելի բան է: Հանդուրժել չեմ կարող: Լրիվ սափրիք
կամ էլ երկար մորուք թող:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Փորձեցի մորուք թողնել, բան դուրս չեկավ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ինչպե՞ս թե: Ի՞նչու ես ստում:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մազերի փոխարեն փետուրներ են աճում,
Գեննադի Դեմյանիչ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Հը՛մ: Փետուրնե՛ր: Փչի՛ր, փչի՛ր: Ասում
եմ քեզ, սափրի՛ր: Թե չէ, որ շղայնացած ժամանակ ձեռ-
քըս ընկար... բո այդ այժամորուքով... վատ կլինի:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Երկչոտ): Կսափրե՛մ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Իսկ ես, եղբայր Արկաշա, այնտեղ, հա-
րավում, լրիվ քայքայվիցի:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Այդ ինչո՞ւ, Գեննադի Դեմյանիչ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Բնավորությանս ձեռքից, եղբայրս: Դու
ինձ գիտես, չէ՞ որ ես առյուծ եմ: Ստորություն չեմ սի-
րում, ահա՛ իմ դժբախտությունը: Բոլոր անտրեպրեն-
յորների հետ կովել եմ: Է՛լ արհամարհանք, եղբայր, է՛լ
ինտրիգներ. արվեստը չեն գնահատում, բոլորը կոպեկների
ետևից են ընկել: Ուզում եմ ձեզ մոտ, հյուսիսում բախտ
փորձել:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Բայց ախր մեզ մոտ էլ նույնն է, մեզ մոտ
էլ չեք հարմարվի, Գեննադի Դեմյանիչ: Ես էլ, ահա, չհար-
մարվեցի:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Դու էլ... Համեմատեցի՛ր, էլի՛, քեզ ինձ
հետ:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Վիրավորվելով): Դեռ իմ բնավորությունը
ձերից լավ է, ես ավելի հնազանդ եմ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Սպառնալի): Ի-ի՞նչ:

ՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Ետ քաշվելով): Հապա ինչ, Գեննադի Դեմ-
յանիչ: Ես հնազանդ եմ, հնազանդ... ես ոչ մեկին
խփած չկամ:

ՆՆՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ուրեմն քեզ են խփել, ում մտքով որ
անցել է: Հա՛-հա՛-հա՛: Եվ միշտ էլ այդպես է լինում:

կան մարդիկ, որոնք խփում են, և կան այնպիսիները, որոնց խփում են: Ո՞րն է լավ, չգիտեմ. ամեն մարդ իր հաշակն ունի: Եվ դու համարձակվում ես...

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — (Ծառ Բաշխելով): Ծառան չեմ ասում, դուք

իներևորդ ասացիր, որ չհարմարվեցիր:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Չհարմարվեցի՞ր... Իսկ քեզ այդ ո՞ր քաղաքից նահանգապետը վճռեց: Դե՛, ասա՛:

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Ասելու Ի՞նչ կա: Շատ էլ թե դուրս են տալիս: Վճռեց... Իսկ ինչի՞ համար վճռեց, ինչպե՞ս վճռեց:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Ինչպե՞ս վճռեց, Դա էլ եմ լսել, դա էլ է հայտնի, եղբայր: Երեք անգամ քեզ դուրս են հանել քաղաքից. մի ուղեկալից վճռեց են, մյուսից ես ներս մտել: Ի վերջո, նահանգապետի համբերությունը հատնել է. գնդակահարե՞ք դրան, ասել է, գլխիս փորձանք է բերելու, թե որ ետ վերադարձա՞վ:

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Զէ՛ մի՛ գնդակահարեք: Մի՞ թե կարելի է գնդակահարել:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Գնդակահարելը չգնդակահարեցիք, բայց կազակները շորս վերոտ մտրակով բշեցին:

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Ո՞չ մի շորս էլ չէ:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Դե՛, բաժակա՛ն է, Արկադի: Մի՛ ջղայնացրու ինձ, եղբայր: (Հրամայական): Շարժվի՛ր: (Վեր է կենում):

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Շարժվում եմ, Գեննադի Դեմյանիչ: (Վեր է կենում):

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Այո՛, եղբայր Արկադի, կտրվեցի ևս թատրոնից: Իսկ հիմա արդեն ափսոսում եմ: Ինչպե՞ս էի խաղում: Աստված իմ, ինչպե՞ս էի խաղում:

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — (Երկչոտ): Շա՞տ լավ:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Այնքան լավ, որ... Բայց քեզ հետ ի՞նչ խոսեմ: Դու ի՞նչ ես հասկանում, Վերջին անգամ կերեդ-լանեի՞րս վերադարձու՞մ էի խաղում, ինքը նիկոլայ նրիչ-

¹ Վերջորոտ — կենտրոնական հերոսը համանուն, շափածո դրամայի, որ թարգմանվել էր գերմաներենից և մեծ հաջողություն ունեցող անցյալ դարի կենտրոն:

ասնֆիչ, Ռիբակովն՝ էր նայում: Վերջացրի ևս վերջին տեսարանը, անցա կուլիսների ետև, տեսնեմ նիկոլայ Ռիբակովն այնտեղ է: Չեպքն ահա այսպես նա դրեց ուսիս... (Քափով ձեռքն իջեցնում է Սչաստլիվցևի ուսին):

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — (Հարվածից կույզ գալով): Օ՛յ, Գեննա՛դի Դեմյանիչ, հարգելի՛ս, գթացե՛ք: Մի՛ սպանեք: Աստված վկա, վախենում եմ:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Ոչինչ, եղբայր, ոչինչ, քեզ ցույց եմ տալիս միայն, թեթևակի: (Նորից է ձեռքը դնում ուսին):

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — Աստված վկա, վախենում եմ: Քողո՞ք: Ախր մի անգամ ինձ այդպես մահվան դուռը հասցրին:

ՆԵՍԶԱՍՏԻԿՅԵՎ — (Հավաքում է օձիքն ու պահում): Ո՞վ, ո՞վ:

ՍԶԱՍՏԻԿՅԵՎ — (Կծկվելով) Բիշևկինը²: Նա կյապունով էր խաղում, ես՝ Ֆիդլեր³: Դեռևս փորձերի ժամանակ նա շարունակ կրկնում էր. «Ծս,— ասում էր,— Արկադի, ահա այսպես քեզ պատուհանից դուրս կնետեմ. այս ձեռքով օձիքիցդ կբարձրացնեմ, իսկ սրանով կպահեմ ու կիջեցնեմ: Կարատիգինը⁴,— ասում էր,— այդպես էր անում»: Ես նրան աղաչեցի-պազատեցի, ծնկի եկա: «Քեռի ջան,— ասում եմ,— ինձ մի սպանեք»: «Մի՛ վախեցիր, Արկադի, — ասում էր,— մի՛ վախեցիր»: Ներկայացումն սկսվեց, մոտենում է մեր տեսարանը: Հանդիսատեսը նրան ընդունում է. տեսնեմ շրթունքները դողում են, այտերը դողում են, աչքերն արցունքով են լցվել: «Այս հիմարի համար,— ասում է,— լուսամուտի տակ որևէ փափուկ բան գցեք, որ իսկապես չսպանեմ»: Դե, տեսնում եմ,

¹ Նիկոլայ Խրիստեֆիչ Ռիբակով — Նշանավոր զավառական կատակերգու գերասան (1811—1876), որ շատ բանով ծառայել է որպես Նեսչաստլիվցևի նախատիպ:

² Իրոք, Կոստրոմալյով, կյապունովի դերը խաղացող ողբերգու գերասան Վերյովկինը 1854 թ. քիչ մնաց խեղանդամեր Ֆիդլերի դերակատարին:

³ Կյապունով և Ֆիդլեր — Ն. Կուկոլնիկի «Իշխան Միխայիլը Վասիլևիչ Սկոպին-Շույսկի» դրամայի գործող անձինք:

⁴ Վ. Ա. Կարատիգին (1802—1853) — Նշանավոր պետերբուրգյան ողբերգու գերասան, Պրոկոպի կյապունովի առաջին գերակատարը:

վերջս եկել է: Թե ինչ էի մտածում, չեմ էլ հիշում: Մտեմնում է նա ինձ, մարդկային կերպարանքը կորցրած, իսկական գաղան. ձախ ձեռքով բռնեց օձիբս, բարձրացրեց օդ, իսկ աջով այնպես պտտեցրեց ու ծոծրակիս հասցրեց... Աչքերիս առաջ սևացան, Գեներալի Դեմյանիչ, մի երեք սաժեն էլ դենը թռա, կանացի հանդերձարանի դուռը տեղահան եղավ: Որբերգուների գործը լավ է: Նրան երեսուն անգամ այդ տեսարանի համար բեմ կանչեցին, իսկ ես ամբողջ կյանքումս խեղճած կամայի, աստված մի քիչ ողորմաց... Բա՛ց թողեք, Գեներալի Դեմյանիչ:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — (Օձիբը բաց չի բողոմ): Տպավորիչ է Պետր է հիշել: (Մտածելով): Մի սպասի՛ր: Ասում ես ինչպե՞ս: Ուզում եմ փորձել:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — (Մեկի գալով): Տե՛ր իմ, Գեներալի Դեմյանիչ...

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — (Բաց բողոմելով նրան): Դե լավ, պետք չէ, հեռացի՛ր: Մի ուրիշ անգամ... Այսպես ուրեմն, ձեռքը նա դրեց ուսիս: «Դու, ասում է... և ես, ասում է... կմեռնենք, ասում է»: (Մածկում է դեմքն ու լաց լինում: Արցունքները սրբելով): Լա՛վ է: (Բոլորովին անտարբեր): Մխախտտ ունե՞ս:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ի՞նչ ծխախոտ, աստված սիրեք: Մի՛ փշուր էլ չկա:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Այդ ինչպե՞ս ես առանց ծխախոտի պաշարի ճանապարհ ընկել, հիմա՛ր:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Բայց ախր դուք էլ չունեք:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — «Դուք էլ չունե՞ք»: Համարձակվում ես ի՞նձ ասել: Այնպիսի ծխախոտ ունեի, որ կյանքումդ չես տեսել. Օղեսայի, առաջին տեսակի, Կրիոնի, բայց արդեն վերջացել է:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Իմն էլ է վերջացել:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Իսկ փող գրպանումդ շա՞տ կա:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Մնվածս օրից շատ փող չեմ ունեցել, իսկ հիմա ոչ մի կոպեկ չունեմ:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Իսկ ինչպե՞ս ես առանց փողի ճանապարհ ընկել: Առանց ծխախոտի ու առանց փողի: Խե՛նթ:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ավելի լավ, չեն կողոպտի: Եվ հետո մեկ չէ՛ առանց փողի տա՞նն ես նստում, թե՞ ճամփա ես ընկնում:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Դե, մինչև վորոնեժ, ասենք, ուխտավորների հետ գնացիր: Քրիստոսի անունը տվիր ու փող լցրիր: Իսկ հետո՞ ինչով ես սնվելու: Դոնի կողակների հողո՞վ: Այնտեղ ծխողներին ոչ թե ձրի, նույնիսկ փողով չեն կերակրի: Քրիստոնյայի կերպարանք չկա վրադ, իսկ դու ուզում ես ստանիցաներով անցնել: Կողակուհիները քեզ սատանայի տեղ կդնեն, երեխաներին ցույց կտան ու կվախեցնեն:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Հո ինձ պարտք չե՞ք ուզում տալ, Գեներալի Դեմյանիչ: Ճիշտը պետք է ասել, հիմա ողբերգուների մեջ է միայն հոգի մնացել: Ա՛յ, հանգուցյալ Կոռնելին, երբեք չէր մերժի ընկերոջը, ունեցածը կկիսեր: Բոլոր ողբերգուները նրանից օրինակ պետք է վերցնեն:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Գիտես ինչ կա, չհամարձակվես դա ինձ ասել: Ես էլ լայն հոգի ունեմ, միայն թե քեզ փող չեմ տա, երևի ինձ էլ չբավականացնի: Իսկ խղճալը խղճում եմ քեզ, եղբայր Արկաշկա: Մոտակայքում ծանոթ-բարեկամ չունե՞ս:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Չէ: Բայց եթե լինեին էլ, մեկ է՛ փող չէին տա:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Փողի մասին չէ խոսքը: Մի լավ կհանգրստանայիր ճանապարհից, տնական կարկանդակ, հասկանում ես, մրգողի կփորձեիր: Այդ ինչպե՞ս է, եղբայրս, որ ոչ հարազատ ունես, ոչ ծանոթ: Այդ ի՞նչ տեսակ մարդ ես:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Բայց ախր դուք էլ չունեք:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ես ունեմ, ես ուզում եմ շրջանցել, ես շատ եմ հպարտ: Բայց, ինչպես երևում է, պետք է այցելեմ:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ախր հարազատների մեջ էլ այնքան երջանիկ չենք զգում մեզ, Գեներալի Դեմյանիչ: Մենք ազատ ժողովուրդ ենք, թափառական, մեզ համար գինետունն ամեն ինչից թանկ է: Ես հարազատներիս հետ ապրել եմ, գիտե՛մ: Ես մի քեռի ունեմ, խանութպան է գավա-

ուական քաղաքում, էստեղից մի տասնհինգ վերստ հե-
ռու: Հյուր էք նրա տանը, թե որ շփախչեի, ուրեմն...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ուրեմն ի՞նչ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Լավ չէր: Հիմա պատմեմ ձեզ: Մի երեք ամիս
անգործ թրև եկա, ձանձրացա, մտածեցի հորեղբորս աշ-
ցելության գնամ: Գնացի: Երկար ժամանակ տուն չէին
թողնում, դռնից տարբեր մարդիկ երկար ժամանակ
ուսումնասիրում էին ինձ: Վերջապես ինքը դուրս եկավ:
«Դո՛ւ ես,— ասում է,— այդ ինչն՞ է ես եկելը»: «Ձեզ տես-
նելու եմ եկել,— ասում եմ,— հորեղբայր»: «Ուրեմն, դու
քո դերասանությունը թողե՛լ ես»: «Թողել եմ»,— ասում
եմ: «Դե ի՞նչ,— ասում է,— այս խուցը քեզ, ապրիբ,
տանս, միայն թե նախ բաղնիք գնա»: Սկսեցի նրանց
տանն ապրել: Չորսին վեր են կենում, տասին ճաշում,
ութին պառկում են քնելու: Ճաշին ու ընթրիքին օղի ինչ-
քան ուզում ես խմիր, ճաշից հետո պիտի քնես: Եվ տա-
նը բոլորը լուռ եմ, Գեննադի Դեմյանիչ, ասես մեռած
լինեն: Հորեղբայրս առավոտից խանութ է գնում, իսկ
կինն ամբողջ օրը թեյ է խմում ու հոգոց հանում: Երե-
սիս է նայում, ախ քաշում ու ասում. «Անբախտ մարդ ես
դու, կորստյան ես մատնելու քո հոգին»: Մեր խոսակցու-
թյունն այս է, որ կա. «Ժամանակը չէ՞, հոգեատ, որ մի
բան դնես բերանդ ու գնաս քնելու»:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դրանից լավ ի՞նչ էիր ուզում:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դա, ճիշտ է, ուժերս տեղը եկան ու սկսել
էի կազդուրվել, մեկ էլ հանկարծ մի օր ճաշի ժամանակ
մի միտք ծագեց գլխումս՝ չկախվե՞մ, պրծնեմ: Գիտե՞ք,
թափ տվի գլուխս, որ գլխիցս դուրս թռչի այդ միտքը,
բայց քիչ հետո տեսնեմ էլի հանգիստ չի ապրես, երե-
կոյան՝ էլի: Չէ՛, տեսա բանս բուրդ է, հենց գիշերով
էլ լուսամուտից փախա: Ահա թե ինչ վիճակի են մեզ-
պեսները հարազատի տանը:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Եղբայրս, ես ինքս էլ չէի գնա, բայց որ
քեզ ճիշտն ասեմ, հոգնել եմ, մինչև Ռիբինսկ մի շա-
բաթվա ճանապարհ է, իսկ թե գործ կճարե՞ս, հայտնի
չէ: Ա՛յ թե մի ջահել, գեղեցիկ դրամատիկ դերասանուհի
գտնեիր...

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Էլ դես-դեն ընկնելու կարիք էլ չէր լինի,
մենք ինքներս... մյուսներին ջոկելը հեշտ է, մի այնպիսի
խումբ կկազմեիր... ես էլ գանձապահ...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Էլ ի՞նչ մնաց, որ. մնում է միայն դերա-
սանուհի գտնես:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Է՛հ, հիմա դերասանուհի ոչ մի տեղ էլ չկա:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Բայց դու հասկանո՞ւմ ես, թե ինչ բան
է դրամատիկ դերասանուհի: Գիտե՞ս Արկաշկա թե, ինչ
դերասանուհի է ինձ պետք: Հոգու կտոր է ինձ պետք,
կյա՛նք, կրա՛կ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Է՛հ, կրակ, Գեննադի Դեմյանիչ, ցերեկը
լապտերով էլ շեռ գտնի:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չհամարձակվես սրամտել, երբ լուրջ եմ
խոսում: Դուք, վոդկիլային դերասաններդ ծիծաղի հա-
մար մի հատ եք, իսկ զգացմունք մի կաթիլ չունեք: Դե-
րասանուհին նա է, որ սիրո համար իրեն ջուրն է նետում:
Աչքով շտեսնեմ՝ շեմ հավատա: Ջրից հանելուց հետո նոր
կհավատամ: Դե, երևի գնալու ժամանակն է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛ւր:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Քո գործը չէ: Տասնհինգ տարի է, եղ-
բայր, շեմ եղել, ախր, կարելի է ասել՝ այստեղ եմ ծնվել:
Մանկության տարիներ, անմեղ խաղե՛ր, աղավախո՞ւն.
գիտես, այդ բոլորը հիշողությունիցս դուրս չեն եկել: (Նա-
նարհում է գլուխը): Դե, ինչո՞ւ չպիտի ինձ ընդունի: Նա
արդեն պառավ է, ամենականացի հաշիվներով էլ հիսունը
վաղուց անցել է: Ես նրան երեք շեմ մոռացել, հաճախ,
եղբայր, նվերներ եմ ուղարկել: Կարասուբազարից թուր-
քական կարճճիտ կոշիկներ եմ ուղարկել, Իրկուտսկից՝
սառեցրած նեխածուկ, Քիֆլիսից՝ փիրուզ, Իրբիտից՝
աղյուսաթեյ, Նովոչերկասկից՝ ձկան սուկի, Եկատերին-
բուրգից՝ մալաքիտե համբիչ, ախր ո՞ր մեկն ասեմ:
Իհարկե, լավ կլինի կառեթով մոտենայիք դուանը, աղա-
խինները դիմավորեին... Բայց ի՞նչ արած, ստիպված
ենք ոտքով, ցնցոտի հագած: (Սրբում է արցունքներ):

Գնա՛նք, քեզ համար էլ անկյուն կգտնվի:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ախր ո՛ւր, Գեննադի Դեմյանիչ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛ւր: (Մատնացույց է տնում սյունք):

Կարգա՛:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Կարդում է): «Դեպի կալվածատիրուհի տի-
կին Գուրմիժսկայայի «Պենկի» դաստակերտ»:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Այդտեղ է տանում ինձ իմ թշվառ ճակա-
տագիրը: Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր:

Դանդաղ գնում են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ:

ԲՈՒԱՆՈՎ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ:

ՊՅՈՏՐ:

ԿԱՐՊ:

Հի՛ն, խի՛ս պարտե՛ք. ճանաչատեսներից դեպի ձախ տերու-
հակա՛ն-տան ծաղկազարդ ցածր տեղատ, տեղատից պար-
տե՛ք իջե՛ղ երե՛ք կամ շո՛ք աստիճան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Գուրմիժսկայան տեղատում է, Բուլանովը՝ պարտեզում:

ԲՈՒԱՆՈՎ — (Տեսնելով Գուրմիժսկայային, օգնում է նրան
իջնելու տեղատից և համբուրում է ձեռքը): Բարի լույս,
Ռախսա Պավլովնա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բարև, բարեկամս:

ԲՈՒԱՆՈՎ — (Հոգատարությամբ): Ինչպե՛ս է ձեր առողջու-
թյունը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շնորհակալ եմ, սիրելիս: Առողջ եմ և,

չնայած գիշերը վատ եմ քնել, բայց մի տեսակ առանձ-
նապես թարմ եմ զգում ինձ: Ինչ-որ հուզումների մեջ
էի և այնպիսի՝ անախորժ երազներ տեսա: Դու հավա-
տո՞ւմ ես երազներին:

ԲՈՒԱՆՈՎ — Ինչպե՛ս չհավատամ: Գուցե թե կարգին ուսում
առնեի՝ չհավատայի: (Չարությամբ ծպտալով): Ախր ես
ուսումս չավարտեցի, բայց գոզգված ման շեմ դալիս,
ամեն օր լվացվում էլ եմ, երազներին էլ եմ հավատում:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Երազներ են լինում, որ ամբողջ օրը շեմ
կարողանում գլխիցդ հանել:

ԲՈՒԱՆՈՎ — Իսկ ի՞նչ եք բարեհաճել տեսնել, Ռախսա Պավ-
լովնա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Է՛հ, ասենք, բոլորը քեզ շեմ պատմի:

ԲՈՒԱՆՈՎ — Ներեցե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ներելու բան էլ չկա: Ուրիշ երազ քեզ
կպատմեմ, բայց սա՛՛ ոչ:

ԲՈՒԱՆՈՎ — Իսկ ինչո՞ւ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Որովհետև եբրեմն երազ պատմելը ճիշտ
նույնն է, թե թաքուն մտքերդ պատմես կամ էլ ցանկու-
թյուններդ: Իսկ շատ դեպքերում անհարմար է. ես կի՛ն
եմ, դու՛ տղամարդ:

ԲՈՒԱՆՈՎ — Հետո՞ ինչ, որ տղամարդ եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դա արդեն շափից դուրս միամտություն
է: Դե, ասենք, քե՛զ եմ տեսել:

ԲՈՒԱՆՈՎ — Ի՞նձ: Շատ հաճելի է ինձ համար:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Որ ի՞նչ:

ԲՈՒԱՆՈՎ — Ուրեմն անկողին մտնելուց առաջ իմ մասի՛ն
եք մտածել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասացեք խնդրեմ: Եվ դու զրանից շա՛տ ես
զոհ:

ԲՈՒԱՆՈՎ — Ախր ինչպե՛ս զոհ չլինեմ: Ես միշտ վախենում
եմ, թե որևէ բանի համար կջղայնանաք և ինձ կվճռեք
մայրիկիս մոտ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, ի՞նչ ծիծաղելի է: Ինչո՞ւ պիտի
ջղայնանամ քեզ վրա: Խե՛ղճ մարդ, դու վախենո՞ւմ ես
ինձանից:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ինչպե՞ս չվարենամ, ասում են՝ դուք շատ խիստ եք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լավ է, որ այդպես են ասում: Բայց քեզ հետ, բարեկամս, խիստ չեմ լինի. ամենից վատն այն կլինի քեզ համար, եթե վարենես ինձանից:

ԲՈՒՂԱՆՈՎ — Լավ... Այ, եթե ես իմանայի...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ձեզ ինչպես հաճելի լինե՞մ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Կուսհի՛ր:

ԲՈՒՂԱՆՈՎ — Այդքան հե՞շտ է կուսհիլը: Իրանից խելքս չի հասնում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ ինչի՞ց է հասնում:

ԲՈՒՂԱՆՈՎ — Այն ամենից, ինչ հրամայում են. մեկ էլ կալվածք ղեկավարել, գյուղացիներին: Եթե ճորտեր լինեիր, կնձնից լավ կատավարիչ չէիր գտնի. ոչինչ, որ շահել եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, այդ երա՛զը. Միշտ մտքիցս դուրս չի գալիս:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ինչո՞ւ է դա ձեզ աբբան անհանդուրժանում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բավականին դժվար է բացատրել, բայց քեզ հետ ես կարող եմ անկեղծ խոսել. տեսնում եմ, որ ինձ նվիրված մարդ ես: Ուրեմն, ես մի ազգական ունեմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ծն գիտեմ, դուք նրան շատ եք սիրում և հաճախ եք խոսում նրա մասին:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բարեկամս, երբեմն մի բան են ասում, իսկ մտածում բոլորովին այլ բան: Ինչո՞ւ պիտի ամեն մարդու բացատրեմ զգացմունքներս: Ծն, որպես ազգական, պետք է սիրեմ նրան, դե, ես էլ ասում եմ, որ սիրում եմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Իսկ իրականում չե՞ք սիրում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Յ՛լ թե չեմ սիրում, այլ... ինչպես քեզ ասեմ... նա հիմա ավելորդ է: Ինձ համար հանգիստ մտածում եմ, թե ինչպես տնօրինեմ ունեցվածքս, մեկ էջ հանկարծ նա հայտնվում է: Ինչպե՞ս մերժեմ նրան: Հարկավոր է նրան էլ որևէ բաժին հասցնել, և ես ստիպված եմ վերցնել նրանից, ում սիրում եմ...

ԲՈՒՂԱՆՈՎ — Եուր էլ մի՛ տվեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Չի՛ կարելի, ախր: Ինչո՞ւ պիտի նրան

մերժեմ, եթե հարգալից է ու իրեն լավ է պահում: Ես այստեղ ինձ այնպես եմ դրել, որ ազգականիս մերժել չեմ կարող: Դե, եթե նա առանց միջոցների՞ եկավ: Հարկ կլինի նրան պահել. թերևս ուզենա իմ տանն ապրել: Հո նրան դուրս չե՞մ անելու:

ԲՈՒՂԱՆՈՎ — Հրամայի՛ք, ե՛ս դուրս կանեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Վախեցած): Ա՛խ, աստված հեռու տանի: Պահպանիր քեզ, պահպանիր: Ահա թե ինչ եմ երազումս տեսել. իբր նա եկել ու աչքերիս առաջ ասորճանակով սպանել էր քեզ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչ: է՛հ, դա դեռ մենք կտեսնենք: Ավելի լավ է, Ռաիսա Պավլովնա, դուք նրա մասին մի էլ մտածեք, թե չէ շարունակ երազում կտեսնեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մինչև հիմա նա շատ խելացի էր, տասընհինգ տարի այստեղ ու՛ք չի դրել: Կուզենայի, շատ կուզենայի, որ մի տասնհինգ տարի էլ այդպես անցներ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ուրեմն, Ռաիսա Պավլովնա, ավելի լավ է լրիվ մոռացեք նրան և մի խոսեք, մեկ էլ տեսաք, աստված շանի, կապեցիք գլխներդ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկապե՞ս, հանկարծ չկապե՞մ գլխիս:

Նեոս է մտնում Կարգը:

Տեսարան երկրորդ

Գարմիժոկայա, Բուլանով, Կարգ:

ԿԱՐՊ — Համեցե՛ք, տիրո՛ւհի, թեյ խմե՛լու, ինքնանոր պատրաստ է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնա՛նք, Յլիզսի՛ս:

ԿԱՐՊ — Տիրուհի՛, պարոնն այս գիշեր եկավ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Պարո՞նը: Ի՞նչ պարոն:

ԿԱՐՊ — Գեներալի Գեմյանիչը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Վախեցած): Մի՞թե: Լսո՞ւմ ես, Ալեքսիս (Կարգյին): Իսկ ո՞ւր է:

ԿԱՐՊ — Ծա նրան տաղավար ուղեկցեցի, այնտեղ էլ անկողին պատրաստեցի: Ասաց, որ քաղաքում է իջևանել, հյուրանոցում, բոլոր իրերն այնտեղ է թողել և ոտքով գրասանքի է ուղևորվել մեզ մոտ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ուրիշ ոչինչ չասաց:

ԿԱՐՊ — Ո՛չի՛նչ: Տրամադրությունը տեղը չէր:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչպե՞ս թե տեղը չէր:

ԿԱՐՊ — Մոռացության մեջ էր մի տեսակ, ճանապարհից է երևի: Թուղթ ու թանաք պահանջեց, երկար գնում-գալիս էր տաղավարում, շարունակ մտածում էր. նստեց սեղանի առաջ, մի գրություն գրեց ու հրամայեց հանձնել ձեզ: (Տալիս է գրությունը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այս ի՞նչ է: Ինչ-որ ոտանավոր: (Կարդում է):

Բախտ իմ դաժան,
Դաժան իմ բախտ,
Գերեզմանը մնաց միայն...

Որ ի՞նչ, Ալեքսիս: Չե՛մ հասկանում:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դուք որ չեք հասկանում, ես որտեղի՞ց հասկանամ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Կարպին): Նա քնա՞ծ է:

ԿԱՐՊ — Ո՛չ, տիրուհի՛: Վաղ վեր կացավ և գնաց, երևի լողանալու: Ծա նրան այսօր չեմ տեսել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, որ գա, խնդրիր հյուրասենյակ, թեյ խմելու:

ԿԱՐՊ — Լսո՛ւմ եմ: (Գնում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Թոքվելով ուսերը): Արի ու երազին մի հավատա: Գնա՛նք, Ալեքսի՛ս:

Գնում են:

Ներս են մտնում նեշաստիվցեք, շատ վայելուչ հագնված, գլխին օձ ծալովի գլխարկ, և Սշաստիվցեք առաջվա հագուստով:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է Ր Ր Ո Ր Դ

Նեշաստիվցե, Սշաստիվցե:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Դե, Արկադի, հորեղբորս կինը պատվական, խիստ կին է: Ծա չեմ ուզում, եղբայր, իմանա, որ դերասան եմ, այն էլ՝ գավառական: (Մատչ քափ է տալիս): Տես, բերանիցդ շթոցնես: Ծա՛ Գեներադի Գեմյանիչ Գուրմիժսկիս, պահեստի կապիտան եմ կամ էլ մայր, ինչպես սիրուդ ուզի: Մի խոսքով, ես պարոն եմ, իսկ դու իմ սպասավորը:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ինչպե՞ս թե սպասավորը:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Հենց այդպես՝ պարզապես սպասավոր: Հո քեզ հյուրասենյակ չե՛մ տանելու: Ինչպե՞ս եմ ներկայացնելու հորեղբորս կնոջը: Նա աստվածավախ կին է, տանը, եղբայր, խաղաղություն է ու պարկեշտություն, և հանկարծ՝ կերպարանքդ: Իսկ քո այդ մոռութով, եղբայր, իսկական սպասավոր ես:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Չեղա՛վ, արդեն, կներե՛ք: Դա դեռ հայտնի չէ:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ի՞նչը հայտնի չէ:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Մոռե՛ք հաշիվը:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Չէ, դու դրանում, եղբայր Արկադի, մի՛ կասկածիր:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ախր ինչպե՞ս:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — (Սպառնալի): Ասում եմ չէ՛ քեզ՝ հենց այդպե՛ս: Էլ ի՞նչ ես ուզում: Քեզ այստեղ լավ կկերակրեն, կծառայես միայն ի՛նձ:

ՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Ծա խիստ հպարտ եմ, Գեներադի Գեմյանիչ:

ՆԵՍՉԱՍՏԻԿՅԵՎ — Շատ պե՛տքս է, թե դու հպարտ ես: Չլափվես հետը, բայց ինքը՝ Մարտինովն՝ էր սպասավոր խաղում, իսկ դու ամաչում ես: Ի՛նչ հիմարն ես, եղբայր:

1 Մարտինով Աբխազը Նվտաֆեիչ (1816—1860)— Պետերբուրգյան Ալեքսանդրյան թատրոնի նշանավոր դերասան:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Բայց դա բեմում է եղել:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Դե դու էլ, եղբայր, պատկերացրու, որ բեմում ես:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Չէ, ես չեմ սուլում: Համա՛ թե բան եք մտածել, ինչպե՛ս չէ: Ավելի լավ է զնամ, ես էլ իմ արժանապատվությունն ունեմ:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Գիտեմ, որ, արժանապատվություն ունես, Իսկ անձնագիր ունե՛ս:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Ձե՛ր ինչ գործն է:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Ահա՛ թե ինչ փորձիր հեռանալ, կտեսնես: Հերիք է աչքով անեմ, և դու, եղբայր, էտապո՞վ, որպես թափառաշրջիկ կգնաս քո բնակավայրը: Ես հո գիտեմ, տասներկու տարի է առանց անձագրի ես: Անձնագրի փոխարեն գրպանումդ Կարսիկի նահանգական լրարերի հազվածն է, որտեղ տպված է, որ եկավ այսինչ դերասանը և խաղաց շատ վատ: Ահա ողջ ունեցած-չունեցածդ: Հը, ինչո՞ւ լռեցիր: Ա՛յ, այդպե՛ս: Իսկ դու արա ասածս, եղբայր, Մի՛ մտածիր, թե ով է խնդրողը: Դե, ընկերաբար, հասկանո՞ւմ ես, ընկերաբա՛ր:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Եթե ընկերաբար է, կարելի է:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Չմտածես, եզրայր, թե ես զգում եմ իմ կոշումից: Ախր անհարմար է, եզրայր, աջուկսի՛ տուն է, խաղաղություն, հնազանդություն: Իսկ մենք համարյա սատանա ենք, մի քիչ ենք լավ: Ինքդ էլ գիտես՝ խեղճ կատակը տերտերին ընկեր չէ: Միայն թե դու վեճից կամ էլ կավից, մեկ էլ սրիչի ունեցվածքից հետո մնա, Արկաշկա: Չնայած քեզ համար գժվար է լինելու, բայց աշխատիր, եզրայր, օրինավոր ապաստարի պես պահել: Ահա՛, նախ հանիր, եզրայր, գլխարկդ և մի կողմ քաշվիր, ինչ-որ մեկը գալիս է:

Մտնում է Կարպ:

Տ Ե Ս Բ Ա Ն Ը Ք Ր Ր Ր Գ

Անշատիվցե, Անատիվցե, Կարպ:

ԿԱՐՊ — Բա՛րե ձեզ, սիրելի պարոն: Ինչպե՛ս բարեհաճեցիք ընել:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Ոչի՛նչ, եղբայր, վատ չնշեցի:

ԿԱՐՊ — Այդ ինչո՞ւ եք, պարոն, այդպես ծերացել:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Կյանքն է, եղբայր...

ԿԱՐՊ — Հասկանում եմ, պարոն, ինչպե՛ս շհասկանամ: Չէ՛ որ ծառայությունը նույնպիս...

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Այո՛, եղբայր, այդ ծառայությունը...

ԿԱՐՊ — Մեկ էլ, պարոն, արշավները...

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — (Հոգոց հանելով): Էյ, արշավներ, արշավներ:

ԿԱՐՊ — Տեղից-տեղ, պարոն...

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Այո՛, եղբայր, տեղից-տեղ: Իսկ դո՞ւք ինչպես եք այստեղ ապրում:

ԿԱՐՊ — Մեր կյանքն ի՛նչ, պարոն: Անտառում ենք ապրում, շեղած աստծուն աղոթում: Համեցե՛ք, պարոն, համեցե՛ք: Տիրուհին ձեզ թեյի է սպասում:

ՆԵՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — (Մոտեցավ տեղասին): Լսի՛ր, Կա՛րպ, իմ Արկաշկային շնորհակցությամբ, թե՛յ խմեցրու, եղբայր:

ԿԱՐՊ — Լսո՞ւմ եմ, պարոն, անհո՞գ եղեք:

Անշատիվցե գե՛տ է:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Ա՛խ, սատանան տանի, թողեց ինձ այս անտաշի հետ: Հիմի սա զահլա կտանի:

ԿԱՐՊ — Չեր անունն ի՛նչ է:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Սզանարի՛:

ԿԱՐՊ — Ի՞նչ մարդ եք: Օտարերկրացի՞ եք, ինչ է:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Օտարերկրացի եմ, Իսկ ձե՛ր անունը:

ԿԱՐՊ — Կարպ Սավելիչ:

ՍԶԱՍՏԻԻՎՅԵՎ — Չի՛ կարող պատահել:

ԿԱՐՊ — Հաստա՛տ:

¹ Ապանախ — Խորամանկ ու ճարպիկ ծառայող Մոսկովի կոմեդիաներում:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Կարպն ախր ձուկ է:

ԿԱՐՊ — Ծածանն է ձուկ:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Գետածածան թե ծածան՝ ի՞նչ տարբերու-
թյուն: Ավելի լավ էր ձեզ ծածան Սավելիչ էլ կոչեին:

ԿԱՐՊ — Է, ինչպե՞ս կարելի է: Թեյ ուզո՞ւմ եք:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ:

ԿԱՐՊ — Ինչպե՞ս թե ոչ:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Այդպե՞ս, ո՛չ:

ԿԱՐՊ — Ուրեմն բոլորովի՞ն չեք ուզում:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Բոլորովին չեմ ուզում:

ԿԱՐՊ — Բայց ախր ինչո՞ւ:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Հենց էդպես:

ԿԱՐՊ — Ինչպե՞ս, ես չեմ հասկանում:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Շատ պարզ. լողանալուց հետո լավ կլի-
նեք...

ԿԱՐՊ — Իհարկե, լավ կլինեք... բայց որտեղի՞ց:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Նեղություն քաշեք, Պերկես Սավելիչ:

ԿԱՐՊ — Ախր ի՞նչ պերկես՝ Կարպ: Մառանապետուհուց
չխնդրե՞մ:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Խնդրե՛ք ու բերեք տաղավար:

ԿԱՐՊ — Կաշխատեմ մի բան անել ձեզ համար:

ՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Աշխատեք Շերեփածուկ Սավելիչ: (Գլուխ է
տալիս ու գնում):

ԿԱՐՊ — Ա՛հ, ծաղրածուի մեկը: Տեսնես որտեղի՞ց են գտել-
բերել, Երևի հեռուներից: Ա՛յ քեզ կամարդին՝, Եվ պետք
է ասել, կրթված է: Իսկ այստեղ ի՞նչ կա: Մի խոսքով՝
անտառ:

Նես ե՞ն մանուկ Վոսիբրատովը և Պյատը:

Տ Ե Ս Բ Ա Ն Գ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

Կարպ, Վոսիբրատով և Պյատը:

ԿԱՐՊ — Ի՞նչ եք ուզում:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — Տիրուհուն կուզենայինք տեսնել, սիրելիս:

ԿԱՐՊ — Սպասեք, ձեր ժամանակը որ եկավ, կկանչեն:

1 Կամարդին (ազավաղված) — Կամարդինյոր, սենեկասպասավոր

ՊՅՈՏՐ — Ա՛յ խենթ, ախր մենք տիրուհու հետ գործ ունենք:

ԿԱՐՊ — Ձեր գործերի կարիքն էնքան էլ չուսենք: Չի՞ կա-
րելի, հասկացե՛ք: Ո՛ւր եք խցկվում:

ՊՅՈՏՐ — Բայց և այնպես գնա զեկուցիր, փորձի՛ր:

ԿԱՐՊ — Ինչպես եք ասում զեկուցիր, թե որ զնդապետի հետ
զբաղված է: Իր ազգականն է եկել:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — Գնդապետ:

ԿԱՐՊ — Իհարկե՞ զնդապետ... Տասնհինգ տարի շեն տեսնը-
վել:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — Երկա՞ր է մնալու:

ԿԱՐՊ — Երկար մնալն ինչի՞ն է պետք: Հնդմի՛շտ է եկել:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — (Խորհելով): Խի՞ստ մարդ է:

ԿԱՐՊ — Պարզ բան է, բա ո՞նց: Խոսք չի կարող լինել: Ի՞նչ
կոչում է: Հըլա մի մտածե՛ք:

ՎՈՍՄԻԲՐԱՏՈՎ — (Ձեռքը թափ տալով): Է՛հ, թող լինի... Իսկ
դու ժամանակին որ... (Գնում է, ետևից՝ Պյատը):

Տանից դուրս են գալիս Նեչաստիվցևը և Բուլաեովը:
Կարպը գնում է:

Տ Ե Ս Բ Ա Ն Գ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

Նեչաստիվցև և Բուլաեով:

ՆԵՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Ինչպիսի՞ն է թույրիկս, եղբա՛յր:

ԲՈՒԼԱՆՈՎ — Այո-ս...

ՆԵՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Ամուսնացի՛ր, եղբայր, ամուսնացի՛ր:

ԲՈՒԼԱՆՈՎ — Հավանություն տալի՞ս եք:

ՆԵՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Իմ ի՞նչ գործն է: Մարդիկ ծնվում են,
ամուսնանում են, մեռնում են, ուրեմն, այդպես է պետք:
ուրեմն՝ լավ է:

ԲՈՒԼԱՆՈՎ — Խնդրում եմ սիրեցեք ինձ:

ՆԵՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Ինչի՞դ է պետք իմ սերը: Գրանից ի՞նչ
օգուտ, եղբայր:

ԲՈՒԼԱՆՈՎ — Համենայն դեպս:

ՆԵՍԶԱՍՏԻՎՅԵՎ — Հո ժառանգություն չե՞ս սպասում: Սպա-
սի՛ր, եղբա՛յր, սպասի՛ր: Ահա թե ինչ արա. քծնիր ազ-

գականուհուս, նա հարուստ կին է: Դեռ շահել ես, բայց, ա՛վ գիտե, այդ ընդունակութունները վաղ են բացահայտվում: Կարողանո՞ւմ ես:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Ամոթխածորեն): Կարողանում եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Բռա՛վու, Մանուկ հասակում այդ որտե՞ղ ես սովորել:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչը:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Քծնելը, եղբայր, հաճոյանա՛լը, սողա՛լը:

ԲՈՒՂԱՆՈՎ — Կարիքն է սովորեցնում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Կա՛րիքը: Իսկ դու որտեղի՞ց գիտես թե ինչ է կարիքը:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ինչպե՞ս շիմանամ: Կյանքում ես շատ դժբախտ եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Սուտ բան է, չեմ հավատում: Դու երջանիկ ես: Դժբախտը նա է, ով հաճոյանալ ու ստորութիւն անել չգիտի: Ինչո՞վ ես դժբախտ, ասա՛:

ԲՈՒՂԱՆՈՎ — Նախ, որ հայրիկս ինձ քիչ ժառանգութիւն թողեց:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իսկ քեզ ինչքա՞ն է պետք:

ԲՈՒՂԱՆՈՎ — Գոնե մի երկու-երեք հազար դեռայտին հող կամ էլ մի բառասուն հազար փող:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Եվ դու երջանիկ կլինեիր: Շատ բան քեզ պետք չի, եղբայր:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ճիշտ է, որ շատ չի, բայց կարելի է կարգին ապրել:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Է՛, սպասի՛ր, եղբա՛յր, ես քեզ ավելի շատ կթողնեմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դիտմա՞մբ եք ասում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ա՛յ քեզ բան, Հարազատներ ես շունեմ, դու ինձ շատ դուր եկար: Ուրիշ էլ ի՞նչ դժբախտութիւն ունես:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ուսման գծով եմ դժբախտ... Եւլյնիսկ գիմնազիան չեմ ավարտել:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Հանում է գլխարկն ու գլուխ տալիս): Այդ արդեն կներես, եղբայր, խնոր՛ւմ եմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Իսկ ի՞նչ է որ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դրանում քեզ ոչ մի կերպ չեմ կարող օգնել: Ուրախ կլինեի, բայց չեմ կարող:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դե ոչի՛նչ, ի՛նչ եք ասում: Դա իսկի պետք էլ չէ, միայն թե փող լիներ: Մայրիկս ասում է, որ իմ խելքը ուսման խելք չէ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իսկ ինչպիսի՞ն է:

ԲՈՒՂԱՆՈՎ — Գործնակա՛ն:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե, ասածուն փառք տուր, որ գոնե ինչ-որ տեսակի է: Թե չէ հաճախ ոչ մի տեսակի էլ չի լինում:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դա էլ ոչինչ: Միայն թե հող շատ լինի ու շահդ իմանաս, կալվածատիրական, թե չէ առանց խելքի էլ կարելի է ապրել:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Էդպես ավելի լավ է, գլուխը նեղութիւն չի քաշի: Խելք, ուրեմն, շունես: Իսկ ծխախոտ գոնե ունե՞ս:

Տեսաւում երևում է Գուրմիսկայան:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Միծաղում է): Դա՛ էլ չկա:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իսկ ինչո՞ւ ես ծիծաղում, եղբա՛յր: Չհասկացա՞ ծխո՞ւմ ես, թե՞ ոչ:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Ցածրաձայն): Միտում եմ, ծխախոտ էլ ունեմ, միայն թե ահա Ռախա Պավլովնան գալիս է, և նրա մոտ ես ինձ երբեք թույլ չեմ տա:

Գուրմիսկայան մտնում է պարտեզ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ռ Ե Ր Ո Ր Գ

Գուրմիսկայա, Անչաստիվցե, Բուլանով, Տեսո Կարպ:

ԳՈՒՐՄԻՃՍԿԱՅԱ — Այնպես ես փոխվել, որ երբեք չէի ճանաչի: Շնորհակալ եմ, որ ինձ լրիվ մոռացութեան չես մատնել: Իսկ մենք քեզ համարյա ամեն օր հիշում ենք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Մի՞թե կարող եմ մոռանալ ձեզ: Դուք իմ սիրտը չեք ճանաչում: Ես հիշում էի ձեզ, հիշում եմ և կհիշեմ:

ԳՈՒՐՄԻՃՍԿԱՅԱ — Գիտեմ, բարեկամս, և հիշելու համար

շնորհակալ եմ, Ոչ մի բանով դու ինձ այնպես չգոհացրիր, ինչպես համրիչով:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Երբ համրիչն ուղարկում էի, մտածեցի, բարի կին, ձեռքդ կառնես սա ու կաղոթես: «Օ, հիշիր ինձ քո սուրբ աղոթքներում»:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հիշում եմ, բարեկամս, հիշում եմ: Սակայն մինչև հիմա դեռ քեզ չեմ հարցրել: Դատելով հագուստիցդ, դու այլևս զինվորական ծառայության մեջ չես:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ: Ա՛յն չէ առողջութիւնս, ուժերս այն չեն, թշնամին չի սպառնում: Բայց թե... այ... արյունալի տեսարաններն իմ սրտովն են: Խաղաղ ժամանակներում ծառայել աստիճանի, մեծարվելու համար... Ես փառասեր չեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց ես չեմ կարծում, թե դու կարող ես առանց գործի ապրել: Հավանաբար ծառայութիւնդ ես փոխել միայն:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Փոխել եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Եվ գո՞հ ես քո վիճակից:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Հարմար ծառայութիւն է, և ե՛ս եմ գոհ, և ինձնի՛ց են գոհ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Արձակուրդի մե՞ջ ես:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ, այստեղով էի անցնում, ուզեցի հանգրտանալ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շատ ուրախ եմ, որ մտածել ես այցելել ինձ: Հարմա՞ր է քեզ տաղավարում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Օ՛, մի՛ անհանգստացրե՛ք: Պարտեզ, բնութիւն, կանաչ, մենութիւն: Դրախտ է իմ հոգու համար:

Մտնում է Կառլը:

ԿԱՐԳ — Տիրուհի, Վոսմիրատովը վաղուց է սպասում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ախ հա՛, մոռացել էի, որ ասել էի շուտ գար: Կանչիր նրան այստեղ:

Կառլը գնում է:

¹ «Օ, հիշիր ինձ քո սուրբ աղոթքներում», — Համլետի խոսքերը Շեքսպիրի համանուն ողբերգութիւնից:

ՉԵ՛ս ուզում զբոսնել, տեսնել շրշակայքը: Ալեքսիսն ահա քեզ կընկերակցի:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ, ես միայն գիշերն եմ զբոսնում: (Բուլանովին): Գնանք տաղավար, եղբա՛յր:

ԲՈՒՎԱՆՈՎ — Գնա՛նք:

Գնում են: Մտնում են Վոսմիրատովը և Պյատը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Յ Ե Ր Ո Ր Վ

Գաւմիսկայա, Վոսմիրատով, Պյատ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու ինձ ներիր, ես քո մասին չէի էլ հիշում:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Ոչինչ: Չեր տեգոր որդի՞ն է եկել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, եկել է:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Վատ չէ: Բայց դե, տիրուհի չուշացնե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, հիմա արդեն քեզ չեմ ուշացնի:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Ասո՞ւմ եք էլի, չե՞ք ուշացնի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, ո՛չ, հենց հիմա:

Լուսլուս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բերե՛լ ես:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Բա ո՞նց, մենք մեր գործը գիտենք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, ուրեմն մենք իսկույն:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Լա՛վ, Լա՛վ:

Լուսլուս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե ինչ, շա՞տ է բերածդ:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Շնորհք արե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչ:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Գրութիւնը, մեր կապած պայմանը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչպե՛ս չէ, իհարկե, բայց չգիտեմ, թե ուր եմ խցկել:

ՎՈՍՄԻՐԱՍՈՎ — Փնտրե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ախր որտե՞ղ փնտրեմ: Ես իսկապես չգիտեմ. երևի թե կորցրել եմ:

ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — էղպես ո՞նց կլինի: Ախր դուք դրանով ինձ
վիրավորած կլինեք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հիմար բան ես ասում: Ես քեզ ինչպե՞ս
կարող եմ վիրավորել:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Ինչպես ուզեք, էնպես էլ կվիրավորեք: Գուր
գրությունը կորցրել եք, ես էլ էն ժամանակ հիմար էի,
չվերցրի: Հիմա կասեք, թե տասը հազարով եք վաճառել.
անտառն ախր ես արդեն կտրել ու տարել եմ, վիճելու
էլ բան չկա:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛յ քեզ բան: Մի՞թե դու ինձ չես ճանա-
չում:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Հույսս հիմա դուք եք մնացել, քանի որ
ոտից գլուխ ձեր ձեռքում եմ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասենք կասկածելու բան էլ չունես, Իվան
Պետրովիչ, ես քեզ համար նոր գրություն եմ պատրաս-
տել:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Պատրաստե՞լ եք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, որ ամբողջ փողը ես լրիվ ստա-
ցել եմ:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Այդպե՛ս: Դա արդեն ուրիշ բան է: Մեծա-
պես շնորհակալ եմ ձեզնից: Բայց թույլ տվեք մի հիա-
նամ էդ գրությամբ:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ահա՛: (Տալիս է գրությունը): Տե՛ս:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — (Վերցնելով): Առանց ակնոցի ես էնքան
էլ չէ: Իսկ ակնոցով՝ ավելի՛ վատ: Տղաս, ահա, կկար-
դա: Պյո՛տր, կարդա՛: (Գրությունը տալիս է Պյոտրին):
ՊՅՈՏՐ — (Կարդում է): «Կալինովցի վաճառական Իվան Պետ-
րովիչ Վոսմիքրատովին կտրելու համար վաճառած...»:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Այո՛, ճիշտ էդպես է:
ՊՅՈՏՐ — (Կարդում է): «...իմ Գորեխյայի և Պալյանայայի
պարապաւտները...»:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Հենց գրանք են:
ՊՅՈՏՐ — (Կարդում է): «...և երկու դեսյատին էլ Պիլականի
անտառների փողերը լրիվ ստացա: Կալինովցի կալվա-
ծատիրուհի Թախա Գուրմիժսկայա»:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — (Վերցնում է գրությունը): Շա՛տ լա՛վ: (Հա-

նում է դրամապանակն ու գրությունը խնամփով դնում
մեջը): Շնորհ արեք ստացեք: (Հանում է փողերն ու հաշ-
վում): Հազար... հազար երեք հարյուր, հինգ հարյուր,
յոթ հարյուր... (Մտածում է և իբր հիշում է), ու՞թ հար-
հարյուր: Համեցե՛ք: (Տալիս է Գուրմիժսկայային):
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչպե՞ս թե հազար ու՞թ հարյուր: Զե՛ որ
ինձ պետք է...
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Մեղավո՛ր եմ, մեծահոգաբար ներեք: Հա-
մա՛ թե հիշողությունն է, հա: (Հանում է փողերն ու տա-
լիս): Երկու հարյուր էլ: Հիմա ամեն ինչ ճիշտ է: Այդպես
չէ՞: Պետրուշկա՛, այդպե՛ս է: Ի՞նչ ես լռում: (Սպառնալի):
Խոսի՛ր, ախմա՛խ:
ՊՅՈՏՐ — Այդպե՛ս է:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իվան Պետրովիչ, կատակ ես անում ինձ
հետ: Երեք, և ոչ թե երկու:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — (Վիրավորվելով): Ի՞նչ երեք, այդ ի՞նչ
եք ասում:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մի՞թե մոռացել ես: Մեկ ու կես՝ մեկի
համար, մեկ ու կես՝ մյուսի:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — էդպես չի կարող լինել, հաշվից դուքս
է դա:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՞ր հաշվից:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Կույր հո չե՛մ: Այդ անտառին երեք հա-
զար ո՞վ կտա: Ախր մենք էլ ենք աշխատում, որ վնաս
չունենանք:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հույսս քեզ վրա էի դրել, բոլորի մոտ գո-
վում էի, որ լավն ես, ընտանիքի մարդ...
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Դա գործի հետ կապ չունի:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Եթե այդպես է, ես համաձայն չեմ:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Ինչպես կամենաք: Ներողություն ենք խընդ-
գրում: Գնացի՛նք, Պյո՛տր:
ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես Պալյանայան ու Պիլական նույնիսկ
համաձայն չեմ քեզ այդ գնով վաճառելու: Մի ի՛նքդ դա-
տիր: Զե՛ որ դու ունե՛ս դատողություն:
ՎՈՍՄԻՔՐԱՏՈՎ — Ինչպե՛ս չունենամ: Առանց դրա մենք յո-

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ր Ի Դ

Գուրմիծական, Նեշաստիվցե, Բուլանով:

- ԲՈՒՂԱՆՈՎ** — Ի՛նչ աներևակայելի ֆոկլորներ եք անում, Այդ ինչպես եղավ, որ իննանոցը...
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — Ձեռնածուխո՞ւն է, եղբայր:
- ԲՈՒՂԱՆՈՎ** — Ի՛նձ էլ սովորեցրեք ձեռնածուխո՞ւններ անել:
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — Ինչի՞դ է պետք:
- ԲՈՒՂԱՆՈՎ** — Գիտեք, մեր կալվածատերերը բոլորը հաբուստ են... երբեմն թուղթ են խաղում... Ախր ինչո՞ւ պիտի տարվեմ... Ես աղքատ մարդ եմ:
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — Քաջ տղա ես երևում, եղբայր:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — (Իջնելով տեռասից): Պատկերացնո՞ւմ ես, Ալեքսիս, ես Իվան Պետրովիչին երեք հազարով անտառ վաճառեցի, իսկ ստացա միայն երկու հազար:
- ԲՈՒՂԱՆՈՎ** — Ինչպե՞ս թե:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ինքս եմ մեղավոր. նախապես ստացա կան սվի, որ բոլորը լրիվ առել եմ, դե նա էլ միայն երկու հազարը սվեց:
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — (Սպառնալի): Այ, անիծված:
- ԲՈՒՂԱՆՈՎ** — Ախր ինչո՞ւ այդպես արիք: Է՛հ, շատ ափսոս:
- Ավելի լավ էր...**
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Այլևս ոչինչ չի կարելի անել, բարեկամս: Լավ է, որ գոնե երկու հազարը սվեց:
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — (Բորբոքված): Ինչպե՞ս թե ոչինչ: Ե՛տ կանչեք դրան: (Աչքերը երկիճեք բարձրացնելով): Տես դրան ի՛նչ եմ անելու: Աստված իմ, ի՛նչ եմ անելու:
- ԲՈՒՂԱՆՈՎ** — Բայց, ախր, ստացական ունի:
- ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ** — Ավելորդ ես խոսում: Շատ պետք է նրա ստացականը: Որտե՞ղ է նա: Այստե՞ղ բերեք դրան: Ի՛նչ եմ անելու ես դրան:

Մտնում են Կարպե ու Սշաստիվցե:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Բուլանովին): Ա՛հ, ի՛նչ սարսափելի տեսք ունի: Գնա՛նք, գնա՛նք:

- լա շենք գնա: Ա՛յ, ձերդ ողորմածության համար ճիշտ որ դատողություն չի պահանջվում, քանի որ պատրաստի ապրուստի վրա եք: Եթե համաձայն չեք վաճառել, բարեհաճեք փողը ետ տալ. ինչ-որ վերջի պիտի հասնենք:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Մեկուկես հազարը Գորելայայի համար եմ պահում, իսկ հինգ հարյուրը վերցրու:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Չէ՛, տեսնում եմ, երկար ենք տալու-առնելու: Ես Պալյոնայայի ու Պիլակայի համար երկու հազարից պակաս չեմ վերցնի, այն էլ միայն ձեզնից:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ինչպե՞ս թե չես վերցնի:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Դե հենց այդպես: Ես առել եմ դրանք ձեզնից, ուրեմն, ինչքանով ուզեմ, այնքանով էլ կծախեմ:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Եթե քեզ երկու հազարը ետ տամ, Գորելայայի համար ինձ ոչինչ չի մնա:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Դա արդեն ձեր գործն է:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ո՛չ, ո՛չ, չե՛մ ուզում, չե՛մ ուզում:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Ինչպես որ դուք եք մեր հանդես, էնպես էլ մենք՝ ձեր, իսկ դուք մեր տոհմից ու կոչումից բարեհաճում եք զզվել...
- ՊՅՈՏՐ** — Հայրի՛կ:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Կսպանե՛մ:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ո՛չ, ո՛չ: Դու հինգ հարյուրը վերցրու:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Թե որ անկարելի է, ինչո՞ւ եք խոսում: Գնա՛նք, Պյոտր:
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ուրեմն ի՞նչ:
- ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Դա փոքր երեխան էլ կհասկանա: Անտառը ես ձեզնից առել եմ, փողը սվել եմ ձեզ, դուք ինձ ստացական եք սվել. ուրեմն անտառն ի՛մն է, փողերը՝ ձե՛րը: Հիմա մնաք բարով, գնացի՛նք: Ներողություն ենք խնդրում: (Գնում է, ետևից՝ Պյոտրը):
- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Այս ի՛նչ բան է: Կողոպուտ օրը ցերեկով: Զարմանալի է, կյանքում ոչինչ չկարողացա գնել ու վաճառել, որ շխաբեն: Երևում է, ճակատիս այդպես է գրված:

Մտնում են Նեշաստիվցե և Բուլանով:

ԲՈՒՂԱՆՈՎ — Թույլ տվեք ես մնամ, հետաքրքիր է:

Գուրմիսկայան գնում է:

Իվան Պետրովիչը գնա՞ց:

ԿԱՐՊ — Ոչ, դեռ էստեղ է, բակում:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ետ բեր այդ խաբեբային: Ես դրան...

Օձիբի՛ց քարշ տուր:

Կարպը գնում է:

Արկաշկա՛, շքանշաննե՛րս տուր:

Սչաստիվցեր գնում է:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ի՞նչ եք խոսելու նրա հետ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ես շա՛տ գիտեմ, եղբայր, թե ինչ եմ խոսելու:

ԲՈՒՂԱՆՈՎ — Բայց մի՞թե կարելի է փաստաթղթերի դեմ խոսել:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Հիմա ես քեզ ցույց կտամ, որ կարելի է Փաստաթղթերի հետ ի՛նչ գործ ունեմ, ես դատարանի գրագիր լեմ: Ձեռ քաշիր ինձնից, ես հիմա, եղբայր, բո գլուխը շունեմ:

Սչաստիվցեր բերում է կեղծ շքանշաներ: Նեսչաստիվցեր կախում է դաճճ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Այդ ի՞նչ շքանշաններ են: Արտասահմանյա՞ն:

Մանում են Կարպը, Վոսմիրատովը և Պյոտրը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն տ ա ս ն Ե Ր Ո Ր Ղ

Նեսչաստիվցե, Բուլանով, Սչաստիվցե, Վոսմիրատով, Պյոտր, Կարպ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Էլի ի՞նչ կա: Ուրիշ ի՞նչ է հարկավոր: Մենք էլ մեր գործն ունենք, խոսելուց արդեն ձանձրացել ենք:

ԿԱՐՊ — Համեցե՛ք: Ինձ ի՞նչ, բայց որ պահանջում են:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դրանք արտասահմանյա՞ն շքանշաններ են: **ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ** — Արտասահմանյա՛ն: Ինձ հանգիստ թող, եղբայր: (Վոսմիրատովին): Այստե՛ղ արի:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Առողջութուն եմ ձեզ ցանկանում, ձեր բարեծնություն. Ձեր անուն-հայրանունը չգիտեմ...

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Քեզ ասում են այստե՛ղ արի:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — (Որդուն): Պետրուշկա՛ մի կողմ քաշվիր: Ե՛տ գնա մի քիչ: Այ, ա՛յդպես: (Նեսչաստիվցեին): Ի՞նչ կկամենայիք:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Հո չեմ կարող քեզ հետ մի վերստի վրա խոսել:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Գուցե ականջներից թույլ եք, մենք կմտտենանք, եղածը մեծ բան չէ:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ինչպե՛ս հանդգնեցիր մտքովդ անցկացնել:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Թույլ տվեք: **ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ** — Լո՛ւր: Այդպիսի կի՛ն, եվ դու...

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ինչպիսի՞ կին: Թույլ տվեք...

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Ինչպիսի՞ կին: Դեռ հարցնում է: Քեզ ասում են լո՛ւր: Կին, որից բու՛րբ, բու՛րբ, նույնիսկ ե՛ս եմ ակնածում: Իսկ դու. ողորմելի շարշի...

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Այդ ինչի՞ մասին եք ասում:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Մի՛ ընդհատիր ինձ: Շնորհակալ եղիր աստծուց, որ դեռ մի կաթիլ համբերություն ունեմ: Վա՛յ քեզ, եթե դա էլ հատավ: (Սպառնում է մատով):

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Պետրուշկա: Ի՞նչ ես բերանդ բացել: Կարգին կանգնիր:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Թշվառական: Մի կանգնիր առյուծի ու նրա միջև...

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Այդ ինչո՞ւ եք գոռում: Դուք կգոռաք, ես կգոռամ, ժխոր կդառնա ու բան դուրս չի գա:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — Դո՞ւ, դո՞ւ... Դու պիտի գոռա՞ս:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ինչո՞ւ չպիտի գոռամ, եթե էստեղ այդպես է ընդունված: Մենք իրար մեջ ցածր ենք խոսում, քանի որ մեզանում խուլ չկա:

ՆԵՍՉԱՍՏԻԻՎՅԵՎ — (Բուլանովին): Սա ի՞նչ է ասում: Ի՞նչ է ասում: Ի՞նչ է համարձակվում ասել:

ՔՈՒԱՆՈՎ — Այո-ս...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Տե՛ր աստված, եվ սա կենդանի՞ է գեու
Ես դեռ չե՛մ սպանել սրան:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Դա՛ ինչի համար է: Դուք հրամայեք, թե
ինչ եք կամենում: Քանի որ էստեղ իմ հյուր լինելը
զուր է:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչ եմ կամենո՞ւմ, Նա հարցնում է, թե
ի՞նչ եմ կամենում: Հը, Հա՛-հա՛-հա՛: Ես կամենում եմ
քեզ ասել, որ դու խաբեբա ես:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Չէ, դուք դրանից ձեռ քաշեք: Բան դուրս
չի գա: Ներկա ժամանակներում դա ավելորդ է:

ՊՅՈՏՐ — Ինչպիսի՞ հաճոյախոսութիւններ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Պետրո՞ւշկա, էստե՛ղ արի:

ՊՅՈՏՐ — Ես այստեղ եմ, հայրիկ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Թե գործ կա, ասեք, ուրեմն, թե որ չկա,
ներողութիւն ենք խնդրում: Ահա ինչ կասեմ, ավելի լավ
է ինձ մոտ համեցեք, տանս խոսելու համար ավելի ա-
զատ է: Պյո՛տր, գնա՛նք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Սպառնալի): Սպասի՛ր:

ՊՅՈՏՐ — Սպասելու համար փող են վճարում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Այդ ինչպե՛ս խաբեցիր ազնիվ կնոջը:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Խաբեցի՛ր: Ամեն բան էլ կարելի է ասել
էդ ինչու ձեռ հորեզորր կնոջը հավատում եք, իսկ
ինձ՝ չէ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դեռ հարցնում է... Նա հրեշտակի պես
խոնարհ է, իսկ սա... (Ձեռքերն իրար զարկելով): Սա
դեռ խոսում է: Մի սրան նայեք: Հենց միայն անառակ
մոռութիւն ինչ ասես արժե:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Պետրուշկա՛, կանգնի՛ր այստեղ:

ՊՅՈՏՐ — Հայրիկ, էլ հերիք է այս երգը լսենք...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Հեղութիւն: Մարմնացյալ հեղութիւն է:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Էդ մի բանը նրանցից անպակաս է, մե-
նակ թե խելքն է... պակասում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Քո՞ խելքն ինչ է: Ինչի՞ է պետք: Խել-
քը վերշո՞վ է, մսխալ, գրամ, իսկ պատիվն անասհման
է: Եվ դու դա շունեն:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Էդ մեկը շեղավ, պարոն, ինչ ուզում ես

ասա, բայց պատվիս մի՛ կպիր, դատարան կտամ: Էդ
ինչպե՛ս թե պատիվ շունեմ: Թե որ փաստաթղթերս կար-
գին են, ուրեմն պատիվս բարձր է: Իմ մասին կուզես հար-
յուր վերստի վրա հարցրու, բոլորը քեզ նույնը կասեն:
Քեզ չի բավարարում, իսկ ես իմ մասին կասեմ, որ պատ-
վով մարդ եմ: Ուրիշ բանում զլուխ չեմ գովում, իսկ
պատվի հարցում ահա թե ինչ կատեմ, պարոն. ես մարդ
չեմ, ես կարգուկանոն եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նստում է սեղանի մոտ ու գլուխը կա-
խում): Գնա՛:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ո՞նց թե գնա:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Բավակա՛ն է: Հեռացի՛ր: Օ՛, մարդիկ,
մարդիկ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ի՞նչն է բավական: Չէ՛, սպասի՛ր: Ուզո՞ւմ
ես, պարոն, քեզ մի խոսքով սպանեն:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՞նչ:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Հա՛, քե՛զ: (Մոտենում է, հանում է դու-
մապանակն ու նետում սեղանին): Դո՞ւ սա տեսե՛լ ես:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՞նչ ես ուզում:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Կարող է ազգականուհիդ ինքն է մոռացել-
էհ, աստված նրա հետ, դու նրան հավատում ես, քո
խղճով վերցրու, վերցրու ինչքան ուզում ես: Չե՛մ հա-
կառակվի, վերցրո՛ւ:

ՔՈՒԱՆՈՎ — Շտապ վերցրեք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Բուլանովին): Հեռացի՛ր այստեղից:
(Վուսմիրատովին, վերադարձնելով թրքապանակը): Ին-
քը՞դ տուր:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ես ուրեմն: (Հաշվում է փողերը): Ահա թե
ինչ տեսակ մարդ եմ ես: Հիշատակումի մեջ գրեք ինձ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չե՛նք:

ՎՈՍՄԻՐԱՏՈՎ — Ահա: (Տալիս է ձեռքը): Վաղուց էր պետք
էդպես անել: Ի՞նչ տեսակ մարդ եմ: Դու, պետք է որ,
պարոն, իմանաս իմ բնավորութիւնը: Թե որ կատաղեց-
րին, կտաքանամ, ամեն ինչ կտամ: Ճիշտ է, որ երեք
հազարով էինք խոսել, կարծեմ, իսկ հաստատ չեմ ասի...
Փաստաթուղթ չկա, ուրեմն ինչ ուզեմ կասեմ: Ահա՛, վերց-

րբ որ նրան տվիք հազար ուրիշն: Բայց, մեկ է, կասեմ՝
կարգն այդպես չէ:

Մտնում է Գուրմիսկայան:

Տ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ

Գուրմիսկայա, Նեսչաստիվցե, Բուլանով, Սչաստիվցե,
Վասիլբրատով, Պյոտր և Կապլ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Փողերը տալով Գուրմիսկայային):

Ահա՛ ձեր փողերը, ստացե՛ք: (Մի կողմ է փաշվում ու
կանգնում, խաչելով ձեռքերն ու խոնարհելով գլուխը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շա՛տ շնորհակալ եմ քեզնից, բարեկա՛մս:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Ստացա՞ք: Միայն թե, պարոնը որ չլիներ,
այդ փողերի երեսը չէիք տեսնի: Ես էլ ի՛մ առաջ մեղավոր
կլինեի, որովհետեւ էլի խիղճ կա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու ինձ վրա մի՛ բարկանա, Իվան Պետ-
րովիչ: Ես կին եմ, ինձնից շատ բան պահանջել չի կա-
րելի: Շնորհ արա, վաղն արի իմ տուն ճաշելու:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Աղուհացից շեն հրաժարվի: Հա՛, մեկ էլ
այն կոճղերի համար...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե՛, նաև կոճղերի համար:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Դե՛, ներող եղեք: Մնաս բարով, ջղա՛յին
պարոն: Պյո՛տր, գնա՛նք: (Գնում է, ետևից՝ Պյոտրն ու
Կապլը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Նեսչաստիվցեին): Ա՛հ, ինչքա՛ն եմ
քեզնից շնորհակալ: Իսկ դու գիտե՛ս, ես ճիշտ այդ գու-
մարի շափով պարտք եմ քեզ: (Աես սրափվելով շտապ
պահում է փողերը):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չե՛մ հավատում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես քո փողերը պահե՛մ եմ, բարեկա՛մս,
պահե՛մ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ախ, Ռախա Պավլովնա, թողեք ձեր խո-
րամանկությունները: Ինչպե՛ս չեք ամաշում: Ծ՛, կանացի
սիրտ: Ուզում եք ինձ փող առաջարկել, բայց չգիտեք,

թե ինչպես ավելի նուրբ ձևով անեք: Պա՛րտք եք ինձ:
Դե՛, շա՛տ լավ: Երբեք պարտքներս կմարենք: Երբ
կարիքն ունենամ, կտաք, իսկ հիմա ինձ փող պետք չէ,
ես հարուստ եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե՛, բարեկա՛մս, ինչպես կուզես:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Ինքն իրեն): Ի՞նչ է անկուպեկ կոտրատ-
վում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Բուլանովին նայելով): Հուսով եմ կհյու-
րենկալվես մեզ մոտ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Երկու-երեք օր, ո՛չ ավել, եթե թույլ
կտաք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչո՞ւ այդքան քիչ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինձ հերիք է: Ուզում եմ նորից քայլել
հարազատ ծառութիների միջով, հիշել մանկության ան-
միտ օրերը, անհոգ պատանեկությունը... Ո՞վ գիտե, մեկ
էլ կկանգնե՞մ հավիտենության դռների առջև...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հո չե՞ս մտածում, թե ինձ նեղություն
կտաս: Ընհակառա՛կը, ես շատ ուրախ կլինեմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Վեհա՛նձն կին: Քո սրտի գանձերն իզուր
մի շոռյիլի իմ առջև: Փշոտ է իմ ուղիքն, բայց ես կշա-
րունակեմ գնալ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Աչքերով նասկացնում է Բուլանովի՛ն, որ
ինքը շատ գան է): Ինչպես կուզես, բարեկա՛մս Ես մտա-
ծում էի, թե դու քեզ այստեղ հանգիստ կզգաս:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իմ հանգիստը զերեղմանն է: Այստեղ
գրախո է ես գրան շարժեմ: Շնորհակա՛լ եմ, շնորհա-
կա՛լ եմ: Հոգիս լի է երախտագիտությամբ, լի է ձեր
նկատմամբ սիրով, կուրծքս լի է ջերմ արցունքներով:
(Մրբում է արցունքները): Այսքան գո՛ւթ ու քնքա՛նք,
բա՛ճ է: Ես կուպաշտ եմ դառնում, ես ծունկի կգամ
ձեր առջև: (Մածկում է դեմքն ու նեղանում):

Սչաստիվցեք հետևում է ճրան, բայց կանգ է առնում
և նայում բո՛լի ետևից:

Տ Ե Ա Ր Ա Ն Ի Ա Ն Ե Ր Կ Ո ւ Ե Ր Ո Ր Դ

Գուրմիսկայա, Բուլանով, Սշաստիվցեր՝ բփի ետեում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնաց: Դե, հիմա ես հանգիստ եմ, նա ինձ չի խանգարի: Նա մի տեսակ խանդավառ մարդ է: Պարզապես ինձ թվում է, որ հիմար մարդ է: Իսկ քիչ առաջ ինչպե՞ս վախեցա: Ի՞նչ սարսափելի արարած է:

ԲՈՒՂԱՆՈՎ — Չէ՛, դա ոչինչ, հասարակ ժողովրդի հետ այդպես շատ լավ է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այնուամենայնիվ դու նրանից զգուշացիր: Պահպանիր քեզ, բարեկամս: Այդ երազն իմ գլխից դուրս չի գալիս... Նա այնպիսի կատաղի բնավորություն ունի:

ԲՈՒՂԱՆՈՎ — Դե դուք մի՛ անհանգստացեք, մենք իրար հետ բարեկամացանք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մտքովս չէր անցնի... փողից ինքը հրածարվեց: Ի՞նչ սիրալիրն էր: Եվ իզուր հիշեցրի այդ պարտքի մասին: Ո՛ւմ էր պետք այդ զգացմունքայնությունը: Դերդ խաղում, խաղում ես, մեկ էլ մոռանում ես ամեն ինչ: Դո՛ւ, բարեկամս, չե՛ս հավատա, թե ինչքան չեմ սիրում փող տալ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ես չգիտեմ, ես ջահել եմ դեռ, իսկ խելացի մարդիկ ասում են, Ռախսա Պավլովնա, որ ժլատությունը հիմարություն չէ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, ես ժլատ չեմ, ախր. ում որ սիրում եմ, ամբողջ ունեցածս կտամ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Իսկ դուք շա՞տ փող ունեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շա՛տ: Ահա՛, տե՛ս: (Բացում է գանձատուփը):

Բուլանովը նայում է ու հագոց հանում:

Եվ բոլոր այս փողերը կտամ նրան, ում որ սիրեցի:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Խորը հառաչելով): Օ՛Ֆ...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ահա թե ինչ եմ ուզում քեզ ասել, Ալեքսի՛ս: Դու քեզ շատ ստորաբարձ ես պահում, դու դեռ երեխայի ես նման. դա ինձ դուր չի գալիս: Իհարկե, քեզ

մեղադրել չի կարելի. դա քո մեջ աղքատությունից է: Դե, մենք մի կերպ այդ ցավի առաջը կառնենք, քեզ ավելի պատկանելի կդարձնենք: Ես ուզում եմ, որ դու ավելի պատկանելի լինես, Ալեքսի՛ս: Օրերս դու գավառական քաղաք ես գնալու, քեզ համար լավ հագուստներ շատ պատվիրիր, շղթայով ոսկե ժամացույց գնիր, դե, և ուրիշ այլ բաներ... Բացի այդ, հարկավոր է, որ գրպանումդ միշտ շատ փող լինի. դա քեզ aplomb կտա: (Գանձատուփից հանում է նեսչաստիվցեի տված փողերը): Սրանք գտած փողեր են, պատահաբար ձեռք էր քանդակ: Քե՛զ եմ տալիս:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Շփոթված): Ի՞նչ: (Վերցնում է փողերը): Շնորհակա՛լ եմ: (Համբուրում է ձեռքը): Հրամայում եք պատկանելի՞ լինել: Կլինե՛մ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնանք ցուցակ կազմենք, թե քաղաքում քեզ ինչ է պետք գնել: (Գնում են):

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Գնաք բարո՛վ, փողե՛ր, Օհ, այդ ողբերգուները: Անսահման ազնվություն, իսկ խելք՝ ամենևին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

- ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ:
- ԲՈՒՂԱՆՈՎ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ:
- ԱԿՍՅՈՒՇԱ:
- ՊՅՈՏՐ:
- ԿԱՐՊ:
- ՌԻՒՏԱ:

Պարտեզի մյուս մասը. աջ կողմում՝ տաղավար, ձախ կողմում՝ նստարան, նեոձավ, ծառերի արանքից երևում է փեր: Լուսնյակ գիշեր:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Նեշաստիվցե և Սշաստիվցե:

- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Արկադի՛, ընթրեցի՛ր:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ընթրեցի՛ր:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Լա՛վ կերակրեցին քեզ, հղբա՛յր:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Գերազա՛նց, տելացի մարդը, Գեհնադի Դեմ-յանիչ, ոչ մի տեղ չի կորչի:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Խելացի՛: Այդ ո՛ւմ մասին ես ասում:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՛մ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իսկ այդ ո՛վ է քեզ ասել, որ խելացի ես:
- Դու մի՛ հավատա, հղբա՛յր, քեզ խաբել են:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Նույնիսկ շատ եմ խելացի: Ահա, նախ որ կերակրվում եմ աղայական սեղանից, ասացի, որ դրան դուք եք ինձ վարժեցրել: Եվ երկրորդ, մտերմացա տրե-տեսուհու հետ և այդ առթիվ, Գեհնադի Դեմյանիչ, նրա-նից փող պարտք վերցրի: Եվ մեկ էլ մահճակալիս մոտ, անկյունում, վաքսի փոխարեն մի շիշ մրգոզի է դրված:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Առաջին դեբյուտի համար վատ չէ, Ար-կաշկա: Դո՛ւ, հղբա՛յր, աշխատի՛ր, լա՛վ խաղա քո դերը:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինձ ի՛նչ կա, ես լա՛վ եմ խաղում, իսկ դո՛ւք:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ես հիմա երջանիկ մարդ եմ, Արկադի, շատ լավ գործ գլուխ բերեցի:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՛նչ խոսք, լավ գործ էր: Իսկ ավելի լավ կլիներ, թե որ այդ փողերը...
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՛նչ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ամպոշե՛՛,
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ես քեզ «ամպոշե» ցույց կտամ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչքա՛ն փող կար ձեռքներիդ: Ա՛խ, Գեհ-նադի Դեմյանիչ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Կար ու չկա:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչո՛ւ ետ տվեցիք:

¹ Գրպանել — (Գրանս.):

- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Խանդարվել ես, դու, Արկադի: Ինչպե՞ս թե ինչու: Գրանք իմը չէին:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Էլ ո՛նց կլիներ: Կառնեիք ու՛ «Դրել ես՝ տար»: Քաղաք, տրոյկայով... կթռչեինք... հետո շոգենավով Յարոսլավլ, դեսդեն, հետո էլ Նիժնիի տոնավաճառ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Որ խեղդեի քեզ, Արկաշկա, կարծում եմ և՛ քեզ համար լավ կլիներ, և՛ ինձ համար՝ հանգիստ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Խեղդեի՛ք: Ա՛յ, դուք ասում եք, որ խելացի եք, իսկ գիմնազիստը, երևում է, ավելի է խելացի. նա այստեղ ձերից ավելի լավ դեր է խաղում:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՛նչ դեր, հղբա՛յր: Ի՛նչ է իրանից ներ-կայացնում: Լակոտ է, ուրիշ ոչինչ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչ դե՞ր: Առաջին սիրահարի:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Սիրահարի՛: (Սպառնալի): Ո՛ւմ:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Չավեշտական-Ֆճական տոնով): Չեր հոր-եղբոր կնոջ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Հա՛-հա՛-հա՛, Արկաշկա, ոչ միայն կեր-պարանքդ, այլև հոգիդ է ճորտի: Միայն թե զույժ եղիր, ավել-պակաս դուրս շտաս, դրա համար քեզպեսներին բոթակում են:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չէ՛, մի՛ բոթակում են...
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Էն էլ ինչպե՛ս:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչպե՞ս շքոթակեն: (Գնում է քփերի կող-մը): Նա սիրահարի դեր է խաղում, իսկ գուք... (Քփի ետևից) պարզամիտի:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ե՛ս եմ պարզամիտը՛: Ե՛ս:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Մյուս կողմը փախչելով): Որի վրա ծի-ծաղում են:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Հարձակվելով): Ինձ վրա՞ են ծիծաղում: Ո՛վ, ո՛վ: Ասա՛, թշվառակա՛ն:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նախանջելով): Դե՛, հերի՛ք է վախեցնեք: Ես կփախչեմ... Ես ի՛նչ մեղք ունեմ, ի՛նքս եմ լսել, ի՛մ ականջներով:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Բայց ո՛վ: Գրողը տանի:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ազգականուհիդ Բուլանովի հետ:
- ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Գլուխը բռնելով): Օ՛:
- ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ասում էին հիմար է: (Քաֆնվում է քփերի ետևը):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Արկաշկա՛, Գուցե քո գարշելի կյանքը
զզվեցրե՛լ է քեզ: Ուրեմն՝ գնա քեզ ջուրը գցիր: Մի՛ ստի-
պիր, որ ես ձեռքերս կեղտոտեմ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Փող ընկավ ձեռքներիդ, շկարողացաք պահել.
բեղերից ծորաց, բերանը բան չհասավ: Եվ դեռ ինձ էլ
ընկե՛ր եք ընտրել: Թե որ ընկերներ ենք, ուրեմն ամեն
ինչ կիսովի պիտի լինի. դրա մեջ իմ բաժինն էլ կար:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Բայց քեզ հո ավազակության ընկեր չե՛մ
կանչել:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Տվե՛ք իմ բաժինը, սվե՛ք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Արկաշկա՛, հարբած ես, ինչ է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ասենք հարբած եմ, հետո՞ ինչ: Ես հպար-
տանում եմ դրանով:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չէ՛, պիտի սպանե՛մ, սպանեմ ու՛ վերջ:
էլ ո՛չ մի խոսք:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նահանջելով): Կսպանես, ինչպես չէ: (Թփի
ետևից): Ձեռքերդ շին հասնի: (Փախչում է):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ստում էր, անամոթաբար ստում էր: Օ՛,
ինչ գարշելի կարող է լինել մարդը: Բայց եթե... Ավելի
լավ է թող սուտ ասի, քան թե ճիշտ: Դրա համար ես
կծծեմ նրան.. բայց եթե իմ բարեպաշտ ազգականուհին,
հեղության ու խոնարհության այդ տիպարը... Օ՛, ես այն
ժամանակ իմ ձեռով կիսուեմ հետը: Միժողե՛լ արտիստի
զգացմունքների, նրա ջերմ արցունքների վրա... Ո՛չ,
այդպիսի վիրավորանքը չի ներում նեսչաստիվցիը:
(Գնում է):

Մտնում է Կարգը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Կարգ, ճեռա Ուլիտա:

ԿԱՐԳ — Ընթրեցին, տիրուհին ննջարան գնաց, կարելի է հան-
գրատանալ: (Նստում է նստաբանին):

Մտնում է Ուլիտան ու ջուրը նայում:

Զրոսնելո՞ւ եք՝ ելել:

ՌԻԼԻՏԱ — Այո՛, Կարպ Սավելիլ: Շատ լավ գիշեր է...

ԿԱՐԳ — Իրոք... տրամադրում է... Դե ի՛նչ, զբոսնեք: Այն
էլ ասենք, որ կենդանի մարդ եք, իսկ կենդանի մարդը
հենց կենդանի մարդու մասին էլ մտածում է:

ՌԻԼԻՏԱ — Դուք այդ ինչի՞ մասին եք ասում:

ԿԱՐԳ — Թեկուզ ձեր մասին:

ՌԻԼԻՏԱ — Ի՞նչ իմաստով:

ԿԱՐԳ — Ինքներդ կարող եք հասկանալ:

ՌԻԼԻՏԱ — Ոչ, բայց, այնուամենայնիվ, ինչ:

ԿԱՐԳ — Ինձ ի՛նչ կա: Ինչպե՛ս կուզեք: Ես ձեր ամուսինը չեմ:

ՌԻԼԻՏԱ — Շատ հիմար բան է ձեր ասածը:

ԿԱՐԳ — Դե, ինչպես որ կամենաք:

ՌԻԼԻՏԱ — Չեմ հասկանում, թե մարդիկ ինչպես են ամեն բա-
նում միշտ միայն վատը տեսնում:

ԿԱՐԳ — Ո՛չ լավ, ո՛չ էլ վատ ես չեմ տեսնում. մենակ թե
զարմանալի է...

ՌԻԼԻՏԱ — Ի՛նչն է զարմանալի:

ԿԱՐԳ — Ձեր այդ տարիքում...

ՌԻԼԻՏԱ — Այդ ո՞ր տարիքում: Դուք իմ կնուսքին լեք եղել:
Խոսելու բան չունեք, ինչպես տեսնում եմ:

ԿԱՐԳ — Իմ խոսելուց ձեզ վնաս չի գա:

ՌԻԼԻՏԱ — Բվեճի նման նստում եք այստեղ ու գլխներիդ
եկածը դուրս տալիս:

ԿԱՐԳ — Ուրեմն, ես ձեզ էստեղ խանգարո՞ւմ եմ:

ՌԻԼԻՏԱ — Դա՞ ինչու եք ասում: Իզուր եք դուք իմ մասին
այդպես մտածում:

Մտնում է Սչաստիվցիը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Կարգ, Ուլիտա, Սչաստիվցի:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իմ ողջույնը ազնիվ մարդկանց:

ՌԻԼԻՏԱ — Համեցե՛ք:

ԿԱՐԳ — Ձեր պարոնը քնա՞ծ է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նստելով): Ո՞վ գիտի նրան:

ՈՒԼԻՏԱ — Մեզ մոտ երկա՞ր եք հյուր մնալու:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Ի՞նչ ունենք այստեղ անելու:
 ԿԱՐՊ — Իսկ արժեք, որ մնայիք: Ամեն ինչ կարգին է. ա՛յ, իվան Պետրովիչն այսօր փողերը ետ տվեց:
 ՈՒԼԻՏԱ — Իհարկե՞, տղամա՛րդ է:
 ԿԱՐՊ — Տիրուհուն ի՞նչ, Բարի մարդիկ եղածին ավելացնում են, իսկ մենք ծախում ու ծախում ենք: Անտառ էլ ենք ծախում, ուրիշ բան էլ ենք ծախում: Տիրուհին գանձատուփը լիքը փող է լցրել ու պահում է, ոչ մեկին կոպեկ չի տալիս. մեկ էլ տեսար հազարները թռան-գնացին:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Մի՞թե թռչում են:
 ԿԱՐՊ — Թռչո՞ւմ են:
 ՈՒԼԻՏԱ — Բոլորը աղքատներին ու ազգականներին:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — (Չլսելով): Ա՛յ թե բռնեի:
 ԿԱՐՊ — Եվ բռնում են:
 ՈՒԼԻՏԱ — Աղքատներն ու ազգականները:
 ԿԱՐՊ — Չէ՛ մի՛ ազգականները:
 ՈՒԼԻՏԱ — Իսկ ովքե՞ր, ձեր կարծիքով:
 ԿԱՐՊ — Մենք գիտենք, թե ովքեր:
 ՈՒԼԻՏԱ — Գոնե ուրիշների մոտ ամաչելիք:
 ԿԱՐՊ — Էստեղ ի՞նչ կա ամաչելու: Նա մեր եղբայրն է, ուրեմն ինչ կա որ...
 ՈՒԼԻՏԱ — Մեր մասին, մեր օրինակելի կյանքի մասին ամբողջ նահանգը գիտի:
 ԿԱՐՊ — Ես գյուղի մասին չեմ էլ ասում. այ թե հետո ինչ կլինի: Իսկ Պետերբուրգո՞ւմ, իսկ Մոսկվայո՞ւմ:
 ՈՒԼԻՏԱ — Մեկ է, դուք տիրուհուն չպետք է մեղադրեք:
 ԿԱՐՊ — Բայց մի՞թե ես մեղադրում եմ: Տիրուհին բարի է, ծառայողներս մեղ լավ ենք զգում: Իսկ ճիշտը ինչո՞ւ չասել: Ես եմ փողերը փոստ տանում, ես ավելի լավ գիտեմ, թե ում է ուղարկում, ազգականների՞ն, թե՞ ում:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Հետաքրքիր գրույց է:
 ՈՒԼԻՏԱ — Հետաքրքիր ոչինչ չկա: Ի՞նչ եք ասում: Նա այդ բոլորը հնարում է:
 ԿԱՐՊ — Տրանսիացի բժշկին շուղարկեցի՞նք: Իտալացուն շուղարկեցի՞նք: Հողաչափին, որ սահմաններ էր քաշում, շուղարկեցի՞նք:

ՈՒԼԻՏԱ — Ա՛խ, ա՛խ: Ինչպե՞ս չեք ամաչում:
 ԿԱՐՊ — Դե, էլ ինչ կուզեք, Ինչի՞ մասին: Ես ճշմարտությունն եմ սիրում: Բայց քնել էլ է պետք: Է՛հ, դո՛ւք գիպեք: Մնա՛ք բարով:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Գնաք բարով, Թառափ Սավելիչ:
 ԿԱՐՊ — Ա՛յ դու մասխարա: (Գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Պ

Սշատիվցե և Ուրաա:

ՈՒԼԻՏԱ — Մրգողին փորձեցի՞ք: Չգիտեմ լա՞վն է, թե՞ չէ. ուզեցի ձեզ հաճույք պատճառել, բայց դե, իսկապես, չգիտեմ:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Շատ լավն է, գերազանց, Լրկի ինքներդ եք պատրաստում:
 ՈՒԼԻՏԱ — Ես ձեր այդ խոսքերը, իհարկե, կատակի տեղ եմ ընդունում: Ուզում եք, վաղը թեյին ես ձեզ սեր բերեմ:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Շնորհ արեք, միայն թե կատաղած կովի:
 ՈՒԼԻՏԱ — Ա՛խ, ես ձեզ չեմ հասկանում:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Այսինքն՝ ոոմ: Մեղանում դա այդպես է կոչվում:
 ՈՒԼԻՏԱ — Կփնտրե՛մ:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Փնտրե՛ք, եթե սիրում եք...
 ՈՒԼԻՏԱ — Ահա դուք ասացիք՝ «եթե սիրում եք»: Գիտեք, թե ես ինչ կասեմ այդ մասին:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Ո՛չ, չգիտե՛մ:
 ՈՒԼԻՏԱ — Դուք ահա այդ բառն ինձ հեզնանքով ասացիք: Բայց դուք մեզ՝ կանանց մի՞ դատապարտեք:
 ՍԶԱՍՏԼԻՎՅԵՎ — Չե՛մ դատապարտում, ի՞նչ եք ասում: Ես շատ գոհ եմ:
 ՈՒԼԻՏԱ — Տղամարդիկ միշտ էլ գոհ են, քանի որ պատասխանատու չեն: Իսկ դուք մեր հալը հարցրեք: Որ հիշում ես՝ փշաքաղվում ես, դեռ կյանք շտեսած թունավորում էին: Մարդու գնալ չէին թողնում, սիրելը նույնպես ոչ մեկին չէր թույլատրվում... սիրո հարցում մեզ մոտ մեծ ար-

գելք կար: Մի բան էր մնում միայն՝ նմանվես տիրուհուն: Սողում, սողում ես տիրուհու առաջ, լայսինքն ամենաստոր արարածից էլ վատ. էդպես մի փոքրիկ արտոնութուն ես ձեռք գցում, սրտիդ քաջութուն ես տալիս: Ախր սիրտն էլ շնչավոր էակ է, նույնպես իրենն է պահանջում: Ա՛յ թե այլանդակում է այդ ճորտութունը մարդկանց: Իմ մասին ահա թե ինչ կասեմ... Բայց ձեզ համար ձանձրալի կլինի լսելը... Հասկանալի է, այս ամենի մեջ ստորութունից բացի ոչինչ չկա: Եվ չեմ ուզում ոչ ի՛մ տրամադրութունը գցել, ոչ էլ ձե՛ր, քանի որ դուք ինձ համար սիրելի մարդ եք: (Նայում է շուրջը): Հո ձեր պարոնք չէ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինձ ծեծելու է գալիս:

ՌԻԼԻՏԱ — Ախ, ի՛նչ եք ասում:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ես կնստեմ, իսկ դուք դեմս կանգնեք. մեկ էլ տեսար չնկատեց: (Նստում է): Ի՛նչ, գալի՞ս է, մոտենո՞ւմ է:

ՌԻԼԻՏԱ — Չէ, ետ գնաց, միայն այնպես վայրենավարի նայեց: Ի՛նչ հայացք ունի: Պարզապես սարսափելի է: Դող է ընկնում մարմինդ...

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Վեր է կենում): Բարբարո՞ս:

ՌԻԼԻՏԱ — Ինչպես եք ապրում այդպիսի պարոնի մոտ, սիրելիս:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Նա ինձ ի՛նչ պարոն: Ես նույնն եմ, ինչ որ ինքը: Մի գրան տես, ոնց է կոտրատվում, միակ շնորհքը կոկորդի լայնութունն է:

ՌԻԼԻՏԱ — Այդ ի՛նչ եք ասում: Նրա ազնվականութունը իսկական է, բնածին: Այդ բանից նրան հնարավոր չէ զբրկել:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛վ է նրան զրկում: Ես միայն ասում եմ, որ մենք երկուս էլ հավասար ենք, երկուս էլ դերասան ենք, նա՛ նեսչաստիվցե, ես՛ Սչաստիվցե, և երկուս էլ հարբեցող ենք:

ՌԻԼԻՏԱ — Դերասանե՞ր: Ախ, ի՛նչ եք ասում: Ի՛նչ եք ասում:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ավելի քան տասը տարի թափառում ենք Թուսաստանում, թատրոնից թատրոն, գնչուի պես: Եվ

ազգականուհուն չի այցելել, որովհետև ամաշում էր աչքին երևալ:

ՌԻԼԻՏԱ — Ա՛խ, սարսափելի՛ է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Եվ ահա հիմա էլ պայուսակն ուսին ոտքով վոլոզդա է գնում: Հո չի կարող առանց սպասավորի ներկայանալ, ազնվական է նա, դե ինձ էլ համոզեց: Ուրեմն և լավ վերաբերվիր: Գավառում ես նրանից դեռ մի բան էլ լավ համարում ունեմ, հիմա արծիվները մոդայից ընկել են:

ՌԻԼԻՏԱ — Այդ ինչե՛ր եմ լսում ձեզնից:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Մտածում է այստեղ հորաքրոջից մի բան օգտվի: Ասեր աղքատ եմ ու խնդրիր: Բայց արի ու տես, որ չէ՛ ամոթ է: Այսօր սխալ թույլ տվեց, չհաջողվեց փողը ձեռքում պահել, և դրա համար հիմա ինձ վրա է կատաղել: Շատ ցածր հոգու տեր մարդ է: Անցյալ անգամ գիմնագիստի հետ թուղթ էր խաղում, հրապուրել էր նրան: Ես թողեցի հեռացա նրանցից. կտանի նրան, մտածեցի, փողերը կառնի և դեռ կծեծի էլ: Այդպես էլ եղած կլինի, առաջին անգամը չէ: Նա որևէ մեկին կսպանի, նրա հետ բանտ կընկնես: Նրա շարժումներ ավազակային է, իսկական Պուգաչով:

ՌԻԼԻՏԱ — Լավ է, որ դուք ինձ ասացիք: Ա՛խ, սարսափելի է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ադյու, մոն պեղիր՛:

ՌԻԼԻՏԱ — (Վախեցած): Դե ես գնացի: Ա՛խ, սարսափելի՛ է:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ըհը՛, վախեցա՛ր: Իսկ ես շարունակ սատանաների դեր եմ խաղացել, բեմում այսպես ցատկոտել եմ: (Ցատկոտում է ու բղավում): Ո՛ւ, ո՛ւ:

ՌԻԼԻՏԱ — Աստվա՛ծ իմ: Դուք ինձ ներեցեք:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչի՛ս է պետք քո ներողութունը: Գետնի տակն անցնեք դուք ձեր կալվածքով: Ես կփախչեմ ձեզնից: Անիծվե՛ք դուք:

Ուփտան փախչում է:

Հիմա կհեռանայի, բայց վախենում եմ, գյուղում շներին հաշիվ չկա: Այս ի՛նչ անիծյալ ժողովուրդ է: Իրենք ուտելու

¹ «Մնաս բարով, իմ երջանկություն» — (Ազավաղված ֆրանսերեն):

բան շունեն, շներ են բազմացրել: Եվ հետո անտառով մե-
նակ գնալն էլ վախենալու է: Ստիպված տաղաժարում
պիտի դիշերեմ. պետք է այնտեղ գնալ, գրադարանն ու
մրգօղին այնտեղ է մնացել: Իսկ ինչպե՞ս խցկվես: Նա
գեռ քնած չէ. այնպիսի մենախոսութուն կկարդա, որ
Ֆիդելիոյ լավ դուրս կթռչես պատուհանից: Գնամ թրև
գամ պարտեղում, գոնե գեորգիները կկտրատեմ, էլի
հանգստութուն է: (Գնում է):

Պյոտր երկշտ քաճկում է քփերի սովեռում և չորս կազմը
նայում:

Տ Ե Ա Ր Ա Ն Գ Ի Ն Գ Ե Ր Ր Գ

Պյոտր, Էնոս Ակայուրա:

ՊՅՈՏՐ — Դե, կարծես տանը բոլորը պառկեցին քնելու: Այդ
անպիտանն է միայն թրև գալիս: էհ, թե դրան մի արծաթ
տասը հանոց տաս, հարազատ հորն էլ կծախի: Գիշերը
շատ է լուսավոր, Ակայուրան գուցե բոլորովին դուրս չգա,
վախենա, թե տեսնող կլինի: Իսկ ինչպե՞ս է պետք: Մի
անգամ էլ տեսնվեինք ո՞ւ վերջ: է՛հ դու, անազատ
կյանք: Սիրտս ոչխարի պոչի նման դողում է: Այս ի՞նչ
օրի եմ. և ձևքերս են դողում, և՛ ոտքերս: Գողութուն
անելն ավելի հեշտ է: Թե որ աղջկա հետ տեսնվելու հա-
մար ուրիշի տուն մտար, գողից էլ վատ ես: Ա՛յ քեզ,
սեր: Հայրիկն ահա ասում է, որ դա զվարճութուն է
միայն, մեկ-երկու տարվա զբաղմունք է, ասում է, ոչ
ավելի, իսկ հետո էլ անմիջապես սկսում է դրամագլխից
խոսել: Սպասիր, թե երբ է սերը միջիցդ դուրս գալու,
իսկ մինչ այդ տանջվիր: Նա չի՞ եկողը, նա՛ է:

Մտնում է Ակայուրան. տեսնելով Պյոտրին, վազում է
դեպի նա:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ա՛խ, դու այստե՞ղ ես:

ՊՅՈՏՐ — Վաղուցվանից եմ այստեղ քաշ գալիս: Բա՛րև: Ո՞ղջ
ես դեռ: (Համբուրում է):

ԱԿՍՅՈՒՇԱ — Տեսնում ես, որ ողջ եմ: Դե՛, շո՛ւտ ասա: Ժա-
մանակ չկա մեկ էլ տեսար՝ բռնվեցինք:

ՊՅՈՏՐ — Հորս հետ նորից խոսակցութուն ունեցանք:

ԱԿՍՅՈՒՇԱ — Դե, ի՞նչ է ասում, Շո՛ւտ պատմիր: Սիրտս
մղկտում է:

ՊՅՈՏՐ — Կակղում է: Սովորականի պես մի ժամ հայհոյեց:
Հետո թե՛ ռնչպես երևում է, — ասում է, — քեզ պես
հիմարի համար օժիտով աղջիկ չի գտնվի: Գոնե երկու
հազար տային, էլի բան էս: Լսո՞ւմ ես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Բայց, ախր, որտեղի՞ց գտնեմ:

ՊՅՈՏՐ — Ճարել է պետք:

ԱԿՍՅՈՒՇԱ — Բախա Պավլովնան չի տա: Չարժե ստորա-
նալ:

ՊՅՈՏՐ — Իսկ դու եղբորիցդ խնդրիր, Գեննադի Դեմյանիչից:

ԱԿՍՅՈՒՇԱ — Վա՛յ, ի՞նչ ես ասում: Վախենում եմ, հետո
գետինը մտնելու բան է:

ՊՅՈՏՐ — Ի՞նչ կարող ես անել, բանը բանից անցել է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Բայց ախր նրան ամեն ինչ պիտի խոստովա-
նեմ:

ՊՅՈՏՐ — է՛, ի՞նչ կա որ: Խոստովանի՛ր: Մոտ մարդ է, նա
է մեզ վերջին խոսքն ասելու:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո՛, վերջի՛նը:

ՊՅՈՏՐ — Բայց դե ո՞վ գիտի նրան: Մեղք գործելու համար
շատ բան պետք չէ: Տեսքից բարի պարուն է երևում: Բայց
դու արագացրու, վաղը լույսը բացվելուն պես: Իսկ
կեսօրին մենք հորս հետ կգանք, դու ինձ կասես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Լա՛վ, լա՛վ:

ՊՅՈՏՐ — Միայն թե խոսակցութունը երկար չձգես. թե էս-
պես ու էսպես, ուրիշ ճար չկա: Կա՛մ դես, կա՛մ դեն:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո՛, այո՛, պարզ է, ամաչելու ի՞նչ կա, եթե...

ՊՅՈՏՐ — Ի՞նչ, «երբ»:

ԱԿՍՅՈՒՇԱ — Երբ մահն է վրա հասնում:

ՊՅՈՏՐ — Դե՛, վե՛րջ տուր, ինչիս ես խոսում:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ահա թե ինչ, Պետրյա. այ այստեղ մի տեսակ
դատարկ է ամեն ինչ:

ՊՅՈՏՐ — Այդ ինչո՞ւ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Չեմ կարող քեզ ասել թե ինչու, ես ուսումնա-

կան շեմ: Դատարկ է, և վերջ: Իմ խելքով ես մտածում եմ, որ երեխա ժամանակվանից վիշտն ու թախիծը կըրծել են ինձ ու հոգիս կերել, էստեղից էլ՝ դատարկութունը: Անընդհատ մտածում եմ. ուրիշները մայր ունեն, տատ, դե գոնե դայակ կամ էլ ընկերուհի. համենայն դեպս՝ մեկը, որի հետ կյանքիցդ կխոսես: Իսկ ես ոչ ոք չունեմ, ահա և ամեն ինչ կտարվել է մեզս: Ես չեմ էլ լալիս, արցունք չունեմ և ոչ էլ թախիծ, և ահա ասում եմ քեզ. դատարկ է այստեղ,՝ սրտիս մեջ, Իսկ գլխումս լիքը միտք է: Մտածո՛ւմ եմ, մտածո՛ւմ:

ՊՅՈՏՐ — Իսկ դու վերջ տուր մտածելուն: Խելքիդ զոռ կտաս՝ փորձանք կգա:

ԱԿՍՅՈՒՇԱ — Չեմ կարողանում չմտածել, ուժ չկա: Թե որ մեկն ինձ համոզի, երևի լսեմ, գոնե մեկը առաջն առնելու: Եվ ամբողջ ժամանակ աչքիս շուր է երևում:

ՊՅՈՏՐ — Ի՞նչ շուր:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ահա թե ինչ, սիրելիս, շուրը ինձ շարունակ քաշում է:

ՊՅՈՏՐ — Օ՛յ, ի՞նչ ես ասում, վե՛րջ տուր:

ԱԿՍՅՈՒՇԱ — Զրոսնում եմ այգում, իսկ աչքս միշտ լճի կողմն է: Դիտմամբ հեռու եմ գնում, իսկ նա քաշում է ու քաշում՝ գոնե աչքս վրան զցել եմ ուզում: Իսկ որ հեռվից տեսա—շուրն, ախր, ծառերի մեջ փայլվում է— ինչ-որ ուժ ինձ ասես գրկում ու տանում է դեպի լիճ: Ուզում եմ վազեմ ու նետվեմ մեջը:

ՊՅՈՏՐ — Այդ ինչի՞ց է, ախր, էդ ցավը քեզ կպել:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՛նքս էլ չգիտեմ: Այ, ինչպես որ երեկ ասացիր, այնպես էլ մտքումս մնաց: Որ տանն էլ եմ նստած լինում, մեկ է՝ ինձ միշտ թվում է, թե իբր սուզվում եմ հատակը, և շուրջը շուրջս կանաչ է: Եվ ոչ թե մեջս հուսահատություն է լինում, ոչ թե հոգիս կործանել եմ ուզում, չէ, այդպիսի բան չկա: Ինչ արած, ապրել դեռ կարելի է, որ ետ եկա: Մեկ է, կկերակրեն ու կհազցնեն, թեկուզ վատ, բայց կանեն:

ՊՅՈՏՐ — Բայց դա ի՞նչ կյանք է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Կյանքն ի՛նչ: Ես առաջ էլ այդպես էի ապրում:

ՊՅՈՏՐ — Ախր էդպես շունն էլ է ապրում, կատուն էլ, մարդը պիտի որ լավ ապրի:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ախ, սիրելիս, բա ես ինչի՞ մասին եմ մտածում: Հենց նույն բանի: Որ կարելի է այդպես ապրել, բայց շարժե: Թե ինչպես այս օրն ընկա, չեմ հասկանում: Ախր ես տասնվեց տարեկան չեմ: Դեռ այն ժամանակ էլ խելքս գլխիս էր, և հանկարծ... Կարիքն ու անազատ կյանքը հոգիս ցամաքեցրին, դե հոգիս էլ մի քիչ զվարճանալ ուզեց, իր համար մի փոքրիկ տոն սարքել: Ահա թե, խենթուկս, քո պատճառով ինչքան ցավ եմ տանում: (Գրկում է նրան):

ՊՅՈՏՐ — Ախ, խեղճ իմ Ակսյուշա: Եվ որտե՞ղ ես դու սովորել այդպես սիրել: Եվ ինչի՞ց է, որ քո փառաբանքն այնպես է ձմլում հոգիս, որ ոչ մայրս և ոչ էլ որևէ մեկն աշխարհում... Միայն թե, խնդրում եմ... Ինձ համար ի՞նչ կա որ: Ես էլ քո ետևից... պրծում չունեմ, դուրս է գալիս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Դե, դա արդեն քո գործն է: Ես, արդեն չեմ իմանա, խղճալո՞ւ ես ինձ, թե՞ ծիծաղելու ես վրաս: Ես իմ ցավի գերին եմ, իսկ քոնը դու գիտես, դրանից ես թեթևություն չեմ զգա:

ՊՅՈՏՐ — Չէ, ավելի լավ է, դու դեռ սպասիր. գոնե մի քիչ, և մենք կապրենք մեր ազատությունը: Արի առաջ չընկնենք: Դեռ տեսնենք, թե եղբայրդ ի՞նչ է ասում:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իհարկե, թե որ հնարավորություն կա, ինչո՞ւ ձեռքից բաց թողնենք:

ՊՅՈՏՐ — Գուցե օգնի:

ԱԿՍՅՈՒՇԱ — Կարող է պատահել: Դու պարտեզում ոչ ոքի չտեսա՞ր:

ՊՅՈՏՐ — Գեներադի Դեմյանիչի կամարդիներն էր թրև գալիս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Դե, դու գնա, ժամանակն է արդեն:

ՊՅՈՏՐ — Իսկ դու, Ակսյուշա, ուղիղ տուն, որպեսզի... թե չէ... աստված քեզ պահպանի:

ԱԿՍՅՈՒՇԱ — Տո՛ւն կգնամ, տո՛ւն կգնամ, մի՛ վախեցի՛ր: Ինձ ուրիշ բան պետք էլ չի: Հիմա ես գոնե ինչ-որ սպասելիք ունեմ:

ՊՅՈՏՐ — Ճիշտ ես ասում: Դե, տես, հա՛:

Համբարձում են:

Հուլիս քեզ վրա է: (Գնում է):

Ակսյուշան ուզում է տուն գնալ, ջրջվում և տեսնում է Սշտապիվցիին, որը դուրս է գալիս տաղավարից:

Տեսարան վեցերորդ

Ակսյուշա, Նեսչաստիվցի, ճեսո Սշտապիվցի:

Նեսչաստիվցի — (Ինձն իրեն): Կի՛ն, շքնա՛ղ կի՛ն: (Մտանալով է Ակսյուշային): Դու կի՛ն ես, թե՞ սավեր:

Ակսյուշա — Եղբա՛յր:

Նեսչաստիվցի — Ա, տեսնում եմ, որ կի՛ն ես: Իսկ ես հիմա կուզենայի, այս հիանալի գիշերին, զրուցել անդրշիրիմյան բնակիչների հետ:

Ակսյուշա — Եղբա՛յր:

Նեսչաստիվցի — Շատ գաղտնիքներ, շատ տառապանքներ նրանք իրենց հետ տարան գերեզման: Մռայլ է հոգիս, ինձ կենդանի մարդիկ պետք չեն: Ողջերի հետ ես խոսելիք չունեմ: Ինձ այն աշխարհից եկածներ են պետք: Հեռացի՛ր:

Ակսյուշա — Եղբայր, ես էլ եմ շատ տառապել, ես էլ եմ տառապում:

Նեսչաստիվցի — Դո՛ւ:

Ակսյուշա — Ես: Ես շատ դժբախտ եմ:

Նեսչաստիվցի — Օ՛, եթե դու դժբախտ ես, եկ ինձ մոտ, գլուխդ դիր կրծքիս:

Ակսյուշան փարձում է երա կրծքին:

Ես քեզ կրկնակի եղբայր եմ՝ և՛ արյան, և՛ դժբախտության:

Ակսյուշա — (Մեկի գալով): Եղբա՛յր, ես մեղավոր եմ...

Նեսչաստիվցի — (Բարձրացնելով նրան): Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ իմ առջև: Մի՛թե դու կարող ես մեղավոր լինել: Դո՛ւ, այդպես ջահել, այդպես գեղեցիկ: Եվ ո՛ւմ առջև: Ես ի՛նչ Ակսյուշա — Ես մեղավոր եմ բոլորի առաջ, իմ առաջ: Ես ինչպես ես հիմա կուզենայի, այս հիանալի գիշերին, զրուցել անդրշիրիմյան բնակիչների հետ:

պես ջահել, այդպես գեղեցիկ: Եվ ո՛ւմ առջև: Ես ի՛նչ եմ: Ես մարդկության տականքն եմ, նրա հնոտիքը:

Ակսյուշա — Ես մեղավոր եմ բոլորի առաջ, իմ առաջ: Ես սիրում եմ...

Նեսչաստիվցի — Զավակս: Սիրիր ում ուզում ես: Աստված նրա համար է քեզ սիրտ տվել, որ սիրես:

Ակսյուշա — Ա՛խ, ի՛նչ եք ասում: Սիրել: Ես ինքնամոռաց եմ սիրում, բայց չե՞ որ պետք է ամուսնանալ նրա հետ, պե՛տք է, պե՛տք է:

Նեսչաստիվցի — Իսկ ո՞վ է քեզ խանդարում:

Ակսյուշա — Մարդիկ են խանդարում, իշխանություն ունեցող մարդիկ:

Նեսչաստիվցի — Իսկ դու նրանց մի լսիր: Ամուսնացիր նրա հետ, ում սիրում ես: Եվ թող քո զլխին լինի իմ օրհնանքը:

Ակսյուշա — Առանց օժիտի նա ինձ հետ չի ամուսնանում, հայրը նրան թույլ չի տալիս: Օժիտ է պետք, իսկ ես չունեմ:

Նեսչաստիվցի — Ի՛նչ հիմարություն: Երջանկությունը թանկ է փողից:

Ակսյուշա — Չկա ինձ երջանկություն առանց փողի:

Նեսչաստիվցի — Իսկ շա՛տ փող է պետք:

Ակսյուշա — Երկու հազար ոտքի:

Նեսչաստիվցի — Չնշին բան: Մի՛թե Ռախա Պավլուլնան կմերժի այդպիսի մի փոքրիկ խնդրանք:

Ակսյուշա — Կմերժի: Ողորմություն է համարում ինձ պահելն ու կերակրելը: Էլ ինչպե՞ս համարձակվեմ օժիտ խնդրել: Մի կտոր հաց կտան, իսկ փող՝ չէ:

Նեսչաստիվցի — Եվ այդպիսի շնչին գումարից է կախված աղջկա երջանկությունը, երջանկությունը երիտասարդ հոգու...

Ակսյուշա — Ոչ թե երջանկությունը, այլ կյանքը:

Նեսչաստիվցի — Կյա՞նքը: Օ՛, երկնային ուժեր: Դու այդպե՞ս ասացիր:

Ակսյուշա — Այդպե՛ս, եղբա՛յր:

Նեսչաստիվցի — Աստված իմ, վերջապիս: Մի՛թե ես կին

եմ տեսնում: Եվ թո սերը սովորական քմահաճույթ չէ՞:
Եվ դու պատրաստ ես ամեն մի զոհողութեան:

ԱԿՍՑՈՒՇԱ — Շատ զոհողութիւններ եմ արել հանուն այդ սիրո, իսկ իմ կյանքն այնքան դառն է, այնքան դառը, որ ափսոսալ էլ չարժեն:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Եվ դու երկյո՞ւղ էլ չունես:

ԱԿՍՑՈՒՇԱ — Ո՛չ մի երկյուղ, թեկուզ հենց հիմա...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Ձեռները տարածում է նրա վրա): Երկնային հրեշտակներ, առեք նրան ձեր թևերի տակ:

Ակսյոզան ծախելով ձեռները, գլուխը լուռ խոնարհում է կարճ դադար:

ԱԿՍՑՈՒՇԱ — Եղբայր, մի բարկացեք ինձ վրա: Իմ մասին վատ մի մտածեք: Ինձ համար այնքան դժվար է ձեզ ասելը...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ասա՛, ասա՛:

ԱԿՍՑՈՒՇԱ — Եղբայր, ինձ խաբեբայի, աղքատ ազգականուհի-մուրացիկի տեղ մի դրեք: Եղբայր, մենք մայրիկի հետ շատ աղքատ ենք ապրել: Ես երեսնա էի, բայց երբեք գլուխս չխոնարհեցի, ձեռք չմեկնեցի հարուստ ազգականներին. ես աշխատում էի: Հիմա, եղբայր, միայն ձեզ եմ խնդրում, և լավ է, որ գիշեր է, այտերիս վրա չի երևում ամոթը: Եղբայր, դուք հարուստ եք, միայնակ, ինձ երջանկութուն, ինձ կյանք պարգևեցեք: (Մեկի է իջնում):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Բարձրացնում է նրան հուզված և դողդոջուն ձայնով): Զավա՛կս, զավա՛կս:

ԱԿՍՑՈՒՇԱ — Եթե իմ մեղավոր սիրո համար սարսափը չի՞ներ, ես երբեք, երբեք... Եղբք ինձ հայր, ես բարի աղջիկ եմ, ազնիվ: Ես իմ փոքրիկ երեսնաներին կսովորեցնեմ օրհնել ձեզ և աղոթել ձեզ համար:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Օ՞, լո՛րի՛ր, լո՛րի՛ր: Ես հիմա բոլոր մազերս կպոկոտեմ: Օ՞, զավակս: Ես հանցագործ եմ: Ես կարող էի փող ունենալ, կարող էի օգնել քեզ, կարող էի քեզ երջանիկ դարձնել, բայց ես վատնեցի, շռայլեցի փողերս, տրորեցի կեղտի մեջ երիտասարդութեանս ու կյանքիս հետ: Եվ ասա հիմա, երբ պետք է, չունեմ: Եթե ես իմա-

նայի, եթե ես իմանայի, ես չոր հացով կսնվեի, ցնցոտիներ կհագնեի և յուրաքանչյուր ոտբլին կկարեի այդ ցընցոտիների մեջ: Մենք խմում, աղմկում, ներկայացնում ենք գոհճիկ, կեղծ կրքեր, պարծենում ենք մեր գինետունային հերոսութեամբ, իսկ այստեղ խեղճ քույրս կյանքի ու մահվան արանքում է: Լա՛ց, հարբեցող, լա՛ց:

ԱԿՍՑՈՒՇԱ — Եղբայր, եղբայր:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ների՛ր ինձ, ների՛ր: Ես քեզնից աղքատ եմ, ես ոտքով հարյուրավոր վերստեր եմ կտրել, որպես սրբի տեսնվեմ հարազատներես հետ: Ես ինձ չէի պահպանում, պահպանում էի այս զգեստը, որպեսզի վայելուչ հագնվեմ, որպեսզի ինձ դուրս շանեն: Դու ինձ մարդ ես համարում, շնորհակալ եմ քեզնից: Դու ինձնից հազարներ ես խնդրում, ես փող չունեմ: Քո՛ւյր, քո՛ւյր: Դու չպետք է ինձնից փող խնդրես: Այլ դո՛ւ ինձ չպետք է մերժես, երբ թակեմ լուսամուտդ ու պղնձյա հինգ կոպեկանոց մուրամ մի բաժակ օղու համար: Հինգ կոպեկ, ընդամենը հինգ կոպեկ: Ահա թե ով եմ ես:

ԱԿՍՑՈՒՇԱ — (Սիրտը բռնելով): Օ՛ֆ, օ՛ֆ: էլի՛, էլի՛, ցավ: էլի՛ սիրտս խաբվեց: Ախր ինչո՞ւ ես ինձ վերավորեցի: Եվ ես, հիմարս, հավատացի: Մի՞թե ինձ համար հույս կա: Մնաք բարով: (Հեռանում է օտորվելով, հետա ավելի ու ավելի արագ և վերջապես վազում է):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նայում է նրա ետևից): Ո՛ւր է գնում: Վազում է, գլխաշորը հանեց-դեն նետեց, նա լճի ափին է: Ո՛չ, ո՛չ, քո՛ւյր իմ: Դեռ վաղ է քեզ համար մեռնելը: (Վազում է):

Մտնում է Սչաստիվցեր:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — էդ ո՞ւր վազեց: Հո չգնաց խեղդվելու: Ա՛յ, լա՛վ կլիներ: Այդպես էլ նրան պետք է: Մտնեմ տաղավար, հավաքեմ գրադարանս և մնաք բարով: Մինչև լուսանալը կնստեմ թփերի մեջ և մարշ: Փող կա, փառք աստծո, կարողացա պարտք վերցնել, հաշողվեց, ի վերջու: Փող ճարելու լավ միջոց է դա. մինչև հիմա մի տեսակ բախտս չէր բերում, ժողովուրդը շատ է կասկածամիտ

գառել: Գե, հիմա կհասնեմ որևէ թատրոն: (Գնում է տաղավար):

Մտնում է նեսչաստիվցեր, օգնելով Ակադուշային, որն հագիվ է ֆայրում:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ, ո՛չ, զավակս: Որքան էլ մեծ լինի վիշտդ, չեմ թողնի, որ մեռնես: Դու պետք է ապրես, դու դեռ այնքա՛ն երիտասարդ ես: Վիշտը կերե՞լ է քեզ, ձանձրացրե՞լ է երիտասարդ կյանքը: Մոռացիր այդ վիշտը, թող այդ կյանքը: Նորը կսկսենք, քույր, փառքի ու արվեստի համար:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ զգում, ես մեռած եմ: Հանգստանալ եմ ուզում:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նստեցնելով նստարանին): Դու ոչինչ չգիտե՞ս: Ո՛չ, զավակս, դու մյուսներից շատ գիտես. դու փոթորիկներ գիտես, գիտես կրքեր, և դա բավական է:

ԱՎՍՅՈՒՇԱ — Արեք ինչ ուզում եք: Ինձ առջևում ոչինչ չի սպասում: Ո՛ւր եք կանչում ինձ, ինչո՞ւ եք կանչում, ի՞նչ կա այնտեղ, ես չգիտեմ: Սրանից վատ ի՞նչ պիտի լինի:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Այնտեղ էլ վիշտ կա, զավակս, բայց փոխարենը կա նաև ուրախություն, որին ուրիշ մարդիկ ծանոթ չեն: Ինչո՞ւ իզուր մաշես սեփական հոգիդ: Ո՞վ է այստեղ արձագանքելու հարուստ զգացմունքիդ: Ո՞վ է գնահատելու այդ մարգարիտ, այդ գոհար արցունքները: Ո՞վ, ինձնից բացի: Իսկ այնտեղ... Օ՛: Եթե այդ ջանքերի կեսը նետես հասարակությանը, թատրոնը ծափահարություններից կփվի: Քեզ ծաղիկների, նվերների մեջ կթաղեն: Այստեղ անպատասխան են մնում քո հեկեկանքները, քո հառաչանքները, իսկ այնտեղ, քո մի կաթիլ արցունքից հաղարավոր աչքեր կարտասվեն: Է՛խ, քույրի՛կս: Նայի՛ր ինձ: Ես աղքատ, խեղճ թափառական եմ, իսկ բեմի վրա ես արքայազն եմ: Ապրում եմ նրա կյանքով, տառապում եմ նրա խոհերով, նրա արցունքներով լալիս եմ խեղճ Օֆելիայի վրա և սիրում եմ նրան, ինչպես չեն կարող սիրել քառասուն հազար եղբայր¹:

¹ «Սիրում եմ նրան, ինչպես չեն կարող սիրել քառասուն հազար եղբայր» — Համլետի խոսքերը Շեքսպիրի համանուն ողբերգությունից:

Իսկ դո՛ւ: Դու ջահել ես, չքնաղ, աչքերիդ մեջ կրակ կա, խոսքիդ մեջ՝ երաժշտություն, շարժումներիդ մեջ՝ գեղեցկություն: Դու բեմ կբարձրանաս թագուհու նման և թագուհու նման էլ կիջնես բեմից, այդպես էլ կմնաս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես սպանված եմ, եղբայր, սպանված:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Դու կվերածնվես, քույր, նվագախմբի առաջին հնչյունները քեզ հարուստուն կտան:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իսկ Պետյա՞ն:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Քույր, դու կին ես, իսկ կանայք շուտ են մոռանում: Դու կմոռանաս նրան, ինչպես բոլորն են մոռանում իրենց առաջին սերը: Շատ գեղեցիկ երիտասարդներ, շատ հարուստներ կորսան քո ամեն մի հայացքը, քո ամեն մի խոսքը:

ՔԱՍՅՈՒՇԱ — (Գլուխը քափահարելով): Դա լավ չէ:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Այլևի՛ լավ, ավելի մեծ պատիվ քեզ համար: Դու թող, արհամարհանքով դեն հրիք հարուստի ոսկին և սիրիք աղքատ դերասանին: Վճռի՛ր, զավակս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինչպես որ կուզեք: Ես պատրաստ եմ ամեն ինչի:

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Դու իմ հպարտությունը կլինես, իմ փառքը: Իսկ ես քեզ հայր կլինեմ, զավակս, կլինեմ քո դայակը, քո աղախինը: Գնանք ինձ մոտ: Այսպիսի գիշերին քնելը մեղք է: Ինձ մոտ մի քանի դեբեր կան, ես կկարդամ քեզ համար: Այս գիշերը ես նվիրում եմ քեզ, այս գիշեր ես քեզ դերասանուհի կդարձնեմ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Գնա՛նք: (Գնում են դեպի տաղավար, նրանց դեմ է դուրս գալիս Աչաստիվցեր կապոցով):

ՆԵՄՉԱՍՏԻՎՅԵՎ — Կանգ առ, փախտական: Ես մեծահոգի եմ, ես ներում եմ քեզ: Ուրախացիր, Արկաշկա: Մենք դերասանուհի ունենք, մենք քեզ հետ կըրջենք բոլոր թատրոնները և կզարմացնենք ողջ Ռուսաստանը:

Գնում են տաղավար:

Գալիս են Գուրմիսկայան և Ուլիան:

Տ Ե Ա Ր Ա Ն յ Ո Ք Ե Ր Ո Ր Ղ

Գուրմիծովայա և Ուլիտա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գուր ասացի՞ր նրան:

ՈՒԼԻՏԱ — Հապա ինչպես, տիրուհի, ասացի, և շատ տակտով: Տիրուհին, ասում էմ, չի քնում, որովհետև անսովոր եղանակ է, զբոսնում է պարտեզում և նույնիսկ գուցե ձանձրանում է, քանի որ մենակ է, չկա մեկը, որ հետը ժամանակ անցկացնի: Իսկ դուք պառկել, խունջիկ-մունջիկ եք գալիս, այս բուրբից հետո էլ ի՞նչ կավաւեր եք: Նա անմիջապես վեր թռավ և սկսեց հագնվել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լա՛վ:

ՈՒԼԻՏԱ — Եվ մեկ էլ, տիրուհիս, նույնիսկ շփտեմ, թե ինչպես հայտնեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասա, ինչ է եղել:

ՈՒԼԻՏԱ — Օրիորդը թաքնվել է ինչ-որ տեղ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնացե՛լ է:

ՈՒԼԻՏԱ — Սենյակում չկա, անկողինն էլ բացված չի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շատ էլ լավ է:

ՈՒԼԻՏԱ — Ինչպե՞ս թե, տիրուհիս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հենց այդպես: Ես շատ ուրախ եմ: Նա ինձ վաղուց է ձանձրացրել, այս ինչքան ժամանակ է շփտեի, թե ինչպես դուրս անեմ տանից: Իսկ հիմա ահա և պատճառ կա: Ինչո՞ւ պիտի ես նրան խղճամ, եթե ինքն իրեն չի խղճում: Ես ասում էի, որ նա այդ տղային արժանի չէ:

ՈՒԼԻՏԱ — Արժանի չէ, արժանի չէ... Շատ է ցածր: Ես էլ քիչ չէի զարմանում, թե ինչպես այդ գեղեցիկ, կիրթ երիտասարդին այդպիսի...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, դա քո գործը չէ:

ՈՒԼԻՏԱ — Լսում եմ: Ես դեռ մի ուրիշ բան էլ իմացա, միայն թե մարդ սարսափում է նույնիսկ բարձրաձայն ասել: Հենց որ լսեցի, սարսափի մեջ ընկա, ամբողջ մարմնով սկսեցի դողալ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Քանի անգամ եմ քեզ զգուշացրել, որ այդպիսի հիմար բռնեք չասես: Ես ինքս նյարդային կին

եմ: Դու միշտ ինձ նախապես վախեցնելով հիստերիկայի ես հասցնում, հետո մի դատարկ բան ասում:

ՈՒԼԻՏԱ — Դատարկ բան է, տիրուհիս, դատարկ բան, իզուր շանհանգստանաք: Գեննադի Դեմյանիչի մասին է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Եվ ի՞նչ:

ՈՒԼԻՏԱ — Ախր նա ձեզ խաբեց. նա պարոն չէ, այլ՝ դերասան, և իր տոհմական ազգանունն է փոխել. հիմա Նեսուլաստիվցե է կոչվում: Եվ ոչ այնքան թատրոնում է լինում, որքան իրեն տալիս է հարբեցողության: Եվ ունեցած ամբողջ հագուստն էլ վրայինն է, այդ մեկը ես հաստատ գիտեմ. և այստեղ է եկել ոտքով, մաղախը ուսին: **ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ուրեմն Նեսուլաստիվցե է ազգանունը. լսե՛լ եմ, լսե՛լ եմ: Դե, դա ավելի լավ:

ՈՒԼԻՏԱ — Եվ նրա սպասավորն էլ է դերասան, միայն թե, տիրուհիս, դերասաններից ամենաչարքաշը, անընդհատ սատանաներ է ներկայացնում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ավելի՛ լավ, ավելի՛ լավ: Այդ ամենը որքան լավ դասավորվեց ինձ համար:

ՈՒԼԻՏԱ — Ինչո՞ւ է լավ, տիրուհիս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հենց նրանով, որ վաղն առավոտյան արդեն այստեղ չեն լինի: Իմ տունը հյուրանոց չէ, գինետուն չէ այդպիսի պարոնների համար:

ՈՒԼԻՏԱ — Իսկապես, տիրուհիս: Շնորհ արեք ձեր ձեռքը: (Կամաց): Ալեքսեյ Սերգեյիչը գալիս է: (Մի կողմ փաշվելով): Ահա խնդրեմ, պատկեր է, կարելի է ասել, և ոչ թե պարոն (Գնում է)

Մտնում է Բալանովը:

Տ Ե Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Գուրմիծովայա և Բալանով:

ԳՈՒԼԱՆՈՎ — (Փաթկոտ ուղղվելով): Ինչո՞ւ նախօրոք ինձ չհրամայեցիք, Ռախա Պավլովնա: Դուք ինձ պիտի ասած լինեիք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչը:

ԲՈՒՂԱՆՈՎ — Որ գիշերները սիրում եք գրոսնել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ քո ի՞նչ գործն է: Ես սիրում եմ բնու-
թյունը, իսկ դու գուցե շես սիրում:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ես, ախր, ինչպես կհրամայեք: Եթե մենակ ձեզ
համար ձանձրալի է...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Իսկ դու շե՞ս ձանձրանում այսպիսի գի-
շերին: Քեզ չի՞ հուզում ոչ լուսինը, ոչ այս օդը, ոչ այս
թարմությունը: Նայիր, թե ինչպես է փայլում լիճը, ինչ-
պիսի ստվերներ են նետել ծառերը: Դու անտարբե՞ր ես
այդ բոլորի նկատմամբ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ո՛չ, ինչպե՞ս թե անտարբեր: Ես չգիտեմ միայն,
թե ինչ է ձեզ պետք, ինչպես է ձեզ համար հաճելի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա, սիրելիս, դու ուզում ես անսխալ խա-
ղալ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Ես, թվում է, աստված գիտե, թե ինչ կտայի,
միայն թե իմանայի, ինչ եք սիրում: Եվ հենց այդ ուղղու-
թյամբ կշանայի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, իսկ ինչ ես կարծում, ես ի՞նչ եմ սի-
րում: Հետաքրքիր է լսել:

ԲՈՒՂԱՆՈՎ — Լուսինը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչ միամիտն է: Ա՛խ, սիրելի՛ս, լուսինը
ես սիրում էի, բայց դա վաղուց անցել է. տասնվեց տա-
րեկան շեմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — (Մառածելով): Ազգականներին:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հա՛-հա՛-հա՛, Խոնարհաբար խնդրում եմ:
Սա ինձ ծիփաղից կսպանի: Ա՛յ քեզ միամտություն: (Մի-
ծաղում է): Ինչպիսի՞ սիրալիրություն՝ «ազգականե-
րին»:

ԲՈՒՂԱՆՈՎ — Մեղավո՞ր եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասա՛, ասա՛, ես հրամայում եմ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Չգիտեմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Քե՛զ, հիմա՛ր: Քե՛զ:

ԲՈՒՂԱՆՈՎ — Այո-ս... Ես ինքս էլ էի մտածում, բայց չհա-
մարձակվեցի: Դուք վաղուց պիտի... թե չէ ես այստեղ
ինչքան ժամանակ է... Այ այդպես լավ է, Ռախսինկա:

Դու վաղուց պիտի... (Գրկում է Գուրմիծակայային և
ուզում է համբուրել):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Ետ նրեղով նրան): Ի՞նչ ես անում, գրժ-
վեցի՞ր: Հեռացիր այստեղից: Տգե՛տ, սրիկա՛, լակո՛տ:
(Գնում է):

ԲՈՒՂԱՆՈՎ — Հիմարս այս ի՞նչ արի: Հենց վաղն ինձ... այս-
տեղից... (Բղավում է Գուրմիծակայայի ետևից): Մեղա-
վոր եմ: Վաղն իսկ վզակոթիս տվեք: Չի լսում: (Ավելի
բարձր է բղավում): Մեղավո՞ր եմ: Ոչի՛նչ չի ուզում լսել:
(Ընկնում է նստարանին):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՆՁՆԸ

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ:

ՄՈՂՆՈՎ:

ԲՈԳԱՆՎ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ:

ԲՈՒՂԱՆՈՎ:

ՎՈՄԻԲՐԱՏՈՎ:

ՊՅՈՏԻ:

ԱԿՍՅՈՒՇԱ:

ԿԱՐՊ:

Առաջին գործության ղեկուցահան:

Տ Ե Ս Բ Ի Ն Կ Ե Մ Բ Ի Ն Կ Ե Մ Ե Ի Ն

Կարպ, հետո Բալանով:

ԿԱՐՊ — (Սեղանից հավաքում է զավաթները և տեսնում է
Գուրմիծակայայի գանձատուփը): Տես, է, մոռացել է իր
գանձատուփը, հետո էլ դեսուդեն է ընկնելու փնաքի:
Ավելի լավ է ձեռք չտամ, թող էստեղ մնա:

Մտնում է Բալանովը:

Չե՞ք սպասի, մինչև Գեներադի Գեմյանիչը թեյի դա:
ԲՈՒՒԱՆՈՎ — Այդ էր պակաս: Շատ պետքս է:

ԿԱՐՊ — Ինչպես կամենաք:

ԲՈՒՒԱՆՈՎ — Ես քեզ խնդրում եմ, Կարպ, որ իմ հրամանները լավ կատարես: Ես տանն անկարգություններ չեմ հանդուրժի: Ես ձեզ համար Ռախսա Պավլովնան չեմ. ոչ մեկիցդ ծպտուն չլսեմ, թե չե՞ մա՛րջ տնից: Իմ աչքում ամեն մի մեղք հանցանք է:

ԿԱՐՊ — Ի՞նչ արած, պարոն, կկատարե՞նք: Մենք դրանից վատն էլ ենք տեսել: Կապրես աշխարհում, ամեն ինչ կտեսնես: Այնպիսի՛ հրաշքներ են լինում որ:

ԲՈՒՒԱՆՈՎ — Եվ ոչ էլ ավելորդ խոսեք: Ես դա չեմ սիրում:

ԿԱՐՊ — Կարելի է և շխոսել, ավելի լավ: Ի՞նչ կա այստեղ խոսելու: Ինչի՞ մասին: Պարզ գործ է:

ԲՈՒՒԱՆՈՎ — Դե, կարող ես գնալ:

Կարպը գնում է: Մտնում է նեշաստիվցեր:

Տ Ե Ս Բ Ա Ն Ի Ե Ր Կ Ր Ո Ր Պ

Նեշաստիվցի և Բուլանով:

ԲՈՒՒԱՆՈՎ — Բարև ձեզ, պարոն Նեշաստիվցի:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Նեշաստիվցի՞: Դու գիտե՞ս, որ ես նեշաստիվցին եմ:

ԲՈՒՒԱՆՈՎ — Գիտե՞մ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Շատ ուրախ եմ, եղբայր, ուրեմն դու գիտես, թե ում հետ գործ ունես, ուստի և քեզ զգուշ ու հարգանքով կպահես:

ԲՈՒՒԱՆՈՎ — Իսկ ի՞նչ է պատահել որ: Գավառական դերասան էլ ո՞նց կլիներ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե, ուրեմն, դու չգիտես, թե ով է նեշաստիվցիը և ինչպես է պետք խոսել նրա հետ: Ափսո՛ս! Ես ստիպված կլինեմ քեզ խելք սովորեցնել, մի բան, որ:

իհարկե, ինձ համար տհաճ կլինի, իսկ քեզ համար առավել տճահ:

ԲՈՒՒԱՆՈՎ — Է՛հ, դա դեռ հայտնի չէ: Չե՞ որ հին ժամանակներում էր ֆիզիկական ուժը շատ բան նշանակում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Հիմա ի՞նչ, ուզում ես, որ քո դեմ հրազե՞ն գործածեմ: Ո՛չ, եղբայր, ես հասարակ մարդ եմ և հասարակ միջոցներ եմ սիրում, բնական:

ԲՈՒՒԱՆՈՎ — Թողնենք այս խոսակցությունը: Թույլ տվեք իմանալ, ի՞նչ եք կամենում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ո՛չ քեզ, իհարկե:

ԲՈՒՒԱՆՈՎ — Իսկ ո՞ւմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ինչ է, դու ի ծնե հիմա՞ր ես, թե՞ այսօր քեզ հետ հանկարծ պատահեց: Ո՞ւմ, Ո՞ւմ: Դու այս տանը նույնն ես, ինչ որ օպերաներում անհայտները, իսկ ես այստեղ հարազատ ընտանիքում եմ: Ես եկել եմ հորեղբորս կնոջ մոտ թեյ խմելու:

ԲՈՒՒԱՆՈՎ — Ներեցե՛ք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ի՞նչը ներեմ: Ահա թե ինչ. դու պայուսակն ուսդ գցիր, քարետախտակն էլ կոճակիցդ ամրացրու ու գնա ուսումդ շարունակելու:

ԲՈՒՒԱՆՈՎ — Ներեցե՛ք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե՛, ներո՞ւմ եմ:

ԲՈՒՒԱՆՈՎ — Ինձ չէ, Ռախսա Պավլովնան է ներողություն խնդրում: Նա չի կարող ձեզ ընդունել. նա այնքան էլ առողջ չէ և զգում է, որ այցելություններն ու զանազան հյուրերը, թեկուզ և հարազատները, հիմա շատ են հոգնեցնում իրեն:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Նա ինձ վճնդո՞ւմ է: Բայց ի՞նչն է պատճառը:

ԲՈՒՒԱՆՈՎ — Դա ինձ չի վերաբերում: Ընդհանրապես նա խնդրում է ազատել իրեն ձեր ներկայությունից, որը դառնացնում է նրան:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե՛, ի՞նչ արած: Ես սիրում էի նրան, ես նրան մոր տեղ էի ընդունում: (Մտքում է արցունք): Հետո՛ ինչ, որ դերասան եմ: Ամեն մեկը պարտավոր է անել այն, ինչ կարողանում է: Ես, ախր, ավազակ չեմ, ես ազնիվ, ծանր աշխատանքով եմ վաստակում իմ հացը: Ես

եկել եմ նրանից ոչ թե ողորմութիւն խնդրելու, այլ շերմ խոսք: Վիրավորական է... Օ՛, կանա՛ջք, եթե ուզում էր ինձ վիրավորած լինել, մի՛թե քեզանից վատ ոչ որի չզրտավ:

ՔՈՒԼԱՆՈՎ — (Բորբոքված): Լսե՛ք, ողորմա՛ծ տեր:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Օ՛, աստվա՛ծ իմ: Սա դեռ խոսում է: Լսիր դու, գիմնազիստ, դպրոցական, ծխական դպրոցի աշակերտ: Հարգելով այս տունը, ես քեզ ներում եմ, բայց եթե դու ուրիշ տեղ ձեռքս ընկար...

ՔՈՒԼԱՆՈՎ — Մենք դեռ կտեսնենք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Լո՛ր, բազմապատկման աղյուսակ, Կոո-եկլիոս Նեպոտ՝, Պյութագորասի շալվար: Դու փոխիր իմ հրեշտակի պատկերը և օր ու գիշեր աղոթիր, որ չհանդիպենք: Իսկ որտեղ որ ինձ տեսար, փախիր առանց ետ նայելու, ուխտ ու աղոթք անելով:

ՔՈՒԼԱՆՈՎ — Ախր, այդ ինչե՛ր եք խոսում: Կամա՛ց: Ռախսա Պավլովնային կանհանգստացնեք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Նա ինքն է մեղավոր. ինչո՞ւ է ինձ մոտ մարդու փոխարեն կատվի ձագ ուղարկում: Կատվի ձագի հետ հանգիստ խոսել չի լինում:

ՔՈՒԼԱՆՈՎ — Այո՛, կարծեմ խոսելու բան էլ չկա:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Խոսելու բան ունեմ թե չէ, դա քո խելքի բանք չէ, դու դեռ տհաս ես:

ՔՈՒԼԱՆՈՎ — Եթե որե՛կ բան եք ուզում ասել Ռախսա Պավլովնային, ինձ ասեք, ես կհաղորդեմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դու, ախր, ի՞նչ ես: Ռախսա Պավլովնայի գինակի՞րն ես, մանկլավի՞կն ես, ինչ է: Մենեստրա՞լը², Դե, վերջապես, սուրհանդա՞կը, խեղկատա՞կը: Խոսի՛ր:

ՔՈՒԼԱՆՈՎ — Թե ինչ եմ ես, դուք հետո կիմանաք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չե՛մ ուզում: Դե, ով էլ որ լինես, հաղորդիր Ռախսա Պավլովնային, որ ես նրա վրա չեմ բարկանում, որ ես կուղենայի հարազատի նման հրաժեշտ տալ: Բայց եթե նա չի ուզում, աստված իր հետ:

ՔՈՒԼԱՆՈՎ — Լա՛վ, ես կասեմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Նկատում է գանձատուփը: Ինքն իրեն):

Այստեղ է, դա պետք է ընդունել ի գիտութիւն: Գե՛, սպասի՛ր:

ՔՈՒԼԱՆՈՎ — Ուրիշ ոչի՞նչ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ոչի՞նչ: Մնաս բարով, քարեգրիչ: (Գրեում է):

Մտնում է Գուրմիսկայան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Գուրմիսկայա և Բուլանով:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, սրանից հետո նա այլևս այստեղ ոտք չի դնի: (Նստում է լուսամուտի մոտ): Իսկ դու, խոսելու ձև ու տոն ունես. խոստովանում եմ, չէի սպասում:

ՔՈՒԼԱՆՈՎ — (Քայլում է, ձեռքերը ետևում դրած): Ամեն ինչ կախված է իրադրութիւնից, Ռախսա Պավլովնա: Ես ի՞նչ էի քո մոտ: Քո հացին մնացած կենվոր, մի շատ կեղծ վիճակ: Համաձայնվիր, որ այդպիսի մեկի համար իրեն արժանապատվութիւն մը պահելը շատ դժվար է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Սակայն երեկվա համար ես քեզ վրա բարկացած եմ:

ՔՈՒԼԱՆՈՎ — Դու, Ռախսա, դիր քեզ իմ տեղը: Ես այնպե՛ս ուրախացա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ամեն ինչին ձև կա, բարեկամս: Դու պատկերացրու միայն, թե ինչպես վիրավորեցիր ինձ քո վարմունքով: Դու ինչի՞ տեղ էիր դրել ինձ: Ինչպես կարողացար քեզ թույլ տալ: Իմ համբավը քեզ հայտնի է: Ամբողջ գավառն է ինձ հարգում, իսկ դու...

ՔՈՒԼԱՆՈՎ — (Անկաշկանդ համբուրում է նրա ձեռքը): Ների՛ր ինձ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ներում եմ, բարեկամս, ներո՛ւմ եմ: Ընդհանրապես ես շատ ներողամիտ եմ, դա իմ թերութիւնն է:

¹ Մ. Ք. ա. 1-ին դարի հռոմեացի գրող: Նրա ստեղծագործութիւնները սուտերեն էին թարգմանվում լատիներենի դասերին:

² Թափառական բանաստեղծ — կրածիշտ միջնադարում:

է: Բայց դու միշտ հարգիր կնոջ նրբանկատությունը, նրա անարատ զգացումը:

ԲՈՒԼԱՆՈՎ — Հասկանալի է, ես դեռ լակոտ եմ: Ի՞նչ խոսք: Բայց թո սերը, թո փորձառությունը կօզնեն: Ինձ պետք է միայն ամուր հիմնվել, կտեսնես, թե ինչպես կպահեմ ինձ. ամբողջ գավառը բուռս եմ հավաքելու: Իսկ ինչ վերաբերում է թո շահերին, Ռախսա, հավատա, որ...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հավատո՞ւմ եմ, հավատում եմ, սիրելիս: Գնա հրամայիր, որ ինձ մոտ կանչեն Ակսյուշային:

ԲՈՒԼԱՆՈՎ — Այո՛, այդ աղջկա մասին պետք է մտածել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Նրա մասին մտածելու ի՞նչ կա: Մանավանդ քեզ համար, բարեկամս: Դա քեզ բոլորովին չի վերաբերում: Դու հիմա արդեն պետք է բոլորովին մոռանաս նրա մասին: Նա գիշերը փախել է տնից, նրանից պետք է ազատվել:

ԲՈՒԼԱՆՈՎ — Նա եղբոր մոտ է եղել, Գեննադի Դեմյանիչի, որը նրան ամբողջ գիշեր մենախոսություններ է արտասանել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դո՛ւ որտեղից գիտես: Մի նայիր աչքերիս, նայի՛ր:

ԲՈՒԼԱՆՈՎ — Տաղավարի կողքով անցնելիս տեսա:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես քեզ հավատում եմ: Բայց և այնպես նա այստեղ մնալ չի կարող:

ԲՈՒԼԱՆՈՎ — (ժպտալով): Դու սկսում ես նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ավելորդ չէ, բարեկամս. դու դեռ այնքան շահել ես, որ թո տեղը պատասխան տալ չես կարող, ոչ էլ ես կարող եմ լինել քեզ վստահել:

ԲՈՒԼԱՆՈՎ — Բայց ախր չի կարելի նրան փողոց քշել, նա ոչ ոք չունի: Լավ կլիներ մարդու տալ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց որպեսզի մեր տանն ամուսնացնես և որպեսզի վայելուչ լինի, օժիտ պիտի տաս: Իսկ ես ի՞նչ պարտավոր եմ նրա համար ծախսեր անել: Այդ ի՞նչ ավելորդ շոռայություն է:

ԲՈՒԼԱՆՈՎ — Ինքնին հասկանալի է: Չէ, հիմա արդեն, խնդրում եմ, Ռախսա, ոչ մի ավելորդ ծախս: Մեկ էլ տեսար մեկն ուզեց առանց օժիտի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Օ՛, դա ուրիշ: Դրանից լավ բան: Բոլոր

կոնվենանսները՝ կպահանջվեին և ծախսն էլ քիչ կլիներ: Ես հարսնեմայր կլինեի, դու՛ հարսնեհայր. տանը երեկո կկազմակերպեինք, հարսնատես, կորհնեինք երիտասարդներին, և աստված նրանց հետ: Ե՛վ բարերարություն կլիներ այդ ամենը, և՛ էժան կնստեր:

Մտնում է Ակսյուշան:

Ահա և ինքը: Գնա՛, բարեկա՛մս, գնա՛:

Բուլաեովը գնում է:

Տ Ե Ս Բ Ի Ն Ը Ն Ի Ն Ե Ր Դ

Գուրմիսկայա և Ակսյուշա:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ի՞նչ եք կամենում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Կանգնում է): Լսիր, Ակսյուշա, ես չեմ ուզում, որ խաբված լինես: Դու ապրում ես այստեղ և, ինձ թվում է, երևակայում ես, թե դա կարող է անվերջ շարունակվել: Մոլորվելուդ մեջ մեղավորը ես եմ. եղավ ժամանակ, երբ ես մտածում էի քեզ կնություն տալ Ալեքսեյ Սերգեյիչին: Հիմա քեզ պետք էլ չէ մտածել այդ մասին:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես չեմ էլ մտածում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես քեզ չեմ հավատում, բայց նշանակություն չունի: Շատ շուտ ես տեսա, որ դուք հարմար գույք չեք: Ես քեզ ուղղակի կասեմ. դու արժանի չես այդ մարդուն: Նրա մասին երազելն անգամ հիմարություն է թո կողմից: Ի՞նչ ես լռում:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես լսում եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այդպիսի փեսացուները ձեզ նմանների համար չեն, սիրելիս: Ես չգիտեմ, գուցե նա նույնիսկ սիրահետել է քեզ...

ԱԿՍՅՈՒՇԱ — Գուցե:

¹ Քաղաքավարության կանոնները — (Ֆրանս.):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց դու հասկացիր, որ դա ոչինչ չի նշանակում, Դա պարզապես բնահաճույք է, կատակ, Գուցե դո՞ւ էլ ես հետը կողկետություն արել:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ո՛չ, դա չի կարող պատահել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ընդունե՛նք: Բայց ես քեզ պետք է ասեմ— հաճելի կլինի քեզ, տհաճ կլինի, իմ գործը չէ— դու նրան դուր չես գալիս: (Ինճե իրեն): Ահա՛, սիրելիս:

ԱԿՍՅՈՒՇԱ — Շատ ուրախ եմ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ուրա՛խ ես: Դու խորամանկ աղջիկ ես, բայց ինձ խաբելը դժվար է: (Ինճե իրեն): Սպասիր, հիմա ավելի ցավոտ կխոցեմ: (Ակսյուշային): Քեզ ուրիշ բան էլ ասեմ. նրան ուրիշն է դուր գալիս: Դե ի՞նչ: Հաճելի՞ է քեզ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Իսկ իմ ի՞նչ գործն է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու մի անհանգստացիր, ես թույլ չեմ տա, որ ինձ խաբեն: Նա հիմա քո փեսացուն չէ, դուք օտար մարդիկ եք և, ուրեմն, նույն տանը ձեզ չի կարելի ապրել:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինչպես կամենաք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու պետք է հեռանաս իմ տանից:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ե՞րբ կհրամայեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց ո՞ւր ես գնալու:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես շատ շնորհակալ եմ ձեզինից ձեր բարերարությունների համար, բայց, երբ թողեցի ձեր տունը, կխընդրեմ այլևս չանհանգստանալ իմ մասին:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց գուցե դու մտադիր ես մոտերքում որևէ տե՞ղ բնակվել:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Ինճե իրեն): Խանդում է պառավը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչ ես շշնջում: Գուցե քաղա՞ք տեղափոխվես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Կարող է պատահել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց դա հնարավոր չէ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այդ ինչո՞ւ: Զէ՞ որ քաղաքը, Ռախսա Պավլովնա, ձեր տիրույթների մեջ չի մտնում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Բայց դա սարսափելի կլինի: Շա՛տ է մոտ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո, հեռու չէ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լսիր, Ակսյուշա, սիրելիս, որևէ հեռու տեղ

դու ազգականներ շունե՞ս, Գնա նրանց մոտ. ես քեզ իմ հաշվին կուղարկեմ: Ես քեզ համար շատ եմ վախենում, հոգյակս, Ալեքսիսն այնքան թեթևամիտ տղա է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո, շատ է թեթևամիտ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու նկատե՞լ ես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինչպե՞ս չնկատեմ: Հերիք էր, որ միայն ուզե-նայի...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ահա, ինքդ ես ասում: Լսիր, սիրելիս: Հապա մի մոտ արի: (Գրկում է նրան): Դե, արա այդ բանն ինձ համար:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ձեզ համա՞ր: Դա ուրիշ բան է, այդպես էլ կասեիր: Թե չէ ինչնեիրիդ է պետք-պահել ինձ և թաքուն հետևել: Պարզապես դուք խանդում եք: Դուք երևելի կին եք, իսկ ես փողոցից վերցված աղջիկ, և դուք խանդում եք ինձ ձեր սիրեկանի հանդեպ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այդ ի՞նչ խոսքեր ես ասում:

ԱԿՍՅՈՒՇԱ — Այո: Ես ճիշտ եմ ասում: Կյանքում գոնե մի անգամ խոստովանենք: Թե չէ միշտ և բոլորի համար սուրբ եք, իսկ մենք՝ մեղսագործներ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Հոգիս, ես էլ կին եմ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Խոստովանե՛ք: Խոստովանե՛ք, և ես ձեզանից կփախչեմ հազար վերստ հեռու:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու ուզում ես, որ ես քո առաջ բացեմ իմ թուլությունը: (Գրկում է նրան): Այո՛, ես խանդոտ եմ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ինձ միայն դա էր պետք: Ես ձեզանից հեռու եմ հեռո՞ւ, հեռո՞ւ: (Ուզում է համբուրել նրա ձեռքը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչի՞ համար, սիրելիս, ինչի՞ համար:

ԱԿՍՅՈՒՇԱ — Աղուհացի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ախ, պետք չէ, պետք չէ: (Համբուրում է նրան): Աստված թող քեզ ամենայն երջանկություն տա:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ես գնամ պատրաստվեմ: (Գնում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Նստում է պատուճանի մոտ): Դե, փառք, աստծո, հիմա ամեն ինչ կարգավորվեց, և ես լիովին կարող եմ վայելել իմ երջանկությունը: Ինչքան տհաճություններ ապրեցի ազգականների հետ այդ հիմար կա-

տակերգութեան ձեռնից: Եվ տեղն էր: Բայց փոխարենը հիմա ես լրիվ հանգիստ եմ: Այնքսիսը կալվածքը կղեկավարի, իսկ ես կզբաղվեմ բարի գործերով: Գրա համար գումար կնախատեսենեմ, իհարկե, ոչ մեծ, և լրովին իմ հետաքրքրություններով կապրեմ:

Մտնում է Կարպը:

ԿԱՐՊ — Գեներադի Դեմյանիչը ցանկանում է ձեզ տեսնել: ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասա, որ ես...

ԿԱՐՊ — Նա այստեղ է արդեն և ոչ մի պատճառ չի ուզում լսի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Աստված իմ, դարձյա՛լ:

Մտնում է Նեչաստրիվցը ճանապարհադաշտի ճազուտով, իջեցնում է ճամպուրակն ու դնում անկյունում, այնտեղ է դնում նաև ձեռնափայտը:

Տեսարան հինգերորդ

Նեչաստրիվցե, Կարպ և Գուրմիժսկայա:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Գնա՛, Կարպ, և ոչ մեկին ներս չթողնես: Ասա, որ մենք զբաղված ենք:

ԿԱՐՊ — Լսում եմ: (Գնում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչպիսի՞ կոստյում:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Ճամփորդական է: Մենք հետիոտն ճանապարհորդներ ենք: Այս վերարկուն իմ հին բարեկամն է ու ընկերը: Վատ եղանակներին ես այս վերարկուով ծերունի կիրի՛ նման թափառել եմ Նովոռոսիայի տափաստաններում: Փոթորկալի գիշերներին ևս հաճախ ապաստան եմ որոնել, և ինձ ընդունել են այս վերարկուով, ընդունել են օտարներն ավելի լավ, քան հարազատները: Մնաք բարով:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գնաս բարով, բարեկամս:

¹ Կր — Շեքսպիրի «Արքա Կր» ողբերգության գործող անձ:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Երկու խոսք միայն և այլևս ձեզ երբէք չեմ անհանգստացնի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես լսում եմ: (Վերցնում է զանգը):

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Այդ ի՞նչ է: Ուզում եք զանգահարե՞լ: Դեռ վաղ է: Տվեք ինձ զանգը: (Վերցնում է): Երբ որ պետք եղավ, ես ինքս կզանգեմ: Մեզ վկաներ պետք չեն: Հնդհակառակը, հորաքույր իմ, աշխատեք, որ ոչ ոք չմտնի այստեղ, մանավանդ Բուլանովը, եթե միայն ձեզ համար թանկ է նրա շնչին կյանքը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լավ, ես ոչ մեկին ներս կանչել չեմ հրամայի: (Ինքն իրեն): Ա՛խ, երա՛զ:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Եվ հիանալի կլինի: (Զանգը դնում է սեղանին և նստում է սեղանի մոտ դրված աթոռին):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Նկատելով սեղանին դրված իր գանձատուփը): Ես մոռացել էի: (Շատ սիրալիբ տոնով): Լսիր, իմ բարեկամ Գեներադի, բարի եղիր նեղություն կրել, տո՛ւր ինձ այդ արկղիկը:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Մի անհանգստացեք, նա այստեղ էլ իրեն վատ չի զգում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, եթե չես ուզում, ինքս կեղնեմ վերցնելու:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — (Հանում է ատրճառակն ու դնում սեղանին): Նեղություն մի քաշեք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այդ ի՞նչ ես անում: Սարսափելի է: Ես սարսափից կմեռնեմ:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Մի՛ վախեցեք: Մենք շատ խաղաղ կզրուցենք, նույնիսկ սիրալիբ: (Տեսողելով գանձատուփը): Գիտե՞ք ինչ: Նվիրեք ինձ այս գանձատուփը որպես հիշատակ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Վախեցած): Ա՛խ, չի՛ կարելի, բարեկամըս, մեզը կարևոր գրություններ են, կալվածքին վերաբերող փաստաթղթեր:

ՆԵՍՉԱՍՏՐԻՎՅԵՎ — Հատակագծեր են, անշարժ ունեցվածքի ակտեր, սահմանային մատյաններ: Ինչպե՞ս են տեղավորվել դրանք այս գանձատուփի մեջ: Ներեցեք, ես ինձ թույլ եմ տալիս հետաքրքրվելու:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛յ քեզ տանջանք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դուք սխալվեցիք, այստեղ փողեր են: **Ոսկի՛, Ոսկի՛:** Ինչքան շարիք է գործվում քո պատճառով: Բայց առայժմ ծածկենք: (Մածկում է զանձատուփը): Մի գավառական դերասան կար, նրան վիրավորեց մի կին. անտրեպրենյորի կինը: Դերասանը լռեց, բայց վիրավորանքը չմոռացավ: Ամբողջ ձմեռ համբերեց. բարեկենդանի վերջին կիրակի օրը անտրեպրենյորի տանը արտիստների համար հրաժեշտի երեկո էր կազմակերպված: Սիրելի՛ հորաքույր, լսե՛ք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Լսո՛ւմ եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Երեկոյի վերջում, երբ բոլորը սկսում են հրաժեշտ տալ, նա մոտենում է տանտիրուհուն: «Ձեր ձեռքն եմ խնդրում», — ասում է: Վերջինս տալիս է, իսկ նա, հորաքույր, կծում-կտրում է մատը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչո՞ւ ես դա ինձ ասում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իհարկե, հիմարութուն է արածը: Ես նրան ճանաչում եմ, նա հիմար է: Ավելի խելացի բան կարելի էր անել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչո՞ւ պիտի ես այդ բոլորն իմանամ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Համենայն դեպս, չի՛ խանդարի: Ուրիշ դերասան շատ ավելի խելացի կվարվեր: Մի հարուստ կալվածատիրուհի ազգական ուներ՝ ազնիվ հոգու տեր, բայց աղքատ: Ինչքին փչում է այցելել իր ազգականուհուն, որին տասնհինգ տարի շէր տեսել: Հեռվից է գալիս, երկար քայլում է ոտքով, գալիս տեղ է հասնում, նրան ընդունում են հարազատի պես: Հանկարծ ազգականուհին իմանում է, որ նա դերասան է, առանց հրաժեշտի դուրս է անում տնից, խայտառակում է մարդկանց, տան ծառաների առաջ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, ո՛չ, Գեննադի՛...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Այսինքն՝ նա որոշում է այդպես անել, բայց ուրիշ կերպ է ստացվում: Ողբերգու Նեսչաստիվցեկը թույլ չի տա իր հետ խաղ անել: (Բացում է արկղիկը): Այսպես ուրեմն, նախ ողբերգու Նեսչաստիվցեկին ճանապարհի փող է պետք, անվայել է նրան հարուստ հորեղբոր կնոջ տնից ոտքով ուղևորվել: Հետո ձեր տանը մի աղքատ աղջիկ է ապրում: Մի՞թե լավ կլինի, եթե

նա, ապրելով ձեր տանը և օգտվելով ձեր բարերարությունից, իրեն ջուրը գցի:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ինչե՛ր ես հնարում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ես նրան հետս կտանեմ, նրան էլ է պետք ինչ-որ բաժին առանձնացնել: Եվ քանի որ մենք հրաժարվում ենք ձեզնից հետագայում ստանալիք որևէ ծառանգությունից, — դա մեզ համար դժվար չէ անել, դուք առանց այն էլ մեզ ոչինչ չեք թողնի, բոլորը կթողնեք գիմնագիստին, — դրա դիմաց էլ պետք է որևէ բան վերցնել: (Հաշվում է փողերը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դու ինձ մի տանջիր, ասա՛, թե քեզ ինչքան է պետք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ես մեծահոգի եմ: (Ելնում է տեղից, մի ձեռքն է առնում ատրճառակը, իսկ մյուսը՝ փողերի արկղիկը և տալիս Գուրմիժսկայային): Ինքնե՛րդ տվիք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Նայելով ատրճառակին): Իդուր է այս ամբողջ կոմեդիան: Ես քեզ պարտք եմ հազար ուսլի. ասա՛ քո փողը: Բայց եթե դու կարիքի մեջ ես...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — (Վերցնում է փողը): Հերի՛ք է: Ողորմութուն պետք չէ: Շնորհակալ եմ ձեզնից: (Պահում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, դեհը տար, խնդրում եմ, այդ ատրճառակը: Սիրոս վախից կանգնել է:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Է՛, ինչո՞ւ եք վախենում: Ես հո Ստենկա Ռադինը չեմ: Մայրահեղ դեպքում, եթե շատ վիրավորած լինեիք, այդ գիմնագիստին կսպանեի, և ոչ թե ձեզ: (Ատրճառակը գրպանն է դնում): Դե, հիմա դուք ինձ, իհարկե, առոք-փառոք ճանապարհ կդնեք: Մենք կնախաճաշենք և կհամբուրվենք, ինչպես վայել է ազգականներին:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո՛, իհարկե՛:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Պարոնի պես ոտք դրի ես այստեղ, պարոնի պես էլ կհեռանամ, պատվո՛ւ: (Չափազանցում է):

Մտնում է Կարպը:

Որևէ մեկին շտապ քաղաք ուղարկիր ամենալավ տրոյկան վարձելու, մինչև առաջին շոգենավային կայան: Այսպես, ուրեմն, եղբայրս, ես մեկնում եմ, տիրուհին հրամայում

է շտապ մի լավ նախաճաշ պատրաստել: Լավ գինի կմատուցես՝ շամպայն:

ԿԱՐՊ — Լսո՛ւմ եմ: Նախաճաշը պատրաստ է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մատուցիր ճաշասենյակում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Արկաղիին կանչիր: (Գուրմիծսկայային): Հրաժեշտից առաջ ես նրան կներկայացնեմ. շատ բան չեք կորցրել, որ ձեզ նրա հետ նախապես չեմ ծանոթացրել:

ԿԱՐՊ — Տիրուհի՛, Իվան Պետրովիչը որդու հետ սպասում է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ասա, թող ճաշասենյակում սպասի:

Կարպը գնում է:

Ների՛ր ինձ, սիրելի՛ բարեկամ, ես կարճ ժամանակով քեզ պետք է մենակ թողնեմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Խնդրեմ: Օտար չեմք...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ես պետք է հագնվեմ: Հյուրերի եմ սպասում: Գնա ճաշասենյակ, կեր ճանապարհից առաջ, ես կգամ քեզ հրաժեշտ տալու:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ուրեմն, մենք խաղաղ ենք բաժանվում: Դուք ինձ վրա չե՞ք բարկանում:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, չե՛մ բարկանում: Բայց ինձ թվում է, որ դու կարող էիր քեզ ավելի նրբանկատ պահել, ես, այնուամենայնիվ, կին եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Օ՛, աստված: Ես ձեզ վիրավորե՞լ եմ: Ասացե՛ք, վիրավորե՞լ եմ ձեզ: Ես ինձ չեմ ների: Ես ինքնասպան կլինեմ ձեր աչքի առաջ: (Հանում է ատրճառակը):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, ո՛չ, ո՛չ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չէ՛, դուք ինձ ասե՛ք, վիրավորե՞լ եմ ես ձեզ: Օ՛, ես...

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, ո՛չ, ամենևին, ընդհակառակը՝ (Գնում է):

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Այ, այդպես ավելի լավ է... Հիմա ես ինքս էլ չեմ կարող որոշել՝ Նեսչաստիվցևն եմ ես, թե՞ Ռոտշիլդը:

Մտնում է Սշաստիվցեը:

Տեսարան վեցերորդ

Նեսչաստիվցև և Սշաստիվցև:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե, Արկաղի, հիմա կարող ենք և հանգրստանալ: Փող, եղբայր, ես շատ ունեմ: (Ցույց է տալիս քղթադրամների կապը): Մինչև վուլգա մենք քեզ հետ կզանք լավ կառքով, իսկ հետո էլ շոգենավի առաջին կարգով:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Աննաման է, Գեննադի՛ Դեմյանիչ, Ախ, անըման է: Եթե իմանայիք, թե ինչքա՞ն եմ կոմֆորտ սիրում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ձեռնտու առաջարկություն կանեն, կխաղանք մենք քեզ հետ, եթե ոչ, պետք էլ չէ: Կզնանք նիժնիի տոնավաճառ բենեֆիսի, եթե բենեֆիսը օգոստոսին լինի, իսկ սեպտեմբերին՝ ո՛չ, չեմ ընդունի: Քե՛ք կանենք, եղբայր:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Եվ ինձնից լավ ընկեր չեք էլ գտնի, ես, գիտեք, Գեննադի Դեմյանիչ, հենց այդպիսի կյանքի համար եմ ծնվել: Իսկ աղքատությունն ի՛նչ: Աղքատ ամեն մեկն էլ կարող է ապրել: Չէ, դու փողը գեղեցիկ ծախսել իմացիր. այս բանում շատ խելք է պետք, Գեննադի Դեմյանիչ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Իսկ հիմա, եղբայր, գնանք լավ գինի խմենք, ճանապարհից առաջ մի երկու բաժակ շամպայն գցենք:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Ա՛յ սա կյանք է, Գեննադի Դեմյանիչ: Ա՛յ սա ես հասկանում եմ: Թե չէ՛՝ ոտքո՛վ... Ինքդ քեզ արհամարհում ես: Չգիտեմ դուք ինչպես, իսկ ես արհամարհում եմ այդպիսի կյանքը: Ես միշտ հարուստ մարդկանց կողմնակից եմ: Ով շամպայն է խմում, լավ սիրգարետներ է ծխում, նա է մարդը, իսկ մնացածը ոչընչություն է: Այդպես չէ՛, Գեննադի Դեմյանիչ, (Գնում է ճաշասենյակ):

Մտնում է Ակսյուշան:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ե Բ Ա Ր Գ

Ակյուշա, հետո Պյոտր և Նեսչաստիվցե:

ԱԿՍՅՈՒՇԱ — Ո՞ւր է եղբայրս: (Նայում է զոմից): Ընչապե՞ս կանչեմ նրան: Հրածեղտի միայն երկու խոսք ասեմ, մարդկանց մոտ անհարմար կլինի: (Կամաց): Պետյա՛, Պետյա՛, Լսե՛ց, գալիս է:

Պյոտրը կամաց կողմաց ներս է մտնում դռնից:

ՊՅՈՏՐ — Ա՛, այդ դո՞ւ ես:

ԱԿՍՅՈՒՇԱ — Կամաց, աստծու սիրուն, կամաց: Ամեն ինչ վերջացավ, եղբայրս փող չունի, ես նրա հետ գնում եմ հեռու և ընդմիջում: (Բռնում է գլուխը, սեղմում կրծքին և համբուրում): Մնաս բարո՞վ: Գնա՛: Գնա՛:

ՊՅՈՏՐ — Գնո՞ւմ ես: Ո՞ւր, ինչո՞ւ:

ԱԿՍՅՈՒՇԱ — Թատրոն, դերասանություն:

ՊՅՈՏՐ — Ի՞նչ ես խոսում, ուշքի՛ արի, գժվե՛լ ես, ինչ է:

ԱԿՍՅՈՒՇԱ — Վճռված է, վճռված: Գնա՛: Գնա՛:

ՊՅՈՏՐ — Ի՞նչ ես խոսում: Սիրտս կանգնեց, ասես մեկը բարով խփեց կրծքիս: Ախր ես հայրիկի հետ նորից խոսեցի:

ԱԿՍՅՈՒՇԱ — (Երկշտ և շուրջը նայելով): Դե, ի՛նչ:

ՊՅՈՏՐ — Սկզբում, պարզ է, երկու ժամ առանց շունչ քաշելու հայհոյեց, հետո ասում է. բեզ, հիմարիդ համար գոնե հազար տային:

ԱԿՍՅՈՒՇԱ — Հրածեղտի ժամանակ կհասկացնեմ հորաբորոջըս, շնայած համարյա անհույս բան է: Դե՛, գնա: (Համբուրում է նրան): Մնաս բարով: Հետո շենք կարող մնաս բարով անել: Ամոթ է: Աչքերով միայն ճամփա գցիր, ես հայացքս քեզինք չեմ կտրի:

ՊՅՈՏՐ — Ա՛խ, կյանք, կյանք: Ա՛յ թե երբ մեծ հաճույքով ես ինձ շուրջ կգցեի:

Մտնում է Նեսչաստիվցե:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅՈՎ — Ա՛, բռնվեցի՛ք:

ԱԿՍՅՈՒՇԱ — Կամաց, եղբայր:

Պյոտրը գնում է:

Մի՛ խոսք միայն, մի՛ խոսք, եղբայր: Խեղդվողը փրկուրին է ձեռքը գցում: Խնդրեք հորաբորոջը, գուցե խղճա ինձ. հիմա միայն հազար ուրբի է պետք, միայն հազար:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅՈՎ — Իսկ դերասանուհի դառնա՞լը, զավակս: Քո այդ զգացումով...

ԱԿՍՅՈՒՇԱ — (Սեղմելով նրան, փնջոթյամբ): Եղբայր... զգացումը... դա ինձ տանն է պետք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅՈՎ — (Թավ ձայնով): Վարանեցի՛ր: Երկրիս վրա ի՛նչ կա հիմա հաստատուն: Գնա՛նք, մարդիկ ինձ են սպասում: Թող ար ինձ մի լավ ներշնչեմ, թե չէ սխալ կխոսեմ: (Գնում է նախանշյակ):

Մտնում են Միտեովը, Բոդակը և Կարպը:

Տ Ե Ա Ր Ա Ն ՈՒ Ե Ր Ե Ր Ո Ր Գ

Միտեով, Բոդակ, Կարպ, հետո Գուրմիսկայա և Բուլմով:

ԿԱՐՊ — Համեցե՛ք: Հիմի նրանք կգան:

ՄԻՆՈՒՆՈՎ — Ի՞նչ է պատահել, Կարպուշա, այսօր ձեզ մոտ մի տեսակ առանձնակի հանդիսավորություն է:

ԿԱՐՊ — Իմ իմանալու բանը չէ:

Մտնում է Գուրմիսկայան, շփեղ և շահեփե վայել հագուստով, Բուլմովին քանցուկ արած:

ԳՈՒՐՄԻՏՍԿԱՅԱ — Կներե՛ք, պարոնա՛յք, որ ստիպեցի ձեզ սպասել:

ՄԻՆՈՒՆՈՎ — (Համբուրելով ձեռքը): Դուք հոյակա՛պ եք: (Ստ է փաշվում ու նայում հեռվից): Հոյակա՛պ եք: Օր օրի ջահելանում եք:

ԳՈՒՐՄԻՏՍԿԱՅԱ — Ինձ հենց ջահելանալ է պետք: Պարոնա՛յք,

ես ձեզ կանչել էի կտակա ստորագրելու, բայց հանգամանքները փոքր-ինչ փոխվեցին: Ես ամուսնանում եմ: Ձեզ եմ ներկայացնում ապագա ամուսնուս:

ՄԻՆՈՆՈՎ — Հոյակա՛ւ: է: Հոյակա՛ւ:

ԲՈԴԱԵՎ — Ես այդպես էլ սպասում էի:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — (Նստելով): Խոնարհաբար խնդրում եմ նստեցեք:

Միտնվր և Բողաբ նստում են:

Ալեքսի՛ս, նստի՛ր:

ԲՈՒՆՆՈՎ — (Համբուրելով ձեռքը): Ա՛խ, Ռախսա՛, թույլ տուր կանգնեմ քո կողքին:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Սիրալիբ է, ճիշտ չէ՞: Պարոնայք, ես տեսնում եմ, որ դուք ձեր հոգում դատապարտում եք ինձ: Նախ լսեք, հետո դատեք: Պարոնայք, ես արդարացում շատ ունեմ: Ես անպաշտպան էի, կալվածքս քայքայված էր, մտածում էի կառավարումը հանձնարարել ազգականիս, բայց նա ինձ ապշեցրեց... Գիտե՞ք, թե ինչ մասնագիտություն է ընտրել: Նա զավառական դերասան է...

ՄԻՆՈՆՈՎ — Սոսկալի՛ է, սոսկալի՛, սոսկալի՛:

ԲՈԴԱԵՎ — Ի՞նչ է որ:

ԲՈՒՆՆՈՎ — Ազգականի մասին...

ԲՈԴԱԵՎ — Ա՛: Դե՛, դա իմ գործը չէ:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Եվ վարում է շատ անկազմակերպ կյանք: Նա այստեղ է, իմ տանը: Կարող եք նրան տեսնել:

ՄԻՆՈՆՈՎ — Իսկ ձեր ազգականուհի՞ն:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Ես դժգոհ եմ նրա վարքից: Ի՞նչ էր մնում ինձ անելու: Ես ձե՛զ եմ հարցնում: Հակառակ մեկընդ-միշտ այրի մնալու (թախծագորով) և նույնիսկ հասարակությունից լրիվ հրաժարվելու իմ բուռն ցանկությունը, ես որոշեցի զոհել ինձ: Ես ամուսնանում եմ, որպեսզի կարգի բերեմ կալվածքը, և որպեսզի այն հիմար մարդու ձեռք չընկնի:

ՄԻՆՈՆՈՎ — Դա հերոսական սխրանք է, Դուք հերուսուհի եք:

ԲՈԴԱԵՎ — Դե՛, ի՛նչ հերոսուհի: Պարզապես գլուխ է գովում:

ՄԻՆՈՆՈՎ — Վաղո՛ւց պիտի արած լինեիր, վաղո՛ւց...

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Ա՛խ, Եվգենի Ապոլլոնիչ, մարդ էր պետք գտնել: Դե, հիմա այնքա՛ն դժվար է, այնքա՛ն դժվար: Թե իմանայի՛ք ինչ մարդ է: (Քննչուհե՛ն նայում է Բուլանովին): Ա՛խ, բարեկամս:

ԲՈՒՆՆՈՎ — (Համբուրելով ձեռքը): Ռախսա, դու ինձ ամաչեցնում ես:

ՄԻՆՈՆՈՎ — (Մատույ սպառնալով): Միայն թե հետևեք, Ռախսա Պավլովնա, լավ հետևեք նրան: Նա դեռ այնքան երիտասարդ է:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Ա՛խ, ո՛չ: Նա ինձ երդում է տվել, սարսափելի երդում:

ԲՈՒՆՆՈՎ — Պարոնայք, հավատացե՛ք, որ ես կաշխատեմ արժանի լինել այն պատվին, որ անում է ինձ Ռախսա Պավլովնան, ընտրելով ինձ իրեն ամուսին: Ինչ վերաբերում է Ռախսա Պավլովնայի շահերին, ապա, պարոնայք, ամենակարճ ժամանակում գործն ինքը կխոսի իմ փոխարեն. դուք մեր կալվածքը կտեսնեք ժողովուն վիճակում:

ՄԻՆՈՆՈՎ — Ինչպիսի՞: Ինչպիսի՞: Հիանալի՛ է, երիտասարդ, հիանալի՛:

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Ես ձեզ ասում էի, չէ՞:

ԲՈԴԱԵՎ — Ստում է ամեն ինչ, ամեն ինչ կմսխի:

ԲՈՒՆՆՈՎ — Պարոնայք, չնայած երիտասարդ եմ, բայց ես սրտիս շատ մոտ եմ ընդունում ոչ միայն իմ, այլև հասարակական գործերը և կուզենայի ծառայել հասարակությունը: Հավատացեք, որ դուք հանձինս ինձ կունենաք ձեր շահերի և արտոնությունների շատ ջերմ պաշտպանին:

ՄԻՆՈՆՈՎ — Իսկ մենք էլ տրտնջում էինք, որ մարդիկ չկան: Նոր հիմնարկությունների համար նոր մարդիկ են պետք: Բայց չկան: Ահա՛ նրանք:

ԲՈԴԱԵՎ — Դե՛ ի՛նչ, թերև՛ս: Թող ծառայի, մենք լավն ու վատը ջոկող չենք:

ԲՈՒՆՆՈՎ — (Թոթվելով ուսերը): Ա՛յ, տարիքս է միայն... Ես չեմ հասկանում, ինչի՞ համար են այդ սահմանափակումները: Եթե ես ինձ ընդունակ եմ զգում...

ՄԻՆՈՆՈՎ — Դե ինչ, մենք մի երկու տարի կսպասենք, հետո

վարչութեան մեջ կրնարենք կամ էլ մի ուրիշ պատվա-
վոր պաշտոն կգտնենք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Պարոնայք, մենք այսօր ուշ ենք ճաշե-
լու: Իսկ հիմա կարելի է մի բաժակ շամպայն: Կարպ,
մատուցիր շամպայնը:

ԿԱՐՊ — Լսում եմ, Պատիվ ունեմ շնորհավորելու, տիրուհի:
(Ինձն իրեն): Գնամ լուր տամ: (Գնում է):

ՄԻՆՆՈՎ — Ախր որտեղի՞ց այսքան խելք, այսպիսի ուժ երի-
տասարդ մարդու մեջ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, նա շատ է տառապել, խեղճ: Նրա
մայրը հարուստ կին է եղել, նա մանկությունից սովոր
է եղել գզվանքի, սպասավորների և ողջ շրջապատի պատ-
րաստակամ ծառայության, հետո նրանք աղքատացել են,
և նա ճաշակել է սարսափելի կարիքը: Սոսկալի է: Նա
ծնվել է հրամայելու համար, բայց նրան, չգիտես ինչու,
ոտիպել են ուսանել գիմնազիայում:

Մտնում է Կարպը շամպայնի շշով ու գավաթներով: Բոլոր
ը սափ են կանգնում:

ՄԻՆՆՈՎ — (Վերցնելով գավաթը): Ամենայն վեհ ու գեղեցիկ
բան հիմնված է բազմազանության, հակադրությունների
վրա: Վերցնենք ամենանրբին զուգակցությունները բնու-
թյան մեջ, և ի՞նչ կտեսնենք: Դաժան գրանիտ ու մելա-
մաղձոտ պատատուկ, անխորտակելի կաղնի և քնքույշ
գայլուկ: Եվ հիմա էլ մեր աչքի առջև է փորձով ամրա-
պնդված անզրդվելի առաքինության, կենցաղային ի-
մաստության և ազնիվ ջերմոցի քնքույշ, մատաղ ընձյու-
ղի համագործակցությունը: Ռաիսա՛ Պավլովնա, Ալեք-
սե՛յ Սերգեյիչ: Մաղթում եմ երկար տարիների անխռով
կյանք հուրախություն ձեզ, ի մխիթարություն ձեր բարեկամների և հօգուտ մինչև ամենահեռավոր ծայրամա-
սերն ընկած ողջ շրջակա ազգաբնակչության:

Ճաշասեղյակում՝ «ուտա՛»:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ի՞նչ է պատահել:

ԿԱՐՊ — Գեներադի Գեմյանիչն է բարեհաճում... ձեր կենացը:

ՄԻՆՆՈՎ — Պարոնայք, ես չեմ կարող խոսել. ողջ այս գե-
ղեցկությունն ու վեհությունը փակում են շուրթերս ու
թերթևուքներիցս կախում ջերմ ու առատ արցունքներ.
(Խմում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Սեղմում է ձեռքը): Շնորհակա՛լ եմ, շը-
նորհակալ եմ ձեզնից:

Ճաշասեղյակում՝ «ուտա՛»:

ՌՈՒԱԵՎ — (Գավաթը ձեռքին): Շնորհավորում եմ: Աշխատեք
երջանիկ ապրել, և առաջինը ե՛ս շատ ուրախ կլինեմ:
(Խմում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Խոնարհաբար շնորհակալ եմ: (Թուլանա-
լիք): Ի՛նչ կոպիտ մարդ է:

Նստում են:

Ճաշասեղյակում՝ «ուտա՛»: Ճաշասեղյակի դռները բացվում
են: Մտնում է Նեշաստիվցեր, դռն մտ մնում են
Սշաստիվցեր, Վասիլբրատովը, Պյոտը և Ակյուշան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Պ

Կուրմիժսկայա, Միրոնով, Բոզան, Բուլանով, Նեշաստ-
իվցե, Սշաստիվցե, Վասիլբրատով, Պյոտը, Ակյուշա,
Կարգ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՑԵՎ — Հորաքույր, շնորհավորում եմ: Ամուսնա-
նո՞ւմ եք: Ժամանակն է, հորաքույր, ժամանակն է: Եվ
ձեզ համար է լավ, և ազգականների համար է հաճելի:
Դա ձեզ պատիվ է բերում, իսկ մեզ՝ գոհություն: Ես, իմ
կողմից, շատ ուրախ եմ և հավանություն եմ տալիս ձեր
միությունը: (Գիմելով դռների մեջ կանգնածներին): Պա-
րոնա՛յք, ինչո՞ւ կանգնեցիք:

Սշաստիվցեն ու Վասիլբրատովը մտնում են:

Հորաքույր, ներկայացնում եմ՝ իմ բարեկամ Արկադի
Սշաստիվցե:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Շատ հաճելի է:

ՄԻՆՈՆՈՎ — Ձեր ազգակա՞նն է:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — (Միլոնովիկն): Պատիվ ունեմ ներկայա-
նալու՝ Գեննադի Գուրմիժսկի, (Բողաևիկն): Գուրմիժսկի
Գեննադի:

Միլոնովն ու Բողաևը ելևում են, սեղմում երա ձեռքն ու
նստում:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — (Գուրմիժսկայայիկն): Բարի գործ է: Օրեն-
քով, ուրեմն, ինչպես որ կարգն է: Դրանից լավ բան
Շատ ուրախ ենք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Դե, ինչ կասես, Իվան Պետրովիչ, դուրդ
գալի՞ս է փեսացուս:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Ոչինչ, տեղը տեղին է: Թե որ խելքի պա-
կասություն ունի, դա, պիտի ասենք, փոքրագությունից է,
ժամանակի հետ անցնում է:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — (Սչաստիվցևիկն և Վասիլբրատովիկն):
Պարոնայք, խոնարհաբար խնդրում եմ նստեք: Մորա-
քույր, թույլ տուր իմ տան պես տիրություն անեմ: Կարպ,
մեզ գինի մատուցիր, եղբայր, և՛ շատ: Դու մի ափսոսա,
այսպիսի դեպքեր հազվադեպ են. հորաքույրս հո ամեն
տարի մարդի չի գնում: (Նստում է աջ կողմը):

Այգտեղ են նստում եւս Սչաստիվցևն ու Վասիլբրատ-
ովը: Կարպը գնում է:

Շարունակեք, պարոնայք, ձեր խոսակցությունը, մենք
ձեզ չենք խանգարի:

ՄԻՆՈՆՈՎ — Մեզ հետաքրքիր է ձեզ լսել:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Մեծագույն ուրախությամբ, պարոնայք:
Ինձ շատ հաճելի է խոսել այսպիսի ազնվագույն հասա-
րակության մեջ: Հորաքույր, դուք երջանի՞կ եք, անսահ-
ման երջանի՞կ եք:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Այո, բարեկամս, ես երջանիկ եմ:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Երջանիկ մարդը բարի է դառնում, վեհան-
ձրն: Ճիշտ չե՞մ ասում: Ճի՞շտ է, պարոնայք:

ՄԻՆՈՆՈՎ — Բացարձակապես արդարացի է: Հիանալի՞ է,
հիանալի՞:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Հորաքույր, դու մի ազգականուհի ունես,
քնքուշ, հեզ մի արարած. նա նույնպես փեսացու ունի:
Նա այնպես գեղեցիկ ու համարձակ չէ, ինչպես ձերը,
բայց աղջիկը նրան սիրում է: Ահա նրա հայրը:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Գիտեմ, բարեկամս:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Նա, այսինքն՝ հայրը, ուս մարդ է, պա-
րոնայք, բարեպաշտ, բայց հոգով կատարյալ կոկանցի՞
է և կիրգիզ-կայսակ²: Նա ընտանիքի մարդ է, շատ սի-
րում է իր երեխաներին, սիրում է ամուսնացնել իր որ-
դիններին, բայց իր ազահուծթյան ու տգիտուծթյան պատ-
ճառով անպայման ուզում է հազար ուսլի օժիտ ստա-
նալ:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Դա ճիշտ ասացիր, պարոն, որ տգիտու-
ծթյան պատճառով: Մենակ թե առանց էդ տգիտուծթյան
մենք յուր չենք գնա, քանի որ ամեն ինչ դրա վրա է
սարքված:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Ահա և, հորաքույր, ձեզ համար բարի
գործ կատարելու հիանալի առիթ:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ա՛խ, ո՛չ, ո՛չ: Այդ ի՞նչ նորություն է:
Վե՛րջ տուր, խնդրում եմ: Դա քո գործը չէ: Ես առանց
այդ էլ շատ ծախսեցի, հետո առջևում էլ դեռ շատ ծախ-
սեր կան:

ԲՈՒԱՆՈՎ — Հիմա ես ու Ռաիսան ոչ մի ավելորդ ծախս չենք
կարող անել: Ես ուզում եմ ձիաբուծարան բացել, ավա-
զանները պետք է մաքրել, առուններ փորել:

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Ուրեմն չե՞ք տալիս:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Մեծ փող չէ, բայց համաձայնեք, պարո-
նայք, լինում են հանգամանքներ...

ՆԵՍՉԱՍՏԼԻՎՅԵՎ — Փողն ինչի՞ է պետք: Բավական է միայն
ձեր աղնիվ խոսքը ահա այս պարոնների ներկայու-
թյամբ:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Մեզ համար ձեր խոսքը մուրհակից լավ է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — Ո՛չ, ո՛չ: Դա անքաղաքավարություն է

¹ Կոկացի — այսինքն՝ «կոկանդցի», ծնունդով Միջին Ասիայի Կոկան-
դի խանությունից:

² Կիրգիզ-կայսակ — զազախների հին անվանումը:

նույնիսկ, հանկարծ, ուրիշներէ ներկայութեամբ... Այդպիսի պահանջ... Դա ճնշում է... Դա կոմպլոտ¹ է:

ԲՈՒԼԱՆՈՎ — Դու, Ռախսա, կտրականապես մերժիր: **ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Դո՛ւք ասեք, պարոնա՛յք, հո չի՞ կարելի այսպէս հանկարծ... Ես կտրականապես մերժում եմ: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Ուրեմն չե՞ք տալիս: **ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ներիր, բարեկամս, չեմ կարող: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — (Վստմիրատովին): Հարգելիս, մի քիչ պակասեցրու: Հարգի՛ր, դիջիր: **ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ** — Ձեռ չի տալիս, պարոն: Էսքանն էլ նրա համար է, որ լավ տնից է, թե չէ մոտ էլ չէինք գա: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — (Վեր է կենում): Հորաքույր Ռախսա Պավլովնա: Մարդկային ցեղի բարերարուհի: Մի՛ նվաստացրեք ձեզ հարգելի հասարակութեան առաջ: Ամոթով մի՛ արեք Գուրմիժսկիների տոհմը: Ես կարմրում եմ ձեր փոխարեն: Ձեր ազգականներից միայն ես եմ և այս աղջիկը, նա այլևս ոչինչ չի խնդրի, իսկ ինձ օժիտ պետք չէ: Գուրմիժսկայան չի կարող մերժել մի այդպիսի դումար: Դուք հարուստ կին եք, ձեզ համար ի՛նչ է այդ ողորմութունը: Ես աղքատ աշխատավոր եմ, բայց եթե ունենայի... (Խփում է կրծքին): Հը՞: Ի՛նչ է որ: Դե, այսքան ունեմ: (Գրպանից հանում է փողեր): Ահա դրանք: Ճիշտն ասած, մեղք չէր լինի, եթե խեղճ նեսչաստիվցիկը խմիր այս փողերը, վատ չէր լինի նաև, եթե ծնր շունը պահեր դրանք նեղ օրվա համար: **ՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — (Քաշելով նրա ձեռքից): Այս ի՛նչ եք անում: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Լո՛ի՛ր, Արկաշկա՛: Ուրեմն չե՞ք տալիս: **ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ** — Ես արդեն ասացի: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Դե, եթե հարուստ կալվածատիրուհին հրաժարվում է աղքատ աղջկան օժիտ տալ, աղքատ արտիստը չի մերժի: Մոտ արի, զավակս: **ՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Իսկ ասում էիք տղոյկայով կզնանք: Ահա և քեզ տրոյկա: Ահա և շոգենավ: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Լո՛ի՛ր, Արկաշկա՛:

¹ Դավադրութուն — (Գրան.):

Ակսյուշան մտնում է:

Ահա՛, զավակս, վերցրո՛ւ: **ԱՎՅՈՒՇԱ** — Ի՛նչ եք անում, եղբայր, ի՛նչ եք անում: Պետք չէ: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Վերցրու, ասում եմ: Ինչ որ մտածեցի՝ մտածեցի, ինչ որ արեցի՝ արեցի: **ԱՎՅՈՒՇԱ** — (Գրկելով նրան): Եղբա՛յրս, եղբա՛յրս:

Կարպը մի շիշ գինի է բերում, զավաբեք և դնում է սեղանին:

ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դե, բավական է. մեկ էլ տեսար լաց եղա, իսկ դա լավ չէ, ամոթ է: **ԱՎՅՈՒՇԱ** — Ինչպե՛ս շնորհակալ լինեմ ձեզնից: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Ինչպէս շնորհակալ լինես, Ասա, «շնորհակալ եմ», և վերջ: Ա՛յ, հիմա խմենք: (Մտնելում է սեղանին և երկու բաժակ լցնում):

Ակսյուշան փողեր տալիս է Պյոտրին:

ՊՅՈՏՐ — (Փողերը տալով հորը): Բարեհաճեք ստանալ:

Վստմիրատովը մի կողմ է հաշվում և սկսում հաշվել:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Նեսչաստիվցիին): Դա շատ մեծահոգութուն է քո կողմից: **ՆՆՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Հուսո՛ւ՛մ եմ: Մոտեցի՛ր, Արկաղի՛, խմի՛ր:

Սչաստիվցիկը մտնելում և խմում է:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Ակսյուշային): Ես շատ ուրախ եմ, սիրելիս, որ այսպէս դասավորվեց, և պատրաստ եմ նպաստել քո երջանկությանը, ինչով կարող եմ: Ես նույնիսկ չեմ հրաժարվի քո մայրացուն լինել:

Ակսյուշան գլոյթ է տալիս:

ՎՈՍՄԻՐՐԱՏՈՎ — Մեծապես շնորհակալ եմ ձեզնից: Մեր բանը, տիրուհի, առանց ձեզ զղտխ չի գա: Դուք որ նստեք մեր հարսանիքին, հաշվեք, որ հիսուն տոկոսով օժիտն

ավելացալ, էդպես ենք մենք ձեզ գնահատում: Իսկ բանկետն էլ ձերդ ողորմածութեան պատվին էնպես անեմ, որ մի երկու ամիս խոսքուզրույցը շպակասի քաղաքից: Թող ծայրամասերն էլ հասնի:

ՄԻՆՈՆՈՎ — (Մտտեճալով սեղանին): Հիանալի՛ է, հիանալի: Ձեր արարքը հարկավոր է տպագրել թերթում:
ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Թերթերն այստեղ ի՞նչ գործ ունեն: Արի բրուզերշաֆտ խմենք:

ՄԻՆՈՆՈՎ — Բայց, սիրելիս... հո չի կարելի...

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Թե որ շես ուզում, պետք չէ: Հեռացի՛ր: Հեռո՛ւ կորիր: Խմե՛նք, Արկադի՛:

Միանգուր ետևանում է:

ԲՈՒՄԱՅՎ — (Բուլանովին): Ո՛վ է սա, հը՛:

ԲՈՒՄԱՅՆՈՎ — Դերասան:

ԲՈՒՄԱՅՎ — Դերասա՞ն: Ախ, սատանան դրան տանի: Բռա՛վու: Բռա՛վու: (Մտտեճում է Նեսչաստիվցևին): Ձեր ձեռքը: Թե չէ մտածում եմ՝ այդ լավ, գեղեցիկ խոսողն ո՛վ է: Դա այնքան հազվագեպ բան է մեզանում: (Ցույց տալով Սչաստիվցևին): Նա էլ է՞ դերասան:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Դերասա՞ն է:

ԲՈՒՄԱՅՎ — Նա ոչինչ չի՞ ասում:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չէ՛, ասում է:

ԲՈՒՄԱՅՎ — Ի՞նչ է ասում:

ՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Սարյակի պես սուլում եմ, կաշաղակի պես թռչկոտում:

ԲՈՒՄԱՅՎ — Ա՛, բռա՛վու, բռա՛վու: (Հեռանում է և անմիջապես վերադառնում Նեսչաստիվցևի մոտ): Ծս նրան պենկաթի ծխամորճ կնվիրեմ: Եկեք ինձ մոտ, խոնարհաբար խընդրում եմ:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Չվարճացնելո՞ւ քեզ: Մաղրածո՞ւ պահիր: Արի բրուզերշաֆտ խմենք:

ԲՈՒՄԱՅՎ — Ի՞նչ: Հա՛-հա՛-հա՛: Չվարճալի մարդ է: (Հեռանում է):

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Բուլանովին): Դրան մի կերպ հեռացնել է պետք: Թե չէ՛ աստված գիտե ինչե՛ր կանի:

ԲՈՒՄԱՅՆՈՎ — Դուք, երևում է, պատրաստվում եք գնա՞լ: **ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ** — Վաղուց եմ, եղբայր, պատրաստվում:

ԲՈՒՄԱՅՆՈՎ — Ժամանակը չէ՞ արդյոք:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Արկադի, մեզ վունդում են: Եվ իսկապես, եղբայր Արկադի, ինչո՞ւ եկանք, ինչպե՞ս ընկանք այս անտառը, այս անանցանելի խուլ անտառը: Ինչո՞ւ, եղբայր, խրտնեցրինք բվերին ու բվեճներին: Ինչո՞ւ խանգարեցինք: Թող ապրեն, ինչպես ուզում են: Այստեղ ամեն ինչ կարգին է, ինչպես անտառին է սազական: Պատավենբը գիմնադիստների հետ են պսակվում, ջահել ազջիկները, հարազատների ձեռքի տակ, դառը կյանքից իրենց ջուրն են գցում, անտա՛ն է, եղբա՛յր:

ԳՈՒՐՄԻԺՍԿԱՅԱ — (Թոքվելով ուսերը): Կոմեդիանտնե՛ր:

ՆԵՍՉԱՍՏԻՎՅԵՎ — Կոմեդիանտնե՛ր: Ո՛չ, մենք արտիստներ

ենք, ազնիվ արտիստներ, իսկ կոմեդիանտները դուք եք: Մենք եթե սիրում ենք՝ սիրում ենք, եթե չենք սիրում՝

վիճում ենք կամ կովում, եթե օգնում ենք՝ ուրեմն աշխատած վերջին գրոշով: Իսկ դո՞ւք: Դուք ամբողջ կյանքում հասարակության բարօրութունից եք խոսում,

մարդկության նկատմամբ սիրուց: Իսկ ի՞նչ եք արել: Ո՞ւմ եք կերակրել: Ո՞ւմ եք մխիթարել: Դուք ինքներդ ձեզ եք միայն մխիթարում, ինքներդ ձեզ եք զվարճացնում:

Դուք եք կոմեդիանտները, խեղդատակները, և ոչ թե մենք: Երբ փող եմ ունենում, իմ հաշվին կերակրում եմ Արկաշկայի նման երկու-երեք ապիկարների, իսկ հարազատ հորաքույրս մի երկու օր էլ չուզեց ինձ կերակրել:

Աղջիկը վազում է ջուրը նետվելու: Ո՞վ է նրան հրում դեպի ջուրը: Հորաքո՛ւյրս: Ո՞վ է փրկում: Դերասան Նեսչաստիվցևը: «Մարդիկ, մարդիկ: Կոկորդիլոսի ծնունդներ, Ձեր արցունքը ջուր է: Ձեր սիրտը՝ ամուր պողպատ:

Համբույրը՝ դաշույն կրծքի մեջ: Առյուծներն ու ընձառյուծները կերակրում են իրենց ձագերին, գիշատիչ թռչունները հոգ են տանում իրենց ձուերի մասին, իսկ նա, նա... Սա՞ է սիրո դիմաց սերը: Օ՛, եթե ես կարողանայի բորենի լինել: Օ՛, եթե ես կարողանայի այս դժո-

խային սերնդի դեմ կատաղեցնել անտառների բոլոր ար-
յունախում բնակիչներին»¹։

ՄԻՆՈՆՈՎ — Բայց, ներեցեք, այդ խոսքերի համար կարելի

է ձեզ պատասխանատվության կանչել։

ԲՈՒՂԱՆՈՎ — Ուղղակի ուստիկանապետի մոտ։ Մենք բոլորս
վկա ենք։

ՆԵՍՉԱՍՏԻՎՑԵՎ — (Միլոնովին)։ Ի՞նչ, Սխալվո՞ւմ եք։ (Հա-
նում է Շիլլերի «Ավագակներ» պիեսը։ Գրաքննությունը
թույլ է տվել։ Նայի՛ր։ Հավանություն է տրվում ներկա-
յացնելու։ Ա՛խ, դո՛ւ, շարորակ տղամարդ։ Դու ինչպե՞ս
կարող ես ինձ հետ խոսել։ Ես զգում ու խոսում եմ Շիլ-
լերի նման, իսկ դու՝ տիրացուի։ Դե՛, բավական է։ Գնա-
ցի՛նք, Արկաշկա՛։ Մնաք բարով։ (Գլուխ է տալիս բո-
լորին)։ Հորաքույր, բարեհաճեցեք ձեր ձեռքը։

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — (Պահում է ձեռքը)։ Ա՛խ, ս՛չ, ո՛չ...

ԲՈՒՂԱՆՈՎ — Թույլ տվեք, ավելի շուտ կգնա։

ՆԵՍՉԱՍՏԻՎՑԵՎ — Չե՛մ կծի, մի՛ վախեցեք։

ՄԻՆՈՆՈՎ — Իհարկե, չի կծի։

ԲՈՒՂԱՆՈՎ — Իհարկե...

ԳՈՒՐՄԻԺՍՎԱՅԱ — Ա՛խ, ո՛չ, դուք շգիտեք։

ՆԵՍՉԱՍՏԻՎՑԵՎ — Օ՛, մարդի՛կ, մարդի՛կ։ (Քայլում է դեպի
անկյուն, ուսն է գցում համպրուկը)։

Ախայւան օգնում է երան և համբուրում։

(Ձեռն է առնում ձեռնափայտը)։ Դե, Արկադի, քեֆ արե-
ցինք, աղմկեցինք, եղբայր, հիմա նորից գործի անցնենք։
(Քայլա է բեմի մեջտեղը, կանչում է Կարպին և ասում
երան բնդհատ-բնդհատ և ազդու)։ Լսի՛ր, Կա՛րպ, Եթե
տրոյկան գա, ետ ուղարկիր քաղաք, եղբայր, սաս, որ
պարոնները ոտքով գնացին։ Ձե՛՛րք, ընկեր։ (Բռնում է
Սշատալիվցևի ձեռքը և դանդաղ հեռանում)։

¹ «Մարդիկ, մարդիկ, Կոկորդիլոսի ծեղանցներ...» — Շիլլերի «Ավագակ-
ներ» պրամաթից։

Գ Ա Յ Լ Ե Ր Ե Վ Ո Չ Խ Ա Ր Ն Ե Ր

Կատակերգություն հինգ գործողությամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՁԻՆՔ

ՄԵՐՈՊԻԱ ԴԱՎԻԴՈՎԱ **ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ** — մոտ 65
տարեկան օրիորդ, մեծ, բայց բայթայված կալվածքի տի-
րուհի, նահանգում մեծ ազդեցություն ունեցող անձնավո-
րություն։

ԱՊՈՂՈՆ ՎԻԿՏՈՐՈՎԻՉ **ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ** — մոտ 24 տա-
րեկան երիտասարդ, պաշտոնաթող պրավորձիկ, Մուր-
զավեցկայայի ազգականը։

ԳԱՅԻՐԱ ԱԼԵՔՍԵՎՆԱ — աղքատ աղջիկ, Մուրզավեցկա-
յայի ազգականուհին։

ԵՎԼԱՄՊԻԱ ՆԻԿՈՒԱՅՎՆԱ **ԿՈՒՊԱՎԻՆԱ** — երիտասարդ
հարուստ այրի։

ԱՆՏՈՒՍԱ ՏԻՆՈՆՈՎՆԱ — նրա մորաքույրը, պառավ։

ՎՈՒԿՈՂ ՆԱՈՒՄՈՎԻՉ **ՋՈՒԳՈՒՆՈՎ** — զավառական դատա-
րանի նախկին անդամ, մոտ 60 տարեկան։

ՄԻՆԱՅԻԼ ԲՈՐԻՍՈՎԻՉ **ԼԻՆՑԱԿ** — հարուստ, գիրացած
պարոն, 50-ը լրորած, պատվավոր հաշտարար դատա-
վոր։

ՊԱՎԻՆ ՍԱՎԵԼԻՉ — ծառայակետ։

ՎԼԱՍ — բուֆետապան։

ԿՈՒՆԵԼԻ — սպասավոր։

ՍՏՐՈՊԻՆ — կապալառու։

ՆԵՐԿԱՐԱՐ։

ՉՅՈՒՆ։

ԳՅՈՒՂԱՅԻ — Մուրզավեցկայայի նախկին կառավարիչը։

ԱՐՉԵՍԱՎՈՐՆԵՐ, **ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ** ԵՎ **ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱ-**

ՅԱՅԻ ՏԱՆ **ՋՐԻԱԿՅԱՅ ԿԱՆԱՅՔ**։

Գործողությունը տեղի է ունենում նահանգական ֆալաֆում,
Մուրզավեցկայայի տանը։

Հնան կանավարված դանիւն, հաճոյստեսներէց աշ-
երեք յուսամուտ, փշեղապատերին՝ հայելակալներով նեղ,
երկար հայելներ: Առաջին յուսամուտի առաջ, հայա-
բնմին մտ, բարձր բազկաբոտ և փոքրիկ սեղան, որ
վրա՝ բացված մի նին գիրք և զանգակ: Խորհում, աշ
անկյունում՝ մեծ նախասենյակ տանող երկփեղկ դուռ,
ձախ անկյունում՝ Մուրզավեցկայայի սենյակը տանող
դուռը: Դռների միջև վառարան է դրված, ձախ կողմում,
անկյունում, ներքին սենյակները տանող դուռ: Նախաբե-
մին մտքիկ՝ հյուրասենյակ տանող դռներ, դռների միջև՝
պատին մտնեցրած մեծ ճաշասեղան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ո Ա Ջ Ի Ն

Պավլինը նախասենյակ տանող դռն մտ: Կապալառու,
ներկարար, հյուսն, արհեստավորների խմբի ավագ, զու-
ղացիներ և արհեստավորներ:

ՊԱՎԼԻՆ — (Չեռֆը տալով կապալառուին): Պարոն Ստրոպի-
լին: (Մյուսներին): Չեղավ, պարոնայք, չեղավ: Էս ի՞նչ
ծխոր է:

ՀՅՈՒՄՆ — Ամեն մեկն իր փողի ետևից է եկել:

ՆԵՐԿԱՐԱՐ — Մարդ կա՝ էնքան փողի կարիք ունի, է՛լ ասելու
չի:

ԱՎԱԳ — Տո՛ն օր է, ազա՛տ ես, դե, մտածում ես, գնամ
ստանալիքիս ետևից:

ԿԱՊԱԼԱՌՈՒ — Տոն օրն էլ հենց էն օրն է, սիրասուն բարե-
կամ, որ ստացածդ տուն չի հասնում:

ՀՅՈՒՄՆ — Կհասցնեիրնք, մենակ թե բան լիներ հասցնելու:

ՆԵՐԿԱՐԱՐ — Թող մի ստանամ փողերը. բոռումս էնպես հոպ
տամ, շկարենաս բացես:

ՊԱՎԼԻՆ — Ուրեմն օրիորդի՞ն եք ուզում սպասել:

1-ԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ — Ի՞նչ է որ՝ կապասներ. մեր գործը սպա-
սելն է:

2-ՐԴ ԳՅՈՒՂԱՑԻ — Եվ պիտի սպասես, ի՞նչ արած: Մենք դեռ
նախանցյալ աշուն գերան կրեցինք բաղնիքի համար:

(Ցույց տալով կապալառուին): Հրեն էդ շեկն էր շինում:
ՆԵՐԿԱՐԱՐ — Իսկ մենք ցանկապատը ներկեցինք՝ ցցից ցից՝
մի տասներկու բաժին, մեկ էլ տաղավարը դարչնագուլյնով
տեսքի բերինք:

ԱՎԱԳ — Մենք էլ էն ժամանակ արջառի միս աղը դրինք...

ՀՅՈՒՄՆ — Դե, ամեն մեկս իր ստանալիքն ունի. մենք էլ,
նմանապես, երկու սեղան՝ ընկույզենու նմանեցնելով,
մեկ էլ օրիորդի ննջարանը...

ՊԱՎԼԻՆ — Իսկ դո՞ւք, պարոն Ստրոպիլին:

ԿԱՊԱԼԱՌՈՒ — Հին առնելիք է: Առավոտյան տնից գործով
դուրս եկա, հետո մտածեցի՝ ման գալու փոխարեն մի
հանդիպեմ:

ՊԱՎԼԻՆ — Դե, հիմա ի՞նչ կհրամայեք անել: Ներս թողնել
ձեզ չեմ կարող: Տո՛ւն գնացեք, սիրելիներ՛ս, ահա թե
ինչ կասեմ ձեզ: Հետո երևացեք, բայց ոչ բոլորդ միան-
գամից:

ԿԱՊԱԼԱՌՈՒ — Չէ՛, ինձ որ պիտի թողնեք օրիորդի մոտ,
Պավլին Սավելի:

ՀՅՈՒՄՆ — Թող, բոլորի՛ս թող:

ՊԱՎԼԻՆ — Լա՛վ, կթողնե՛մ. միայն էսպիս պայմանավորվենք,
պարոնայք: Ովքեր ավելի մաքուր են (մատնացույց է
անում կապալառուին, ներկարարին, հյուսներն և ավա-
գին), մնացեք այստեղ. (մյուսներին) իսկ դուք գնացեք
սանդղամուտք. սա մեկ: Եվ երկրորդ՝ հենց որ օրիորդը
իջավ կառքից, բոլորդ իսկույն ձեռքը համբուրեք, իսկ
ով ավելի ճարպիկ է, կարող է ոտքերն ընկնի: Փողի
մասին ծպտուն չլինի. տոնը կարելի է շնորհավորել, իսկ
փողի մասին՝ ոչ մի խոսք:

ՆԵՐԿԱՐԱՐ — Որ հենց դրա համար ենք եկել, էլ ոնց թե՛ ոչ
մի խոսք:

ՊԱՎԼԻՆ — Հենց էդպես, ո՛չ մի խոսք: Վերջացրի՛նք: Օրիոր-
դը որ հյուրասենյակ գնաց թեյ խմելու, ես նրան կզեկու-
ցեմ. այդ ժամանակ էլ բոլորիդ համար կարգադրութուն
կլինի: Ի՞նչ է, ուզում եք, որ տոն օրով հենց առավոտ-
վանից զխաչավանք սկսվի: Օրիորդն այդ ժամանակ
լուսթյուն է սիրում և որ ոչ ոք իրեն շանհանգստացնի,
մանավանդ փողի գործով: Ախր, մի մտածեք. եթե տա-

Ճարից եկավ, մտածմունքի մեջ ընկավ ու աչքերը վեր բարձրացրեց, նրա հոգին էդ ժամանակ որտե՞ղ կլինի:

ԿԱՊԱԼԱՌՈՒՒ — Բա՛րձր, Պավլին Սավելիչ, շա՛տ բարձր:

ԱՎԱԳ — Էնքան բարձր՝ գլուխդ կպտտովի:

ՊԱՎԼԻՆ — Դե, տեսնո՞ւմ եք: (Ներկայացրին): Իսկ դու քո ներկն ես առաջ քշում: Ա՛խ, անտաշնե՛ր: Ե՛րբ եք գոնե մի քիչ կակղելու: Փողը՝ փող, բայց դրա ժամանակն էլ պիտի իմանաք: Մենք չգիտենք ոնց ազատվենք իրարանցումից, սա էլ եկել է միսն աղ զնելու փողն է ուզում: Դե՛, գնացեք ձեր տեղը:

Դյուզացիներն ու արհեստավարները գնում են: Ենու է գալիս Զուգունովը պայուսակով:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ր Դ

Պավլին, Զուգունով (Նախասեջակ տաճոգ դռն մտ), կապալառու, ներկայացր, նյունն, հետո Կոնեիլի:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — (Աչքերով ցույց տալով բազմությունը): Հյուրեր են հավաքվել բոլոր վոլոստներից:

ՊԱՎԼԻՆ — (Քթախտա փաշելով): Գլխացավանք է, պարոն:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Մի դեսը տուր էդ բերյոզինյանից:

ՊԱՎԼԻՆ — (Տալով ծխախոտատուփք): Համեցե՛ք:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ձո՛ւ՛մ ես՝ ովքեր սպասեն, ովքեր հետո գան:

ՊԱՎԼԻՆ — Փողի տուտը կտրվել է, պարոն:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Էդպես պատահում է: Փող ստանալուց առաջ, ասում են:

ՊԱՎԼԻՆ — Է՛հ, աստվա՛ծ տա: Կնկա պատճառով է, պարոն...

Կնկա խելքից մի առանձին կարգուկանոն չի էլ կարելի պահանջել:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Իզուր ես էդպես ասում: Մերոպա Դավիդովնայի կանացի խելքը հինգ տղամարդու կհերիքի:

ՊԱՎԼԻՆ — Ինչպե՞ս կարելի է տղամարդու հետ համեմատել: Թե որ էդքան խելք լիներ, էլ ձեր ետևից չէին ուղարկի: Հենց մի քիչ խառը գործ է լինում, ձեզ կանչում են:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Կարծում ես դրա համար խե՛ղք է պետք: Խելքի ծով էլ որ լինես, մեկ է, որ օրենքները չիմացար...

ՊԱՎԼԻՆ — Հասկանում եմ: Մեծ խելք որ ունեցար, խառնակություն էլ չեւ անի: Պարզ է, տերերին մենք դատապարտել չենք կարող, բայց թե գովել էլ չի կարելի: Մերոպա Դավիդովնան էսպիսի բնավորություն ունի. հենց որ ծանոթներից մեկի հետ գտովեց, դատ կբացի: Իսկ ծանոթությունը մեծ է, գտությունները՝ անպակաս. էն գիտենք միայն, որ դատի մեջ ենք:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Այո, լինում է, որ չեղած տեղից ենք դատ բացում:

ՊԱՎԼԻՆ — Բոլոր ծանոթ պարոնները մի գլուխ դժգոհում են:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Բայց դե, մենք ոչ մեկին չենք նեղացրել. մեկ բոլորը մերժում են, դեռ ոչ մի դատ չենք շահել:

ՊԱՎԼԻՆ — Վնասն էլ շատ է. անընդհատ պահումներն ենք վճարում ու գրագիրներին կերակրում:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ո՞վ պիտի դրանց կերակրի: Ախր նրանք էլ են ուտել ուզում, նրանք էլ են մարդ:

ՊԱՎԼԻՆ — Ես դրանց մարդահաշիվ չեմ անում, պարոն:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Իզո՛ւր: Չէ՞ որ ես էլ եմ գրագիր, Պավլին Սավելիչ:

ՊԱՎԼԻՆ — Գիտե՛մ:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Թե որ գիտեք, ուրեմն ավելի հարգալից եղեք: Ձեր նման բո՛ի ես հարյուր հրսուն հատ ունեի:

ՊԱՎԼԻՆ — Ունե՛իք, բայց էլ չունե՛ք:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Այո, չունեմ. աղա մարդ էի, իսկ հիմա դատամուլ եմ դարձել ու ճորտի խոսքին եմ ականջ դնում:

ՊԱՎԼԻՆ — Չասել էլ չի լինի, ուզեմ-չուզեմ պիտի ասեմ, քանի որ դուք օրիորդին եք անհարմար դրության մեջ դնում: Հիմա դուք, պարոն, կարող եք ասեկոսներից ձեռ բաշել և աղա դառնալ. ոսկի գործ ունեք:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ունեմ:

ՊԱՎԼԻՆ — Մեր օրիորդի ողորմածությամբ տիկին Կուպավի-նայի ամբողջ կալվածքն եք կառավարում. ախր դրա ասելն է հեշտ: Ամեն ինչից երևում էլ է. հա՛մ տուն չի-

նեցիք, համ ձի ձեռք գցեցիք, համ էլ փող, ասում են...
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Արդեն սկսեցին խոսել, նախանձները շարժվեց:
ՊԱՎԼԻՆ — Չէ, ինչի՞, աստված տա հարստանաք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Եվ հհարստանամ էլ, այո, հհարստանամ: Դու շարունակիր: Չէ՞, ուրիշների երեսին պիտի նայեմ: Ես գիտեմ, թե ինչ բան է կարիքը: Համազգեստս կհիշես. վաղո՞ւց եմ հանել: Այնպես էր մաշվել, թե ինչն էին մնացել. սարաֆան էր, թե մունդիր՝ դժվար էր ջոկվում:

ՊԱՎԼԻՆ — Տիրուհին ջահել է, բարի, ոչ մի բանի մասին գաղափար չունի, թե որ մարդ խիղճը կորցնի...

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Խղճի՞ց ինչի սկսեցիր խոսել: Դա՞ ինչի մեջ գցեցիր: Փիլիսոփայելը քո պաշտոնին չի բռնում...

ՊԱՎԼԻՆ — (Լուսամուտից դուրս նայելով): Օրիորդը գալիս է: (Գնում է):

Կոնֆիդենտ սպիտակ փողպատով և սպիտակ ձեռնոցներով դուրս է գալիս հյուրասենյակից, դռան երկու փեղկն էլ բացում է և կանգնում ձախ կողմը:

Տեսարան երրորդ

Չուգունովը վեր է կենում արտոց և կանգնում հյուրասենյակ տանող դռնից քիչ հեռու: Նրա ետևից ելքի դռան ուղղությամբ շարվում են կապալառու, հետո ավագը, հետո ներկարարն ու հյուսերը: Մուրզավեցկայան հագել է սև մետաֆան բլուզ, գաղափարներ կապել հաստ մետաֆան կապ: Գլխին անդրադարձ սև գլխաշոր, որը բազի նման կիսով շափ փակում է դեմքը, ձախ ձեռքին սպիտակ փղպեղյա գլխիկով սև ձեռնափայտ: Գալիս է դանդաղ և ոչ մեկին չնայելով, միջանցի դռնով անցնում է հյուրասենյակ: Դանդաղ բոլոր կանգնածները համբուրում են նրա աչք ձեռքը: Նրա ետևից, երկու քայլ հեռավորությամբ, աչքեր գետնին խնայող գալիս է Գլաֆիրան՝ կոպիտ սև բոլոր շրջագրեցողով: Ապա՝ սև հագած երկու ձրիակայան կանայք: Պավլինը քայլում է Մուրզավեցկայայի ձախ կողմից և, հարգալից կազգած, ձեռքին բերում է սև քիկնոցի նման մի բան: Կոնֆիդենտ, ներս բողբոջով բոլորին, մտնում է հյուրասենյակ և փակում դուռը:

Տեսարան չորրորդ

Չուգունով, կապալառու, ավագ ներկարար, հյուսեր, հետո Պավլին:

ԱՎԱԳ — Ա՛խ, տիրուհի՛ս: Աստված նրան օգնական: Ձեռնափայտն էլ է նույնը:

ԿԱՊԱԼԱՌՈՒ — Հիշո՞ւմ ես որ:

ԱՎԱԳ — Ո՞նց չհիշեմ, Մենք էլ ճորտի նման էինք...

ԿԱՊԱԼԱՌՈՒ — Ձեռնափայտով դադո՞ւմ էր:

ԱՎԱԳ — Է՛ն էլ ո՞նց էր դադում:

Մտնում է Պավլինը:

ՊԱՎԼԻՆ — Անհարմար ժամի եք եկել, պարոնայք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞ որ:

ՊԱՎԼԻՆ — Զեկուցել էլ չեմ համարձակվում: (Չուգունովին):

Հիմիկվա աղախիմները, պարոն Վուկոլ Նումուիչ, պատիժ են: Սեր եփել չգիտեն: Կամ թե չեն ուզում. չե՛մ հասկանում: Մի գլուխ ասա, թե ինչքան հնարավոր է սերը թող շատ լինի, որովհետև օրիորդը սարսափելի սիրում է: Էդ փոքր բանում էլ չեն ուզում օրիորդին հաճույք պատճառել. դե, նա էլ զայրանում է:

ԱՎԱԳ — Հիմա մե՞նք ինչ անենք:

ՊԱՎԼԻՆ — Այս շաբաթվա մեջ երևացեք, աստված ինչ որ սովեց...

ՆՆՐԿԱՐԱՐ — Հա գնա ու արի, տանջանքից բացի ուրիշ բան չկա:

ՊԱՎԼԻՆ — Դե՛, հերի՛ք է: Խոսեցինք-պրծանք, էլ վե՛րջ: Չեզ հետ սիրալի՞ր խոսեցի, թե՞ չէ: Ինձնից կոպիտ խոսք չսպասեք:

ՆՅՈՒՄՆ — Հենց է՞դ: Էդպես էլ, ուրեմն, գնա՞նք:

ՊԱՎԼԻՆ — Ուրիշ ի՞նչ էիր ուզում: Չեզ հյուրասիրություն չի նախատեսվում: (Կապալառուին): Մինչ հաճելի հանգիստում, պարոն Ստրոպիլին: (Մյուսներին): Դե, հրածե՛լ չե՛ք, բարի մարդիկ:

Կապալառու, ավագը, ներկարարն ու հյուսերը գնում են:

Ձեզ համար, պարոն, սեղանատանը նախաճաշ են պատրաստում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Մի՛ բթախոտը տուր տեսնեմ:

ՊԱՎԼԻՆ — (Մեկնելով տուփը): Համեցե՛ք: Դուք մի քիչ պիտի համբերեք, քանի որ օրիորդը Ապոլլոն Վիկտորովիչին է սպասում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ որտե՞ղ է նա:

ՊԱՎԼԻՆ — Նրա տեղը մեկն է: Ուղղակի խայտառակություն է, պարոն: Քաղաքում ամաչում է. հրացանը կառնի, իբր որսի է գնում, կզնա Ռադոբիիա. պանդուկում էլ հենց ժամանակ է մեռցնում: Իսկ այդ պանդուկն էլ ամենաանպետք տեսակի է: Պատկերացրեք. գյուղում, մեծ ճանապարհի վրա, ցուցանակին գրված է. «Սա՛ է»: Էնքան վատ է, որ էլ ասելու չի: Մի երկու օր էնտեղ կոնծում է, կախվ սարքում, և էն էլ ի՞նչ մարդկանց հետ: Օրիորդն արդեն բուֆետայան Վլասին ուղարկել է, հրամայել է տուն բերել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ տանը նա ի՞նչ ունի անելու:

ՊԱՎԼԻՆ — Օրիորդն ուզում է նրան կարգի բերի ու լավ շերջապատ մտցնի. այսօր հյուր է ուղում տանի հետը և հրամայել է մինչև իսկ նոփ-նոր հագուստներ կարել նրա համար:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հո շե՞ն ուզում ամուսնացնել:

ՊԱՎԼԻՆ — Երևում է՝ ուզում են:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Նախանձելի փեսացու է:

ՊԱՎԼԻՆ — Եվլամպիա Նիկոլանևան այրի է, պարոն Լինյան էլ է ամուրի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բոլորի հոգսը տիկին Մերոպա Դավիդովնան է բաշում:

ՊԱՎԼԻՆ — Ուրիշ էլ ո՞վ: Եվ մի տեսնեք, թե ի՞նչ հրաշալի է դատում: Եվլամպիա Նիկոլանևան շատ հարուստ է, ուրեմն նրան կարելի է և ոչ հարուստ փեսացու գտնել, մեենակ թե ջահել լինի, ա՛յ, մեր Ապոլլոն Վիկտորովիչն նման: Միտայիլ Բորիսիչ Լինյանն էլ է հարուստ և տարիքն ասած. նրա համար հիմա աչքի առաջ մի օրիորդ կա, իշխանական տոհմից: Ջահել չի, էդ հաստատ, գլուխն առես մի քիչ դողդողացնում է, բայց էնպե՛ս է կրթված,

էնպե՛ս է կրթված, որ էլ շասած: (Պատուհանից դուրս ելնելով): Հրեն, ոնց որ պարոնին բերին:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Դե, ես գնացի՛ ճաշասեղակ: (Գնում է):

Նրա եւ մտնում Մուրզավեցիին՝ սե սերուիք հագին, կոճակները միեշև վերջ կոճկած, տեղադարտիք կռչկների նտմերի մեջ գրած, գլխին կամփր ետիգով և կոկարդով գլխարկ, Վլասը՝ հրացանով, փամփուշտակարով, արսապարկով է մտնակով:

Տ Ե Ս Բ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցիի, Պավլին, Վլաս:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Գլխարկը չհանելով): Մա տանտը՛ իր սենյակո՞ւմ է:

ՊԱՎԼԻՆ — Այո՛:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ահ, այս որսորդությունն էլ, Հոգնեցի, ախպե՛րս: Բայց ի՞նչ կարող ես անել: Կի՛րք է: Առանց որսորդության չեմ կարող: Հիմա մնում է խալաթ հագնես ու փովես-քնես: (Ուզում է զնալ իր սենյակը):

ՊԱՎԼԻՆ — Ոչ, համեցեք էստեղ սպասել, էդպես է հրամայված:

Մուրզավեցիին նստում է լուսամտի մոտ:

ՎԼԱՍ — Ձեռքից ձեռք են անցնում, Պավլին Սավելիչ, պարոնն էլ, ամբողջ ձիասարքն էլ, ամուսնիցիան էլ:

ՊԱՎԼԻՆ — (Նայելով որսապարկի մեջ): Որսապարկի մեջ էլ, պարոն, որս չէ՛ իսկի փետուր էլ չկա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ձախորդություն է, ախպերս, սատանայական ձախորդություն: Օրը վատ սկսվեց. վերադառնալ էր պետք, նապաստակը ճամփաս կտրեց, էլ ի՞նչ որս: Ինչքան նշան էի բռնում, կամ փուստ էր գնում, կամ հրացանը շէր բացվում:

¹ Հորաքույր կամ մորաքույր — (Ֆրանս.):

ՊԱՎԼԻՆ — (Վլասիկ): Տար պարոնի սենյակը, զգուշ դիր:

Վլասը գնում է:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Բացելով լուսամուտը): Փո՛ւհ, ի՛նչ հեղձուկ է: (Կախվում է լուսամուտից և սուլում): Քամերլա՛ն: Ա՛խ, անիծվա՛ծ: Դե հիմա՛ կտեսնես: Ա՛յ տղա, այստե՛ղ բեր Քամերլանին և մտրակը տուր:

ՊԱՎԼԻՆ — Կներեք, էդ մեկը ոչ մի կերպ չի կարելի, հրամայված չի: Եվ դա, ախր, ինչ Քամերլան է: Էդպիսի՞ Քամերլաններ են լինում: Տլեզոր ասելն էլ դրան շատ է, էլի, շատ մեծ պատիվ է: Շալայ է դրա իսկական անունը:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Իբր շա՛տ ես հասկանում:

ՊԱՎԼԻՆ — Ես դրա ամբողջ ազգուտակը գիտեմ: Ուշք ու միտքը հավարնից ձու տանելն է: Դրան վաղուց պիտի սատկացրած լինեին: Ասենք, ի՛նչ սատկացնել, հրես, աստված տա աշունը գա, դրան, կասկած չկա, հիմարության համար գելերը կուտեն: Իզուր չի, որ մենք այդ շանը գելի կոտլետ ենք ասում: Ես ձեր տեղը լինեի, պարոն, գլխարկս կհանեի, հանկարծ օրիորդը ներս կմտնի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Հանելով գլխարկը): Քո գործը չէ, դու քո տեղն իմացիր: Ես քեզ պեսների հետ խոսել չեմ սիրում:

ՊԱՎԼԻՆ — Լսո՛ւմ եմ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Թո՛ւհ, գրողը տանի, ոնց որ մի տեսակ լինեմ, հո չե՛մ հիվանդանում: Ոտքերս, երևի, թրջեցի ճահճում: (Իստրադալան): Ա՛յ տղա, օղի՛:

ՊԱՎԼԻՆ — Էստեղ, պարոն, Ռազորիխինի պանդոկը չի: ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Հետո՞ ինչ, որ Ռազորիխինի պանդոկը չի, հետո՞ ինչ:

ՊԱՎԼԻՆ — Հետո այն, որ այստեղ օղի չեն տա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Դե, խնդրում եմ, Պավլին Սավելիչ, բարեկամի պես, դե, ես քեզ խնդրում եմ: Ընկերավարի ախպերս, հասկանո՞ւմ ես:

ՊԱՎԼԻՆ — Ա՛յ, տեսնո՞ւմ եք, պարոն՛ս:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ճիշտ որ չգիտեմ ինչի մտքովս անցավ: Պավլին Սավելիչ, ես քեզ անկեղծորեն կասեմ. սարսափելի խմել եմ ուզում: Ախպե՛րս:

ՊԱՎԼԻՆ — Չէ, ինչպես երևում է՝ պիտի բերեմ, ուրիշ ճար չկա: (Գնում է):

Հյուրասենյակից դուրս է գալիս Գլաֆիրան և գնում դեպի միջանցի:

Տեսարան վեցերորդ

Մուրզավեցկի, Գլաֆիրա, Եստա Պավլին և Վլաս:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Կուզի՛նա, արժանացրեք ձեր հայացքին: Ա՛խ, ի՛նչ աշքեր են: Ամեն ինչ կտաս:

ԳԼԱՖԻՐԱ — Ի՞նչ եք կամենում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ի՞նչ եմ կամենում: Տարօրինակ է: Կամենում եմ համբուրել ձեզ, բայց...

ԳԼԱՖԻՐԱ — Դուք հիմար եք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Պարզոն, մադեմուազել¹:

ԳԼԱՖԻՐԱ — Adieu, monsieur!² (Ուզում է գնալ):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Սպասե՛ք: Ո՛չ, իսկապե՛ս, մա տանտ իրրիտե՞՞:

ԳԼԱՖԻՐԱ — Որքա՛ն վատ եք խոսում ֆրանսերեն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ոչի՛նչ, մեր նահանգում կանցնի:

ԳԼԱՖԻՐԱ — Այո, չեմ կարծում, որ ձեզնից գոհ լինի: (Ուզում է գնալ):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ատանդե՛՛, Բարենե՛ր:

ԳԼԱՖԻՐԱ — Ո՞ւմից:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Լինյակից:

ԳԼԱՖԻՐԱ — Շնորհակալ եմ ձեզնից: Այդ ի՛նչ է մտքով անցել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Որս անելիս հանդիպեցինք, ես նրանից փող պարտք առա, գրողը նրան տանի: Սիլի-բիլին սկսե՛լ

¹ ներեցեք, օրիորդ — (ֆրանս.):
² Մնաք բարով, պարոն — (ֆրանս.):
³ Հորաքույրը զայրացա՛ծ է — (ֆրանս.):
⁴ Սպասե՛ք — (ֆրանս.):

եք, Դե Ի՞նչ, խոստովանե՛ք: Եվ դեռ լրջութիւն եք խա-
ղում:

Գլաֆիրան ուտերը բարձրով գնում է: Ներս են մտնում
Պավլինն ու Վլասը սկսեցին զոյն, որի վրա մի ըմպանակ
օդ է և բեթն ուտելիք:

ՊԱՎԼԻՆ — Հաճեցեք շուտ խմել, մեկ էլ տեսար, աստված ոչ
անի, օրիորդը ներս մտավ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Խմելով ու ծամելով): Թո՛ւհ, կաբակի օդի
է ու շան քտելիք: (Վլասին): Գնա՛:

Վլասը գնում է:

ՊԱՎԼԻՆ — Եղածի համար էլ շնորհակալութիւն ասեք, պարոն:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ի՞նչ ես կոտորատվում, Կարծես մեծ լա-
վութիւն է արածդ: Ես հրամայեցի, դու էլ բերեցիր, այս-
քան բան: Համարձակվեիր չբերել:

ՊԱՎԼԻՆ — Լավ, էղպես էլ կիմանանք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Բո՛հ, դեռ երևակայում էլ է: Միծաղելի է
նույնիսկ:

Մտնում է Մուրզավեցկայան:

Տ Ե Ս Բ Ի Ն Ե Ն Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցկի, Մուրզավեցկայա, Պավլին:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ ես մեկնվել: Չե՞ս տեսնում: (Ձեռ-
նափայտը բարձրացնելով): Վե՛ր կաց:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ահ, պարզոն, մա տանտ: Հենց այնպես,
տրամադրութիւնս մի տեսակ տեղը չի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Շատ պե՛տքս է: (Պավլինին): Գնա դու-
րը փակիր և ոչ մեկին չընդունես, մինչև չհրամայեմ:

ՊԱՎԼԻՆ — (Բազկաբոտ մատուցելով): Լսո՛ւմ եմ: (Գնում է):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Յույց տալով աբոդը): Ա՛յ, հիմա նըս-
տի՛ր, երբ որ հրամայում են:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Օ՛, մա տա՛նտ, մի՛ անհանգստացեք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ինչպե՞ս շանհանդստանամ: Հիմա սա-
տանի պես կպտտվի աշքիս առաջ. տանել չեմ կարող:
(Թխկացնում է ձեռնափայտը): Նստի՛ր:

Մուրզավեցկին նստում է:

Երկա՞ր պիտի ինձ տանջես ու խայտառակես:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Ձարմանալով): Ի՞նչ է պատահել: Ես, մա
տանտ, ձեր խոսքերը չեմ հասկանում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ այն, որ քարշ ես գալիս պանդոկ-
ներում, գյուղացիների հետ ես լինում, կոխվներ եք սար-
քում այնտեղ... Մուրզավեցկուն դա վայել է, հը՛:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Հիանալի՛ է: Հիանալի: Ա՛յ թե ճարպիկո-
րեն են ինձ զրպարտել ձեր առաջ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ զրպարտել. քո մասին ինձ ճըշ-
մարտութիւնն ասելուց էլ մարդիկ ամաշում են: Ախր
բեզնից մարդ ի՞նչ սպասի: Գնդից քշեցին...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Թո՛ւյլ տվեք, մա տա՛նտ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Լսիր: Միրտս շէր ցավի, եթե որեւէ ջա-
հելութիւն արած լինիր. ասենք պետական փող ծախ-
սած լինիր, թղթախաղում տարված լինիր, ամեն ինչ
բեզ կներեի: Բայց քո ընկերները քշեցին բեզ մանր սրի-
կայութիւնների համար, նրա համար, որ արատալորում
ես իրենց անունը:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Բայց, թո՛ւյլ տվեք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Եվ որքանով է դա լավ, հաճելի մեր
ամբողջ գերդաստանի համար:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Բայց թույլ տվեք որպէս արդարացում...
երկու խոսք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Դու ոչինչ էլ չես ասի, ասելիք չունես:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ո՛չ, հերի՛ք եղավ, թո՛ւյլ տվեք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Դե՛, խոսի՛ր, շնո՛րհ արա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ճակատագիր է, մա տանտ, ճակատագիր:

Իսկ ճակատագիրը հնդկահավ է:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Այդքա՞ն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ըսկատագիրը հնդկահամ է, ես ձեզ անում եմ, ահա և բուրբը:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Օրոհելով գուլթը): Ա՛խ, Ապոլլոն, Ապոլլոն: Եթե մարդ ինչպես հարկն է քեզ խղճա ու սիրի՞ քեզ նայելով կգժվի: Ահա՛ թե դու ինձ ինչ ասա. դու քեզ տիրապետել կարո՞ղ ես, թե՞ ոչ, գոնե կարճ ժամանակով:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Այդ ե՛ս, այդ ե՛ս ինձ չեմ տիրապետում: Ա՛յ դա հիանալի է: Խոնարհաբար շնորհակալ եմ ձեզնից:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Չլսելով նրան): Եթե դու գոնե մի քիչ կարգին լինեիր, ես քեզ պաշտոն էլ կգտնեի, լավ օժիտով հարսնացու էլ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Մա տանտ, ձեր ձեռքը: (Համբուրում է Մուրզավեցկայայի ձեռքը): Մերսի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Միայն թե էլ շտեմնեմ, որ դրա հետքն էլ չերևա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Դուք այդ ի՞նձ եք ասում: Կարծես ես չեմ հասկանում, ես շատ լավ էլ հասկանում եմ: Կատակ եմ անում, Իսկ եթե ձեզ հաճելի է, թեկուզ հենց հիմա՝ ո՛չ մի կաթիլ, արսույլուման:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Չե՛մ հավատում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Վեհանձն մարդու ազնիվ խոսք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Վաղուց եմ ես այդ խոսքը լսել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Կանգնում է): Դե, ուզում եք գրազ գանք, գրա՛զ գանք, մա տանտ, ինչով ուզում եք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛չ, ավելի լավ է առանց գրազի, պինդ կպահեմ քեզ և չեմ թողնի տնից ոչ մի տեղ գնաս:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Նայելով լուսամուտից դուրս): Ինչ որ կամենաք, մա տանտ...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Տնից դուրս կգաս միայն ինձ հետ, և ահա հենց այսօր...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Լուսամուտից, ձեռքը թփրփացնելով կրծքին): Քամերլան, ստոն՛, ստոն՛:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Եկապակա՛ս: Այդ ի՞նչ ես անում, ուզե՞ի՛ եկ: Կեղտոտ թաթերով՝ լուսամուտին:

¹ Ցատկիր — (Ֆրանս.):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Պարզո՛ն: (Լուսամուտից): Պառկի՛ր, պառկի՛ր, անիծվա՛ծ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ուշքի՛ եկ, ուշքի՛ եկ, նստի՛ր, այս րոպեիս նստիր:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ահ, մա տանտ, դուք չեք հասկանում. շտեմնը խստութուն է պետք, թե չէ ստիպված կլինես դեռ պե՛ր, խեղդել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Չեռնափայտը թխկացնելով): Ավա՛րա: Ո՛ւմ եմ ասում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Հիմա՛, մա տանտ, պատրաստ եմ ծառայելու: (Լուսամուտից): Պառկի՛ր, քեզ հետ չե՛մ: Ո՛ւր է մտրակը: (Քարձ): Այ տղա, մտրակը տուր:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Բռնում է ձեռքից ու նստեցնում): Մըտրա՛կ է քեզ պետք: Ինչի՞ մասին էի քեզ ասում, դու լսեցի՞ր, լսեցի՞ր:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ա՛հ, մա տա՛նտ, այս շունն ինչպե՛ս ինձ ջղայնացրեց:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ահա քեզ իմ հրամանը. գնա քունդ առ, իսկ երեկոյան կգնանք հարսնացուի տուն: Լավ կհազընվես, Եվլամպիա Նիկոլաևնային ենք այցելության գնում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Աստվա՛ծ իմ, ինչպե՛ս եմ սիրահարված նրան: Դա արդեն... դա արդեն... այստեղ արդեն, մա տանտ, խոսք չունեմ ասելու: Մերսի՛, մերսի՛: Ա՛յ, դրա համար մերսի: (Համբուրում է Մուրզավեցկայայի ձեռքը):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Գնա քնելու:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — (Գնում է դեպի դուռը, հետո վերադառնում):

Դոնե մուռ դը լյարժան՛:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Հարկ չեմ համարում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ուրեմն հրամայեք, բերե՛ն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Էլ ի՞նչ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ենպիսի՞, մի փոքրիկ շիշ և ուտելիք: Պատկերացրեք, երեկ մինչև գիշեր ճահիճների մեջ եմ եղել:

¹ Փող տվեք ինձ — (Ֆրանս.):

² Մի քիչ — (Ֆրանս.):

խելագարվել կարելի է, մա տանտ, բերանս մի կտոր բան չեմ դրել:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Իսկ ո՞վ էր գրազ գալիս:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Ահ, ես կթողնեմ, որ ասացի՝ ուրեմն կթողնեմ: Միայն թե ո՛չ միանգամից, միանգամից չի կարելի. գիտե՞ք, թե ինչպիսի դեպքեր են լինում, մա տանտ: Ողբերգական դեպքեր են լինում: Մեկն, ահա, միանգամից թողել էր, և ինչպես նստած էր եղել, այնպես էլ... առանց որևէ նախաբանի, նույնիսկ առանց խոստովանության, մա տանտ: Ահա՛ թե ինչ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Աստված ողորմած է, գուցեև չմեռնես:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — (ձշում է): Ա՛խ: (Քոնում է կուրծք): Ա՛խ, ա՛յ, ա՛յ: Խնդրեմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ի՞նչ պատահեց:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — (Կուրծք բռնելով): Մայրից ծայր, մա տանտ, սրտիցս, մինչև թիակս:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Կանցնի՛ր, ոչի՛նչ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — (Քարձ է նշում): Օ՛յ... ա՛խ, ա՛խ: Կարծես դաշույնով ծակեցին:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե գնա: Կհրամայեմ բերեն, միայն թե վերջին անգամ է, լսո՞ւմ ես:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Չգիտեմ էլ, մինչև սենյակ կհասնե՞մ, թե՞ չէ: Ճիշտ որ մեռնելը թույլի բան է: Կյանքն ինձ համար գրոշ չարժե, բայց առանց խոստովանության, մա տանտ... (Գնում է):

Մտրգավեցկայան հեռացում է զառք: Ներս է գալիս Պավլիճը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Մտրգավեցկայա, Պավլիճ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ապուլուն Վիկտորովիչին հետևեք, որ տնից ոչ մի բայլ չանի: Մարդկանցդ կարգադրիր, որ նստեն միջանցքում և տեղներից շարժվեն: Քեզ եմ հրամայում, քեզնից էլ պահանջելու եմ:

ՊԱՎԼԻՆ — Համարձակվում եմ զեկուցել, տիրուհի, որ նա նույնիսկ լուսամտից է երբեմն...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Բոլոր շորերն հավաքիր: Կարգադրիր թող վերցնեն, իբր մաքրելու համար, և էլ շտապ: Խալաթով չի գնա:

ՊԱՎԼԻՆ — Համարձակվում եմ զեկուցել, տիրուհի, որ նա խալաթով էլ, եթե երեկո է...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Փող որտեղի՞ց է ճարում:

ՊԱՎԼԻՆ — Պարտք է վերցնում:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ո՞ւմից:

ՊԱՎԼԻՆ — Տարբեր պարոններից, որոնք ծանոթ են. ա՛յ, պարոն Լինյանից և մյուսներից: Համարձակվում եմ զեկուցել, տիրուհի, ոչ մի հյուր ձեռքից բաց չի թողնում, սր շխնդրի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Չէ, էլ համբերություն չունեմ... Պսակում եմ ես դրան... Աստված թող ինձ դատի, բայց պսակում եմ:

ՊԱՎԼԻՆ — Դրանի՞ց էլ լավ բան:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այդ ինչ մարդիկ են հավաքվել այստեղ ու մուտքի մոտ:

ՊԱՎԼԻՆ — Վարձի համար, շուտվանից են սպասում, տիրուհի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե՛, թող էլի սպասեն:

ՊԱՎԼԻՆ — Հոգի են հանում, տիրուհի, անհանգստություն է ձեռք համար:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Իսկ ե՞ս ինչու պիտի անհանգստանամ: Ես կարիք չեմ ունենում, ինչքան որ պետք է՝ ինձ ուղարկում են: Ի՞նչ ես նայում. այո, ինչքան որ պետք է, այնքան էլ կուղարկվի: Հազա՞ր պետք կլինի, հազար կուղարկեն, հիսուն հազար պետք կլինի, հիսուն հազար կուղարկեն: Իսկ ասացի՞ր նրանց, որ ում պարտք եմ, նրան հիշում եմ, նրա համար աղոթում եմ, իսկ ում վճարել եմ, նրան մտքիցս էլ եմ հանել:

ՊԱՎԼԻՆ — Ասացի, բայց չեն ուզում հասկանալ, փողն են պահանջում: Անկիրթ են, դեռ դրա հետ էլ՝ անուղղելի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Բայց դեպքեր եղել են, չէ՞. Պավլին, որ իմ աղոթքները երջանկություն են բերել, մեծ եկա-

մուտներ... Գե ինչ, թե որ դրանց փող է պետք, կվճարենք:

ՊԱՎԼԻՆ — Որն է ժամկետ նշանակելիք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ժամկետն ինչի՞ համար է: Ինչո՞ւ ինքս ինձ կաշկանդեմ: Կտամ, և վերջ: Ես դեռ չգիտեմ, թե ինչքան փող ունեմ և ունե՞մ ընդհանրապես: Եվ դեռ փողի ետևից ընկնելն էլ մեղք եմ համարում: Երբ որ պետք եղավ, ասենք, թեկուզ պետք էլ չեղավ, երբ որ ուզեցատալ՝ փող կգտնվի. բավական է միայն տնտղեմ շուրջբոլորս: Եվ կգտնվի ճիշտ այնքան, ինչքան պետք է: Ահա թե ինչ հրաշքներ են կատարվում ինձ հետ: Բայց դու հավատո՞ւմ ես, թե՞ չէ:

ՊԱՎԼԻՆ — Ախր ո՞նց կհամարձակվեմ չհավատալ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ուրեմն էլ ի՞նչ կա խոսելու: Պարտքերի՞ համար անհանգստանալ ես չեմ ցանկանում. Ինչո՞ւ շտապել: Ի՞նչ գիտենք, գուցե հենց այդպես էլ պետք է՝ որ նրանք սպասեն, գուցե իմ միջոցով է աստված նրանց փորձությունն ենթարկում:

ՊԱՎԼԻՆ — Իսկապես որ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ինձ մոտ կանչի Չուգունովին:

ՊԱՎԼԻՆ — (Դուան մտախ): Վուկոլ Նաումիչ, համեցեք օրիորդի մոտ: (Մուրզավեցկայային): Գալիս է: (Գնում է միջանցք):

Մտնում է Չուգունովը:

Տեսարան իններորդ

Մուրզավեցկայա, Չուգունով:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Տոնդ շնորհավոր, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Բարև ձեզ, Վուկոլ Նաումիչ: Նստի՛ր:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Թույլ տվեք համբուրել ձեր ձեռքը, բարեբարուհի: (Համբուրում է Մուրզավեցկայայի ձեռքն ու նրբատում): Հաճել էք կանչել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Կանչել էմ: Կարևոր գործ ունեմ, վու-

կու, մեծ գործ, երրորդ գիշերն է դրա մասին եմ մտածում, բայց չգիտեմ, ինչպես վստահեմ քեզ. վախենում եմ քեզ հավատալ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բայց մի՞թե իմ խիղճը բարերարուհու դեմ բան կանի...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դու խիղճ չունես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բուրբուրվին չլինել չի կարող, բարերարուհի: Գոնե մի քիչ, բայց կա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — (Թխկացնելով ձեռնափայտը): Դու խիղճ չունե՞ս:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Դե, ինչպես կամենաք, ինչպես կամենաք, չեմ համարձակվի վիճել: Մի բան կասեմ միայն. ինձ համար աստծուց հետո դուք եք...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ստո՞ւմ ես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Եվ ձեր դեմ ես մեղք չեմ գործել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Որովհետև վախենում ես ինձանից, գիտես, որ ես կարող եմ հանել քեզ քո տաք տեղից, քաղաքից էլ քշել. քիչ այլանդակություններ չես արել: Եվ այն ժամանակ ստիպված կլինես վոլոստի գրագրի պաշտոն խնդրել: Եվ ես երկար չեմ էլ մտածի, հենց դա՛ է իմ ուզածը:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Ելնում է և համբուրում Մուրզավեցկայայի ձեռքը): Ո՛չ, բարերարուհի, մի՛ զրկեք ինձ ձեր պարգևներից:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Նստի՛ր:

Չուգունովը նստում է:

Ահա թե ինչ գործ է իմ եղբայրը, Վիկտոր Դավիդիչը, Ապոլլոնի հայրը, հաշիվներ ուներ Կուպավինի՝ Եվլամպիայի ամուսնու հետ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Փող է պարտք արել Կուպավինից, էլ ուրիշ գործ չի ունեցել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այո՛, պարտք է արել, և Կուպավինը նրան տվել է: Բայց ահա մահվանից առաջ եղբայրս սկսել է թղթի գործարան կառուցել, և փողը չի հերիքել. Կուպավինը խոստացել է տալ, բայց չի տվել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ճի՛շտ այդպէս:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Իսկ եթէ Կուպավիներ չմերժե՞ր:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այդ դեպքում ձեր եղբայրը կկառուցեր գործարանը: Ուրիշի փողերով ինչի՞ չկառուցեր որ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այո՛, կկառուցեր և, նրա հաշվով, բոլոր պարտքերը տալուց հետո կշահեր հիսուն հազար: Ուրեմն Կուպավիներն է մեղավոր, որ Ապոլլոնն աղքատ մնաց: Բայց, պետք է ճիշտն ասել, Վուկոլ, իմ հանգուցյալ եղբայրը, գլուխ գովել սիրում էր, ես միշտ նրան միայն կիսով չափ եմ հավատացել: Եվ ես հիմա, գուցե ինքս ինձ գրկելով, համարում եմ, որ Կուպավիներն միայն քսանհինգ հազար է պարտք և ոչ թե հիսուն:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Համարել կարելի է:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Եվ ամեն տեղ էլ ասում եմ, քաղաքով մեկ տարածում եմ, որ Կուպավիները պարտք են Ապոլլոնին, որ նրանք կողոպտել են իմ եղբոր որդուն:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ասել էլ կարելի է:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — «Կարելի է» հա «կարելի է»: Իսկ քո կարծիքով ի՞նչը չի կարելի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այդ փողերը ետ ստանալ չի կարելի: Ոչ որ պարտավոր չէ փոխարինաբար փող տալ, դրա համար բարի կամեցողութուն գոյութուն ունի: Չնայած Կուպավիներ պարտք չի տվել ձեր եղբորը, բայց և այնպես օրենքով նրանից ոչինչ բռնագանձել չի կարելի, որովհետև կառուցում են սեփական...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ա՛խ դու բացբերան: Ուրեմն ես քեզնից հիմա՞ր եմ: Մի՞թե ես չեմ հասկանում, որ օրենքով, այն, որ ձեր գրքերում գրված է, առնելիք այստեղ չկա: Դուք ձեռ օրենքներն ունեք, իսկ ես՝ իմը. ես ահա ոչինչ էլ իմանալ չեմ ուզում, ամեն տեղ գոռում եմ, որ եղբորս որդուն կողոպտել են:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ձեր կամքն է, ոչ մեկը ձեզ արգելել չի կարող:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Բայց ես հո հիմարաբար չեմ անում: Ի՞նչ ես կարծում, հը՛, Հիմաբա՞ր, թե՞ գլխումս ինչ-որ բան կա:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ուրեմն կա:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ես մարդկանց խղճի վրա եմ հույսս դրել, մարդկային խղճի մասին ունեցած հավատս դեռ չեմ կորցրել... Կարծում եմ, Եվլամպիան բարի, նրբազգաց կին է, չի հանդուրժի, որ իր մասին այդպիսի խոսքերուզրույց լինի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Կարծում եք կվճարի՞:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ո՛չ, չե՛մ կարծում: Մեծ գումար է, ինչպե՞ս վճարի: Բայց մենք համաձայնության կգանք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ համաձայնությամբ հույս ունեք ինչքա՞ն ստանալ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ոչինչ էլ չեմ ուզում ստանալ. Ապոլլոնին կամուսնացնենք նրա հետ և քվիտ կլինենք: Ես միայն հենց գրանից էլ վախենում եմ, գրանից սկսվեց իրարանցումն ու խոսք բացվեց պարտքի մասին:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Վախեցած կլնում է տեղից): Տիրուհի՛, տիրուհի՛:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այդ ինչո՞ւ վախեցար:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բայց այդ դեպքում, դուք, բարերարուհի, կալվածքի ամբողջ կառավարումը ձեր ձեռքը կվերցնեք:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Պա՛րզ է, կվերցնե՛մ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ե՞ս ուր գնամ, բարերարուհի՛:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ուր որ ուզում ես, Շատ էլ պետքս է: Հերիք եղավ, դու արդեն ձեռքերդ տաքացրել ես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ո՛չ, բարերար տիրուհի՛ս, ո՛չ, դա շնչին բան է: Ես տնամերձիս վրա մի հողակտոր էլ եմ ուզում ավելացնել, կողքին ծախում են, երեք հազար են ուզում:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Շատ չի՞ լինի, Վուկո՛լ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Էլ ոչինչի ետևից չեմ ընկի, ամբողջ կյանքս կապահովեմ մի կտոր հացով, բանսարկություններն էլ կթողնեմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Եթե գործը գլուխ գա, ես քեզ հաղար ուրբի կտամ, իսկ մնացածը ինքդ գտիր, որևէ ձևով հավաքիր, ես քո դատավորը չեմ: Այդքա՛ն, ո՛չ ավելի: Իսկ երկու հազարը թեկուզ Կուպավիներից գողացիր. մի՛ վախեցիր, չի սնանկանա:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Միայն թե դո՛ւք, բարերարուհի, դո՛ւք չղա-

պարտեք, թե չէ ոչ մեկից չեմ վախենում, ես իմ գլխի
ճարք կտեսնեմ:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Դե՛, քո մասին հերիք է խոսենք, դու
ի՛նձ լսիր:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Լսո՛ւմ եմ, բարերարուհի:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Իմ կարծիքով, բոլոր կանայք էլ նույն
գիբիւն են. ուզում ես ոսկու մեջ թաղիր, մեկ է, գրոշ
չարժեն: Իսկ Եվլամպիան փող շատ ունի, երևի իր մասին
մեծ կարծիքի է, ամեն մեկին մի պող կպցնում է:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այդ հարցում նրանից խելքս բան չի կարում:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Ես, ախր, պառաված աղջիկ եմ, տղա-
մարդ չոկել չգիտեմ. գուցե Ապոլլոնն իսկապե՛ս վատ
փեսացու է, բայց դու հասկանո՞ւմ ես, ես դրա մասին
մտածել էլ չեմ ուզում: Ես իմ հարազատի բարին եմ
ուզում, իսկ Եվլամպիան իմ հոգը չէ: Այսպես, ուրեմն,
եթե համառի, պետք է մենք քեզ հետ, Վուկոլ, մտածենք,
թե ինչով վախեցնենք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Կմտածենք, բարերարուհի:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Դե՛, մտածի՛ր. Քո կարծիքով ինչպե՛ս
է, դու ո՞ւմ պիտի ծառայես, ի՞նձ, թե՞ նրան:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ոչ մեկին, ձեզնից բացի, բարերարուհի:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Ահա և քո բարերարուհուն մեծ ծառա-
յություն մատուցիր, ազատիր նրան հոգսերից: Ախր եղ-
բորս որդին հոգիս հանեց:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ոչինչ, կարելի է, անհանգստություն մի պատ-
ճառեք ձեզ: Ես Եվլամպիա Նիկոլանեայի առաջ մեծ վըս-
տահություն ունեմ, կարող եմ բոլոր գործերը վարել և
խաղաղ ավարտել:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Դե, ուրեմն ի՞նչ ենք անում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հարկավոր է մի որևէ հին հաշիվ գտնել, կամ
էլ գրասենյակի գրքերում չկա՞ որևէ գրություն, որով
հիմնավորեք ձեր պահանջները... Ե՛ս կփնտրեմ: Հետո
ես ու Ապոլլոն Վիկտորովիչը հաշտարարի հետ լեզու
կգտնենք: Ես ինչ պարտք ասեք ընդունում եմ, թեկուզ
հարյուր հազար: Որ Ապոլլոն Վիկտորովիչին կատարո՞-
ղական թերթիկ տվեցին, այն ժամանակ գործը հաստատ

կլինի, այդպիսի փաստաթղթով վախեցնել կարելի է.
«Պսակվի՛ր հետս, թե չէ կանանկացնեմ...»:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Այո՛, այո՛, այո՛... ահա՛, ահա՛ հենց
դա էլ ինձ պետք է: Բայց դե այդ գործը դեռևս առջևում
է, գուցե առանց դրա էլ գլուխ բերենք: Իսկ թե համառուց,
այն ժամանակ՝ կներես... Մեղքս ինչ թաքցնեմ, հարա-
զատներես համար հոգիս էլ կկեղծեմ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ո՞վ է անմեղ: Ո՞վ կարող է պարծենալ,
բարերարուհի:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Եվլամպիան առձեռն փող ունի՞:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպե՛ս չունենա, ունի՞:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Այդ ի՛նչ է, չլինի՞ մոռացել է: Ես նրան
մի քանի անգամ հիշեցրել եմ: Նրա ամուսինն, ինձ հա-
զար ուրբի էր խոստացել տալ աղքատների համար...
Հիմա չեմ հիշում, բանավոր ասաց. թե նամակ էր գրել:
«Կտակում, — ասում էր, — ես այս փողի մասին չեմ գրում,
միևնույն է, երբ որ մահացա, կինս քեզ կվճարի»: Ոնց
որ նամակ կար: Թղթերիս մեջ նայե՛լ ես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Մի հինգ անգամ քրքրել եմ, հետո տուն եմ
տարել:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Չկա՞:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Չկա՞:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Ափսո՛ս: Ինձ չհավատալ չի համարձակ-
վի, բայց, մեկ է, դեմքը, երևի, կթթվեցնի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Դե, ուրեմն ի՛նչ, կարելի՞ է...

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչն է «կարելի»:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Նամակը գտնել, եթե դա պետք է:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — Բայց դու արդեն փնտրել ես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Փնտրել եմ, բայց ո՛չ այնտեղ, որտեղ պետք
է, հիմարի նման միայն իզուր ժամանակ եմ կորցրել:
(Գրպանից հանում է նամակը և տալիս Մուրզավեցկա-
յային): Համեցե՛ք, բարերար տիրուհի, գտնվե՛ց:

ՄՈՒԳՈՒՆՈՎ — (Մտնում կարգալով նամակը): Նրա՛
ձեռքն է, նրա՛նք: Սա ի՛նչ բան է: Հո կախարդանք չկա՞
մեղք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպե՛ս կարելի է, բարերարուհի... Ախր դա
մեղք է: Ես այդպիսի բան կվերցնե՞մ հոգուս վրա...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ եթե կախարդանք չէ, մի լավ բան էլ չէ՝ կեղծի՞ք է: Սրա համար Սիբիր են բռնում: (Նամակը տալիս է Չուգունովին):

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այդ ի՞նչ խոսքեր եք ասում: Պետք չէ, բարեբարուհի, այդպիսի խոսքեր ասել: Ախր ի՞նչ կեղծիք: Խեղցի գործ. ահա թե ի՞նչ է սա կոչվում: Դա պարոն Կուլպովինի կամքն է եղել: Մեկ չէ՝ բանավոր է ասել, թե՞ նամակով է արտահայտել: Իսկ եթե առանց նամակի Եվլամպիա Նիկոլանյան չհավատա ու փող չտա, դա ավելի մեծ մեղք չի՞ լինի: Ե՛վ հանգուցյալի կամքը չի կատարվի, և՛ աղքատներին նրա բարի հոգու հիշատակի համար ոչինչ չի հասնի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ եթե ես քեզ խաբում եմ, եթե նա ինձ չի խոստացել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Ուզում է պատռել նամակը): Ահա... Դժվար բան չէ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ էս անում, ի՞նչ էս անում: Սպասի՛ր: Տո՛ւր այստեղ: (Վերցնում է նամակը):

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ափսոս, որ քիչ է, Մերոպա Դավիդովնա, ահա թե ինչ պետք է ասել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչն է քիչ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այս փո՛ղը, ինչը: Կարելի էր միանգամից...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ է, գլխիցդ ձե՞ռ ես քաշել: Ախր էդքան է խոստացել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես էլ այդ եմ ասում. ափսոս, որ քիչ է խոստացել, իսկ մեկ չէ, թե ինչ կգրես:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկական ավազակ ես դու, Վովի՛ ինչպես տեսնում եմ: Ահա ես աղքատներին եմ օգնում. նրանց համար կարելի է և կեղծիքի դիմել, մեծ մեղք չէ: Իսկ դու, տես է, քո շահի համար այդպիսի ստորոթյան էլ ես ընդունակ: (Նամակը պահում է գրպանում և սպառնում Չուգունովին): Է՛յ, Վուկոլ, ամենից առաջ խի՛ղճդ, խի՛ղճդ մի մոռացիր: Չէ՞ որ սա քրեական գործ է:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Քրեական է, բարեբարուհի, քրեական:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ է, ի՞նքդ ես արել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Չէ՛ մի՛ ե՛ս, Չեռքերս դողում են... Քրոջս տղան:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Գորեցկի՞ն:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Նա՛, բարեբարուհի: Մտածեցինք՝ տղայից ոչինչ դուրս չի գա, ոչ մի տեղ չի սովորել և հազիվ գրագետ է, սովեցինք մասնավոր հողաշափին օգնական, նույնն էր, թե ձեռ քաշեցինք... Եվ հանկարծ ի՞նչ շնորհք հայտնաբերվեց: Ինչ ուզում եք սովեք՝ կետ առ կետ կանի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Նա քեզ փորձանքի կբաշի իր այդ շնորհքով:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես էլ եմ վախենում, բարեբարուհի... Բայց ձեռ քաշել՝ ափսոսում եմ, մեկ էլ տեսար պետք եկավ. եթե ո՛չ ինձ, գոնե բարի մարդկանց ծառայություն կմատուցի: (Պատուհանից դուրս նայելով): Ինչ-որ մեկը կառքով մոտեցավ տանը. Ինձ արդեն բաց թողեք գնամ: (Համբուրում է Մուրզավեցկայայի ձեռքը):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Գնաս բարով, Վուկոլ, շնորհակալ եմ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Եթե նորից բան պետք լինի, բարեբարուհի, դուք միայն իմաց արեք՝ ես ամբողջ հոգով: (Գնում է):

Մտնում է Պավլինը:

ՊԱՎԻՆ — Պարոն Լինյանը Անֆուսա Տիխոնովնայի հետ շնորհ արին:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Խնդրիր թող ներս գան:

Պավլինը գնում է: Մտնում են Լինյանը և Անֆուսան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ս Ա Ս Ն Ե Ր Ո Ր Ղ

Մուրզավեցկայա, Լինյան, Անֆուսա և Պավլինը դուռ մտ:

ԻՆԱՅՆՎ — Ո՛ւհ: Բա՛րև ձեզ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Համբուրվելով Անֆուսայի ճեռ): Բա՛րև՛, անճարակ: Նստեք, սիրելի հյուրեր: Որտեղի՞ց ես դու այս գեղեցկուհուն ճանկել:

ԼինՅԱՆՎ — Գոստիննի դվորի մոտ, Եվլամպիա Նիկոլանևան
գլխիս կապեց. դեռ կգա սրա ետևից:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (ԱՆՖուսային): Թեյ ուզո՞ւմ ես, որբու-
կըս:

ԱՆՖՈՒՍԱ — Թեյ, ճիշտն ասած...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Պավլինին): Անֆուսա Տիխոնովնային,
թեյ մատուցիր:

Պավլինը գնում է:

(Լինյանին): Որ հանձնարարած չլինեի, երևի չէիր էլ
գա ինձ մոտ:

ԼինՅԱՆՎ — Այսօր չէի գա, չէ՞ որ մենք ձեզ հետ այսօր ոչ
մի գործ էլ չունենք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Բոլորը հո գործո՞ւմ չեն գալիս. հենց
այնպես, այցելելու պառավիս, զրուցելու:

ԼինՅԱՆՎ — Ախր մենք մի զրույց ունենք՝ մոտիկներին քըն-
նադատել: Իսկ ես այսօր ժամանակ չունեմ քննադատու-
թյամբ զբաղվելու. պետք է տուն գնալ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Դե՛, իհարկե՛: Գործարար մարդ ես,
կարևոր զբաղմունք կա: Իսկ որ տուն գնացիր, պառկելու
ես բազմոցին, ես հո գիտեմ: Բոլոր բազմոցները փչաց-
րիր, ամեն բոպե զսպանակ են սարքում:

ԼինՅԱՆՎ — Հորիզոնական դիրքը շատ է գրավիչ:

Պավլինը սկսեցով բերում է թեյաման, բաժակ և շո-
քաբաման: Անֆուսան լցնում է ու կծովի խմում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (ԱՆՖուսային): Ահա քեզ աշխատանք,
նստիր ու խմիր: (Լինյանին): Այդ ինչպե՞ս ես փբվեի
ինչի՞ նման է:

ԼինՅԱՆՎ — Հոգիս բարի է, խիղճս էլ՝ մաքուր. ահա և հա-
տանում եմ: Բայց շուտով կնիհարեմ, հոգս կա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛յ քեզ հազվադեպ բան: Ի՞նչ հոգս:

ԼինՅԱՆՎ — Գայլ եմ ուզում բռնել, հալածական: Ոչ մի կերպ
հետք չեմ գտնում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛յ դու բարեպաշտ դատավոր: Աստված
տար մեր հորթերն էլ գայլ բռնեին:

ԼինՅԱՆՎ — Մեր մարդում մի դատամուլ է հայտնվել. նստա-
շրջան չկա, որ մի երկու-երեք բանասարկութուն շքնենք,
և այն էլ շատ շարամիտ: Եվ կեղծիքներ են սկսել երևալ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛յ թե մարդ բռներ ու օկրուգային դատարանին տար:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛հ, ի՞նչ քաջն է: Բայց դու ինձ ուրիշ
բան ասա. ինչո՞ւ մարդկանց մեջ չես երևում, ոչ մեկի
տանը չես լինում:

ԼինՅԱՆՎ — Վախենում եմ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Փո՞քր ես, ինչ է:

ԼինՅԱՆՎ — Փոքր լինեի՞ չէի վախենա. փոքրը չի վախենում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ինչի՞ց ես վախենում, մի ասա տեսնեմ:

ԼինՅԱՆՎ — Կամուսանացնե՛ն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ սարսափելի բան: Մի՞թե մեն-մե-
նակ ապրելն ավելի լավ է:

ԼինՅԱՆՎ — Մարդ կա վեջը չի, իսկ ես մահու չափ վախենում
եմ, որտեղ որ օրիորդ կա, ես այդ տունը ոտք չեմ դնում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Հապա ինչպե՞ս ես իմ տուն գալիս:

Մենք երկուսս էլ օրիորդ ենք՝ Ա՛ ես, Ա՛ Գլաֆիրան:

ԼինՅԱՆՎ — Ձեզ մոտ վանք է՝ հեղություն, խոնարհություն,
անդորր:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Բայց դե մեր բերանն էլ մատդ շղնես:
Ահա՛ թե ինչու ես մարդկանցից վախենում:

ԼինՅԱՆՎ — Իսկ մի՞թե մեր շուրջը մարդիկ են ապրում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Աստված իմ, հապա ուլքե՞ր, բո կար-
ծիքով:

ԼինՅԱՆՎ — Գայլեր և ոչխարներ: Գայլերն ուտում են ոչխար-
ներին, իսկ ոչխարները հեզուլթյամբ թույլ են տալիս,
որ իրենց ուտեն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Օրիորդներն է՞լ են գայլեր:

ԼինՅԱՆՎ — Ամենավտանգավորը: Աղվեսի պես նայում է,
բոլոր շարժումներն այնքան մեղմ են, աչքերը նվազուն,
բայց հենց որ մի քիչ անուշադիր եղար, կոկորդզ կբռնի:
(Ելնում է և վերցնում գլխարկը):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Աչքիդ շարունակ գայլեր են երևում.
երկյուղած ագռավը թփից էլ է վախենում, իսկ ի՞մ մա-

սին ինչ կասես, Չէ, ավելի լավ է գայլերի մեջ դիր. ես շնայած կին եմ, բայց քեզ հետ միասին մի ոչխարի հոտի մեջ չեմ ուզում լինել:

ԼինՅԱԵՎ — Պատիվ ունեմ խոնարհվելու: Յտեսությո՛ւն, Անֆուսա Տիխոնովնա: (Գնում է):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ահա, եկավ, բայց խելացի որևէ բան ասա՞ց: Հաճա՞ր է նա ձեր տանը լինում:

ԱՆՏՈՒՍԱ — Դե, ոչ այնքան, իսկ այնպես... հարեան է... հայտնի է, որ...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Հաճոյախոսություննե՞ր է անում ԵՎլամպիային:

ԱՆՏՈՒՍԱ — Չէ մի... որտեղի՞ց... ո՞նց...
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ ձեր տանն ի՞նչ է անում:

ԱՆՏՈՒՍԱ — Ամեն ինչ... (Ձեռքը քափ է տալիս, հարանջում):
Բան ասացիք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Նա հորանջում է, իսկ դու, երևի, քնում ես նույնիսկ: Վատ պահակ ես, քեզ լավ օգնական է պետք:

ՊԱՎԼԻՆ — (Բացելով դուռը): ԵՎլամպիա նիկողանա:

Մտնում է Կուլպովինան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն տ ա ս ն մ ե կ ե Ր Ո Ր Պ

Մտրգավեցկայա, Անֆուսա, Կուլպովինա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Բարև՛ ձեզ, հարո՛ւտ տիրուհի: Շնորհակալություն, որ արժանացրիք ձեր այցելությունը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես հաճախ եմ լինում ձեր տանը, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Կուլպովինային նստեցնում է իր բաճկաթոռին): Այստեղ, այստե՛ղ, պատվավոր տեղը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շնորհակալ եմ ձեզնից: (Նստում է):
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ինչպե՞ս եք ապրում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Չանձրանում եմ, Մերոպա Դավիդովնա:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ամուսնանա՞լ եք ուզում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շտապելու ի՞նչ ունեմ: Ես արդեն ձանձրացել եմ:

եմ ուրիշի խնամքի տակ ապրելուց, ուզում եմ փորձեմ իմ կամքով ապրել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Այո՛, այո՛, այո՛, Ա՛յ թե ինչ: Միայն թե պաշտպանվելն է դժվար, երբ փեսացու-երկրպագուները շարունակ պատվում են շուրջը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ փեսացուներ: Ի՞նչ երկրպագուներ: Ես դեռ ոչ մեկին չեմ տեսել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Լիքն են, տիրուհի: Ի՞նչ ես աչքիս թող փչում: Ես փորձված ճնճղուկ եմ, ինձ մղեղով չես խաբի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք, ուրեմն, ինձնից լա՛վ գիտեք:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ Լինյա՞կը, Լինյակը ի՞նչ է անում քո տանը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Չգուշակեցիք: Սխալվեցիք, Մերոպա Դավիդովնա: Ինչո՞ւ ազատությունս թողած՝ ամուսնանամ Լինյակի հետ: Նախ, նա արդեն այնքան էլ երիտասարդ չէ, և երկրորդ՝ բնավ էլ այնպիսի տղամարդ չէ, որ դուր գա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ծե՛ր է, ծե՛ր է քեզ համար: Թեկուզ կնություն էլ գնաս նրան, օգուտն ի՞նչ: Ո՛չ այրի կլինես, ո՛չ ամուսնացած: Լինյակն ի՞նչ ամուսին է: Աբլորանում է միայն:

ԱՆՏՈՒՍԱ — Ի՞նչ կա որ... դե որ... ինչպե՞ս թե... ևթե...
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ահա՛, հիմա բացատրե՛մ քեզ: Ախր, ես աղջիկ եմ, օրիո՛րդ: Արի ու կանանց հետ զրույցի բռնըվիր. անմեղ տեղը մեղք կգործես:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, ես ուզում եմ սպասել:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ ես ասում եմ ամուսնացի՛ր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք խորհո՞ւրդ եք տալիս:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛ւմ հետ:
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ թե ում հետ, այդ մասին կմտածենք, դրա համար էլ աստված խելք է տվել:

ԱՆՏՈՒՍԱ — Այո՛, այո՛... թե որ...
ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ ես այո-այո անում: Աստված խելք է տվել, բայց ոչ բոլորին. քեզ նեղացրել է, չի տվել՝ մի՛ պահանջիր:

ԱՆՅՈՒՍԱ — (Չեռբը բափ տալով): Դե, դե որ դուք... ինքներդ... Իսկ ես... դե ինչ...
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դու ծերունի Կուպալինի հետ ամուսնացար. հո չե՞ս ասի թե սիրում էիր: Նրա հարստութեանը գնացիր, փողերի՞ն:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց դուք...
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ի՞նչ՝ «դուք»: էխ, տիրուհի... Մատենցիք քեզ: Իսկ դա լավ չէ, մե՞ղք է:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց չե՞ որ դուք ինձ խորհուրդ տվիք, մի՞թե ես այն ժամանակ հասկանում էի:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե դու փշերդ մի տնկիր, ես քեզ չեմ կշտամբում, ես քո հոգու համար եմ մտածում: Հիմա քեզ ի՞նչ է պետք՝ խիղճդ մաքրելու համար: Սիրել է պետք մի ոչ հարուստ մարդու, ամուսնանալ նրա հետ և ունեցածդ հարստութեամբ պարզևատրել սիրած մարդուն. ահա դրանով էլ մեղքից կազատվես:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հե՛շտ է ասել՝ սիրի՛ր:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Քո տարիքում դժվար չէ սիրելը, միայն թե չմահավան մի լինի: Դու ջահել ես, ուրեմն ջահելի էլ փնտրիր: Ուզում ես քո կամբո՞վ ապրել, ի՞նքդ մեծ լինել, ուրեմն մի շունկորի գտիր, քո դուղուկի աակ կպարի: Քո խելքի մասին էլ՝ դժվար է ասել, թե ծով է, ուրեմն հասարակ ընտրություն արա, որ մարդուդ ներքևից չնայես: Ի՞նչ է, ճիշտ չե՞մ ասում:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես ձեզ հետ համաձայն եմ, բայց որտեղի՞ց գտնեմ այդպիսի մարդու:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Կգտնենք, հո աշխարհի վերջը չի: Ե՛ս կգտնեմ, ե՛ս կգտնեմ: Միայն թե դու, եթե քո բարին ես ուզում, խելքիդ զոռ մի տուր, այլ ի՞նձ վստահիր: Դու լսիր ինձ, բախտդ բերել է, որ ես եմ քո հոգսը բաշտում. հո բուրբի համար ձեռուտ չե՞մ ընկնում, այլ միայն նրանց, ում սիրում եմ:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շնորհակալ եմ ձեզնից:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Օհ, սիրելիներս, օգտվեք իմ բարությունից, բանի դեռ ողջ եմ: Որ մեռա, լավ իմացեք, հարազատ մորից կզրկվեք:
ԱՆՅՈՒՍԱ — (Սրբելով արցունքները): Դե էլ ի՞նչ... ի՞նչ...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — (Անփուսային): Հերիք է լաց լինես, սպասի՛ր, ես դեռ ապրել եմ ուզում: (Կուպալինային): Ահա թե ինչ, գեղեցկուհիս, քո մասին դու հիշում ես, ամուսնուդ էլ հիշո՞ւմ ես ինչպես հարկն է:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հիշո՞ւմ եմ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Տեսնո՞ւմ ես, հիշում ես: Իսկ պետք է, որ ուրիշներն էլ հիշեն. աղքատներին մի մոռացիր, նրանց աղոթքներն ավելի շուտ են տեղ հասնում:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես հիշում եմ... դուք ասացիք ինձ... ես բերել եմ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այդ ի՞նչ է, խոսելիդ էլ չի գալիս: Եթե այդպես է, ավելի լավ է՝ շտաս: Մի՞թե լավությունն այդպես են անում: Հո ես իմ խոսքերը քեզ չէի ասում:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե, ես հավատում եմ ձեզ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Երևում է՝ վատ ես հավատում: Թե՛ կարծում ես, որ քեզնից փող եմ ուզում պոկել, Ահա՛, խնդրե՛մ, տե՛ս: (Գրպանից հանում է նամակը):
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Պետք չէ, հավատացնում եմ ձեզ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ո՛ր, տիրուհի՛ս, ուրիշի հոգին չես իմանա: (Նամակը մեկնում է նրան): Ի՞նչ ես վախենում, վերցրո՛ւ:

Կուպալինան վերցնում է նամակը:

Այս ո՞վ է գրել:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իմ ամուսինը:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Իսկ ի՞նչ է գրված:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Նույն բանը, ինչի մասին ասացիք:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե, ուրեմն, դու հավատա՞ ինձ:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախր ես երբեք չէի էլ կասկածում: (Բաց է անում պայուսակը, մեջը դնում նամակն ու հանում փոզերը): Ահա՛, համե՛ցեք:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այս ի՞նչ ես դու ինձ տալիս:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Փո՛ղը:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Բայց ես դրանց հետ գործ ունենալ էլ չեմ սիրում, մի տեսակ զզվելի է ձեռքում պահել այդ կեղտը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Համեմայն դեպս, հաշվեք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Շատ էլ պետք է: Իմ փողերը չեն, ձեռքերս էլ իզուր չեմ կեղտոտի: Եթե պակաս էլ է, դու ինձ չես խաբում, այլ որբերին. ավել է, մի ուրիշ մեկն էլ կաղոթի ամուսնուդ համար: Դու դեռ երևի ստացական էլ ուղես. չեմ տա, տիրուհի՛ս, մի՛ վախեցիր՝ նորից չեմ ուզի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ո՞ւր գնեմ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Դիր սեղանի վրա, գրքի մեջ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Փողը դնելով գրքի մեջ): Մորաքո՛ւյր, գնալու ժամանակը չէ՞:

ԱՆՅՈՒՍԱ — Դե ես... դե ինչ... ես ահա...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Մուրզավեցկայային): Լսել եմ, որ ձեր եղբոր որդին ինչ-որ պահանջ ունի իմ ամուսնուց:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ դու անհանգստանո՞ւմ ես: Իզո՞ւր: Քո ի՞նչ գործն է, թե ամուսինդ նրան կողոպտել է: Աղքատ է, աղքատ, թող սղորմություն խնդրի ու վշտից գինեատները քարշ դա: Այդպես ապրեցիր՝ հարուստ կի՞նես, Թե՞ դու այդպիսին չես: Դե լավ, ես ինքս քո տուն կգամ կխոսենք: Շուտով, շուտով կգամ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե, ուրեմն, ցտեսություն, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Գնաք բարով, թանկագին հյուրեր: (Նայում է Կուպավինային): Բարի սիրտ ունես, եվլամպեյուշկա: Աստված քեզ բախտավորություն տա (չըռուկով), լավ ամուսին: Ես քեզ հարազատ աղջկաս նման սիրում եմ: (Անֆուսային): Էնպե՛ս էլ հագնում-կապում ես, ասես Կիև ես գնում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Դռնից): Մնա՛ք բարով:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Դռնից): Կառապանին ասեք զգալը քե՛ի:

ԱՆՅՈՒՍԱ — Դե մենք... դե ես...

Կուպավինան և Անֆուսան գնում են. Մուրզավեցկայան փողը հանում է գրքի միջից և հաշվում: Մի մասը ճեղք գրքի մեջ է դնում, մնացածը՝ գրպանը: Նստում է բազմաթափ և զանգը տալիս: Նեոս են մանավ Պավլինը և Դլաֆիրան:

Տ Ե Մ Ե Ր Ա Ն Ի Մ Ա Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցկայա, Դլաֆիրա և Պավլին:

ՊԱՎԻՆ — Ի՞նչ կհրամայեք, տիրուհի:

Դլաֆիրան կանգնել է Մուրզավեցկայայի կողքին, աչքերը գեռնիկ խճառեց:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Պավլինին): Լա՛վ լսիր: Ես միտքս փոխեցի, բոլորին պետք է վճարել: Մարդիկ հրեշտակներ չեն, որ փորձես: Մի գրքի մեջ նայիր, փող չկա՞:

ՊԱՎԻՆ — (Բացելով գիրքը): Կա՛, տիրուհի՛:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Վերցրո՛ւ:

Պավլինը վերցնում է փողը:

Շա՛տ ենք պարտք:

ՊԱՎԻՆ — Համարյա հինգ հարյուր ուսլա:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Չեռքիդ ինչքա՞ն է:

ՊԱՎԻՆ — (Հաշվելով): Ճիշտ այդքան:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Բաժանիր բոլորին: Գնա՛:

ՊԱՎԻՆ — Լսո՞ւմ եմ: Էսպիսի դեպքերը թերթերում պետք է տպել: (Գնում է):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Գլաֆիրա, ես քեզ ասելիք ունեմ:

ԳԼԱՖԻՐԱ — Հրամայե՛ք, տիրուհի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ես քեզ այսօր Կուպավինայի մոտ կտանեմ. ընկերացիր հետը, սիրտը շահիր: Նա խորամանկ կին չէ, իսկ քեզ սովորեցնելն ավելորդ է:

ԳԼԱՖԻՐԱ — Լսո՞ւմ եմ, տիրուհի:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Հենց որ տեսար, որ Միշկա Լինյանը մոտ-մոտ է անում, շթողես սիրաբանեն, աշխատիր բաժանել, սևացրու նրան Կուպավինայի առաջ: Իսկ Ապոլոնին՝ գովի՛ր:

ԳԼԱՖԻՐԱ — Օ՛, հաճույթով, մայրիկ, հաճույթով:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ինքդ էլ Լինյանի վրա աչք չդրես: Ես նրա համար հարսնացու եմ պատրաստել:

ԳԼԱՅԻՐԱ — Ես ուրիշ երազներ ունեմ, տիրուհի, իմ երազանքը ճգնավորի խուցն է:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դա թո բանը չէ:

ԳԼԱՅԻՐԱ — Ես երկրայինի մասին չեմ մտածում:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — (Աշխերը երկինք բարձրացնելով): Ա՛խ, նզովյա՛լ եմ ես, նզովյա՛լ: (Գլաֆիրային): Գլաֆիրա՛, ես նզովյալ եմ: Ի՞նչ ես ինձ այդպես նայում: Այո, ես ահա նզովյալ եմ, հապա ի՞նչ էիր կարծում: Երևում է քավություն չի էլ լինի, որ քիչ առաջ մեղք գործեցի: Անխելք կնկա խաբեցի. նույնն է, թե երեխայի խաբես: Եվ չեմ էլ ճաշի, ծոմ կպահեմ: Դո՛ւ էլ մի ճաշիր, ծո՛մ պահիր հետս: Հենց հիմա, հենց հիմա գնանք աղոթարան: Դո՛ւ էլ, դո՛ւ էլ... (Ելնում է):

Գլաֆիրան բռնում է նրա աչքերը:

Տա՛ր ինձ: (Գնում է, ասես բոլորովին ուժասպառ): Մե՛ղք գործեցի, նզովյա՛լս, մե՛ղք գործեցի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

ԿՈՒՊԱՎԻՆԱ:

ԱՆՏՈՒՍԱ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ:

ԼԻՆՅԱՆՎ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱ:

ԳԼԱՅԻՐԱ:

Երբագեղ կահավորված սենյակ Կուպալինայի դաստակերտում: Կանացի գրասեղան՝ բոլոր տարազաներով: Խորհում դանիկն ասեղ թաց դուռ, կողմերից, երկու ուրիշ դռներ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ո Ա Չ Ի Ն

Աշ կողմի դռներից ներս է մտնում Կուպալինան, հետո՝ Չուգունովը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Նստելով): Ո՞վ կա դահլիճում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Դանիլներից): Մենք, Եվլամպիա Նիկոլանա, մենք Անֆուսա Տիխոնովնայի հետ պառավական մեր գործին ենք, թուղթ ենք խաղում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Եկեք այստեղ, Վուկոլ Նաումիչ:

Չուգունովը ներս է մտնում:

Նստե՛ք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Խոնարհաբար շնորհակալ եմ, Կնստե՛մ, կնքատե՛մ: (Նստում է):

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ամուսինս ի՞նչ գործեր է ունեցել Մուրզավեցկայայի եղբոր որդու հետ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Նրա հոր հետ ինչ-որ հաշիվներ է ունեցել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մերոպա Դավիդովնան ամեն տեղ գոռում է, որ մենք նրա եղբոր որդուն կողոպտել ենք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Շատ խիստ տիկին է Մերոպա Դավիդովնան:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ի՞նչ են ուզում ինձանից:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ախր դուք ինչո՞ւ եք անհանգստանում, գլուխ ցավեցնում: Հապա ես ի՞նչ եմ այստեղ: Իզո՞ւր եմ աշխատավարձ ստանում, ի՞նչ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այդ խոսակցությունն ինձ համար շատ տհաճ է: Որևէ ձևով արագ վերջացրեք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հաշտությամբ կհրամայեք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես շա՛տ եմ հասկանում. այո, իհարկե, հաշտությամբ ամենից լավն է:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Լսո՛ւմ եմ: Իսկ փողի՞ հարցը, եթե պետք եղավ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես առձեռն փող քիչ ունեմ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ա՛յ դա ափսոս: Այդպիսի նշանավոր կին եք և նեղություն եք տալիս ձեզ փողի հարցում, նույնիսկ զարմանալի է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ սրտեղի՞ց փող վերցնեմ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ եք ասում, հրամայեք ինձ, և խնդրանք որ
ձեզ պետք է, այնքան էլ կլինի:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե, ուրեմն, փողի ճար արեք, Վուկոլ նաու-

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես չեմ էլ փնտրի. ձեր անունն իսկ տեղով
ոսկի է: Միայն նեղություն քաշեք ձեր անունը ոտորա-

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ ստորագրեմ: Ես ձեզ չեմ հասկանում:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հիմա ես ձեզ գործով կբացատրեմ: Բարեհա-

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ տարօրինակ թուղթ է:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այո, հրաշք թուղթ են պատրաստել: Հաճեցեք
այստեղ ներքեր գրել՝ «Գնդապետի այրի Եվամպիա
Նիկոլակնա Կուպավինա»:

Կուպավինան գրում է:

Մա էր եղած-չեղածը. ահա և ձեզ փոր: (Վրան ավագ է
լցնում): Եթե մեկին վճարելու հարկ լինի, այ այստեղ
թղթի վրա կգրենք հինգ հարյուր կամ էլ հազար, և
պատրաստ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հիմա հասկանում եմ:

Չազունովը մի քանի անգամ ձեռք երկտտ ստանում է
բոլորն, բայց Կուպավինայի հայացքին հաճողություն պե-
տ է փառում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հանկարծ չկորչի՞:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե՛, վերցրե՛ք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Որտե՞ղ կհրամայեք դնել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Որտեղ ուզում եք: Դրեք ձեր պայտասակը:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպես հաճեցիք ասե՛լ: Վերցնեմ ինձ մե՞տ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո: Ինչո՞ւ եք երկմտում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես չեմ երկմտում, ի՞նչ եք ասում: Իսկ եթե
դուք այդպես եք կարգադրում, խոնարհաբար շնորհա-
կալ եմ ձեզնից: (Մուրհակը վերցնում է):

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչի՞ համար եք ինձ շնորհակալություն
հայտնում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպե՞ս չհայտնեմ այսպիսի շնորհի համար:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ շնորհ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ վստահությունը քի՞չ բան է: Մեր հա-
հաճեցությունում ո՞վ այսպիսի բան կաներ: Ո՛չ մեկը: Չու-
գունովի ձեռքը՝ բլանկ: Աստված իմ: Իհարկե, մենք
բոլորս էլ մարդ ենք, Եվամպիա Նիկոլակնա, բոլորս
էլ մարդ ենք, աղքատություն, ընտանիք... Իսկ արդեն
տարածել են՝ «Վուկոլը խաբեբա է, Վուկոլին գրող վըս-
տահել չի կարելի»: Եվ ահա ձեր արածը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Լա՛վ, լա՛վ: Միայն, խնդրում եմ, արագ հա-
շիվները վերջացրեք Մուրզավեցկիների հետ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Մուրզավեցկիներն ի՞նչ: Ձեր ճկույթն էլ շար-
ժեն: Թե չէ՛ խարդախ: Ախր ես էլ զգացմունք ունեմ:
(Խփում է կրճիին): Արցունքե՛ն՝ րո տեսեք: Հո դրանք իզուր
տեղը չեն թափվում: (Համբուրում է Կուպավինայի ձեռ-
քը): Դե, հիմա ես ոնց ձեր դեմ մի որևէ այնպիսի... մեծ
խարդախություն անեմ: Դա ինձ համար շատ դժվար
կլինի և նույնիսկ շատ ամոթալի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Սպասե՛ք, կարծես մարդ կա դահլիճում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Երևի հյուրեր են: Ես գրասենյակում կլինեմ:
(Գնում է ձախ):

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Մտանալով դահլիճի դռանը): Մորաբույր,
այդ ո՞ւմ հետ եք խոսում:

Մտնում է կենտրոն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ք Կ Ր Ք Ր Գ

Կուպավինա, կենտրոն:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛, այդ դո՞ւք եք, Միխայլո Բարիսիչ:

ԻՆՅԱԿՎ — Բարե ձեզ: Վաղուց եք քաղաքից եկել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հենց նոր եկա:

ԻՆՅԱԿՎ — Իսկ ես ձեզ փոստում էի սպասում, նեղություն

կկրեիք կմտնեիք փոստ: Թե չէ ստիպում եք երկու վերում
ճանապարհը ծռել, գալ ձեր տուն:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ներեցե՛ք: Ես ոչ մեկից նամակ չեմ սպասում:

ԼԻՅԱՆՎ — Բայց չէր խանգարի հետաքրքրվելիք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մի՛թե կա:

ԼԻՅԱՆՎ — Բարեկամից, Վասիլի Իվանիչ Բերկուտովից. մեկը՝
ինձ, մյուսը՝ ձեզ: (Նամակը տալիս է Կուպավինային):

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Նամակը դնելով սեղանին): Դուք երևի ձեր
նամակն արդեն կարդացել եք: Ի՞նչ է գրում:

ԼԻՅԱՆՎ — Բայց դուք ձերը մի հետաձգեք, կարդացե՛ք,
պետք չէ ձեռնադուրսն հոտից ընկնել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դեռ կհասցնեմ: Շտապելու ի՞նչ կա, Միխայիլ
Ի Բորիսիչ:

ԼԻՅԱՆՎ — Կարդացե՛ք, շտա՛պ կարդացե՛ք: Հաճելի նորու-
թյուն կիմանաք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ նորություն:

ԼԻՅԱՆՎ — Նա այսօր կամ վաղը դաստակերտ կգա: Ա՛յ
ուրախություն:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՞ւմ համար:

ԼԻՅԱՆՎ — Ինձ համար, և ընդհանրապես բոլորի համար էլ
կարծում եմ, Իսկ դուք մի՛թե...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ոչ այնքան, որքան դուք: Դուք ինձ ներքե,
Միխայիլ Բորիսիչ, եթե ես հինգ վերստ չվազեմ նրան
դիմավորելու:

ԼԻՅԱՆՎ — Իմ խեղճ բարեկամ: Տեսնես սիրտը վկայո՞ւմ է,
թե ինչպիսի անտարբերություն է իրեն այստեղ սպասում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ արած, որտեղի՞ց վերցնեմ այդքան ուրա-
խություն: Ինչքան ունենե՞լ այդ է:

ԼԻՅԱՆՎ — Ինչո՞ւ էիք քաղաք գնացել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հազար ութիս փող տարա:

ԼԻՅԱՆՎ — Ո՞ւմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մերոպա Դավիդովնային:

ԼԻՅԱՆՎ — Ախր ինչո՞ւ: Անունն ի՞նչ գրիք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Աղքատների համար, հանգուցյալ ամուսնուս
հրամանով:

ԼԻՅԱՆՎ — Ի՞նչ կարգադրություն, ո՞չ մի կարգադրություն
էլ չի եղել, մտքովն էլ չի անցկացրել կարգադրել: Նա

տանել չէր կարողանում Մուրզավեցկայային և նրան
կեղծ բարեպաշտ էր անվանում: Ինչպե՞ս են ձեզ խաբում,
ա՛յ, ա՛յ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք միշտ այդպես անարդարացի եք Մե-
րոպա Դավիդովնայի նկատմամբ: Ե՛րբ եք վերջ տալու
նրան՝ այդ պատվարժան տիկնոջը վիրավորելուն: Ահա
տեսե՛ք: (Տալիս է նրան Մուրզավեցկայայից վերցրած
նամակը):

ԼԻՅԱՆՎ — (Զննելով նամակը): Ինձ ինչ ուզում եք արեք,
սա կեղծիք է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, Միխայիլ Բո-
րիսիչ: Մի՛թե դա հնարավոր բան է:

ԼԻՅԱՆՎ — (Տափացած): Ո՞վ է նրա համար այս բաները
սարքում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Վե՛րջ տվեք, խնդրում եմ: Սարսափելի է լը-
սելը:

ԼԻՅԱՆՎ — Թույլ տվեք ինձ կարճ ժամանակով վերցնել այս
նամակը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Վերցրե՛ք: Միայն թե, խնդրում եմ, աղմուկ
չսարքեք և չգժտեցնեք ինձ ու Մերոպա Դավիդովնային.
ես նրա հետ լուրջ գործ ունեմ:

ԼԻՅԱՆՎ — Ո՛չ մի գործ, հավատացնում եմ ձեզ, Ես ձեր
բոլոր գործերը գիտեմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ոչ թե ես, այլ ամուսինս ինչ-որ հաշիվներ է
ունեցել Մուրզավեցկու, Մերոպա Դավիդովնայի եղբոր
հետ:

ԼԻՅԱՆՎ — (Տափացած): Ո՛չ մի հաշիվ էլ չի եղել, հասկա-
ցե՛ք, դա նորից ինչ-որ գրագրի բանասարկություն է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե, հանգստացե՛ք. դա ձեզ չի վերաբերում:
Ես հանձնարարեցի Վուկոլ Նամուխին այդ գործը խա-
ղաղ վերջացնի. ես արդեն ստորագրել էլ եմ:

ԼԻՅԱՆՎ — Ա՛խ, աստված իմ: Առանց ինձ հետ խորհրդակ-
ցելու ոչինչ մի ստորագրե՛ք: Ի՞նչ ստորագրեցիք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մի վախեցե՛ք: Ես ինչ-որ ստորագրել եմ,
այնտեղ ոչինչ չկար:

ԼԻՅԱՆՎ — Իսկ որտեղի՞ց գիտեք, որ ոչինչ չկար:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛յ քեզ բան: Ես աչքեր ունեմ:

ԿՐՆՅԱՆՆՎ — Ի՞նչ կարող եք ջոկել դուք ձեր աչքերով: Այս
 գործում պետք է իրավաբան լինել:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛յ, դա ծիծաղելի է, վերջապես: Ի՞նչ իրա-
 վաբան, երբ որ ոչինչ չկա:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Ինչպե՞ս թե «ոչինչ»:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հենց այնպես, ոչինչ, մաքուր թուղթ:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Քանի գնում՝ վատանում է: Ախր դուք բլանկ եք
 ստորագրել:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ բլանկ:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Մուրհակ: Այնտեղ, որտեղ ոչինչ չկա, ինչ ուզում
 են կարող են դրել, և ձեզնից պահանջել հրսոսն, հար-
 յուր հազար:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Չէ՛ մի: Ի՞նչ վառ կարծիքի եք մարդկանց
 մասին: Չուզումս, ախր, արցունքն աչքերին շնորհա-
 կարություն հայտնեց վատահույսյան համար: Ասում եմ
 ձեզ՝ նա լաց էր լինում:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Կոկորդիլոսներն էլ են լաց լինում, բայց և այն-
 պես մի ամբողջ հորթ են կուլ տալիս:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն ինձնից հաստատ հարյուր հազար
 կպահանջեն:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Թող հարյուր հազար չլինի, բայց որոշ գումար
 անպայման կպահանջեն:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց դուք որտեղի՞ց գիտեք:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Դրան ես սուսական հեքիաթով կպատասխանեմ.
 «Գնչուն ծառն է բարձրացել ու կտրում է այն ճյուղը, որի
 վրա նստած է: Կողքից մի ռուս է անցնում ու ասում.
 «Գնչո՞ւ, ընկենի՞ւ ես»: «Իսկ դո՞ւ որտեղից գիտես, —
 հարցնում է գնչուն, — մարգարե հո չե՞ս»:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դա հիմարությունն է, հիմարությունն, Միխայ-
 լո Բորիսիչ: Ի՞նչ կկաթի այն ճյուղը, որի վրա նստած է:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Բայ, շատ էլ խելացի է: Ես ամեն քալափոխի տես-
 նում եմ մարդկանց, որոնք ճիշտ գնչուի նման են անում:
 Եվ քանի՞ անգամ է ինձ վիճակվել այդպիսի մարգարե
 փնել:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես հասկանում եմ, թե ուր է տանում այս խո-
 սակցությունը: դուք ուզում եք ձեր սիրած թեմային
 անդրադարձաւ. թե կանայք, ահա, ոչինչ չգիտեն, ոչինչ

չեն կարողանում անել, թե նրանք առանց խնամակալու-
 թյան չեն կարող ապրել: Գե ի՞նչ, ես ձեզ կառաջացրեմ,
 որ առանց կողմնակի օգնության էլ կարող եմ վարել իմ
 գործերը:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Աստված ձեզ օգնական: Իսկ ավելի լավ կլիներ,
 որ դուք զղջալիք ձեր մոլորության համար, քանի դեռ
 քամուն չեք տվել ձեր ամբողջ ունեցվածքը:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մնացե՛ք ճաշենք:
 ԼԻՆՅԱՆՆՎ — Թերևս միայն մի քիչ հանգստանալ տալավա-
 րում: Թույլ կտա՞ք:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Գնացե՛ք, ճաշը դեռ շուտ չի քինի:
 ԱՆՏՈՒՍԱ — (Դանկիկից): Հյուրերը... արգեն աջատեղ են...
 նրանք...
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ է, Մուրզավեցկայա՞ն:
 ԱՆՏՈՒՍԱ — (Դանկիկից): Այո, արդեն...
 ԼԻՆՅԱՆՆՎ — Ո՛ր, կենթե՞ք: Պրահան երկու անգամ երեսն տես-
 նելն ինձ համար շափից ավելի է: Ես այդի կգնամ, նա
 ինձ չի էլ նկատի: Կարելի՞ է այստեղով անցնել: (Յույց
 է ապիս ձախ կողմի դուր):
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ենթե՞ր արեք: Յոթնություն: (Գնում է դան-
 կիկ):

Կեյսեր գնում է ծախակողմյան դռով: Դանկիկից Ենու
 են մտնում Կուպավինան, Մուրզավեցկայան, Մուրզավեց-
 կին, Գյաֆիրան և Անթուսան:

Տ Ե Ս Ա Ր Ք Ա Ն Ե Ր Պ Ո Ր Պ

Կուպավինա, Մուրզավեցկի, Մուրզավեցկայա, Գյաֆիրա,
 Անթուսա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ահա անավանդազով հյուր ենք եկել:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շատ ուրախ եմ:
 ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ուրախ ես, թե չէ, ոչինչ անել չես կա-
 րող. պիտի ընդունես: Հրես: (Յույց է ապիս եղբար ու-
 դուն): Կպել, պոկ չի գալիս:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Ախ, մա տանտ, լեսե՛:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Լո՛ր, խնդրում եմ: Ի՞նչ վատ բան եմ
ասում որ: Գու միշտ էլ կարող ես Եվլամպիա Նիկոլակե-
նայի մոտ գալ, և նա քեզ պարտավոր է պատվով ըն-
դունել. դու անբան ու դատարկախոս չես, դու արդար
գործի համար ես գալիս: Ա՛յ, թող լսի՛:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես՝ հաճույքով:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Չէ մի՛ հաճույքով: Այս գործը, սիրե-

լիս, աստժո կամոք է, այ թե քեզ ինչ կասեմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց ի՞նչ գործ է, ասեք իմանամ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ես ի՞նչ, ես ասելու բան չունեմ: Նա
նեղացած է, նա էլ քեզ կասի: Խոսեք, գուցե աստված
տա՝ բարիչեք: Թե խելք ունես՝ կհասկանաս, տունուտեղդ
քամուն չես տա, իսկ թե կհամառես, էլ ինձնից չնեղա-
նաս, իմ շապիկն իմ մարմնին ավելի մոտ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ կհրամայեք հյուրասիրեմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ի՞նչ հյուրասիրութուն: Տոն է, ես այս-
տեղից հյուրասիրության եմ գնում: Չեզ մոտ, այստեղից
քիչ հեռու եկեղեցու տոն է, իսկ դու, երևի, չգիտես էր
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչպե՞ս չիմանամ: Իմ մարգագետնում է ժո-
ղովուրդն ուրախանում: Իսկ թե՛ից, այնուամենայնիվ, չեք
հրաժարվի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այո՛, թերե՛ս:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մորաքո՛ւյր:

ԱՆՖՈՒՍԱ — Դե ես... արգեն վաղուց... դե պատրաստ է...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Իսկ այս աղջկան, կներես, բերել եմ, որ
քո մոտ հյուր մնա:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շատ շնորհակալ եմ ձեզնից:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Մտածեցի՛ մենակ տխուր է, Անֆուսայի
հետ երկար խոսել չի լինի, իսկ այս սիրուն թռչնակն,
ահա, լեզու թրջել սիրում է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ներեցե՛ք ինձ: Ես մի րոպեով, ես միայն
Գլաֆիրա Ալեքսանյանի ցույց տամ իր սենյակը: (Գլա-
ֆիրային): Գնա՛նք:

Կուպավինան և Գլաֆիրան գնում են արկղովյան դռով:

Տ Ե ա ր ա ն չ ո ր ր ո ր ւ

Մարգավեցկայա, Մարգավեցկի, Անֆուսա, հետ Կուպա-
վինա:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Լա՛վ դաստակերտ է:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Մանիֆիկ՛:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Նվաճիր այս այրու սիրտը՝ քո՛նր կլինի:

Միայն թե քեզ խայտառակ շանես:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Ի՞նչ եք ասում, մա տանտ: Ե՛ս:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այո՛, հե՛նց դու: Համարձակ խոսում ես,
բայց քեզ մարդ մի տեսակ դժվար է հավատում:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Տասը բառ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ի՞նչ «տասը»:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Ես երբեք տասը բառից ավել կանանց հետ
չեմ խոսում: Տասը բառ, և հերիք է, ա՛յ, այսքա՛ն հերիք
է: (Ցույց է տալիս կոկորդը):

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե, թող տասը չլինի, միայն թե...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Չէ, տասից ավել, մա տանտ, չի կարելի.
վտանգավոր է, գրողը տանի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այդքան, ու վտանգավո՛ր է:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԻ — Ազնիվ խոսք: Գիտես ես նետվում, ի՞նչ մի
հաճելի բան է:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Հիմա կտեսնենք:

Գալիս է Կուպավինան:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մորաքույր, թե՛յ լցրեք:

ԱՆՖՈՒՍԱ — Ես ահա... ես... (Ուզում է գնալ):

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Գնանք, ես էլ հետդ կգամ: Տանել չեմ
կարող սպասավորների տված թե՛յը. ինքնանուի կողքը
նստելն ուրիշ բան է: (Անֆուսայի հետ գնում է ձախա-
կողմյան դռով):

¹ Հիանալի, հոյակապ — (ֆրանս.):

Տ Ե Ա Ս Բ Մ Ա Ն Գ Ի Ն Պ Ե Ր Մ Կ

Առաջագին, Կապույթի:

- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ դուք թե՛ շե՛ք ուղում:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Առաջ՝ թե՛: Ար կատեն էք ժամե զը մա վի՛, Կնկա գրաղմունք է:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դե, ինչպես կուզեք: Դուք ցանկանում էիք ձեր գործի մասին խոսել ինձ հետ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ցանկանում էի, ահավասար ցանկանում էի:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն դի՛մեք Վուկոլ Լաստիշին, ես նրան եմ հանձնարարել այդ գործը:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Վուկոլ նաումըն ի՞նչ: Կամարենե վո՞՞, գրագիր է: Իսկ դուք, դուք: Դա... ոչ, ինչ կուզեք ասեք, դա ուրիշ բան է:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց ես ձեզ հետ խոսել չեմ կարող, ես այդ գործից ոչինչ չեմ հասկանում:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ի՞նչ գործ: Դա ի՞նչ գործ է որ: Հաշիվ-մաշիվ: Այդ գործն ի՞նչ է հավերժության հետ համեմատած է, քիչ էր մնում ասեի, թթու վարունգի հետ: Պարզո՞ն: Հիմարություն ասացի: Սրամտություն անելու ստորագույն սովորությունից չեմ կարողանում ձեռ քաշել: Բայց դա մի կողմ:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ էք կամենում, ես ձեզ չեմ հասկանում:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ստոր հոգիները փող են փնտրում, վե՛հ հոգիները՝ երանություն, ինչպես ասել է գնդի մի գրագիր:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ դուք ի՞նչ երանություն եք փնտրում:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ծ՛ս: Օ՛: Խոսքեր չկան, որպեսզի նկարագրեմ այդ երանությունը: Այդպիսի խոսքեր չկան:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բարեմն այդպես էլ ես չե՞մ իմանա: Ափսո՞ս:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Երկնային աշքեր, թաքուն ժպիտներ, գիղճիկներ, ախտախոտեր և այլն. այդ բոլորն անմատչելի են: Թույլ ավել ձեզ հետ անկեղծ խոսել:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շնորհ արեք:

¹ Երբեք կյանքում — (Ֆրանս.):
² Հասկանում եք — (Ֆրանս.):

- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Դուք ինձ չեք տեսնի ձեր առջե ձեզի եկած:
- Դա արդե՛ս ասանգե: Ես հպարտ եմ:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛խ, շա՛տ ուրախ եմ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Բայց սիրել ինձ դուք պարտավոր եք:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ասացե՛ք, ինչպե՞ս:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ասենք, ինչպես կամենաք:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո՛, թույլ ավել:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Կրկնում եմ՝ ես հպարտ եմ:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ — Լսեցի:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Այո. Բայց գիտե՛ք ինչ հանգամանք կա, սատանան տանի: Որոշ պատճառներով. Ես ձեզ կասեի, բայց դուք չեք հասկանա... ես չեմ ծառայում, բավական է: Ձանում էի, չգնահատեցի, էլ բավական է: Ժառանգական՝ շունեմ, ինքս էլ կարողություն ձեռք չեմ բերել... ԿՈՒՊԱՎԻՆԱ — Եթե ամուսինս իրաք ձեզ պարտք է եղել, դուք կստանաք...
 ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ա՛խ, թողե՛ք, լես: Դուք ինձ ձանձրացրիք: Միլ պարզո՞ն, մաշում: Ես թուլորովին ուրիշ բանի մասին եմ խոսում: Հաճեցեք տեսնել՝ ես մաքուր եմ... Մա տանտը պատճառ չեք տրոգ է, նա չի հասկանում և չի կարող հասկանալ երիտասարդ, ամուրի սպայի պահանջները, և ժլատ է, ինչպես...
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես ձեզ ասում եմ, որ դուք կստանաք:
 ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Դուք էլի՞ ձեռն եք ասում: Դա ձանձրալի է... Ես երբեմն ինձ ստիպված եմ զրկել ամենամանրածեղտ հաճույքներից: Դե, ասենք, ժխտաբար... Ես նույնիսկ ամաչում եմ փոստականել: Թմանժինե վո՞՞, աղնը-վաղան, և առանց ժխտաբարի:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն ի՞նչ է ձեզ պետք:
 ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Ապրեզան քելըշոզ՞:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Որքա՞ն է պետք:
 ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ — Իհարկե, գոխաբիեպար...
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո, պարզ է, բայց որքա՞ն:

¹ Հազար ներողություն — (Ֆրանս):
² Պատկերացրեք — (Ֆրանս.):
³ Հիմա՛ ոչ շատ — (Ֆրանս.):

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Իսկ դու ինչպես կամենար: Ննայս, այնքան էլ շատ չէ. Բայց և այնպես ոչ քսան կոպեկ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Գրպանից հանում է բղրաղբամբ): Հինգ ուրբի բավակա՞ն է:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Սեռասե՛հ, Մերսի, գրան մերսի: Երկու օր հետո, ազնիվ խոսք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ներեցե՞ք ուրեմն: Գնամ տիկնանց մոտ: (Գր-նում է):

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ո՛չ, ոտմ... դե, դրա էլ: Վնասակար է ինձ, իմ բնավորությունը չի բռնում: Փորձեմ ապա (մատով քփացնում է փողկապիճ) չեխական թրմօղիով գրաղվել: Միայն թե պոկվեմ մա տանտից: (Փողը քափցնում է գրպանում):

Մտնում է Վարզավեցկայան:

Տ Ե Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ո Ր Դ

Վարզավեցկի և Վարզավեցկայա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ի՞նչ ես թաքցնում:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Այնպես, հիշաւաակի համար մի շնչին բան խնդրեցի, փոքրիկ հուշանվեր:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ճիշտ չէ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Պետք է, մա տանտ, պետք է: Ահա, օրինակ, այսօր երեկոյան եթե ինձ շթողներ...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ո՞ւր: Զրոսանքի՞, հարբած մուծիկ-ների հետ թրև գալո՞ւ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Քե՛լ իղե՞, Ի՞նչ ունեմ այնտեղ տեսնելու:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Հապա ո՞ւր:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Շփելով ճակատը): Հետո, մա տանտ, հե՛տո կիմանար:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛չ, հիմա՞ ասա:

¹ Բավական է — (ֆրանս.):

² Ինչ միտք — (ֆրանս.):

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (տորհեղավոր): Այստեղ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ինչո՞ւ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Վճռական պատասխանի համար:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ինչպե՞ս թե «վճռական»: Մի՞թե դու նրան առաջարկություն արիր:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Տասը բառ: Ախր ես, մա տանտ, առանց դեսուդեն ընկնելու. այսպես ու այսպես, ասում եմ, վու-լե վո՞ւ: Նա համարյա թե համաձայն է, պատվիրեց երեկոյան գալ վճռական պատասխանն իմանալու: Հո չի կարելի չգալ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ չե՞ս խաբում:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ժե վու զասյուր²: Միայն թե դուք նրան ոչ մի խոսք: Նա խնդրեց, որ այդ բանն առայժմ մնա անտըր նու դյոն³:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ճիշտն ասած, հավատալս չի գալիս. շատ լավ է, շատ: Բայց սատանան ի՞նչ ասես, որ չի անում:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ճիշտ է, մա տանտ, նա իմն է:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Գնա, գնա: Միայն թե շուտ վերադար-ձիր նրա մոտից, ես քեզ կսպասեմ: Աչքս չեմ կպցնելու, իմացիր:

Մտնում են Կուպվիեան, Գլաֆիրան և Անֆուսան:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ք Ե Ր Ո Ր Դ

Վարզավեցկայա, Վարզավեցկի, Կուպվիեա, Գլաֆիր և Անֆուսա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այս տանից շնորհակալություն, հիմա էլ գնանք ուրիշ տուն: Մնաք բարով, սիրուններս: Ես ի՞նչ գիտեմ, մեկ էլ ե՞րբ քո տանը կլինեմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես ինքս կհանդիպեմ:

¹ Մեր մեջ — (ֆրանս.):

² Հավատացնում եմ ձեզ — (ֆրանս.):

³ Մեր մեջ — (ֆրանս.):

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Բայց ես, մա տանա, շատով կլինեմ մա-
դամ Կուպալինայի տանը: Ես պարտավոր եմ գլխեկը:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե լավ: (Կուպալինային): Քանի որ երան-
լավ ընդունիր: Դրանով էլ ես կիմանամ քո պերասրէր-
մունքն իմ նկատմամբ. եթե սիրալիք ընդունեցիր, ապե-
մքն ինձ ափրում ես, խեղ եթե նեղացրիր նորան, ուրեմն
ինձ ես ազնեցեղ նեղացնելու մնասք բարտով: Ա՛՛՛՛նք բանն ի
ասվի:

Կեան եմ Մուրզավեցկայան, Մուրզավեցկին, Կուպալինան
և Անճուսան: Մտեան է Գլաֆիրան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Գլաֆիրան նստում է, սի փոքրիկ պիե է նստում գրպա-
նից և խորասուզվում ընթերցանության մեջ: Մտեան է
Կուպալինան:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Վերջապես ձեզ կտրուղացա հրասպարեկը:

ԳԼԱՑԻՐԱ — Ախ, այդ դո՞ք եք: (Գիրքն իջեցնում է): Ես վա-
ղուց էի պատրաստվում ձեզ մոտ գալու. գյուղի բնու-
թյունն այնպես է տրամադրում ազնիվ խոհերի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հուսով եմ, որ երկար կհյուրընկալվենք իմ
տանը:

ԳԼԱՑԻՐԱ — Շատ շնորհակալ եմ, բայց վախենում եմ, որ
դուք ինձ հետ կձանձրանաք: Ես վատ գրաւցակից եմ, ես
մեկնություն եմ սիրում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ես լսել եմ, որ դուք Պետերբուրգում
ուրախ էիք ապրում:

ԳԼԱՑԻՐԱ — Գուք ճիշտ եք: Ես այն ժամանակ Կյուսքը չի
հասկանում. հիմա ես իրերին շատ ավելի շուրջ եմ նա-
յում, կենցաղային եւտզեանն ինձ համար ոչ մի արժեք
չունի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց ե՞րբ հասցրիք այդպես փոփոխ ձեր մտա-
ծելակերպը:

ԳԼԱՑԻՐԱ — Ես դեռ երիտասարդ եմ, ի՞նչարկե, բայց այնպի-
սի մի կնոջ ղեկավարութեամբ, որին կարելի է սուրբ
համարել, ես կարճ ժամանակում հասցրի շատ բան անել
հոգու համար:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ դուք ճիշտ ժամանակին եկաք:

ԳԼԱՑԻՐԱ — Ինչո՞ւ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինձ խորհրդակցել է պետք, բայց ոչ մեկը
չկար: Դուք շե՞ք մերժի:

ԳԼԱՑԻՐԱ — Ուրախ կլինեմ ծառայել, ի՞նչով որ կարող եմ:
Բացք ձեր սիրտն իմ առաջ: Ասե՛՛ք պետք էլ չէ, ես
պիսի եմ ընկնում: Աշխարհիկ կրն եք, ուրեմն՝ թեթևա-
միտ. գուք սիրահարվա՞ծ եք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Համարյա որոշակեցիր:

ԳԼԱՑԻՐԱ — Ես ձեզ խղճում եմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այդ ի՞նչո՞ւ:

ԳԼԱՑԻՐԱ — Որովհետև դա մեղք է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Աչ մեծ, կարծում եմ:

ԳԼԱՑԻՐԱ — Դե, նայած թե ինչ մարդու եք սիրում: Հարո՞ւստ
է: Թե՞ աղքատ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հարո՞ւստ:

ԳԼԱՑԻՐԱ — Քերեմն մեծ մեղք է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես նրան սիրում եմ ոչ հարստութեան համար:

ԳԼԱՑԻՐԱ — Ես շատ ուրախ կլինի, որ դուք հարուստ եք: Իսկ
եթե դուք ձեր սիրով չկաշիք հարուստ մարդուն, գուցե
նա ամուսնանար մի աղքատ աղջկա հետ ու հրջանկացներ
նրան: Իսկ եթե հարուստ կանայք էլ են ձեռք գցում հա-
րուստներին, ապա մեզ, աղքատ աղջիկներին ի՞նչ կմնա:
Ես սխալվեցի «մեզ» ասելով, ինձ ոչինչ պետք չէ, ես
ընդհանրասպես եմ առում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն ես ի՞նչ անեմ:

ԳԼԱՑԻՐԱ — Տիրապետեք ձեզ, այլևս մի՛ սիրեք նրան: Իսկ
եթե, ասե՛՛ք, առանց սիրո չեք կարող ապրել, ուրեմն
աղքատ մարդու տերեք, մեղքն ավելի քիչ կլինի: Նրանից
հրաժարվե՛ք: Հեշտ է, բավական է միայն խորամուխ լի-
նենք նրա էություն մեջ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — ի՞նչ: Մի՞թե դուք էրան ճանաչում եք:

ԳԼԱՏԻՐԱ — Իհարկե՛ ճանաչում եմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Կասկածում եմ:

ԳԼԱՏԻՐԱ — Դուք վատ եք խորամանկում, ձեր գաղտնիքը բոլորը գիտեն. դուք սիրում եք լինյալին:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Սխալվո՞ւմ եք:

ԳԼԱՏԻՐԱ — (Յոռեղուն): Սխալվո՞ւմ եմ: Ասում եք, որ ես սխալվո՞ւմ եմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո՛, հավատացնո՞ւմ եմ ձեզ:

ԳԼԱՏԻՐԱ — Ուրեմն դուք նրա՞ն չեք սիրում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, Այդ որտեղի՞ց ձեր գլուխը եկավ:

ԳԼԱՏԻՐԱ — Ծի՛շտն ասեք: Աղաչո՞ւմ եմ ձեզ, ճի՛շտն ասեք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախր մի լավ մտածեք, նրա ի՞նչը սիրեմ:

ԳԼԱՏԻՐԱ — Ներեցե՛ք ինձ, ներեցե՛ք: Վերջ տանք այս կոմեդիային, Միրեցեք ում ուզում եք և որքան ուզում եք ի՞նչ գարշելի դեր խաղացի ես ձեր առաջ: Ախր ես լըրտես եմ նշանակված ձեր վրա, և ես այդ դերը հաճույքով ստանձնեցի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ինչո՞ւ:

ԳԼԱՏԻՐԱ — Կարծում էի, թե դուք իմ մրցակիցն եք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախ դուք ինքնե՛րդ եք սիրում լինյալին:

ԳԼԱՏԻՐԱ — Սիրո՞ւմ: Օ՛, ո՛չ, ինչո՞ւ: Բայց ես ուզում եմ ամուսնանալ նրա հետ. դա իմ միակ հույսն է, միակ երազանքը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ձեր հագո՞ւստը, ձեր վարմո՞ւնքը, ձեր քարոզնե՞րը:

ԳԼԱՏԻՐԱ — Իմ հագուստը, վարմունքը, քարոզները — այդ բոլորը դիմակ է: Ես ձեզ հետ անկեղծ կլինեմ, միայն օգնեք ինձ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հաճույքո՞ւմ:

ԳԼԱՏԻՐԱ — Ես Պետերբուրգում իրոք որ շատ ուրախ էի ապրում: Քույրս մի շատ ճարպիկ երիտասարդի հետ է ամուսնացած, որն հանկարծ շատ մեծ կարողության տեր դառավ: Մեզ միայն հարուստ մարդիկ էին շրջապատում՝ փաստաբաններ, բանկիրներ, առկցիոներներ: Ես ու քույրս մի տեսակ արբեցումի մեջ էինք ապրում. ճիմում

էինք Նևսկի պողոտայով թավիշի ու սամույրի մեջ, փառահեղ ճաշեր՝ տանը կամ ռեստորաններում: Միշտ հասարակության մեջ՝ օպերա, ֆրանսիական թատրոն, իսկ ամենից շատ Բուֆֆ օպերետային թատրոնը... Ջրոսանք ու խնջույք, դիմակահանդեսներ... Սա լուրջ կյանք չէ, իհարկե, բայց ով ապրել է, նրա համար այստեղի կուպեկանոց կյանքն անտանելի է: Ա՛խ, ի՞նչ անտանելի է, եթե իմանայիք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչը ստիպեց ձեզ թողնել Պետերբուրգը:

ԳԼԱՏԻՐԱ — Ես չգիտեմ, թե ինչ կատարվեց: Հանկարծ ինչոր բան տեղի ունեցավ՝ ինձ ու քրոջս համար անսպասելի: Քույրս, չգիտես ինչու, լալիս էր, սկսեցին ամեն ինչ վաճառել, ինձ ուղարկեցին Մերոպա Դավիդովնայի մոտ, իսկ իրենք ինչ-որ տեղ թաքնվեցին, շրջան. կարծես արտասահման: Իհարկե, ես ինքս եմ մեղավոր, շատ եմ մեղավոր. այնտեղ փեսացու պիտի որոնեի, դա շատ հեշտ էր: Իսկ ես հիմար աղջնակի նման թովոում ու դեսուդեն էի ընկնում: Ես դա ինձ երբեք չեմ ների:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ինչո՞ւ եք սև շորեր հագնում:

ԳԼԱՏԻՐԱ — Ուրիշ ի՞նչ հագնեմ: Հին, խունացած հագուստնե՛ր, որ վաղուց մոռայից ընկել են: Կոպիտ սև զգեստը գոնե ինքնատիպ է և ուշադրություն է գրավում: Եվ հետո, սևերի միջից որևէ մեկին ժպտալն ու համարձակ նայելը շատ ավելի տպավորիչ է, քան հնաոճ գլխարկի տակից: Բայց այս շորը հազվադեպ պիտի հագնես և միայն հատուկ նպատակով: Իսկ եթե մտածես, թե ամբողջ կյանքում պիտի քարշ տաս այս հնոտին... Օ՛, մարդ կիսելագարվի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես զարմանում եմ, թե ինչպես Մերոպա Դավիդովնան մի հարմար զույգ չի գտնում ձեզ համար. ախր նա այնքան վարպետ է իր հարազատների գործերը հաշողացնելու մեջ:

ԳԼԱՏԻՐԱ — Ո՛չ, ինձ համար նա ոչի՛նչ չի անի: Նրանք ամեն բան հաշվով է. նա ճարպիկ կին է, նա ինձ նաև հարուստի կտա, բայց միայն այն պայմանով, որ ամեն ինչ իր

ձեռքն առնի ու ղեկավարի, և հետո էլ շարունակ կրկնի:
որ ահա թե ինքն ինչդիտի՞ բարեբարբուհի է:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո՛, դա ճիշտ է:
ԳՂԱՑԻՐԱ — Մենք էբար անգիր գիտենք, և նա հասկանում է, որ կթե ևս նրա ձեռքից պոկվեմ ու ամռանանամ, էլ հետքս էլ չի գտնի: Բայց դե ևս նրանից շատ շեղահակալ եմ:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ինչի՞ համար:
ԳՂԱՑԻՐԱ — Ես նրանից օգտակար շատ բան եմ սովորել, այնպիսի բաներ, որ աղքատ կնոջը անհրաժեշտ է կշտնրում:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Օրինակ ի՞նչ:
ԳՂԱՑԻՐԱ — Սովորեցի խորամանկել, ավելարդ տեղը ոչ մի բառ շասել, ամոթ ասածը մտանալ, երբ ձգտում ես որևէ բանի, անպատկառ վերաբերմունք, պարզապես լկախության սովորեցի, որը կեղծ բարեպաշտներն ընդունում են որպես անկեղծություն ու պարզություն: Ահա տեսնո՞ւմ եք, թե ինչքան դեմք ունեմ: Զոհ ես գտա, կինյակը միակ մարզն է, որի թիկունքում կարող եմ ապրել այնպես, ինչպես ուզում եմ: Ուրիշ որևէ կյանք ինձ համար բեռ է, տանջանք, դժբախտություն՝ մահից վատ Իսկ ինքս իմ թշնամին չեմ, Եվլամպիա նիկոլաևնա, և այդ պատճառով էլ կաշխատեմ, ինչպես ուզում է լինի, ամուսնանալ կինյակի հետ. դրա համար ես պատրաստ եմ գործադրել բոլոր թույլատրելի և նույնիսկ անթույլատրելի միջոցները: Թվում է, շատ անկեղծ եղա ձեզ հետ ներեցի՞ք ինձ:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, ո՛չ, ես շատ լավ հասկանում եմ ձեր վիճակը: (Երկար նայում է Գլաֆիրային, հետո գրկում նրան): Ա՛խ, եթե ես ձեր եռանդն ունենայի:
ԳՂԱՑԻՐԱ — Իսկ ես՝ ձեր փողերը: (Ուղիղ նայում է Կուպավինայի աչքերին): Կօզնե՛ս ինձ: Դու ինձ ազդիկ ես տեսնում. տես, թե ի՞նչ կին դուրս կգա ինձանից:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչ կախված է ինձանից՝ ուրախություն... Գոնե մի ամուսնացած կին կտեսնեմ, որ ամուսնու գերին չի: Իսկ ես՝ խեղճս, այն ամուսնու հետ էլ ապրում էի

խիստ հսկողության ասակ: Եվ հիմա էլ, երևի, նույնն է լինելու:
ԳՂԱՑԻՐԱ — Այդ ի՞նչ մասը մտքեր են:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Երևի այդպես է ճակատք գրած: Ես այն նամակով եմ դատում, որ գրել է ինձ իմ սիրեցյալը: Այ՛ հենց դրա մասին էլ ուզում էի թեզ հետ խորհրդակցել:
ԳՂԱՑԻՐԱ — Դե, պատմիր, տեսնենք, այդ ինչ գործերի մեջ եր:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մի երեք տարի առաջ, երբ ամուսինս դեռ ողջ էր, ամառն այստեղ եկավ մեր հարևանը՝ Բերկուտովը:
ԳՂԱՑԻՐԱ — Է, հետո...
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հետո... դու իմ մասին շատ վատ կարծիք մի կազմիր: Ամուսինս վաթսունհինգ տարեկան էր: Բերկուտովն ինձ դուր եկավ: Բայց ես նրա հետ շատ զգույշ էի, և նա ոչ մի բանում չէր կարող նկատել իմ առանձնահատուկ վերաբերմունքը:
ԳՂԱՑԻՐԱ — Իսկ գուցե և նկատել է:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Չգիտեմ... կարող է: Նա այստեղ մի ամառ միայն ապրեց և մեկնեց Պետերբուրգ: Դրանից հետո ես նրան չեմ էլ տեսել: Բայց նա կինյակին գրած յուրաքանչյուր նամակում բարևներ էր հղում ինձ և զանազան հաճությամբություններ:
ԳՂԱՑԻՐԱ — Ի՞նչ անձեզ բաներ են:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ետտ անմեղ, բայց և այնպես ես թակարդն ընկա: Մի անգամ, մի երեք ամիս սրանից առաջ, կինյակն ինձ կպավ, թե գրեք հա գրեք Բերկուտովին, որ ամուսնը դատադիրտ գա, նա ձեզ չի մերժի:
ԳՂԱՑԻՐԱ — Դու էլ լսեցիր ու գրեցիր:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Գրեցի ինչ-որ անհեթեթություն, չեմ էլ հիշում, թե ինչ: Աններելի հիմարություն:
ԳՂԱՑԻՐԱ — Եվ պատասխան ստացար:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բանն էլ հենց այդ է, որ ստացա: Նախ, ամբողջ նամակը գրված է գործնական, գրասենյակային ոճով: Եվ երկրորդ, իմաստն այս է. ես բնությունը վայելելու ժամանակ շունեմ, դրամական կարևոր գործեր

Տ Ե Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ր Պ

Կուպովինա (միայնակ):

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Բացում է նամակը): Տեսնենք ի՞նչ է գրում: (Կարդում է): «Կատարում եմ ձեր հրամանը, պատրաստվում եմ դաստակերտ գալ: Բայց հենց որոշեցի գալ, այդ րոպեից անհամբերության տանջալից մի զգացում եմ ապրում: Վիրավորական է, որ ինձ բերելու է ծանր բեռներ տեղափոխելու համար անգլիացիների հնարած շոգեքարը: Ինձ թևեր են պետք, սիրո հրեշտակի սլացիկ թևեր»: Ի՞նչ գոհակություն: (Կարդում է մտում): Գնալով լավանում է: Ի՞նչ է պատահել սրան, Չլինի՞ կարծում է, թե կհավատամ այս հիմարություններին: Ե, ավելի լավ, հարկավոր է նրան թողնել այդ մոլորության մեջ, այդպես անկասկած կխաբվի:

Դոճից ետևում է Գլաֆիրան միայն շրջագրեստով և ուսին գցած շալով:

Տ Ե Ա Ր Ա Ն Մ Ա Ս Ն Ե Ր Ր Պ

Կուպովինա, Գլաֆիրա:

ԳԼԱՖԻՐԱ — Ամեն ինչ էլ գտա՝ և՛ մետաքսն զուլպա, և՛ կոշիկ, և ի՞նչ լավ են նստում վրաս: Նայիր: (Պարունու նման բարձրացնում ու ձգում է ուսը): Ափսոս չէ այս ստրիկն ինչ-որ տրեխ հագցես:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հրաշալի է, ի՞նչ սիրունիկն ես: Եթե քար չէ, ուրեմն, թվում է... (Դոճից): Մորաքույր, կարգադրեք թող ճաշը մատուցեն: Ահա Միխայլո Բորիսիչն էլ է գալիս:

ԳԼԱՖԻՐԱ — Սպասեք ինձ, ես հիմա կգամ: Դե, կա՛մ դես, կա՛մ դեն: (Գնում է աշակողմյան դոճից: Կուպովինան ֆայլում է դեպի դահլիճ):

կան, բայց եթե դուք ուզում եք, կգամ: Խնդրում եմ կարվածքում ոչ մի փոփոխություն չանեք, ոչ մեկին չլստահեք կառավարել, ոչինչ չվաճառեք, հատկապես անտառը:

ԳԼԱՖԻՐԱ — Լուրջ մարդ է և, երևում է, շատ խելացի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Համաձայն եմ, բայց ո՞վ է նրան իրավունք տվել սովորեցնել ինձ: Անշարժահաս էմ, ինչ է: Դա վիրավորական է: Ես չպատասխանեցի և, խոստովանում եմ, բավական սառեցի նրա նկատմամբ: Նա այսօր կամ վաղը գալու է. կտեսնեմ, թե ինչպես է պահում իրեն, և եթե նկատեմ, որ աչք ունի վրաս, կոկեսություններ կանեմ հետը, հետո կծիծաղեմ վրան ու դատարկաձեռն կճամփեմ Պետերբուրգ:

ԳԼԱՖԻՐԱ — Կավ ծրագիր է, միայն թե պետք է իրագործել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Կաշխատեմ: Ես սարսափում եմ ազատությունըս կորցնելուց: Ահա նրա նամակը, ես դեռ չեմ կարդացել. տեսնո՞ւմ ես, ինչքան անտարբեր եմ: Կինյանք բերեց:

ԳԼԱՖԻՐԱ — Կինյանն արդեն եղիլ է քեզ մոտ, ուրեմն ես նրան շուտ չեմ տեսնի, իսկ գուցեև բոլորովին չտեսնեմ: Հրավիրի՞ր նրան:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հրավիրել պետք չէ, նա թաքնվել է այգում, Մերոպա Դավիդովնայից, և հիմա կգա ճաշի:

ԳԼԱՖԻՐԱ — Ուրեմն հիանալի է: Կարգադրիր թող շամպայն տան, վաղուցվանից եմ ուզում, չոր ուտելիքից սարսափելի զզվել եմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Խնդրե՛մ, խնդրե՛մ:

ԳԼԱՖԻՐԱ — Մի խնդրանք էլ ունեմ: Մի կարգին բան տող հագնեմ: Այս հագրես անտանելի է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ահա հանդերձարանի բանալին, ինչ որ ուզում ես քնտրիր: Այնտեղ նոր, չհագած բան շատ կա: Կարելի դարսել եմ, բայց սգից հետո դեռ չեմ համարձակվում զուգվել:

ԳԼԱՖԻՐԱ — Merci! Ես մի բոպեում: (Վազում է):

ԱՆՁԻՆՔ

- ԿՈՒՊԱՆԴՈՒՆ:
- ԳԼԵՅԻՐԱ:
- ՅԵՅՈՒՍԱ:
- ԼԻՆՅԱՆԷ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ:

ԿԼԱՎԻԻ ԳՈՐԵՑԿԻ: Զուգունովի բրոշ որդին, գեղեցիկ երկ-տասարդ, գանգրահեր, սեպեհնոտ արևոհար դեմքով: Հագել է թեթև ամառային սերձով՝ բոլոր կոճակները կոճկ-ված: Լուսական վերնաշապիկ՝ ծաղկավոր, առանց փոկ-կապի, անդրավարտիքը կոշիկների ճաշերի մեջ դրած: Ինձի ամբողջ երկարությամբ պարունակի ջանկապատ, մեղ-տեղը՝ դեղնակ: Գոտակի մոտ նստառան: Ցանկազատի ետե-վից երևում է կուպակի մայի քառասկեռածի բավուտ զբոսայգին: Երեկոյանում է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ո Ա Ջ Ի Ն

Գորեցիկն ցանկապատի մոտ կանգնած սուլում է: Դեմ-կից դուրս է գալիս Զուգունովը:

- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ կա, ինչո՞ւ ես եկել: Կորի՛ր տուն: Անմի-ջապես տուն կորի՛ր:
- ԳՈՐԵՑԿԻ — Չէ, տուն ես չեմ գնա: Ես քեզ էի սպասում: Շատ է սխալ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞դ եմ սխալ:
- ԳՈՐԵՑԿԻ — Փող տվե՛ք՝ պետական վարկային առժույթ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Փող: Մ՛շ, ո՛չ, մտքովդ էլ չանցկացնես: Ին-չի՞դ է պետք փողը:
- ԳՈՐԵՑԿԻ — Սրտիս քաջություն եմ տալիս, տոնախմբության եմ գնում: (Սուլում է):
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ տոնախմբություն: Տա՛նը նստի՛ր: Եվ հերիք չվճարես: Ես քեզ ի՞նչ եմ ասել, որ տեղիցդ շարժվես, ոչ մի բայ...

- ԳՈՐԵՑԿԻ — Չէ, էդ դուք իզուր եք անհանգստանում: Առանց դատարանի վճարի ես բանտ չեմ նստի. երբ որ դատա-վճիող կարդացին, այն ժամանակ էլ կնստեմ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ինչո՞ւ ես այդպիսի խոսքեր ասում, ինչո՞ւ:
- ԳՈՐԵՑԿԻ — Չէ մի՛ խոսքեր: Շատ պետք է խոսքերը շոկել: Գուր փող տվե՛ք:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Որտեղի՞ց քեզ փող ճարեմ:
- ԳՈՐԵՑԿԻ — Դա ձեր գործն է, դա ինձ չի վերաբերում: Ես այն գիտեմ, որ խմելու եմ երևի թե տասներկու օր:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Հենց ուղիղ տասներկու՞: Հիմիկվանից գիտես, հա՞, որ տասներկու:
- ԳՈՐԵՑԿԻ — Միայն թե, քեռի, շատ չձգվի: Ենթաց՞ում եմ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Դու քաղաքից ատքով՝ Լս եկել:
- ԳՈՐԵՑԿԻ — Ոտքո՞վ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ես քեզ շունեմ, լավ հավես է, քան կուպեկի համար տասը վերաս քաթը գալ:
- ԳՈՐԵՑԿԻ — Վերստերն ինձ համար հե՛շ. ես անկյունաշափը ձեռքիս երկու հազար վերստ էլ եմ անցել: Տասը կուպե-կի համար էլ, եթե ինձ պետք է, ավելի հեռու կգնամ: Միայն թե, եկեք ազնվորեն խոսենք, քան կուպեկը քիչ է:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Մի գրա՛ն տես, քի՛շ է: Քեզ հերիք է:
- ԳՈՐԵՑԿԻ — Ասում եմ, որ քիշ է: Երդո՞ւմ ուտեմ, ինչ է:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ինչքա՞ն է քեզ պետք:
- ԳՈՐԵՑԿԻ — Հիսուն ոտքի:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Խելքդ թոցրի՛ր, Կլաշկա՛:
- ԳՈՐԵՑԿԻ — Ոչի՛նչ, Այ թե զբոսանքից հետո ի՞նչ կլինի, չգի-տեմ, բայց տես չեմ թոցրել:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ումի՞ց ես ուզելուս Ումի՞ց ես ուզելու, ասա՛:
- ԳՈՐԵՑԿԻ — Չեզնից: Էլ ուրիշ ո՞ւմից ուզեմ: Ով փող ունի, նրանից էլ ուզում եմ:
- ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ ես խոսում, ես բա՛նկ ունեմ, ինչ է:
- ԳՈՐԵՑԿԻ — Ախր ո՞ւմ մոտ եք շքավոր ձևանում: Ուրիշներին ասեք, իսկ ես ձերն եմ, ձեր հարուգատը: Տիրուհու կալ-վածքն եք գեղավարում... մի տես ինչ կավլածք է: Չգտ-ղանալ չի լինի:

ԶՈՒԳՈՒՆՈՎ — ռոզանա՛ւ, գողանա՛ւ: Անտա՛շ, Հաստա-
 գլուխ: Հենց լավ էլ փող ունեմ, բայց չեմ տա:
 ԳՈՐԵՅԿԻ — (Գնելով գլխարկը): Կփռձանեք:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞ համար:
 ԳՈՐԵՅԿԻ — Նրա համար, որ շտվեցիք: Մեծ տհաճության կա-
 րող է հանդիպեք:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ո՞ւմից:
 ԳՈՐԵՅԿԻ — Ինձնի՛ց:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Այդ ի՞նչ մի կարևոր մարդ ես որ:
 ԳՈՐԵՅԿԻ — Կարևոր չեմ, բայց տհաճություն կանեմ:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ տհաճություն:
 ԳՈՐԵՅԿԻ — Տունը կվառեմ:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ի՞նչ ես խոսում: Ի՞նչ տուն: Ի՞նչ ես խոսում:
 ԳՈՐԵՅԿԻ — Ձեր:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ա՛յ դու... էիս, եղբայրս... Դու ինչպե՞ս...
 ԳՈՐԵՅԿԻ — Հենց այդպես. կգնամ ու կվառեմ:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — էդպես հանցագործ ո՞ւմ ես քաշել:
 ԳՈՐԵՅԿԻ — Իսկ ո՞վ է մեր ցեղում սուրբ որ: Դո՞ւք, ի՞նչ էլ
 Կարգին մարդ կա՞, որ քաշեի:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Կոպտություն մի արա, Կլաշկա, կոպտություն
 մի արա:
 ԳՈՐԵՅԿԻ — Փողը որ տաք, կոպտություն էլ չեք լսի:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — (Հանում է դրամապանակը): Պոկ եկ ինձնից:
 Ա՛ն: Կորիք գրողի ծոցը: (Տալիս է հինգ ռուբլի):
 ԳՈՐԵՅԿԻ — Սա ի՞նչ է, Հինգ ռուբլի: (Սա է տալիս): Չէ, ես
 ավելի թանկ արժեմ:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Ճիշտ է, ճիշտ է, թանկ արժես, դու հինգ հար-
 յուր էլ արժես, եթե քեզ ուրիշի տեղ զինվոր ուղարկեիր:
 ԳՈՐԵՅԿԻ — Զինվորի մասին չի խոսքը: Իմ վարպետության
 համար ես ավելի թանկ արժեմ:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Լավ վարպետություն է: Պարծեցի՛ր, պարծե-
 ցի՛ր: Պարծենալու բա՛ն ես գտել:
 ԳՈՐԵՅԿԻ — Լավ է, վատ է, ձեզ պետք եկավ: Ուրեմն վճա-
 րեք: Ավելի լավ է կաշառեք ինձ, թե չէ վատ կլինի:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Դե՛, սա՛ էլ վերցրու: (Տալիս է ես հինգ ռուբ-
 լի):

ԳՈՐԵՅԿԻ — Քի՛չ է:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Մի սրա՛ն տեսք, կարծես անտառի ավազակ
 է, ճանապարհս կտրել է: էլ չեմ տա, վե՛րջ:
 ԳՈՐԵՅԿԻ — Դե, ուրեմն, դուրս է գալիս, որ եթե մեկն ինձ
 ավել տա, պիտի ծախեմ ձեզ Մուրզավեցկայայի հետ
 միասին:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — Մի՛ գոռա, Եվլամպիա նիկոլաևնայի հյուրերը
 պարտեզում են:
 ԳՈՐԵՅԿԻ — Իսկ իմ ինչ գործն է:
 ԶՈՒԳՈՒՆՈՎ — է, ավելի լավ է շառից հեռու մնամ, (Գնում
 է):
 ԳՈՐԵՅԿԻ — (Չուգունովի ետևից): Քեռի՛, լսի՛ր: Որ ավել
 տվին, կծախե՛մ: Իմացած եղեք: Սա քեզ ասում եմ, որ
 քե՛ք անելու հավեսս եկել է: Իսկ թե էդ ժամանակ փող
 չտվին, գաղանից էլ վատն եմ: (Գնում է Չուգունովի ետե-
 վից):

Այգուց դուրս են գալիս Կուպվիեան, Գլաֆիրան, Ան-
 ֆուսան, Լիեյանը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ր Պ

Կուպվիեա, Գլաֆիրա, Անֆուսա, Լիեյան:

ԼԻՆՅԱՆՎ — (Կուպվիեային): Չեմ հասկանում, չեմ հասկա-
 նում, այդ ի՞նչ ցանկություն է՝ ոտքերը ցողով թրջել՝ եթե
 կարելի է հանգիստ նստել սենյակում: Դե, ասենք, պա-
 տըզամբում՝ եթե ուզում եք մաքուր օդում լինել:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուզում եմ ժողովրդական զբոսանքը տեսնել:
 ԼԻՆՅԱՆՎ — Մի՛ գնացեք: Ի՞նչ մի հաճույք է. երկու վերստ
 կտրես, այն էլ լեռներով, ինչ է հարբածներին ես նա-
 յելու:
 ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ավելի լավ է ասեք, որ ծուլանում եք: Մնա-
 ցե՛ք:
 ԼԻՆՅԱՆՎ — Կգալի, բայց այնտեղ, հավանական է, ձերոնք են

ուրախանում, իզուր նեղութիւնն ենք տալու: Ինչո՞ւ փշայ-
 նենք ուրիշի ուրախութիւնը:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մենք հեռվից կնայենք, սարի՛ց: Բայց դուք
 մնացե՛ք մնացե՛ք, մորաբորոջս հետս կտանեն:
ԼԻՆՅԱԵՎ — Շա՛տ լավ: Բայց ես, թերևս...
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, ո՛չ: Ամբողջ ճանապարհին ախու՛վախ եք
 անելու, իբր զոհաբերութիւնն եք անում: Առանց ձեզ էլ
 յուր կգնանք: Գնացի՛նք, մորաքո՛ւյր:
ԱՆՏՈՒՍԱ — Ես ինչ... Ես թերևս...
ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Գլափրայիճ): Դո՞ւ էլ ես մնում: Մնա՛,
 մնա՛:
ԳԼԱՏԻՐԱ — Այս աղմուկից իմ գլուխը պտտվում է:
ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մեզ այստեղ սպասեք:
ԼԻՆՅԱԵՎ — Կսպասե՛նք, կսպասե՛նք:

Կուպավիան և Անփուսան գնում են:

Տեսարան երրորդ

Կնյակ և Գրափրա:

ԼԻՆՅԱԵՎ — Դուք ձեր շորը փոխել եք, իսկ համեստութիւնը
 թողել նո՛ւյնը:
ԳԼԱՏԻՐԱ — Ձեզ ավելորդ համեստութիւնը դուր չի՞ գալիս:
ԼԻՆՅԱԵՎ — Ինչպե՛ս դուր չի գալիս: Ինչ եք ասում: Ո՛չ, դա
 լավ է, դա շա՛տ լավ է:
ԳԼԱՏԻՐԱ — Գուցե և լավ է, բայց ձանձրալի է:
ԼԻՆՅԱԵՎ — Բայց մի՞թե դուք պարտավոր եք զբաղեցնել ինձ:
 Դա ավելի շուտ իմ պարտականութիւնն է, բայց ես էլ...
 Նեոնցեք, ես էլ կարող եմ առաջարկել միայն ձանձրա-
 նալ ինձ հետ:
ԳԼԱՏԻՐԱ — Եվ հիանալի է, շատ շնորհակալ եմ ձեզից:
ԼԻՆՅԱԵՎ — Շնորհակալութիւն պետք չէ:
ԳԼԱՏԻՐԱ — Ո՛չ, շատ է պետք:
ԼԻՆՅԱԵՎ — Ախր ինչի՞ համար:
ԳԼԱՏԻՐԱ — Հանգստութիւն, դա քի՛չ է: Երեկոն ձեզ հետ

անցկացնելուց հետո կարելի է անվրդով ու հանդիստ
 խղճով բնել: Ես դեռ ոչ մեկին չեմ սիրել, Միխայլո Բո-
 րիսիչ, բայց այդ ժամանակը գալու է, չէ՞, ես այնպիսի
 տարիքում եմ, որ ամեն ինչ պետք է սպասեմ սիրո
 տենղին:
ԼԻՆՅԱԵՎ — Ուրեմն դուք նույնն եք, ինչ որ բոլորը: Իսկ ես
 կարծում էի, թե դուք...
ԳԼԱՏԻՐԱ — Ի՞նչ, ես ընդունակ չե՞մ սիրելու: Այդպիսի աղ-
 ջիկներ չեն լինում, Միխայլո Բորիսիչ:
ԼԻՆՅԱԵՎ — Ուրեմն դուք վախենո՞ւմ եք սիրելուց:
ԳԼԱՏԻՐԱ — Ինչպե՛ս չվախենամ, Սերն ինձ տառապանքից
 բացի ոչինչ չի բերի: Ես ճաշակով աղջիկ եմ և կարող եմ
 սիրել միայն կարգին մարդու, իսկ կարգին մարդիկ հա-
 բուստներին են փնտրում: Ահա թե ինչու եմ թաքնվում
 ու փախչում հասարակութունից. վախենում եմ սիրեմ:
 Դուք իմ համեստութիւնը մի նայեք, հանդարտ ջուրը
 խորն է լինում: Եվ ես զգում եմ, որ եթե սիրեմ...
ԼԻՆՅԱԵՎ — Օ՛յ, սարսափելի է: Մի՛ խոսեք, խնդրում եմ, մի՛
 շարունակեք:
ԳԼԱՏԻՐԱ — Բայց ձեզ հետ ես ոչնչից չեմ վախենում:
ԼԻՆՅԱԵՎ — Ձե՞ք վախենում:
ԳԼԱՏԻՐԱ — Բալորովին: Դուք ինձ չեք հրապարի, և ձեզնով
 հրապարկելու էլ ոչ մի հնար չկա:
ԼԻՆՅԱԵՎ — (Նեղացած): Բայց ինչո՞ւ եք իմ մասին այդ-
 պես մտածում:
ԳԼԱՏԻՐԱ — Ախր դուք ի՞նչ սիրեկան եք, Դուք մի նեղացեք,
 Միխայլո Բորիսիչ: Դուք շատ լավ մարդ եք, ձեզ բալորը
 հարգում են, բայց ձեզ սիրել հնարավոր չէ: Դուք ձեր
 տարիքն առել եք, գիրացել, և՛ տանն էլ, երեխ, տաք
 խալաթ եք հագնում ու թասակ դնում: Դե, մի խոսքով,
 նմանվել եք սիրելի, բարի հայրիկի:
ԼԻՆՅԱԵՎ — Դե դուք շափից ավելի անողոր եք իմ նկատ-
 մամբ: Ո՛չ, ես դեռևս...
ԳԼԱՏԻՐԱ — Ո՛չ, ո՛չ, ինքներդ ձեզ մի խաբեք, հրաժարվեք
 հաղթանակից, Միխայլո Բորիսիչ: Հա՛, հա՛, հա՛ (Քր-
 քջում է):

ԼԻՆՅԱԵՎ — Ախր ինչո՞ւ եք ծիծաղում, աստված սիրեք:
ԳԼԱՖԻՐԱ — Ներեցեք, խնդրում եմ: Մի ծիծաղելի միտք եկավ:
գլուխս: Դե, ասենք թե դուք սիրահարվեք ինձ և սկսեք
ամեն տեսակ հաճոյախոսութիւններ անել. ախր մարդ
ինչքան էլ ձեզ հարգի չի՞ դիմանա, կծիծաղի՞:
ԼԻՆՅԱԵՎ — Բայց այդ ի՞նչ անլուրջ մտքեր են ձեր գլուխը գա-
լիս:
ԳԼԱՖԻՐԱ — Այնպես, կատակում եմ: Ձեզ համար տարօրի-
նա՞կ է, որ ես ուրախացա: Ինձ քիչ է մնացել:
ԼԻՆՅԱԵՎ — Ինչո՞ւ է քիչ մնացել:
ԳԼԱՖԻՐԱ — Պատրաստվում եմ այս քանի օրը վանք մտնել:
ԼԻՆՅԱԵՎ — Կատակո՞ւմ եք:
ԳԼԱՖԻՐԱ — Չե՛մ կատակում: Մնաք բարով: Վատ չմտածեք
իմ մասին: Իսկպես, կատակներիս համար մի բարկա-
ցեք ինձ վրա: Ուզում եմ, որ ինձ լավ հիշեք:
ԼԻՆՅԱԵՎ — Դուք կարող եք լավ հիշողութիւն թողնել:
ԳԼԱՖԻՐԱ — Ինչպե՞ս:
ԼԻՆՅԱԵՎ — Մի փոքրիկ ծառայութիւն մատուցեք ինձ:
ԳԼԱՖԻՐԱ — Մեծ հաճույքով:
ԼԻՆՅԱԵՎ — Իսկ ինչո՞ւ մեծ:
ԳԼԱՖԻՐԱ — Դուք շատ համակրելի մարդ եք:
ԼԻՆՅԱԵՎ — Որոշ ժամանակով ինձ մի լավ գրագիր է պետք:
ԳԼԱՖԻՐԱ — Չե՛մ կարող: Չնայած լավ եմ գրում, բայց ձեր
գրագիրը չեմ դառնա:
ԼԻՆՅԱԵՎ — Դուք չհասկացաք կամ էլ չեք ուզում հասկանալ...
ԳԼԱՖԻՐԱ — Այ, եթե ես տղամարդ լինեի... թե չէ, աստված
սիրեք, ինչ կմտածեն, սիրելի Միխայլո Բորիսիչ: Ասենք...
ԼԻՆՅԱԵՎ — Ինձ սխալ հասկացաք: Մերոպա Դավիդովնայի
գրագրութիւնը Չուգունովն է անում, նրա ձեռքն ինձ
ծանոթ է: Բայց երբեմն այնտեղից թղթեր եմ ստանում՝
շատ լավ ձեռագրով գրված:
ԳԼԱՖԻՐԱ — Ուրեմն ձեզ ճիշտ այդպիսի գրագի՞ր է պետք:
ԼԻՆՅԱԵՎ — Ես ուզում եմ իմանալ, թե ով է գրում:
ԳԼԱՖԻՐԱ — Հարցրեք Չուգունովին:
ԼԻՆՅԱԵՎ — Չի՞ ասի:
ԳԼԱՖԻՐԱ — Ինչ-որ բա՞ն եք թարցնում:

ԼԻՆՅԱԵՎ — Դուք գիտե՞ք:
ԳԼԱՖԻՐԱ — Գուցե ավելին գիտեմ, քան դուք կարծում եք:
ԼԻՆՅԱԵՎ — Դե՛ ասեք, ուրեմն:
ԳԼԱՖԻՐԱ — Չի՛ կարելի:
ԼԻՆՅԱԵՎ — Ինչո՞ւ:
ԳԼԱՖԻՐԱ — Որովհետև նա իմ սիրեկանն է:
ԼԻՆՅԱԵՎ — Գնալով դժվարանում է:
ԳԼԱՖԻՐԱ — Ես մի քիչ շատ ասացի: Նա իրոք սիրահարված
է ինձ և հանգամար նամակներ է գրում համարյա ամեն
օր: Այնքա՞ն սիրալիր է. պատասխան չի պահանջում,
միայն իր զգացմունքներն է զեղում իմ առջև:
ԼԻՆՅԱԵՎ — Բայց ո՞վ է նա, ասացեք:
ԳԼԱՖԻՐԱ — Նա ձեզ շա՞տ է պետք:
ԼԻՆՅԱԵՎ — Շատ:
ԳԼԱՖԻՐԱ — Ես ոչ միայն նրա անունը կարող եմ տալ, այլև
տասը բառերից հետո բերել այստեղ և ներկայացնել ձեզ:
ԼԻՆՅԱԵՎ — (Ուրախութիւնից ձեռքերը շփելով): Ի՞նչ եք
ասում: Մի՞թե:
ԳԼԱՖԻՐԱ — Միայն թե ձրի չեմ անի:
ԼԻՆՅԱԵՎ — Պահանջեք ինձնից՝ ինչ որ ուզում եք, ինչ որ
կամենաք:
ԳԼԱՖԻՐԱ — Ես մեծ բան չեմ խնդրի:
ԼԻՆՅԱԵՎ — Ի՞նչ, ի՞նչ որ ուզում եք:
ԳԼԱՖԻՐԱ — Ձևացրեք, թե սիրահարված եք և այսօրվա ամ-
բողջ երեկոն սիրահետեք ինձ:
ԼԻՆՅԱԵՎ — Իսկ դուք պիտի ծիծաղե՞ք:
ԳԼԱՖԻՐԱ — Հավանաբար, եթե դա ծիծաղելի լինի:
ԼԻՆՅԱԵՎ — Դե, մի երեկո կարելի է: Չնայած ծանր է, բայց
ի՞նչ պիտի անես, խոստացե՛լ ես: Ուրեմն նրան ե՞րբ
ցույց կտաք ինձ:
ԳԼԱՖԻՐԱ — Թեկուզ՝ հիմա: Նա զրոսանքի էր գալիս, ես տեսա,
հիմա կգնամ և կբերեմ: Ինձ այստեղ սպասեք: Ահա և
Նվլամպիա Նիկոլանան:

Գալիս են Կուպիլեան և Աճառուս:

Տ Ե Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Պ

Կիւնյաւ, Կուպալիեան, Անֆուսա:

ԼինՅԱԵՎ — Ինչո՞ւ այդքան շուտ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Էլի կգրոսնեի, բայց թաքնվում եմ հետապնդողումից:

ԼինՅԱԵՎ — Ես ձեզ ասում էի, չէ՞, որ հարբածներ կլինեն. այդ ո՞վ է ձեզ հետապնդում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մեր ընդհանուր ծանոթը՝ Մուրզավեցկին: Ուղեկցեք ինձ մինչև տուն:

ԼինՅԱԵՎ — Անֆուսա Տիխոնովնա, բարի եղեք սպասել այստեղ Գլաֆիրա Ալեքսեևնային, և երբ վերադառնա, ասացեք նրան, որ ես հիմա կգամ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մուրզավեցկուն էլ այգի չթողնեք, ասացեք, որ ես տանը չեմ, որ ես մեկնել եմ:

ԱՆՖՈՒՍԱ — Դե լավ... ես արդեն...

ԼինՅԱԵՎ — Ի՞նչ եք հետը գլուխ դնում, բշեք այդ սիրունիկին թող կորչի գնա:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛խ, ո՞չ, չի՛ կարելի: Նրա հետ որքան հնարավոր է զգուշ պետք է լինել: Նա կասի Մերոպա Դավիդովնային, գլխներիս մեծ փորձանք կբերենք: Պետք է քաղաքավարի լինել, թե չէ այդ կինը ինձ կուտի:

Կուպալիեան և Կիւնյաւը գնում են: Անֆուսան նստում է նստարանին: Մտնում է Մուրզավեցկին:

Տ Ե Ա Ր Ա Ն Գ Ի Ն Ղ Ե Ր Ո Ր Պ

Անֆուսա, Մուրզավեցկի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Սուլում է): Թամերլա՛ն, թամերլա՛ն, ըրս-ըրս: Անասունի մեկը: Կկախեմ, իհարկե... չէ, եղբայր, կկախեմ՝ վերջացած բան է, Պարզոն, մաղամ: Ո՞ւր են դրանք: (Դիտելով): Ա՛, հրե՛ն, Ոնց որ երկուսն էլ այստեղ են: Աչքերս ուտել են, պե՛ծին են աալիս կարծես՝

մե՛կն է, թե՛ երկուսը... Չէ, երկուսն է, երկուսը... Դե, իհարկե, երկուսը: (Հեռվից գրուխ ապով): Պատիվ ունեմ: ԱՆՖՈՒՍԱ — (Երեսը շրջելով): Դե արդեն... հերիք է արդեն... ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ո՛չ, թո՛ւյլ տվեք, Եվլամպիա Նիկոլաննա: ԱՆՖՈՒՍԱ — Ախր ո՞վ... Ո՞ւր է նա...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ո՛չ, Եվլամպիա Նիկոլաննա, ո՛չ, նա այստեղ է, իմ կրծքում, ազնիվ խոսք: (Հառաչում է): Այսպիսի տառապա՛նք, այսպիսի տառապա՛նք...

ԱՆՖՈՒՍԱ — Դե լավ... հերիք է արդեն...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ես ձեզ հետ համաձայն եմ, բայց եթե ուժ չունեմ՝ ի՞նչ անեմ, ես ձե՛զ եմ հարցնում: Սիրահարված եմ, դե... և վերջացած բան է:

ԱՆՖՈՒՍԱ — Ախ, իսկապես որ... դե ի՞նչ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Չե՞ք ուզում, չե՞ք ուզում պատասխանել: Իսկ ես ահա այստեղ, ձեր առաջ... ձեր ոտքերի առաջ... կմեռնեմ: Պատասխանեք, պատասխանեք, մոն անժ: Դե, ըն մո՞2:

ԱՆՖՈՒՍԱ — Էլ ինչ... դու էլ...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Անֆուսա Տիխոնովնա, թողեք, խնդրում եմ, ես ձեզ հետ չեմ...

ԱՆՖՈՒՍԱ — Ինձ հետ չեք... դե, ուրեմն, ո՞ւմ հետ եք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ում հե՛տ: Տարօրինակ է: Հա՛-հա՛-հա՛: Տարօրինակ է: Դուք կարծում էիք ձեզ հե՛տ եմ:

ԱՆՖՈՒՍԱ — Ախր... այստեղ ուրիշ մարդ... էլ ի՞նչ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Անֆուսա Տիխոնովնա, տեղեվու՞3: Եվլամպիա Նիկոլաննա, կյանքում ըոպեներ են լինում... Ինչ եմ ասում: Մի ըոպե, երբ մարդը...

ԱՆՖՈՒՍԱ — Ախ... ինչ անեմ նրան...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Դուք լռեք, ձեր փոխարեն պատասխանում են. իմ ազնիվ հոգու համար դա... դա, ես ձեզ ասեմ (հոգոց է հանում)... ծանր է:

ԱՆՖՈՒՍԱ — Իսկ որտեղի՞ց... Եթե չկա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Մտտեճալով): Ի՞նչը չկա: Ինչպե՞ս չկա:

¹ Հրեշտակս — (Ֆրանս.):

² Մի բան — (Ֆրանս.):

³ Լռեք — (Ֆրանս.):

ԱՆՖՈՒՍԱ — Դե, արդեն...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Չենելով Անֆոսային և նստաբանը): Իսկ

ո՞ւր է նա:

ԱՆՖՈՒՍԱ — Թե որ չկա... ես որտեղից...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — (Խփելով նակատին): Ասովա՛ծ իմ: Աստ-

վա՛ծ իմ:

ԱՆՖՈՒՍԱ — Դե... էլ ի՞նչ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Սակայն ինչպիսի՞ խաբուսթյուն:

ԱՆՖՈՒՍԱ — Էլ ո՞ւմ է... պետք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Այս ի՞նչ բան է, ի՞նչ բան: Զգացմունքների

խաբկա՞նք, երևակայության խա՞ղ:

Մտնում է Կինյակ:

Տ Ե ս ար ան վ Ե ց Ե ր ո ր Ը

Մարգավեցի, Անֆոսա, Կինյակ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Բայց ոչ, ես թույլ չեմ տա, որ ինձ հետ
խաղ անեն: Չե՛ս խաբի:

ԱՆՖՈՒՍԱ — (Տեսնելով Կինյակին): Ախ, դուք արդեն... դե
աճա... ինքներդ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Կլոեմ-կլոեմ, բայց որ բացվեցի...

ԱՆՖՈՒՍԱ — Ավել-պակաս դուրս տուր, դուրս տուր... (Գնում
է):

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Բայց ո՞չ, ես կգնամ՝:

ԼԻՆՅԱԵՎ — Ո՞ւր:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Նրա մոտ:

ԼԻՆՅԱԵՎ — Ավա՞ղ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ի՞նչ «ավաղ»: Ի՞նչ է նշանակում, ողոր-
մած տեր, ավա՞ղ:

ԼԻՆՅԱԵՎ — Չի կարելի, չեն հրամայել ձեզ ընդունել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ի՞նձ չընդունե՞լ: Թ՛: Ես հիմա կտեսնեմ:
(Ուզում է գնալ այգի):

ԼԻՆՅԱԵՎ — (Փակելով դռան առաջը): Լսեք: Ես ձեզ ընկերա՞-

բար աճա թե ինչ խորհուրդ կտամ. գնացե՛ք տուն, թե
չէ վատ կլինի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ի՞նչ է նշանակում «վատ» կլինի: Թույլ
տվեք հարցնել ձեզ:

ԼԻՆՅԱԵՎ — (Խորհողովոր): Այդում մարդիկ են նշանակված
և, հենց որ ներս մտնեք: (Յույց է ապիս)... Հասկա-
նում եք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ի՞նչ, ի՞նչ:

ԼԻՆՅԱԵՎ — Ես մեղավոր չեմ, Եվամպիա նիկոլաևնան է
այդպես կամեցել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ախր ինձ չեք վախեցնի. դե, ես, թերևս,
չեմ էլ գնա, պետք չէ: Ես, գիտե՛ք, ուզում էի գործս նրա
հետ հաշտությամբ ավարտել: Իսկ հիմա ոչ, ինչպիսի՞
անմտություն, մորգեն ֆրի՛:

ԼԻՆՅԱԵՎ — Էլ ինչո՞ւ հաշտությամբ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ափսոս, սատանան տանի: Հիսուն հազար
է պարտք:

ԼԻՆՅԱԵՎ — Խոշոր գումար է:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Դե ես չէի ուզում վերցնել, ինչո՞ւ ես
պարզապես, մոն շեր, ուզում էի սան ֆաստն², ձեռքո
առաջարկել, որպեսզի, կոմպրոնեն վու, միացնենք դրա-
մազուխները: Ես ոչինչ... Այսինքն ոչ, ի՞նչ եմ ասում:
Ես էլ կարողություն ունեմ, նա էլ կարողություն ունի,
էլ ի՞նչ պարտք ու պահանջ:

ԼԻՆՅԱԵՎ — Լավ կլիներ, միայն թե նա ձեզ հետ չի ամուս-
նանա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Դե, ուրեմն, մի՛ խնդրիր, չե՛մ ների: Ախ,
մոն շեր, ի՞նչ եմ անելու ես նրան: Կկողոպտեմ, մի՞նչ
վերջին կոպեկը կկողոպտեմ:

ԼԻՆՅԱԵՎ — Հիսուն հազա՞ր կպահանջեք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Ոչ, սա արդեն հիսուն հազարի բան չէ:
Հարյուր հիսուն: Դաստակերտը ի՛մը կլինի, մի՛ շաբաթից
իմն է:

ԼԻՆՅԱԵՎ — Ուրեմն լավ է, հարևաններ կլինենք: (Սեղմում է

¹ Վազն ստավոյան — (գերմ.):

² Առանց ձեռնարկությունների — (ֆրան.):

Մուրզավեցիու ձեռքը: Խնդրում եմ սիրել և հարգել: Իսկ հիմա ձեր տուն գնալու ժամանակն է: Սա ձեր կառքը չէ: Երևի Մերոպա Դավիդովնան ձեր հտեից է ուղարկել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Այո, նա սպասում է, ես խոստացա վճռահան պատասխան տանել:

ԼԻՆՅԱԵՎ — Սրանից վճռական էլ ի՞նչ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԻ — Բայց ախր մեղք է մահամ Կուպավիճան, լաց է լինելու: Օրվուար: (Գնում է):

Խփում է սուրջ և ձայն. «Փամբելան, քր՛ս-քրա»: Հակառակ կողմից ներս են մտնում Գլաֆիրան և Գորեցիին:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ղ Յ Ե Ր Ո Ր Ե Ղ

Կնյակ, Գլաֆիրա, Գորեցիի:

ԳԼԱՖԻՐԱ — Ահա, ծանոթացե՛ք՝ Գորեցիի Կլավդի: (Գուռնուկուն): Իսկ սա Միխայլո Բորիսիչ Լինյակն է, մեր հարևան կալվածատերը:

ԳՈՐԵՑԿԻ — (Հանելով գլխարկը): Ես նրան ճանաչում եմ:

ԼԻՆՅԱԵՎ — Դրե՛ք, խնդրում եմ:

ԳՈՐԵՑԿԻ — Ոչի՛նչ: Գլաֆիրա Ալեքսեևնա, թույլ տվե՛ք ձեզ համար որևէ ստորություն անեմ:

ԼԻՆՅԱԵՎ — Ա՛յ քեզ տարօրինակ խնդրանք:

ԳՈՐԵՑԿԻ — Տարօրինակ ոչինչ չկա: Ուրիշ ինչո՞վ կարող եմ ապացուցել: Ո՛չ, դուք մի՛ խանգարեք: Գլաֆիրա Ալեքսեևնա, ուզում եք այս ամբողջ ցանկապատը շարդե՛մ...

ԳԼԱՖԻՐԱ — Չէ, ինչո՞ւ:

ԳՈՐԵՑԿԻ — Ա՛յ թե ձեզ համար մեկին կծե՛ծեի՞ր տո՛ւր թե կտաս:

ԼԻՆՅԱԵՎ — Ախր դրա համար կզատեն:

ԳՈՐԵՑԿԻ — Դատում են՝ դատեն:

ԼԻՆՅԱԵՎ — Ախր կնստեցնեն:

ԳՈՐԵՑԿԻ — Կնստեցնեն՝ կնստենք: Գլաֆիրա Ալեքսեևնա, հրամայե՛ք որևէ ստորություն անեմ:

ԳԼԱՖԻՐԱ — Ես, ճիշտն ասած, չգիտեմ էլ, թե ինչ հրամայեմ: **ԼԻՆՅԱԵՎ** — Ախր ինչո՞ւ անպայման ստորություն: Խնդրե՛ք նրան ճշմարտությունն ասել:

ԳԼԱՖԻՐԱ — Դե, հիմա խնդրում եմ ձեզ ճշմարտությունն ասել, կասե՞ք:

ԳՈՐԵՑԿԻ — Ի՞նչ ճշմարտություն:

ԳԼԱՖԻՐԱ — Ահա թե ինչ ենք հարցնում:

ԳՈՐԵՑԿԻ — Համեցե՛ք, ինչ որ ուզում եք:

ԼԻՆՅԱԵՎ — Իսկ եթե գաղտնի՞ք է:

ԳՈՐԵՑԿԻ — Ինչ ուզում է լինի: Ես իմ գաղտնիքները չունեմ, իսկ եթե ուրիշի գաղտնիք է, ինչի՞ս է պետք, որ պահեմ: Ես Գլաֆիրա Ալեքսեևնայի համար աշխարհում ամեն ինչ...

ԼԻՆՅԱԵՎ — (Նամակը Գլաֆիրային տալով): Հարցրե՛ք ո՞վ է գրել:

ԳԼԱՖԻՐԱ — (Նամակը ցույց տալով Գորեցիուն): Ասացե՛ք, սա ո՞վ է գրել:

ԳՈՐԵՑԿԻ — Է՛հ, մի ուրիշ բան հարցրե՛ք:

ԼԻՆՅԱԵՎ — Իսկ ասում էիք, որ աշխարհում ամեն ինչ:

ԳՈՐԵՑԿԻ — Դե, ինձ ի՞նչ կա, ես, թերևս... միայն թե սրա համար փող է վճարված:

ԼԻՆՅԱԵՎ — Ինչքա՞ն:

ԳՈՐԵՑԿԻ — Տասը ռուբլի:

ԼԻՆՅԱԵՎ — Իսկ եթե տասնհինգ տամ:

ԳՈՐԵՑԿԻ — Թե որ տալիս եք՝ կասե՛մ:

ԼԻՆՅԱԵՎ — Դե, ուրեմն, ահա՛, վերցրե՛ք: (Փողը տալիս է):

ԳՈՐԵՑԿԻ — (Վերցնում է փողը): Խոնարհաբար շնորհակալ եմ: (Փողերը դնում է տարբեր գրպաները): Տասը ետ կտամ, կասեմ քիչ եք տվել: Դա ե՛ս եմ գրել:

ԼԻՆՅԱԵՎ — Դո՞ւր: Ուրեմն դուք ինձ շատ պետք եք: Ազատ ժամանակ ունե՞ք:

ԳՈՐԵՑԿԻ — Ես ազատ ժամանակ միշտ էլ ունեմ:

ԼԻՆՅԱԵՎ — Ուզո՞ւմ եք, հենց այսօր գնանք ինձ մոտ: Ես ձեզ կ՛լավ կվճարեմ, կ՛լավ սեղան ունեմ, կ՛գինի՛ ինչ տեսակ ուզեք:

ԳՈՐԵՑԿԻ — Հաճույքով: Դե ինչ, Գլաֆիրա Ալեքսեևնա, հրամայե՛ք որևէ ստորություն անեմ:

ԳՂԱՏԻՐԱ — Դե, դուք արդեն արեցիք:

ԳՈՐԵՑԿԻ — Սա ի՞նչ ստորութիւն է որ: Այն էլ՝ փողի համար:

ԼԻՆՅԱՆՎ — Ներեցեք անհամեստ հարցիս համար: Դուք երբեք իմացե՞լ եք լավ ու վատ գործի տարբերութիւնը:

ԳՈՐԵՑԿԻ — Ո՛նց ասեմ: Չէ՛, լավ չգիտեմ:

ԼԻՆՅԱՆՎ — Ուրեմն չգիտե՞ք:

ԳՈՐԵՑԿԻ — Ախր, դա փիլիսոփայութիւն է. մենք որտեղի՞ց իմանանք:

ԼԻՆՅԱՆՎ — Ինչո՞ւ որ:

ԳՈՐԵՑԿԻ — Մեր ընտանիքը շատ մեծ էր:

ԼԻՆՅԱՆՎ — Հետո՞ ինչ:

ԳՈՐԵՑԿԻ — Վեց տարեկանից ինչ-որ բան էր պետք տուն տանել, սոված երեխաներին կերակրել:

ԼԻՆՅԱՆՎ — Չեզ ուսում չե՞ն տվել:

ԳՈՐԵՑԿԻ — Ինչպե՞ս չեն տվել: Ախր ուսում տալ՝ մեզ մոտ նշանակում է ծեծել: Այնպես որ՝ ուսում են տվել ե՛ տանք, ե՛ լուրջները՝ ում մտքով անցել է: Առանձնապես հարբած աստիճանավորները: Փողոցում բռնում էին տղաների մազերից. դա նրանց ամենամեծ ուրախութիւնն էր:

ԼԻՆՅԱՆՎ — Ասացիք, որ մեծ ընտանիք ունեիք, ի՞նչ եղան մնացածները:

ԳՈՐԵՑԿԻ — Բոլորն էլ մարդ դարձան. եղբայրներիցս մեկը գիտնական է, բուժակ դարձավ, բայց հեռու տեղ բռնեցին, Ալանդյան կղզիներ: Մեկը երեխա ժամանակվանից դեղատուն մտավ, գերմաներեն սովորեց, էնպես որ վագոնավար է, գնում է մինչև գերմանացիների սահմանը: Մեկը Մոսկովայում նկարչի մոտ ներկ է խառնում, երկուսը գրագիր են պրիստավների ու թաղի հսկիչների ձեռքի տակ, երկուսը քաղաքից քաղաք շրջելով հուշարարութիւն են անում: Մեկը Սարատովից այն կողմ փոստում է, մյուսն էլ Դոնի Ռոստովում հուլիսի ազգանունով կրօպակում թութուն է ծախում: Ես էլ, ահա, հողաշափ եմ ինչ անեմ՝ շատ ենք, ամեն կողմի էլ կանք:

ԼԻՆՅԱՆՎ — Հետաքրքիր է ձեզ լսել: Այստեղից ուղիղ ինձ մոտ: Ես ձեզ ինձ հետ կտանեմ:

ԳՈՐԵՑԿԻ — Լա՛վ, Ես ձեզ գրասենյակում կսպասե՛մ, Յոսեփո՛ւն, Գլաֆիրա Ալեքսեևնա: (Գնում է):

Տեսարան ութերորդ

Լիճյան, Գլաֆիրա:

ԳՂԱՏԻՐԱ — Դե, գո՞հ եք:

ԼԻՆՅԱՆՎ — Չեմ կարող ասել, թե ինչքան եմ ձեզնից շնորհակալ: Ես այնքան ուրախ եմ, այնքան ուրախ, որ երեխայի պես պատրաստ եմ թռչկոտել ու պարել:

ԳՂԱՏԻՐԱ — Երեխա լինելը լավ չէ, ավելի լավ է պատանի եղբք:

ԼԻՆՅԱՆՎ — Այդ ինչպե՞ս:

ԳՂԱՏԻՐԱ — Խոսք եք տվել, կատարեք:

ԼԻՆՅԱՆՎ — Ի՞նչ խոսք:

ԳՂԱՏԻՐԱ — Ինձ հետ սիրաբանելու:

ԼԻՆՅԱՆՎ — Անշնորհք եմ ես, Գլաֆիրա Ալեքսեևնա, ի՞նչ հաճույք եք ստանալու, որ ես, իմ տարիքում, խեղկատակութիւն անեմ:

ԳՂԱՏԻՐԱ — Դե, գոնե մի քիչ, թեթևակի:

ԼԻՆՅԱՆՎ — Ախր ինչպե՞ս սիրաբանեմ: Կհրամայեք ձեր աչիկնե՞րը գովել:

ԳՂԱՏԻՐԱ — Ո՛չ, դա հիմարութիւն է:

ԼԻՆՅԱՆՎ — Թե՞ ուսական ձեռով, ինչպես որ տղաներն աղջիկների հետ սիրաբանում են. շատ անմիջական են, առանց ձևականութիւնների:

ԳՂԱՏԻՐԱ — Դա էլ չափից ավելի է: Սակայն, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան գոհակութիւններ ասելը: Է՛հ, էլ ո՞նց կլինի: Սիրաբանել չեք կարողանում, իսկ սիրաբանել պետք է: Բայց դե, մի՛ անհանգստացեք, ես ձեզ կօգնեմ: Շալի մեջ փաթաթվեք, ականջներդ բամբակ մտցրեք. խոնավ է հիմա: Ա՛յ, այդպե՛ս: (Լիճյանին ծածկում է շալով):

ԼԻՆՅԱՆՎ — Շնորհակալ եմ ձեզնից:

ԳՂԱՏԻՐԱ — Հիմա ասացեք, մի՞թե կյանքում ոչ մեկին չեք սիրել:

ԼԻՆՅԱՆՎ — Ինչպե՞ս չեմ սիրել:

ԳԼԱՏԻՐԱ — Դուք որևէ բան ասե՞լ եք ձեր սիրո առարկային:

ԼԻՆՅԱՆՎ — Շատ բան եմ ասել, բայց ես այն ժամանակ չասել էի:

ԳԼԱՏԻՐԱ — Դե, ուրեմն, հիմա հիշեք, թե ինչ էիք ասում:

ԼԻՆՅԱՆՎ — Դա դժվար չէ: Ես մի շեկլիկ աղջկա ասում էի, որ մեր հոգիները, մինչև շախարհ գալը, հարազատ էին, որ նրանք միասին էին ճախրում տիեզերքի անսահմանություն մեջ, թիթեռների նման թռչկոտում էին լուսնի շողերի մեջ:

ԳԼԱՏԻՐԱ — Դե, իսկ մյուսին ինչ էիք ասում:

ԼԻՆՅԱՆՎ — Իսկ մյուսին, թխահերին, ես ասում էի, որ նրա համար հոյակապ ամառանոց կվարձեմ, մի զույգ սեվարզուն ձիեր կառնեմ:

ԳԼԱՏԻՐԱ — Ա՛յ դա լավ է, այդ խոսակցությունն ինձ ավելի է դուր գալիս: Շարունակեք, ուրեմն, այդ նույն ոգով:

ԼԻՆՅԱՆՎ — Ես նրան ոսկե սարեր էի խոստանում, ասում էի, որ չեմ կարող ապրել առանց նրա, ատրճանակով կսպանեմ ինձ, ջրահեղձ կլինեմ:

ԳԼԱՏԻՐԱ — Իսկ նա՞ ինչ էր ասում:

ԼԻՆՅԱՆՎ — Իսկ նա ասում էր. «Ինչո՞ւ սպանեք կամ ջրահեղձ լինեք: Ամուսնացեք, և էլ ոչ մի բանի մասին չեք անհանգստանա»: Ոչ, ասում եմ, հրեշտակս, դա ինձ համար ավելի վատ է: քան ջրահեղձ լինելը: «Դե, ուրեմն, — ասում է, — խեղդվեք, որովհետև ես մայրիկիս ու հարազատներիս վշտացնել չեմ ուզում»:

ԳԼԱՏԻՐԱ — Նա աղբա՞տ աղջիկ էր:

ԼԻՆՅԱՆՎ — Աղբա՞տ:

ԳԼԱՏԻՐԱ — Հիմարի՞ մեկը:

ԼԻՆՅԱՆՎ — Իսկ դուք ի՞նչ կանեիք նրա փոխարեն:

ԳԼԱՏԻՐԱ — Ես ձեզ ոչ մի բանում չէի հակառակվի. և՛ ամառանոցը կվերցնեի, և՛ ձիերը, և՛ փողը, և, այնուամենայնիվ, դուք կամուսնանայիք ինձ հետ:

ԼԻՆՅԱՆՎ — Բայց դա հնարավոր բան չէ, ես շատ հաստատ եմ իմ որոշման մեջ:

ԳԼԱՏԻՐԱ — Ո՛չ, շա՛տ հասարակ բան է:

ԼԻՆՅԱՆՎ — Ախր ինչպե՞ս, ասեք, բացատրեք ինձ:

ԳԼԱՏԻՐԱ — Նստե՛նք:

Նստում են նստարանին:

Դե, պատկերացրեք, որ դուք ինձ մի քիչ սիրում եք, թեև կուզ այնքան, ինչքան թխահերին: Այլապես, իհարկե, ոչինչ դուրս չի գա: (Ոտները տակը դրած նստում է նրանստարանին և կիպ կաշում կինյակին):

ԼԻՆՅԱՆՎ — Թո՛ւյլ տվեք, այս ի՞նչ եք անում:

ԳԼԱՏԻՐԱ — (Ետ քաշվելով): Ա՛խ, ներե՛ցեք:

ԼԻՆՅԱՆՎ — Չէ՛, ոչի՛նչ, ես ուզում էի միայն հարցնել. դուք դերի մե՞ջ եք մտնում, թե՞ ինձ տղամարդու տեղ չեք դնում:

ԳԼԱՏԻՐԱ — Ես մրսում եմ մի քիչ:

ԼԻՆՅԱՆՎ — Ուրեմն շնորհ արեք, մի՛ անհանգստացեք, եթե դա ձեզ հաճելի է:

ԳԼԱՏԻՐԱ — (Նորից կաշելով կինյակին): Այսպիսով, դուք ինձ սիրում եք, մենք իրար համար հոգի ենք տալիս: Ես հեղուկյան ու խոնարհության մարմնացում եմ, ես ոչ միայն կատարում եմ, այլև կանխում եմ ձեր ցանկությունները: Եվ այդ ընթացքում ձեռքս եմ առնում ձեզ և ձեր ամբողջ տնտեսությունը: Մանոթանում եմ ձեր ամենամանրան խոսակցություններին ու քմահաճույքներին և, ի վերջո, կարճ ժամանակում ձեզ համար դառնում եմ կատարյալ անհրաժեշտություն, այնպես որ՝ առանց ինձ քայլ անգամ անել չեք կարող:

ԼԻՆՅԱՆՎ — Այո, ես ընդունում եմ, դա հնարավոր է:

ԳԼԱՏԻՐԱ — Եվ մի գեղեցիկ առավոտ ես ձեզ ասում եմ՝ «Հայրիկ, ես աղոթելու պահանջ եմ զգում, թույլ տուր ինձ մի երեք օրով ուխտ գնալ»: Դուք, պարզ է, սկզբում հակառակվում եք. ես առանց ծպտուն հանելու հնազանդվում եմ: Հետո ժամանակ առ ժամանակ երազկոտ կրկնում եմ խնդրանքս ու մի քանի օր շարունակ նայում եմ ձեզ թախանձագին հայացքով: Դուք օր-օրի հետաձգում եք և, ի վերջո, թույլ եք տալիս: Առանց ինձ

տունը սողմագմոր է դառնում. սա այսպես չէ, նա այնպես չէ, մեկ սուրճն է դառը, մեկ ճաշն է ուշանում, մեկ ձեր առանձնասենյակը հավաքած չէ, իսկ եթե հավաքած էլ է, թղթերն ու գրքերը այնտեղ չեն, որտեղ պետք է լինեն: Դուք սկսում եք նյարդայնանալ, հաճախ հոգոց հանել, մեկ վազել սենյակում, մեկ կանգ առնել, ձեռքները թափահարել, խոսել ինքներդ ձեզ հետ: Սկսում եք ականջ դնել՝ չե՞ն գալիս, հաճախ դուրս վազել սանդղամուտք: Իսկ ես դիտմամբ ուշանում եմ՝ մի երկու, երեք օր: Ի վերջո, էլ չեք կարողանում տեղներդ նստել, սկսում եք տանից դուրս գալ և մի երկու վերստ ընդառաջ քայլել: Եվ ա՛հա ես գալիս եմ: Ինչպիսի՞ երջանկություն: Նորից խաղաղ, անվրդով կյանք է սկսվում ձեզ համար. ձեր աչքերում երջանկություն է միայն և անսահման քրեշանք:

ԼինՅԱԵՎ — (Հոգոց հանելով): Եվ հետո ի՞նչ, էլ ի՞նչ:
ԳԱՖԻՐԱ — Եվ ա՛հա մի անգամ, երբ ձեր քնքշությունն այլևս չափ ու սահման չի ճանաչում, արցունքն աչքերիս ես ձեզ, ասում եմ. «Սիրելի հայրիկ, ես ամաչում եմ իմ հարազատների, իմ ծանոթների համար, ես ամաչում եմ մարդկանց աչքերին նայել: Ինձ մնում է թաքնվել բուլորից, կենդանի թաղվել հողում, իսկ ես, տես, ջահել եմ, դեռ ապրել եմ ուզում...»:

ԼինՅԱԵՎ — Այո... ախ, իսկապես:
ԳԱՖԻՐԱ — Մնաս բարով, սիրելի հայրիկ: Ինձ պետք չե՞ք զանձերը:

ԼինՅԱԵՎ — Ա՛խ, սատանա՛ն տանի, ի՞նչ վատ է:

ԳԱՖԻՐԱ — Ես ամուսնանում եմ:

ԼինՅԱԵՎ — Ո՞ւմ հետ:

ԳԱՖԻՐԱ — Դե, թեկուզ Գորեցկու:

ԼինՅԱԵՎ — Հիանալի զույգ կլինե՞ք:

ԳԱՖԻՐԱ — Այո, նա աղքատ է, բայց գոնե, այնուամենայնիվ, ինչ-որ դիրք կունենամ հասարակության մեջ: Արդեն վերջացած է, ես որոշեցի:

ԼինՅԱԵՎ — Ախր չի կարելի այդպես հանկարծակի, առանց այլևայլության: Թողնել մարդուն: Հարկավոր էր շուտ մտածել և նախապես զգուշացնել:

ԳԱՖԻՐԱ — Ես վախենում էի, սիրելի հայրիկ: Մի՞թե դու չես տեսնում, ես նիհարում եմ, օրեցօր շորանում, մի օր էլ անկողին կընկնեմ, կմեռնեմ:

ԼինՅԱԵՎ — Դա անխղճություն է, երկերեսանիություն:

ԳԱՖԻՐԱ — Թե չես հավատում, քո գործն է. ես պատրաստ եմ քեզ համար թեկուզ կյանքս զոհաբերել:

ԼինՅԱԵՎ — Դե, տեսնո՞ւմ ես:

ԳԱՖԻՐԱ — Ի՛նչ արած, տղամարդիկ այնպիսի շոր բնավորություն ունեն:

ԼինՅԱԵՎ — Բայց և այնպես, ես մնում եմ իմ ասածին:

ԳԱՖԻՐԱ — Այո, ձեր ասածին: Մենք ո՞ր օրվա վիճողն ենք: Միայն թե այդ օրը երեկոյան դեմ ես աննկատ հեռանում եմ, և ոչ ոք չգիտի, ավելի ճիշտ ոչ ոք չի ասում ձեզ՝ ուր: Անցնում է մի օր, երկու օր, դուք բոլոր ճամփեքով սուրճանդակներ, հետախույզներ եք ուղարկում, իսկ ինքներդ դեռ ու դեռ եք ընկում, քուն, ախորժակ կորցնում խելագարվում եք: Եվ ա՛հա մի քանի ըոպե առաջ, երբ դուք իսկասլես պիտի խելագարվեիք, ձեզ թաքուն հայտնում են, թե որտեղ եմ թաքնվել: Դուք վազում եք ինձ մոտ նվերներով, ազամանդներով, արցունքոտ աչքերով խնդրում եք, որ վերադառնամ, իսկ ես անդրդովելի եմ: Դուք լաց եք լինում, ես ինքս էլ հեկեկում եմ: Ես սիրում եմ ձեզ, ես չեմ ուզում բաժանվել ձեզնից, բայց ես անողոք եմ: Ի վերջո, ես ձեզ ասում եմ. «Սիրելի հայրիկ, դու սիրում ես մենակ ապրել, դու այլ կերպ ապրել չես կարող: Արի այսպես անենք: Թաքուն պսակվենք, այնպես, որ ոչ ոք չիմանա: Դու նորից ամուրի կյանք կվարես, ամեն ինչ առաջվա նման կլինի, ոչինչ չի փոխվի, միայն թե հոգիս կհանգստանա, էլ չեմ տառապի»: Դուք, մի փոքր վարանումից հետո, համաձայնվում եք:

ԼինՅԱԵՎ — Այո, շատ հավանական է, շատ հավանական է, իրոք, կարող է պատահել: Բայց, այնուամենայնիվ, իմ ասածով եղավ:

ԳԱՖԻՐԱ — Այո, ձեր ասածով: Բայց հենց մյուս օրը... սատանան տանի, որտեղի՞ց է հայտնվում այդ նորը վար-

վելակերպը, շարժումների այդ դանդաղկոտութունը: Որտեղի՞ց է այդ շքեղ արդուզարդը?

ԼինՅԱԵՎ — Ահա՛ թե ինչ:

ԳԼԱՖԻՐԱ — Ներքևի շրթունքս առաջ կձգվի, երևան կգա հրամայական տոն, վեհաշուք շարժում: Որքան նուրբ ու քնքուշ կլինեմ ես ուրիշների հետ և որքան խիստ՝ ձեզ հետ: Ի՛նչ երջանիկ կզգաք ձեզ ինձից բարեհաճ խոսք լսելիս: Այլևս ոչ ձեռուտ կընկնեմ և ոչ էլ կփախչեմ ձեզ համար, և դուք էլ ոչ թե հայրիկ կլինեք, այլ պարզապես Միշեյ... (տոտում է ծալորեն): «Միշեյ, վաղիր, ես նստարանին եմ թողել թաշկինակս»: Եվ դուք կվազեք: Սա ամուսնանալ ստիպելու մի եղանակն է: Չնայած հին է, բայց վստահելի: Թե չէ ուրիշ եղանակներ էլ կան:

ԼինՅԱԵՎ — Այո, բայց մարդուն այդպես բռնացնել կարելի է միայն այն դեպքում, երբ նա սիրում է:

ԳԼԱՖԻՐԱ — Հասկանալի է: Դուք լրիվ ապահովված եք, որովհետև ոչ մեկին չեք սիրում:

ԼինՅԱԵՎ — Ե՛վ ապահով եմ, և՛ շատ ուրախ դրա համար: Բայց եթե երբեք ինձ վիճակվի որևէ մեկին սիրել, ապա ես ձեզ կսիրեի: (Համբուրում է Գլաֆիրայի ձեռքը):

ԳԼԱՖԻՐԱ — Սա՞ ինչ բան է: Սա՞ ինչի համար է:

ԼինՅԱԵՎ — Այնպե՛ս:

ԳԼԱՖԻՐԱ — Եթե հենց «այնպես», ապա վիրավորական է: Ձեր վրա քնքշություն է իջել, դե, իսկ ես էլ քանի մոտենեցի եմ, հենց ի՛նձ եք բռնում:

ԼինՅԱԵՎ — Չէ, ի՛նչ եք ասում: Ախր դուք ինքներդ էիք ուզում, որ սիրաբանեմ ձեզ հետ:

ԳԼԱՖԻՐԱ — Ախ, ես մոռացել էի: Դե, ուրեմն համբուրեք:

ԼինՅԱԵՎ — Ե՛վ կհամբուրեմ: (Համբուրում է մյուս ձեռքը):

ԳԼԱՖԻՐԱ — Երևում է, ձեզ էլ է դուր գալիս այս խաղը:

ԼինՅԱԵՎ — Վաղուցվանից ինչ-որ բան ինձ վախեցնում էր, հիմա այն կարծիքին եմ, որ դա շատ հաճելի խաղ է:

ԳԼԱՖԻՐԱ — (Հոգոց հանելով): Այո՛, այո՛, ցավոք միայն խաղ է:

Մտնում է Անֆուսան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Պ

Կեյան, Գլաֆիրա, Անֆուսա:

ԱՆՏՈՒՍԱ — Արդեն ընթրելու... սպասում են... Գիշերով: Խոնավ... Ահա ուղարկել են... ինձ...

ԳԼԱՖԻՐԱ — (Լինյանին): Գնա՛նք:

ԼինՅԱԵՎ — Ես հիմա ձեր հետևից կգամ:

Գլաֆիրան և Անֆուսան գնում են:

Ի՛նչ էլ լավիկն է, սիրալիր, խելացի: Բայց տեսնես ինչ-բա՞ն կտևի: Մի երկու երեկո էլ կնստես կողքին ու կսկզսես մտածել, որ եթե անփուլթ, անզգույշ եղար՝ կլծեն: Դեռ լավ է, որ կուսանոց է գնում, թե չէ նրանից պետք էր փախչել: Ոչ, շուտ ընթրեմ ու՛ տուն, մեղքից հեռու, էլ նա ինձ չի տեսնի: Իսկ հետո, թե որ հանդիպեմ էլ, «բարև», «մնաս բարով»: Լավն ես, Գլաֆիրա Անբքսենա, բայց իմ ազատ, հանգիստ ու ամուրի կյանքն ավելի լավն է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆՁՆՔ

ԿՈՒՊԱՎԻՆԱ:

ԳԼԱՖԻՐԱ:

ԱՆՏՈՒՍԱ:

ԼինՅԱԵՎ:

ՎԱՍԻԻ ԻՎԱՆՈՎԻՉ ԲԵՐԿՈՒՏՈՎ — կալվածատեր, Կուպավինայի հարևանը, միջին տարիքի աչքի ընկնող տղամարդ, ճաղատ, բայց շատ եռանդուն ու ճարպիկ:

ԳՈՐԾՅԻՆ: Կուպավինայի սպասավոր:

Ասիական ռեի սեյակ Կուպավինայի տանը, վարագույրներով ապակյա բաց դուռ միակն է և տանում է տեռաս: Դռան երկու կողմերում երկու մեծ լուսամուտներ են՝ ծածկված ծանր վարագույրներով: Պատերի և լուսամուտների մոտ փափուկ բազմոցներ: Տեռասից երևում է պարտեզը, իսկ պարտեզից այն կողմ՝ գյուղական գեղատեսիլ տեղանքը:

Տ Ե ս ար ա ն առ ա ջ ի ն

Ճապավիհա, Գլաֆիրա, հետո սպասավոր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Քո գործը կինյակի հետ թվում է թե առաջ է գնում:

ԳԼԱՖԻՐԱ — Ա՛խ, միայն թվում է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Երեկ նա այնպես սիրալիր էր քեզ հետ:

ԳԼԱՖԻՐԱ — Պատվերով. դա կատակ էր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հույսդ կորցնո՞ւմ ես, իմ խեղճ Գլաֆիրա:

ԳԼԱՖԻՐԱ — Դե, ոչ բոլորովին: Մի անգամ էլ է պետք տեսնել նրան, այն ժամանակ հաստատ կիմանամ, կարելի՞ է նրա վրա հույս դնել, թե՞ ոչ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այսօր ահա կտեսնես: Ինձ Գորեցկին նամակ բերեց նրանից. նա գալու է, և, գուշակիր, ո՞ւմ հետ:

ԳԼԱՖԻՐԱ — Գուշակելու ի՞նչ կա: Աչքերիցդ երևում է, որ փսսացուիդ ես սպասում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո, բախտավորեցրեց մեզ Վասիլի Իվանիչ Բերկուտովը, Պետերբուրգից ժամանեց:

ԳԼԱՖԻՐԱ — Ե՞րբ է գալու:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իհարկե՞ր երեկոյան: Հագնվել է պետք նման թանկագին հյուրի համար:

ԳԼԱՖԻՐԱ — Բայց մինչև երեկո Մերոպա Դավիդովնան մեկ էլ տեսար ձիերն ուղարկեց ետևիցս:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ձիերը կսպասեն:

ԳԼԱՖԻՐԱ — Կբարկանա՛:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Կբարկանա և կների:

ԳԼԱՖԻՐԱ — Ոչ շուտ, դա անելիս նա չի շտապում:

Մտնում է սպասավորը:

ՍՊԱՍԱՎՈՐ — (Նամակը տալով Կուպավիհային): Մերոպա Դավիդովնան սայլակառք է ուղարկել և հրամայել այժմ նամակը ձեզ տալ:

Կուպավիհան բացում և կարդում է մտքով:

ԳԼԱՖԻՐԱ — Դե, այդպես էլ գիտեի: Ի՞նչ դժբախտություններ ուրից սև զգեստ, նորից կեղծիք ու ծոմապահություն:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Սպասավորին): Վուկոլ. նառնիլը կալվածքո՞ւմ է:

ՍՊԱՍԱՎՈՐ — Ո՛չ, նա քաղաքո՞ւմ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Անհանգստանալով): Ի՞նչ անեմ: Այնպես անսպասելի էր... Ես ինձ լրիվ կորցնում եմ:

ԳԼԱՖԻՐԱ — Ի՞նչ եղավ քեզ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ահա լսիր, թե ինչ է գրում Մերոպա Դավիդովնան: (Սպասավորին): Գնա կառապանին ասա թող սպասի:

Սպասավորը գնում է:

ԳԼԱՖԻՐԱ — Կարգա՛, կարգա՛:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Կարգում է): «Ողորմած տիրուհի Եվամպիա Նիկոլաևնա»:

ԳԼԱՖԻՐԱ — Մի տեսակ խիստ է սկսվում:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, դու մի լսիր, թե հետո ինչ է գրում: (Կարգում է): «Երեկ դուք չեք հաճել ընդունել իմ եղբորորդուն:

Եթե դուք տանը մենակ լինեիրք և շատ համեստ կյանք վարեիրք, ես ոչինչ չէի ասի, թե չէ ձեր տանը մարդիկ են եղել, որոնք ոչնչով նրանից լավը չեն: Նա նույնպիսի ազնվական է, ինչպես որ կինյակը, և, իհարկե, ավելի հիմար չէ, քան նա: Կամ դուք դա արել եք առանց մտածելու, կամ էլ ձեզ սովորեցրել է որևէ խելացի մարդ:

Եթե դուք արդեն մոռացել եք իմ բոլոր լավություններն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

ն ու բարերարությունները ձեր նկատմամբ, պարտավոր էիր հիշել, որ վիրավորանքի համար ես երբեք պարտքի տակ չեմ մնում: Դուք այնպե՛ս եք ուրախացել կամ հրապուրվել, որ մոռացել եք Ապոլլոնի հետ ունեցած ձեր դատը: Մենք մեր պարզությունը ու բարությունը մտածում էինք խղճալ ձեզ, ինչպես փոքրիկ անպաշտպան երեխային են խղճում, և ուզում էինք ամեն ինչ հաշտու-

թյամբ ավարտել, իսկական քրիստոնյային վայել, սիրով և համաձայնությամբ: Բայց քանի որ ավելի շուտ դուք եք երես թեքում մեզնից և արհամարհում եք բարերարներին, ապա ուրեմն չնեղանաք մեզնից: Այն մեծ գումարի գանձումը, որին ձեր ամբողջ կալվածքը շարժե, ես կկատարեմ ամենայն խստությամբ և չեմ խղճա ձեզ և ձեզ համար արցունք չեմ թափի: Ձեր նախկին բարերարուհի՝ Մերոպա Մուրզավեցկայա»:

ԳԼԱՅԻՐԱ — Չլինի՞ր քեզ վախեցնում է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛յ քեզ անակնկալ: Ես չգիտեմ էլ, թե ինչ պատասխանեմ: Հարկավոր է սպասել այդ պարոններին, խորհրդակցել նրանց հետ: Դու էլ ակամա ստիպված ես մնալ:

Մտնում է Անֆուսա:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Կուպավինա, Դյաֆիրա, Անֆուսա:

ԱՆՖՈՒՍԱ — Ախր եկել են արդեն... իսկ դուք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մի՞թե նրանք են:

ԱՆՖՈՒՍԱ — Դե էլ ով...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն գնամ հագնվեմ:

ԱՆՖՈՒՍԱ — Ինքնին հասկանալի է որ... ինչ-որ լավ բան...

Օտար մարդը...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Խնդրեք սպասեն:

ԱՆՖՈՒՍԱ — Ահա արդեն... այստեղ... պարտեզից:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Գլաֆիրային): Գնա՛նք:

Դյաֆիրա և Կուպավինա գնում են:

ԱՆՖՈՒՍԱ — Որ մի քիչ շուտ... ասացի, ախր...

Մտնում են Կենյաևը և Քեկուտովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Անֆուսա, Կենյաև, Քեկուտով:

ԼԻՅԱՆՎ — Ահա, Անֆուսա Տիխոնովնա, ներկայացնում եմ ընկերոջս: Վասիլի Իվանիչ Բերկուտով:

ԱՆՖՈՒՍԱ — Գիտեմ... վաղուց, ախր...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինչպե՞ս է ձեր առողջությունը, հարգելի Անֆուսա Տիխոնովնա:

ԱՆՖՈՒՍԱ — Ոչինչ... այնպես... գլուխս երբեմն: Նստեք... թեկուզ այստեղ. խնդրեմ... իբր հիմա...

ԼԻՅԱՆՎ — Մի՞ անհանգստացեք, Անֆուսա Տիխոնովնա, մենք կսպասենք:

ԱՆՖՈՒՍԱ — Դե հենց... Երկար չի տևի... ինչ պիտի անի: Ներեցեք: (Գնում է):

ԼԻՅԱՆՎ — Նա ինքը հիմա քեզ կպատմի, թե ինչպես են հազար ուրբի պոկել իրենից:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մի՞ տաքացիր, խնդրում եմ, մի՛ տաքացիր:

ԼԻՅԱՆՎ — Ինչպե՞ս թե մի տաքացիր: Ձե՛մ կարող չտաքանալ, ախր, դա կեղծիք է, հասկանո՞ւմ ես, կեղծիք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հանգստացի՛ր: Ո՛չ մի կեղծիք էլ չկա:

ԼԻՅԱՆՎ — Բայց Գորեցկին խոստովանեց: էլ ի՞նչ ես ուզում: Ափսոս, քնով ընկա ու շհասցրի այսօր առավոտյան մի լավ հարցաքննել: Հետո դու եկար և խլեցիր նրան ինձնից:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես երկար խոսեցի Գորեցկու հետ և նրա հետ էլ քաղաք գնացի: Նա քեզ խաբել է: Նրան փող է պետք եղել, նա սուտ տեղը ամբաստանել է իրեն: Դու էլ հետաքրքիր ես, հավատացել ես Գորեցկուն:

ԼԻՅԱՆՎ — Ինչ ուզում ես ասա, դա մաքուր գործ չէ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իմ կարծիքով, Մերոպա Դավիդովնան ձեր հասարակության մեջ կասկածից վեր պետք է լինի: Լա՛վ հասարակություն է, եթե բոլորն իրար նայում են որպես ավազակների:

ԼԻՅԱՆՎ — Մերոպայից ամեն ինչ կարելի է սպասել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Գավառցիները սիրում են ջրեական գործ, դա հայտնի բան է: Չանձրանում եք առանց սկանդալի, իրար

ուտքի տակ եք փորում, ուրիշ անելիք չունեք:

ԼԻՆՅԱՆՎ — Ախր կողոպտում են Եվլամպիա Նիկոլանևային
ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դե, ինչպես կուզես, բայց քանի դեռ ես այս-
տեղ եմ, դու նրա գործերին մի խառնվիր, խնդրում եմ:
Շատ եմ խնդրում: Ուրիշ զբաղմունք գտիր քեզ հա-
մար:

ԼԻՆՅԱՆՎ — Քո կարծիքով Չուգունովն էլ է՛ լավ մարդ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Չուգունովն ի՛նչ: Սովորական գրագիր է, էլի-
հասկանալի է, մատդ բերանը շփտի մտցնես: Ախր դուք,
տաքզուլու իրավաբաններդ, մեծ-մեծ բաների մասին եք
խոսում, բայց հասարակ դիմում գրել չգիտեք: Իսկ Չու-
գունովները հին կոփվածքի մարդիկ են, օրենսգիրքը ան-
գիր գիտեն, և դրանով էլ օգտակար են:

ԼԻՆՅԱՆՎ — Քեզ ի՛նչ, կարճ ժամանակով ես գալիս: Մարդ
չգիտի էլ, թե ինչպես ապրի այս ժողովրդի հետ: Մի փոր-
ձի՛ր:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ով ապրել գիտի՝ ամեն տեղ էլ կապրի, իսկ ով
քո նման երեխայություն է անում, նրա համար ամեն
տեղ էլ դժվար է:

ԼԻՆՅԱՆՎ — Կտեսնե՞նք: Ուրեմն դու երկա՞ր ժամանակով ես
եկել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, Հետագայում կարող է՝ մեկընդմիջո
տեղափոխվեմ այստեղ, իսկ հիմա ժամանակ չունեմ. մի
գործ եմ սկսել Պետերբուրգում: Ես միայն ամուսնանալու
եմ եկել:

ԼԻՆՅԱՆՎ — Ո՞ւմ հետ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դա՞ ինչ հարց է: Եվլամպիա Նիկոլանևայի՛

ԼԻՆՅԱՆՎ — Մի՞թե ձեր մեջ ամեն ինչ վերջացած է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դեռ չի էլ սկսվել:

ԼԻՆՅԱՆՎ — Դեռ չի էլ սկսվել, իսկ դու այդպես վստահ ա-
սում ես:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Կասկածելու ոչ մի պատճառ չեմ տեսնում...
Էխ, եղբայրս, վաղուց է աչքս վրան:

ԼԻՆՅԱՆՎ — Եվլամպիա Նիկոլանևայի՞:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, այս կալվածքի՞, դե, ևաև Եվլամպիա Նի-
կոլանևայի, հասկանալի է: Որքա՞ն հարմարություններ,
որքա՞ն եկամուտ, ինչպիսի՞ գեղեցիկ տեղանք: (Ցույց

է տալիս դուր): Նայիր, ախր, հրաշալի բան է: Իսկ այն-
տեղ, ձախից, գետակի մոտ, ի՛նչ գեղեցիկ անկյուն է:
Կարծես ինքը բնությունն է ստեղծել...

ԼԻՆՅԱՆՎ — Շվեյցարական հյուղակի համա՞ր:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, օղու գործարանի: Խոստովանում եմ քեզ,
ես, մեղապարտս, վաղուց եմ մտածել. Կուպավիճը ծեք
մարդ է, էսօր-էգուց կմեռնի, կմնան նրա գերազանց
կալվածքը, սիրունիկ այրին... Ես իմ արածն արդեն արել
եմ, մտածում եմ հանգստի մասին, իսկ սրանից լավ
ի՛նչ կարող է լինել հանգստի համար՝ այսպիսի կալ-
վածք, գեղեցիկ կին, որևէ պատվավոր պաշտոն...

ԼԻՆՅԱՆՎ — Մենք քեզ ազնվականության պարագլուխ կընտ-
րենք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մենք, իսկ դուք ինչքա՞ն եք որ: Գովտովում
եք, տասը կուսակցություն եք բաժանվել: Դե, ես որ միա-
ցա, ձեր կուսակցությունը կուժեղանա: Գիտե՞ս ինչ եմ
նկատել: Քո ազատամտությունը արդեն հոգին տալիս է.
դուք, գավառացիներդ, քիչ եք կարգում: Քո գծով շաա
նոր գիրք ու բրոշյուր է լույս տեսել, ես հետս ահագին
բերել եմ: Եթե ուզում ես, կնվիրեմ քեզ: Երկու գիրք
որ նայես, մի հինգ տարվա խոսակցություն կապահովես:
ԼԻՆՅԱՆՎ — Այո՛, շնորհակալ եմ: Ուրեմն քեզ չնչին բան է
մնացել՝ միայն ամուսնանալ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Այո՛, ամուսնանա՛լ, բարեկա՛մս, շո՛ւտ ամուս-
նանալ: Կալվածքը ես հինգ մատիս պես գիտեմ, գերա-
զանց կարգուկանոն է սահմանված, հարկավոր է շտա-
պել, որպեսզի տնտեսությունը ձեռքից չգնա: Խելացի
մարդ էր ծերուկ Կուպավիճը:

ԼԻՆՅԱՆՎ — Տարիքն առել, ոնց որ ցնդել էր մի քիչ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինչո՞ւ ես այդպես մտածում:

ԼԻՆՅԱՆՎ — Մի հարյուր հազարի անտառ առալ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ա՛յ քեզ խելացի մարդ: Դրա համար շնորհա-
կալ եմ նրանից:

ԼԻՆՅԱՆՎ — Բայց ահա մաքուր փող Եվլամպիա Նիկոլանևա-
յին քիչ թողեց. նա դրա կարիքը զգում է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եվ լավ էլ արել է: Փող որ թողներ, վաղուց
հիմա՛ չէր լինի: Իսկ անտառը կա և դեռ աճում էլ է:

ԼԻՆՅԱԵՎ — Ախր ինչի՞ է պետք: Անտառին հիմա մեզ մոտ
 փող տվող չկա:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Կուպավիճայի անտառը կես միլիոն արժի:
 Տասը օրից կլսեք, որ այստեղով երկաթգիծ է անցնում:
 Հաստատ աղբյուրներից եմ իմացել, միայն թե դու
 առայժմ լռիր:
ԼԻՆՅԱԵՎ — Ա՛յ, ա՛յ: Ահա՛ թե ինչ: Ես քեզ ասացի չէ՞, որ
 նա Չուգունովին բլանկ է տվել, բլանկ:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Վատ բան կարող է դուրս գալ:
ԼԻՆՅԱԵՎ — Ինչպես թե՛ «կարող է»:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Եթե բլանկն ընկնի ուրիշի ձեռքը:
ԼԻՆՅԱԵՎ — Իսկ Չուգունովը կխղճա՞, ինչ է:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Հին խաբեբաների նման, Չուգունովի համար-
 ճակութունը մեծ չէ և հնարավորութուններն էլ սահմա-
 նափակ են: Ես հետաքրքրվել եմ. այստեղ մի ազատ
 հողամաս կա, ուզում է առնել. երեք հազար են ուզում:
 Երևի դրանով էլ կբավարարվի:
ԼԻՆՅԱԵՎ — Ուրեմն դժվարութուններ չկան, և դու ամուսնա-
 նո՞ւմ ես: Բայց հետաքրքիր է, դա ինչպե՞ս ես անելու
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Թե ինչպես՝ դեռ չգիտեմ, նայած հանգամանք-
 ներին: Միայն թե, համենայն դեպս, դա կլինի: Կանայք
 սիրում են մտածել, թե իրենք ազատ են և իրենց սրտի
 ուզածը կարող են անել: Իսկ իրականում նրանք ոչ մի
 ձևով և երբեք չեն կարող իրենց զլիխ տեղը լինել, նրանց
 ղեկավարում են ճարպիկ մարդիկ:

Մտնում է Կուպավիճան:

Տ Ե Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Ղ

Կինյալ, Բերկաուով, Կուպավիճա:

ԿՈՒՊԱՎԻՅԱ — Ներեցե՛ք, պարոնա՛յք:
ԼԻՆՅԱԵՎ — Դո՛ւք ներեք, որ անժամանակ ենք եկել:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — (Համբուրելով Կուպավիճայի ձեռքը): Իմ շտա-
 պողականութունը ներելի է, ես այնքան վաղուց չեմ տե-
 սել ձեզ... Իմ անհամբերութունն այնքա՛ն մեծ էր...

ԿՈՒՊԱՎԻՅԱ — (Ժպտալով): Իսկ եթե թե՛ր ունենայիք...
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Ավելի շուտ կթռչի ձեզ մոտ:
ԼԻՆՅԱԵՎ — Մի՞թե հրեշտակ լինելու համար դու մի քիչ ծան-
 րացել ես:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Նետերն էլ, կարծում եմ, արդեն ծախսել եք:
ԼԻՆՅԱԵՎ — Ո՛չ, նա դեռ պահել է պատե՛հ առիթի համար:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Քի՛չ են մնացել, եղածներն էլ այնքան սուր
 չեն:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Բայց փոխարենն ավելի խնայող եմ դարձել և
 իզուր տեղը չեմ արձակում:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Իսկ արձակում եք միայն հաշոգությանը նա-
 խապես համոզվա՞ծ:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Համենայն դեպս, իզուր չեմ վատնում, էլի
 բան է:
ԼԻՆՅԱԵՎ — Ինձ թույլ չե՞ք տա քայլեմ պարտեզում: Թե չէ,
 որ ճաշից հետո երկար եմ մնում սենյակում...
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Քունը վրա՞ է տալիս:
ԼԻՆՅԱԵՎ — Գուշակեցի՛ք:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Շնո՛րհ արեք, արեք՝ ինչ ուզում եք:
ԼԻՆՅԱԵՎ — (Գնալով): Այդ ո՞ւմ կառքն է ձեր բակում:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Մուրզավեցկայան Գլաֆիրա Ալեքսեևնայի
 ետևից է ուղարկել:
ԼԻՆՅԱԵՎ — Արդեն մեկնո՞ւմ է:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Իսկ դուք ափսոսո՞ւմ եք:
ԼԻՆՅԱԵՎ — Չէի ասի, թե շատ: Իսկ շո՞ւտ է մեկնելու:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Հիմա:
ԼԻՆՅԱԵՎ — Բարի ճանապարհ, բռնող չկա: (Գնում է):

Տ Ե Ա Ր Ա Ն Ն Ի Ն Ղ Ե Ր Ր Ղ

Կուպավիճա, Բերկաուով, ճեռա սպասավոր:

ԿՈՒՊԱՎԻՅԱ — Երկա՞ր ժամանակով եք եկել մեր կողմերը:
ՔԵՐԿՈՒՏՈՎ — Ոչ, դժբախտաբար, կարճ ժամանակով, զոր-
 ծով եմ եկել:
ԿՈՒՊԱՎԻՅԱ — Գործո՞վ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես կարող էի ձեզ խաբել, ասել, որ եկել եմ մասնավորապես ձեզ տեսնելու, հիանալու ձեզնով, բայց նախ դուք դրան չեք հավատա...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ գուցե հավատամ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դե, էս չեմ ուզում ձեզ խաբել: Երկու տարվա բաժանումից հետո էս ինչպե՞ս կարող եմ հուսալ, որ իմ քնքշանքները ձեզ հաճելի կլինեն: Դուք կարող է փոխված լինեք, և, հավանաբար փոխվել եք: Դուք հիմա հարուստ և ազատ կին եք, ձեզ սիրահետելն այնքան էլ ազնիվ բան չէ, և դուք էլ յուրաքանչյուր ախ քաշողի պես է նայեք որպես մի թշնամու, որն ուզում է խլել ձեզնից թե՛ մեկը, և թե մյուսը, այսինքն՝ և՛ հարստությունը, և՛ ազատությունը: Առաջ ուրիշ բան էր. դուք կախյալ վիճակում էիք և, բացի այդ, մենք երկուսս էլ ավելի երիտասարդ էինք: (Հոգոց փաշելով): Ա՛խ, ի՞նչ լավ ժամանակ էր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն դուք բոլորովի՞ն չեք ուզում սիրահետել ինձ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բոլորովին: Իսկ դուք կուզեիք տա՞նջել ինձ, ծիծաղե՞լ վրաս: Մի՛ թաքցրեք: Ձեր աչքերից են երևում: Դե, աստված ձեզ հետ: Կոկետությունը ուրիշի համար պահեք, ձեզ պաշտպանողներ դեռ շատ կլինեն: Զրուցե՛ք որպես գործարար մարդիկ: Ես եկել եմ կալվածքը վաճառելու:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այդ ի՞նչ է մտքներովդ անցել: Տոհմական կալվածքը:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ անենք, որ տոհմական է: Եկամուտը շատ քիչ է, շահ չկա պահելու. մաքուր փողն ինձ ավելի ձեռնբու է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Եվ ձեզ ոչինչ չի՞ կապում ձեր ծննդավայրին, ոչինչ չե՞ք աստուում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Գուցե և աստուում եմ, բայց մեջը հաշիվ չկա:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հաշիվ, հաշիվ, և բնավ՝ սիրտ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Սառչում է տարիների հետ, Եվլամպիա՝ նիկուլակնա: Գնե՛ք իմ կալվածքը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես փող չունեմ և հետո էլ, վատ տնտեսուհի եմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Համեստություն եք անում: Ձեզ մոտ ամեն ինչ այնպես լավ է, այնպիսի ծաղկած տեսք ունի, ամենուր կարգուկանոն է, մաքրություն:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Մաքրությունը կանացի գործ է և գաղտնիքների շունի, իսկ թե ինչպես է տնտեսությունը կառավարվում, գաղափար չունեմ: Գործեր են լինում, որոնք իմ երևակայությունից վեր են. ստիպված պետք է կողմնակի մարդկանց վստահեմ, որոնք, մեկ էլ տեսար՝ խաբեցին:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ, օրինակ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Հիմա մի գործ ունեմ, որն ինձ շատ է անհանգստացնում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եթե գաղտնիք չէ, ասեք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ոչ մի գաղտնիք էլ չէ, էս նույնիսկ ուզում էի խորհրդակցել ձեզ հետ և օգնություն խնդրել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ամբողջ հոգով ուրախ կլինեմ ծառայել ձեզ, եթե միայն ժամանակս ների: Ի՞նչ է պատահել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Պատմելը երկար կտևի. ավելի լավ է կարդացեք այս նամակը: (Տալիս է Մուրզավեցկայայի նամակը):

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (Կարդալով նամակը, ետ է տալիս): Կարդացի...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ի՞նչ կասեք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Պետք է իմանալ, թե պահանջն ինչքան է մեծ, փաստաթղթերը նայել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես լսել եմ, որ քսանհինգ հազար է: Իսկ հետո՞:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հետո շտապ վճարել է պետք փողը, որ գործը դատարան չհասնի: Համենայն դեպս, մի երեսուն հազար հարկավոր է: Ունե՞ք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, իմ փողը շատ քիչ է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ա՛յ դա վատ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք ինձ վախեցնում եք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բոլորովին էլ չեմ վախեցնում. ինչի՞ պիտի վախեցնեմ: Ես միայն բացատրում եմ ձեր վիճակը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկ ինչիպիսի՞ն է իմ վիճակը:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Աննախանձելի: Դուք շատ հարուստ կին եք, բայց այդ երեսուն հազարը կարող է այնպես քայքայի ձեր անտեսությունը, որ հետո երբեք չկարողանաք կարգի գցել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախր ինչո՞ւ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դուք պետք է կա՛մ ձեր կալվածքը գրավ դնեք բանկում...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ահա և ձեզ փող:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բայց այդ ժամանակ էլ բոլոր եկամուտները կգնան տոկոսներին, և ձեզ ապրուստի շատ քիչ բան կմնա:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն գրավ դնել պետք չէ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Այդ դեպքում կալվածքի մի մասը պետք է վաճառեք. անտառը, օրինակ: Դուք մի հազար հինգ հարյուր դեպյատին անտառ ունեք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչո՞ւ հազար հինգ հարյուր: Չորս հազար:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մեկ ուրիշ տեղ դա հսկայական հարստություն է, բայց այստեղ անտառի գինը շատ ցածր է. անտառարդյունաբերողները տասը ուրբի կտան դեպյատինին, ուրեմն գրեթե ամբողջը պետք է վաճառել: Իսկ առանց անտառի կալվածքը ոչինչ չարժե: Տասը ուրբուց ավել էլ կտան, բայց մաս-մաս վճարելու պայմանով, հատուց հետո, իսկ ձեզ հիմա է փող պետք: Ահա թե ինչ վիճակում եք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո՞, ես հիմա տեսնում եմ:

Մտնում է սպասավորը:

ՍՊԱՍԱՎՈՐ — Վասիլի Իվանիչ, ձեզ հողաշահին է հարցնում Ասում է, որ անպայման պետք է տեսնի ձեզ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (Կուլպալիճային): Ինձ թույլ տվեք ձեր ներկայությամբ Գորեցկուն տասը խոսք ասեմ, ոչ ավել: Ես նրան Վոլոգդա եմ ուղարկում շահելու իմ կալվածքի անտառները:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շնո՞րհ արեք: (Սպասավորին): Կանչի՞ր:

Սպասավորը գնում է:

Մենք դեռ կհասցնենք խոսել:

Մտնում է Գորեցկին:

Տ Ե Ս Բ Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ո Ղ

Բերկուտով, Կուլպալիճա, Գորեցկի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (Գորեցկուն): Ի՞նչ եք կամենում:

ԳՈՐԵՑԿԻ — Քեռիս մարդ է ուղարկել ետևիցս, ուղում է ինձ տեսնել: Ի՞նչ կհրամայեք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Պատճառը գիտե՞ք:

ԳՈՐԵՑԿԻ — Ասում են՝ գործ կա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Գնացեք և ինչ ձեզ հրամայում են, արեք: Իսկ այդ ընթացքում պատրաստվեք. դուք կգնաք վաղը կեսօրին շոգենավով: Առավոտյան ինձ պետք էր գալու: Ես Մերոպա Դավիդովնայի մոտ եմ գնալու, աշխատեք մինչ այդ տեսնել ինձ. դուրս եկեք ինձ ընդառաջ, ճանապարհին:

ԳՈՐԵՑԿԻ — Թեկուզ հինգ վերստ, եթե հրամայեք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Այդքան հեռու պետք չէ: Միայն այնպես արեք, որ ձեզ շտեսնեն, — ընդհանրապես շատ անկեղծ մի եղեք և ավելորդ բաներ մի խոսեք: Տասնհինգ ուրբին ետ տվեցի՞ք Միխայիլ Բորիսիչին:

ԳՈՐԵՑԿԻ — Նոր տվեցի, այգում: Ինձ փող չե՞ք տա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Վաղն առավոտյան՝ հիսուն ուրբի, իսկ հիմա ոչ մի գրոշ: Գնացե՛ք:

Գորեցկին գոյի է տալիս և գնում:

Տ Ե Ս Բ Ա Ն Ե Ր Ե Ր Ո Ղ

Բերկուտով, Կուլպալիճա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ներող եղեք: Գորեցկու հետ գործս վերջացրի և հիմա ամբողջովին ձեր տրամադրության տակ եմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Կուզենայի՞ք շաբունակե՞ մեր խոսակցությունը: Միտե՞ք ինձ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հաճույթով, հաճույթով: Ես զարմանում եմ, թե մինչև հիմա ինչպե՞ս լեզու չեք գտել Մուրզավեցկայայի հետ, չե՞ որ դուք նրա հետ հաճախ եք հանդիպում: Հարկավոր էր գործը լավ ուսումնասիրել, առանց որևէ մեկի խոսքին հավատալու, և որևէ գործարք կնքել, մղել նրան զիջումների, ժամանակ խնդրել, որ կարողանաք վճարել առանց դժվարությունների և գլխացավանքի: Ինչպես երևում է, դեռ չեք հասցրել պարզություն մտցնել ո՛չ կալվածքի, ո՛չ եկամուտների և ոչ էլ ձեռք պարտականությունների մեջ: Դուք կասեք՝ «Ես ինձ համար անհոգ ապրում էի»: Շատ լավ: Չեզնից շատ բան պահանջել չի էլ կարելի. անփորձ եք, դեռ չեք վարժվել վիճակին: Բայց մի՞թե դուք, բացի ծախու գրագրից, ո՛չ մտքի մարդ ունեք, ո՛չ ծանոթ, ովքեր կարող էին կարգի բերել ձեր կալվածքը: Մի՞թե դուք ոչ մեկից աջակցություն չեք տեսել, ոչ մեկից բարի խորհուրդ չեք լսել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, ունե՛ի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եվ ի՞նչ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց ականջ չգրի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եվ նույնիսկ չպատասխանեցիք նամակիս...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բավականին տարօրինակ նամակին, որի մեջ...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Կար ձեզ պետք եղած ամեն ինչ. բարեկամական աջակցություն և գործնական խորհուրդներ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք բարկանում եք ինձ վրա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (ժպտով): Ո՛չ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն ապացուցեք, որ չեք բարկանում, և օգնեք ինձ բարի խորհուրդով:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դա իմ պարտականությունն է: Բայց կրնա՞նք, արդյոք, իմ խորհուրդը: Խոսք տվեք, որ կլսեք ինձ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Խոստումին գերի դառնալ, չիմանալով, թե...
ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մի՛ վախեցեք, իմ խորհուրդն անշահախնդիր է. ես նկատի ունեմ միայն ձեր օգուտը:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այդ դեպքում ես կընդունեմ: Ուրեմն ի՞նչ եք խորհուրդ տալիս:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Շտապ ամուսնացեք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Ձաբմանով): Ամուսնանա՞մ: Ո՞ւմ հետ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մուրզավեցկու:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Դուք ինձ վիրավորում եք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մտքովս էլ ուրիշ բան չի անցնում, բացի ձեր նկատմամբ լավ վերաբերմունքից:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես չգիտեմ, թե ինչպես համարձակվեցին: Մերոպա Դավիդովնայի ակնարկները շատ հասկանալի էին:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինչո՞ւ չհամարձակվեցին: Նա անպետքի մեկն է, բայց հո իր պակասությունները չի՞ նկատում: Նա ազնվական է, դեռ ջահել, որևէ բան կարող է ստանալ հորաբորջից, և չի կարելի ասել, թե դուք ձեր օժիտով նրա համար անհասանելի եք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Կամ դուք կատակում եք, կամ էլ ուզում եք վիրավորել ինձ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ոչ մեկը և ոչ էլ մյուսը. ամեն մի խելացի մարդ ձեզ նույն բանը կասի, ինչ որ ես:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն, ձեր կարծիքով, իմ միակ էլքը Մուրզավեցկու հետ ամուսնանա՞լն է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Միակը չէ, բայց լավագույնը, որպեսզի կալվածքն անվնաս պահեք և շնանկանաք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Անվարան): Ուրեմն ամուսնանա՞մ... Ես ձեզ կտրականապես եմ հարցնում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Այո՛, ամուսնացե՛ք: Լա՛վ կանեք, շա՛տ լավ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ի՞նչ անտարբեր տոնով եք ասում: Դուք, ինչպես բժիշկը, մահվան եք դատապարտում առանց կարեկցանքի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բայց երբ բժշկին են դիմում, նրանից ոչ թե կարեկցանք են պահանջում, այլ գործիմացություն և օգտակար խորհուրդ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես հուսով էի, նկատի ունենալով ձեր նախկին վերաբերմունքը...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Անողորք ժամանակը տանում է ամեն ինչ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Եվ վերջին նամակից դատելով...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Վերջին նամակի համար ներեցեք: Պատրաստվելով այստեղ դալ կարճ ժամանակով և, հավանաբար, վերջին անգամ, ես ուզում էի բուլդոզի հետ սիրալիք հան-

դիպել և ինձնից լավ տպավորութիւն թողնել: Գուցե համը հանել եմ, գոհեկութեան մեջ ընկել...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Միայն ա՛յդ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (Սառը): Միա՛յն: Դուք դեռ չե՞ք պատասխանել

Մուրզավեցկայայի նամակին:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Պատասխանել է պետք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց ես չգիտեմ, թե ինչ պատասխանեմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դա դժվար բան չէ: Եթե ուզում եք, ես ձեզ կօգնեմ: Ես վաղը առավոտյան Մուրզավեցկայայի տանն եմ լինելու, կիտսեմ ձեր գործի մասին, գուցե նա այդքան էլ սարսափելի չէ, ինչպես հեռվից է երևում: Դուք ինձ վստահո՞ւմ եք:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես խնդրում եմ ձեզ:

Մտնում է Կեյսեր:

Տ Ե Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Կուպավինա, Բերկուտով, Կեյսեր:

ԼԻՆՅԱՆՎ — Քայլեցի, քայլեցի պարտեզում, բայց ավելի վատ, քունս էլի տանում է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այդ ցավը հեշտ է դարմանելը: Մենք վասիլի Իվանիչի հետ զնանք Մուրզավեցկայային նամակ գրենք, իսկ դուք այստեղ ինչպես ուզում եք կարող եք տեղավորվել: Այս սենյակին իմ ամուսինը հենց հեշտճաշահանգստի համար է կառուցել. լուսամուտները հյուսիս են նայում, չորսբորբ կանաչ է, լուսթյուն, փափուկ բազմոցներ...

ԼԻՆՅԱՆՎ — Ինձ հենց դրանք են պետք կատարյալ երջանիկ լինելու համար:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն երջանիկ եղեք:

ԼԻՆՅԱՆՎ — Կաշխատե՞մ:

Կուպավինա և Բերկուտովը գնում են:

Ով ինչ ուզում է ասի, բայց ամուրի կյանքը շատ հաճելի է: Այ, հիմա, օրինակ. եթե ամուսնացած լինեի, կինս չէր թողնի քնեմ. «Մի՛ քնիր, հոգյակս, լա՛վ չէ, առողջութեանը վնաս է, դու դրանից հաստանում ես»: Եվ չի էլ ուզում իմանալ, թե իր «հոգյակին» ի՞նչ հաճելի է քնելը, երբ քունը վրա է տալիս, և աչքերդ փակվում են... (Նստում է բազմոցին, լուսամուտի տակ):

Գլաֆիրան վառագույրի ետևից նայում է նրան կրճատ, գիշատիչ հայացքով, ինչպես կատուն՝ մկանը:

Իսկ ամուրիի համար զարթնե՞լն ինչքան լավ է: Հենց որ աչքերդ բաց ես անում, առաջին միտքն այն է լինում, որ ինքդ քո գլխի տերն ես: Չէ, ես անուղղելի ամուրի եմ, ես իմ թանկագին ազատութիւնը չեմ փոխի թավշե ձեռքերի ոչ մի շոյանքի հետ: (Դանդաղ թեփվում է դեպի գլխատեղը):

Գլաֆիրան, դուք գալով վառագույրի ետևից, մի ձեռքով ցրկում է նրա պարանոցը և նայում ուղիղ աչքերին: Կեյսեր, ուղղվելով, Գլաֆիրային է նայում վախով:

Տ Ե Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Ղ

Կեյսեր, Գլաֆիրա:

ԳԼԱՏԻՐԱ — (Խաշկիմակը աչքերին մոտեցնելով): Դուք այդ ի՞նչ արիք:

ԼԻՆՅԱՆՎ — (Բազմոցից ելնելով և աչքերը տրոհելով): Ե՛ս: Ո՛չ, այդ դո՛ւք եք անում:

ԳԼԱՏԻՐԱ — Ես չգիտեմ... ես խելքս թոցրել եմ... ես ոչինչ չեմ հիշում: Ամեն ինչի մեղավոր դուք եք...

ԼԻՆՅԱՆՎ — Ո՛չ, հոգով, ո՛չ մարմնով:

ԳԼԱՏԻՐԱ — Ո՛չ, դո՛ւք եք, դո՛ւք... Ես ձեզ ասում էի...

ԼԻՆՅԱՆՎ — Ինչո՞վ եմ մեղավոր, ինչո՞վ:

ԳԼԱՏԻՐԱ — Ես ձեզ ասում էի, ես ձեզ պատշաճանում էի, որ իմ մեջ ուժեղ կիրքը ամեն բոլոր կարող է բռնկվել... Ես

այնքան նյարդային եմ... Դե տեսա՞ք, դե տեսա՞ք... Իսկ դուք, իմանալով իմ կրթությունը...

ԼԻՆՅԱԵՎ — Ախր ես ձեր հրամանով...

ԳԼԱՅԻՐԱ — Ես ձեզ ասում էի... Իսկ դուք ինձ խենթացրիք ձեր գովեստներով, ձեռքերս էիք համբուրում...

ԼԻՆՅԱԵՎ — Բայց դա կատակ էր, Գլաֆիրա Ալեքսեևնա... կատակ...

ԳԼԱՅԻՐԱ — Ես ձեզ ասում էի, որ սերը, տառապանքից բացի, ինձ ոչինչ չի տա... Ես, ախր, ձեզ ասում էի, իսկ դուք... Ահա խնդրեմ, ես ամբողջ գիշեր շնչում եմ... ես սիրեցի ձեզ խենթի պես...

ԼԻՆՅԱԵՎ — Ա՛հ, ինչպիսի՞ դժբախտություն: Դե՛, ներե՛ք ինձ: ԳԼԱՅԻՐԱ — Ես ձեզ ասում էի, որ եթե ես սիրեցի...

ԼԻՆՅԱԵՎ — Այո, ասում էիք, կարծեմ... բայց հանգստացե՛ք: ԳԼԱՅԻՐԱ — (Հուսահատությամբ): Դուք ինձ կործանեցիք:

ԼԻՆՅԱԵՎ — Դե, ես մեղավոր եմ, ես զղշում եմ: Ի սեր աստուծո, ներեցե՛ք: Ես առանց դիտավորության... (Ուզում է համբուրել Գլաֆիրայի ձեռքը):

ԳԼԱՅԻՐԱ — Ինձ չդիպե՛ք... էլ չեմ դիմանում...

ԼԻՆՅԱԵՎ — Բայց թույլ տվե՛ք հրաժեշտին համբուրել ձեր ձեռքը: Եվ գնացե՛ք, գնացե՛ք...

ԳԼԱՅԻՐԱ — Ա՛խ, ո՛չ, թողե՛ք... ձեռք չտաք:

ԼԻՆՅԱԵՎ — Հրաժեշտ տալուց առաջ: Համենայն դեպս, ես կիմանամ, որ...

ԳԼԱՅԻՐԱ — Էլ չեմ դիմանում...

ԼԻՆՅԱԵՎ — Դուք ինձ արհամարհում եք: (Բռնում է Գլաֆիրայի ձեռքը):

ԳԼԱՅԻՐԱ — Ես ձեզ ասում էի...

ԼԻՆՅԱԵՎ — Դուք մեկնում եք, չէ՞... Մեկնո՞ւմ եք: Դե՛, գնացե՛ք: (Համբուրում է Գլաֆիրայի ձեռքը):

ԳԼԱՅԻՐԱ — Ախ, էլ չեմ դիմանում... Ա՛խ, ա՛խ (Լինյակի վզովն է ընկնում և փակում աչքերը):

ԼԻՆՅԱԵՎ — Այս ի՞նչ եք անում: Գլաֆիրա՛ Ալեքսեևնա: Գլաֆիրա՛ Ալեքսեևնա:

ԳԼԱՅԻՐԱ — (Քայտերով աչքերը): Վայ, այստեղ ես գալիս, կարճևս:

ԼԻՆՅԱԵՎ — Նրանք տեսա՞նք ես քայլում:

ԳԼԱՅԻՐԱ — Վայ-վայ: (Փակում է աչքերը):

ԼԻՆՅԱԵՎ — Գլաֆիրա Ալեքսեևնա, Գլաֆիրա Ալեքսեևնա, մի անհանգստացե՛ք... Նրանք այստեղ չեն գա:

ԳԼԱՅԻՐԱ — Դուք ինձ կործանեցիք... Ի՞նչ կմտածեն: Ո՞ր կորչեմ: Ուրիշ ելք չկա:

ԼԻՆՅԱԵՎ — Դուք կամաց խոսե՛ք, մի քիչ ցածր, թե չէ...

ԳԼԱՅԻՐԱ — Մի՞թե նրանք լսում են: Թաքցրե՛ք ինձ, թաքցրե՛ք:

ԼԻՆՅԱԵՎ — Ախր որտե՞ղ ես ձեզ թաքցնեմ: Վարազույրի ետև՞ը...

ԳԼԱՅԻՐԱ — Ահա նրանք գալիս են... Դուք ինձ կործանեցիք:

ԼԻՆՅԱԵՎ — Կամաց, ի սեր աստծո, կամաց:

ԳԼԱՅԻՐԱ — Ախ, այս ի՞նչ արեցիք: (Ընկնում է վզովն ու փակում աչքերը):

Դռների մեջ երևում են թեկուտովն ու Կուպպիևան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն տ ա ս ն Ե Ր Ո Ր Ղ

Լինյակ, Գլաֆիրա, Թեկուտով, Կուպպիևա, հետո սպասավար:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ եմ տեսնում, բարեկամս:

ԿՈՒՊՊԱՎԻՆԱ — Մի՛խայլո Բորիսիչ, Մի՛խայլո Բորիսիչ: Ահա թե ինչպիսին եք: Ա՛խ, կեղծավո՞ր:

ԼԻՆՅԱԵՎ — (Արցունքների միջից): Դե, ի՞նչ: Դե, ես ամուսնանում եմ:

Մտնում է սպասավարը:

ՍՊԱՍԱՎՈՐ — Գլաֆիրա Ալեքսեևնա, ձիերը պատրաստ են: ԳԼԱՅԻՐԱ — Օ՛հ, սպասավորներն է՞լ են այստեղ: Այս ի՞նչ արեցիք: Հիմա Մերոպա Դավիդովնան...

ԿՈՒՊՊԱՎԻՆԱ — Ա՛խ, խեղճ աղջիկ: Դու ինձ մոտ մնա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մի անհանգստացե՛ք: Ես վաղը Մերոպա Դավիդովնային տուն եմ գնալու, ես նրան ամեն ինչ կբացատրեմ:

ԼինՅԱԵՎ — (Քիչ է մեռում լաց լինի): Դե, ի՛նչ: Ես ամուսնա-
նում եմ: Դու այդպես էլ ասա, խնդրում եմ: Ասա, որ
ամուսնանում եմ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԻ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ:
- ՔԵՐԿՈՒՑՈՎ:
- ԿՈՒՊԱՎԻՆԱ:
- ԱՆՃՈՒՍԱ:
- ԳԱՅԻՐԱ:
- ԼԻՆՅԱԵՎ:
- ՊԱՎԻՆ:
- Առաջին գործողության ղեկորացիան:

Տ Ե Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Պավլին, մտնում է Զուգունովը:

- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բարև՛, Պավլինուշկա:
- ՊԱՎԻՆ — Բարև՛, պարո՛ն: Մի քիչ շուտ եք շնորհ արել:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այդպես է հրամայված: Մի թուփուն տուր տես՝
նեմ:
- ՊԱՎԻՆ — (Տուփը տալով): Համեցե՛ք, պարո՛ն:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Վե՞ր են կացել:
- ՊԱՎԻՆ — Նստեցի՛նք թեյի: Ահա և ինքը բարեհաճեց:

Մտնում է Մուրզավեցկայան, Պավլինը գնում է:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ե Ր Դ

Մուրզավեցկայա, Զուգունով:

- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա, դու արդեն այստե՞ղ ես: Բարև՛:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բա՛րև ձեզ, Մերուպա Դավիդովնա: Ինչպե՞ս
հաճեցիք քնել:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Նստելով): Ոչի՛նչ: Նստի՛ր:

Զուգունովը նստում է:

- Քշել էր պետք քեզ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞ համար, տիրո՛ւհի:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Աստծուն աղերսում ենք ազատել մեզ
սատանայի ձեռքից, իսկ սատանան հենց դու ես:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես ի՛նչ սատանա, բարերարուհի: Այդ պաշ-
տոնի համար խելքս չի հերիքում: Միայն կարողանայի
ձեզ գոհաթյուն տալ, ինձ այդքանն էլ բավական է:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Նամակը ստացե՛լ է:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Լսո՛ւմ եմ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Այսօր գալու է, վախեցել է:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Կներեք, երևի:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛ր, վրեժս լուծելու եմ: Խղճիս մեղք
կվերցնեմ, բայց վրեժս կլուծեմ: (Քիկացնելով ձեռնա-
փայտը):
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպե՞ս լուծեք: Միայն սպառնում եք: Իսկ
ո՞վ է հիմա սպառնալիքից վախենում:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Քո գործը որևէ սատանայություն մտա-
ծելն է: Մտքինդ ի՛նչ է, ասա՛:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Որ ջղախնամ եք, ի՞նչ ասեմ:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛ր, ասա՛: Դու գիտես, ես համառն եմ,
եթե հրամայում եմ՝ ասա՛:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչպես կուզեք, իսկ իմ կարծիքով ներել չի
կարելի: Իր բարերարուհու հանդեպ այդպիսի ծաղր:
- ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Այո՛, այո՛, տեսնո՞ւմ ես:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Դուք ո՞վ եք մեր նահանգում: Ինչպիսին էլ
լինի Ապոլլոն Վիկտորիչը, միևնույն է, ձեր եղբոր որդին

է: Հե՞շտ է ասել՝ Մերոպա Դավիդովնայի եղբոր որդի: Այդպիսի մարդիկ շա՞տ կան:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե ասա, տես թե ինչ դքսուհի է հայտ- նըվել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինքն էլ հրավիրել էր. դուք այստեղ պատաս- խանի եք սպասում, անհանգստանում եք, իսկ այնտեղ նրան սպասավորները համարյա վճռում են:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Այո՛, այո՛: (Բարձր): Ապուլո՛ն, արի՛ ալստեղ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞ է նման, ի սեր աստծո:

Մտնում է Մուրզավեցկին. որսորդական հագուստով է, հրացանը ձեռքին:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է Ր Ր Ո Ր Ղ

Մուրզավեցկայա, Չուգունով, Մուրզավեցկի:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ո՞ւր:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԻ — Այգիներում կտցարներ են երևացել, խփել է պետք:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Կուպավինան ի՞նքն էր քեզ հրավիրել:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԻ — Ինքը, մա տանտ. ես այն ժամանակ էլ ձեզ ասացի:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Գուցե այնպես է ասել, անցողակի:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԻ — Անցողակի՞: Մարդու վզից է կախվում. բայց ես նրան կանգնեցրի, ասացի. լեսն՝ լավ չէ՞:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ահա, ահա թե ինչպիսի՞ն է նա:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Գուցե և Ապուլոնը ստում է, բայց, այ՞ նուամենայնիվ, ինչ-որ ճշմարտություն էլ կա:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԻ — Բոլորը ճիշտ է, մա տանտ:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Հետո՞, իսկ հետո՞:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԻ — Իսկ հետո՞ մալլորի: Հերիք չէ, որ ներս շքո- ղեց, սպասավորներից դարանակալներ էլ էր կա՞նք:

1 Դժբախտություն — (Ֆրանս.):

Եվ եթե իմ Թամերլանը չլիներ՝ դե, ադյո, մոն պլեզիր: Միայն թե դուք ինձ տեսնեիք, մա տանտ: Առյուծ է, հո շուն չէ. սրա կոկորդից, նրա կոկորդից, բոլորը փախան, և ես ողջ եմ: Շունը՝ բարեկամ է: (Սուլում է): Թամեր- լան, քո՛ս քրա: Միակ բարեկամը:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Պետք չէ, պետք չէ, խլացրի՛ր: Գնա՛:

Մուրզավեցկին գնում է նախասենյակ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ո Ր Ր Ո Ր Ղ

Մուրզավեցկայա, Չուգունով, հետո Պավին:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Այս ի՞նչ բան է, հը, Վուկոլ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Քթախոտ ֆաշելով): Մա՛ղր:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Ո՞ւմ նկատմամբ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Պա՛րզ բան է, ձե՛ր:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Վրեժ լուծելը ես կլուծեմ, առիթ կգըտ- նեմ, չեմ մեռնի առանց դրա. հիմա ինձ համար չարիքը վերացնելն ամենից թանկ բանն է:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հիմա է պետք, ինչո՞ւ հետաձգել: Հետո կմո- տանաք, երևի:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Չեմ մոտանա, սիրելիս, երբեք չեմ մո- տանա:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Նրանք հիմա, երևի, կինյակի հետ ծիծա- ղում են:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ ես ինձ ջղայնացնում, դատամո՞ր՝ Դրա համա՞ր եմ, ինչ է, քեզ կանչել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչո՞վ եմ ձեզ ջղայնացնում: Ինքներդ գիտեք, որ ծիծաղում են:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Ջահել աղջիկ է, մի երևելի խելք էլ չունի, ծիծաղում է մեզ վրա, ինչպես հիմարների վրա, իսկ մենք քեզ հետ, փորձված իմաստուններս, նստել ու ոչինչ չենք կարողանում անել:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ամեն ինչ կարելի է անել, ամեն ինչ:

ՄՈՒԻԶԱՎԵՑԿԱՅԱ — Բայց ի՞նչ, Թող գա և ներողություն

խնդրի, ահա թե ինձ ինչ է պետք:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Դա էլ կարելի է:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — (Ձեռնափայտը բխկացնելով): Պարծե-
նում ես հա պարծենում, գրասենյակի առնես:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ծնկի եկած կիսնդրի:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ես քեզ ասում եմ՝ մի՛ շղայնացրու
Ձեռնափայտով որ հասցրի...
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ծնորհակալություն կասեք, և ոչ թե ձեռնա-
փայտով...
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե, մարմնացյալ սատանա, ի՞նչ որո-
գայթներ ունես, ասա՛:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Հանելով բուլբուլ): Մի ցույց տուր, թող
տեսնի:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — (Վերցնելով բուլբուլ): Սա ի՞նչ է: Նա-
մակ Ապոլլոնի՞ն:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ծնո՞րհ արևք, կարդացե՛ք:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — (Կարդում է): «Ողորմած տեր, Ապոլլոն
Վիկտորիչ: Ըստ ձեր հանգուցյալ հոր հետ ունեցած իմ
գործերի, տարբեր ժամանակներից ես պարտք եմ նրան
երեսուն հազար, մի բան, որին կարող եք վերահասու
լինել գրքերից և հաշիվներից, եթե դրանք պահպանվել
են: Բայց շատ հնարավոր է, որ ձեր հոր հայտնի ան-
փութությունն պատճառով ոչ մի հետք էլ չի մնացել իմ
պարտքից: Ես բնավ չեմ ցանկանում թաքցնել այդ և
դրկել ձեզ բավարարվածությունից, դրա համար էլ կցում
եմ նրան օրենքով սահմանված փաստաթուղթը...»: Ահա
թե ինչ ես հորինել: Իսկ Սիբիրի մասին մոռացե՛լ ես:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Սա ի՞նչ դժբախտություն է, բուլբուլ հենց մի
գլուխ Սիբիր հա Սիբիր:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Քո գործերն են այդպիսին, սիրելիս, դրա
համար էլ ստիպված ես հաճախակի լսելի:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Կրպակից հանելով մուրհակները): Ահա և
մուրհակները:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Արդեն պատրաստ են: Չէ, Վուլո, քո
մեջ սատանա կա նստած: Եվ ինչպե՞ս է հողը հանդուր՝

ժում ձեզ, իսկարիովտացիներդ: Այդ ի՞նչ գիրք է ձեռ-
քիդ:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Գրասենյակի հին գրքերից է. այստեղ հաշիվ-
ներ էլ կան: Նկուղից հանեցինք, խոնավացել է, պետի-
նտովել: Մուրհակներն ամբողջ գիշեր սրա մեջ են մնա-
ցել, հիմա էլ թող մնան ու ծաղկեն, թե չէ, թանաքն, ախր,
թարմ է: Դրանց տեղը հենց այդ գրքի մեջ է: (Մուրհակ-
վեցկայայից վերցնում է մուրհակները): Տեսեք, ի՞նչ մա-
քուր աշխատանք է:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Տեսնելու ի՞նչ կա: Սատանան է քեզ օգ-
նում:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Միայն դա է ձեզնից լսածս: (Մուրհակները
դնում է գրքի մեջ և տալիս Մուրհակվեցկայային):
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ախր սատանա ես, որ կաս: Մի՞թե մար-
դըն այսպիսի գարշելի բան կանի: Թեկուզ անի էլ, բայց
մենակ, առանց սատանայի, չի՛ կարող:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ուզում եմ գոհացնել ձեզ, իսկ դուք հայհո-
յում եք: Իմ օրը կտրվի:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Հերիք է նվնվաս:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկապես: Ալլելի լավ է, տվեք ոչնչացնեմ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Կտա՛մ, բա չե՛մ տա: Ասա՛, առնե՛տ,
ի՞նչ անեմ սրանք:
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Եվլամպիա Միկուլանան որ կգա, մուրհակ-
ները ցույց տվեք, բայց խիստ եղեք: Վճարեք, իբր, ան-
միջապես, թե չէ դատարան կտամ: Դե, նա արդեն ձեր
ձեռքում է, ինչ ուզենաք կանեք:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այո՛, այո՛, միայն կվախեցնեմ, թե չէ
իսկականից հո դատարան չե՛մ տալու: Ախր կեղծ են
սրանք: (Կիբր դնում է սեղանին):
ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ինչպե՞ս է արված, մի նայե՛ք: Էհ, առա-
վտայան եթե ներկայացնեիք հաշտարարին՝ հրեկոյան
կատարողական թերթիկը պատրաստ կլինեք... Թե չէ
նամակներ եք գրում, սպանում եք, զգուշացնում եք
միայն: Թե՛րևս իմ հավատարմագիրն էլ ոչնչացնեմ:
ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Սեփական տիրուհու դե՛մ: Լա՛վ կառա-
վարիչ ես:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ես ինձ արդեն ապահովել եմ, պարապուտի փողը ճարեցի: Էլ ինչու պիտի նրան խղճամ: Երբ երեսուն հազարը լրիվ ստանաք, քսան տոկոսն իմն է: **ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ** — Ինչպե՞ս ես համարձակվում բերանդ բացել: Այդ ո՞ւմ ես ասում: Ազնիվ կնո՞ջն ես դու այդ պիտի ստորութիւններ առաջարկում: Արժեք ճակատդ դադել: Արժանի՛ ես: (Ականջ դնելով): Ոնց որ մարդ եկավ: Գնա մի բան կեր: Ես հետո քեզ կկանչեմ:

Ձուգուեովը գնում է: Մտնում է Պավլինը:

ՊԱՎԼԻՆ — Վասիլի Իվանիչ Բերկուտով:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ի՞նչ Բերկուտով է: Այո՞, այո՞, այո՞, հիշո՞ւմ եմ: Հրավիրիր:

Պավլինը գնում է: Մտնում է Քերկուտովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Կ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Մտագավեցկայա, Բերկուտով:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Պատիվ ունեմ ներկայանալու: Կբարեհաճե՞ք հիշել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Է, ինչպես չհիշեմ, հարգելի Վասիլի Իվանիչ: Ենորհ արեք նստել:

Բերկուտովը նստում է:

Վաղո՞ւց եք եկել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Երեկ չէ առաջի օրը երեկոյան: Կներեք, երեկ էի ուզում գալ ձեզ մոտ, բայց ճանապարհից շատ հոգեմած էի: Դեռևս Պետերբուրգում պարտքս համարեցի այստեղ գալուն պես առանց հապաղելու ներկայանալ ձեզ՝ վկայելու իմ հարգանքը և հաղորդելու, որ ձեր անձնվիր կյանքի, ձեր բարեգործութիւնների լուրն արդեն նաև մայրաքաղաք է հասել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ենորհակա՞լ եմ, հարգելի՛ս:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բացի այդ, ինձ, եկվորիս, հետաքրքիր է իմանալ մեր նահանգի կյանքի առօրյան, իսկ ո՞ւմից կարող եմ ավելի ստույգ տեղեկութիւններ և ավելի արդարացի կարծիքներ ստանալ, եթե ոչ ձեզնից:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ուրիշ էլ ո՞վ պիտի իմանա մեր գործերը, եթե ոչ՝ ես:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինչպե՞ս է զեմստվոն մեր կողմերում, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ինչպե՞ս պիտի լինի: Զուր են ծեծում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ ինչո՞ւ ձեզնից խորհուրդ չեն հարցնում:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Բոլորն էլ իմաստուն են, կգա՞ն պառավիս մոտ, ինչպե՞ս չէ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ընդունենք, որ նրանց մեջ էլ խելացի մարդիկ կան, բայց չէ՞ որ միայն ձեզնից կարող են փորձ ձեռք բերել, ճանաչել ժողովրդական կյանքն ու այս կողմերի հոգսերը: Ոչ, եթե ես այստեղ ծառայեի...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Իսկ ո՞վ է խանգարում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Անավարտ գործեր կան: Ես, հասկանալի է, կարող էի քվերակվել ավելի քիչ աչքի ընկնող պաշտոնների համար:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե, ուրեմն, շնորհ արեք: Այ, շնորհ մեզանում ազնվականութեան պարագլխի, զեմստվոյի վարչութեան նախագահի ընտրութիւններն են...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես հենց դրա համար էլ ասում եմ, Մերոպա Դավիդովնա, որ եթե ես ծառայեի, առանց ձեր խորհրդի ոչինչ չէի անի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Լսի՛ր ինձ, Վասիլի Իվանիչ, ներիր ինձ, պառավիս, առաջադրի՛ր թեկնածութիւնդ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինձ էլ աստված խելքի տեսակետից չի նեղացրել, բայց եթե ձեր խորհուրդներն էլ լինեին... այն ժամանակ ամբողջ նահանգը մեր ձեռքում կլիներ:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ասո՞ւմ եմ քեզ՝ քվերակվիր: Ինչի՞ց ես վախենում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Վախենալու բան չունեմ. ես այստեղ բոլորի հետ լավ եմ: Չնայած կինյակի և նրանց ամբողջ ընկե-

բության երեխայութիւնը սրտովս չէ, բայց և այնպես նրանց հետ էլ վեճի մեջ չեմ մտնում:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Իսկապէ՛ս երեխայութիւն, ա՛յ ճիշտ խոսք ասացիր:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հասկանալի է, ես հոգով միշտ ձեզ հետ կլինեմ, ձեր կուսակցության:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Դե, այսպիսով, մենք քեզ կգրանցենք ուրեմն մեր մարդիկ ավելացան:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես կմտածեմ, Մերոպա Դավիդովնա, կմտածեմ: Թույլ տվեք ծառայութիւն մատուցել: Ես ինձ հեռ հոգևոր բովանդակության մի քանի գիրք եմ բերել...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Շնորհ արա, տո՛ւր կարդանք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես դրանք կնվիրեմ ձեզ: (Ոտքի ելնելով): Պատիվ ունեմ գլուխ տալու: Մի քանի այցելութիւններ պիտի անեմ քաղաքում: Ես դեռ կանցնեմ ձեզ մոտ, և ոչ մեկ անգամ, եթե թույլ կտաք: Ձեզ հետ զրուցելն այնքան ուսանելի է: (Գլուխ է տալիս):

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Համեցե՛ք, խնդրեմ, երբ որ կամենաս:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ա՛խ, կնե՛րք: Ես ձեզնից մի փոքրիկ խնդրանք ունեմ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ է պատահել, հարգելիս: Շատ ուրախ կլինեմ ծառայելու, ինչով կարող եմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես հանձնարարութիւն ունեմ իմ հարեանուհուց՝ Եվլամպիա Նիկոլանայից: Առանձնապես մի կարեւոր բան չէ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ինչպե՞ս թե կարևոր չէ: Ոչ, դա արդեն իզուր է նա այդպես մտածում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նախ, նա ձեզնից ներողութիւն է խնդրում և ինքն այսօր կգա ձեզ մոտ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛յ, այդպե՛ս ավելի լավ է, շո՛ւտ պիտի գլխի ընկներ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ ինչ վերաբերում է նրա պարտքին՝ ձեր հանգուցյալ եղբորը կամ էլ հիմա ձեր եղբորորդուն, ապա հայտնի չէ, ընդունո՞ւմ էր այդ պարտքը պարոն Կուպավիւր, թե՞ ոչ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ընդունում էր, ինքն էր ընդունում, ինչպէս չէ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ որտեղի՞ց գիտեք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Նամակ կա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Լսեք, Մերոպա Դավիդովնա, իսկ դուք դրան հավատո՞ւմ եք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ախր ինչպե՞ս չհավատամ, երբ փաստաբղթերն էլ, մնացած բոլորն էլ ինքս եմ տեսել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՛նչ սրիկաներն են: Ի՛նչ են անում ձեզ:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ո՞վ, ո՞վ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ձեր եղբոր որդին՝ Ապոլլոնն ու նրա ընկերները:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Բայց դուք մի մոռացե՛ք, սղոյմած տեք, որ դուք իմ տանն եք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, վնդե՛ք դրանց, շտապ քոլորի՛ն վռնե՛ք:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Նա ազնվական է... Եթե նա լսեր: Դե ես էլ... ախր ես նրա հորաբույրն եմ: Թե՞ կհրամայեր լռել...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Թույլ տվեք: Ես ձեզ հասկանում եմ. դուք շատ գթառատ սիրտ ունեք և չեք էլ կասկածում ամբողջ զարշիւթյանը...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛չ, ազատե՛ք ինձ ձեր խոսակցութիւններից: Շնորհ արեք, ազատե՛ք: Խնդրո՞ւմ եմ ձեզ, ազատե՛ք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նրանք ի՛նչ: Նրանք կորցնելու բան չունեն: Իսկ այդպիսի հարգարժան կնոջը տեսնել մեղադրյալի աթոռին... Ամբողջ նահանգը կգա նայելու...

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Վախեցած): Ինչպե՞ս թե մեղադրյալի աթոռին:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես հիմա ձեզ կբացատրեմ. թաքցնելու բան չկա, քանի որ հիմա դա շատերին է հայտնի. վաղը կհասնի դատախազին, կսկսվի հետաքննութիւնը: Գլխավոր մեղավորը՝ Գորեցկին, ոչինչ չի թաքցնում. նրան երկի շուտով կձերբակալեն:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ է պատահել, ի՞նչ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հանգուցյալ Կուպավիւրի անունով կեղծ մուրհակներ են գրված: Դա երեկ է արվել: Ես կասկածում եմ ձեր եղբոր որդուն. հո ձե՞զ չէի կասկածելու, սատանան տանի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛չ, ո՛չ, ինձ չէ, ինձ չէ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Կուպակինի անունից նամակ են գրել ձեր եզ-
բորորդուն և երկու մուրհակ, նկուղից հանել են հին հաշ-
վեգիրքը և դրել նրա մեջ: (Տեսնելով սեղանի վրայի գի-
քը): Ահա այսպիսի մի գրքի մեջ: (Վերցնում է գիրքն ու
բացում): Ահա, խնդրեմ, մուրհակներն այստեղ են: Գրքի
միջից էլ հաշիվները հանել են... ջնջումներ, ուղղումներ
Հիանալի՛ է: Իրեղեն ապացույցներ...

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Հարգելի՛ս, մի՛ կործանիր:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հիմա իմ գլխավոր հոգսը ձեզ փրկելն է:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Փրկի՛ր ինձ, հարգելի՛ս փրկի՛ր: Ոտքե-
րդ կընկնեմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մի՛ անհանգստացեք, բոլոր ուժերս կներդնեմ
այդ գործը փակելու համար: Ձեզ շատ եմ խղճում: Դուք
ի՞նչ մեղք ունեք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ո՛չ մի, հարգելիս, ո՛չ մի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դեռ մի նամակ էլ կա, որով դուք հազար ութ-
լի եք ստացել:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Արդեն մոռացել եմ, հարգելիս, մոռացել
եմ: Հիշողությունս թուլացել է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես ձեզ կհիշեցնեմ: (Գրպանից հանելով նա-
մակը): Ահա: Նույն վարպետի գործն է: Դուք պետք է
փողը վերադարձնեք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Որտեղի՞ց գտնեմ, արդեն բաժանել եմ
աղբատներին: Հիմա նրանք աստծուն աղոթում են... Հո-
ետ չե՞մ վերցնելու:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հասկանալի է, դուք մոլորության մեջ եք եղել
բայց ի՞նչ արած, ստիպված կլինեք վերադարձնել, եթե
գործը դատարանին հասավ: Բայց դուք առայժմ մի՛ ան-
հանգստացեք. այդ բոլորը դուրս գցեք ձեր գլխից:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ուրախ կլինեի դուրս գցել, բայց դուրս
չի գալիս: Շշմեցրեց, համ էլ ասում է դուրս գցի՛ր:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մի ուրիշ բանի մասին խոսենք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Վախենում եմ, աղանջակս, նահանգա-
կան դատարանից սարսափելի վախենում եմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դե, գործը գուցե որևէ ձևով հարթվի: Ձեզ ես՛

րություն ասեմ: Լինյաևն առաջարկություն է արել Գլա-
ֆիրա Ալեքսեևնային:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե, նրանց էլ: Ինչու է սիրտս այդպես
թարտում... Գլաֆիրան ցանցն է գցել նրան:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եվ, երևում է, շատ ճարպկորեն:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Տեղն էր Լինյաևին: Նրան բոլորովին էլ
չեմ խղճում: Սիրտս տեղը չի գալիս... Իսկ դուք ամու-
րի՞ եք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ամուրի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Այդ ինչո՞ւ չեք ամուսնանում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Սկզբում գործերն էին խանգարում, իսկ հիմա
հարսնացու չեմ գտնում: Խորհո՞ւրդ տվեք:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Քեզ ո՞ւմ առաջարկեմ: Հիմա էլ բունքե-
րըս են խփում: Հարևանուհուցդ՝ Եվլամպիա Նիկոլաևնա-
յից լավը չկա:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նա, երևում է, այնքան էլ լավ չի տրամա-
դրված իմ նկատմամբ: Իսկ ես դեմ չէի լինի:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Ուրեմն նշանե՞մ, ինչ է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նշանելը չգիտեմ, բայց ես կխնդրեի ձեզ սի-
րալիք խոսեիք նրա հետ, կարծիքն իմանայիք, խորհո՞ւրդ
տայիք նրան:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դու ինձ մի սովորեցրու, այդ գործերում
ես քեզից հիմար չեմ: Մենակ թե դու ինձ օգնիր: Ահա
այդ հազար ութլին...

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դուք՝ ինձ, ես՝ ձեզ: Եվլամպիա Նիկոլաևնան
հիմա պիտի գա, իսկ նրա հետ միասին նաև Գլաֆիրա
Ալեքսեևնան և Լինյաևը:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե, ուրեմն, դու ինձ ներիր, գնամ կար-
գադրություններ անեմ: Հարկավոր է նախաճաշ պատ-
րասել և սուրճ. փեսացուին եմ ընդունելու, ազգական
է, ախր, դառնալու:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իմ մասին մի անհանգստացեք: Ես պետք է
հենց հիմա տեսնեմ Չուգունովին:

ՄՈՒՐԶԱՎԵՑԿԱՅԱ — Նա, այդ հանցագործն այստեղ է: Ես
հիմա նրան կուղարկեմ: Վուկո՞լ, Վուկո՞լ: Ահա՛ նա:

Մտրգավեցկայան գնում է: Մտեում է Չուգունովը:

Տ Ե Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ր Ր Գ

Բերկաւոով, Չալաւոով:

- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Բա՛րև, Վուկոլ նաումիշ: (Ձեոֆ է տալիս):
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հարգանքներս, Վասիլի Իվանիշ: Վաղո՞ւց եք բարեհաճել:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հենց նոր եկա: Շատ հաճելի է ձեզ տեսնել: Ինչպե՞ս եք ապրում, Վուկոլ նաումիշ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Շնորհակալ եմ արարչից, Վասիլի Իվանի, բողոքավոր չեմ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Սրտանց ուրախ եմ: Ես հօ ձեզ գործից չե՞մ կտրում: Կուզենայի մի քանի բոպե խոսել ձեզ հետ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Որքան ուզում եք: Պատրաստ եմ ծառայելու:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ինձ պետք է, մեծարգո Վուկոլ նաումիշ, որոշ տեղեկութուններ հավաքել այստեղի տեղանքի մասին:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այո՞: (Հանելով ֆախտաի աուփը): Չէի՞ք ցանկանա:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ձեմ քաշում, բայց թույլ տվեք: (Փաշելով): Այս ինչի՞ հոտ է:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Համիկի: Գիտավորյալ եմ աճեցնում. և՛ ծաղիկն է հաճելի տանը՝ լուսամուտի գոգին, և հոտը: Լավ քթախոտերը մողայից դուրս են գալիս: Առաջ «Սիրո փունջ» անունով քթախոտ կար, այժմ էս, ես ձեզ ասեմ, քթախոտ էր հա, Վասիլի Իվանիշ... Ուրեմն ի՞նչ է քեզ պետք տեղանքի վերաբերյալ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Գիտեք, խոսք կա Սիրբիի երկաթուղու մասին: Մենք, որպես տեղացի կալվածատերեր, շահագրգռված ենք այդ գործում, և եթե չկա ոչ մի ֆիզիկական արգելք, լեռներ, օրինակ...
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Արգելքներ և լեռներ չկան, հարթ նահանգ է Միայն թե մենք ի՞նչ պիտի տանենք Սիրբի, ի՞նչ մթերքներ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մթերք կա, Վուկոլ նաումիշ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Հետաքրքիր է լսել:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Կարծում եմ, լրագրերում կարդացած կլինեք, որ վերջին ժամանակներս շատ են բացահայտվում վատ-

- նումներ, կեղծ մուրհակներ և այլ թղթեր, կեղծիքներ և ընդհանրապես տարբեր տեսակի հափշտակութուններ: Դե, այդ բոլոր գործարքների մեջ կան նաև մեղավորներ. ահա հենց այդ մթերքներն էլ կուղարկենք Սիրբի, Վուկոլ նաումիշ:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Բարեհաճում եք կատակել:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ կատակ: Ահա հետո չգնանք, քիչ առաջ մի երիտասարդ ինքը խոստովանեց, որ կեղծ մուրհակներ է պատրաստել:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Գլուխը բափահարելով): Մի տեսք է, թե ինչ գործեր են կատարվում աշխարհում:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ է ազգանունը... Գորեցկի, կարծեմ...
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Գորեցկի... Թույլ տվեք: Կա այդպիսին, կա... լսել եմ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նա ասում է, որ իրեն հարկադրել են, և սկսգրութունները ներկայացրեց, որոնցից նրան ստիպել են արտագրել:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ինչի՞ն է պետք մարդկանց գործի մեջ քաշել: Ձե՞մ հասկանում: Չէ՞ որ դրանից իր վիճակը չի թեթևանա: Ջահել է դեռ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Նա նաև խոստովանեց, որ մուրհակը տիկին Կուպալինայի անունով է գրել, իսկ եվլամպիա Նիկոլանան այսօր հայտարարեց, որ իրենից բլանկ են գողացել:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ա՛յ թե ինչպիսի գործեր են:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ահա թե ինչ, Վուկոլ նաումիշ, ձեզ մոտ չէ՞ մուրհակը: Եթե մոտենեղ չի, ապա շո՞ւտ բերեք:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Չէ, ինչո՞ւ ես ձեզնից շատ շնորհակալ եմ, Վասիլի Իվանիշ:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Այդ ինչի՞ համար:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ձգուշացրիք: Ես հիմա մուրհակը կոշիչացնեմ: Թող Գորեցկին խոռնի, իսկ ես բանից անտեղյակ եմ, ինձ մոտ ոչինչ էլ չի եղել:
- ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ափսո՞ւ: Թեկուզ ոչ ամբողջ գումարը, բայց գոնե որևէ բան պետք էր ստանալ այդ մուրհակով:
- ՉՈՒԳՈՒՆՈՎ — Այո՛, իհարկե՛, Վասիլի Իվանիշ, պե՛տք էր: Ախր ինչպիսի՞ ազնիվ արարք է իմ կողմից: Հենց այն-

պես բլանկներ են տալիս... Մեկ ուրիշը, գիտե՞ք... Ո՞վ կուզի իր երջանկութունից հրաժարվի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իրավացի՞ եք, Վուկոլ Նաումիչ, իրավացի՞ եք Եվլամպիա Նիկոլանևային էլ պետք է պատժել, որ սրանից հետո զգուշ լինի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Պե՛տք է պատժել, Վասիլի Իվանիչ, պե՛տք է: Ինչպե՞ս կարելի է բլանկներ տալ: Ախր կավածքը ձեռքից կառնեն: Ես ահա երեք հազար եմ միայն գրել, բայց ամեն մարդ իմ նման խիղճ կունենա՞:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մուրհակը մի քիչ պակասեցրեք, Վուկոլ Նաումիչ, գրեք, որ կեսն ստացել եք, իսկ մնացածը Եվլամպիա Նիկոլանևան կվճարի: Հանե՛ք մուրհակը: Ահա թանաք և գրիչ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Լսում եմ: (Հանում է մուրհակը, դնում պեղեցը, վերցնում գրիչը): Ինչպե՞ս կհրամայեք գրել, Վասիլի Իվանիչ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Սույն մուրհակով ստացված է ի վճարումն երկու հազար...

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Միայն հազար ուրբի՞ եք թողնում: Քի՛չ է, Վասիլի Իվանիչ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, հազարն էլ շատ է, Վուկոլ Նաումիչ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Իսկ ինչպիսի մեծահոգություն է իմ կողմից:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ահա և մենք հիմա դա կզնահատենք ինչպես որ հարկն է: (Թելադրում է): Ստացված է ի վճարումն երկու հազար հինգ հարյուր...

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Միայն հինգ հարյուր: Դա արդեն նույնիսկ մի քիչ վերավորական է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ո՛չ, հինգ հարյուր էլ չէ, պակաս: Գրե՛ք, գրե՛ք: Երկու հազար հինգ հարյուր հիսուն ուրբի: Թե ինչու ավելացրի այդ հիսուն ուրբին, կասեմ հետո: Մնացածը կստանաք:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Մուրհակը դնելով գրպանը): Խոնարհաբար շնորհակալ եմ ձեզից, խորապես զգացված իմ շնորհակալությունն եմ հայտնում ձեզ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Երբ ձեր քրոջ որդին պատմեց ինձ բոլոր գործերը և ձեր սևագրությունները ներկայացրեց, ես սկզբում ուզում էի դատախազի մոտ գնալ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Չէ, ինչո՞ւ դատախազի մոտ: Դուք, Վասիլի Իվանիչ, ի՞նչ շահ ունեք խառնվել այդպիսի կեղտոտ գործերի: Տեղով մեկ խայտառակություն է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ հետո մտածեցի, որ ավելի լավ է նախ խոսեմ Մերոպա Դավիդովնայի և ձեզ հետ:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Շատ լավ և հիմնավոր եք վարվել: Դատախազն ի՞նչ է, քի՞չ գործ ունի:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ որպեսզի ձեր քրոջ որդին այստեղ ավելորդ բաներ չխոսի... նա մի տեսակ գլխից ձեռքաշած է:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Չարաճճի տղա է:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Ես նրան ուղարկեցի Վոլոգդա, իմ անտառները շրջելու. նա հիմա շոգենավով գնում է: Հիսուն ուրբի ճանապարհածախս եմ տվել, իսկ դա չէ՞ որ ձեր պարտականությունն է, Վուկոլ Նաումիչ: Ահա այդ հիսուն ուրբին էլ ձեր հաշվից դուրս եկա:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Շատ լավ: Երկա՞ր եք հյուրընկալվելու մեղ մոտ, Վասիլի Իվանիչ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Դեռ չգիտեմ: Գործից է կախված:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Եթե որևէ գործ լինի, ձեր հին ծանոթին շնորհակալ եմ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Անպայման, Վուկոլ Նաումիչ, անպայման:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Երևի հյուրեր եկան: Մինչ հաճելի հանդիպումս (Գնում է):

Մտնում են Կուզավիճան և Անֆուստե, հյուրասենյակից դուրս է գալիս Մուրզավեցկայան:

Տեսարան յոթերորդ

Բերկուտով, Մուրզավեցկայա, Կուզավիճա, Անֆուսա:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — (Անֆուսային): Դե, լավ էլ արել ես, որ եկել ես, հարազատս: Մեծերին հարգիր:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես շատ ցավում եմ, Մերոպա Դավիդովնա, որ առիթ տվեցի ձեզ դժգոհելու:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ով հինը հիշի աչքերը կուրանան:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Եվլամպիա Նիկոլաևնա, եւ ձեր հանձնարարությունը կատարեցի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Շնորհակալ եմ ձեզինց:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մերոպա Դավիդովնան և նրա եղբորորդին իրենց լրիվ բավարարված են զգում և այլևս ոչ մի պահանջ չունեն ձեզինց: Այդպես չէ՞, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Նա ճիշտ է ասում, ճիշտ: Թե որ այդպիսի փաստաբաններ ուղարկես, ջրից միշտ շոր դուրս կգաս:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ուրեմն ամեն ինչում էս ձեզ եմ պարտակա՞ն: Իսկ որքա՞ն պիտի ձեզ վճարե՞մ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Հաշիվներս հետո կմաքրենք, Եվլամպիա Նիկոլաևնա:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — (Բերկուտովին): Գնալի՛ր բերանդ մի բան դնեիր: Ժամանակ շատ կա, երևի առավոտվանից ես կավճածքից գուրս եկել: Սիրելի Անֆուսա, զնա իմ փոխարեն տիրություն արա: Մենք հիմա կգանք:

ԱՆՖՈՒՍԱ — Ախր ես... հենց ճանապարհից... էս էլ...

Բերկուտովը և Անֆուսան գնում են:

Տ Ե ա ր ա ն ու թ եր ո ղ

Մուրզավեցկայա, Կուպվինա:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Ների՛ր ինձ, բարեկամս, որ այդպես խիստ վարվեցի հետդ: Ախր ես սիրելով...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես չեմ հասկանում, թե մեղքս ո՞րն է: Դուք այնպիսի սպառնալիքներ եք տալիս...

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Եվ միշտ էլ տալու եմ, մի՛շտ... Չէ՛, դու մեղավոր ես, մեղավոր: Երբ քեզ տեսնում եմ, սիրտս ցավում է: Դեռ ուրիշ տեսակ է պետք քեզ վախեցնել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախր մեղքս ո՞րն է:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Ինչո՞ւ ես մենակ ապրում: Ինչո՞ւ չես ամուսնանում: Դրա լավը ո՞րն է: Միայն գործերդ ես խառնում, մեկ էլ կավճածքդ քայքայում: Իզուր ես հույսդ դրել Չուգունովի վրա:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բայց, ախր, դուք ինքնիրդ նրան երաշխավորեցիք:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Նրանից մարդ բա՞ն կհասկանա: Ահա պարզվեց խաբեբայի մեկն է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — (Մտածելով): Ո՛չ, ի՛նչ ուզում եք ասեք, ես նրա հետ չեմ ամուսնանա, ես նրա նկատմամբ ոչ մի զգացմանք չունեմ:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Ո՞ւմ:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ապուլլոն վիկտորովիչի:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Բայց ո՞վ է քեզ ստիպում: Ես կարծում էի, թե դու նրան սիրում ես, իսկ եթե ոչ, ուրեմն պետք էլ չէ: Քո կամքն է, ընտրիր ում ուզում ես:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Որոնցի՞ց ընտրեմ:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Մտածի՛ր: Դու հո դեմ չե՞ս լինի, եթե լավ մարդ գտնվի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչո՞ւ պիտի դեմ լինեմ: Ինքս էլ տեսնում եմ, որ տնտեսությունը ձեռքից գնում է:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — (Չայնք ցածուցնելով): Բերկուտովն այստեղ երկա՞ր է մնալու:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, մի քանի օրով է եկել: Համ էլ նրա մեջ ոչ մի վերաբերմունք չեմ տեսնում իմ նկատմամբ:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Ափսո՞ս: Իսկ ես մտածում էի արդեն...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, ինչպե՞ս կարելի է վզից կախվել:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Դե, իսկ եթե ինքը...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ո՛չ, նրան ավելի հարուստ հարսնացու է պետք:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Չէ՛ մի, ա՛խ, աստված իմ: Ո՞վ գիտի: Մեկ էլ տեսար խելքին փչեց:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Չգիտեմ:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Հասկանալի է, եթե մի քանի օրով է եկել և չի էլ սիրահետում...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Բուրրովի՛ն: Մտքո՞վն էլ չի անցկացնում սիրահետել:

ՄՈՒՐՁԱՎԵՅԿԱՅԱ — Ուրեմն անելու բան չկա: Գիտե՞ս ինչ: Հո Պիտերում որևէ մեկը չունի՞:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Թերևս ունի:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Երկի գերմանուհիներէց է: Դե, հենց էն-
պես խոսում ենք... Իսկ էթե նա...

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Իսկապես, չգիտեմ, թե ինչ ասեմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ամաշելու ի՞նչ կա: Ինձ որ՝ կարո՞ղ ես
ասել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ախր ինչնեքի՞դ է պետք:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դու ինձ չգիտե՞ս: Խելքս գնում է աշ-
խարհում ամեն ինչ իմանալու և ուրիշների գործերին
խառնվելու համար:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ինչո՞ւ չէ: Ես ուրախութեամբ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե, ուրեմն լավ է: (Քարձօ): Վասիլի
Իվանիչ, մի այստեղ արի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ա՛խ, թո՛ւյլ տվեք: Ի՞նչ եք անում:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այլևս չխոսեք: Ինձ միայն քո ցանկու-
թյունն էր պետք իմանալ, դու ինձ համար թանկ մարդ ես,
իսկ նրանք ինձ ինչ: Ես նրանց հետ խոսելու ձևը գիտեմ,
ա՛յ տես: Ռուսական ասացվածքն հիշիր. խոստում ես
տվել՝ կատարիր, շես տվել՝ դիմացիր: Վասիլի՛ Իվա-
նիչ:

Մտնում է Քերկուտովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցկայա, Կուպվինա, Քերկուտով:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Վասիլի Իվանիչ, համբուրիր Եվլամպիա
Նիկոլանայի ձեռքը:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Մի՛շտ պատրաստ եմ, մեծագո՞ւյն հաճույ-
քով:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Աստված ձեզ օրհնի:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Ի՞նչ են նշանակում ձեր այդ խոսքերը, Մե-
րոպա Դավիդովնա:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Այն, որ քեզ պսակել եմ ուզում: Ի՞նչ
ես ծուխ փստացնելով ապրում:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Չափից ավելի մեծ իշխանութուն եք բանեց-
նում վրաս, Մերոպա Դավիդովնա:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Նեքի՛ր, աղավնյա՛կու Քո որբութունը
ես տեսնում եմ, հարազատներ շունես, պետք է որ մեկին
էլ քեզնով զբաղվի:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Լավ է, Մերոպա Դավիդովնա, ես սիրում եմ
Եվլամպիա Նիկոլանային, և սիրում եմ վաղուցվանից
Իսկ եթե այդպես չլիներ, դուք մեզ դժվարին կացութեան
մեջ կդնեիք:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դժվարի՞ն: Սխալվո՞ւմ ես: (Քիկացնում
է ձեռնափայտը): Սխալվո՞ւմ ես, ասում եմ: Ես ձեզնից
լավ գիտեմ, թե ձեզ ինչ է պետք. քե՛զ ինչ է պետք, նրան՝
ի՞նչ: Ես նրա հոգին ճանաչում եմ. ոնց որ հայելու մեջ՝
տեսնում եմ: Ահա ես հիմա տեսնում եմ, որ նա քեզ
սիրում է: Եվ ժամանակն է, որ լրջանաս: Մեծ փողե՞ր
ես փնտրում, ի՞նչ է: Ամո՞թ քեզ: Դու հոգի փնտրիր:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Լսո՞ւմ եմ, Մերոպա Դավիդովնա, լսո՞ւմ եմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դուք, պիտեքցիներդ, կարծում եք, թե
երկնքում եք, թե այստեղ ձեզ վայել զույգ չկա: Իսկ ահա՞
կա՛:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — (Գլուխը խոնարհելով): Եվլամպիա՛ Նիկոլա-
նա...

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ի՞նչ ես լռում: Դե, ուրեմն, ես քո փո-
խարեն կասեմ: Նա շատ, շատ ուրախ է:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Ես պարզ կին եմ, ես խորամանկել չգիտեմ.
Ես չկարողացա թաքցնել իմ զգացմունքները Մերոպա
Դավիդովնայի առջև, շեմ թաքցնի նաև ձեր առջև:

ՔԵՐԿՈՒՏՈՎ — Շնորհակալություն, այն երջանկութեան հա-
մար, որ դուք ինձ պարզեցում եք: (Համբուրում է Կուպա-
վինայի ձեռքը): Խնդրում եմ ինձ ձեր կառավարիչը նշա-
նակեք. այդ գործը հետաձգել չի սիրում:

ՔՈՒՊԱՎԻՆԱ — Շնորհ արեք:

Մտնում է Չուգունովը:

Տ Ե Մ Ա Յ Բ Ա Ն տ ա ս և ն Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցկայա, Կուպավիճա, Բերկուտով, Զուգուճով, հետո Պավիճ:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — (Կուպավիճայի): Ահա ձեր պարտատերը, դուք նրան պարտք եք մուրհակով:

ԿՈՒՊԱՎԻՅԱ — Ես Վուկոլ Նաումիչին ոչինչ պարտք չեմ:

ԶՈՒԳՈՒՏՈՎ — (Համբուրելով Կուպավիճայի ձեռքը): Իմ ծանալության, ջանասիրության համար մուրհակ տվեցիք:

ԿՈՒՊԱՎԻՅԱ — Ես միշտ ձեզ առձեռն եմ վճարել:

ԶՈՒԳՈՒՏՈՎ — Մոռացել էք, տիրուհի՛, մոռացել էք:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկապես, եվլամպիա Նիկոլաննա, մոռանալի ի՛նչ մի դժվար բան է որ: Վուկոլ Նաումիչն, իրոք, արժանի է պարզելի. նա ջանասեր մարդ է: Վաղը եկեք, ինչ որ հասնում է կստանաք: Շնորհակալություն հայտնեք եվլամպիա Նիկոլաննային:

ԶՈՒԳՈՒՏՈՎ — Վաղը բոլոր երեխաներիս կառնեմ կգամ, կստիպեմ ձեր ոտքերն ընկնեն:

Մտնում է Պավիճը:

ՊԱՎԻՅԱ — Միխայլո Բորիսիչն ու Գլաֆիրա Ալեքսեևնան:

Մտնում են Կեյսևն ու Գլաֆիրան:

Տ Ե Մ Ա Ր Ա Ն տ ա ս ն մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ

Մուրզավեցկայա, Կուպավիճա, Բերկուտով, Զուգուճով, Գլաֆիրա, Կեյսևն, հետո Անֆոսա, Պավիճ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ահա՛ թե ինչ: Արդեն միասին են:

ԳԼԱՖԻՐԱ — Ձեռականություններ ինչո՞ւ անեմ, Մերոպա Դավիդովնա: Միշտ շատ թանկ է ինձ համար, ես նրանից չեմ ուզում բաժանվել և ոչ մի բոլոր:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Դե, ապագա մաղամ կինյաևա, խնդրում եմ շնորհ արեք: Նստեցեք:

ԻՆՅԱԵՎ — Մերոպա Դավիդովնա, ինձ ներքե, որ շտապեցի խնդրել Գլաֆիրա Ալեքսեևնայի ձեռքը, առանց ձեր թույլտրվությունը խնդրելու:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Ես մեղավոր չեմ, սիրելիս, ոչ մի բանում մեղավոր չեմ:

ԻՆՅԱԵՎ — Ես ձեզ չեմ մեղադրում, ես խնդրում եմ ինձ ներքե:

ԳԼԱՖԻՐԱ — Նա ուզում է շնորհակալություն հայտնել ձեզ (կինյաևին): Ի՛նչ ես լուռ, Միշե՛լ:

ԻՆՅԱԵՎ — (Հոգոց հանելով): Այո, շնորհակալություն հայտնել...

ԳԼԱՖԻՐԱ — Նրան առանձնապես իմ հեղուկությունն է դուր եկել: (Շալը նետելով կինյաևին): Ա՛ռ, Միշե՛լ, բռնի՛ր շալը: (Մուրզավեցկայային): Իմ խոնարհությունը: (Կինյաևին): Կարգի՛ն բռնիր, մի՛ ճարթիր: (Մուրզավեցկայային): Իմ համեստությունը: Իսկ այդ բոլորի համար ես ձեզ եմ պարտական: (Կինյաևին): Դու շարունակում ես լռել, Միշե՛լ, ե՛ս եմ քո փոխարեն խոսում:

ԻՆՅԱԵՎ — Շնորհակա՛լ եմ, Մերոպա Դավիդովնա, շա՛տ շնորհակալ եմ:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Մի բան եմ միայն, սիրելիս, քեզանից խնդրում. ինձ չմեղադրես, քո՛ կամքն է եղել: Ա՛յ, այս զույգին հաստատ ես եմ պսակել, նրանց համար աստժու առաջ պատասխանատու եմ, իսկ դուք՝ ինչպես գիտեք:

ԻՆՅԱԵՎ — (Թերկուտովին): Դո՞ւ էլ ես ամուսնանում: Այդպես շտապ... Շնորհավորում եմ քեզ:

ԳԼԱՖԻՐԱ — (Կուպավիճային): Վերջապես որոշեցիր: Դե՛, շնորհավորում եմ:

ԿՈՒՊԱՎԻՅԱ — Այո՛, ես շարունակ ազատության մասին էի մտածում... Ես հետո համոզվեցի, որ մեր կանացի երջանկությունն անբաժան է գերությունից:

ՄՈՒՐԶԱՎԵՅԿԱՅԱ — Կանանց մի՛ զրպարտիր, սիրելի՛ս: Ամեն տեսակի էլ լինում են. այնպիսիները կան, որ ոչ միայն իրենց անտեսությունը, այլ թեկուզ նահանգ կղեկավարեն, թեկուզ հիվա կոիվ ուղարկիր: Տղամարդիկ էլ են տարբեր տեսակի լինում. այսպիսի քաշեր էլ կան (ցույց է ապիս Բերկուտովին), բայց այնպիսիներին էլ ենք տե-

սել, որոնք իրենց կնատիրությամբ ծառա են դառնում:
ԼԻՆՅԱԵՎ — Այո՛, աշխարհում գայլեր են ու ոչխարներ, գայլ-
լեր ու ոչխարներ:

Պալլիեր սուր է բերում:

ԳԼԱՏԻՐԱ — (Վերցնելով գավաթը): Միշե՛լ, բարի եղիր հո-
վանոցս բռնիր: Ա՛խ, ձեռքիցդ ամեն ինչ ընկնում է:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Բերկուտովին): Ձմեռն այստե՞ղ եք
ապրելու:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Կարծում եմ, որ եվլամպիա Նիկոլանային
ավելի հաճելի կլինի այս ձմեռը Պետերբուրգում անց-
կացնել:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Այո՛, իհարկե՛:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — (Լինյանին): Իսկ դո՞ւք:

ԳԼԱՏԻՐԱ — Մենք այս ձմեռ Փարիզում կապրենք:

ԼԻՆՅԱԵՎ — Մենք՝ Փարիզում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Իսկ ամառը՝ ձեզ մոտ, ձեր թևի տակ:

ԼԻՆՅԱԵՎ — Ես նույնպես:

ԳԼԱՏԻՐԱ — Ա՛խ, ո՛չ, Միշե՛լ, ախր, մենք դեռ չենք որոշել
ես մտածում եմ ամառը Շվեյցարիայում անցկացնել:

ԼԻՆՅԱԵՎ — Այո՛, մենք դեռ չենք որոշել:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Մերոպա Դավիդովնա, շնորհակալություն ձեզ
սիրալիր ընդունելության համար և այն աջակցության հա-
մար, որ դուք ինձ ցույց տվիք: (Մի տուփ է տալիս Մու-
զավեցկայային): Սա ծովակնե համրիչ է: Պարոնայք, ես
կարճ ժամանակով եկա այստեղ, բայց արդեն հնարավո-
րություն ունեցա լիովին գնահատելու բոլոր կողմերով
հազվագյուտ այս կնոջը: Ցանկալի է, որ մեր առաջավոր
մարդիկ միշտ խոր հարգանքով վերաբերվեն Մերոպա
Դավիդովնային: Մենք պետք է ուրիշներին ցույց տանք,
թե ինչպես են հարգում այսպիսի պատվավոր ծերու-
թյունը:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Սրբելով արցունքները): Բոլորը ճի՛շտ է,
ճի՛շտ է:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Շնորհակալ եմ, վասիլի Իվանիչ, շնոր-
հակալ եմ: (Համբուրում է Բերկուտովի գլուխը): Է՛, սի՛-

րելի՛ս, կյանքումս շատ մարդ եմ տեսել, բայց ըն նման-
ներին բախտ չի վիճակվել: (Ցածր): Դե, ես ըն գործն
արեցի, իսկ դո՞ւ իմն ինչ ես անում:

ԲԵՐԿՈՒՏՈՎ — Լա՛վ կլինի: Չուզունովը ձեզ կասի:

ԿՈՒՊԱՎԻՆԱ — Գնա՛նք, պարոնա՛ք: Ցտեսություն, Մերոպա
Դավիդովնա: Մենք դեռ Գլաֆիրա Ալեքսեևնային հետ
բոլոր խանութները պիտի պատենք: Թույլ տվեք ինձ նրան
մեր տուն տանել:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛խ, սիրելի՛ս, երկու ձեռքով եմ տալիս:
ԳԼԱՏԻՐԱ — Միշե՛լ, մեզ հետ կգա՞ս:

ԼԻՆՅԱԵՎ — Եվլամպիա Նիկոլանայի կառքն, ախր, երկտե-
ղանի է:

ԳԼԱՏԻՐԱ — Հետո ի՞նչ: Դու, Միշե՛լ, կառապանի հետ նստիր:
Քո կառքը տուր Անֆուսա Տիխոնովնային: Անֆուսա՛ Տի-
խոնովնա...

Անֆուսան գալիս է:

Միշելի կառքով գնացեք:

ԱՆՏՈՒՍԱ — Դե լավ... հաջողություն ձեզ:

ԼԻՆՅԱԵՎ — Ախր ես ինչպե՞ս կարող եմ իմ այս մարմնով կա-
ռապանի կողքին տեղավորվել: Եվ դեռ տասներկու վերստ
լիսկոկալ մինչև կալվածք:

ԳԼԱՏԻՐԱ — Լսի՛ր ինձ, Միշե՛լ: Դա քեզ շատ օգտակար է,
այնպես ես հաստանում, որ բոլորովին բանի նման չէ:
Մենք Փարիզ ենք գնալու, ախր, ինքդ ես ամաչելու այդ-
պես արջի նման ներկայանալ:

Գնում են Բերկուտովը, Կապովիեան, Լինյանը, Գլաֆիրան
և Անֆուսան:

Տ Ե Ս Բ Ե Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ղ

Մարգարեցկայա, Չուգունով, հեռա Մուզավեցկի:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — (Լուսամուտի մոտ): Փարի՛զ, Պետերբուրգ:
Ի՛նչ փողեր են տանելու գավառից:

ՄՈՒՐՁԱՎԵՑԿԱՅԱ — Հը, գործը լա՛վ սարքեցի: Շնորհակալ՛

եմ. քիչ էր մնում խայտառակերը ազնիվ, հարգելի կնոջը:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ուզում եք ինձ կախեք, բայց էլ խելքահան չեք անի:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Քե՛զ, առնետի՛դ, Բերկուտովն ի՞նչ էր ասում:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ամեն ինչ փակվեց-գնաց. Կլաշկային էլ, որ պեսի դուրս շտա այստեղ, Վոլոգդա է ուղարկել Վասիլի Իվանիչը:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Ա՛յ ոսկի մարդ: Երբեք չեմ մոռանա: Գո՛ւ էլ մի մոռացիր:

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Ոսկին ոսկի է, ճի՛շտ է: Բայց ահա թե ձեզ ինչ կասեմ. Լինյանն ինչո՞ւ մեզ գալը անվանեց: Ախր մենք ձեզ հետ ի՞նչ գալիք ենք: Մենք հա՛վ ենք, աղավ-նի՛... հատիկ-հատիկ ենք կտցում ու երբեք կուշտ չենք լինում: Գալլերն, ա՛յ, նրանք են: Դրանք միանգամից ահագին բան են կուլ տալիս:

Բեմի ճետեից նշոց է լսվում՝ «Քամերլա՛ն, Քամերլա՛ն»: Վազելով ճեռ է քնկնում հուսահատ Մաթավեցիին:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԻ — Ո՛չ, մա տա՛նտ, ո՛չ է՛լ ապրել չեմ կարող:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Հանգստացի՛ր, Ապոլլոշա, հանգստացի՛ր:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԻ — (Փլվելով արողին): Ո՛չ, մա տա՛նտ, իմ լավագույն ընկերոջը.

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Դե՛, ի՞նչ արած:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԻ — Լավագույն ընկերոջս, մա տանտ... Ո՛ր են ատրճանակները:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Ի՞նչ ես խոսում... մեղա՛ աստված:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԻ — Ո՛չ, ինքնասպա՛ն եմ լինելու, ինքնասպա՛ն: Արդեն լցված է ատրճանակը, մա տանտ, լցվա՛ծ է:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Խե՛ղճ տղա: Ինչպե՛ս ես...

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԻ — Այո՛, մա տանտ, լավագույն ընկերոջս...

Քաղաքի մոտ, օրը ցերեկով, լավագույն բարեկամիս... Քամերլանին... գալլերը կերան:

ՄՈՒԲԶԱՎԵՑԿԱՅԱ — Քո՛ւհ: Ես էլ կարծում էի...

ՉՈՒԳՈՒՆՈՎ — Քաղաքին մոտ, օրը ցերեկով: Զարմանալի բան է... Ո՛չ... Այստեղ ոչ թե Քամերլանին, այլ հենց հիմա, մեր աչքի առաջ, և՛ ձեր հարսնացուին, օժիտն էլ — հետը, և Միխայիլ Բորիսիլչին իր կալվածքով գալլերը կերան: Մենք էլ ձեր հորաբորջ հետ հազիվ փրկվեցինք: Ա՛յ թե որն է զարմանալին:

Կատակերգութիւն 5 գործողութիւն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՁԻՆՔ

ԱՐԻՍՏԱՐԻՆ ՎԱԿԻՄԻՐԻՉ ՎԻՇՆԵՎՍԿԻ, զառամյալ ծեռունի, հողատապի նշաններով:

ԱՆՆԱ ՊԱՎՈՎՆԱ — նրա երիտասարդ կինը:

ՎԱՍԻԼԻ ՆԻԿՈԼԱՅԻՉ ԺԱԳՈՎ — երիտասարդ, նրա ազգականը:

ԱԿԻՄ ԱԿԻՄԻՉ ՅՈՒՍՈՎ — ծեր աստիճանավոր, ծառայում է Վիշնևսկու ղեկավարության ներքո:

ՕՆԻՍԻՄ ՊԱՆՅԻԼԻՉ ԲՆԼՈԳՈՒԲՈՎ — երիտասարդ աստիճանավոր, Յուսովի ենթական:

ԱՆՏՈՆ — Վիշնևսկու տան սպասավորը:

ՏՂԱ:

Վիշնևսկու տան ճարտար կառավարված մեծ դահլիճը. ձախ կողմում՝ դուռ, որ տանում է զեպի Վիշնևսկու առանձնասենյակը. աջ կողմում՝ դուռ, որ տանում է զեպի Աննա Պավլովնայի սենյակները. երկու կողմերում՝ հայրիկներ պատերի վրա, դրանց առջև՝ սեղանիկներ: Դիմացը մուտքի դուռն է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Վիշնևսկին բայկայն սերբուկով, առանց կեղծամի, Վիշնևսկյան առավայրյան զգեստով:

Գալիս են Վիշնևսկայայի սենյակից:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ի՞նչ ապերախտութիւն: Ինչպիսի՞ շարութիւն (Նստում է): Հինգ տարի է, որ դուք իմ կիներն եք, և հինգ տարի է, որ ես ոչնչով չեմ կարողանում շահել ձեր հա-

մակրանքը: Տարօրինակ է: Դուք դուք որևէ բանից դժգոհ եք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ամենևին:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Իհարկե, Մի՞թե ձեզ համար չէր, որ անցյալ տարի գնեցի և հոյակապ զարդարեցի այս տունը: Մի՞թե ձեզ համար չէր, որ անցյալ տարի կառուցեցի ամառանոցը: Ի՞նչ է պակասում ձեզ: Կարծեմ ոչ մի վաճառականի կին այնքան աղամանդ չունի, որքան դուք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Շնորհակալ եմ: Բայց ես ձեզանից ոչինչ չեմ պահանջել:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դուք չեք պահանջել: Բայց ես պարտավոր էի մի որևէ բանով վարձահատույց լինել մեր տարիքների տարբերութիւն համար: Ես կարծում էի, որ ձեր մեջ կգտնեմ մի կնոջ, որն ընդունակ կլիներ գնահատել այն զոհաբերութիւնները, որ ես արել եմ ձեզ համար: Ես հո կախարդ չեմ, ես չեմ կարող ձեռքիս մի շարժումով մարմարյա պալատներ կառուցել: Մետաքսի, սամույրի, թավիշի և ոսկու համար, որոնց մեջ դուք ոտքից զլուխ թաղված եք, փող է պետք. այն հարկավոր է ձեռք բերել: Իսկ դա միշտ չէ, որ հեշտութիւն է ձեռք բերվում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ինձ ոչինչ պետք չէ: Ես այդ մասին քանի անգամ եմ ասել ձեզ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Բայց չէ՞ որ ես վերջապես պիտի նվաճեմ ձեր սիրտը: Ձեր սառնութիւնն ինձ խելագարեցնում է: Ես կրթոտ մարդ եմ. կնոջ սիրո համար ես ամեն բանի ընդունակ եմ: Այս տարի ձեզ համար մերձսկոյվյան ամառանոց եմ գնել: Գիտե՞ք, արդյոք, որ այն գումարը, որով գնել եմ... ինչպե՞ս ասեմ ձեզ... դե, մի խոսքով, ես ռիսկ եմ արել ավելի, քան թույլ կտար ինձ խոհեմութիւնը: Ես կարող եմ պատասխանատվութիւն ենթարկվել:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ի սեր աստժո, ինձ մասնակից մի դարձրեք ձեր արարքներին, եթե դրանք անազնիվ են: Մի արդարացրեք դրանք ձեր սիրով: Դա անտանելի է ինձ համար: Ասե՛ք, ես ձեզ չեմ հավատում: Դուք ինձ ճանաչելուց առաջ էլ ճիշտ այդպես էիք վարվում: Անգամ իմ խղճի առաջ ես չեմ ուզում պատասխանատու լինել ձեր վարքի համար:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Վարբի՛: Վարբի՛: Հանուն ձեր սիրո ես պատ-
րաստ եմ նույնիսկ ոճրագործութիւն: Որպեսզի միայն
ձեր սերը դնեմ, ես պատրաստ եմ իմ անպատուութիւնք
փոխհատուցել: (Ելնում է տեղից և մտանում Վիշնևսկա-
յային):

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Արիստարխ Վլադիմիրիչ, ես կեղծել չեմ
կարող:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Բռնում է նրա ձեռքը): Կեղծեցե՛ք, կեղծեցե՛ք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Երեսը դարձնելով): Երբե՛ք:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Բայց ես սիրո՞ւմ եմ ձեզ: (Դողալով, ծանկի
է գալիս): Սիրո՞ւմ եմ ձեզ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Արիստարխ Վլադիմիրիչ, մի նվաստացե՛ք:
Ձեր հագնվելու ժամանակն է: (Ձանգարահում է):

Վիշնևսկին ոտքի է կանգնում: Առանձնասենյակից գալի
է Անտոն:

Արիստարխ Վլադիմիրիչը պիտի հագնվի:

ԱՆՏՈՆ — Համեցե՛ք, պատրաստ է: (Գնում է առանձնասեն-
յակ):

Վիշնևսկին զնում է նրա ետևից:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Ինների մեջ): Օ՛ձ, օ՛ձ... (Գնում է):

Տ Ե Ա Վ Ա Ն Ե Բ Ի Կ Ե Ր Ո Ղ

Վիշնևսկայան մեռակ է, որոշ ժամանակ մտախոհ եր-
տած է: Քիչ անց գալիս է տղան, նամակ է տալիս ու
զնում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ումնի՞ց է սա: (Բացում է ծրարն ու կար-
դում): Ա՛յս էր պակաս: Սիրային նամակ: Այն էլ
ուժից: Հասակն առած մարդ է, կինը՝ գեղեցկուհի: Զգվե-
լի՛ է: Վիրավորական: Նման դեպքում կինը ի՞նչ պիտի
անի: Ի՞նչ գոհակութիւններ է գրված: Ի՞նչ հիմար քրեք-
շութիւններ: Ե՛տ ուղարկեմ: Ոչ, ավելի լավ է ցույց տա՞մ

ժանոթներիցս մի քանիսին, և միասին ծիծաղենք. այնու-
ամենայնիվ, զվարճալիք է... Բո՛ւ՛հ, ինչ զգվելի է:
(Գնում է):

Անտոնը դուրս է գալիս առանձնասենյակից և կանգնում
դռան մոտ: Մտնում է Յուսովը, ապա Բելոգուբովը:

Տ Ե Ա Վ Ա Ն Ե Բ Ի Կ Ե Ր Ո Ղ

Անտոն, Յուսով և Բելոգուբով:

ՅՈՒՍՈՎ — (Թղթապանակով): Հապա զեկուցիր, Անտոն:

Անտոնը զնում է: Յուսովը հայելու առջ իրեն կարգի է
բերում:

ԱՆՏՈՆ — (Երևում է դռան շեմում): Համեցե՛ք:

Յուսովը զնում է:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — (Գալիս է, սանրը հանում է գրպանից և սա-
նրվում): Ինչ է, Ակիմ Ակիմիչն այստե՞ղ է:

ԱՆՏՈՆ — Հենց նոր մտավ առանձնասենյակ:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — Իսկ ինքն ինչպե՞ս է այսօր, փրալի՞ր է:

ԱՆՏՈՆ — Չգիտեմ: (Գնում է):

Բելոգուբովը կանգնած է սեղանի մոտ, հայելու առջ:

ՅՈՒՍՈՎ — (Ինչու գալով, նկատելիորեն փվում է): Ա՛, դու
այստե՞ղ ես:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — Այստեղ եմ:

ՅՈՒՍՈՎ — (Թուղթն աչի անցկացնելով): Բելոգուբո՞վ:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — Ի՞նչ կբարեհաճեիր:

ՅՈՒՍՈՎ — Ահա, եղբայրս, տուն տար և մաքուր արտագրիր:
Այսպես հրամայեց:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — Հրամայեց, որ ե՛ս արտագրեմ:

ՅՈՒՍՈՎ — (Նստելով): Այո, դու: Լավ ձեռագիր ունի, ասաց:

ԲԵՆԳՈՒԲՈՎ — Ինձ համար շատ հաճելի է լսել:

ՅՈՒՍՈՎ — Ուրեմն լիիր, եղբայրս, չշտապես: Գլխավորը՝ որ-

պեսզի մաքուր լինի: Տեսնում ես, չէ՞, ուր պիտի ուղարկե-
վի...

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ես հասկանում եմ, Ակիմ Ակիմիչ: Վայելա-
գեղ կգրեմ, ամբողջ գիշեր կաշխատեմ:

ՅՈՒՍՈՎ — (Հառաչում է): Օհ-հո-հո... Օհ-հո-հո...

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Իմ փափազն այն է, Ակիմ Ակիմիչ, որ միայն
ուշադրություն դարձնեն ինձ վրա:

ՅՈՒՍՈՎ — (խառտեմ): Դու կատա՞հ ես անում, ինչ է:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ինչպե՞ս կարելի է...

ՅՈՒՍՈՎ — Ուշադրություն դարձնեն: Ասելը հեշտ է: Էլ ի՞նչ
է հարկավոր աստիճանավորին: Էլ ի՞նչ կարող է նա ցան-
կանալ:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Այո-ս:

ՅՈՒՍՈՎ — Ուշադրություն դարձրի՞նք քեզ վրա՝ ուրեմն դու
արդեն մարդ ես, շնչում ես. իսկ եթե չդարձրին՝ ի՞նչ
ես դու:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Էլ ի՞նչ կարող եմ լինել:

ՅՈՒՍՈՎ — Ճիճո՞ւ:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ես, Ակիմ Ակիմիչ, կարծեմ, ջանում եմ...

ՅՈՒՍՈՎ — Դո՞ւ: (Նայում է նրան): Դու իմ աչքին լավ հա-
մարում ունես:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ես, Ակիմ Ակիմիչ, ուտելուց էլ եմ զրկում
ինձ, որպեսզի մաքուր հագնվեմ: Չէ՞ որ մաքուր հագնված
աստիճանավորը միշտ նկատվում է իր պետի կողմից:
Ահա, բարեհաճեցեք նայել, տեսե՞ք ինչ իրան ունեմ...
(Շուռ է գալիս):

ՅՈՒՍՈՎ — Սպասիր: (Դիտում է նրան և քախտա փառում):
Իրանդ լավն է... Հետո, Բենթուրով, տես որպեսզի ան-
սխալ լինի:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Այ, ուղղագրության կողմից ես, Ակիմ Ակի-
միչ, մի քիչ կաղում եմ... Այնպես որ, կհավատա՞ք, ինձ
համար էլ վիրավորական է:

ՅՈՒՍՈՎ — Ինչ մեծ բան է որ, ուղղագրություն: Ամեն ինչ
միանգամից չի լինում, կսովորես: Նախ՝ սևագրություն
արա, խնդրի ուղղեն, իսկ հետո արդեն հենց դրանից էլ
արտագրիր: Լսո՞ւմ ես ինչ եմ ասում:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Մեկին կխնդրեմ ուղղի, թե չէ Ժադովը միշտ
ծիծաղում է:

ՅՈՒՍՈՎ — Ո՞վ:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ժադովը:

ՅՈՒՍՈՎ — (խառտեմ): Իսկ ի՞նքն ինչ է որ: Վերի արտի ցո-
րե՞նն է: Դեռ ծիծաղում էլ է:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Հապա ինչպե՞ս, ցույց չտա՞, որ գիտուն է:

ՅՈՒՍՈՎ — Թո՛ւհ: Ահա թե ինչ է նա:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ես ոչ մի կերպ չեմ կարողանում որոշել, Ակիմ
Ակիմիչ, թե ինչ մարդ է նա:

ՅՈՒՍՈՎ — Ոչնչություն...

Լուրջում:

Հենց նոր ես այնտեղ էի (առանձնասենյակը ցույց տա-
լով), այսպես էին ասում (ցածրաձայն). Ղգիտեմ, ազգա-
կանիս ի՞նչ անեմ: Սրանից էլ հասկացիր:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Իսկ ինչքա՞ն է երևակայում:

ՅՈՒՍՈՎ — Բարձր է թուշում, իսկ թե որտե՞ղ կթառի: Սրա-
նից ավելի է՛լ ի՞նչ էր ուզում. ապրում էր այստեղ,
ամեն ինչ պատրաստի ունեիր: Իսկ ի՞նչ ես կարծում,
որն է երախտագիտություն զգո՞ւմ էր: Հարգանք տեսե՞լ
է նրանից: Ինչպե՞ս չէ: Կոպտություն, անզսպություն...
Թեև իր ազգականն է, բայց, այնուամենայնիվ, առանձ-
նահատուկ անձնավորություն է: Ո՞վ կհանդուրժի: Եվ
ահա նրան, սիրելի բարեկամին, ասաց. գնա՛ հապա և
ապրիր քո խելթով, ամսական տասը ուրբով՝ դուցև խել-
քի գաս:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ահա թե հիմարությունն ինչ բանի է հասց-
նում, Ակիմ Ակիմիչ: Թվում է, այսինքն... Տե՛ր աստ-
ված... Ի՞նչ բախտավորություն է: Բոպեն մեկ պիտի
փառք տա աստծուն: Ճիշտ չե՞մ ասում, Ակիմ Ակիմիչ,
նա պարտավոր չէ՞ փառք տալ աստծուն:

ՅՈՒՍՈՎ — Հապա ինչպե՞ս:

ԲԵՆԹՈՒՐՆՈՎ — Ինքն է փախչում իր բախտից: Էլ ի՞նչ է
ուզում: Աստիճան ունի՞, այդպիսի ազգական ունի՞,
պատրաստի ապրուստ ունե՞ր. եթե ուզենար՝ մեծ եկա-

մուտով լավ պաշտոն կունենար: Զէ՞ որ Արիստարխ
Վլադիմիրիչը չէր մերժի նրան:

ՅՈՒՍՈՎ — Հապա՞: Իսկ նա՞...

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Իմ կարծիքն, Ակիմ Ակիմիչ, այս է. մեկ
ուրիշը՝ զգացմունքով մարդը, եթե նրա տեղը լինե՞ր՝
Արիստարխ Վլադիմիրիչի կոշիկները կսրբեր, իսկ նա
աչդպիսի մարդուն վշտացնում է:

ՅՈՒՍՈՎ — Շարունակ գոռոզությունն և դատողություններ է
անում:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Բայց ինչի՞ն է պետք դատողությունը: Եվ
ինչի՞ մասին մենք կարող ենք դատել: Ես, Ակիմ Ակի-
միչ, երբե՞ք...

ՅՈՒՍՈՎ — Դո՞ւ էիր պակաս:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ես երբե՞ք... որովհետև դա անախորժու-
թյունից բացի ոչ մի լավ բանի չի հասցնի:

ՅՈՒՍՈՎ — Ինչպե՞ս շխտի: Հապա ցույց շտա՞, որ համալ-
սարանում է եղել:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ախր սովորելուց ի՞նչ օգուտ, երբ մարդն
իր պետից ահուզող շունի:

ՅՈՒՍՈՎ — Ինչ շունի՞:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ահուզող:

ՅՈՒՍՈՎ — Դե, իհարկե:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Այ, էթե ինձ, Ակիմ Ակիմիչ, սեղանավարիչ
նշանակե՞րք...

ՅՈՒՍՈՎ — Դու բերանիդ համը գիտես, հա՞:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ես ավելի շատ նրա համար եմ ասում, որ
հիմա հարսնացու ունեմ: Շատ կրթված օրիորդ է: Բայց
մինչև պաշտոն չունենամ, չի լինի: Ո՞վ աղջիկ կտա ինձ:

ՅՈՒՍՈՎ — Իսկ ինչո՞ւ հարսնացուիդ ցույց չես տալիս ինձ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Հենց թուազին հերթին... Թեկուզ հենց այս-
օր... Կգաք ռնց որ հարազատիս փոխարեն:

ՅՈՒՍՈՎ — Իսկ պաշտոնի համար կզեկուցեմ: Կմտածենք:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Այդ պաշտոնն ինձ կբավականացնի ամ-
բողջ կյանքում: Կարող եմ ստորագրություն տալ, որով-
հետև ավելի բարձր պաշտոնում ես չեմ կարողանա...
Ընդունակությունս չի բավականացնի:

Մտնում է Փաղովը:

Նրան և Փաղով:

ՓԱԴՈՎ — Ինչ է, հորեղբայրս գբազվա՞ծ է:

ՅՈՒՍՈՎ — Զբաղված է:

ՓԱԴՈՎ — Ախ, ափոսս: Ես պիտի տեսնեմ նրան, նա ինձ
շատ է հարկավոր:

ՅՈՒՍՈՎ — Կարելի է և սպասել: Նրա գործերը ձեր գործերից
ավելի կարևոր են:

ՓԱԴՈՎ — Դուք ի՞նչ գիտեք, իմ գործերն ի՞նչ են:

ՅՈՒՍՈՎ — (Նայում է նրան և ծիծաղում): Դուք ի՞նչ գոր-
ծեր ունեք որ... Հենց այնպես, որևէ դատարկ բան:

ՓԱԴՈՎ — Չեզ հետ, Ակիմ Ակիմիչ, ավելի լավ է շխտեմ.
դուք միշտ ձեր դիմացինին ստիպում եք, որ ձեզ կուպ-
տի: (Հեռանում և նստում է նախաբեմում):

ՅՈՒՍՈՎ — (Բելոզուրովին): Ինչպիսին է, հը՞:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Բարձրաձայն): Զարժե հետը խոսել: Օր
ծերության միայն կանհանգստացնեք ձեզ: Մնացեք բա-
րով: (Գնում է):

Տեսարան հինգերորդ

Փաղով և Յուսով:

ՅՈՒՍՈՎ — (Իրեն-իրեն). Հա՛-հա՛-հա՛... Ապրեցինք, ապ-
րեցինք և, փառք աստծո, ուր հասանք: Երեխաներն
սկսեցին քթները վեր ցցել:

ՓԱԴՈՎ — (Ես է նայում): Ի՞նչ եք փնթփնթում այդտեղ:

ՅՈՒՍՈՎ — (Շարունակում է): Կատարել այն, ինչ հրամայ-
ված է, մենք չենք սիրում, իսկ դատողություններ անել՝
ա՛յ, դա մեր գործն է: Ինչպե՞ս կարելի է, որ մենք նըս-
տենք գրասենյակում: Մեզ բոլորիս, հարկավոր է մի-

նիստը դարձնել: Դե, ի՞նչ արած, սխալվե՞լ ենք, ներեցե՞ք, խնդրո՞ւմ ենք. ձեր տաղանդին ծանոթ չէինք: Կդարձնե՞նք մինիստր, անպայման կդարձնենք... մի քիչ սպասեցեք... հենց վաղը...

ՓԱԴՈՎ — (Ինքն իրեն): Չանձրացրեց:

ՅՈՒՍՈՎ — Աստված իմ, աստված: Ո՛չ ամոթ ունեն, ո՛չ խիղճ. Այնպիսիներն էլ կան, որ շրթունքների վրա կաթը դեռ չի շորացել, բայց արդեն ամբարտավանությունն են ցուցաբերում: Տեսեք, թե ով եմ ես: Ինձ շղիպչեք:

Մտնում է Անտոն:

ԱնՏՈՆ — (Յուսովի): Համեցեք պարոնի մոտ:

Յուսովը գնում է առանձնասենյակ:

ՓԱԴՈՎ — Աննա Պավլովնային ասա, որ ես ուզում եմ նրան տեսնել:

ԱնՏՈՆ — Կսում եմ: (Գնում է):

Տեսարան վեցերորդ

ՓԱԴՈՎ — (Մեենակ): Ի՞նչ է այս ծեր քավթառը շարունակ փնթփնթում: Ես ի՞նչ եմ արել նրան: Համալսարանականներին չեմ սիրում, ասում է: Մի՞թե մեղավոր եմ ես: Դե, արի և ծառայիր այսպիսի պետի ձեռքի տակ: Ասենք. նա ինձ ոչինչ չի կարող անել, եթե ես ինձ լավ պահեմ: Բայց երբ ազատ տեղ բացվի, ապա, թերևս, կարող եմ ինձ շրջանցել: Նրանցից այդ կարելի է սպասել:

Գալիս է Վիշենկայան:

Տեսարան յոթերորդ

Ժողով և Վիշենկայա:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Բարև ձեզ, Վասիլի Նիկոլայիչ:

ՓԱԴՈՎ — Ահ, բարև ձեզ, քեռակին: (Համբուրում է նրա ձեռքը): Ես ձեզ մի նորություն կասեմ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Նստեցեք:

Նստում են:

Ի՞նչ նորություն է:

ՓԱԴՈՎ — Ես ուզում եմ ամուսնանալ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Շուտ չէ՞, արդյոք:

ՓԱԴՈՎ — Սիրահարված եմ, քեռակին, սիրահարված: Եվ ի՞նչ աղջիկ է: Կատարելություն:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Հարո՞ւստ է:

ՓԱԴՈՎ — Ոչ, քեռակին: Ոչինչ չունի:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Հապա ինչո՞վ պիտի ապրեք:

ՓԱԴՈՎ — Իսկ գլուխս, ձեռքերս ինչի՞ համար են: Մի՞թե միշտ ուրիշի հաշվին պիտի ապրեմ: Մեկ ուրիշն, իհարկե, ուրախ էլ կլինեք, քանի որ այդ հնարավորությունը կա, իսկ ես չեմ կարող: էլ չխոսենք այն մասին, որ, մորեղբորս սիրաշահելու համար, ես պարտավոր կլինեմ ընդդիմանալ իմ սեփական համոզմունքներին: Իսկ ո՞վ պիտի աշխատի: Հապա ինչո՞ւ են մեզ ուսում տվել: Մորեղբայրս խորհուրդ է տալիս նախ դրամ կուտակել, ինչ գնով ուզում է լինի, տուն գնել, ձիեր ունենալ, և հետո միայն կին առնել: Կարո՞ղ եմ արդյոք ընդունել այդ խորհուրդը: Ես աղջկան սիրել եմ այնպես, ինչպես սիրում եմ իմ տարիքում միայն: Մի՞թե ես իմ երջանկությունից պիտի հրաժարվեմ միայն այն պատճառով, որ ես հարստություն չունի:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Տառապում են ոչ միայն աղքատությունից, տառապում են նաև հարստությունից:

ՓԱԴՈՎ — Դուք իմ և մորեղբորս խոսակցությունները հիշո՞ւմ եք: Կաշառքների կամ ընդհանրապես ամեն մի անարդարության դեմ ինչ էլ որ ասում էի՝ նա մի պա-

տասխան ունեք. հապա գնա, ասում էր, կյանք մտիր՝
այդպես չես խոսի: Դե, ես էլ ուզում եմ կյանք մտնել:
այն էլ ոչ թե մենակ, այլ ջահել կնոջս հետ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Հառաչելով): Այո, կարելի է նախանձել
այն կանանց, որոնց ձեզ նման մարդիկ են սիրում:

ԺԱԴՈՎ — (Համբուրում է նրա ձեռքը): Ա՛հ, քեռակին, ինչ-
պե՛ս կաշխատեմ ես: Կինս, երևի, ավելին չի պահանջի
ինձանից: Իսկ եթե նույնիսկ այնպես պատահի, որ որոշ
ժամանակ կարիքի մեջ լինենք, ապա, երևի, Պոլինան,
հանուն մեր սիրո, դժգոհություն ցույց չի տա: Բայց,
համենայն դեպս, կյանքը որքան էլ դառն լինի, չեմ դի-
չի նույնիսկ միլիոններով մասը իմ այն համոզմունք-
ների, որոնց համար ես պարտական եմ դաստիարակու-
թյանը:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ձեզ համար կարելի է երաշխավորել. բայց
ձեք կինը... նա ջահել է: Որևէ կարիքի դիմանալը նրա
համար դժվար կլինի: Մեզանում աղջիկներին շատ վատ
են դաստիարակում: Դուք՝ երիտասարդները, մեզ հրեշ-
տակներ եք պատկերացնում, բայց հավատացեք, Վասիլի
Նիկոլայիչ, որ մենք տղամարդկանցից վատն ենք: Մենք
ավելի շահամուլ ենք, ավելի աշատու: Ինչ արած, պիտի
խոստովանենք. մեր մեջ պատվի և խիստ արդարացիու-
թյան զգացմունքը շատ ավելի քիչ է: Մի պակասություն
էլ ունենք. դա նուրբ վարվելակերպի պակասն է: Կինն
ընդունակ է հանդիմանելու. մի բան, որ հազիվ թե զար-
գացած տղամարդը իրեն թույլ կտա: Ամենամտտիկ ըն-
կերուհիների միջև հազվադեպ չեն ամենավիրավորական
կծու խայթոցները: Կնոջ հիմար կշտամբանքը երբեմն
ամեն վիրավորանքից ավելի ծանր է:

ԺԱԴՈՎ — Դա ճշմարիտ է: Բայց նրան ես ինքս կդաստիա-
րակեմ: Նա դեռ բոլորովին երեխա է, նրան դեռ ամեն
կեբազ կարելի է փոխել: Միայն հարկավոր է նրան շու-
տով պոկել ընտանիքից, քանի դեռ չեն հասցրել գոհճիկ
դաստիարակությանը փշաջենել: Իսկ երբ նրան, բառիս

բուն իմաստով, օրիորդ-տիրուհի դարձնեն, արդեն ուշ
կլինի:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ձեմ համարձակվի կասկածել և չեմ ուզում
ձեզ հիասթափեցնել: Անազնվություն կլինի իմ կողմից,
եթե ես հենց սկզբնական շրջանում պաղեցնեմ ձեզ: Ավե-
լի շատ ազատություն տվեք ձեր սրտին, քանի դեռ նա չի
չորացել: Աղքատությունից մի վախեցեք: Աստված օրհնի
ձեզ: Հավատացեք, ոչ ոք ձեզ այնքան երջանկություն
չի ցանկանա, որքան, ես:

ԺԱԴՈՎ — Ես միշտ հավատացած եմ եղել դրանում, քեռա-
կին:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Մի բան է ինձ անհանգստացնում՝ դուք
համբերատար չեք: Դուք ձեզ համար շարունակ թշնա-
միներ եք ձեռք բերում:

ԺԱԴՈՎ — Այո, ամենքն էլ ինձ ասում են, որ ես համբերա-
տար չեմ, որ ես դրանով շատ բան եմ կորցնում: Բայց
մի՞թե համբերատար չլինելը թերություն է: Մի՞թե ավելի
լավ է անտարբեր նայել Յուսուֆներին, Բելոզուբովներին
և այն բոլոր զազրելի արարքներին, որ շարունակ կա-
տարվում են շուրջբոլորդ: Անտարբերությունից մինչև
արատ ճանապարհը կարճ է: Ում համար արատը զզվելի
չէ, նա ինքը կամաց-կամաց կխրվի դրա մեջ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ես չէի ասի, որ համբերատար չլինելը պա-
կասություն է, միայն փորձով գիտեմ, թե նա որքան ան-
հարմար է կյանքի համար: Ես օրինակներ տեսել եմ...
մի օր դուք կիմանաք...

ԺԱԴՈՎ — Ի՞նչ եք կարծում, մորեղբայրս կմերժի՞ ինձ: Ես
ուզում եմ խնդրել, որ ոռճիկս ավելացնի: Դա ինձ համար
այժմ շատ կարևոր է:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Չգիտեմ: Խնդրեցեք:

Մեռում է Վիշնևսկին ֆրակով և կեղծամոզ, ապա Յու-
սուֆ:

Երան, Վիշնևսկի և Յուսով:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Ժաղովիհն): Ա, բարև: (Նստում է): Նստիր
Նստիր, Ակիմ Ակիմիչ: Դու շարունակ ծուլութիւն ես
անում, քիչ ես գնում ծառայութեան:

ԺԱԴՈՎ — Անեկիք շունեմ: Գործ չեն տալիս:

ՅՈՒՍՈՎ — Քի՞չ գործ կա մեզ մոտ:

ԺԱԴՈՎ — Արտագրե՞լ: Ոչ, կնեերք, դրա համար դուք աստի-
ճանավորներ ունեք, ինձանից ավելի ընդունակ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դու դեռ չե՞ս խաղաղվել, սիրելիս: Շարունակ
բարոզներ ես կարդում: (Կնոջը դիմելով): Պատկերացրեք,
գրասենյակում գրագիրների համար բարոյականութիւ-
նից է խոսում, իսկ նրանք, բնական է, ոչինչ չեն հաս-
կանում. նստած են բերանները բացած, աչքերը շուծ:
Միծաղելի է, սիրելիս:

ԺԱԴՈՎ — Ինչպե՞ս լռեմ, երբ յուրաքանչյուր քայլափոխի
զազրելի բաներ եմ տեսնում: Ես մարդու նկատմամբ
հավատա դեռ չեմ կորցրել, և մտածում էի, որ իմ խոս-
քերը նրանց վրա ազդեցութիւն կգործեն:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Այո, արդեն գործել են. դու ամբողջ գրա-
սենյակի ծաղրի առարկան ես դարձել: Արդեն հասել ես
նպատակիդ, կարողացել ես այնպես անել, որ ամենքը
ժպիտով միմյանց են նայում և փսփսում, երբ դու ներս
ես գալիս, և ընդհանուր հոհոց է բարձրանում, երբ
դու դուրս ես գնում:

ՅՈՒՍՈՎ — Այո-ս:

ԺԱԴՈՎ — Սակայն ի՞նչն է ծիծաղելի իմ խոսքերում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ամեն ինչը, բարեկամս: Սկսած ավելորդ և
պատշաճութիւնը խախտող քո հրապուրանքից մինչև
տղայական, ոչ-գործնական եզրակացութիւններդ: Հա-
վատա, որ յուրաքանչյուր գրագիր քեզանից ավելի լավ
է ճանաչում կյանքը. ճանաչում է իր սեփական փորձով,
որ ավելի լավ է կուշտ լինել, քան թե քաղցած փրկուս-
փա. և քո խոսքերը, բնականաբար, ծիծաղելի են թվում:

ԺԱԴՈՎ — Իսկ ինձ թվում է, որ նրանք միայն մի բան գի-

տեն. որ կաշառակեր լինելն ավելի շահավետ է, քան
ազնիվ մարդ լինելը:

ՅՈՒՍՈՎ — Հը՛մ, հը՛մ...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հիմարութիւն է, սիրելիս: Ե՛վ հանդգնութիւն
է, և՛ հիմարութիւն:

ԺԱԴՈՎ — Թույլ տվեք, մորեղբայր: Հապա ինչո՞ւ են մեզ
ուսուցանել, ինչո՞ւ են մեր մեջ զարգացրել այնպիսի
հասկացութիւններ, որոնք չի կարելի բարձրաձայն ասել,
եթե չես ուզում, որ քեզ մեղադրեն հիմարութեան և հան-
դրգնութեան մեջ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Զգիտեմ, թե այնտեղ ձեզ ով ինչ է սովորեց-
րել. ինձ թվում է, որ ավելի լավ է սովորեցնեն գործ անել և
մեծերին հարգել՝ քան թե դատարկ բաներ դուրս տալ:

ՅՈՒՍՈՎ — Այո-ս, շատ ավելի լավ կլիներ:

ԺԱԴՈՎ — Խնդրեմ, ես կլռեմ, բայց իմ համոզմունքներից չեմ
կարող բաժանվել. նրանք ինձ համար կյանքիս միակ
մխիթարանքն են:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Այո, ձեզնահարկում, մի կտոր սև հաց ուտե-
լով: Փառավո՛ր մխիթարանք է: Քաղցածութեանից զո-
վաբանի իր առաքինութիւնը և ընկերներին ու պետե-
րին հայհոյի այն բանի համար, որ նրանք կարողացել
են կանոնավորել իրենց կյանքը և ապրում են լիութեան
մեջ, ընտանիքով և երջանիկ: Այստեղ նախանձն էլ
կոզնի:

ԺԱԴՈՎ — Աստված իմ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Սա դաժանութիւն է:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Խնդրում եմ չկարծես, թե դու ինչ-որ նոր
խոսք ես ասում: Դա միշտ եղել է, միշտ էլ կլինի: Մի
մարդ, որ չի կարողացել կամ չի հասցրել հարստութիւն
դիզել, միշտ կնախանձի հարուստին, դա մարդուս բնա-
վորութեան մեջ է: Նախանձն արդարացնելը նույնպէս
հեշտ է: Նախանձող մարդիկ սովորաբար ասում են. «Ես
հարստութիւն չեմ ուզում, ես աղքատ եմ, բայց ազնիվ
եմ»:

ՅՈՒՍՈՎ — Մեղրածո՛ր շրթունքներ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ազնիվ աղքատութիւնը լավ է միայն թատրո-
նում: Բայց փորձիր նրան կյանքո՛ւմ: Դա, բարեկամս,

այնքան էլ հեշտ և դուրեկան բան չէ, ինչպես մեզ թվում է: Ի՞նչ դու վարժվել ես լսել միտան ինքդ քեզ: Հավանաբար դեռ կամուսնանաս էլ: Ի՞նչ կստացվի այն ժամանակ: Այ թե հետաքրքիր բան կլինի՞:

ԺԱԳՈՎ — Այո, մորեղբայր, ես ամուսնանում եմ. ուզում էի այդ մասին խոսել ձեզ հետ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Եվ, հավանաբար, սիրելով. աղջիկն աղքատ է և հիմար, որը կյանքի մասին նույնքան հասկացողություն ունի, որքան, դու: Բայց նա, երևի, կրթված է և երգում է լարից ընկած դաշնամուրի նվագակցությամբ.

«Սիրածիս հետ դրախտ է անգամ քոլիկը»:

ԺԱԳՈՎ — Այո, նա աղքատ աղջիկ է:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Եվ հիանալի՞ է:

ՅՈՒՍՈՎ — Աղքատներ բազմացնելու համար...

ԺԱԳՈՎ — Ակիմ Ակիմիչ, ինձ մի վիրավորեք: Ես ձեզ ոչ մի իրավունք չեմ տվել դրա համար: Մորեղբայր, ամուսնությունը մեծ գործ է, և ինձ թվում է, որ այդ գործում յուրաքանչյուրը պիտի հետևի սեփական ներշնչմանը:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Խնդրե՛մ, բարի՛ եղիր, քեզ ոչ ոք չի խանգարում: Բայց դու մտածե՛լ ես, արդյոք, ահա թե ինչի մասին: Դու, իհարկե, սիրո՞ւմ ես հարսնացուիդ:

ԺԱԳՈՎ — Իհարկե, սիրում եմ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Իսկ ի՞նչ ես պատրաստում նրա համար, ի՞նչ երջանկություն: Աղքատություն և բազմապիսի զրկանքներ: Իմ կարծիքով, ով սիրում է կնոջը, նա աշխատում է նրա ճանապարհը զարդարել աճեն տեսակ հաճույքներով:

ՅՈՒՍՈՎ — Այո-ա:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Գլխարկների և դանաղան մոդաների փոխարեն, որոնք կանայք անհրաժեշտություն են համարում, դու նրա համար առաքինության մասին դասախոսություններ պիտի կարդաս: Նա, իհարկե, հանուն սիրո քեզ կլսի, բայց գլխարկներ ու զգեստներ, այնուամենայնիվ, չի ունենա:

ՎԻՇՆԵՎՍԿԻՅԱ — Նրա տարիքում սերը դեռ չեն գնում:

ԺԱԳՈՎ — Քեռակիներ ճիշտ է ասում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Համաձայն եմ, դու սերը գնելու կարիք չունես. բայց նրան վարձատրել, նրա սիրո համար փոխհատուցել պարտավոր է յուրաքանչյուրը. այլապես ամենանշահախնդիր սերը կսառչի: Կսկսվեն հանդիմանություններ, տրտունջներ ճակատագրի նկատմամբ: Զգի՞տե՛ժ, ինչպե՞ս կդիմանաս, երբ կինդ ամեն ըուպե սկզբի բարձրածայն զղջալ, որ անփորձության հետևանքով իր բախտը կապեց մի աղքատի հետ: Մի խոսքով, դու պարտավոր ես երջանկություն ստեղծել այն կնոջ համար, որին սիրում ես: Իսկ առանց հարստության, կամ, գոնե առանց առատության երջանկություն չկա կնոջ համար: Դու գուցե, ըստ քո սովորության, կսկսես հակաճառել ինձ. այդ դեպքում ես կապացուցեմ քեզ, որ ասածս ճշմարտություն է: Չորսրոլորդ նայիր. ո՞ր խելացի աղջիկը կառկածանքի մեջ կընկնի՝ ամուսնանա՞ հարուստ մի ծերուկի կամ մի այլանդակի հետ: Ո՞ր մայրը կտատանվի՝ աղջկան այդ ձևով մարդու տա՞ թե ոչ, նույնիսկ աղջկա կամքին հակառակ, նա աղջկա արցունքները հիմարություն և երեխայություն համարելով՝ շնորհակալ կլինի աստծուն, որ իր Մաշենկային կամ Աննուշկային այդպիսի երջանկություն պարզեց: Յուրաքանչյուր մայր նախապես հավատացած է, որ աղջիկը հետագայում շնորհակալ կլինի: Վերջապես ամուսինը, հենց իր հանգրստության համար, որը նույնպես ինչ-որ բան արժե, պարտավոր է միայնգամայն ապահովել կնոջը նյութապես, մինչև անգամ այն դեպքում... մինչև անգամ, երբ կինը այնքան էլ երջանիկ չէ, իրավունք չունի... չի համարձակվի գանգատվել... (Զերմուրե)։ Աղքատությունից դուրս քերված հոգատարությամբ և շքեղությամբ շրջապատված կնոջը ո՞վ կհավատա, որ նա դժբախտ է: Հարցրու կնոջս, ճշմարիտ չե՞մ ասում:

ՎԻՇՆԵՎՍԿԻՅԱ — Ձեր խոսքերն այնքան խելացի են և համոզիչ, որ իմ համաձայնության կարիքը չի զգացվում (Գնում է):

Նրանք, առանց վիճակայայի:

ԺԱԳՈՎ — Բոլոր կանայք այնպիսին չեն, ինչպիսին դուք եք
ասում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Համարյա բոլորը: Բացառություններ, իհարկե,
կան. բայց խելքին մոտ բան չէ, որ այդ բացառությունը
քեզ բաժին պիտի ընկնի: Դրա համար հարկավոր է ապ-
րել, որոնել, և ոչ թե քեզ նման սիրահարվել առաջին
պատահածին: Լսիր, ես քեզ հետ պիտի խոսեմ որպես
ազգական, որովհետև խղճում եմ քեզ: Իսկապես, ի՞նչ
ես մտածում. առանց միջոցների ինչպե՞ս ես ապրելու
կնոջդ հետ:

ԺԱԳՈՎ — Ապրելու եմ աշխատանքով: Ես հուսով եմ, որ խղճ-
ճիս անդորրը կարող է փոխարինել երկրային բարիքնե-
րին:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Աշխատանքը քիչ կլինի ընտանիքդ պահելու
համար: Դու լավ պաշտոն չես ստանա, որովհետև թո
հիմար բնավորությամբ դու պետերից ոչ մեկի համակ-
րանքը շահել թո օգտին չես կարողանա, այլ ավելի շատ
կզինես թո դեմ: Խղճիդ անդորրը նույնպես սովից չի
փրկի քեզ: Ա՛յ, տեսնո՞ւմ ես, բարեկամս, հասարակու-
թյան մեջ նկատելիորեն տարածվում է շքեղությունը, իսկ
ձեր սպարտացու առաքինությունները շքեղության հետ
անհաշտ են: Բո մայրն ինձ հանձնարարել է հոգալ թո
մասին և ես պարտավոր եմ անել այն ամենը, ինչ որ
կարող եմ: Ահա թե ինչ խորհուրդ կտամ քեզ վերջին ան-
գամ. մի քիչ սանձի՛ր բնավորությունդ, դե՛ն նետիր ցնո-
րամիտ գաղափարներդ, չե՞ որ հիմարություն է դա. ծա-
ռայիր, ինչպես ծառայում են բոլոր օրինավոր մարդիկ,
այսինքն՝ գործնականորեն նայիր կյանքին և ծառայու-
թյանը: Այն ժամանակ ես կարող եմ օգնել քեզ թե՛ խոր-
հուրդներով, թե՛ դրամով, և թե՛ հովանավորությամբ:
Դու արդեն փոքր չես, պատրաստվում ես ամուսնանալ:

ԺԱԳՈՎ — Երբե՛ք:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Որքան ուժգին է հնչում՝ «Երբեք» և, միևնույն

ժամանակ, որքան հիմարաբա՛ր: Ես կարծում եմ, որ դու
խելքի կզաս. այդպիսի օրինակներ շատ եմ տեսել, միայն,
տես, շուշանաս: Դու այժմ առիթ և հովանավորություն
ունես, իսկ հետո կարող ես շունենալ. դու կարիերայ
կփռացնես ընկերներդ քեզանից. առաջ կանցնեն, քեզ
համար դժվար կլինի դարձյալ սկզբից սկսել: Ես քեզ
ասում եմ որպես աստիճանավորը աստիճանավորին:

ԺԱԳՈՎ — Երբե՛ք, երբե՛ք:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դե, որ այդպես է, ապրի՛ր, ինչպես գիտես,
առանց օգնություն: Ինձ վրա արդեն հույս չդնես: Քեզ
հետ խոսելն անգամ ձանձրալի դարձավ:

ԺԱԳՈՎ — Աստվա՛ծ իմ: Ինձ կօգնի հասարակական կար-
ծիքը:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ինչպե՛ս չէ, սպասիր: Մեզ մոտ հասարակա-
կան կարծիք չկա՛, բարեկամս: Եվ չի՛ կարող լինել, այն
իմաստով, ինչպես դու ես հասկանում: Ահա քեզ հասա-
րակական կարծիք՝ չես բռնվել, ուրեմն գող չե՛ս: Հա-
սարակության ի՞նչ գործն է, թե դու ինչ եկամուտներով
ես ապրում, միայն թե ապրիր պատշաճորեն և քեզ պա-
հիր այնպես, ինչպես վայել է քաղաքավարի մարդուն:
Իսկ եթե դու բոբիկ ման գալով, բոլորին քաղաքականու-
թյուն քարոզես, այդ դեպքում կներես, եթե քեզ օրինա-
վոր տներում շքեղունեն և թո մասին դատարկ մարդու
կարծիք կազմեն: Ես ծառայել եմ նահանգական քաղաք-
ներում, այնտեղ միմյանց ավելի մոտիկից են ճանաչում,
բան թե մայրաքաղաքներում. գիտեն ով ի՛նչ ունի, ինչո՞վ
է ապրում. հետևաբար, հասարակական կարծիքն ավելի
հեշտ է կազմվում: Ո՛ւ, մարդիկ ամեն տեղ էլ մարդիկ
են: Եվ այնտեղ իմ ներկայությամբ ծաղրում էին մեկին,
որն իր մեծ ընտանիքը պահում էր միայն ոտճիկով. և
քաղաքում խոսում էին, թե նա իր սերթուկներն ինքն է
կարում. բայց այնտեղ ամբողջ քաղաքը հարգում էր
առաջնակարգ կաշառակերին այն բանի համար, որ նա
բացեիրբաց էր ապրում և շաբաթը երկու օր նրա տանը
երեկույթներ էին լինում:

ԺԱԳՈՎ — Մի՛թե դա ճշմարտություն է:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Կապրես՝ կտեսնես: Գնա՛նք, Ակիմ Ակիմիչ
(Ոտիք է կանգնում):

ՓԱԴՈՎ — Մորեղբայր:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ի՞նչ է:

ՓԱԴՈՎ — Ես փոքր ոտճիկ եմ ստանում, իմ ապրուստին չի
հերիքում: Այժմ ազատ տեղ է բացվել. թույլ տվեք զբա-
ղեցնեմ այն, ես ամուսնանում եմ...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հը՛մ... Այդ տեղի համար ինձ հարկավոր է
ոչ թե ամուսնացած, այլ ընդունակ մարդ... Խղճով ապած,
ես չեմ կարող ոտճիկդ ավելացնել. նախ՝ դու դրան շար-
ժես, իսկ երկրորդ՝ դու իմ ազգականն ես, կողմնապա-
հույթուն կհամարեն:

ՓԱԴՈՎ — Ինչպես հաճելի է ձեզ: Կապրես իմ ունեցած մի-
ջոցներով:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Եվս մի բան, սիրելիս: Ասում եմ քեզ մեկ-
ընդմիջտ. ինձ քո խոսելածը դուր չի՛ գալիս, արտա-
հայտություններդ կտրուկ են և ոչ հարգալից. և ես ոչ
մի կարիք չեմ զգում քո պատճառով զայրանալու: Չկար-
ժես, որ ես քո կարծիքները կարող եմ վիրավորական
համարել: Դա շափազանց մեծ պատիվ կլինի քեզ համար,
քո կարծիքները ես պարզապես հիմարություն եմ համա-
րում: Եվ այդ իսկ պատճառով իմ բոլոր հարաբերություն-
ները քեզ հետ, բացի ծառայականից, կարող ես բոլո-
րովին վերջացած համարել:

ՓԱԴՈՎ — Այդ դեպքում ես կտեղափոխվեմ մի ուրիշ տեղ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Բարի եղիր, խնդրեմ: (Գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Ղ

Ժազով և Յուսով:

ՅՈՒՍՈՎ — (Նրա աչքերին նայելով): Հա՛-հա՛-հա՛...

ՓԱԴՈՎ — Ինչի՞ վրա եք ծիծաղում:

ՅՈՒՍՈՎ — Հա՛-հա՛-հա՛... Ախր ինչպե՞ս շփոթաղեմ: Ո՛ւմ
հետ եք վիճում: Հա՛-հա՛-հա՛... Ախր դա ինչի՞ նման է:

ՓԱԴՈՎ — Դրանում ի՞նչ ծիծաղելի բան կա:

ՅՈՒՍՈՎ — Ինչ է, մորեղբայրը ձեզանից հիմա՞ր է: Հը՞, հի՛-

մա՞ր է: Կյանքը ձեզանից պակաս է հասկանում: Ախր
եփած հավի ծիծաղը կգա: Ախր այսպես ծիծաղեցնելով՝
մի օր կսպանեք: Ողորմացե՛ք, խնայեցե՛ք, ես ընտա-
նիքի տեր եմ:

ՓԱԴՈՎ — Դուք այդ չեք հասկանում, Ակիմ Ակիմիչ:

ՅՈՒՍՈՎ — Այստեղ հասկանալու բան էլ չկա: Թեկուզ հա-
զար մարդ բերեք, ձեզ որ տեսնեն, բոլորն էլ ծիծաղից
կմեռնեն: Հարկավոր էր, որ դուք այդ մարդուն լսեիք,
բերանը բաց լսեիք, որպեսզի ոչ մի բառ չկորցնեիք. հե-
տո նրա բառերը ձեր ականջին օղ անեիք. իսկ դուք վի-
ճում եք: Ախր դա կոմեդիա է, աստված վկա, կոմեդիա
է, հա՛-հա՛-հա՛... Ձեր մորեղբայրն էլ ձեզ լավ շշպոնց,
հի՛-հի՛-հի՛... Դա դեռ քիչ էր: Հարկավոր էր ավելի...
Ես լինեի նրա տե՛ղը... (Խտորեմ ծամածռելով դեմքը,
գնում է առանձնասենյակ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Ղ

Ժազովը մեռակ է:

ՓԱԴՈՎ — (Մտորելուց հետո): Է՛հ, խոսեք: Ես ձեզ չեմ հա-
վատում: Չեմ հավատում և այն բանին, որ ազնիվ աշ-
խատանքով կրթված մարդը չի կարող ապահովել իրեն
և ընտանիքին: Չեմ ուզում հավատալ և այն բանին, որ
հասարակութունն այդքան անբարոյական է: Դա ծերուկ-
ների սովորական ձևն է՝ երիտասարդներին հիասթափեց-
նել, ամեն ինչ ներկայացնել սև գույնով: Հին դարի մար-
դիկ նախանձում են, որ մենք այսպես ուրախ և այսպի-
սի հույսով ենք նայում կյանքին: Ա՛, մորեղբայր, ես
հասկանում եմ ձեզ: Դուք ամեն ինչի հասել եք՝ և՛ ազ-
նվագարմության, և՛ հարստության: Էլ ո՞ւմ պիտի նա-
խանձեք: Դուք նախանձում եք միայն մեզ, ազնիվ խղճի
և խաղաղ հոգու տեր մարդկանց: Դուք, դա փողով չեք
կարող գնել: Ասացե՛ք, ինչ ուզում եք, իսկ ես, այնուա-
մենայնիվ, կամուսնանամ և կապրեմ երջանի՛կ: (Գնում
է):

Գալիս են վիշնևսկի և Յուսովը:

Յուսով և Վիշնեսկի:

- ՎԻՇՆԵՍԿԻ — Ո՞ւմ հետ է ամուսնանում:
- ՅՈՒՍՈՎ — Կուկուշկինայի: Կուլգիական ասեսորի այրու աղօջրկա հետ:
- ՎԻՇՆԵՍԿԻ — Դու նրան ճանաչո՞ւմ ես:
- ՅՈՒՍՈՎ — Հենց այնպես, ամուսնուն էի ծանոթ: Բելոգուբովն էլ ուզում է մյուս քրոջ հետ ամուսնանալ:
- ՎԻՇՆԵՍԿԻ — Դե, Բելոգուբովն ուրիշ բան: Բոլոր դեպքերում, դու պիտի գնաս այդ կնոջ մոտ: Հասկացրու նրան, որ իր աղջկան չդժբախտացնի, լտա այս ապուշին: (Գրկխով նշան է անում ու գնում):

Տ Ե Ս Ի Ր Ա Ն տ ա ս ն Ե ր Ե ր ր ր ր ր

ՅՈՒՍՈՎ — (Մեկակ): Ի՞նչ ժամանակներ են: Ի՞նչ է կատարվում աշխարհիս երեսին, աչքերիդ էլ չես հավատա: Մարդըս ո՞նց պիտի ապրի: Իսկ ո՞վ է խոսում: Ո՞վ է վիճում, Ոչնչությունը: Փչես, փո՛ւհ, (փչում է), և մարդ չկա: Եվ ախր ո՞ւմ հետ է վիճում: Հանճարի՛ հետ: Արիստարիս Վլադիմիրիչը հանճա՛ր է... հանճա՛ր: Նապոլեոնի տեղի ծով է: Գործերի մեջ արագությո՛ւն, համարձակությո՛ւն: Մի բան է պակասում՝ օրենքի հարցում հաստատուն չէ, ուրիշ գերատեսչությունից է: Եթե Արիստարիս Վլադիմիրիչը, իր այդ խելքով, օրենքները և կարգուկանոնը այնպես իմանար, ինչպես իր նախորդը գիտեր, դե, ուրեմն, վե՛րջ... վե՛րջ... էլ խոսք չի՛ կարող լինել: Գնա՛ նրա ետևից, ոնց որ երկաթգծով: Այսպես կպիր նրան ու գնա՛... Ե՛վ աստիճաններ, և՛ շքանշաններ, և՛ հուշեր ամեն տեսակի, և՛ տներ, և՛ գյուղեր՝ անմշակ հողերով... Ծ՛, շունչդ կտրվում է: (Գնում է):

ԱՆՁՆԸ

- ՅԵՐՍԱՏԱ ԳԵՐԱՍԻՄՈՎԱ ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — կուլգիական ասեսորի այրի
- ՅՈՒՍՈՎԱ } նրա դստերը
- ՊՈՒՆԱ }
- ԱԿԻՄ ԱԿԻՄՈՎ ՅՈՒՍՈՎ
- ՎԱՍԻԼԻ ՆԻԿՈՂԱՅԻՉ ԺԱԴՈՎ
- ՕՆԻՍԻՄ ՊԱՆՅՈՒՉ ԲԵՆԻԳՈՒՐՈՎ
- ՍՏԵՇԱ — աղախին
- Սեյյակ Կուլգիինայի ամուսնու: Սովորական ճյուղասեյյակ, որ լինում է ոչ ճարտուտ տեղում: Զախ կազմում՝ զատ:

Տ Ե Ս Ի Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Յուլիկա, Պոլինա և Ստեշա:
Յուլիկան և Պոլինան կանգնած են ճայելու առաջ. Ստեշան՝ ձեռքի խոզանակ և քննոց:

- ՍՏԵՇԱ — Ը՛հը, իմ օրիորդները պատրաստ են: Թեկուզ հենց հիմա թող գան փեսացուները. ոնց որ ցույց տալու պատկերներ լինեք, առաջին տեսակի: Էնպես փքվենք, որ բերանները բաց մնա: Ո՛ր գեներալին էլ որ ցույց տանք, ամոթ չի:
- ՊՈՒՆԱ — Դե, Յուլիկա, տեղներս բռնենք, նստենք խելացի օրիորդների պես: Հիմա մեր մայրիկը աղջիկտես կսարքի: Ապրանքը լավ կողմից է ցույց տալիս:
- ՍՏԵՇԱ — (Փռչին մաքրելով): Ոնց էլ որ նայես, ամեն ինչ կարգին է, ամեն ինչ իր տեղում, ամեն ինչ քորոցով պնդացրած:
- ՅՈՒՍՈՎԱ — Մեր մայրիկն այնպիսի ունիզոր է, որ մի բան կգտնի: (Նստում է):
- ՍՏԵՇԱ — (Կանգ է առնում սենյակի մեջտեղում): Դուք նրա ձեռքին, օրիորդներ, իսկապես որ կյանք չունեք: Վարժեցնում է, հա՛ վարժեցնում, ոնց որ զինվորներ լինեք: Միշտ կազմ ու պատրաստ. լավ է, որ չի ստիպում ոտներդ

բարձրացնեք: Ինչ մնաց ինձ հոգիս հանում է ու հանում, միայն մաքրել-թափելով սպանեց-թողեց: (Փռչի-ներն է մաքրում):

ՅՈՒԼԻՆԿԱ — Քո փեսացուն, Վասիլի Նիկոլաևիչը, քեզ դո՞ւր է գալիս:

ՊՈԼԻՆԱ — Ա՛հ, հոգի՛ է, հոգի՛: Իսկ թո Բելոգուրովը ինչ-պես...

ՅՈՒԼԻՆԿԱ — Չէ՛, անպետքի մեկն է:

ՊՈԼԻՆԱ — Բա ինչո՞ւ մայրիկին շես ասում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Բա՛ն ասացիր: Աստված ոչ անի: Ես շատ ուրախ կլինեմ թեկուզ հենց նրան առնեմ, միայն թե այս տանից դուրս պրծնեմ:

ՊՈԼԻՆԱ — Հա, իրավացի ես: Եթե Վասիլի Նիկոլայիչն էլ ինձ չհանդիպեր, ես էլ ուրախ կլինեի և առաջին պատահածի վզին կփաթաթվեի, թեկուզ մի քիչ էլ վատը լիներ, միայն ազատեր ինձ այս ցավից, հաներ ինձ այս տանից: (Միծաղում է):

ՍՏԵՇԱ — (Կռաճում, նայում է բազմոցի տակ): Իսկապես որ Քրիստոսի շարշարանք է: Շատ ճիշտ ես ասում, օրիորդ:

ՊՈԼԻՆԱ — Ուրիշ աղջիկներ, երբ մարդու են գնում, լաց են լինում, Յուլինկա, ախր, տունը ո՞նց թողնեն- գնան: Ամեն մի անկյան համար սուգ են անում: Իսկ ես ու դու. թեկուզ մի վիշապ-գորինիչ մեզ յոթ սարի ետև տաներ: (Միծաղում է):

ՍՏԵՇԱ — Այ, թե որ էստեղ չէի մաքրի, գլխիս ընկույզ կջարդեր: Ախր ո՞վ պիտի նայի էստեղ, ո՞ւմ է պետք: (Հայելու տակն է մաքրում):

ՅՈՒԼԻՆԿԱ — Դու բախտավոր ես, Պոլինա. քեզ համար ամեն ինչ ծածաղելի է. իսկ ես սկսում եմ շատ լրջորեն մտածել: Մարդու գնալը մի մեծ վարպետություն չի, այդ գիտությունը մեզ հայտնի է: Հարկավոր է մտածել այն մասին, թե մարդու գնալուց հետո ո՞նց ես ապրելու:

ՊՈԼԻՆԱ — Իսկ մտածելու ի՞նչ կա որ: Երևի այնտեղ այստեղից վատ չի լինի:

ՅՈՒԼԻՆԿԱ — Վատ չի լինի: Հարկավոր է, որ այստեղից լա՛վ լինի: Քանի որ մարդու ենք գնում, ուրեմն պետք է տիրուհի դառնանք:

ՊՈԼԻՆԱ — Դա, իհարկե, շատ լավ է: Դրանից լավ ի՞նչ կարող է լինել: Միայն թե դա ինչպե՞ս է արվում: Դու մեր խելոքն ես, չէ՞, սովորեցրու:

ՅՈՒԼԻՆԿԱ — Զրույցի ժամանակ հարկավոր է նկատել, թե ով ի՞նչ ունի, ով ինչի՞ վրա է հույս դնում: Եթե հիմա շունի, ապա աչքի առաջ մի բան նկատի ունի՞, թե չէ: Եվ հիմա արդեն խոսքից կերևա, թե ով ինչ մարդ է: Քո ժաղովը, երբ երկուսով եք մնում, ի՞նչ է ասում քեզ:

ՊՈԼԻՆԱ — Ի՞նչ ասեմ, Յուլինկա, հիմա որ գլուխս էլ կտրեն, նրա ասածներից ոչինչ չեմ հասկանում: Ձեռքս այնպես ուժեղ սեղմում է, և սկսում է խոսել... խոսում է, խոսում... ուզում է ինչ-որ բան սովորեցնել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ի՞նչ բան:

ՊՈԼԻՆԱ — Ազնիվ խոսք, Յուլինկա, չգիտեմ: Ինչ-որ շատ խրթին բան: Սպասիր, գուցե միտս բերեմ, միայն հանկարծ չծիծաղենք, բառերն այնքան ծիծաղելի են: Սպասիր, սպասիր, հիշեցի՛: (Մաղբալան ձայնով): «Ի՞նչ դեր ունի կինը հասարակության մեջ»: Հետո խոսում էր ինչ-որ քաղաքացիական առաքինությունների մասին: Ես իսկի չգիտեմ էլ, թե դա ինչի մասին է: Չէ՞ որ դա մեզ չեն սովորեցրել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ոչ, չեն սովորեցրել:

ՊՈԼԻՆԱ — Նա, երևի, այն գրքերում է կարդացել, որոնք մեզ չեն էլ տվել: Հիշո՞ւմ ես... պանսիոնում: Դե, մենք, իրոք, ոչ մի գիրք չենք կարդացել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ի՞նչ ափսոսալու բան է որ, առանց այդ գրքերի էլ մահու շափ տխուր է: Այ, թատրոն կամ զբոսանքի գնալն ուրիշ բան է:

ՊՈԼԻՆԱ — Հա՛, քույրիկս, հա՛:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ի՞նչ ասեմ, Պոլինա, թո տղամարդու վրա այնքան էլ հույս չկա: Ի՛մը՝ չէ՛, իմն այդպիսին չի՛:

ՊՈԼԻՆԱ — Բա ո՞նցն է որ:

ՅՈՒԼԻՆԱ — Իմ Բելոգուրովը, թեկուզև մի քիչ անդուր է, բայց մեծ հույսեր է ներշնչում: «Դուք կսիրեք ինձ,— ասում է,— հիմա իմ ամուսնանալու ժամանակը չի, բայց հենց որ ինձ սեղանավարիչ նշանակեն, կամուսնանամ»,— ասում է: Ես նրան հարցրի, թե ի՞նչ բան է սեղանավա-

րիչը: «Դա,— ասում է,— առաջին տեսակի բան է»: Ոնց որ լավ բան պիտի լինի: «Ես,— ասում է,— թեպետև անուսում մարդ եմ, բայց իմ գործերի մեծ մասը վաճառականների հետ է. և ես քաղաքից ձեզ համար մետաքս ու զանազան կտորեղեն կբերեմ, և մթերքներ: Բոլորը կլինի»: Շատ լավ է, Պոլինա, թող բերի: Այստեղ մտածելու բան էլ չկա, այդպիսի մարդու հետ հարկավոր է ամուսնանալ:

ՊՈԼԻՆԱ — Իմ փեսացուն, երևի, ծանոթ վաճառականներ չունի, այդ մասին նա ինձ ոչինչ չի ասել: Իսկ եթե նա ինձ համար ոչինչ չբերի...

ՅՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Չէ, երևի, նա էլ կունենա: Չէ՞ որ ծառայող է, իսկ նվերներ տալիս են բոլոր ծառայողներին, ում ինչ հարկավոր է: Մեկին՝ զանազան կտորներ, եթե ամուսնացած է, իսկ եթե ամուրի է՝ մահուդ, տրիկո. ով ձի ունի, նրան՝ խոտ, վարսակ. մեկ-մեկ էլ պատահում է, որ փող են տալիս: Անցյալ անգամ Բելոզուբովը ժրխտ ունեի հագին, հիշո՞ւմ ես, գույնզգույն էր, դա էլ մի վաճառական էր նվիրել: Նա ինքն ասաց ինձ:

ՊՈԼԻՆԱ — Չէ, հարկավոր է ժաղովին հարցնել, ծանոթ վաճառականներ ունի՞, թե՞ ոչ:

Մտնում է Կուկուշկինան:

Տեսարան երկրորդ

Նստեմ և Կուկուշկինա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչպե՞ս չգովեմ ինձ: Իմ տանը մաքրություն է, իմ տանը կարգ ու կանոն կա, իմ տանն ամեն ինչ ձգված է լարի՝ պես: (Նստում է): Իսկ սա՞ ի՞նչ է (Ազախնին ցույց է տալիս բազմոցի տակը):

ՍՏԵՇԱ — Թե աստված կսիրեք... վրաս էլ ուժ չմնաց, մեղք կտորվեց...

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչպե՞ս ես համարձակվում այդպես խոսել կարչելի՞: Դու դրա համար ուձիկ ես ստանում: Իմ

տանը մաքրություն է, իմ տանը կարգ ու կանոն կա, իմ տանը լարի պես պիտի ձգվե՞ս:

Ազախնին մտնում է և գնում:

ՅՈՒԿՈՒՇԿԻՆԱ

Ցուլիկան ստի է կանգնում:

Ես ուզում եմ ձեզ հետ խոսել:

ՅՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ի՞նչ եք կամենում, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դուք գիտե՞ք, տիրուհիս, որ ես ո՛չ կանխիկ դրամ ունեմ հավաքած և ո՛չ էլ հետագայում կունենամ:

ՅՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գիտեմ, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ժամանակն է, որ գիտենաք, տիրուհիս: Ես ոչ մի տեղից եկամուտ չունեմ, միայն թոշակս է: Մայրը ծայրին հասցրու, ինչպես ուզում ես: Ես ինձ ամեն բանից զրկում եմ: Պատվում եմ, ինչպես գողը տոնավաճառում, իսկ ես դեռ պատաված կին չեմ, կարող եմ և ամուսնանալ: Դուք իմ ասածը հասկանո՞ւմ եք:

ՅՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Հասկանում եմ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ես ձեզ համար նորաձև զգեստներ եմ բերում և զանազան մանր զարդարանք, իսկ ինձ համար հինն եմ ներկո՞ւմ, վերաձևո՞ւմ: Հո չե՞ք կարծում, որ ես ձեզ հագցնում ու զարդարում եմ ձեր հաճույքի համար: Մխավո՞ւմ եք, ուրեմն: Այդ բոլորն արվում է, որպեսզի ձեզ մարդու տամ, գլուխս ազատեմ: Իմ եղած-չեղածով ես կարող եմ ձեզ միայն չթե դեյրայով կամ տնական խալաթով ման ածել: Եթե չեք ուզում կամ չեք կարող ձեզ համար փեսացու ճարել՝ ուրեմն այդպե՛ս էլ կլինի: Ձեր պատճառով ես ինձ համար իզուր կտրատելու և վերաձևելու մտադրություն չունեմ:

ՊՈԼԻՆԱ — Մենք դա վաղուց ենք լսել, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դու լո՞ր, քեզ հետ չեն խոսում: Աստված բո հիմարության փոխարեն քեզ բախտ է տվել, ուրեմն լո՞ր: Եթե ժաղովը հիմար լինեիր, դու ողջ կյանքում

կտառապետի, քո թեթևամտության պատճառով տանը մնացած աղջիկ կլինեիր: Դե, ո՞ր խելոքը քեզ կառնի: Ո՞ւմն ես պետք: Դու պարծենալու բան չունես, այդ բանում դու մագի շափ խելք չես բանեցրել, ժադովն ինքն է վրա պրծած եկել, ինքն է իր վիզն օղակի մեջ գցում, նրան ոչ ոք չի քաշել-բերել. չի կարելի ասել, որ դու ես նրան հրապուրել: Իսկ Յուլիանկան խելոք աղջիկ է, նա իր բախտն իր խելքով պիտի կարգավորի: Թույլ տվեք իմանալ, ձեր Բելոզուբովից բան կստացվի՞, թե՞ ոչ:

ՅՈՒԼԻՆԿԱ — Չգիտեմ, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իսկ ո՞վ պիտի գիտենա: Դուք գիտեք, տիրուհիս, որ ես կողմնակի երիտասարդներին իմ տանը չեմ ընդունում: Ես ընդունում եմ միայն փեսացուներին կամ նրանց, ովքեր կարող են փեսացու լինել: Իմ կարգն այսպես է. եթե շատ թե քիչ փեսացուի նման է՝ համեցե՞ք, խնդրեմ, տանս զոները բաց են, իսկ եթե պոչ խաղացրեց՝ նրա գալն իզուր է, նրա առաջ փակ դուռ է: Ես պահպանում եմ իմ բարի անունը, ձերը՝ նույնպես:

ՅՈՒԼԻՆԿԱ — Բա ի՞նչ պիտի անեմ, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այն, ինչ հրամայված է: Հիշեցեք մի բան՝ չի՞ կարելի, որ դուք տանը մնաք. թե չէ ստիպված կլինեք խոհանոցում ապրել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ինչ որ հրամայել եք, մայրիկ, ես բոլորը կատարել եմ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իսկ ի՞նչ եք արել: Բարի եղեք ասել: Ես կլսեմ ձեզ:

ՅՈՒԼԻՆԿԱ — Երբ նա երկրորդ անգամ եկավ մեզ մոտ, հիշո՞ւմ եք, դուք նրան զոռով ներս բերեցիք, ես նրան աչքով արեցի:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Հետո՞, իսկ նա ինչ արեց:

ՅՈՒԼԻՆԿԱ — Իսկ նա մի տեսակ տարօրինակ կերպով շքեթունքները սեղմում էր ու լիզում: Ինձ թվում է, որ նա այնքան տխմար է, որ ոչինչ չհասկացավ: Հիմա բոլոր գիմնագիտաները նրանից ավելի ճարպիկ են:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դե, ես ձեր այդ գիտութուններին ծանոթ չեմ, բայց տեսնում եմ, որ նա հարգալից է, և նրա մեջ ինչ-որ

հաճելի թծկանք կա պետերի նկատմամբ: Ուրեմն նա հետու կգնա: Ես դա միանգամից հասկացա:

ՅՈՒԼԻՆԿԱ — Երբ նա երրորդ անգամ եկավ մեզ մոտ, հիշո՞ւմ եք, ես սիրալիքն ոտանավորներ կարդացի նրան. նա, կարծեմ, էլի ոչինչ չհասկացավ: Իսկ շորրոքը անգամ արքեն ես մի երկառոզ գրեցի նրան:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իսկ նա՞ ինչ արեց:

ՅՈՒԼԻՆԿԱ — Նա եկավ և ասաց. «Իմ սիրտը ձեզանից երբեք չի կտրվել, այդ միշտ եղե՛լ է, կա՞ և կլինե՛ր»:

Պոլեան Բեջում է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — (Մատով սպառնում է Նրան): Իսկ հետո՞ ինչ եղավ:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ասաց. «Հենց որ սեղանավարի չի պաշտոնն ինձ տան, ես արցունքն աչքերիս ձեր ձեռքը կխնդրեմ ձեր մայրիկից»:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իսկ շուտով կստանա այդ պաշտոնը:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ասում է, շուտով:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Մտտեցիր և համբուրիր ինձ, Յուլիանկա: (Համբուրում է): Եղջկա համար մարդու գնալը, սիրելիս, ամենամեծ գործն է: Դուք հետո կհասկանաք դա: Չէ՞ որ ես մայր եմ, և խիստ մայր. փեսացուիդ հետ արա ինչ ուզում ես, ես մատներիս արանքով կնայեմ, ես լուռ եմ, բարեկամս, լուռ եմ. իսկ, ա՛յ, կողմնակի մարդու հետ՝ ո՛չ, չհամարձակվե՛ս, թույլ չե՛մ տա: Գնա, Յուլիանկա, և նստիր տեղը:

Յուլիանկա Նստում է:

Իսկ երբ մարդու կգնաք, զավակներս, ահա ձեզ իմ խորհուրդը. ձեր ամուսիններին երես շտա՞ք, շարունակ, բոլորն մեկ աղոցեք, որ փող բերեն. թե չէ կծուլանան, հետո ինքներդ լաց կլինեք: Հարկավոր է շատ խրատներ տալ, բայց ձեզ՝ աղջիկներին, դեռ չի կարելի ամեն բան ասել. եթե մի բան պատահի, եկեք ուղղակի ինձ մոտ, ես ձեզ միշտ կընդունեմ, երբեք չեմ արգելի: Ես բոլոր միջոցները

գիտեմ և ամեն տեսակ խորհուրդ կարող եմ տալ, մինչև անգամ՝ բժշկական գծով:

ՊՈԼԻՆԱ — Մայրիկ, ինչ-որ մեկը կառքով եկավ:

ՅՈՒԼԻՆԿԱ — (Պատուհանից դուրս նայելուց հետո): Բելոգուբովն է, ինչ-որ ծերունու հետ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Նստեցեք տեղներդ: Ցուլինկա, թիկնոցդ ալ ուսի վրա մի քիչ իջեցրու:

Մտնում են Ցուսովն ու Բելոգուբովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Պ

Նրանք, Ցուսով և Բելոգուբով:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Բարև, ձեզ, Ֆելիսատա Գերասիմովնա: (Դիմելով օրիորդին): Բարև ձեզ: (Ցուսովին ներկայացնելով): Ահա, ցանկություն հայտնեց... Ակիմ Ակիմիչ Ցուսով... իմ պետը և բարերարը: Այնուամենայնիվ, Ֆելիսատա Գերասիմովնա, ավելի լավ է, երբ պետն է գալիս...
ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Շնորհ արեք, խնդրում եմ, շնորհ արեք: Խոնարհաբար խնդրում եմ նստեք:

Ակիմ Ակիմիչն ու Բելոգուբովը ճառում են:

Ահա ներկայացնում եմ ձեզ. իմ երկու դուստրերը՝ Ցուլինկան և Պոլինան: Կատարյալ երեխաներ են, ոչ մի բանից տեղեկություն չունեն, նրանք դեռ տիկնիկներով պիտի խաղան և ոչ թե մարդու գնան: Եվ ցավալի՛ է, որ պիտի բաժանվենք, բայց ինչ կարող ես անել: Այսպիսի ապրանքը տանը չես կարող պահել:

ՅՈՒՍՈՎ — Այո, դա արդեն ճակատագրի օրենքն է: Դրանից չես փախչի: Դարն ինչ որ նախագծել է, նախագծել է մարդը չի կարող...

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ես ձեզ ճշմարիտը կասեմ, Ակիմ Ակիմիչ սրանք իմ ձեռքի տակ խստությամբ են դաստիարակվել ամեն ինչից հեռու են եղել: Որպես օժիտ ես շատ փող չեմ

կարող տալ, բայց բարոյականության համար ամուսին: ներք շնորհակալ կլինեն: Ես երեխաներին սիրում եմ, Ակիմ Ակիմիչ, բայց խիստ եմ, շատ խիստ: (Խտորեն):

Պոլինա, գնացեք կարգադրեցեք թեյ պատրաստեն:

ՊՈԼԻՆԱ — (Ուռի է կանգնում): Իսկույն, մայրիկ: (Գնում է):

ՅՈՒՍՈՎ — Ես էլ եմ խիստ: (Խտորեն): Բելոգուբով:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչ կբարեհաճեք:

ՅՈՒՍՈՎ — Ես խիստ եմ, չէ՞:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Այո-ս, խիստ եք: (Ցուլինկային): Ես էլի նոր բաճկոնակ ունեմ: Այ, տեսեք:

ՅՈՒԼԻՆԿԱ — Շատ լավն է: Դա էլի՞ նույն վաճառականն է նվիրել ձեզ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ոչ, ուրիշը: Սրա մանվածքն ավելի լավն է:

ՅՈՒԼԻՆԿԱ — Գնանք հյուրասենյակ, ես իմ աշխատանքը ձեզ ցույց տամ: (Գնում են):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ր Ր Ր Ր Պ

Ցուսով և Կուկուշինա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչպե՞ս են սիրում իրար, նայելիս հուզվում ես: Երիտասարդին մի բան է պակասում. լավ պաշտոն չունեմ,— ասում է: Չեմ կարող,— ասում է,— կնոջս խաղաղ կյանքով լրիվ ապահովել: Այ, եթե ինձ սեղանավարիչ դարձնեն,— ասում է,— ես կկարողանայի կնոջս պահել,— ասում է: Բայց ցավալի է, չէ՞, Ակիմ Ակիմիչ: Այդպիսի հրաշալի երիտասարդը, այդպես սիրահարված...
ՅՈՒՍՈՎ — (Քթախտ փաշելով): Կամաց-կամաց, Ֆելիսատա Գերասիմովնա, կամաց-կամաց:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Բայց ձեզ, երևի, հայտնի է, թե երբ կբուտանա այդ պաշտոնը: Գուցե դա հենց ձեզանից է կախված: Ես նրա փոխարեն խնդրատու կդառնամ: (Նոնաբեզում է): Գուր չեք կարող իմ խնդիրը չհարգել. ես մայր եմ, քնքուշ մայր, աշխատում եմ հոգալ իմ զավակներին, իմ ձագուկներին բըջանկության համար:

ՅՈՒՍՈՎ — (Ինձ վր լըջացնելուց հետո): Շուտով, շուտով կլի-

նի: Ծա այդ մասին արդեն զեկուցել եմ մեր գեներալին: Իսկ գեներալն ամբողջապես իմ ձեռքումն է: Ինչ որ ասեմ, այն էլ կլինի: Մենք նրան սեղանավարիչ կղարձենք: Ծա որ ուզենամ՝ կղառնա՝ սեղանավարիչ, շուգենամ՝ չի՛ դառնա: Հի՛-հի՛-հի՛... Կղառնա, կղառնա: Գեներալն անաշատեղ է: (Յույց է ապլիս ձեռքը):

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Խոստովանանք լինի ասեմ, ես ամուսիններին նույնիսկ չեմ սիրում: Ի՞նչ են անում նրանք. միայն երկրագունդն են ծանրացնում:

ՅՈՒՍՈՎ — (Փեղված): Մանրացնում են երկիրը, ծանրացնում... և դատարկ-դատարկ դուրս տալիս:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այո-ս: Ամուրի մարդուն տանը ընդունենի էլ վտանգավոր է, մանավանդ, եթե տանը աղջիկներ կան և ջահել կին: Ո՞վ կարող է ասել, թե նա ինչ ունի իր մըտքում: Իմ կարծիքով երիտասարդին հարկավոր է շուտ ամուսնացնել: Տեսո՞ նա ինքը շնորհակալ կլինի, թե չէ հիմար են, ախր, իրենց օգուտը չեն հասկանում:

ՅՈՒՍՈՎ — Այո-ս: Ցրվածությունից է: Կյանքը կենաց ծով է, կկլանի:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ամուրին չի կարող տնտեսություն հիմնել նա տան մասին չի հոգա, պանդոկներ կգնա:

ՅՈՒՍՈՎ — Բայց մենք էլ ենք գնում... դա հանգստություն է աշխատանքից հետո...

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ախ, Ակիմ Ակիմիչ, մե՛ծ տարբերություն կա: Գուք գնում եք, երբ ձեզ հրավիրում են, ուզում են հյուրասիրել, իրենց հարգանքը ցույց տալ ձեզ. իսկ ձեր հաշվին դուք հո չե՞ք գնա:

ՅՈՒՍՈՎ — Ինչպե՛ս կարելի է. ո՛չ, չե՛մ գնա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Հիմա տեսեք. խնդրատուն ինչ-որ գործի համար ամուրի մարդուն կտանի պանդոկ, մի ճաշով կհյուրասիրի և վե՛րջ: Ահագին փող կծախսեն, և ոչ մի գրոշ օգուտ: Իսկ ամուսնացած մարդը, Ակիմ Ակիմիչ, խնդրատունին կասի՝ ինչի՞ս է պետք քո ճաշը, ես ավելի լավ է գնամ տուն և կնոջս հետ ճաշեմ, ընտանեկան կյանքում հանգիստ, իմ օշախո՛ւմ, իսկ դու ինձ կանխիկ փող տուր: Եվ փողը կբերի: Այստեղ երկու օգուտ կա՝ և՛ զգաստ կգա:

Հարբած, և՛ փող կբերի: Քանի՛ տարի է, որ դուք ամուսնացած եք:

ՅՈՒՍՈՎ — Քառասուներեքերորդ տարին է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Տես, է՛: Բայց դեմքով շատ էրիտաջ սարդ եք:

ՅՈՒՍՈՎ — Կանոնավոր կյանքով եմ ապրել... երեկ մեջքիս բանկաներ եմ խփել:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Առողջ մարդու համար ամեն ինչ լավ է, մանավանդ, երբ մարդ հոգով հանգիստ է և ապրում է լիության մեջ:

ՅՈՒՍՈՎ — Չեզ ասեմ, թե բնությունն ինչ խաղեր է խաղում... մարդու գլխին... աղքատությունից՝ հարստություն: Ինձ, տիրուհիս, — սա վաղուց է եղել, — պաշտոնատուն տառան տնային խալաթով, գրագիտությունից միայն զրե՛լ ու կարդալ գիտի... Տեսնեմ, նստած են մարդիկ, բոլորն էլ տարիքավոր, գոռոզ, փքված, բարկացկոտ. այն ժամանակ հաճախ չէին սափրվում, և դա նրանց ավելի գոռոզ տեսք էր տալիս: Վախից լեղուս կարկամել էր: Մի երկու տարի դես ու դեն էին վազեցնում, զանազան հանձնարարություններ էի կատարում, վազում էի օդի, կարկանդակ, կվաս բերելու՝ մեկին խումարից հանելու. և նստում էի ոչ թե սեղանի մոտ, ոչ էլ աթոռի վրա, այլ պատուհանի մոտ, թղթերի կապոցների վրա, գրում էի ոչ թե թանաքամանից, այլ պոմադաչի ժանգոտած բանկայից: Բայց անա մարդ զարձա: Իհարկե, այդ բոլորը մեր շնորհիվ չէր... այլ՝ ի վերուստ... նշանակում է այդպես էլ պիտի լինե՛ր. ես պիտի մարդ դառնայի և բարձր պաշտոն վարի: Մեկ-մեկ ես ու կինս մտածում ենք՝ աստված հանուն ինչի՞ է մեզ իր ողորմածությունն արժանացրել: Ամեն ինչ ճակատագիրն է անում... մեկ էլ բարեգործություն պետք է անել... չբավարենքին օգնել: Այո-ս, հիմա երեք տուն ունեմ, թեկուզ հեռու են, բայց դա ինձ չի խանգարում, շորս ձի եմ պահում: Հեռու լինելը լավ է, և՛ հողն ավելի շատ է, և՛ այնքան էլ աղվակա չէ, և՛ խոսակցությունն ու ասեկոսեն էլ ավելի քիչ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այո, իհարկե: Երեկ տներին կից պարտեզներ էլ տեսեք:

ՅՈՒՍՈՎ — Բա ո՞նց: Ամառվա տապին՝ զովութիւնն և հան-
գըստութիւնն անդամներիդ: Բայց պարծենկոտութիւն
չուն՞մ: Պարծենկոտութիւնը կուրացնում է... Թեկուզ
մուծիկ լինի դիմացինս... ես նրա հետ վարվում եմ եղ-
բայրաբար... մեկ է, հարազատ է... Սառայութեան ժա-
մանակ չի կարելի... առանձնապես չեմ սիրում վերկից
նայողներին, այժմյան այդ կրթվածներին: Դրանց հեռ
խի՛ստ եմ և պահանջո՞ւտ: Շա՛տ են մեծամտացել: Ես
նախապաշարմունքներին չեմ հավատում, որ իբր գիտուն-
ները երկնքից աստղեր են իջեցնում: Տեսել եմ դրանց,
մեզնից, մեղավորներիցս, լավը չեն, ծառայութեան
մեջ էլ այնքան ուշադիր չեն: Ես մի կանոն ունեմ՝ ծա-
ռայութեան շահերի համար ամեն կերպ ճնշել դրանց...
որովհետև դրանք վտանգավոր են: Հասարակ մարդիկ,
Ֆելիսատա Գերասիմովնա, մի տեսակ ավելի մոտ են
սրտիս: Այժմյան խոստովան օրերին պատահում է, որ
մարդը դժբախտութեան մեջ է ընկնում, դե ասենք վառ
առաջադիմութեան համար վճռում են գավառական
ուսումնարանից կամ սեմինարիայի ստորին դասարաննե-
րից: Դե, ինչպե՞ս շօգնես. առանց այն էլ ճակատագիրը
ծեծել է նրան, ամեն ինչից զրկել, ամենքը վիրավորել
են: Հետո այդ մարդիկ ավելի հասկացող և հարգալից
են լինում, ավելի սրտաբաց: Ըստ քրիստոնեական
պարտքի նրան մարդամեջ ես հանում, նա էլ իր ող
կյանքում քեզ շնորհապարտ է մնում, հրավիրում է սա-
նահայր դառնալու: Հետո էլ գալիս է շնորհակալութիւն
հայտնելու ժամանակը... Այ, Բելոգուբովը հո գրագետ էլ
չի, իսկ ես նրան, Ֆելիսատա Գերասիմովնա, որդոս
նման եմ սիրում, նրա մեջ զգացողութիւն կա: Բայց
խոստովանանք լինի աւեմ, ձեր մյուս փեսացուն, ախր,
նա էլ իմ ձեռքի տակ է ծառայում... Այ, նրան կարող
եմ մեղադրել:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իսկ ի՞նչ է որ:

ՅՈՒՍՈՎ — (Լեջանում է): Անբարեհո՞ւյս է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ո՞նց թե: Ախր ո՛ր հարբեցող է, ո՛ր շաւ-
լող, ծառայութեան մեջ հո ծուլլ չի՞:

ՅՈՒՍՈՎ — Այո-ս: Բայց... (Քթախոտ է փաշում) անբարե-
հո՞ւյս է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ախր ինչպե՞ս, հասկացրեք ինձ, տեր իմ
Ակիմ Ակիմիչ, չե՞ որ ես մայր եմ:

ՅՈՒՍՈՎ — Ահավասիկ, բարեհաճեցեք լսել: Նա այնպիսի՛ ազ-
գական ունի... Արիստարխ Վլադիմիրիչ Վիշնևսկին:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գիտեմ:

ՅՈՒՍՈՎ — Անձնավորութիւնն է, կարելի է ասել, անձնավո-
րութիւնն:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գիտեմ:

ՅՈՒՍՈՎ — Իսկ սա նրան չի հարգում:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գիտեմ, գիտեմ:

ՅՈՒՍՈՎ — Կոպի՛տ է վարվում պետերի հետ... անսահման
ամբարտավան... և նույնիսկ այնպիսի մտքեր է արտա-
հայտում... փշացնում է ջահելներին... և առանձնապես
ազատամիտ է: Պետերը պիտի խիստ լինեն:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գիտեմ:

ՅՈՒՍՈՎ — Դե որ գիտեք, ուրեմն կարող եք ինքներդ դատել:
Ի՞նչ ժամանակների հասանք, Ֆելիսատա Գերասիմով-
նա, ապրելու հնար չկա: Իսկ ո՞ւմ պատճառով: Անպի-
տանների՛, լակոտների՛: Հարյուրներով են լույս աշ-
խարհ գցում դրանց, քիչ է մնում խեղդե՛ն մեզ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Էխ, Ակիմ Ակիմիչ, կամուսնանա, կփոխվի:
Իսկ այդ ամենը շիմանալ ես չէի կարող: Ես այդպիսի
մայր չեմ, առանց ետ նայելու, ես ոչինչ չեմ անի: Ես
այսպիսի կանոն ունեմ. հենց որ տեսա մի երիտասարդ
մեր տուն հաճախելը սովորութիւն է դարձրել, իսկույն
մարդ եմ ուղարկում, որ նրա մասին իմանա բոլոր գաղտ-
նիքները, կամ ինքս եմ կողմնակի մարդկանցից հարցու-
փորձով իմանում: Իմ կարծիքով, նրա այդ բոլոր հիմա-
րութիւնները ամուրի կյանքից են առաջ գալիս: Իսկ երբ
կամուսնանա, երբ մենք էլ հարձակում կգործենք նրա
վրա, ապա նա իր քեռու հետ էլ կհաշտվի և լավ էլ կժա-
ռայի:

ՅՈՒՍՈՎ — Նա որ փոխվի, նրա պետերն էլ կփոխվեն: (Փո-
քը-իճջ լսելուց հետո): Առաջվա աստիճանավորները
հիմա չկա՞ն, Ֆելիսատա Գերասիմովնա: Աստիճանավո-

բությունն առկում է ապրում: Չկա ոգին: Ի՞նչ կյանք էր, Ֆելիսատա Գերասիմովնա, դրա՛խտ էր, դրա՛խտ: Մեռնել պետք չէր: Հողո՞ւմ էինք, պարզապես լողում, Ֆելիսատա Գերասիմովնա: Առաջվա աստիճանավորներն արծիվնե՛ր էին, արծիվնե՛ր, իսկ հիմա ջահելներն են, դասից-դեմից մի բան սովորած դատարկարաններ:

Մտնում է Ժաղովը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Խ Ե Գ Ե Ր Ր Գ

Նրանք և Ժաղով:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Համեցե՛ք, համեցե՛ք, Վասիլի Նիկոլայիչ Պոլինան կարոտում էր ձեզ: Աչքը ջուր կտրեց. մեկ այս պատուհանի մոտ էր վազում, մեկ՝ այն: Այնպե՛ս է ձեզ սիրում, այնպե՛ս է սիրում... Ես, ճշմարիտն ասած, այդպիսի բան չէի տեսել: Դուք բախտավոր եք, Վասիլի Նիկոլայիչ: Ձեզ ինչո՞ւ են այդպես սիրում, ասացեք, խնդրեմ:

ՓԱԴՈՎ — Ներեցեք, Ֆելիսատա Գերասիմովնա, ես փոքր-ի՛նչ ուշացա: Ախ, Ակիմ Ակիմիչ: (Գլուխ է տալիս): Ի՞նչ տոբոլ էք այստեղ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ակիմ Ակիմիչն այնքա՛ն բարի է, այնպե՛ս է հոգ տանում իր աստիճանավորների համար... էլ չգիտեմ, թե ինչպես շնորհակալ լինեմ: Նա ինքն է նեղություն քաշել, եկել է ծանոթանալու:

ՓԱԴՈՎ — (Յուսովի՛ն): Շնորհակալ եմ: Ասենք, իզուր եք նեղություն քաշել:

ՅՈՒՍՈՎ — Ես, Ֆելիսատա Գերասիմովնա, ավելի շուտ բեղուցուրովի համար եմ եկել: Հարազատներ չունի, ես նրա հոր փոխարեն...

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — էլ մի ասեք, Ակիմ Ակիմիչ, դուք ինքնե՛րք բնտանիքի տեր եք, և ես հիմա տեսա, որ ամեն կերպ ձգտում եք երիտասարդներին խրախուսել, որ նրանք էլ բնտանիքի տեր դառնան: Ես էլ այդ կարծիքին եմ, Ակիմ

Ակիմիչ: (Ժաղովի՛ն): Դուք չեք կարող պատկերացնել, Վասիլի Նիկոլայիչ, թե ինչպես եմ տառապում, երբ տեսնում եմ, որ երկու սիրահար սրտեր ուրիշ արգելքի են դեմ առնում: Ինչպե՛ս եմ տառապում, երբ մի սիրավեպ կարողա՞նք տեսնում եմ, թե հանգամանքներն ինչպես են արգելում սիրահարներին տեսնվել: Կամ ծնողները համաձայն չեն, կամ վիճակը թույլ չի տալիս: Ես լա՛ց եմ լինում, պարզապես, լա՛ց եմ լինում: Երբեմն որքան դաժան են լինում ծնողները, որ չեն ուզում հարգել իրենց զավակների զգացմունքները: Ոմանք սիրուց նույնիսկ մեռնում են: Քայց երբ տեսնում ես, թե ինչպես ամեն ինչ բարեհաջող էլք պիտի ստանա, բոլոր արգելքները ոչնչանում են, (ոգևորված) սերը հաղթանակում է, և ջահելներն օրինական ամուսնությամբ միանում են, որքա՛ն երջանիկ է զգում մարդը:

Մտնում է Պոլինան:

ՊՈՒՆԱ — Համեցեք, թե՛յլ պատրաստ է: (Ժաղովի՛ն): Վասիլի Նիկոլայիչ: Ամոթ չէ՞, որ ստիպում եք այգբան տառապել: Ես սպասում էի ձեզ, սպասում:

ՓԱԴՈՎ — (Համբուրում է նրա ձեռքը): Մեղավոր եմ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Մոտեցիր և համբուրիր ինձ, զավակս:

ՊՈՒՆԱ — (Ժաղովի՛ն): Գնանք:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Գնանք, Ակիմ Ակիմիչ:

Գնում են: Գալիս են Քեյզուրովը և Յուլիան, քիչ բաժակները ձեռներին:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ր Գ

Քեյզուրով և Յուլիան:

ՅՈՒՍՈՎ — Ինչպես տեսնում եմ, դուք միշտ խաբում եք ինձ:

ՔԵՅԱՐՈՎ — Ես ինչպե՛ս կհամարձակվեմ ձեզ խաբել: Դա ի՞նչ է նշանակում:

Նստում են:

ՅՈՒԼԻՆԿԱ — Տղամարդկանց ո՛չ մի խոսքին չի կարելի հավատալ, բացարձակապես, ո՛չ մի խոսքին:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչո՞ւ եք այդպես վատ խոսում տղամարդկանց մասին:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ինչո՞ւ եմ վատ խոսում, երբ սա իսկական ճշմարտություն է:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ձի կարող պատահել, Դրանք միայն խոսքեր են: Տղամարդիկ օրիորդներին միայն քաղցր խոսքեր են ասում: Իսկ օրիորդները նրանց չեն հավատում, ասում են՝ տղամարդիկ խաբեբաներ են:

ՅՈՒԼԻՆԿԱ — Դուք ամեն ինչ դիտեք: Ձեր կյանքում, երևի, քաղցր խոսքեր շատ եք ասել օրիորդներին:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ես ո՞ւմ ասեի... Ես ասելու ձևն էլ չգիտեմ: Ձեզ հայտնի է, որ ես միայն նոր եմ շրջան մտնում, իսկ առաջ ոչ ոքի հետ ծանոթություն չեմ ունեցել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Եվ դուք ոչ ոքի չե՞ք խաբել:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչի՞ մասին եք հարցնում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Մի՛ ասեք: Ես ձեր ո՛չ մի խոսքին չեմ հավատում: (Երես է դարձնում):

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ախր ինչի՞ համար եք... Դա նույնիսկ վիրավորական է:

ՅՈՒԼԻՆԿԱ — Կարծեմ, կարող եք հասկանալ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Չեմ հասկանում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Չեք ուզում: (Թաշկինակով ծածկում է աչքերը):

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ես, ինչով ուզում եք, կարող եմ ձեզ հավատացնել, որ ես միշտ... ինչպես սիրահարվել եմ, այնպես էլ հիմա... Ես ձեզ արդեն զեկուցել եմ, որ...

ՅՈՒԼԻՆԿԱ — Սիրում եք, բայց ուշացնում եք:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Այո-ս... Հիմա հասկանում եմ: Բայց դա այնպիսի գործ է, որ... որ շուտ չի կարելի...

ՅՈՒԼԻՆԿԱ — Իսկ ինչո՞ւ ժաղովին կարելի է:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Դա բոլորովին ուրիշ բան է: Նա հարուստ քեռի ունի, ինքն էլ կրթված մարդ է, ամեն տեղ կարող է պաշտոն ունենալ: Թեկուզ վարժապետություն էլ անի, էլի հաց կուենենա: Իսկ ես ի՞նչ եմ: Մինչև ինձ սեղանա-

վարի չի պաշտոն շտան, ոչինչ չեմ կարող անել... այո-ս... Հենց դուք ինքներդ էլ չեք ուզենա կաղամբապուր ու շիլա ուտել: Դա միայն մեզ կարելի է, իսկ դուք օրիորդ եք, ձեզ չի կարելի, այո-ս... Իսկ, ա՛յ, հենց պաշտոն ստացա թե չէ, այն ժամանակ ուրիշ հեղաշրջում կլինի:

ՅՈՒԼԻՆԿԱ — Իսկ ե՞րբ կլինի այդ հեղաշրջումը:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Հիմա արդեն շուտ կլինի: Խոստացել են: Հենց որ պաշտոնն ստացա, նույն րոպեին... միայն զգեստ կարել տամ... Ես արդեն մայրիկին էլ եմ ասել: Դուք մի բարկացեք, Յուլիա Իվանովնա, որովհետև ինձանից կախված չէ: Թույլ տվեք ձեր թաթիկը:

Յուլիկան պարզում է ձեռքը, առանց նրան նայելու: Բեյլոգովը համբուրում է:

Արդեն ես ինքս էլ չեմ կարող սպասել:

Գալիս են ժողովը և Պոլինան:

ՅՈՒԼԻՆԿԱ — Գնանք, մենակ թողնենք նրանց:

Դեռ եմ:

Տ Ե Ս Ի Ր Ե Ն Ի Ն Ե Ր Ե Ր Դ

Ժաղով և Պոլինա (նստում են):

ՊՈԼԻՆԱ — Գիտե՞ք ինչ կասեմ ձեզ:
ՔԱԳՈՎ — Ոչ, չգիտեմ:
ՊՈԼԻՆԱ — Միայն, խնդրում եմ, մայրիկին ոչինչ չասեք:
ՔԱԳՈՎ — Չեմ ասի, հանդիստ եղեք:
ՊՈԼԻՆԱ — (Մտածելով): Ես կասեի, բայց վախենում եմ, որ է՛լ չեք սիրի ինձ:
ՔԱԳՈՎ — Ձեզ շտիրե՞մ: Մի՞թե կարելի բան է դա:
ՊՈԼԻՆԱ — Դուք ճի՞շտ եք ասում:
ՔԱԳՈՎ — (Բռնում է նրա ձեռքը): Կսիրե՛մ, կսիրե՛մ, հավատացեք:

ՊԱՆԻՆԱ — Դե, տեսեք, հա՛: Ես կասեմ ձեզ պարզ սրտով (Կամացոյ): Մեր տանը բոլորը խարեւթյուն է, բոլորը, բոլորը, բացարձակապես բոլորը: Խնդրում եմ, ձեզ ինչ էլ որ ասեն, ո՛չ մի բանի չհավատար: Մենք ոչ մի օժիտ չունենք: Մայրիկն ասում է, թե սիրում է մեզ, բայց բոլորովին էլ չի սիրում, այլ ուզում է շուտ մարդու տալ և դուրսից ազատել: Փեսացուների երեսին շողորրոթում է, իսկ հետևից հայհոյում: Մեզ ստիպում է ձեռնալ, կեղծել:

ԺԱԴՈՎ — Դա ձեզ վայրացնում է: Զայրացնում է:

ՊԱՆԻՆԱ — Միայն թե ես չեմ ձեռնում, ես իսկապես սիրում եմ ձեզ:

ԺԱԴՈՎ — Դուք ինձ խելագարութեան կհասցնեք: (Համբուրում է ձեռքը):

ՊԱՆԻՆԱ — Եվ հետո ահա թե ինչ կասեմ ձեզ. մենք բոլորովին անուսում ենք: Յուրիան դեռ որոշ բաներ գիտի, իսկ ես բոլորովին հիմար եմ:

ԺԱԴՈՎ — Ինչպե՞ս թե հիմար եք:

ՊԱՆԻՆԱ — Այնպես, ինչպես հիմարներն են լինում: Ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ կարդացել... Ինչ էլ որ երբևէն ասում եք՝ ոչինչ չեմ հասկանում, բացարձակապես ոչինչ:

ԺԱԴՈՎ — Դուք հրեշտակ եք: (Համբուրում է նրա ձեռքը):

ՊԱՆԻՆԱ — Ես Յուրիանկայից բարի եմ, բայց անհամեմատ հիմար:

ԺԱԴՈՎ — Հենց դրա համար էլ ես սիրում եմ ձեզ, որ չեմ հասցրել ձեզ որևէ բան սովորեցնել, չեմ հասցրել ձեզ սիրող փշացնել: Հարկավոր է ձեզ շուտով տանել այստեղից: Մենք միասին մի նոր կյանք կստեղծենք: Ես սիրով կզբաղվեմ ձեր դաստիարակութեամբ: Ի՞նչ հաճուք է սպասում ինձ:

ՊԱՆԻՆԱ — Ա՛հ, երանի շուտ լինի:

ԺԱԴՈՎ — էլ ինչու՞ հետաձգեք: Ես արդեն վճռել եմ: (Գրեհոս հայացքով նայում է նրան):

Լուսյուն:

ՊԱՆԻՆԱ — Դուք ծանոթ վաճառականներ ունե՞ք:

ԺԱԴՈՎ — Դա ի՞նչ հարց է: Ինչնե՞րի՞դ է պետք:

ՊԱՆԻՆԱ — Հենց այնպես, ուզում եմ իմանալ:

ԺԱԴՈՎ — Բայց չեմ հասկանում, ձեր ինչի՞ն է պետք:

ՊԱՆԻՆԱ — Ահա թե ինչու: Բեղադուրովն ասում է, որ ինքը ծանոթ վաճառականներ ունի, և որ նրանք բաճկոնակներ են փոխում իրեն, իսկ երբ ամուսնանա, այն ծամանակ գործվածքերն կնվիրեն՝ կնոջ զգեստի համար:

ԺԱԴՈՎ — Ահա՛ թե ինչ: Ոչ, մեզ չեն նվիրի: Մենք ձեզ հետ միասին ինքներս կաշխատենք: Այնպես չէ՞, Պոլինա:

ՊԱՆԻՆԱ — (Տրված): Այո-ս:

ԺԱԴՈՎ — Ոչ, Պոլինա, ձեզ համար դեռ անծանոթ է սեփական աշխատանքով ապրելու վտանգը: Դուք ամեն ինչով ապահովված կլինեք: Աստված տա, ինքներդ կտեսնեք: Եվ այն ամենը, ինչ որ մենք ձեռք կբերենք, մերը կլինի, մենք ոչ ոքի պարտական չենք լինի: Դուք այդ հասկանո՞ւմ եք: Այստեղ երկու հաճույք կա. աշխատանքի հաճույքը և, ոչ ոքի հաշիվ չտեսլով, ձեր բարեքն ազատ և հանգիստ տնօրինելու հաճույքը: Իսկ դա բոլոր նվիրներից ավելի լավ է: Ճիշտ է, չէ՞, Պոլինա: Լավ է, չէ՞:

ՊԱՆԻՆԱ — Այո-ս, լավ է:

Լուսյուն:

Ուզո՞ւմ եք մի հանելուկ ասեմ ձեզ:

ԺԱԴՈՎ — Ասեք:

ՊԱՆԻՆԱ — Այն ի՞նչն է, որ քայլում է, բայց ոտքեր չունի:

ԺԱԴՈՎ — Ահա՛ թե ինչ հանելուկ է: Անձրևը:

ՊԱՆԻՆԱ — Այդ ինչպե՞ս է, որ դուք ամեն ինչ գիտեք: Յավա՛կ է, ազնիվ խոսք: Ես ոչ մի կերպ չկարողացա գուշակել: Յուրիան գուշակեց:

ԺԱԴՈՎ — Երեխա՛: Միշտ այդպես երեխա մնացեք:

ՊԱՆԻՆԱ — Իսկ երկնքի աստղերը հաշվե՞լ կարե՞ք՞ է:

ԺԱԴՈՎ — Կարելի է:

ՊԱՆԻՆԱ — Ո՛չ, չի՞ կարելի: Ես ձեզ չեմ հավատա:

ԺԱԴՈՎ — Կարիք էլ չկա հաշվելու համար շաքարավել: Նրանք տրոսն հաշվում են:

ՊԱՆԻՆԱ — Դուք ծաղրում եք ինձ: (Շղթամ է նրանից):

ԺԱԴՈՎ — (Քեմեղուհի): Ես ձեզ ծաղրե՞մ, Պոլինա: Ես ուզում

եմ ամբողջ կյանքս նվիրել ձեզ: Հապա մի լավ նայեք ինձ, ես կարող եմ ձեզ ծաղրել:

ՊԱՆԻՆԱ — (Նայում է նրան): Ո՛չ, ո՛չ...

ԺԱԴՈՎ — Դուք ասում եք, որ հիմար եք: Հիմարը ես եմ: Մաղրեցեք ինձ: Արդեն շատերն են ծիծաղում ինձ վրա: Ես առանց միջոցների, առանց կարողության, ամբողջ հույսս ապագայի վրա դրած, ամուսնանում եմ ձեզ հետ: Ինչո՞ւ ես ամուսնանում,— հարցնում են ինձ:— Ինչո՞ւ Որովհետև սիրո՞ւմ եմ ձեզ, որովհետև հավատո՞ւմ եմ մարդկանց: Որ ես վարվում եմ անխոհեմաբար՝ համաձայն եմ: Իսկ ե՞րբ մտածեմ, ես այնպես եմ սիրում ձեզ, որ ժամանակ չի մնում մտածելու համար:

Մտնում են Կուկուշկինա և Յուսուլը:

ՊԱՆԻՆԱ — (Որոշ չափով զգացված): Ես էլ ձեզ եմ սիրում:

Ժաղվը համբուրում է նրա ձեռքը:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — (Յուսուլին): Տեսե՛ք, ասես աղունիկներ՝ լինեն ղունղունալիս: Մի-խանգարեք նրանց: Սրտառո՞ւ է նայելը:

Մտնում են Քելագուրովը և Յուլիենկա:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Ժաղով, Պաինա, Կուկուշկինա, Քելագուրով և Յուլիենկա:

ԺԱԴՈՎ — (Շուտ գալով՝ բռնում է Պաինայի ձեռքը և բերում Կուկուշկինայի մոտ): Ֆելիսատա Գերասիմովնա, տվե՛ք ինձ այս գանձը:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Խոստովանում եմ, ինձ համար ծանր է նրանից բաժանվելը: Նա իմ սիրելի դուստրն է.. նա օր ծերության իմ մխիթարանքն է եղել... բայց աստված նրա հետ, տարե՛ք նրան... Նրա երջանկությունն ավելի թանկ է ինձ համար: (Թաշկինակով ծածկում է դեմքը):

Ժաղովն ու Պաինան համբուրում են նրա ձեռքերը: Քելագուրովն արտ է առաջարկում նրան: Նստում են:

ՅՈՒՍՈՎ — Դուք իսկական մայր եք, Ֆելիսատա Գերասիմովնա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այո, ես դրանով կարող եմ պարծենալ: (Ջերմորեն): Չէ, աղջիկներին դաստիարակելն անշնորհակալ գործ է: Մեծացնո՞ւմ եմ, մոտդ փայփայո՞ւմ, հետո էլ տալիս ես օտար մարդուն... և ինքդ ո՞րք մնում... սարսափելի՛ է... (Թաշկինակով ծածկում է աչքերը):

ՔԵԼՈԳՈՒՐՈՎ — Մայրիկ, մենք ձեզ մենակ չենք թողնի:

ՊԱՆԻՆԱ ԵՎ **ՅՈՒԼԻԵՆԿԱ** } — (Միասին): Մայրիկ, մենք ձեզ մենակ չենք թողնի:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ԱՆՁՆԸ

ԺԱԴՈՎ:
ՄԻԿԻՆ — նրա բարեկամը, ուսուցիչ:
ԴՈՍՈՒԺԵՎ:

ՅՈՒՍՈՎ:
ՔԵԼՈԳՈՒՐՈՎ:
1 — }
2 — } աստիճանավորներ:
ԳՐԻԳՈՐԻ }
ՎԱՍԻԼԻ } սպասավորներ:

Հյուրերը և սպասավորները մյուս սենյակում են:

(Երկրորդ և երրորդ գործողության միջև անցնում է մտանկ տարի):

Պաինան: Երկրորդ պլանում՝ ետևի վառագայրը, մեղանդում՝ երգեհոն, աջ կողմում՝ բաց դուռ, օրից երևում է մի սենյակ, ձախ կողմում՝ զգեստների կախարան. նախաբեմում, աջ ու ձախ կողմերում՝ սեղաններ ու բազմոցներ:

Տ Ե Ա Ր Ա Ն Ա Ո Ա Ջ Ի Ն

Վասիլին երգեհոնի մտ կանգնած՝ քերք է ընթերցում, Գրիգորին կանգնած է դռան մտ, նայում է դեպի մյտ սենյակ: Մտնում են ժողովը և Միկիկը: Գրիգորին նստեց սղեկցում է, սեղանը սրբում և վրան սփռոց է փռում:

Միկիկն — Դե, ինչ, հին բարեկամս, ինչպե՞ս ես:

ԺԱԴՈՎ — Վատ եմ, եղբայր: (Գրիգորիին): Քեյ տուր մեզ:

Գրիգորին գնում է:

Իսկ դո՞ւ ինչպես ես:

Միկիկն — Ոչինչ, ապրում եմ ինձ համար, կամաց-կամաց ուսուցչություն եմ անում:

Նստում են:

ԺԱԴՈՎ — Եվ շա՞տ ես ստանում:

Միկիկն — Երկու հարյուր ոտբլի:

ԺԱԴՈՎ — Բավականացնո՞ւմ է քեզ:

Միկիկն — Այդպես էլ ապրում եմ՝ միջոցներիս համապատասխան: Ավելորդ զվարճալիքներ, ինչպես տեսնում ես, չեմ ձեռնարկում:

ԺԱԴՈՎ — Այո, ամուրի մարդը կարող է ապրել:

Միկիկն — Դու էլ չպիտի ամուսնանայիր: Մեզ նմանները չպիտի ամուսնանան: Տկլորների՞ս գործն է դա: Կո՞ւշտ ես, տարերքի քամուց որևէ բանով ծածկվա՞ծ ես, պրծավ՞ դնաց: Առածն ասում է՝ մի գլուխը աղքատ չէ, իսկ եթե աղքատ է՝ մեկն է, հո ավելին չէ:

ԺԱԴՈՎ — Արդեն անցած բան է:

Միկիկն — Մի քեզ նայիր, առաջ դու այդպիսի՞ն էիր: Ինչ է, գառիթափ բլուրները ուժասպա՞ռ են արել ձիուդ (Գրիգորին քեյ է բերում: Միկիկը լցնում է):

Մառայում ենք, ուրեմն պիտի ծառայենք, իսկ մեր անձնական կյանքի համար հետո կմտածենք, եթե հաջողությո՞ւն լինի:

ԺԱԴՈՎ — Ինչ արած: Ես նրան շատ սիրեցի:

Միկիկն — Հետո ի՞նչ, որ սիրեցիր: Ուրիշները չե՞ն սիրում:

Ինչ է: Է՛հ, եղբայր, ես էլ եմ սիրել, բայց ա՛հա, չեմ ամուսնացել: Դու էլ չպիտի ամուսնանայիր:

ԺԱԴՈՎ — Բայց ինչո՞ւ, չեմ հասկանում:

Միկիկն — Ետա պարզ: Ամուրին ծառայության մասին է մտածում, իսկ ամուսնացածը՝ կնոջ: Ամուսնացածն անհուսալի է:

ԺԱԴՈՎ — Այ քեզ անմտություն:

Միկիկն — Ոչ, անմտություն չէ: Զգիտեմ, թե ինչեր չէի անի ես այն աղջկա համար, որին սիրում էի: Բայց վճռեցի գո՛հաբեբել, եղբայրս, իմ մեջ սպանել հույժ օրինական զգացմունքը, քան թե ենթարկվել գայթակղությունների:

ԺԱԴՈՎ — Կարծում եմ, որ դա քեզ համար հեշտ չի եղել:

Միկիկն — Ք՛եչ ասել կուզի: Հրաժարվելն առհասարակ հեշտ բան չէ: Իսկ սիրած կնոջից հրաժարվելը, երբ աղքատությունից բացի ուրիշ ոչ մի արգելք չկա... Դու կնոջը շա՞տ ես սիրում:

ԺԱԴՈՎ — Խեղճի՞ պես:

Միկիկն — Է՛հ, բանդ բուրդ է: Խեղճ ք է:

ԺԱԴՈՎ — Ծճմարիտն ասած, չգիտեմ: Գիտեմ միայն այն, որ նա անչափ սիրելի է: Մի աննշան բան կարող է վշտացնել նրան, և նա այնքան սրտաճմլիկ լաց կլինի, որ նրան նայելով՝ ինքդ էլ լաց կլինես:

Միկիկն — Անկեղծորեն ասա ինձ, ինչպե՞ս ես ապրում: Զէ՞ որ մեկուկես տարի կլինի քեզ չեմ տեսել:

ԺԱԴՈՎ — Խնդրեմ: Պատմությունս կարճ է: Ինչպես գիտես, սիրելով եմ ամուսնացել, քիչ զարգացած աղջիկ է, գաստիրակված է հասարակական նախապաշարումներով, ինչպես մեր համարյա բոլոր աղջիկները. երազում էի նրան գաստիրակել մեր համոզմունքներով և ա՛հա մի տարի է, ինչ ամուսնացած եմ...

Միկիկն — Եվ ի՞նչ:

ԺԱԴՈՎ — Հասկանալի է, ոչինչ: Նրան գաստիրակելու համար ժամանակ չունեմ, բացի այդ ես էլ չգիտեմ, թե ինչպես ձեռնամուխ լինեմ այդ գործին: Այսպիսով, նա մնաց իր հասկացությունների շրջանակում. վեճերի ժամանակ էլ, հասկանալի է, ես պիտի զիջեմ նրան: Ինչպես տեսնում ես, վիճակս ետխառնակ է, ուղղելու հնար

էլ չկա: Նա ինձ չի էլ լսում, նա պարզապէս ինձ խելոք մարդ չի համարում: Նրանց հասկացողութեամբ, խելոք մարդն անպայման հարուստ պիտի լինի:

ՄԻԿԻՆ — Ահա՛ թե բանն ուր է հասել: Լավ, իսկ նյութական միջոցներդ...

ԺԱԴՈՎ — Աշխատում եմ առավոտից մինչև գիշերը:

ՄԻԿԻՆ — Եվ, այնուամենայնիվ, չի՞ հերիքում:

ԺԱԴՈՎ — Չէ, ապրել կարելի է:

ՄԻԿԻՆ — Իսկ կի՞նդ:

ԺԱԴՈՎ — Մեկ-մեկ նեղանում է, երբեմն էլ մի քիչ լաց է լինում: Ի՞նչ կարող եմ անել:

ՄԻԿԻՆ — Կարեկցում եմ քեզ: Չէ՛, եղբայր, մենք ամուսնանալու իրավունք չունենք: Այ, ես մի ամբողջ տարի անգործ էի, միայն սև հացով էի ապրում: Իսկ ի՞նչ կանեի, եթէ կին էլ ունենայի:

Մտնում է Դոստոևը:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Նրանք և Դոստոև:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — (Կլոր սեղանի մոտ նստելով): Գարսո՛ն, կյա՛նք բեր:

ՎԱՍԻԼԻ — Որի՞ց կհրամայեք:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — Մնձնու: Մեր կողմանը վայել խորտիկով:

ՎԱՍԻԼԻ — Լսում եմ: (Գնում է դեպի դուռը):

ԴՈՍՏՈՒԺԵՎ — Ֆրանսիական մանանիխով: Լսո՞ւմ ես: Փակել կտամ պանդուկը: Գրիգորի, լարի գործիքը:

ԳՐԻԳՈՐԻ — Իսկույն: (Լաւում է):

ՄԻԿԻՆ — Այ, սա պետք է որ ամուրի լինի:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — Ինչո՞ւ եք ինձ նայում: Ես ծածանի եմ պպասում:

ԺԱԴՈՎ — Ի՞նչ ծածանի:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — Հիմա կգա, շիկակարմիր մորուքով, ես նրան կուտե՛մ:

Վասիլին օդի է քերում:

Դու, Վասիլի, այնտեղ աչքդ շորս արա, հենց որ կկամ, ինձ իմաց տուր:

Լսվում է երաժշտությունը:

Պարոնայք, տեսե՛լ եք, թե հարբած գերմանացիներն ինչպէս են լաց լինում: (Ընդօրինակում է լացող գերմանացու):

Ժողովն ու Միկինը ծիծաղում են: Երաժշտությունը դադարում է:

ՄԻԿԻՆ — (Ժաղովի): Դե, մնաս բարով: Մի օր կանցնեմ քեզ մոտ:

ԺԱԴՈՎ — Գնաս բարով:

Միկինը գնում է:

ՎԱՍԻԼԻ — (Դոստոևին): Համեցեք, եկավ:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — Ասա գա այստեղ:

ՎԱՍԻԼԻ — Չի գալիս: Նստեց ետեի սենյակում:

ԴՈՍՏՈՒԺԵՎ — (Ժաղովին): Քաշվում է: Մնաք բարով: Իսկ եթե չեք գնա՝ ես կգամ, կզրուցեմ ձեզ հետ, ձեր կերպարանքն ինձ դուր եկավ: (Գնում է):

ԺԱԴՈՎ — (Վասիլիին): Կարդալու մի բան տուր ինձ:

ՎԱՍԻԼԻ — (Գիրք է մատուցում): Բարեհաճեցեք այս հոդվածը կարդալ: Հավանում եմ:

Ժողովը կարդում է: Մտնում են Ցուտովը, Բելագուրովը, 1-ին և 2-րդ աստիճանավորները:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Ժողով, Ցուտով, 1-ին և 2-րդ աստիճանավորներ:

ԲԵԼՈՂՈՒԲՈՎ — Ակիմ Ակիմիչ, մենք այնտեղ ճաշեցինք, իսկ այստեղ թույլ տվեք գինով հյուրասիրեմ ձեզ, երաժշտություն էլ կլսենք:

ՅՈՒՍՈՎ — Հյուրասիրիք, հյուրասիրիք:
ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ի՞նչ կհրամայիք: Շամպայն, այո՞ւ:
ՅՈՒՍՈՎ — Թող կորչի՛...
ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Իսկ ուայնվայն-ս: Նստեցիք, պարոնայք:

Բելոգուբովից բացի, ամենք նստում են:

Վասիլի, ուայնվայն բեր, արտասահմանյան լիքքի՛:

Վասիլին գնում է:

Ա՛, եղբայրս, բարև ձեզ: Չէի՞ք բարեհաճի, արդյոք, մեզ հետ միասին, ընկերովի... (Մտտեկում է Ժաղովին):

ԺԱԴՈՎ — Շնորհակալ եմ: Ես չեմ խմում:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչ եք ասում, եղբայր, խնդրում եմ: Ախր իմ կենացն է... մի գավաթ... մենք այժմ ազգականներ ենք: (Վասիլին գինի է բերում, Բելոգուբովը մտտեկում է իր սեղանին): Լցրո՛ւ:

Վասիլին ցնում է:

ՅՈՒՍՈՎ — Դե, կենացդ, եղբայր: (Վերցնում է գավաթը և ոտֆի կանգնում):

1-ԻՆ և 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՆԵՐ — Չե՞ր կենացը: (Վերցնում են գավաթները և ոտֆի կանգնում):

ՅՈՒՍՈՎ — (Մատնացույց է անում Բելոգուբովի գլուխը): Այս ճակատի մեջ, այս գլխում ես միշտ մեծ խելք եմ նկատել:

Գավաթներն իբրև են զարկում:

Համբուրվենք:

Համբուրվում են:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Թշ, թույլ տվեք ձեր ձեռքը համբուրեմ:

ՅՈՒՍՈՎ — (Անոթը ետ առնելով): Պետք չէ, պետք չէ: (Նրստում է):

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ես ձեր միջոցով եմ մարդ դարձել:

1-ՐՆ ԵՎ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՆԵՐ — Թույլ տվեք: (Գալվաթները զարկում են Բելոգուբովի գավաթին, խմում և նստում):

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Գավաթը լցնում է և սկստեղով մատուցում Ժաղովին): Եղբայրս, շնորհ արեք, խնդրում եմ:

ԺԱԴՈՎ — Ես ձեզ ասացի, որ չեմ խմում:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Չի կարելի, եղբայրս, ինձ կվիրավորեք:

ԺԱԴՈՎ — Դա ձանձրալի է, վերջապես:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Եթե գինին հաճելի չէ, ասեք ինչո՞վ պատվեմ ձեզ: Ինչ որ ցանկանաք, եղբայրս, ես ամեն ինչ մեծ ուրախությամբ...

ԺԱԴՈՎ — Ես ոչինչ չեմ ուզում: Հանգիստ թողեք ինձ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Դե, ինչպես կկամենաք: Չգիտեմ, եղբայր, թե ինչու եք ինձ վիրավորում: (Գնում է իր սեղանի մոտ):

ՅՈՒՍՈՎ — (Յածրածայն): Թո՛ղ դրան:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Նստում է): Պարոնայք, մի-մի գավաթ էլ: (Լցնում է): Չէի՞ք հրամայի, արդյոք, հրուշակեղեն էլ բերել տամ: Վասիլի, քաղցր կարկանդակներ բեր, առատորե՛ն:

Վասիլին գնում է:

ՅՈՒՍՈՎ — Այսօր ոնց որ շատ ես բացվում: Երևում է լավ ես բռնացրել:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Գրպանը ցույց տալով): Վերջապես բռնվեց: Իսկ ո՞ւմ եմ պարտական: Ամեն ինչով՝ ձե՛զ:

ՅՈՒՍՈՎ — Երևում է ձանկդ ես գցել:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Գրպանից թղթադրամների մի կապոց նանելով): Ահա՛:

ՅՈՒՍՈՎ — Ես քեզ ճանաչում եմ, ձեռքդ սխալ չի աշխատի:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Դրամը պահելով): Չէ՛, ներողություն: Հապա ո՞ւմ եմ պարտական: Եթե դուք չլինեիք, ես ի՞նչ կարող էի հասկանալ: Ո՞վ է ինձ մարդ դարձրել, ո՞ւմ

շնորհիվ սկսեցի ապրել: Չե՞ր թևի տակ եմ դաստիարակվել: Մեկ ուրիշը տասը տարում էլ չէր հասկանա այն բոլոր նրբությունները և նեղը գցելը, որոնք ես սովորեցի շորս տարում:

Ամեն բանի օրինակը ձեզանից եմ

վերցրել, թե չէ իմ խելքով ես ի՞նչ կարող էի անել: Ոչ մի հայր իր որդու համար չէր անի այն, ինչ որ դուք եք արել ինձ համար: (Աչքերն է սրբում):

ՅՈՒՍՈՎ — Դու ազիվ հոգի ունես. դու կարող ես զգալ, իսկ ուրիշները չեն կարող:

Վասիլին կարկանդակ է բերում:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Ի՞նչ կլինի ես: Հիմարի մեկը: Իսկ հիմա հասարակության անդամ եմ, ամենքը հարգում են, քայլում եմ քաղաքում՝ բոլոր վաճառականները խոնարհ գլուխ են տալիս. երբ հյուր են կանչում, չգիտեն, թե որտեղ նստեցնեն. կինս սիրում է ինձ: Իսկ ի՞նչ բանի համար պիտի սիրի ինձ, հիմարիս: Վասիլի՛, կոնֆետ ունե՞ք, թանկանոց կոնֆետ:

ՎԱՍԻԼԻ — Կարելի է ճարել:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — (Յուսովին): Կնոջս համար եմ ուզում: (Վասիլիին): Դու թղթի մեջ, ուրեմն, փաթաթիր բուլ-բուլ՝ Ստացիր ինչքան ուզում ես, ոչինչ չեմ խնայի:

Վասիլին գնում է:

Կա՛ց: Հրուշակեղեն էլ դիր մի քանի տեսակ:

ՅՈՒՍՈՎ — Բավական է, երես կանոնի:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Չի կարելի: (Վասիլիին): Ամեն ինչ դիր, լսո՞ւմ ես:

ՎԱՍԻԼԻ — Լսում եմ: (Գնում է):

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Սիրում եմ, շատ եմ սիրում կնոջս: Սիրաշահես, գոհ պահես, նա էլ շատ կսիրի, Ակիմ Ակիմի: Ես ի՞նչ եմ նրա առաջ: Նա կրթված է... Այսօր զգեստ գնեցի նրա համար... այսինքն՝ ոչ թե գնեցի, այլ հենց այնպես վերցրի, հետո կհաշվենք:

ՅՈՒՍՈՎ — Միևնույն է: Մի՞թե հարկավոր է փող տալ: Կարող է որևէ գործ պատահի, և քվիտ կլինեք: Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

Վասիլին քրթի մեջ փաթաթած կոնֆետ է բերում:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Դիր գլխարկիս մեջ: Մի-մի գավաթ էլ (Լցնում է): Վասիլի՛, ևս մի շիշ:

ՅՈՒՍՈՎ — Հերի՛ք է:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Ոչ, թույլ տվեք: Այստեղ կարգադրողը դուք չեք, ես եմ:

Վասիլին գնում է:

Ն. ԻՆ ԱՍՏԻՉԱՆԱՎՈՐ — Ի՞նչ դեպք տեղի ունեցավ: Մի գրագիր կար մեզ մոտ, անպետքի մեկը: Ի՞նչ խաղ է խաղացել: Դատավճռից մի կեղծ պատճեն է հանել (գրել է ինչ որ խելքին փչել է), բոլոր ատենակալների փոխարեն ինքը ստորագրել ու տարել է հայցվորին: Իսկ գործը հետաքրքիր, մեծ գումարի գործ էր: Միայն թե պատճենը հայցվորին չի հանձնել, այլ ուղղակի ցույց է տվել: Դե, նրանից մի մեծ գումար է վերցրել: Հետո հայցվորը գնացել է դատարան և ի՞նչ. պարզվել է, որ գործը բոլորովին այդպես չէ:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Դա արդեն սրիկայություն է: Դրա համար հարկավոր է վճարել:

ՅՈՒՍՈՎ — Այո՛, հենց վճարել: Աստիճանավորներին մի՛ արատավորիր: Վերցրու, բայց գործի դիմաց, և ոչ թե սրիկայաբար: Այնպես վերցրու, որ խնդրարկուն էլ չվնասվի, դու էլ գոհ մնաս: Օրենքով ապրիր, ապրիր այնպես, որ գայլերն էլ կուշտ լինեն, ոչխարներն էլ՝ ողջ: Ի՞նչ կարիք կա մեծ-մեծ բաների հետևից ընկնել: Հավերժ հատիկ-հատիկ են կտցում և կշտանում են: Իսկ դա՞, ի՞նչ մարդ է դա: Այսօր չէ, վաղը զինվոր կքշեն:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — (Լցնում է գավաթը): Համեցեք, Ակիմ Ակիմի... Ինչ որ խնդրեմ ձեզանից, չե՞ք մերժի: Ես ձեր ոտքերը կընկնեմ:

ՅՈՒՍՈՎ — Խնդրիր:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Հիշո՞ւմ եք, անցյալ անգամ, որ «По улице МОСТОВОЙ» երաժշտության տակ պարեցիք, հը՞:

ՅՈՒՍՈՎ — Տեսեք, ի՞նչ է մտածել:

ԲԵՆԴՈՒՆՅԱՆ — Երջանկացրեք մեզ, Ակիմ Ակիմի: Այնպես, որպեսզի ես իմ ողջ կյանքում հիշեմ:

զալով մեզ երջանկացնեիք... Ես ու կինս դեռ ջահելներ ենք, խորհուրդներ կտայիք մեզ, կխրատեիք, թե օրենքով ինչպե՞ս պիտի ապրենք և ինչպե՞ս կատարենք բոլոր պարտականությունները: Կարծում եմ, եթե մարդ քարից էլ շինված լինի, էլի ձեզ լսելուց հետո կազդվի:

ՅՈՒՍՈՎ — Մի օր կանցնեմ: (Վերցնում է լրագիրը):

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Գավաթը լցնում է և մոտենում ժաղովին): Այս անգամ, եղբայրս, էլ ձեռք չեմ քաշի ձեզանից:

ԺԱԴՈՎ — Ինչո՞ւ չեք թողնում կարգամ: Հետաքրքիր հողված է ընկել ձեռքս, իսկ դուք շարունակ խանգարում եք:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Նստում է ժաղովի կողքին): Եղբա՛յրս, դուք իզուր եք նեղանում ինձանից: Դե՛ն պահեք այդ ամբողջ թշնամությունը, եղբայր: Անուշ արեք: Հիմա սա ինձ համար ոչինչ չարժի: Այո՛ւ: Ապրենք որպես ազգականներ:

ԺԱԴՈՎ — Մենք ձեզ հետ չենք կարող ապրել ազգականների պես:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչո՞ւ:

ԺԱԴՈՎ — Մենք հարմար զույգ չենք:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Հա՛, իհարկե, ամեն մեկն իր բախտին է արժանանում: Ես հիմա բախտավոր եմ, իսկ դուք աղքատության մեջ եք: Ի՞նչ կա որ, ես չեմ հպարտանում: Սա հենց այն է, թե ով ինչ բախտի է արժանացել: Ես հիմա մի ամբողջ ընտանիք եմ պահում, մայրիկին էլ: Ես գիտեմ, եղբայր, որ դուք կարիքի մեջ եք. գուցե ձեզ փո՞ղ է հարկավոր. չվիրավորվեք, ինչքան կարող եմ... Ես դա նույնիսկ պարտք էլ չեմ համարի: Հարազատների մեջ ի՞նչ հաշիվ:

ԺԱԴՈՎ — Ինչի՞ց ելնելով փորձեցիք դրամ առաջարկել ինձ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Եղբա՛յրս, ես հիմա լիության մեջ եմ, պարտքըս է հրամայում ինձ, որ օգնեմ ձեզ: Ես ձեր աղքատությունը տեսնում եմ, եղբա՛յրս:

ԺԱԴՈՎ — Ես ձեր ի՞նչ եղբայրն եմ: Թողե՛ք ինձ:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — Ինչպե՞ս պողո՞ւմ... սրտանց առաջարկեցի ձե՛զ: Ես, եղբայրս, քեն պահող չեմ ձեզ նման: Ես իմանեմ խղճում եմ, երբ նայում եմ ձեզ և ձեր կնոջը: (Հեռանում է Ֆուսովի մոտ):

ՋՈՒՍՈՎ — (Լրագիրը շարժում է): Ինչեր ասես գրում եմ:

Բարոյախոսական ոչինչ չկա: (Լցնում է Բելոգուբովի գավաթը): Դե, խմիր, վերջացրու, գնանք: **ԲԵԼՈԳՈՒԲՈՎ** — (Խմում է): Գնանք:

Վասիլիև և Գրիգորև մատուցում են երանց շննվները:

ՎԱՍԻԼԻ — (Բելոգուբովին է մատուցում երկու փաթեթ): Ահա, վերցրեք:

ԲԵԼՈԳՈՒԲՈՎ — (Հուզմունքով): Կնոջս համար: Միրում եմ, այո՛ւ:

Գնում են: Գալիս է Գասուժը:

Տ Ե Ս Ե ր ան չ ո Ր Ր Ր Ր ղ

Ժազով և Գասուժ:

ԳՈՍՈՒԺՅՎ — «Ազոսականների երամի են նման»:

ԺԱԴՈՎ — Իրավացի եք:

ԳՈՍՈՒԺՅՎ — Եկեք գնանք Մարինա Ռոշչա:

ԺԱԴՈՎ — Չեմ կարող:

ԳՈՍՈՒԺՅՎ — Ինչո՞ւ: Ընտանիք ունեք, հա՞: Երեխաների՞ն

պիտի պահեք:

ԺԱԴՈՎ — Երեխաներ չպիտի պահեմ, իսկ կինս տանն սպասում է:

ԳՈՍՈՒԺՅՎ — Վաղո՞ւց է, որ չեք տեսնվել ձեր կնոջ հետ:

ԺԱԴՈՎ — Ինչպե՞ս թե վաղուց: Այսօր առավոտվանից:

ԳՈՍՈՒԺՅՎ — Դե, դա վաղուց չէ: Կարծեցի, թե երեք օր կլինի:

Ժազովը եայում է երան:

Ինչո՞ւ եք նայում ինձ: Ես գիտեմ, թե ինչ եք մտածում իմ մասին: Դուք մտածում եք, որ ես էլ այնպիսին եմ, ինչպիսին այն ֆրանտներն էին, որ գնացին: Ուրեմն, սխալվում եք: Նրանք ավանակներ են՝ առյուծի մորթով: Միայն

մորթին է սարսափազդու եմ ահա վախեցնում են մո-
ղովրդին:

ԺԱԴՈՎ — Ճիշտն ասած, ոչ մի կերպ չեմ կարող որոշեք, բե
ղուք ինչ մարդ եք:

ԴՈՍՈՒԺԵՎ — Ենդրե՛մ. նախ՝ ես ուրախ մարդ եմ, երկրորդ՝
հիանալի իրավաբան: Դուք ուսում առած մարդ եք, ես
դա անստեղծ եմ, ես էլ եմ ուսում առած: Աշխատանքի
ընդունվեցի փոքրիկ ոռնիկով. կաշառք վերցնել չեմ
կարող, հոգիս չի հանդուրժե, բայց հարկավոր է մի որևէ
բանով ապրել: Եվ ահա, խելքս զլուխս ժողովեցի, անցա
փաստաբանության, սկսեցի վաճառականների համար
սրտաձմրիկ դիմումներ գրել: Դե, եթե անտառ չենք գնում,
եկեք խմենք: Վասիլի՛, օղի:

Վասիլին գնում է:

ԺԱԴՈՎ — Ես չեմ խմում:

ԴՈՍՈՒԺԵՎ — Որտե՞ղ եք ծնվել: Դե, դատարկ բան է դա:
Ինձ հետ կարեցի է: Արեմն այսպես. սկսեցի սրտաձմրիկ
դիմումներ գրել: Ախր դուք չգիտեք, թե դրանք ինչ ժո-
ղովուրդ են: Ես հիմա կպատանեմ ձեզ:

Մտնում է Վասիլին:

Լցրու երկուսըս Սաացիք ամբողջ գրաֆիկի համար:

ԺԱԴՈՎ — Ինձանից էլ՝ թեյի համար:

Վասիլին գնում է:

ԴՈՍՈՒԺԵՎ — Խմե՛նք:

ԺԱԴՈՎ — Լավ, միայն ձեր խաթեր համար. թե չէ, իսկա-
պես չեմ խմում:

Բաժակներն իբր եք զարեում և խմում: Դատածն էի՛ է
լցնուք:

ԴՈՍՈՒԺԵՎ — Մորուքավորի համար խնդրազեր գրիր, թանկ է
մի վերցրու, ես կթամքի քեզ: Այրտեղից ծնունդ կանի՛

տնավարությունը. «Դե, ա՛ռ, թուղթ մրտող, սա էլ քեզ՝
օղու համար»: Օ՛, անսանձ բարկություն առաջացավ իմ
մեջ դրանց նկատմամբ: Խմե՛նք: «Եթե ըմպիցեմ՝ մեռա-
նիցեմ, եթե ոչ ըմպիցեմ՝ գարձայա մեռանիցեմ. արդ
հաճո է ըմպիցեմ և մեռանիցեմ»:

Խմում են:

Սկսեցի նրանց համար գրել իրենց ճաշակով: Թրինակ,
հարկավոր է ժուրհակը ներկայացնել բռնազանձման հա-
մար և ընդամենը մի տասը տող գրելու բան է, իսկ ես
գրում եմ շորս թերթ: Սկսում եմ այսպես. «Յանրաբեռ-
նրված լինելով բազմանդամ ընտանիքով, այսբան անս-
ձով... Եվ իրար հետևից շարում եմ անձերին՝ իրենց
զարդաբանդակներով: Այնպես ես գրում, որ նա լաց է
լինում, իսկ ամբողջ ընտանիքը հիստերիկայի մեջ հե-
կեկում է: Մաղդում ես նրան և դրա դիմաց վերցնում
մի կույտ փող, նա հարգում է քեզ մինչև գոտկատեղը
խոնարհվում քո առաջ, թեկուզ պարան հյուսիր նրանից,
եկիր նրան ինչպե՞ս կամենաս: Նրանց բոլոր շաղիկ զո-
բանչեքը, բոլոր տատիկները հարուստ հարսնացուներ
են խնամախառում քեզ համար: Շատ լավ մարդ ես,
նրանց սրտումն ես: Խմե՛նք:

ԺԱԴՈՎ — Քավական է:

ԴՈՍՈՒԺԵՎ — Քմ կենացը:

ԺԱԴՈՎ — Դե, որ ձեր կենացն է...

Խմում են:

ԴՈՍՈՒԺԵՎ — Մարդ պիտի հոգեկան մեծ ուժ ունենա, որ-
պեսզի նրանցից կաշառք չվերցնի: Ազնիվ աստիճանա-
վորների վրա հենց նրանք կծիծաղեն. ստորացնելու հա-
մար պատրա՛ստ են, բայց դա նրանց համար ձեռնտու
չէ: Քարսի՛րտ պետք է լինել: Քաջ՝ ձևանալու համար,
ձիշտն ասած, հիմքեր էլ չկան: Քաշի՛ր նրա վրայից մուշ-
տակը, պրծավ-զնաց: Ափսոս, որ չեմ կարող: Ես նրան-
ցից փող եմ վերցնում միայն նրանց տգիտության համար

ՎԱՍԻԼԻ ՆԻԿՈԼԱՅԻՉ ԺԱԴՈՎ:

ՊՈԼԻՆԱ — նրա կինը:

ՅՈՒԼԻԱՎԱ — Քելոգորովի կինը:

ՅԵԼԻՍԱՍԱ ԳԵՐԱՍԻՄՈՎՆԱ ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ:

Աղբատիկ սենյոկ, աչ կոզմում՝ պատուհան, պատուհանի մտ՝ սեղան, ձախ կոզմում՝ հայելի:

Տ Ե Ա Ր Ա Ն ա ո ա ջ Ի ն

ՊՈԼԻՆԱ — (Մենակ է, նայում է պատուհանից դուրս): Ա՛հ, ինչ ձանձրալի է... (Երգում է):

«Մայրիկ, աղավնյակս, հոգուս արեզակ, իզճա, հարազատս, զավակիդ միակ»:

(Միծաղում է): Ինչ երգ է մտել գլուխս: (Նորից մտածմունքի մեջ է ընկնում): Քիչ է մնում մարդ ձանձրույթից մեռնի: Գուցե խաղաթղթով բախտս բանա՞մ: Ի՞նչ կա որ, դա դժվար բան չէ: Կարելի է, կարելի է: Ուրիշ բաներ չէ, իսկ խաղաթղթեր ունենք: (Խաղաթղթերը հանում է սեղանի դաբակից): Ինչքա՞ն եմ ուզում մեկի հետ խոսել: Գոնե մեկը գար. ա՛յ թե կուրախանայի: Թե չէ սա ինչի՞ է նման, մենակ նստիր, միշտ մենակ... Ի՞նչ ասեմ, զրուցել սիրում եմ: Մայրիկի մոտ լավ էր, լույսը բացվում էր թե չէ, բլբլացնում էինք ու բլբլացնո՞ւմ, չէինք էլ նկատում, թե օրն ինչպես անցավ: Իսկ հիմա մոտո՞ղ մարդ չկա, որ հետը մի երկու խոսք խոսես: Չվազե՞մ բրոջս մոտ: Բայց արդեն ուշ է: Ինչ հիմարն եմ, ինչո՞ւ շուտ գլխի լընկա: (Երգում է):

«Մայրիկ, աղավնյակս, հոգուս արեզակ»...

Ա՛հ, գուշակելն էլ մոռացա... Իսկ ի՞նչ գուշակեմ: Հա՛ջ գուշակեմ, թե ես նոր գլխարկ կունենա՞մ շուտով: (Խա-

և խմիչքի եմ տալիս: Է՛խ, ինչ հավես ունեիր, որ ամուսնացաք: Խմե՛նք: Ձեր անունն ի՞նչ է:

ԺԱԴՈՎ — Վասիլի:

ԴՈՍՈՒԺԵՎ — Անվանակից ես ինձ: Խմե՛նք, Վասյա:

Խմում են:

Տեսնում եմ, լավ մարդ ես:

ԺԱԴՈՎ — Ես ի՞նչ մարդ եմ: Ես երեխա եմ, էյանքի մասին ոչ մի հասկացողություն չունեմ: Այն բոլորը, ինչ որ ձեզանից լսեցի, նորություն է ինձ համար: Ծա՛նք է: Չգիտեմ, կկարողանա՞մ, արդյոք, դիմանալ: Չորսբոլորս անբարոյականություն է, ուժս՝ պակաս: Հապա ինչո՞ւ եմ մեզ ուսուցանել:

ԴՈՍՈՒԺԵՎ — Խմիր, կթեթևանաս:

ԺԱԴՈՎ — Ոչ, ոչ: (Գլուխը կախում է ձեռքերի վրա):

ԴՈՍՈՒԺԵՎ — Ուրեմն ինձ հետ չե՞ս գալիս:

ԺԱԴՈՎ — Չեմ գալիս: Ինչո՞ւ ինձ խմացրիր: Այս ի՞նչ արեցիր ինձ հետ:

ԴՈՍՈՒԺԵՎ — Դե, մնաս բարով: Այսուհետև ծանոթներ կլինենք: Հարբեցի՛ր, եղբայր: (Սեղմում է ժաղովի ձեռքը): Վասիլի, մանտոս... (Շիճելը հագնելով): Դու ինձ խիստ մի դատիր: Ես կորած մարդ եմ: Աշխատիր ինձանից լավ լինես, եթե կարող ես: (Գնում է մինչև դուռը և վերադառնում): Հա՛: Ահա քեզ իմ մեկ խորհուրդը ևս: Ձեռք թեթև է, բան է, իմ թեթև ձեռքով եթե կսկսես խմել, ապա գինի չիմես, խմիր օղի՛: Գինին մեր գրպանի բանը չէ՛, իսկ օղին, եղբայր, ամենից լավն է. և՛ վիշտդ կմոռանաս, և՛ էժան է: Adeu: (Գնում է):

ԺԱԴՈՎ — Չէ, խմելը լավ բան չէ: Ամենևին էլ չի թեթևացնում, ավելի ծանրացնում է: (Մտքի մեջ է ընկնում: Վասիլին մյուս դահլիճից ստացած պատվերով, լսում է երգեցողներ: Հնչում է «Лучинушка»-ն: Ժաղովը երգում է): «Лучинушка, лучинушка березовая»...

ՎԱՍԻԼԻ — Խնդրում եմ... Կավ չէ... Անվայելուչ է... Այո-ս...

Ժաղովը մեհենայրեն հագնում է շիճելը և գնում:

դա՛րարտերը բացում է): Կունենա՛մ, կունենա՛մ... (Մալի է տալիս, մտածմունքի մեջ ընկնում, ապա նորից երգում):

«Մայրիկ, աղափնյակս, հոգուս արեգակ,
հղճա, հարազատս, զավակիդ միակս:

Մտնում է Յուլիենկան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Բ Կ Բ Ե Ր Դ

Պոլինա և Յուլիենկա:

ՊՈԼԻՆԱ — Բարև՛, բարև՛:

Համբուրվում են:

ՅՈՒԼԻՆԿԱ — Չէ, ես միայն մեկ բուսակով եմ եկել քեզ մոտ:

ՊՈԼԻՆԱ — Ախ, ինչ լա՛վ ես հագնված, բույրիկես:

ՅՈՒԼԻՆԿԱ — Հա, ես հիմա ինձ համար գնում եմ միայն արտասահմանից բերված ամենալավն ու ամենանորը:

ՊՈԼԻՆԱ — Դու բախտավոր ես, Յուլիենկա:

ՅՈՒԼԻՆԿԱ — Այո, իմ մասին կարող եմ ասել, որ ես բախտավոր եմ: Իսկ դու, Պոլինկա, ինչպես ե՛ս ապրում: Սարսափելի՛ է: Հիմա բոլորովին էլ այդպես չեն ապրում: Հիմա ընդունված է, որ ամենքն էլ շքեզություն մեկ ապրեն:

ՊՈԼԻՆԱ — Ի՞նչ անեմ: Ես մեզավա՛ր եմ, ինչ է:

ՅՈՒԼԻՆԿԱ — Մենք երեկ զբոսադի գնացինք: Այնպես ուրախ էր այնտեղ, հրա՛շք էր: Մի վաճառական մեզ ընթերցում էր հյուրասիրում, շամպայնո՛վ, մրգերո՛վ:

ՊՈԼԻՆԱ — Իսկ ես միշտ մեհնակ նստած եմ տանը, ձանձրույթից մեռնում եմ:

ՅՈՒԼԻՆԿԱ — Բա՞, Պոլինա, ես հիմա բոլորովին այն չեմ, ուրիշ եմ: Դու չես կարող պատկերացնել, թե փողն ու լավ կյանքը ոնց են ազնվացնում մարդուն: Տան գործերով ես բոլորովին չեմ զբաղվում. գտնում եմ, որ դա

առար բան է: Հիմա ես, հագուստից և արգրուզարգից բացի, ամեն ինչ արհամարհում եմ: Իսկ դո՛ւ, դո՛ւ. դա սարսափելի՛ է: Բա քո ամուսի՞նք. ասա, խնդրեմ, ի՞նչ է անում:

ՊՈԼԻՆԱ — Նա ինձ չի թողնում, որ նույնիսկ ձեր տուն գամը միշտ կարգադրում է նստել տանը և աշխատել:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ի՞նչ հիմարություն: Իրեն խելաքի տեղ է գնում, բայց իսկի չգիտի, թե մարդիկ հիմա ինչպես են ապրում: Նա պիտի իմանա, որ մարդը ստեղծվել է հասարակութային համար:

ՊՈԼԻՆԱ — Ի՞նչպե՛ս, ինչպե՛ս ասացիր:

ՅՈՒԼԻՆԿԱ — Մարդը ստեղծվել է հասարակութային համար: Դա ո՛վ չգիտի: Հիմա գա բոլորին էլ հայտնի է:

ՊՈԼԻՆԱ — Լավ, ես գա կասեմ նրան:

ՅՈՒԼԻՆԿԱ — Գոնե մի անգամ փորձիր գծովել նրա հետ:

ՊՈԼԻՆԱ — Փորձե՛լ եմ, ի՞նչ օգուտ: Նա միշտ իրավացի է գուրա գալիս, մեզավորք ես եմ չլինում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Իսկ նա սիրո՞ւմ է քեզ:

ՊՈԼԻՆԱ — Շատ է սիրում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Իսկ դու նրա՞ն...

ՊՈԼԻՆԱ — Ես էլ եմ սիրում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Դե, ուրեմն ի՞նքդ ես մեզավորք, հոգիս: Գուրգուրանքով տղամարդու վրա չես ազդի: Դու նրան գուրգուրում ես, նա էլ ձեռքերք ծալած նստում է և ո՛չ իր մապն է մտածում, ո՛չ էլ՝ քո:

ՊՈԼԻՆԱ — Նա շատ է աշխատում:

ՅՈՒԼԻՆԿԱ — Դե, ախր, նրա այդ աշխատանքից ի՞նչ օգուտ: Ա՛յ, իմ ամուսինը քիչ է աշխատում, բայց արի տես, թե ո՞նց ենք ապրում: Հարկավոր է ճիշտն ասել, Օնիսիմ Պանֆիլյը տան համար հիանալի մարդ է, իսկական տնարար: Ի՞նչ ասես, որ չկա մեր տանը, տեռնեթր միայն: Եվ ինչ կարճ ժամանակում: Որտեղի՞ց էլ գտնում է: Իսկ քո՞նք: Սա ի՞նչ է, ի՞նչ: Ո՞նց եք ապրում: Խայտառակություն է:

ՊՈԼԻՆԱ — Նա մի գլուխ ուտում է՝ նստիր, աշխատիր, ուրիշներին մի նախանձիր, մենք էլ լավ կապրենք:

ՅՈՒԼԻՆԿԱ — Ախր գա ե՞րբ կլինի: Մինչև զլուխ գա՛ կպատու-

վես: Էլ հաճույքն ինչի՞դ է պետք: Դանակը ոսկորին կհասնի:

ՊԱՆԻՆԱ — Բա ի՞նչ անեմ:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Նա ուղղակի բռնակալ է: Դու նրա հետ երկար-բարակ մի խոսիր. ասա՛ չեմ սիրում քեզ, պրծավ գնաց կամ ավելի լավ է ասա նրան, որ այս տեսակ կյանքը ձանձրացրել է քեզ, որ դու է՛լ չես ուզում նրա հետ ապրել և տեղափոխվում ես մայրիկի մոտ, և որ դրանից հետո թող մոռանա քեզ: Իսկ ես մայրիկին կնախազգուշացնեմ այդ մասին:

ՊԱՆԻՆԱ — Լավ, լավ: Ես այդ կանեմ ամենալավ ձևով:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Կկարողանա՞ս արդյոք:

ՊԱՆԻՆԱ — Այն էլ ո՞նց: Ինչ տեսարան ասես, ես քո ուզած դերասանուհիներից վատ չեմ խաղա: Նախ՝ մեզ տանը մանկությունից սովորեցրել են դա, հետո՝ երբ շարունակ մենակ նստած եմ լինում տանը, երբ աշխատանքը ձանձրալի է լինում, ես ինքս ինձ հետ խոսում եմ: Այնպես եմ սովորել ո՞ր... Հրա՛ջք: Միայն վախենում եմ մեղքս գա:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Իսկ դու մի՞ խղճա: Ես քեզ համար, Պոլինա, գլխա՛րկ եմ բերել: (Սովաբարձրձե տուփից հանում է գլխարկը):

ՊԱՆԻՆԱ — Ախ, ինչ սքանչելի՞ք է: Շնորհակա՛լ եմ, քույրիկս, հոգիս: (Համբուրում է նրան):

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Թե չէ հին գլխարկդ արդեն բանի պետք չէ:

ՊԱՆԻՆԱ — Սարսափելի՛ բան է: Նրանով փողոց դուրս գալն ամոթ է: Այ, հիմա որ կգժվեցնեմ մարդու: Կասեմ, ա՛յ, սիրելիս, կողմնակի մարդիկ են գնել ինձ համար, իսկ դո՞ւ, քո մտքով էլ չի անցնում:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Դե, ինչ արած, Պոլինկա, մենք առայժմ, ինչքան կարող ենք, կօգնենք: Միայն թե դու մարդուդ չսես, խնդրում եմ: Դու նրան մի լավ հասկացրու, որ հենց էնպես նրան չես սիրի: Դու, հիմարիկս, հասկացիր, արի՛ ինչո՞ւ պիտի իդուր տեղը սիրենք նրանց՝ մեր ամուսինների, հը՞: Դա շատ տարօրինակ է: Ասա՛ ամեն ինչով ապահովիր ինձ, որպեսզի ես հասարակության մեջ փայլեմ, այ, այն ժամանակ ես քեզ կսիրեմ: Նա իր համառությամբ չի ուզում քեզ երջանկացնել, իսկ դու լուսմ:

ես: Բավական է, որ նա իր մորեղորորը խնդրի, նրան էլ եկամտաբեր պաշտոն կտան, ոնց որ իմ մարդուն են տվել:

ՊԱՆԻՆԱ — Լավ, այ հիմա ես նրանից ձեռք չեմ քաշի:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Ախր պատկերացրու. դու շատ լավիկն ես, բավական է, որ քեզ մի լավ, ճաշակով հագցնեն, թատրոնում նստեցնեն... լույսերի տա՛կ... բոլոր տղամարդիկ իրենց լորնետները քեզ վրա կուղղեն:

ՊԱՆԻՆԱ — Մի ասա, քույրիկս, ես լաց կլինեմ:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Եվ այս էլ քեզ փող. (հանում է պուրամանից) վերցրու, մեկ-մեկ, ինչ որ պետք կգա, կարող ես առնել, կարող ես առանց մարդուդ էլ յուրա գնալ: Մենք հիմա միջոցներ ունենք, այնպես որ որոշել ենք ուրիշներին մինչև անգամ բարեգործություն անել:

ՊԱՆԻՆԱ — Շնորհակա՛լ եմ, քույրիկս: Միայն թե նա երևի բարկանա:

ՅՈՒԼԻՆՆԿԱ — Ասացե՛ք, խնդրեմ: Ուշադրություն մի՛ դարձրու: Շատ պե՛տք է: Հարադատներից է, օտարներից հո չէ: Բա ի՞նչ. նրա պատճառով քաղցած պիտի մնաս: Մնաս բարով, Պոլինա:

ՊԱՆԻՆԱ — Գնաս բարով, քույրիկս: (Ճանապարհում է նրան):

Յուլիեկան գնում է:

Տեսարան երրորդ

ՊԱՆԻՆԱ — Ինչքա՛ն խելոք է մեր Յուլիեկան: Իսկ ես հիմա՛ր եմ, հիմա՛ր: (Տուփը տեսնելով): Նոր գլխա՛րկս: (Մափ տալով): Հիմա ես մի ամբողջ շաբաթ ուրախ կլինեմ, եթե միայն ամուսինս չվշտացնի: (Երգում է):

«Մայրիկ, աղավնյակս, հոգուս, արեգակ...» (և այլն):

Գալիս է Կուկուշիեկան:

Տեսարան չորրորդ

Պոլինա և Կուկուշկինա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ուշք ու միտքդ միայն երգն է:

ՊՈԼԻՆԱ — Բարև, մայրիկս: Չանձրուվից է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ես իսկի քեզ մոտ գալ էլ չէի ուզում:

ՊՈԼԻՆԱ — Ինչո՞ւ որ, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Զզվելի՛ է ինձ համար, տիրուհիս, զզվելի՛ է ձեզ մոտ գալը: Հենց այնպես անցնում էի ձեր տան մոտով, ասացի՛ մի ներս մտնեմ: Աղաքատու՞թյո՞ւն, թըշվառու՞թյո՞ւն... Թո՛ւ՛ս... Ես սա շեմ կարող տեսնել: Իմ տանը մաքրությո՞ւն է, իմ տանը կարգ ու կանոն կա. իսկ այստե՞ր... Ի՞նչ է սա՛՝ գյուղական խրճի՛թ: Կեղտոտությո՞ւն:

ՊՈԼԻՆԱ — Ախր ես ինչո՞վ եմ մեղավոր:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Եվ աշխարհիս երեսին գտնվում են այդպիսի ստոր մարդիկ: Ասենք, ես նրան շեմ մեղադրում. ես նրա վրա երբեք հույս չէի դնում: Իսկ դո՞ւ, ինչո՞ւ ես լնում, տիրուհիս: Ես չէի՞, արդյոք, որ շարունակ կրկնում էի՛ մարդուդ երես շտա՛ս, ամեն րոպե ճիճվի նման կըրծոտի՛ր նրան, և՛ գիշեր, և՛ ցերեկ՝ փող բե՛ր, փող բե՛ր, գտի՛ր որտեղից ուզում ես և բե՛ր: Ինձ փող է պետք այսինչ բանի համար, ինձ փող է պետք այնինչ բանի համար: Իմ մայրը նրբազգաց տիկին է, նրան հարկավոր է քաղաքավարի ընգոններ: Նա քեզ կատի՛ շունեմ: Իմ ի՞նչ գործն է, ասա: Թեկուզ գողացիր, բայց բեր: Ինչո՞ւ էիր կին առնում: Ամտանանաչ կարո՞ղ էիր, կարողացիր և պատշաճաբեն պահել կնոջդ: Եվ այսպես, առավոտից մինչև գիշեր գլուխը պիտի ծեծեիր, որ խելքի գար: Ես որ քո տեղը լինեի, էլ ուրիշ խոսակցություն չէի ունենա:

ՊՈԼԻՆԱ — Ի՛նչ տեսեմ, մայրիկ, իմ բնավորության մեջ խրատություն չկա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ավելի լավ է ասես, որ քո բնավորության մեջ հիմարություն շատ կա, երե՛ս ես տալիս: Իսկ գիտե՞ս, արդյոք, թե ձեր երես տալը ոնց է փչացնում

տղամարդկանց: Քո գլխում միայն գուրգուրելն է, միայն թե կախվես նրա վզից: Ուրախացե՛լ ես, որ ժարդու ես գնացել, ուզածդ կատարվե՛ց: Բայց կյանքի մասին չես էլ մտածում: Անամո՛թ: Եվ ո՞ւմ ես քաշել: Ախր մեր ազգի մեջ քոլորս էլ մեր ամուսինների նկատմամբ սառն ենք եղել. ավելի շատ մտածում էինք մեր հագուստ-կապուստի մասին, թե ինչպես ավելի քաղաքավարի հագնեմք, ինչպես փայլենք ուրիշների մոտ: Չէ, ինչո՞ւ չգուրգուրես, գուրգուրիր ամուսնուդ, բայց հարկավոր է, որ նա զգա, թե ինչի՞ համար են իրեն գուրգուրում: Այ, Կուկուշկան, երբ ամուսինը քաղաքից մի որե՛է բան է բերում, իսկույն փաթաթվում է նրա վզին ու այդպես էլ մեռում, զոռով էլ չես պոկի նրան: Հենց այդ պատճառով էլ մարդա համարյա ամեն օր նվերներ է բերում: Իսկ երբ չի բերում՝ քույրդ շրթունքներն օտեցնում է և երկու օր հետը չի խոսում: Երբ կախվում ես նրանց վզից, նրանք ուրախանում են, նրանց էլ հենց այդ է հարկավոր: Ամա՛չի՛ր:

ՊՈԼԻՆԱ — Ես զգում եմ, որ հիմար եմ. երբ փայփայում է ինձ, ես էլ եմ ուրախանում:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այ, սպասիր, մենք երկուսով կհարձակվենք նրա վրա, գուցե տեղի տա: Գլխավորն այն է, որ երես շտանք և նրա հիմարություններին ահանջ չընենք: Նա իրենք կասի, դու էլ քոնն ասա, վիճի՛ր մինչև ուշաթափվելու աստիճան, բայց մի՛ գիշիր: Հենց որ գիշեցիր՝ նրանք քեզ կստիպեն մեջքով չուր կրել: Հետո հարկավոր է նրա հպարտությունը կոտրել, հպարտությունը: Գիտե՞ս երա մտքինն ինչ է:

ՊՈԼԻՆԱ — Որտեղի՞ց գիտեսամ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այսպիսի մի հիմար փիլիսոփայություն կա. ես անցյալ օրը մեկի տանն եմ լսել. դա հիմա մոդա է դարձել: Նրանք իրենց գլուխն են մտցրել, որ աշխարհում ամենախելոքն իրենք են, իսկ մնացածները՝ բոլորն էլ հիմարներ և կաշառակերներ են: Ի՛նչ աններելի՛ հիմարություն է: Ասում են՝ մենք չենք ուզում կաշառք վերցնել, ուզում ենք միայն ոռճիկով ապրել: Ախր դրանից հետո

է՛լ ի՞նչ կյանք կլինի: Եւ մեր ազգիկներին ո՛ւմ հետ
ամուսնացնենք: Ախր այդպես որ գնա, կգա ժամանակ,
որ մարդկային ցեղի ծնունդն էլ կգադարի: Կաշա՛ոք: Այդ
ի՞նչ բառ է՛ կաշա՛ոք: Իրենք են հնարել, լավ մարդկանց
վիրավորելու համար: Իա կաշառք չի, այլ շնոր-
հակալություն հայտնելու մի ձև: Իսկ շնորհակա-
լությունից հրաժարվելը մեղք է, մարդուն կվիրավո-
րես: Քանի դեռ ամուսին ես, քեզ դատ էլ չի հասնում, խե-
լառություն արա, ինչքան ուզում ես, թեկուզ հենց ոտձիկ
էլ մի ստացիր: Իսկ քանի որ կին ես առել, սպա կարողա-
ցիր ապրել կնոջդ հետ, ծնողներին մի՛ խաբիր: Ինչո՞ւ
են ծվատում ծնողական սիրտը: Կիսախելառի մեկը
ամուսնանում է դաստիարակված մի օրիորդի հետ, որը
դեռ մանկութունից է հասկացվել կյանքը, և որին ծնող-
ները դաստիարակել են բոլորովին այլ սկզբունքներով,
նույնիսկ ձգտել են որքան հնարավոր է հեռու պահել
նման հիմար դատ: զություններից: Այս կիսախելառը
հանկարծ նրան կողպում է ինչ-որ խցիկի մեջ: Ուրեմն,
նրանց կարծիքով, դաստիարակված օրիորդներին հար-
կավոր է լվացարարուհի՛ դարձնել: Ուզում են կի՞ն առ-
նել, թող առնեն մուրյալներին, որոնց համար մեկ է՛
տիրուհի՛ են դառնալու, թե խոհարարուհի, որոնք իրենց
ամուսնու սիրո համար ուրախ կլինեն իրենց շորերն էլ
լվանալ և ցեխին շուկաներում թրև գալ: Լինում են, չէ՞,
այդպիսի անհասկացող կանայք:

ՊՈՒԻՆԱ — Այ, երեի նա ինձ էլ է ուզում այդպիսին դարձնել:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Կնոջը ի՞նչ է հարկավոր... կրթված կնոջը,
որն ամբողջ կյանքը տեսնում ու հասկանում է իր հինգ
մատնների պես: Նրանք այդ շեն հասկանում: Կնոջը հար-
կավոր է, որ միշտ լավ հագնված լինի, աղախին ունե-
նա, իսկ գլխավորը՝ հարկավոր է, որ հանգիստ ու խա-
ղաղ լինի և, ազնվազարմ լինելով, հեռու լինի տնտեսա-
կան ամեն տեսակ աղբից: Իմ Յուլիանկան այդպես էլ
անում է: Նա զբաղված է միայն իրենով և ամեն բանից
վճռականապես հեռու է: Նա երկար է քնում, ամուսինն
առավոտ շուտ կարգադրում է օրվա ճաշի և բացարձա-
կապես ամեն ինչի մասին. հետո աղախինը պարոնին

թե է տալիս, և նա մեկնում է պաշտոնատուն: Վերջա-
պես Յուլիանկան արթնանում է. նրա թեյը, սուրճը և ամեն
ինչ պատրաստ է, ուտում է, լավագույն ձևով հագնվում
և, մի գրքույկ ձեռքն առնելով, նստում է պատուհանի մոտ
և ամուսնուն սպասում: Երեկոյան հագնում է ամենալավ
զգեստը և մեկնում թատրոն կամ հյուր: Այ, սա՛ է կյանքը,
սա՛ է կարգն ու կանոնը. ահա՛ թե ինչպես պիտի իրեն պա-
հի տիկինը: Սրանից ավելի ազնվաբարո, ավելի քաղա-
քավարի և նրբազգաց ի՞նչը կարող է լինել: Գովո՛ւմ եմ:

ՊՈՒԻՆԱ — Ախ, ինչ երանություն է: Գոնե մի շաբաթ այդպես
ապրիր:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Քո ամուսնու հետ կհասնես այդ օրվան,
ո՞նց չէ:
ՊՈՒԻՆԱ — Մայրիկ, դուք նրան մի լավ, ոնց որ պետքն է...
Թե չէ, ազնիվ խոսք, նախանձելի է: Յուլիանկան ինչքան
գալիս է, միշտ մի նոր զգեստով է լինում, իսկ ես միշտ
սրանով եմ ու սրանով: Ահա, գալիս է: (Գնում է դեպի
դուռ):

Մտնում է Ժաղալը. քղբապանակով: Համբարվում են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ Ի Մ Գ Ե Ր Ո Ր Դ

Նրանք և Ժաղալ:

ԺԱՂԱՎ — Բարև ձեզ, Ֆելիսատա Գերասիմովնա: (Նստում
է): Ա՛հ, ինչպես եմ հոգնել:

Պալինան նստում է մտ կողին:

Բոլորովին հանգիստ չեմ տալիս ինձ: Զափից ավելի աշ-
խատեցի: Առավոտյան՝ պաշտոնատանը, կեսօրին, դա-
սերը, գիշերվա համար էլ մի այլ գործ եմ վերցրել. քաղ-
վածքներ եմ կազմում, լավ են վճարում: Իսկ դու, Պո-
լինա, միշտ առանց գործի ես, միշտ պարապ-սարապ
Նրբեք չի լինում, որ գամ և քեզ աշխատելիս տեսնեմ:
ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Նրանք այդպես չեն դաստիարակված, աշ-
խատելու վարժված չեն:

ԺԱԳՈՎ — Եզ շատ վատ է: Եթե մանկուց վարժված չեն, հետո դժվար կընտելանան: Բայց պետք կգա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ընտելանալու էլ կարիք չկա: Ես նրանց աղտոխին դառնալու համար չեմ մեծացրել, այլ աղնվատոհմ մարդկանց հետ ամուսնանալու համար:

ԺԱԳՈՎ — Ես և դուք, Տելիսատա Գերասիմովնա, տարբեր կարծիքներ ունենք: Ես ուզում եմ, որ Պոլինան ինձ լսի:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այսինքն՝ դուք ազում եք նրան աղտոխին դարձնել. ուրեմն հենց այդպիսին էլ պիտի փնտրիք, որ ձեզ հետ զույգ կաղմեր: Իսկ ձեզ կենքեք, կյանքի մասին մենք բոլորովին այլ հասկացողություն ունենք. մեր ձեզ ազնվությունը բնածին է:

ԺԱԳՈՎ — Ի՞նչ ազնվություն, դա միայն դատարկ պարծենկոտություն է: Փա մեզ, ազնիվ խոսք, չի հետաքրքրում:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Հնարավոր չէ ձեզ լսել: Սարսափելի՛ է: Եթե ես դիտենայի, որ սա, այս դոբրախտը, մուրացկանի կյանք պիտի վարի, ոչ մի դեպքում ձեզ չէի տա:

ԺԱԳՈՎ — Ես խնդրում եմ նրա գուլսը մի մտցրեք, որ զըծբախտ է: Ապա թե ոչ, նա իսկապես կմտածի, որ զըծբախտ է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Բա ի՞նչ է, երջանի՞կ է: Իհարկե, ամենամշվառ վիճակի մեջ է: Եթե նրա՝ տեղը մեկ ուրիշը լիներ, չգիտեմ, թե ինչե՛ր կաներ:

Պոլինա լսյա է:

ԺԱԳՈՎ — Պոլինա, թող այդ գծությունը. յուզա ինձ:

ՊՈՒԼԻՆԱ — Քեզ համար ամեն ինչ գծություն է: Երևում է, չես սիրում, երբ քեզ ճշմարիտ բան են տասում:

ԺԱԳՈՎ — Ի՞նչ ճշմարիտ բան:

ՊՈՒԼԻՆԱ — Իհարկե, ճշմարիտ բան է. մայրիկը տուտ բան չի ապի:

ԺԱԳՈՎ — Մենք այդ մասին հետո կխոսենք խորաբ հետ:

ՊՈՒԼԻՆԱ — Խոսելու բան չկա:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Իհարկե:

ԺԱԳՈՎ — Այ քեզ պատուհաս: (Հառաչում է):

Կուկուշինեան և Պոլինան նրա վրա ուզողութուն չեն դարձնում և խոսում են շշուկով: Ժարգը պարսիկաց քրքր է հանում, դասավորում սեղանի վրա և հաշորդ խոսակցութեան ժամանակ մերք ընդ մերք նստնց կզգը կայում:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — (Բարձրաձայն): Պատկերացրու, Պոլինա, ևս եղա Բելոգուբովի տանը, նա կնոջ համար թափշյա գգեստ է գնել:

ՊՈՒԼԻՆԱ — (Ատուսավախառն). Թափշյա՛: Ի՞նչ գուշնի:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Մուգ կարմիր:

ՊՈՒԼԻՆԱ — (Լալիս է): Ախ, աստված իմ: Պատկերացնում եմ, թե ինչպե՛ս է սազում նրան:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Հրա՛շք է: Չէ, դու միայն պատկերացրու, թե ի՞նչ շարաճճին է Բելոգուբովը: Ծիծաղեցրեց, աղնիվ խոսք, ծիծաղեցրեց: Մայրիկ, ասում է, ևս իմ կնոջից պիտի գանգատվեմ ձեզ. ևս նրա համար թափշյա գգեստ եմ գնել, նա ինձ այնպես համբուրեց, նույնիսկ կծեց ցավեցնելու աստիճան: Այ, կյանքը սա՛ է, սիրելիք սա՛ է: Եվ ոչ թե ուրիշների նման:

ԺԱԳՈՎ — (Ուռի է կանգնում): Սա անտանելի՛ է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — (Ուռի է կանգնում): Թույլ տվեք հարցնել ձեզ, ողորմած պարոն, ինչո՞ւ է տառապում իմ դուստրը: Հաշիվ տվե՛ք ինձ:

ԺԱԳՈՎ — Նա ձեր խնամակալությունից արդեն դուրս է եկել և անցել է իմ խնամակալության տակ, ուստի թողեք, որ ես տնօրինեմ նրա կյանքը: Հա՛վատացե՛ք, որ ա՛վելի բա՛ժ կլինի:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Բայց ես ծայրն եմ, սղորմած պարոն:

ԺԱԳՈՎ — Իսկ ես՝ ամուսինը:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ահա՛, տեսնո՞ւմ եք, թե ինչ ամուսին ևք դուք: Ամուսնու սերը երբեք չի կարող համեմատվել ծնողական սիրտ հետ:

ԺԱԳՈՎ — Բայց ինչպիսի՛ ծնողների:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչպիսիք էլ լինեն, այնուամենայնիվ, ձեզ նման չեն լինի: Մենք, ահա, թե ինչպիսի ծնողներ ենք, ողորմած պարոն. ևս ու ամուսինս փողը գրողներով ենք հավաքել, որպեսզի դատարարակենք մեր աղջիկներին:

որպեսզի պանսիոն տանք նրանց: Ինչ եք կարծում, ինչի՞ համար ենք արել այդ: Նրա համար, որպեսզի նրանք լավ վարվելու օտարներն, որպեսզի իրենց շուրջը աղքատություն շտեմեն՝, ստորին նպատակներ շունենան, որպեսզի չձանրաբեռնվեն և մանկուց ստորերն լավ կյանքի, խոսելու և վարվելու ազնվաբարություն:

ՓԱԴՈՎ — Շնորհակալ եմ ձեզանից: Ես մոտավորապես մեկ տարի է, որ ջանում եմ նրա միջից դուրս շարտել ձեր դաստիարակությունը, բայց չեմ կարողանում: Թվում է, կյանքիս կեսը կտայի, որպեսզի նա մոռանար այն:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դե մի՞թե ես այսպիսի կյանքի համար եմ պատրաստել նրան: Ես ավելի շուտ ձեռքս կկտրեի, քան թե կուզենայի նրան այս վիճակի մեջ տեսնել, այս աղքատությամբ, տառապանքի՛, այս թշվառությամբ մեջ:

ՓԱԴՈՎ — Թողե՛ք ձեր կարեկցանքը, խնդրում եմ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Մի՞թե նրանք իմ տանն այսպես են ապրել: Իմ տանը կարգ ու կանոն կա, իմ տանը մաքրություն կա: Իմ միջոցները շատ չնչին էին, բայց նրանք ապրել են դքսուհիների պես, ամենամեծ վիճակում, չգիտեին, թե որն է խոհանոցի դուռը, ինչու է եկում կաղամբապուրը. դրուցում էին միայն զգացմունքների և ամենավե՛հ բաների մասին, ինչպես վայել է օրիորդներին:

ՓԱԴՈՎ — (Կնոջը մատնանշելով): Այո, այնպիսի խոր երեստածություն, ինչպիսին ձեր ընտանիքում է, ես չեմ տեսել:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Մի՞թե ձեզ նման մարդիկ կարող են գնահատել ազնվաբարո դաստիարակությունը... Ես եմ մեղավոր, ես շտապեցի: Եթե աղջիկս ամուսնանար կրթված և նուրբ զգացմունքների տեր մարդու հետ, ապա ամուսինը չէր իմանա, թե դաստիարակելու համար ինչպե՞ս շնորհակալություն հայտնեի ինձ: Աղջիկս էլ երջանիկ կլիներ, որովհետև օրինավոր մարդիկ կանանց չեն ստիպում աշխատել, դրա համար նրանք աղախիներ են պահում: Իսկ կինը նրա համար է, որ...

ՓԱԴՈՎ — (Արագ): Ինչի՞ համար է:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչպե՞ս թե՛ ինչի համար է: Դա ամենքն էլ գիտեն: Դե, հայտնի է... Նրա համար, որպեսզի նրան

որքան հնարավոր է լավ հագցնեն, զմայլվեն նրանով, մարդամեջ հանեն, բավականություններ պատճառեն, նրա ամեն մի քմահաճությամբ կատարեն, և, որպես օրենք... աստվածացնեն:

ՓԱԴՈՎ — Ամո՞թ ձեզ: Դուք տարեց կին եք, ապրել եք մինչև ծերություն, աղջիկներ եք մեծացրել և դաստիարակել նրանց, բայց չգիտեք, թե մարդուն կինն ինչի համար է տրվել: Չե՞ք ամաշուս: Կինը խաղալիք չէ, այլ իր ամուսնու օգնականը: Դուք վա՛տ մայր եք:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Այո, ես գիտեմ, որ դուք շատ ուրախ կլինեիք, եթե ձեր կնոջը խոհարարուհի դարձնեիք ձեզ համար: Դուք քարոսիրտ մարդ եք:

ՓԱԴՈՎ — Իավակա՛ն է դատարկ բաներ դուրս տաք:

ՊՈՒՆԱ — Թողեք դրան, մայրիկ:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ո՛չ, չե՛մ թողնի: Ինչի՞ց ենթադրեցիք, որ ես պիտի թողնեմ նրան:

ՓԱԴՈՎ — Վե՛րջ տվեք: Ես ձեզ չեմ լսի, կնոջս էլ թույլ չեմ տա: Օր ծերության միայն ցնդաբանություն է ձեր գլխում: ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Ինչե՛ր է ասում, ի՛նչ խոսքեր, հը՛:

ՓԱԴՈՎ — Իմ և ձեր միջև այլ խոսակցություն չի կարող լինել: Մեզ հանգիստ թողեք, խնդրում եմ: Ես Պոլինային սիրում եմ և պարտավոր եմ պահպանել նրան: Ձեր խոսքերը Պոլինայի համար վնասակար են և անբարոյական:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դուք այդքան մի՛ բորբոքվեք, ողորմած պարոն:

ՓԱԴՈՎ — Դուք բացարձակապես ոչինչ չե՛ք հասկանում:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — (Չարացած): Չե՞մ հասկանում: Ո՛չ, ես շատ լավ եմ հասկանում: Ես դեպքեր եմ տեսել, թե կանայք աղքատությունից ինչպես են կործանվում: Աղքատությունը ամեն բանի էլ կհասցնի... Կին կա, որ դեռ կոտորվի, դեռ կոտորվի և ճիշտ ճամփից կմոլորվի: Նույնիսկ չես էլ կարող մեղադրել:

ՓԱԴՈՎ — Ի՞նչ: Ինչպե՞ս կարող եք ձեր աղջկա ներկայությամբ այդպիսի բաներ ասել: Ազատեցե՛ք մեզ ձեր այցելությունից: Իսկո՛ւյնե՛ք... Իսկո՛ւյնե՛ք...

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Երբ տանը ցուրտ է, ուտելու բան չկա, իսկ

ամուսինն էլ ծուլ է ու անբան՝ ուզես-չուզես, միջոց կփնտրես:

ԺԱԴՈՎ — Հեռացե՛ք այստեղից, քաղաքավարի խնդրում եմ:

Դուք ինձ համբերությունից կհանկեր:

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Դե, իհարկե, կգնամ, և ինձ երբեք ձեռ տանը չեք տեսնի: (Պոլինային): Լա՛վ ամուսին ունես, հա՛, ի՛նչ ցավ ու կրակ է, ի՛նչ դժբախտություն:

ՊՈԼԻՆԱ — Գնաք բարով, մայրիկ: (Լալիս է):

ԿՈՒԿՈՒՇԿԻՆԱ — Լա՛ց եղիր, լա՛ց եղիր, այ դժբախտ գահ, որբա՛ ճակատագիրդ: Լաց եղիր մինչև մահ-գերեզման: Ավելի լավ է մեռնես, ա՛յ դժբախտ, որպեսզի-սիրտս պատուպատառ չլինի: Ավելի հեշտ կլինի ինձ համար: (Ժողովին): Տոնահանդե՛ս կատարեցեք: Դուք ձեր գործն արեցիք՝ խաբեցի՛ք, սիրահա՛ր ձեացաք, գայթակղեցի՛ք խոսքերով և հետո կործանեցի՛ք: Ձեր ամբողջ նպատակն այդ էր, հիմա ես ձեզ հասկանում եմ (Գճում է):

Պոլինան նախադառնում է նրան:

ԺԱԴՈՎ — Հարկավոր է փոքր-ինչ խփես խոսել Պոլինայի հետ: Ապա թե ոչ, ով գիտե, բաշորովին խելքահան կանես:

Պոլինան վերադառնում է:

Տեսարան վեցերորդ

Ժողով և Պոլինա:

Պոլինան նստում է պատեմանի մաս: Նեղացած է:

ԺԱԴՈՎ — Իզրերը դասավորելուց հետո, նստում է սեղանի մոտ: *Ֆելիստատա Գերասիմովնան, հավատնաբար, այլևս մեզ մաս չի գա: Եվ ես ուրախ կլինեմ դրա համար: Ես կկամենայի, Պոլինա, որ դու էլ շփաս նրա մոտ, ինչպես նաև Բելոգորովի մոտ:*

ՊՈԼԻՆԱ — Ձեի՛ք հրամայի, արդյոք, որ ձեզ համար հրաժարվեմ իմ բոլոր հարազատներից:

ԺԱԴՈՎ — Ոչ թե ինձ համար, այլ քեզ համար: Նրանք բուրն էլ շատ վայրի հասկացողություններ ունեն: Ես քեզ բարի ուղղություն եմ ցույց տալիս, իսկ նրանք անբարոյացնում են:

ՊՈԼԻՆԱ — Ինձ սովորեցնելու համար ուշացել ես, ես արդեն սովորած եմ:

ԺԱԴՈՎ — Ինձ համար սարսափելի կլինեն, եթե ես համոզվեի այն բանում, ինչ որ ասում ես: Ոչ, ես հուսով եմ, որ դու ինձ կհասկանաս, վերջապես: Հիմա աշխատանքս շատ է, երբ փոքր-ինչ պակասի, մենք իրար հետ կպարպենք: Առավոտյան կաշխատես, իսկ երեկոյան կկարդանք: Դու կարդալու շատ բան ունես, չէ՞ որ դու ոչինչ չես կարդացել:

ՊՈԼԻՆԱ — Ինչպե՛ս չէ, նստելու եմ մոտդ: Այ թե ուրախալի կլինի: Մարդը ստեղծվել է հասարակության համար:

ԺԱԴՈՎ — Ի՞նչ:

ՊՈԼԻՆԱ — Մարդը ստեղծվել է հասարակության համար:

ԺԱԴՈՎ — Այդ որտեղի՞ց վերցրիր:

ՊՈԼԻՆԱ — Դու, ինչ է, իսկապե՛ս ինձ հիմարի տեղ ես դրել: Դա ո՛վ չգիտի որ: Բուրն էլ գիտեն: Դու ինձ փողոցի՞ց ես վերցրել, ինչ է:

ԺԱԴՈՎ — Բայց հասարակությանը պիտանի լինելու համար հարկավոր է, որ մարդն իրեն պատրաստի՛, կրթի՛ իրեն:

ՊՈԼԻՆԱ — Ոչինչ էլ պետք չի, դրանք դատարկ բաներ են. հարկավոր է միայն մոռայով հագնվել:

ԺԱԴՈՎ — Դե մենք այդ էլ չենք կարող անել: Հետևաբար, խոսելն էլ ավելորդ է: Ավելի լավ է զբաղվիր որևէ աշխատանքով, ես էլ իմ գործին անցնեմ: (Վերցնում է գրիչը):

ՊՈԼԻՆԱ — Աշխատանքո՛վ զբաղվիր: Այդ որտեի՞ց մոգոնեցիր: Հերի՛ք է հրամաններ տաս ինձ... ամեն կերպ բռնանաս ինձ վրա և ծաղրես ինձ:

ԺԱԴՈՎ — (Մեղվելով դեպի նա): Այդ ի՞նչ ես ասում, Պոլինա:

ՊՈԼԻՆԱ — Այն, որ ես ուզում եմ ապրել այնպես, ինչպես մարդիկ են ապրում, և ոչ թե մուրացկանի պես: Չանձ-

րալի՛ է արդեն: Առանց այն էլ ջահելութունս կորցրի քեզ հետ:

ժԱԴՈՎ — Այ քեզ նորութուննե՛ր: Առաջին անգամ եմ լսում:

ՊՈՒԻՆԱ — Ուրեմն լսիր, եթե շես լսել: Դու կարծում ես, որ եթե ես մոտ մի տարի է լռել եմ, ուրեմն մի՞շտ կլռեմ: Չէ՛, կներե՛ս: Ասենք, խոսելն ավելորդ է: Ես ուզում եմ ապրել այնպես, ինչպես Յուլիանկան է ապրում, ինչպես ազնվատոհմ տիկիներն են ապրում: Ահա իմ ամբողջ ասելիքը:

ժԱԴՈՎ — Ահա՛ թե ինչ: Միայն թույլ տուր մի հարց տամ քեզ. ի՞նչ միջոցներով ապրենք այդպես:

ՊՈՒԻՆԱ — Իմ ի՞նչ գործն է: Ով սիրում է, նա միջոցներ կգտնի:

ժԱԴՈՎ — Բայց խղճա ինձ, ես առանց այդ էլ եզան պես եմ աշխատում:

ՊՈՒԻՆԱ — Աշխատում ես, թե շես աշխատում, բոլորովին էլ իմ գործը չի: Ես քեզ առա ոչ թե տանջվելու համար:

ժԱԴՈՎ — Դուք ինձ այսօր իսպառ տանջեցիք: Լոիր, ի սեր աստծո:

ՊՈՒԻՆԱ — Ինչպե՛ս չէ, կլռեմ, հույսով մնա: Քո պատճառով ամենքը ծիծաղում են ինձ վրա: Ինչքա՛ն ամոթանք եմ կրել: Քույրիկս մինչև անգամ խղճաց ինձ: Նոր այստեղ էր: «Դու մեր ամբողջ ազգուտակը խայտառակում ես, — ասաց, — այդ ի՞նչ ես հազել»: Ամոթ չէ՞ քեզ: Դեռ հավատացնում էիր, որ սիրո՛ւմ ես ինձ: Ա՛յ, քույրիկս իր փողով է գնել մի գլխարկ և բերել ինձ:

ժԱԴՈՎ — (Տեղից ելնում է): Գլխա՞րկ:

ՊՈՒԻՆԱ — Հա՛, ա՛յ, տես: Ի՞նչ, լավը չի՞:

ժԱԴՈՎ — (Խառտե՛ն): Իսկույննե՛ք ե՛տ տար:

ՊՈՒԻՆԱ — Ե՛տ տանեմ:

ժԱԴՈՎ — Այո՛, իսկույն, իսկույն ե՛տ տար: Եվ չհամարձակվե՛ս նրանցից որևէ բան վերցնել:

ՊՈՒԻՆԱ — Դե, այդ արդեն չի լինի, կարող եք հանգիստ լինել:

ժԱԴՈՎ — Այդ դեպքում, ես դա պատուհանից դո՛ւրս կշարտեմ:

ՊՈՒԻՆԱ — Ա՛, ուրեմն դու այդպե՛ս սկսեցիր: Լավ, սիրելիս, ես կտանեմ:

ժԱԴՈՎ — Եվ տա՛ր:

ՊՈՒԻՆԱ — (Արտասուլե՛ն աչքերի՛ն): Կտանե՛մ, կտանե՛մ: (Հագնում է թիկնոցը, գլխարկը, վերցնում է հովանոցը): Մնաք բարով:

ժԱԴՈՎ — Գնաս բարով:

ՊՈՒԻՆԱ — Լավ հրաժեշտ տանք, դուք ինձ այլևս չեք տեսնի:

ժԱԴՈՎ — Դա ինչ հիմարութուն է:

ՊՈՒԻՆԱ — Ես կգնամ մայրիկի մոտ, այնտեղ էլ կմնամ: Էլ մեզ մոտ չգաք:

ժԱԴՈՎ — Ինչ հիմար բաներ ես ասում, Պուլինա:

ՊՈՒԻՆԱ — Չէ, ես արդեն վաղուց եմ որոշել: (Հովանոցով հատակի վրա գծում է): Ի՞նչ կյանք է իմ կյանքը: Միայն տանջանք, և ոչ մի ուրախութուն:

ժԱԴՈՎ — Մեղք չե՞ս գործում: Մի՞թե դու ինձ հետ ոչ մի ուրախութուն չես տեսել:

ՊՈՒԻՆԱ — Ի՞նչ ուրախութուն: Եթե հարուստ լինեիր՝ ուրիշ բան է, թե չէ, աղքատությանը դիմացի՛ր... դա ի՞նչ ուրախութուն է: Այ, անցյալ օրն էլ հարբած տուն եկար. դեռ ո՞վ գիտի, գուցե մի օր ծեծես էլ ինձ:

ժԱԴՈՎ — Ա՛հ, տեր աստված: Այդ ի՞նչ ես ասում: Մի անգամ թեթևակի խմած եմ եկել: Ասա տեսնեմ, երիտասարդներից ո՞վ խմած չի լինում:

ՊՈՒԻՆԱ — Մենք գիտենք, թե աղքատութունն ինչ բանի է հասցնում: Կարող է դու խմելը սովորութուն դարձնես, ես էլ քեզ հետ կկործանվեմ:

ժԱԴՈՎ — Հիմար բաներով ես գլուխդ լցնում:

ՊՈՒԻՆԱ — Ի՞նչ լավ բան պիտի տեսնեմ որ: Ես արդեն խաղաթղթերով էլ եմ բախտս բացել, գուշակին էլ եմ հարցրել... Ստացվում է, որ ես ամենադժբախտն եմ:

ժԱԴՈՎ — (Գլուխն ափերի մեջ առնելով): Խաղաթղթո՞վ է գուշակում, գուշակների մո՞տ է գնում:

ՊՈՒԻՆԱ — Ուրեմն, քո կարծիքով, խաղաթղթերն էլ հիմար բաներ են, հա՛: Չէ՛, կներե՛ս, կյանքում շեմ հավատա: Խաղաթղթերը երբեք չեն խաբում, միշտ էլ ճիշտ բաներ են ասում: Մինչև անգամ այն, ինչ որ մարդկանց մտքումն է լինում, այդ էլ իսկույն երևում է խաղաթղթերի վրա: Դու հո ոչ մի բանի չես հավատում, քեզ համար ամեն

ինչ դատարկ բան է: Հենց դրա համար էլ մենք երջան-
կություն շունենք:

ԺԱԴՈՎ — (Քեզ շորեն): Պոլինա... (Մտտեճում է նրան):

ՊՈԼԻՆԱ — (Նրանից ետ քաշվելով): Ինչո՞րում եմ, շմոտենաք:

ԺԱԴՈՎ — Չէ՛, դու ինձ չե՛ս սիրում:

ՊՈԼԻՆԱ — Ինչի՞դ համար սիրեմ քեզ: Շատ պետքս է ձրի
սիրեմ:

ԺԱԴՈՎ — (Ձեռնորեն): Ինչպե՞ս թե ձրի: Քո սիրո համար ես
սիրով եմ վճարում քեզ: Չէ՞ որ դու իմ կինն ես: Մի՞թե
մոռացել ես: Դու պարտավոր ես ինձ հետ բաժանել կ՛
ցավը, կ՛ ուրախությունը... եթե անգամ վերջին մտաբա-
կանը լինեմ ես:

ՊՈԼԻՆԱ — (Նստում է արձոնի և գլուխը ետ գցած, քան-քան
ծիծաղում): Հա՛-հա՛-հա՛...

ԺԱԴՈՎ — Դա զգվելի՛ է, վերջապես: Դա անբարոյականու-
թյուն է:

ՊՈԼԻՆԱ — (Արագ ոտքի է կանգնում): Ես չեմ հասկանում, ի՞նչ
հաճույք եք զգում, որ ապրում եք անբարոյական կնոջ
հետ: Մնա՛ք բարով:

ԺԱԴՈՎ — Աստված քեզ հետ, գնաս բարով: Եթե դու կարող
ես անտարբերությամբ լքել ամուսնուդ, ուրեմն գնաս բա-
րով: (Նստում է սեղանի մոտ և գլուխն առնում ավերի
մեջ):

ՊՈԼԻՆԱ — Ի՞նչ կա որ, ձուկը խոր տեղ է փնտրում, մարգը՝
լավ տեղ:

ԺԱԴՈՎ — Դե, գնա՛ս բարով, գնա՛ս բարով:

ՊՈԼԻՆԱ — (Հայելու առաջ): Ի՞նչ գլխարկ է: Ա՛յ, սա գլխարկ
է: (Նրգում է):

«Մայր իմ, ազաճեյակս, հոգուս արեգակ...»:

Այս գլխարկով փողոցով էլ որ անցնես, էլի մեկնումեկը
կտեսնի ու կասի՝ «Ախ, այս աղջիկն ինչ լավիկն է»: Մնաք
բարով: (Ռեճրան է աճում ու գնում):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ե Ր Ո Ր Գ

Ժաղով, մենակ:

ԺԱԴՈՎ — Այս ի՞նչ բնավորություն ունեմ ես: Կնոջս հետ էլ
չեմ կարող հաշտ մնալ: Ի՞նչ անեմ այժմ: Տե՛ր իմ
աստված: Ես կիսելագարվեմ: Առանց նրա էլ ինչո՞ւ ապ-
րեմ աշխարհում: Ինչո՞ւ այսպես ստացվեց, չեմ հասկա-
նում... Ինչպե՞ս կարողացա թողնել, որ հեռանա ինձա-
նից: Ի՞նչ պիտի անի նա իր մոր մոտ: Այնտեղ կկորչի
բոլորովին: Մարյա՛: Մարյա՛:

Մարյան դրոփց. «Ի՞նչ եք կամենում»:

Գնա՛, հասի՛ր տիրուհուդ, ասա, որ ուզում եմ հետը խո-
սել: Շա՛տ արա, շա՛տ... Ի՞նչ ես անում, Մարյա, ինչ
դանդաղկոտն ես: Վազի՛ր, ասում եմ, վազի՛ր:

Մարյան դրոփց. «Հիմա»:

Իսկ եթե նա չուզենա՞ վերադառնալ: Լա՛վ էլ կանի: Կի-
կատար իրավունք ունի: Ինչո՞վ է մեղավոր, որ ես չեմ
կարող նրան պատշաճորեն պահել: Նա ընդամենը տաս-
նութ տարեկան է, ապրել է ուզում, բավականութուն-
ներ է ուզում: Իսկ ես նրան պահում եմ մի սենյակում,
ամբողջ օրը տանը չեմ լինում: Լա՛վ սեր է: Դե, հիմա
ապրի՛ր մենա՛կ: Հրաշալի՛ է: Շա՛տ լավ է... Նորից
ո՛րբ եմ ես. սրանից էլ լավ բա՛ն... Առավոտները կգնամ
պաշտոնատուն, այնտեղից տուն վերադառնալը միտք
չունի, պանդոկում կնստեմ մինչև երեկո, իսկ երեկոյան
կգամ տուն, մենա՛կ, պաղ անկողնում արցունք կթա-
փե՛մ: Եվ այդպես ամեն օր... Շատ լավ կլինի: (Լալիս
է): Դե, ի՞նչ արած, չկարողացա՞ր կնոջը հետ ապրել,
ապրի՛ր մենա՛կ: Չէ՛, հարկավոր է մի բան որոշել: Կա՛մ
պիտի բաժանվեմ նրանից, կա՛մ... ապրեմ... ապրեմ...
ինչպես ապրում են մարդիկ: Հարկավոր է մտածել: (Մտա-
սուզվում է): Բաժանվե՛լ: Բայց բաժանվելու ուժ կունե՛-

նամ, արդյոք: Ա՛հ, ի՛նչ տանջանք է, ի՛նչ տանջանք
Ո՛չ, ավելի լավ է... Հողմաղացների հետ մարտնչեմ:
Ի՛նչ մտքեր են ծնվում գլխիս մեջ:

Մտնում է Պոլինա:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ր Պ

Ժաղով և Պոլինա:

ՊՈԼԻՆԱ — (Նստում է, առանց հանվելու): Ի՛նչ եք կամենում:

ԺԱԴՈՎ — (Վազում է նրա մոտ): Եկա՛ր, եկա՛ր: Նորից երկա՛ր... Եվ դու շե՛ս ամաչում: Այնպես վշտացրիր դու ինձ, այնպես վշտացրիր, Պոլինա, որ ես չեմ կարող մըտքերս հավաքել: Ես բոլորովին կորցրել եմ ինձ: (Համբուրում է նրա ձեռքերը): Պոլինա՛, սիրելի՛ս:

ՊՈԼԻՆԱ — Դու քնքշություններով վրա մի քշի:

ԺԱԴՈՎ — Դու կատակեցիր, չէ՞, Պոլինա: Դու ինձ չես լքի:

ՊՈԼԻՆԱ — Ախ, որքա՛ն հետաքրքիր է քեզ հետ ապրելը. միայն տառապա՛նք, ուրիշ ոչինչ:

ԺԱԴՈՎ — Դու սպանում ես ինձ, Պոլինա: Եթե չես սիրում, գոնե խղճա ինձ: Դու գիտես, թե ես ինչպես եմ սիրում քեզ:

ՊՈԼԻՆԱ — Բա՛, երևում է: Այդպե՛ս են սիրում:

ԺԱԴՈՎ — Հապա ինչպե՛ս են սիրում, ինչպե՛ս: Ասա, ես կկատարեմ, ինչ որ հրամայես:

ՊՈԼԻՆԱ — Իսկույն գնա մորեղբորդ մոտ, հաշտվիր նրա հետ և նույն պաշտոնից խնդրիր, ինչպիսին Բելոգուբովն ունի: Հետո փող էլ խնդրիր, երբ հարստանանք՝ կվերադարձնենք:

ԺԱԴՈՎ — Երբե՛ք, ո՛չ մի գնով, ո՛չ մի գնով: Եվ այդ մասին ինձ ոչինչ մի ասա:

ՊՈԼԻՆԱ — Բա ինչո՞ւ կանչեցիր ինձ: Մաղրե՞լ ես ուզում: Հերիք է, ես արդեն խելոքացե՛լ եմ: Մնա՛ս բարով: (Ոտքի է կանգնում):

ԺԱԴՈՎ — Սպասի՛ր: Սպասի՛ր, Պոլինա: Թո՛ղ խոսեմ քեզ հետ:

ՊՈԼԻՆԱ — (Հայելու առաջ): Ինչի՞ մասին: Արդեն ամեն ինչ խոսեցինք:

ԺԱԴՈՎ — (Աղերսական տեսքով). Ո՛չ, ո՛չ, Պոլինա, դեռ բուրբ շենք ասել: Ես դեռ շատ բան ունեմ քեզ ասելու: Շատ բան կա, որ դու չգիտես: Եթե հնարավոր լիներ հոգիս քեզ հանձնելի, քեզ հանձնելի այն, ինչի մասին մտածել ու երազել եմ, որքա՛ն երջանիկ կլինեի ես: Արի խոսենք, Պոլինա, խոսենք: Դու միայն լսիր, ի սեր աստժո, միակ բանն է, որ աղերսաբար խնդրում եմ քեզ:

ՊՈԼԻՆԱ — Խոսիր:

ԺԱԴՈՎ — (Ջերմորեն). Լսի՛ր, լսի՛ր: (Բռնում է նրա ձեռքը):

Միշտ, Պոլինա, բոլոր ժամանակներում եղել են մարդիկ, նրանք այժմ էլ կան, որոնք հակառակ են գործում հնացած սովորույթներին ու պայմաններին: Ո՛չ թե քմահաճույքով, ո՛չ թե իրենց կամքով, այլ որովհետև նրանց գիտցած կանոններն ավելի լավ ու ազնիվ են այն կանոններից, որոնցով ղեկավարվում է հասարակութունը: Եվ ո՛չ էլ իրենք են մոգոնել այդ կանոնները. նրանք այդ լսել են եկեղեցական և պրոֆեսորական ամբիոններից. նրանք այդ կարդացել են մեր և արտասահմանյան գրական լավագույն ստեղծագործություններում: Նրանք դրանցով են դաստիարակվել և ուզում են այն ներմուծել կյանք: Որ դա հեշտ չէ, ես համաձայն եմ: Հասարակական արատներն ամուր են, տգետ մեծամասնությունն ուժեղ է: Պայքարն էլ դժվարին է և հաճախ՝ կործանարար. բայց առավել ևս փառավոր են այդ ընտրյալները. նրանց վրա է ժառանգների օրհնությունը. եթե նրանք չլինեն՝ այնքա՛ն կաճեն կեղծիքը, շարիքն ու բռնությունը, որ մարդիկ կզրկվեն արևի ճառագայթներից...

ՊՈԼԻՆԱ — (Չարմացած նայում է նրան): Դու խելագա՛ր ես. ազնիվ խոսք, խելագա՛ր ես: Եվ ուզում ես, որ ես քեզ լսե՛մ: Ես առանց այն էլ մեծ խելք չունեմ, վերջինն էլ քեզ հետ կկորցնեմ:

ԺԱԴՈՎ — Չէ, դու լսի՛ր ինձ, Պոլինա:

ՊՈԼԻՆԱ — Չէ, ավելի լավ է լսեմ խելոք մարդկանց:

ԺԱԴՌՈՎ — Իսկ ո՞ւմ ես լսելու Ուրբե՞ր են այդ խելոք մարդիկ:

ՊՈՒԻՆԱ — Ուրբե՞ր: Քույրի՛կս, Բելոգուբո՞վը:

ԺԱԴՌՈՎ — Եվ դու ինձ համեմատեցիր Բելոգուբովի հետ:

ՊՈՒԻՆԱ — Ասացե՛ք, խնդրեմ: Դու ի՞նչ մի մեծ մարդ ես որ Պարզ է, որ Բելոգուբովը քեզանից ավելի լավն է: Պետե՞ր մոտ հարգա՛նք ունի, կնոջը սիրո՞ւմ է, լավ տնտեսուտե՞ր է, սեփական ձիե՞ր ունի... Իսկ դու ի՞նչ ես, ի՞նչ միայն գլխուդ գովել գիտես... (Նրա տնագն անելով): «Ես խելոք եմ, ես ազնիվ եմ, բոլորը հիմարներ են, բոլորը կաշառակերներ են»:

ԺԱԴՌՈՎ — Այդ ի՞նչ եղանակով ես խոսում: Այդ ի՞նչ զզվի՞ք ձեզ ես:

ՊՈՒԻՆԱ — Էլի՞ կովում ես: Մնա՛ս բարով: (Ուզում է գնա):

ԺԱԴՌՈՎ — (Բռնում է նրան). Կա՛ց, սպասի՛ր մի փոքր:

ՊՈՒԻՆԱ — Թո՛ղ:

ԺԱԴՌՈՎ — Չէ՛, սպասի՛ր, Պուլինոչկա, սիրե՛ցես, սպասի՛ր (Բռնում է նրա զգեստից):

ՊՈՒԻՆԱ — (Յիծաղում է). Դե, ի՞նչ ես բռնել: Տարօրինակ մարդ ես: Որ գնալ ուզենամ՝ ինձ չե՛ս կարող պահել:

ԺԱԴՌՈՎ — Հապա ի՞նչ անեմ քեզ հետ, ի՞նչ անեմ իմ սիրելի Պուլինայի հետ:

ՊՈՒԻՆԱ — Դեա քեռուդ մոտ և հաշտվիր:

ԺԱԴՌՈՎ — Սպասի՛ր, սպասի՛ր, թո՛ղ մտածեմ:

ՊՈՒԻՆԱ — Մտածիր:

ԺԱԴՌՈՎ — Չէ՛ որ ես քեզ սիրում եմ, ես քեզ համար պատրաստ եմ աշխարհում ամեն ինչ անել... Բայց տես, թե ի՞նչ ես առաջարկում ինձ... Սարսափելի՛ է... Չէ՛, հարկավոր է մտածել: Այո՛, այո՛, այո՛... մտածել է պետք... Իսկ էթե ես չգնամ մորեզբորս մոտ՝ դու կհեռանա՞ս ինձանից:

ՊՈՒԻՆԱ — Կհեռանա՞մ:

ԺԱԴՌՈՎ — Բոլորովի՞ն կհեռանաս:

ՊՈՒԻՆԱ — Բոլորովի՛ն: Տասն անգամ հո չեմ ասելու, ձանձրացրիր: Մնա՛ս բարով:

ԺԱԴՌՈՎ — Սպասի՛ր, սպասի՛ր: (Նստում է սեզանի մոտ, գրոխը հենում ձեռներին և մտաուզվում):

ՊՈՒԻՆԱ — Ինչ է, շա՞տ պիտի սպասեմ:

ԺԱԴՌՈՎ — (Համարյա արտասվագին): Բայց գիտե՞ս ինչ, Պուլինա: Լավ է, չէ՞, երբ կինդ լավիկն է, և լավ էլ հագնելու ժամ է:

ՊՈՒԻՆԱ — (Ձգացված): Շա՛տ լավ է:

ԺԱԴՌՈՎ — Դե, իհա՛րկե, իհա՛րկե, (Բղավում է): Իհա՛րկե, իհա՛րկե: (Ոտներով դոփում է): Եվ լավ է, չէ՞, նրա հետ միասին մեկնել լավ կառքով:

ՊՈՒԻՆԱ — Ախ, ինչ լա՛վ է:

ԺԱԴՌՈՎ — Չէ՛ որ ջահել, գեղեցկուհի կնոջը հարկավոր է սիրել, գուրգուրել... Իհա՛րկե, իհա՛րկե, իհա՛րկե հարկավոր է զուգե՛լ-զարդարե՛լ... (Հանդարտվելով): Դե, ի՞նչ արած, ոչի՛նչ, ոչի՛նչ... Դա հե՛շտ է... Հե՛շտ է... (Հուսահատորեն): Մնա՛ք բարով, պատանեկան իմ անուրջներ: Մնա՛ս բարով, իմ մեծագույն, սերտած դասեր: Մնա՛ս բարով, դու, իմ ազնիվ ապագա: Չէ՛ որ ես էլ կծերանամ, իմ մազերն էլ կճերմակեն, և զավակներ կունենամ ես...

ՊՈՒԻՆԱ — Ինչե՛ր ես, ասում, ինչե՛ր:

ԺԱԴՌՈՎ — Ո՛չ, ո՛չ, զավակներին խիստ սկզբունքով կդաստիարակենք: Թո՛ղ քայլեն դարի ետևից: Կարիք չկա, որ նրանք իրենց հայրերին ընդօրինակեն:

ՊՈՒԻՆԱ — Դե, վե՛րջ տուր:

ԺԱԴՌՈՎ — Չէ՛, թո՛ղ, թո՛ղ լամ... չէ՛ որ սա իմ վերջի՛ն լացն է կյանքում: (Հեկեկում է):

ՊՈՒԻՆԱ — Ի՞նչ եղավ քեզ:

ԺԱԴՌՈՎ — Ոչի՛նչ... ոչի՛նչ... Թեթևացա՛վ... Թեթևացա՛վ... Աշխարհում ամեն ինչ թեթևացա՛վ... Միայն հարկավոր է, որ ինձ չպախարակեն... Դա՛ էլ հեշտ է... Ես դա կանեմ... Մի կողմ կբաշվեմ, կթաքնվեմ իմ նախկին ընկերներից... չեմ գնա այնտեղ, ուր ազնվության մասին են խոսում, ուր պարտքի սրբության մասին են խոսում... Մի ամբողջ շաբաթ կաշխատեմ, իսկ ուրբաթ լույս շաբաթ կհավաքեմ զանազան Բելոգուբովների և ավազակների նման կհարբե՛մ գողացած փողերով... այո՛... այո՛... այո՛... Իսկ հետո... հետո կընտելանա՛մ:

ՊՈՒԻՆԱ — (Համարյա լացելով): Դու ինչ-որ վատ բաներ ես ասում:

ԺԱԴՈՎ — Երգեր կերգեմ... Դու դիտե՞ս այս երգը: (Սրգավ է):

Վերցրո՛ւ, սա արհեստ չէ դժվար.
Վերցրո՛ւ, ինչ որ հեշտ է վերցվում.
Ինչո՞ւ են ձեռքեր մեզ տրվում,
Եթե ոչ վերցնելու համար:

Լավ երգ է, չէ՞:

ՊՈԼԻՆԱ — Ի՞նչ է կատարվում քեզ հետ, շեմ հասկանում:
ԺԱԴՈՎ — Գնա՛նք, Պոլինա, գնա՛նք մորեղբորս մոտ՝ եկամտաբեր պաշտոն խնդրելու: (Գլխարկն անփութորեն զրլխին դնելով, բռնում է կնոջ ձեռքը):

Գնում են:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՂ

ԱՆՁԻՆՔ

- ԱՐԻՍՏԱՐԻՆ ՎԱԴԻՄԻՐԻՉ ՎԻՇՆԵՎՍԿԻ
- ԱՆՆԱ ՊԱՎԼՈՎՆԱ ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ
- ԱԿԻՄ ԱԿԻՄԻՉ ՅՈՒՍՈՎ
- ՎԱՍԻԼԻ ՆԻԿՈԼԱՅԻՉ ԺԱԴՈՎ
- ՊՈԼԻՆԱ
- ԱՆՏՈՆ
- ՏՂԱ

Առաջին գործողության սենյակ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ա ո ա ջ ի ն

Վիշենսկայա և Անտոն:

(Անտոնը մատուցաբանով բերում է մի նամակ ու գնում):
ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Կարդում է): «Ողորմած տիրուհի Աննա Պավլովնա: Ներեցեք, եթե նամակս ձեզ դուր չգա. ես ձեզ հետ վարվում եմ ճիշտ այնպես, ինչպես դուք վարվեցիք ինձ հետ: Ես լսել եմ, որ դուք ծիծաղում եք ինձ վրա և

իմ նամակները ցույց եք տալիս կողմնակի մարդկանց. նամակներ, որոնք գրվել են ոգևորության և կրքերի պոթիվման պահերին: Չեզ քաջ հայտնի է իմ բարձր դիրքը հասարակության մեջ. իսկ ձեր այդպիսի վարմունքը մեծապես վարկաբեկում է ինձ: Ես երեխա չեմ: Ի՞նչ իրավունքով եք այդպես վարվում ինձ հետ: Իմ հաճախատությունը միանգամայն արդարացվում էր ձեր վարքով, որը, ինքներդ պիտի խոստովանեք, անբասիր չի եղել: Ու թեև ինձ, որպես տղամարդու, որոշ անպարկեշտություն թույլատրվում է, բայց ծիծաղելի լինել ես չեմ ուզում: Իսկ դուք ինձ խոսակցության առարկա դարձրիք ամբողջ քաղաքում: Չեզ հայտնի են իմ հարաբերությունները Լյուբիմովի հետ, ես արդեն ասել եմ, որ նրա մասվանից հետո, նրա թղթերի մեջ գտել եմ ձեր մի քանի նամակները: Ես ձեզ առաջարկել էի, որ դրանք ստանալիք ինձանից: Բավական էր միայն, որ դուք հաղթահարեիք ձեր հպարտությունը և համաձայնեիք հասարակության այն կարծիքին, որ ես ամենազեղեցիկ տղամարդկանցից մեկն եմ և կանանց շրջանում մյուսներից ավելի շատ հաջողություն ունեմ: Դուք կամեցաք արհամարհանքով վարվել ինձ հետ. ուրեմն պիտի ներեք ինձ. ես էլ որոշեցի ձեր այդ նամակները հանձնել ձեր ամուսնուն՝:— Այ քեզ ազնի՛վ վարմունք: Թո՛ւհ, զզվելի՛ է: Ասեմք, միևնույն է, չէ՞ որ մի օր վերջ պիտի տրվեր: Ես այն կանանցից չեմ, որպեսզի անցյալում հափշտակությամբ կատարված արարքս այսօր համաձայնեի ուղղել մի պող, անզգա անառակությամբ: Լա՛վն են մեր տղամարդիկ: Մի մարդ, որ քառասուն տարեկան է, գեղեցիկուհի կին ունի, սկսում է սիրահետել ինձ, հիմարություններ ասելով ու անելով: Ի՞նչը կարող է արդարացնել նրան: Կի՞րքը: Ի՞նչ կիրք: Ինձ թվում է, որ նա դեռ տասնութ տարեկանում է կորցրել սիրահարվելու ընդունակությունը: Ոչ, պարզապես նա իմ մասին զանազան բամբասանքներ է լսել և ինձ մատչելի կին է համարում: Եվ ահա առանց քաշվելու սկսում է կրքոտ նամակներ գրել ինձ, որոնք լի են ամենազուհեիկ, երևի սառնորեն մտածված, քնքշություններով: Տասնյակ հյուրանոցներ մտնելով,

ամենասարսափելի բաները կպատմի իմ մասին, հետո կգա ինձ մխիթարելու: Ասում է, որ ատում է հասարակական կարծիքը, որ կիրքն արդարացնում է ամեն ինչ: երդվում է, որ սիրում է. գոհճիկ նախադասութիւններ է ասում. դեմքին կրքոտ արտահայտութիւն տալու ցանկութեամբ մի տեսակ տարօրինակ, թթու ժպիտներ է առջացնում: Նեղութիւն էլ չի կրում, որ սիրահարութիւնը լավ ձևացնի: Ինչո՞ւ նեղութիւն կրի, այդպես էլ գլուխ կգա, միայն թե ձեր պահպանած լինի: Եթե այդպիսի մարդուն ծաղրես կամ արհամարհես, որին նա արժանի է, ապա նա իրավունք է վերապահում վրեժ լուծելու նրա համար ծիծաղելին ավելի ահաւոյր է, քան ամենակեղտոտ արատը: Նա կնոջ հետ ունեցած կապերի մասին պարծենկոտութեամբ կպատմի՝ դա պատիվ է բերում նրան, իսկ նամակներն ասպարեզ հանելը փորձանք է, դա վարկաբեկում է նրան: Նա ինքն էլ զգում է, որ իրենք ծիծաղելի են և հիմարներ: Ինչի՞ տեղ են դնում նրանք այն կանանց, որոնց այսպիսի նամակներ են գրում: Անխի՞ղճ մարդիկ: Եվ ահա այժմ, ազնվաբար զայրույթի պոռթկման պահին, նա իմ նկատմամբ ստորութիւն է անում և, հավանաբար, իրեն արդար է համարում: Միայն նա չէ, բոլորն են այդպես... Դե, ավելի լավ, համենայն դեպս, կբացատրվեմ ամուսնուս հետ: Ես նույնիսկ ունեմ բացատրվելու ցանկութիւն: Նա կտեսնի, որ և՛թե ես մեզավոր եմ իր հանդեպ, ապա ինքն իմ հանդեպ առավել ևս մեզավոր է: Նա սպանեց իմ ողջ կյանքը: Իր եսասիրութեամբ կյանքս ցամաքեցրեց: Խլեց ինձանից ընտանեկան երջանկութեան հնարավորութիւնը. նա ինձ ստիպեց ողբալ անվերադարձ կորցրած ջահելութիւնս. ես այն անցկացրի նրա հետ գոհճիկաբար, առանց զգացմունքի, մինչդեռ հոգիս կյանք ու սեր էր աղերսում: Նրա դատարկամիտ, գծուծ շրջապատում իմ մեջ խեղճվեցին հոգեկան լավագույն արժանիքներս, սառեցին իմ ազնիվ խոյանքն ու ավյունը: Եվ, դրան ավելացրած, ես խղճի խայթ եմ զգում այն արարքիս համար, որից խուսափելն իմ կամքից չէր կախված:

Մտնում է Յուսուփը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է ր Կ ր օ ր Դ

ՎիշնեվՍկայա և Յուսուփ:

ՅՈՒՍՈՎ — (Ողջունելով): Դեռ չի՞ եկել:
ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Դեռ ոչ: Նստեցեք:

Յուսուփը նստում է:

Դուք ինչ-որ այլայլված եք:

ՅՈՒՍՈՎ — Ի՞նչ ասեմ... լեզուս չի գորում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Բայց ի՞նչ է պատահել:

ՅՈՒՍՈՎ — (Գլուխն օրորելով): Մարդն ասես նավ լինի ծովի վրա... Մի հանկարծակի արեկոծութիւն, նավաբեկութիւն, և չի՞ք փրկութիւն...

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ես ձեզ չեմ հասկանում:

ՅՈՒՍՈՎ — Ես ունայնութեան մասին եմ խոսում... Ի՞նչն է հաստատ սույն աշխարհում: Ինչո՞վ ենք գալիս, ինչո՞վ կներկայանանք... Միայն գործերով... կարելի է ասել, բեռը մեջքներին... դնում ենք դեպի մերկացում... և մինչև անգամ խորհրդածելու: (Ձեռքը թափ տալով): Ամենքս էլ գրանցված ենք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ի՞նչ, մա՞րդ է մահացել:

ՅՈՒՍՈՎ — Ո՛չ, հեղաշրջում է կատարվել կյանքում: (Քրախոտ է ֆաշում): Հարստութեան և մեծագարմութեան համար էլ խավարում է լինում... խավարում են և մեր զգացմունքները... Մոռանում ենք մեր մուրացկան եղբայրներին... գոռոզանում ենք, հեշտասեր դառնում... Հենց դրա համար էլ պատժվում ենք, մեր գործերի՛ համար:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ես դա վաղուց գիտեմ. միայն չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք իմ առաջ իդուր կորցնում ձեր պերճախոսութիւնը:

ՅՈՒՍՈՎ — Մո՞տ է իմ սրտին... Ասե՛նք, այս գործում ես մեծ պատասխանատվութեան չեմ ենթարկվի... բայց, այսպես թե այնպես, այդպիսի՛ անձնավորութեան գլխին...

Ի՞նչն է հաստատ... Իբր բարձր աստիճանն էլ չի պաշտպանում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ի՞նչ անձնավորութիւն: Ո՞ւմ մասին եք խոսում:

ՅՈՒՍՈՎ — Աստծո՞ւ պատիժն է իջել մեր գլխներին:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Դե, ասե՛ք:

ՅՈՒՍՈՎ — Իբր, զանցառութիւններ են բացահայտվել, գու՛մ մարների պակասորդներ և զանազան շարաշահումներ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Հետո ի՞նչ:

ՅՈՒՍՈՎ — Հետո այն, որ մեզ դատի են տալիս... այո՛-ս... Այսինքն, ճիշտն ասած, ես մեծ պատասխանատւութիւն չեմ ենթարկվի, իսկ Արիստարխ Վլադիմիրիչը պիտի...

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ի՞նչ պիտի:

ՅՈՒՍՈՎ — Պիտի պատասխան տա իր ամբողջ գույքով և դատի ենթարկվի իբր հակաօրինական արարքների համար:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Դեպի վեր նայելով): Սկսվո՞ւմ է հատուցումը:

ՅՈՒՍՈՎ — Իհարկե, մահկանացու է... Եթե սկսեն փորփրել Թերես մի բան գտնեն: Ես այսպես եմ կարծում. այժմյան խստութիւնների պայմաններում կհեռացնեն... Ես կազատանամ, մի կտոր հացից կզրկվե՛մ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Կարծեմ, դուք հեռու եք այդ բանից:

ՅՈՒՍՈՎ — Այո-ս, բայց երեխանե՛րը...

Լուսբյուն:

Ճանապարհին շարունակ մտածում էի, ցավով էի մտածում. պատճառն ի՞նչ է, որ այս երկնային պատիժն իջել է մեր գլխին: Եվ հասկացա՝ գոռոզութիւնն է պատճառը: Գոռոզութիւնը կուրացնո՞ւմ է մարդուն, փա՛ն է իրեցնում աչքերին:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Բավակա՞ն է, ի՞նչ գոռոզութիւն կա այստեղ. պարզապես կաշառակերութիւնն է պատճառը:

ՅՈՒՍՈՎ — Կաշառակերութիւնը: Կաշառքն ի՞նչ է որ, կարևոր բան չէ՞... այդ ո՞վ է, որ կաշառակեր չէ: Մարդիկ հեզ ու խոնարհ չեն, ահա գլխավորը... Ճակատագիրն ո՞ւ

բախտը միևնույն բաներն են, ինչպես որ նկարի վրա է պատկերված... անիվ է, վրան՝ մարդիկ... բարձրանում է վեր և նորից իջնում ցած. մարդը բարձրանում է, հետո ցածրանում, բարձրանում է, հանդարտվում ու փառաբանվում և հետո դարձյալ ոչնչութիւն է... Այսպես շարունակ պտտվո՞ւմ է: Բարեկեցութիւնդ կարգավորում ես, գույք ես ձեռք բերում... Երազանքներիդ մեջ բարձրանում ես և հանկարծ՝ մե՛րկ ես... Ճակատագրիդ տակ գրված է: (Զգացմունքով):

Հրաշալի է մարդն աշխարհում,
Տառապում է մի դար ամբողջ,
Երջանկութիւն է որոնում,
Չգիտի, որ դեպքերը ողջ
Ճակատագիրն է տնօրինում:

Ահա՛, թե ինչը պիտի հասկանանք: Ահա՛ թե ինչը մարդ պիտի հէշի: Դատարկ ու մերկ ենք ծնվում, դատարկ ու մերկ էլ գերեզման պիտի իջնենք: Էլ ինչի՞ համար ենք շարշարվում: Այ, սա՛ է փիլիսոփայութիւնը: Մեր խելքն ի՞նչ է որ, նա ի՞նչ կարող է հասկանալ:

Մտնում է Վիշնևսկին և լուս անցնում իր առանձնասենյակը: Յուսովը ստի է կանգնում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ինչպե՛ս է փոխվել:

ՅՈՒՍՈՎ — Լավ կլինեք, բժշկի հետևից ուղարկեցինք: Քիչ առաջ պաշտոնատանը նա իրեն շատ վատ զգաց: Այդպիսի հարված... ազնվագույն զգացմունքների տեղ մարդո՞ւմ... ինչպե՛ս կարող է տանել:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Զանգահարում է. մտնում է մի տղա): Վազիր բժշկի մոտ, խնդրիր թող շուտ գա:

Դալիս է Վիշնևսկին, նստում բազկաբառին:

Տ Ե Ս Բ Ա Ն Է Բ Բ Ո Ր Ղ

Նրանք և Վիշնևսկի:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Մտանճալով նրան): Ես Ակիմ Ակիմիչից
իմացա, որ ձեզ դժբախտութիւն է պատահել: Մի հուսա-
հատվեք:

Լուսյուն:

Դուք շատ եք փոխվել: Ձեզ վա՞տ եք զգում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ինչ կեղծավորութիւն: Ինչ նողկալի կեղծի՞ք
ինչ ստորութիւն:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — (Հպարտորեն): Ոչ մի կեղծիք: Ես խղճում
եմ ձեզ, ինչպես կիսղճայի յուրաքանչյուրին դժբախտու-
թյան պահին. ո՛չ ավել, ո՛չ պակաս: (Հեռանում է և
նստում):

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ինձ պետք չէ՞ ձեր կարեկցանքը: Մի՛ խղ-
ճացեք ինձ, ես պատվազուրկ եմ եղել, սնանկացել եմ:
Ինչի՞ համար:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Հարցրեք ձեր խղճին:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Մի՛ խոսեք խղճի մասին: Դուք իրավունք չու-
նե՞ք այդ մասին խոսելու... Յուսով, ես ինչո՞ւ կործան-
վեցի:

ՅՈՒՍՈՎ — Ծակատագրի անհաստատ լինելուց:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հիմարութիւն: Ի՞նչ ճակատագիր: Թշնամի-
ներս ուժեղ էին, ահա՞ պատճառը: Ահա՞ թե ինչը կոր-
ծանեց ինձ: Նզովյա՛լ լինեք: Իմ բարեկեցութեանը նա-
խանձեցին: Ինչպե՞ս շնախանձեին: Մարդը մի քանի տա-
րում բարձրանո՞ւմ է, հարստանո՞ւմ, համարձակորեն
ստեղծո՞ւմ է իր բարօրութիւնը, տնե՛ր ու ամառանոց-
նե՛ր է կառուցում, գյուղե՛ր է առնում մեկը մյուսի հե-
տևից, մի ամբողջ գլխով բարձրանո՞ւմ է նրանցից: Ինչ-
պե՞ս շնախանձեին: Որպեսզի նրանից անցնեն կամ թե-
կուզ հասնեն նրան՝ խելք է հարկավոր, հանճա՛ր: Եկը
չգտան, ուրեմն որոգայթներ պիտի լարեին: Ես խեղդվո՞ւմ
եմ կատաղութիւնից...

ՅՈՒՍՈՎ — Նախանձը մարդուն ամեն ինչ անել կուտ:
ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ինձ ոչ թե իմ անկումն է կատաղեցնում, այլ
հաղթանակի հաճույքը, որ ես կպատճառեմ նրանց իմ
անկումով: Այլևս ի՞նչ խոսակցութիւն, ի՞նչ ուրախու-
թիւն: Օ՛, գրողը տանի, ես չեմ գիմանա: (Զանգահա-
րում է):

Մտնում է Անտոնը:

Զո՛ւր...

Անտոնը մտաուցում է ու գնում:

Այժմ ես ձեզ հետ եմ ուզում խոսել:
ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ի՞նչ եք կամենում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ես կամենում եմ ասել, որ գուց անառա՛կ
կին եք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Արիատարի վաղիմիբիչ, այստեղ կողմնա-
կի մարդիկ կան:

ՅՈՒՍՈՎ — Կհրամայեք գնա՞մ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Մնա՛: Ես նույն բանք կասեմ բոլոր ծառաների
ներկայութեամբ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ինչո՞ւ եք ինձ վիրավորում: Զգիտե՞ք ում
վրա թափեք ձեր անզորութիւնը, դայրանում եք: Մեղք
չե՞ք գործում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ահա՞ ձեզ իմ ասածի ապացույցը: (Նրա անաչ
է նստում նամակների ծրարը):

Յուսովը բարձրացնում է այն և տալիս Վիշնևսկային:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Շնորհակալ եմ: (Զղակազորե՛ն աչքի է անց-
կացնում այն և դնում գրպանը):

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Յուսով, ի՞նչ են անում այն կնոջը, որը, շնա-
յաժ ամուսնու բոլոր բարեգործութեաններին, մոռանում
է իր պարտքը:

ՅՈՒՍՈՎ — Հըմ... հըմ...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ես կասեմ. վոնգո՞ւմ են խայտառակ փերպով:

Այո, Յուսով, ես դժբախտ եմ, կատարելապես դժբախտ, միայնակ եմ ես: Գոնե դու մի լքիր ինձ: Մարդս որքան էլ բարձր դիրք ունենա, երբ նա վիշտ ունի, այնուամենայնիվ, ընտանիքում է գտնում մխիթարանքը: (Չարաբյամբ): Իսկ ես ի՞նչ եմ գտնում իմ ընտանիքում:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ընտանիքի մասին մի՛ խոսեք: Դուք երբե՞ք ընտանիք չեք ունեցել: Դուք նույնիսկ չգիտե՞ք, թե ընտանիքն ինչ բան է: Ուրեմն այժմ թույլ տվեք ինձ, Արիստարիս Վլադիմիրիչ, ասել ձեզ այն ամենը, ինչ որ ես կրել եմ, ապրելով ձեզ հետ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դուք արդարացում չունե՞ք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ես չե՛մ ուզում արդարանալ, որովհետև հանցանք չե՛մ գործել: Բուպեական հափշտակությանս համար ես շատ մեծ վիշտ եմ կրել, շատ ստորացում, բայց, հավատացեք, ոչ թե ձեզ նման, այլ առանց տրտման և առանց նզովքի: Ես ուզում եմ միայն ասել ձեզ, որ եթե ես մեղավոր եմ, ապա, միայն ի՛մ, բայց ո՛չ ձեր առաջ: Դուք ինձ չպիտի հանդիմանեք: Եթե դուք սիրտ ունենայիք, կզգայիք, որ կործանել եք ինձ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հա՛-հա՛... Ուրիշին մեղադրեք ձեր վարքի համար, այլ ոչ թե ինձ:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ո՛չ, ձե՛զ: Դուք ինձ մի՞թե որպես կին էիք առնում ձեզ համար: Հիշեցեք, թե ինչպես առաջարկություն արեցիք ինձ: Երբ դուք դեռ փեսացու էիք, ես ձեզանից ընտանիքի մասին ոչ մի բառ չեմ լսել. դուք ձեզ պահում էիք, ինչպես մի ծերացած կնամո՛ղ, որը ջահել աղջիկներին նվերներով է գայթակղեցնում, նայում էիք ինձ հեշտասերի՛ նման: Դուք տեսնում էիք, որ ես զրկվում էի ձեզանից, բայց, շնայած դրան, այնուամենայնիվ, փողով գնեցիք ինձ, ինչպես Թուրքիայում գնում են գերուհիներին: Ուրեմն ի՞նչ եք ուզում ինձանից:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Մի՛ մոռացեք, որ դուք իմ կինն եք, և ես իրավունք ունեմ պահանջելու ձեզանից, որ կատարե՞ք ձեր պարտքը:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Այո, դուք ձեր գնած իրը, չեմ ասի սրբալի գործել եք, ո՛չ, այլ փակե՛լ, դիմակավորե՛լ եք ամուսնու-

թյամբ: Այլ կերպ չէր կարելի, հարազատներս չէին համաձայնի, իսկ ձեզ համար մեկ էր: Եվ հետո, երբ դուք արդեն իմ ամուսինն էիք, դուք ինձ վրա չէիք նայում որպես ձեր կնոջ. դուք իմ փաղաքշանքը փողո՛վ էիք գնում: Եթե նկատում էիք, որ ես զզվում եմ ձեզանից, ինձ մոտ էիք շտապում որևէ թանկարժեք նվերով և այն ժամանակ արդեն համարձակորե՛ն էիք մոտենում ինձ, լիակատա՛ր իրավունքով: Ես ի՞նչ կարող էի անել... այսպես թե այնպես, իմ ամուսինն էիք, ես հպատակվում էի: Օ՛, մարդ այլևս ինչպե՞ս հարգի ինքն իրեն: Ինչ փորձություն է, երբ ինքդ քեզ ատում ես: Իսկ ի՞նչ կատարվեց ինձ հետ, երբ հետո իմացա, որ անգամ այն փողերը, որ ինձ նվիրում էիք, ձերը չէի՛ն, որ նրանք ձեռք էին բերվել անազնի՛վ ճանապարհով:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Ուռփի է կանգնում): Լռեցե՛ք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Խնդրեմ, այդ մասին կլռեմ, դուք արդեն բավականաչափ պատժված եք, բայց ես կշարունակեմ. կշարունակեմ խոսել իմ մասին:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ասացեք, ինչ ուզում եք, մեկ է ինձ համար, իմ կարծիքը ձեր մասին չե՞ք փոխի:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Դուցե իմ խոսքերից հետո դուք ձե՛ր մասին փոխեք ձեր կարծիքը: Դուք հիշում եք, թե ես ինչպե՛ս խորթ էի զգում ինձ հասարակության մեջ, ինչպե՛ս էի վախենում նրանից: Եվ իմ վախն իզուր չէր: Բայց դուք պահանջում էիք, ես պիտի գիշերի ձեզ: Եվ ահա, բոլորովին հանպատրաստից, առանց խորհրդի, առանց ղեկավարի ինձ մտցրիք ձեր շրջանը, ուր ամեն քայլափոխի գայթակղություն էր և արա՛տ: Չկար մեկը, որ ինձ նախազգուշացներ, պաշտպաներ ինձ: Ասե՛նք, ես ինքս ճանաչեցի ձեր շրջանի մարդկանց ամբողջ գոտծությունն ու անառակությունը: Ես ինձ զգույշ էի պահում: Այն ժամանակ այդ մարդկանց մեջ ես հանդիպեցի Լյուբիմովին, դուք նրան ճանաչում էիք: Հիշում եք նրա բարի դեմքը, պայծառ աչքերը. որքա՛ն խելացի և որքա՛ն մաքուր էր նա: Ի՞նչ կրթությունամբ էր վիճում նա ձեզ հետ, ի՞նչ համարձակությամբ էր խոսում ամեն մի ստի ու կեղծիքի դեմ: Նա ասում էր այն, ինչ ես արդեն զգում էի,

թեև, ոչ այնքան հստակ: Ես սպասում էի, որ դուք կհասնա՞նք: Բայց դուք չհակաճանեցիք: Դուք միայն զբոսաբարտում էիք նրան, նրա ետևից զանազան գարշելի բամբասանքներ էիք մոզոնում, շանում էիք խայտառակել նրան հասարակության կարծիքի առաջ և ուրիշ ոչինչ: Ինչպե՞ս էի ուզում այն ժամանակ պաշտպան կանգնել նրան, բայց ես ո՛չ հնարավորություն ունեի, ո՛չ էլ բավականաչափ խելք: Ինձ մնում էր միայն... սիրել նրան:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դուք այդպես էլ վարվեցի՞ք:

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ես այդպես էլ վարվեցի: Հետո տեսա, թե դուք ինչպե՞ս էիք կործանում նրան, ինչպե՞ս էիք աստիճանաբար հասնում ձեր նպատակին: Այսինքն՝ ոչ միայն դուք, այլ բոլոր նրանք, ում որ պետք էր այդ: Դուք նախ՝ հասարակությանը զինեցիք նրա դեմ, ասում էիք, որ նրան ծանոթ լինելը վտանգավոր է երիտասարդների համար, հետո շարունակ պնդում էիք, որ նա ազատամիտ և կասկածելի մարդ է, և նրա պետերին զրգոնեցիք նրա դեմ. նա ստիպված եղավ թողնել ժառանգությունը, հարազատներին և հեռանալ քաղաքից... (Աչքերը ծածկում է քաշկիճակով): Ես այդ ամենը տեսնելու եմ, կրե՛լ ամբողջ տառապանքը: Ես տեսել եմ շարի՛ հաղթանակը: Իսկ դուք դեռ շարունակում եք ինձ համարել մի աղջնակ, որին գնել եք, և որը շնորհակալ պիտի լինի և սիրի ձեզ ձեր նվերների համար: Նրա նկատմամբ ունեցած իմ մաքուր, անարատ վերաբերմունքից դուք զազրելի բամբասանքներ հյուսեցիք, տիկիներն սկսեցին ինձ բացահայտորեն զրպարտել, իսկ գաղտնաբար նախանձել երիտասարդ և ծեր կնամոլներն սկսեցին առանց քաշվելու հետապնդել ինձ: Ահա՛ թե այդ ամենն ինչի հասցրեց ինձ, մի կնոջ, որը գուցե ավելի լավ վիճակի էր արժանի. մի կնոջ, որն ընդունակ էր հասկանալու կյանքի իսկական նշանակությունը ու շարիքն առելու: Ահա՛ այն բուրբ, ինչ որ ուզում էի ասել ձեզ: Այսուհետև դուք ինձանից ոչ մի նախատինք չեք լսի:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Իզուր: Ես այժմ աղքատ մարդ եմ, իսկ աղքատ մարդիկ իրենց կանանց իրավունք չեն տալիս հայհոյելու: Դա նրանց մոտ թույլատրվում է: Եթե ես լինեի այն

Վիշնևսկին, ինչպիսին էի՝ մինչև այսօր, ես ձեզ առանց մի խոսքի կվռնդեի: Իսկ այժմ, իմ թշնամիների շնորհիվ, մենք օրինավոր մարդկանց շրջանից պիտի ցած իջնենք: Ստորին շրջանում ամուսինները հայհոյում են իրենց կանանց, երբեմն էլ ծեծկոտվում են. և դա խայտառակություն չի համարվում:

Գալիս է ժաղովը իր կնոջ՝ Պոլինայի հետ:

Տեսարան չորրորդ

Երան, ժաղով և Պոլինա:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Դո՛ւ ինչու ես եկել:

ԺԱՂՈՎ — Մորեղբայր, ներեցե՛ք...

ՊՈԼԻՆԱ — Բարև ձեզ, բռնի: Բարև ձեզ, քնակին: (Նշեցում է Վիշնևսկայային): Եկել է պաշտոն խնդրելու: (Նստում է երա կողքին):

ՎԻՇՆԵՎՍԿԱՅԱ — Ինչպե՞ս: Մի՞թե: (Հեռաբերությամբ նստում է ժաղովին):

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Եկել ես, որ ծիծաղե՞ս մորեղբորդ վրա:

ԺԱՂՈՎ — Մորեղբայր, գուցե ես վիրավորել եմ ձեզ... Ներեցե՛ք ինձ... Երիտասարդական հրապուրանքը, կյանքին անծանոթ լինելը... ես չպիտի... Դուք իմ ազգականն եք...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հետո՞:

ԺԱՂՈՎ — Ես հասկացա, թե ինչ է նշանակում ապրել առանց օժանդակության... առանց հովանավորության... Ես ամուսնացած եմ...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հետո՞, ի՞նչ ես ուզում:

ԺԱՂՈՎ — Ես չբավորության մեջ եմ... Այսինքն՝ ոտե՛կս ինձ բավականացնում է, բայց կնոջս, որին ես սիրում եմ... Թույլ տվե՛ք, որ ես նորից ծառայեմ ձեր իշխանության տակ... Մորեղբայր, ապահովե՛ք ինձ: Տվե՛ք ինձ այնպիսի պաշտոն, որտեղ ես... կարողանամ (ցածրաձայն) մի որևէ բան ձեռք բերել...

ՊՈԼԻՆԱ — (Վիշնևսկայային): Մի քիչ եկամտաբեր...

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Քահ-հահ ծիծաղելով). Հա՛-հա՛-հա՛... Յուսով: Ահա՛ նրանք՝ հերոսները: Ա՛յն երիտասարդը, որ բոլոր խաչմերուկներում գոռում էր կաշառակերների մասին, խոսում էր ինչ-որ նոր սերնդի մասին, հենց մեզ մոտ էլ եկել է եկամտաբեր պաշտոն խնդրելու, որպեսզի կաշա՛ռք վերցնի: Լա՛վն է նոր սերունդը, հա՛-հա՛-հա՛-հա՛...

ԺԱԳՈՎ — (Ուռի է կանգնում): Օ՛հ... (Բռնում է կուրծքը):

ՅՈՒՍՈՎ — Ջահե՛լ էր: Ասածը հասկանո՞ւմ էր որ: Միայն բառե՛ր էին... Նրանք հենց այնպես բառեր էլ կմնա՛ն: Իսկ կյանքը իրենը ցույց կտա: (Քթախոտ է փաշում): Եվ փիլիսոփայությունը աղբանոց կշարտես: Միայն վատն այն է, որ նախ հարկավոր էր լսե՛լ խելոք մարդկանց, և ոչ թե կոպտել:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ո՛չ, Յուսով, ո՛չ, Հիշո՞ւմ ես ի՛նչ տոնով էր խոսում, որքա՛ն ինքնավստահ էր, ինչպե՛ս բորբոքված էր թափում իր զայրույթն արատի վրա: (Ժաղովին, ավելի ու ավելի տախանալով): Դու չէի՞ր, որ ասում էիր՝ աճում է կրթված, ազնիվ մարդկանց, ճշմարտության նահատակների ինչ-որ նոր սերունդ, որոնք մեզ կմերկացնեն, ցեխին կհավասարեցնեն: Ասա՛, դու չէի՞ր: Խոստովանում եմ, ես հավատում էի: Ես ձեզ խորապես ատում էի... ես վախենում էի ձեզանից: Այո՛, առանց կատակի: Բայց ի՛նչ ստացվեց: Դուք ազնիվ եք այնքան ժամանակ, քանի դեռ հօդս չեն ցնդել ձեր գլուխները խցկած դասերն ու քարոզները. ազնիվ եք միայն մինչև առաջին անգամ կարիքին հանդիպելը: Այ թե ուրախացրիր ինձ, ինչ ասել կուզի... Չէ՛, դուք արժանի չե՛ք, որ ձեզ ասեմ. ես ձեզ արհամարհո՞ւմ եմ:

ԺԱԳՈՎ — Արհամարհեցե՛ք, արհամարհեցե՛ք: Ես ինքս էլ եմ ինձ արհամարհում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ահա՛ այն մարդիկ, ովքեր իրենց վրա են վերցրել ազնվության մենաշնորհը: Իսկ ես ու դու խայտառակվե՛լ ենք: Մեզ դատի՛ են տալիս:

ԺԱԳՈՎ — Ի՛նչ եմ լսում:

ՅՈՒՍՈՎ — Մարդիկ միշտ էլ մարդիկ են: Նրանցից ամեն ինչ սպասելի է:

ԺԱԳՈՎ — Մորեղբա՛յր, ես չեմ ասել, թե մեր սերունդն ավելի ազնիվ է մյուսներից: Միշտ եղել են և կլինեն ազնի՛վ մարդիկ, ազնի՛վ քաղաքացիներ, ազնի՛վ աստիճանավորներ: Միշտ եղել են և կլինեն նաև թուլակա՛մ մարդիկ: Ահա՛ ձեզ ապացույց՝ ես ինքս: Ես ասել եմ միայն, որ մեր օրերում... (սկսում է ցածրաձայն և աստիճանաբար ոգևորվում) հասարակությունն օրեցօր դե՛ն է գցում արատի նկատմամբ իր առաջվա անտարբերությունը, լավո՛ւմ են եռանդագին բացականչություններ ընդդեմ հասարակական շարիքի... Ես ասում էի, որ մեր մեջ արթնանո՞ւմ է մեր թերությունների գիտակցումը. իսկ գիտակցելու մեջ կա լավ ապագայի հույս: Ես ասում էի, որ սկսում է ստեղծվել հասարակական կարծիքը... որ պատանիների մեջ դաստիարակվում է արդարության զգացումը, պատվի զգացումը, և նա աճում է. աճում է և պտուղներ կտա: Դուք չեք տեսնի, կտեսնենք մենք և շնորհակալ կլինենք աստծուց: Իմ թուլության վրա դուք մի՛ ուրախացեք: Ես հերոս չեմ, ես մի սովորական թուլակամ մարդ եմ, կամքից պակաս, ինչպես ինձ նման շատերը: Կարիքը, հանգամանքները, տգիտությունը, շրջապատի ապականությունը կարող են հալածել ինձ, ինչպես հալածում են փոստային ձիերին: Բայց մե՛կ դասն էլ բավական էր, թեկուզ այնպիսին, ինչպիսին ստացա այժմ... շնորհակա՛լ եմ դրա համար... բավական էր մե՛կ հանդիպում մի օրինավոր մարդու հետ, որպեսզի ես հարություն առնեի, որպեսզի պահպանվե՛ր իմ կայունությունը: Ես կարող եմ տատանվել, բայց հանցանք չե՛մ գործի, ես կարող եմ սայթաքել, բայց վայր չե՛մ ընկնի: Կրթությունը նրբացրել է իմ սիրտը, արատն անկարո՞ղ է կոպտացնել նրան:

Լուրջան:

Ես չգիտեմ, թե ուր փախչեմ ամոթից... Այո, ամոթալի է ինձ համար, ամոթալի է, որ ձեզ մոտ եմ գտնվում:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Ուռի կանգնելով): Ուրեմն դո՛ւրս կորիր այստեղից:

ԺԱԴՈՎ — (Մեղմորեն): Կգնամ: Պոլինա, այժմ կարող ես
դնալ մայրիկիդ մոտ. ես քեզ չեմ պահի: Այժմ արդեն
ինձ չե՛մ դավաճանի: Եթե ճակատագիրն ինձ ստիպի
միայն սև հաց ուտել, կուտեմ միայն սև հաց: Ո՛չ մի
բարիք ինձ չի գայթակղեցնի, ո՛չ մի բարիք: Ես ուզում
եմ պահպանել իմ մեջ մի թանկագին իրավունք, որ յու-
րաքանչյուրի աչքերին, առանց ամաչելու, առանց խղճի
խայթ զգալու, ուզղակի՛ նայեմ. կաշառակերների մա-
սին կոմեդիաներ և երգիծանք կարգամ ու դիտեմ, և
մաքուր սրտով, բացահայտ ծիծաղով քրքջա՛մ նրանց
վրա: Եթե իմ ամբողջ կյանքը բաղկացած լինի շարա-
րանքներից ու զրկանքներից, ես չե՛մ տրտնջա: Մեկ
մխիթարանք կխնդրեմ աստծուց, մեկ պարզևի կսպա-
սեմ: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պարզևի: (Կարճատև լռու-
քյունից հետո): Ես կսպասեմ այն ժամանակվան, երբ
կաշառակերը հասարակական գատից ավելի՛ վախենա,
քան՝ քրեականից:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Ես քեզ կխեղդե՛մ իմ ձեռքերով: (Օտրովում
է): Յուսո՛վ, վատ եմ զգում, ինձ տար առանձնատանյակ
(Գնում է Յուսովի հետ):

Տ Ե Ա Ր Ա Ն Գ Ի Ն Գ Ե Ր Ք Ե Դ

Վիլենսկայա, Ժաղով, Պոլինա, հետո Յուսով:

ՊՈԼԻՆԱ — (Մտտեմունում է Ժաղովին): Դու կարծում էիր, որ
ես քեզ իսկապես կլքեի՞: Ես դիտմա՛մբ էի... ինձ սովու-
րեցրե՛լ էին:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — Հաշտվեցե՛ք, զավակներս:

Ժաղովն ու Պոլինան համբուրվում են:

ՅՈՒՍՈՎ — (Դուռն շեմից): Բժի՛շկ բժի՛շկ կանչեք:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Բազկաբռոնից ելնելով): Ի՞նչ է, ի՞նչ...

ՅՈՒՍՈՎ — Արիստարիս Վլադիմիրիչը կաթվածահար եղավ:

ՎԻՇՆԵՎՍԿԻ — (Թույլ ճշարով): Ա՛հ... (Փլվում է բազկա-
բռոնին):

Պոլինան սարսափած հավում է Ժաղովին: Ժաղովը հենե-
վում է սեղանին և գլուխը կախում: Յուսովը կանգնած է
դռների մեջ, բոլորովին շփոթված:
Պատկեր:

Գավիթն կանգնած է սրճարանի դռներ: Իվանը կարգի է բերում սեղանները:

Դրամա չորս գործողությամբ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՁԻՆՔ

ԽԱՐԻՏԱ ԻԿԱՏԵՎԱ ՕԳՈՒԴԱՆՎԱ — միջին տարիքի աչրի: նրբազեղ է հազնված, բայց աչքառու և տարիքին անհամապատասխան:

ԱՐԻՍԱ ԴՄԻՏՐԻԵՎԱ — նրա աղչիկը, օրիորդ. լավ է հազնված, բայց համեստ:

ՄՈԿԻՅ ՊԱՐՄԵՆԻՉ ԿՆՈՒՐՈՎ — վերջերս հարստացած խոշոր գործարար, հսկայական կարողության տեր ասորիքն առած մարդ:

ՎԱՍԻԼԻ ԴԱՆԻԻՉ ՎՈԺԵՎԱՏՈՎ — շատ երիտասարդ, հարուստ, առևտրական ֆիրմայի ներկայացուցիչներից մեկը. հազուստով՝ եվրոպացի:

ՅՈՒԼԻՅ ԿԱՊԻՏՈՆԻՉ ԿԱՐԱՆԻՇԵՎ — երիտասարդ, ու ունևոր աստիճանավոր:

ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵՅԻՉ ՊԱՐԱՏՈՎ — հարուստ ազնվական, նավատեր, երեսունն անց:

ՌՈՐԻՋՈՆ:

ԳԱՎՐԻԼՈ — աղուամբի լուֆե տապան և զրոսայգու սրճարանի տեր:

ԻՎԱՆ — սրճարանի սպասավոր:

Գործադրությունը տեղի է ունենում ներկայումս Վալգայի ափին գտնվող Ռոյախիմով մեծ ֆաղաֆում:

Սրճարանի առջևի փոփոխի ճրագարակ Վալգայի բարձրագիւ ափին գտնվող ֆաղաֆային այգում: Գերատաններից աչ սրճարանի մասին է, ձախ՝ ծառերը: Խորֆում շուգունն ցածր ցանկապատ է, արից այն կողմ լայն տեսարան է բացվում. Վալգան է երևում, անտառներ, գյուղեր և այլն:

Հրատարակում սեղաններ կան և արտոներ: Մի սեղանը աչ կողմում է, սրճարանի կողմին, մյուսը՝ ձախ:

ԻՎԱՆ — Տես է, իսկի մարդ-մուրդ չի երևում բուլվարում:

ԳԱՎՐԻԼՈ — Տոներին միշտ էլ էդպես է: Հին սովորությամբ ենք ապրում. պատարագից հետո բուլորն իրենց գցում են տուն կարկանդակ ու կաղամբապուր ուտելու, իսկ աղուհացից հետո էլ՝ յոթը ժամ հանգիստ:

ԻՎԱՆ — Չէ մի՛ յոթ: Մի երեք-չորս ժամ: Վատ սովորությունն չէ:

ԳԱՎՐԻԼՈ — Իսկ երեկոյան ժամասացությունից առաջ կարթնանան ու թեյ կխմեն մինչև երրորդ ճանձրույթ...

ԻՎԱՆ — Չանձրույթ: Ախր ի՞նչ կա ճանձրանալու:

ԳԱՎՐԻԼՈ — Պինդ նստիր ինքնանեղի կողքին, մի երկու ժամ եփած ջուր կուլ տուր, կիմանաս: Վեցերորդ քրտինքը որ դուրս տվեց, վրա է տալիս, ուրեմն, առաջին ճանձրույթը... Կթողնեն թեյն ու դուրս կսողան բուլվար՝ օդ շընչելու ու ման գալու: Հիմա բարձր հասարակությունն է զրոսնում, հրե՛ն, Մոկիյ Պարմենիչ Կնուրովն է ման գալիս:

ԻՎԱՆ — Նա ամեն առավոտ շափշփում է բուլվարը, ասես երդում է կերել: Եվ թե ինչի՞ է այդքան իրեն նեղություն տալիս, չես հասկանում:

ԳԱՎՐԻԼՈ — Մարզվում է:

ԻՎԱՆ — Իսկ դա՞ ինչի համար է:

ԳԱՎՐԻԼՈ — Ախորժակի: Իսկ լավ ախորժակը պետք է նրան ճաշելու համար: Ի՞նչ ճաշեր է ուտում: Առանց մարզվելու այդպիսի ճաշ կուտվի՞:

ԻՎԱՆ — Էդ ինչի՞ է անընդհատ լռում:

ԳԱՎՐԻԼՈ — «Լռում»: Խելքդ թոցրել էս: Միլիոններ ունի, իսկ դու ուզում ես, որ խոսի: Ո՞ւմ հետ էր խոսելու Մի երկու-երեք մարդ կա քաղաքում, նրանց հետ խոսում է, էլ ուրիշ մարդ չկա. դե, նա էլ լռում է: Հենց դրանից է, որ այստեղ երկար չի ապրում: Չէր էլ ապրի, թե գործերը չլինեին: Իսկ խոսելու համար նա Մոսկվա է գնում:

Պետերբուրգ, արտասահման, այնտեղ նրա համար ազատ
շարժվելու շատ տեղ կա:
ԻՎԱՆ — Ահա նաև Վասիլի Դանիլիչը, լեռնալանջով բարձ-
րանում է: Նա էլ է հարուստ մարդ, բայց ասող-խոսող է:
ԳԱՎՐԻԼՈ — Վասիլի Դանիլիչը շահել է, դեռ չի պնդացել,
տարիքն առավ՝ նույն կուռքն է գառնալու:

Ձայից մտնում է Կնուսվր և, ուշադրությամբ լսարեն-
յով Գավրիլի և Իվանի զրոյն տալու, զբաղեցնելու հա-
նում է ֆրանսերեն լրագիրն ու կարգում: Աջից մտնում է
Վոժեվատովը:

Տեսարան երկրորդ

Կնուսով, Վոժեվատով, Գավրիլ և Իվան:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — (Հարգանքով խոնարհվելով): Մոկիյ Պարմե-
նիչ, պատիվ ունեմ ողջունելու:

ԿՆՈՒՐԻՈՎ — Ա՛, Վասիլի Դանիլիչ: (Անոթը մեկնում է): Այս
որտեղի՞ց:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Նավահանգստից: (Նստում է):

Գավրիլն մտ է գալիս:

ԿՆՈՒՐԻՈՎ — Որևէ մեկին դիմավորում էիք:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Դիմավորում էի, բայց չհաջողվեց: Երեկ Սեր-
գեյ Սերգեյիչ Պարատովից նամակ ստացա: Նրանից շո-
գենավ եմ գնում:

ԳԱՎՐԻԼՈ — Հո «կաստղական» չի՞, Վասիլի Դանիլիչ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Այո, «կաստղական»: Ի՞նչ կա որ:

ԳԱՎՐԻԼՈ — Լավ է սահում, ուժեղ նավ է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Բայց ահա խաբեց Սերգեյ Սերգեյիչը, չե-
կավ:

ԳԱՎՐԻԼՈ — Դուք նրան «Սամոյլոտով»¹ էիք սպասում, իսկ
նա կարող է իր շոգենավով գա, «կաստղականով»:

ԻՎԱՆ — Վասիլի Դանիլիչ, հրեն վերեւից մի շոգենավ էլ է
սլանում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ի՞նչ է, քի՞չ շոգենավեր են սլանում Վալ-
դայի վրա:

ԻՎԱՆ — Դա Սերգեյ Սերգեյիչի նավն է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Կարծե՞մ ես:

ԻՎԱՆ — Երևում է, որ նա է... «կաստղական» ծածկադողերը
աչք են ծակում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Յոթը վերստից ծածկադո՞ղ ես շոկում:

ԻՎԱՆ — Տասը վերստից էլ կարելի է շոկել... Համ էլ արագ
է գալիս, երևում է, որ տերը մեջն է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Իսկ հետո՞ւ է:

ԻՎԱՆ — Կողու ետեից դուրս եկավ: Ի՞նչ էլ ճղած գալիս է:

ԳԱՎՐԻԼՈ — Ասում ես ճղած գալի՞ս է:

ԻՎԱՆ — Գալիս է: «Սամոյլոտից» էլ արագ է սահում, շափ
ալած գալիս է:

ԳԱՎՐԻԼՈ — Սերգեյ Սերգեյիչը գալիս է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — (Իվանին): Դե, ուրեմն, կասես, երբ որ ափ
իջնեն:

ԻՎԱՆ — Լսում եմ... Երևի թնդանոթ էլ կրակեն:

ԳԱՎՐԻԼՈ — Անպայման:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ի՞նչ թնդանոթ:

ԳԱՎՐԻԼՈ — Սերգեյ Սերգեյիչն այստեղ Վալդայի մեջտեղում
խաբխա պցած լատանավեր ունի:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Գիտե՞մ:

ԳԱՎՐԻԼՈ — Մեկի վրա թնդանոթ կա: Երբ Սերգեյ Սերգեյի-
չին դիմավորում կամ ճանապարհ են գցում, միշտ էլ
կրակում են: (Նայելով սրճարանից այն կողմ): Հրեն,
կառքն էլ է նրա ետեից գնում, Զիրկովիչը: Երևի իմաց են
աղել նրան, որ գալու է: Ինքը, Զիրկովն է նստել կա-
ռուպանի տեղը: Նրա ետեից է գնում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ախր, որտեղի՞ց գիտես, որ նրա ետեից է
գնում:

ԳԱՎՐԻԼՈ — Ի՞նչ եք ասում. շորս ձի է իբար կողքի լված՝
նրա համար է: Էլ ո՞ւմ համար է Զիրկովն այդ ջոկովի
ձիերը լծել: Նայում սարսափում ես... ոնց որ առյուծներ

¹ «Սամոյլոտ» ընկերությանը պատկանող շոգենավ, ընկերության, որը
գոյություն է ունեցել 1853 թ.:

լինեն... Չորսն էլ լկամով են: Բա ձիասա՛րքը, ձիասա՛ր-
քը...
ԻՎԱՆ — Գնչուն էլ է Չիրկովի հետ կառապանի տեղը նստել,
տոնական կազակինով է, գոտին էլ ո՛նց է ձգել, հան-
կարծ երկու կես չլինի՞:
ԳԱՎՐԻԼՈ — Նրա ետևից են գնում: էլ ո՛ւմ ետևից պիտի էդ-
պիսի քառաձիով գնան: Նա՛ է:
ԿՆՈՒՐՈՎ — Շքեղ է ապրում Պարատովը:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ուրիշ բան որ շունենա, շքեղություն շատ
ունի:
ԿՆՈՒՐՈՎ — էժա՞ն եք առնում շոգենավը:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — էժան, Մոկիյ Պարմենիչ:
ԿՆՈՒՐՈՎ — Այո, պարզ է, թե չէ ի՞նչ իմաստ ունեք առնելը
ինչո՞ւ է ծախում:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Երևի շահ շունի:
ԿՆՈՒՐՈՎ — Իհարկե, ինչի՞ն է պետք: Աղա մարդու բան չէ
դա: Այ, դուք շահ կունենաք, մանավանդ, եթե էժան առ-
նեք:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Իսկական մեր բանն է, ներքևներում շատ
բեռ ունենք:
ԿՆՈՒՐՈՎ — Չլինի՞ փողի կարիք ունի: Ախր նա լավ ծախ-
սող է:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Իր գործն է: Մեր փողը պատրաստ է:
ԿՆՈՒՐՈՎ — Այո, փողով գործ կարելի է անել, կարելի է
(ժպիտով): Շատ փող ունեցողներին ի՞նչ, Վասիլի Դա-
նիլիչ:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Վա՞տ բան է: Դուք ինքներդ, Մոկիյ Պարմե-
նիչ, դա բոլորից լավ գիտեք:
ԿՆՈՒՐՈՎ — Գիտե՛մ, Վասիլի Դանիլիչ, գիտե՛մ:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Մի սառը բան չխմե՛նք, Մոկիյ Պարմենիչ:
ԿՆՈՒՐՈՎ — Ի՞նչ եք ասում, առավոտ շո՞ւտ: Ես դեռ չեմ նա-
խաճաշել:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ոչի՞նչ, ինձ մի անգլիացի ֆաբրիկայի դի-
րեկտոր է ասել, որ հարբուխի դեմ քաղցած փորով շամ-
պայն խմելը լավ է: Իսկ ես երեկ մի քիչ մրսել եմ:
ԿՆՈՒՐՈՎ — Ինչպե՞ս, այս տաք եղանակի՞ն:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Հենց շամպայնից էլ մրսեցի. շատ էին սա-
ռեցրել:
ԿՆՈՒՐՈՎ — Չէ, լավ չէ. մարդիկ կասեն մութուլուսին շամ-
պայն են խմում:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Դե լավ, որպեսզի մարդիկ հանկարծ վատ
բան չասեն, մենք էլ թեյ կխմենք:
ԿՆՈՒՐՈՎ — Այ, թեյն ուրիշ բան է:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — (Գավրիլոյին): Գավրիլո, հապա մի մեզ իմ
թեյից լցրու, հասկանո՞ւմ ես... Իմի՛ց:
ԳԱՎՐԻԼՈ — Լսո՞ւմ եմ: (Գնում է):
ԿՆՈՒՐՈՎ — Դուք ինչ-որ հատո՞ւկ տեսակի թեյ եք խմում:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Նույն շամպայնն է, էլի, միայն թե թեյա-
մանի մեջ կլցնի, բաժակներն էլ ափսոսանքով կմատուցի:
ԿՆՈՒՐՈՎ — Սրամիտ է:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Կարիքն ամեն ինչ սովորեցնում է, Մոկիյ
Պարմենիչ:
ԿՆՈՒՐՈՎ — Փարիզ, ցուցահանդեսի՞ եք գնալու:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Շոգենավն ահա կառնեմ, կուղարկեմ ներքև-
ները բեռնելու և կգնամ:
ԿՆՈՒՐՈՎ — Ես էլ մոտ օրերս պիտի գնամ, ինձ արդեն սպա-
սում են:

Գավրիլոն սկստեղին գրած շամպայնով քի երկու բիշամե
է բերում և երկու բաժակ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — (Լցնելով): Նորություն լսե՞լ եք, Մոկիյ Պար-
մենիչ, Լարիսա Դմիտրիևնան ամուսնանում է:
ԿՆՈՒՐՈՎ — Ինչպե՞ս թե ամուսնանում է: Ի՞նչ եք ասում:
Ո՞ւմ հետ:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Կարանդիշկեր:
ԿՆՈՒՐՈՎ — Դա՞ ինչ անհեթեթություն է: Ա՛յ քեզ խելք: Ախր
ո՞վ է Կարանդիշկեր: Նա ի՞նչ զույգ է Լարիսա Դմիտրիև-
նայի համար, Վասիլի Դանիլիչ:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Չէ՞ մի՞ զույգ: Բայց ի՞նչ արած, փեսացու
որտեղի՞ց գտնեն: Լարիսան, ախր, անօժիտ է:
ԿՆՈՒՐՈՎ — Հենց անօժիտներն են լավ փեսացու գտնում:
ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ժամանակները փոխվել են: Առաջ փեսացու-
27 Ա. Ն. Օստրովսկի — 417 —

ները շատ էին, այնպես որ անօժիտներին էլ էին հերիքում: Հիմա շատ դժվար են ճարվում. ինչքան օժիտ, այնքան էլ փեսացու, ավելորդ չկա: Անօժիտներին այլևս չի հերիքում: Թե որ լավերը լինեին, Խարիտա Իգնատևան Կարանդիշերին աղջիկ կտար:

ԿՆՈՒՐՈՎ — Ձեռներեց կին է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Երևի թե ուս չի:

ԿՆՈՒՐՈՎ — Ինչո՞ւ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ծատ է ճարպիկ:

ԿՆՈՒՐՈՎ — Այդ ինչպե՞ս է վրիպել: Օգուդալովներն, այնուամենայնիվ, օրինավոր ընտանիք են, և հանկարծ՝ ինչ-որ Կարանդիշե... Այդքան աչքաբաց կին է և... տունն էլ միշտ լիքն է անկնիկ տղամարդկանցով:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Գնալը, բոլորն էլ գնում են, որովհետև շատ ուրախ տուն է, օրիորդը լավիկն է, զանազան գործիքներ է նվագում, երգում է, վարձունքն ազատ է: Ձգում է Բայց դե մարդ խելքով պետք է ամուսնանա:

ԿՆՈՒՐՈՎ — Ախր երկուսին արդեն մարդու է տվել:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Տալը տվել է, բայց դե նրանց է պետք հարցնել, թե ի՞նչ օրի են: Մեծին ինչ-որ լեռնցի տարավ, կովկասցի իշխանիկ: Միծաղից փորդ կրճնեիր: Հենց որ տեսավ աղջկան՝ ցնցվեց, լաց եղավ նույնիսկ, այդպես էլ երկու շաբաթ կանգնած մնաց նրա կողքին. խանչալը բռնած աչքերն էր փայլեցնում, որ մարդ մոտ չգա: Ամուսնացավ ու գնաց, բայց, ասում են, Կովկաս չի հասցրել, ճամփին մորթել է խանդից: Մյուսն էլ ինչ-որ օտար-երկրացու գնաց, բայց հետո պարզվեց, որ ոչ թե օտար-երկրացի է, այլ խաբեբա:

ԿՆՈՒՐՈՎ — Հիմար բան չէ Օգուդալովայի արածը. կարողութունը մեծ չէ, օժիտ տալ չի կարող, դե ինքն էլ բաց է ապրում, բոլորին ընդունում է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ինքն էլ է սիրում ուրախ ապրել: Բայց միջոցներն այնքան քիչ են, որ նույնիսկ այդպիսի կյանքի համար էլ չեն հերիքում:

ԿՆՈՒՐՈՎ — Իսկ որտեղի՞ց է ճարում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Փեսացուներն են տալիս: Քսակները բացում են. նայած թե ում ինչքան է դուր գալիս աղջիկը... Հետո

էլ օժիտի համար փեսացուցից կվերցնի, օժիտի մասին մի հարցրու:

ԿՆՈՒՐՈՎ — Կարծում եմ, որ փող տվողները միայն փեսացուները չեն, ձեզ վրա էլ, օրինակ, էժան չի նստում ձեր այցելութունները:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ձեմ սնանկանա, Մոկիյ Պարմենիչ: Ի՞նչ արած, հաճույթի համար վճարել է պետք, ձրի ձեռք չի բերվում: Իսկ նրանց տանը լինելը մեծ հաճույթ է:

ԿՆՈՒՐՈՎ — Իրոք որ հաճույթ է, դուք դա ճիշտ եք ասում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Իսկ ինքներդ համարյա երբեք չեք լինում:

ԿՆՈՒՐՈՎ — Անհարմար եմ զգում. նրանց տանը ամեն տեսակ խաժամուժ լինում է. հետո հանդիպում են, բարևում, կաշում, պոկ չեն գալիս: Ահա, օրինակ, Կարանդիշեը, ինչի՞ս է պետք նրա ծանոթութունը:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Այո, նրանց տունը ոնց որ շուկա լինի:

ԿՆՈՒՐՈՎ — Դե, դրա լավը ո՞րն է: Մեկը Լարիսա Դմիտրիևնային հաճոյախոսութուններ է փորձում անել, մյուսը քնքուշ է ձևանում, շարունակ բզզում են ականջիդ տակ, չեն թողնում մի բառ հետը խոսես: Հաճելի կլիներ նրա հետ շուտ-շուտ հանդիպելը, եթե միայնակ լիներ, խանգարողներ չլինեին:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ամուսնանալ է պետք:

ԿՆՈՒՐՈՎ — Ամուսնանալ: Ոչ բոլորին է կարելի, բացի այդ, ոչ բոլորն են ուզում. ես ահա, օրինակ, ամուսնացած եմ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Էլ ուրիշ ճար չկա: Խաղողը լավն է, բայց խակ է, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Կարծո՞ւմ եք:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Պարզ բան է: Դրանք ուրիշ տեսակ մարդիկ են. դեպքեր շատ են հղել, բայց ահա չեն հրապուրվել: Թեկուզ Կարանդիշեը լինի, միայն թե ամուսնանա:

ԿՆՈՒՐՈՎ — Բայց վատ չէր լինի մարդ նման օրիորդի հետ Փարիզ գնար, ցուցահանդես:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Այո, ձանձրալի չի լինի, հաճելի զբոսանք է: Իսկ ի՞նչ ծրագրեր ունեք, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Հո ինքներդ էլ այդպիսի ծրագրեր չունե՞ք:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ես ի՞նչ: Ես պիտանի չեմ նման գործերում: Կանանց հետ համարձակ չեմ. գիտեք, չափից ավելի

բարոյական, նահապետական է դաստիարակութիւնս
ԿՆՈՒՐՈՎ — Ասում եք, էլի: Գուք ինձնից շատ հնարավորու-
թյուն ունեք. ջահելութիւնը մեծ բան է: Ոչ էլ փող կ'ինա-
յեք, էժան շոգենալ եք առնում, այնպես որ՝ եղած օգու-
տից կարելի է: Բայց դա, երևի, «Լաստոշկայից» էժան
չնստի:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ամեն մի ապրանք իր գինն ունի, Մոկիչ Պար-
մենիչ: Չնայած ջահել եմ, բայց չափը չեմ անցնի, ավել
չեմ տա:

ԿՆՈՒՐՈՎ — Խոստում մի տվեք: Ձեր հասակում սիրահարվելն
ի՞նչ է որ, իսկ սիրահարվելուց հետո էլ ի՞նչ հաշիվ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Չէ, Մոկիչ Պարմենիչ, իմ մեջ նման բան բո-
լորովին չկա:

ԿՆՈՒՐՈՎ — Ի՞նչ բան:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Այն, որ սեր են ասում:

ԿՆՈՒՐՈՎ — Գովելի է, լավ վաճառական կգտանաք: Բայց և
այնպես դուք Լարիսա Դմիտրիևնայի հետ ավելի մոտ եք,
քան ուրիշները:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ինչո՞ւ էմ մոտ: Երբեմն մորից թաքուն մի
բաժակ շամպայն եմ լցնում, երգ եմ սովորեցնում, սի-
րավեպեր եմ տալիս, որոնք աղջիկներին չի թույլատրվում
կարդալ:

ԿՆՈՒՐՈՎ — Ուրեմն կամաց-կամաց փշացնում եք:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ի՞նչ ինչ: Հո գոռով չեմ ստիպում: Ես ինչո՞ւ
պիտի նրա բարոյականութիւնը մտահոգվեմ. նրա դա-
յական եմ, ի՞նչ է:

ԿՆՈՒՐՈՎ — Բայց ես էլի զարմանում եմ, մի՞թե Լարիսա
Դմիտրիևնան Կարանդիշևից բացի ուրիշ ոչ մի փեսացու
չունի:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ուներ, բայց նա, ախր, անխելք է:

ԿՆՈՒՐՈՎ — Ինչպե՞ս թե անխելք: Այսինքն հիմա՞ր է:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Հիմար չէ, բայց խորամանկութիւնն չունի,
մորը չի քաշել: Մայրը խորամանկութեան հետ շոգոբորթ
էլ է, իսկ սա մեկ էլ չեղած տեղը այնպիսի բան կասի:

ԿՆՈՒՐՈՎ — Այսինքն, ճշմարտութիւնը:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Այո՞, ճշմարտութիւնը, իսկ անօժիտներին
դա չի կարելի: Ում համակրում է, բոլորովին չի թաքց-

նում: Սերգեյ Սերգեյիչ Պարատովն, օրինակ, անցյալ
տարի հայտնվեց, Լարիսան հայացքը նրանից չէր կտա-
րում, իսկ Սերգեյ Սերգեյիչը մի երկու ամիս եկավ-գնաց,
բոլոր փեսացուներին խրտնեցրեց, մեկ էլ չքացավ, ան-
հետ կորավ:

ԿՆՈՒՐՈՎ — Իսկ ի՞նչ էր պատահել որ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ո՞ւր գիտի նրան. ախր մի տեսակ տարօրի-
նակ մարդ է: Իսկ Լարիսան ո՞նց էր սիրում նրան, քիչ
էր մնում վշտից մեռնել: Ի՞նչ զգայուն է: (Միծաղում է):
Վազեց, որ ետևից հասնի, մայրը երկրորդ կայարանից
ետ բերեց:

ԿՆՈՒՐՈՎ — Իսկ Պարատովից հետո փեսացուներ եղե՞լ են:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Երկուսը մոտ-մոտ էին անում. հողացավով
հիվանդ մի ծերուկ և ինչ-որ մի իշխանի հարստացած
կառավարիչ, որ միշտ հարբած էր: Լարիսայի միտքն
ուրիշ տեղ էր, իսկ սիրալիրութիւնն անել պետք էր, մայ-
րիկն էր հրամայել:

ԿՆՈՒՐՈՎ — Նախանձելի վիճակում չէ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Միծաղելի է նույնիսկ: Երբեմն աչքերին ար-
ցունքներ են երևում, տեսնում ես, որ լացը գալիս է, իսկ
մայրիկը հրամայում է ժպտալ: Հետո հանկարծ այդ գան-
ձապահը հայտնվեց... Ա՛յ թե փող էր շաղ տալիս, Խա-
րիտա Իգնատևնային փողի մեջ թաղեց: Բոլորին զբեց,
բայց այդ խաղը երկար չտևեց. հենց Օգուզալովների տանն
էլ նրան ձերբակալեցին: Խայտառակութիւնն էր, հա՛:
(Միծաղում է): Համարյա մեկ ամիս մայր ու աղջիկ ոչ
մեկի աչքին չէին երևում: Եվ Լարիսան մորը կտրակա-
նապես հայտարարեց. «Հերիք է,— ասում է,— ինչքան
խայտառակվեցինք. հենց առաջին ուղողի հետ կպասկ-
վեմ, հարուստ է, աղքատ է՝ ջոկողութիւնն չեմ դնի»: Հենց
այդ ժամանակ էլ դեմը ելավ Կարանդիշևն իր առաջար-
կութիւնը:

ԿՆՈՒՐՈՎ — Եվ որտեղի՞ց հայտնվեց այդ Կարանդիշևը:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Վաղուց էր նա Օգուզալովների տանը պտրտ-
վում: Քշելը չէին զրում, բայց մեծ պատիվ էլ չէին տա-
լիս: Երբ ընդմիջում եղավ, հարուստ փեսացուներից ոչ
մեկը չէր երևում, նրան գոնե մի քիչ մարդատեղ էին

գնում, հենց այնպես թեթևակի հրավիրում էին, որպեսզի
տունը լրիվ դատարկ չլինի: Իսկ երբ հարուստ մեկը
հայտնվում էր, լացող կզար, որ նայեիր Կարանդիչին. ո՛չ
խոսում էին հետը, ո՛չ երեսին նայում: Իսկ նա անկյուն
քաշված տարբեր դերեր էր խաղում, վայրենի հայացք-
ներ նետում, հուսահատ ձևերում: Մի անգամ փորձել էր
ինքնասպանություն գործել, բան դուրս չէր եկել, դարձել
էր բոլորի ծիծաղի առարկան: Մի զվարճալի դեպք էլ
եղավ. օրերից մի օր նրանց տանը, դեռևս Պարատովի
ժամանակ, դիմակահանդես էր: Կարանդիչը ավազակի
շորեր էր հագել, ձեռքն առել կացինը ու բոլորի վրա դա-
զանային հայացքներ էր գցում, առանձնապես Սերգեյի:
Սերգեյի:

ԿնՈՒՐՈՎ — Եվ ի՞նչ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Կացինը ձեռքից առան ու ստիպեցին, որ շո-
րերը փոխի, թե չէ, պայման դրին՝ դուրս կորիր այս-
տեղից:

ԿնՈՒՐՈՎ — Ուրեմն համառության համար է պարզևատրվել
Ուրախ է, կարծում եմ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Էն էլ ոնց է ուրախ, նարնջի պես փայլում է:
Շատ ծիծաղելի է: Ախր խենթի մեկն է: Փոխանակ շուտ
ամուսնանար և, մինչև ասեկոսեները վերջանալը, իր
փոքրիկ կալվածքը գնար, — Օգուդալովների ուզածն էլ
էր դա, — կարիսային բուլվար է քարշ տալիս, նրան թևան-
ցուկ արած քայլում է, գլուխն այնպես տնկում, որ մեկ
էլ տեսար մեկնումեկին ոտնատակ ալեց: Եվ հետո, չգի-
տես ինչու, ականոց է դնում, իսկ մինչ այդ երբեք չէր
դրել: Բարևելիս գլուխը հազիվ է շարժում, իսկ տո՛նը,
տո՛նը: Առաջ ձայնը չէիր լսի, իսկ հիմա՝ ես հա ետ. «Ես
ուզում եմ, ես կամենում եմ»:

ԿնՈՒՐՈՎ — Ուու մուծիկի նման. հերիք չէ, որ հարբած է,
պիտի ծամածուծություններ էլ անի, որ բոլորը տեսնեն.
Կկոտրատովի, մի երկու անգամ կգնգատեն, հետո գոհ
կգնա քնելու:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Այո, ինչպես երևում է, Կարանդիչին էլ է այդ
օրն ընկնելու:

ԿնՈՒՐՈՎ — Խեղճ ազդիկ, կարծում եմ, նրան նայելիս շատ է
տառապում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Խելքին փշել է բնակարանը ձևափոխել. իս-
կական խենթ է: Առանձնասենյակի պատին գրողանոց
գորգ է խփել, վրան խանշալներ, Տուլայի ատրճանակ-
ներ կախել: Գոնե որսորդ լիներ, ախր, կյանքում ձեռքին
հրացան բռնած չկա: Մարդկանց առն է քարշ տալիս
ցույց տալու: Պիտի գովես, թե չէ կնեղանա. ինքնասեր
մարդ է, նախանձ: Զի է գլուղից բերել տվել, ինչ-որ քրնձ-
ոտտ յարու, կառապանք պատիկ է, իսկ կաֆտանը՝ մե-
ծի: Եվ այդ ուղտով կարիսա Դմիտրիևային ման է տա-
լիս: Ինքն այնպես հպարտ է նստում, կարծես հազարա-
նոց վարգաձիեր են լծված: Հենց որ բուլվարից դուրս է
գալիս, բղավում է ոստիկանին. «Հրամայիր մոտ բերեն
կառքս»: Եվ մոտենում է այդ կառքն իր երածշտուկամբ.
բոլոր պտուտակները, բոլոր օղակները ձռնչում են, ամեն
մեկն իր ձայնով, զսպանակներն այնպես են գողգողում,
ասես կենդանի արարածներ լինեն:

ԿնՈՒՐՈՎ — Խեղճ կարիսա Դմիտրիևա: Ափսո՛ւ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Շատ եք գթասիրտ դարձել:

ԿնՈՒՐՈՎ — Մի՞թե դուք շեք տեսնում, որ այդ կինն ստեղծ-
ված է շքեղ կյանքի համար: Թանկագին ազամանդը թանկ
կագին էլ շրջանակ է ուզում:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Լավ էլ ականագործ:

ԿնՈՒՐՈՎ — Բացարձակապես ճիշտ եք: Ակնագործը սովորա-
կան արհեստավոր չէ, նա պետք է նաև արվեստագետ
լինի: Աղքատ պայմաններում, այն էլ հիմար ամուսնու
ձեռքին, նա կամ կկործանվի, կամ էլ կգոհականա:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Իսկ ես կարծում եմ, որ կարիսան շուտով
կհեռանա նրանից: Առայժմ դեռ ոնց որ մեռած լինի, իսկ
երբ ուշքի եկավ ու մոտիկից մի լավ նայեց ամուսնուն...
(Յածրճայն): Ահա նրանք, անունը տուր, սփոռոց գցիր...

Մտնում են Կարանդիչը, Օգուդալովան, կարիսան: Ված-
վատովը կանգնում և գլուխ է առնում: Կնուրովը հանում է
լրացիր:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Պ

Կնուրով, վածեվատով, Կարանդիչե, Օգուդալովա, Լարիստե խորհում նստում է ցանկապատի մաս դրված նստառանին ու նեադիտակով նայում վազոյից այն կողմ, Գալ-րիս, Իվան:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — (Մտտեճալով սեղանին): *Բարև ձեզ, պարու-նայք:*

Կարանդիչը նրա ետեից մտնեում է: Վածեվատովը ձեռք մեկնում է Օգուդալովային և Կարանդիչին: Կնուրովը լուռ, առանց տեղից վեր կենալու, ձեռք մեկնում է Օգուդալովային, թեթևակի գլխով է աճում Կարանդիչին և խորասուզվում բարբի ընթերցանա-րյան մեջ:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Խարիտա Իգնատևնա, համեցեք նստեք: (Սքոռ է մտնեցնում):*

Օգուդալովան նստում է:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Թեյ կհրամայե՞ք:*

Կարանդիչը նստում է քիչ նեոս:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — *Թերևս մի բաժակ խմեմ:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Իվան, մի բաժակ բեր և տաք ջուր ավի-լացրու:*

Իվանը վերցնում է թեյամանք և զնում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — *Տարորինակ բան է, այս ժամին թե՞յ կխը-մեն: Զարմանում եմ:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Մարավ եմ, Յուլիյ Կապիտոնիչ, իսկ թե ինչ խմեմ՝ չգիտեմ: Խորհուրդ տվեք, շատ շնորհակալ կլի-նեմ:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Նայում է ժամացույցին): *Հիմա կեսօր է, կարելի է մի ըմպանակ օդի խմել, կոտլետ ուտել, հետո խմել մի բաժակ լավ գինի: Ես միշտ այդպես եմ նախա-ճաշում:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — (Օգուդալովային): *Ա՛յ թե կյանք է, Խարիտա Իգնատևնա, նախանձել կարելի է: (Կարանդիչին): Կապրեի գոնե մի օր ձեր փոխարեն: Օդի՛, գինի՛: Մեզ այդպես չի կարելի, խելքներս կթոցենք: Ձեզ ամեն ինչ կարելի է, դուք կապիտալ չեք վատնում, որովհետև չու-նեք, իսկ մենք այսպես դառը ճակատագրով ենք աշ-խարհ եկել, շատ մեծ գործեր ունենք. այնպես որ, խելք-ներս կորցնել մեզ չի կարելի:*

Իվանը թեյաման է մատուցում և զավարեն:

Համեցեք, Խարիտա Իգնատևնա: (Լցնում է զավաթը և մատուցում): Ես թեյն էլ եմ սառը խմում, որ մարդիկ շատեն, թե ոգելից խմիչքներ եմ գործածում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — *Թեյը սառն է, միայն թե, վասյա, շատ թունդ է:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Ոչի՛նչ, շնորհ արեք խմեք: Մաքուր օդում վնասակար չէ:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Իվանին): *Այսօր ճաշին իմ տուն կգաս մա-տուցելու:*

ԻՎԱՆ — *Լսում եմ, Յուլիյ Կապիտոնիչ:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — *Դու, եղբայր, մաքուր կհագնվես:*

ԻՎԱՆ — *Պարզ բան է՝ ֆրակ, էղբանը հասկանում ենք:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — *Վասիլի Դանիլիչ, ահա թե ինչ. այսօր եկեք իմ տուն ճաշելու:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — *Խոնարհաբար շնորհակալ եմ: Ի՞նչ էլ կհրա-մայեք ֆրակ հագնել:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — *Ինչպես կամենաք. մի՛ք քաշվեք: Բայց կանայք են լինելու:*

ՎՈԺԵՎԱՏՈՎ — (Գլուխ տալով): *Լսում եմ: Հուսով եմ, որ չեմ վարկաբեկի ինձ:*

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Մտտեճում է Կնուրովին): *Մոկիյ Պարմենիչ, չե՞ք հաճի այսօր ճաշել իմ տանը:*

ԿՆՈՒՐՈՎ — (Զարմացած նայում է նրան): *Ձեր տա՞նը:*

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — *Մոկիյ Պարմենիչ, նույնն է, թե մեր տանը՝ այդ ճաշկերույթը կարիսայի համար է:*

ԿՆՈՒՐՈՎ — Ուրեմն դ՞ուր եք հրավիրում: Լավ, ես կգամ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դե, ուրեմն հույս ունեհեամ:
ԿՆՈՒՐՈՎ — Արդեն ասացի, որ կգամ: (Լազգիւ է կարգով):
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Յուրիյ Կապիտոնիչ, իմ ապագա փեսայ,
Լարիսային տալիս եմ նրան կնութեան:
ԿՆՈՒՐՈՎ — (Շարունակելով կարգալ): Դա ձեր գործն է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այո, Մոկիյ Պարմենիչ, այդպես որոշեցի:
Ես ընդհանրապես միշտ էլ վեր եմ եղել նախապաշար-
մունքներից:

Կեւորվը դեմք ծածկում է լրագրով:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — (Օգուղալովային): Մոկիյ Պարմենիչը խիստ
մարդ է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Մտաեմալով Վոտեվատովին): Ես ուզում եմ,
որ Լարիսա Դմիտրիենային շրջապատեն միայն ընտի
մարդիկ:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Ուրեմն ե՞ս էլ եմ ընտրյալների հասարակու-
թեանը պատկանում: Շնորհակալ եմ, չէի սպասում:
(Քավրիլային): Ինչքա՞ն եմ վճարելու թեյի համար:

ԳԱՎՐԻՆ — Երկու բաժի՞ն եք հաճել պատվիրել:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Այո՛, երկու բաժին:

ԳԱՎՐԻՆ — Դե, դուք ինքներդ էլ գիտեք, Վասիլի Դանիլի
առաջին անգամը հո չէ՞... Տասներեք արբի:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Ես կարծում էի էժանացած կլինի:

ԳԱՎՐԻՆ — Ինչո՞ւ պետք է էժանանա: Կուրսը, մաքսը... Ինչ
պե՞ս կարելի է:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Ի՞նչ ես կպել, ես հո չեմ վիճում հետդ: Ստու-
ցիր փողն ու ինձ հանգիստ թող: (Փողը տալիս է):

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչո՞ւ է այդքան թանկ, չեմ հասկանում:

ԳԱՎՐԻՆ — Մեկի համար թանկ է, մյուսի համար՝ ոչ: Դուք
այդպիսի թեյ չեք խմում:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — (Կարանդիչեին): Վերջ տվեք, մի խառնվեք
ուրիշների գործերին:

ԻՎԱՆ — Վասիլի Դանիլիչ, «Լաստոչկան» մոտենում է:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Մոկիյ Պարմենիչ «Լաստոչկան» մոտենում է:

չէ՞ք ուզենա նայել: Մենք ներքե չենք իջնի, վերևից
կնայենք:

ԿՆՈՒՐՈՎ — Գնանք: Հետաքրքիր է: (Վեր է կենում):

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Վասյա՛, ես քո կառքով տուն կգնամ:

ՎՈՏԵՎԱՏՈՎ — Գնացեք, միայն թե շուտ ետ ուղարկեք: (Մո-
տենում է Լարիսային և ցածրաձայն խոսում նրա հետ):

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — (Մտաեմում է Կեւորովին): Մոկիյ Պարմենիչ,
հարսանիքի ենք պատրաստվում, չեք պատկերացնի, թե
ինչքան հոգսեր կան:

ԿՆՈՒՐՈՎ — Այո...

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Հանկարծ այնպիսի ծախսեր են բացվում,
որ երբեք մտքովք չէր անցնի... Վաղը, օրինակ, Լարիս-
այի ծննդյան օրն է, կուզենայի մի բան նվիրել...

ԿՆՈՒՐՈՎ — Լավ, ես կանցնեմ ձեր տուն:

Օգուղալվան գնում է:

ԱՐԻՍԱ — (Վոտեվատովին): Ցտեսու՞թյուն, Վասյա՛:

Վոտեվատովն ու Կեւորվը գնում են, Լարիսա ձառնում
է Կարանդիչին:

Տ Ե Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Պ

Կարանդիչ և Լարիսա:

ԱՐԻՍԱ — Ես անընդհատ Վուզայի այն կողմն էի նայում.
Ի՞նչ լավ է այնտեղ, ա՛յն կողմում: Գյո՛ւղ գնանք, առանց
հապաղելու:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Վուզայի այն կո՞ղմն էիք նայում: Իսկ ի՞նչ
էր ասում ձեզ Վոտեվատովը:

ԱՐԻՍԱ — Ոչինչ, դատարկ բաներ: Այնպե՛ս եմ ուզում Վու-
զայի այն ափին լինել, անտառում... (Մտախոհ):
Գնա՛նք, դնա՛նք այնտեղից:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Բայց դա տարօրինակ է: Զեզ հետ նա ինչի՞
մասին կարող էր խոսել:

ԱՐԻՍԱ — Ա՛հ, ինչի մասին էլ որ խոսեր, ձեր ի՞նչ գործն է
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Վասյա եք ասում նրան: Այդ ի՞նչ մտերմու-
թյուն է երիտասարդ մարդու հետ:

ԱՐԻՍԱ — Մենք մանկությունից ենք ծանոթ, երեխա ժամա-
նակվանից միասին խաղացել ենք. դե, ես էլ վարժ-
վել եմ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դուք պետք է հին սովորութիւնները թող-
նեք: Այդ ի՞նչ մոտիկություն է հիմար, դատարկ տղայի
հետ: Զեր մեջ մինչև հիմա ինչ եղել է, վերջ պիտի տաք:

ԱՐԻՍԱ — (Վերավորված): Մեր մեջ ոչ մի վատ բան էլ չի
եղել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Գնչուների թափառախումբ է եղել, ահա թի
ինչ է եղել:

Լարիսան սքսում է արցունքները:

Ինչո՞ւ վիրավորվեցիք, ասացե՛ք խնդրեմ:

ԱՐԻՍԱ — Դե ինչ, գուցե և գնչուների թափառախումբ. միայն
թե այդ թափառախումբում, համենայն դեպս, ուրախ էր
Կարողանաք, արդյոք, դուք ինձ այդ թափառախումբից
ավելի լավ բան տալ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իհարկե, կտա՛մ:

ԱՐԻՍԱ — Ինչո՞ւ եք դուք միշտ երեսուվս տալիս այդ թա-
փառախումբը: Մի՞թե ինձ դուր էր գալիս այդ կյանքը:
Ինձ հրամայված էր, այդպես էր պետք մայրիկին. ուրեմն
կամա թե ակամա, ես պետք է այդպիսի կյանք վարեի:
Անընդհատ աչքս խոթել այդ գնչուական կյանքը՝ հիմա-
րություն է կամ անխղճութուն: Եթե ես անզորի ու մե-
նության չձգտեի, մարդկանցից չուզե՞նայ՞ փախել, մի՞թե
ձեզ հետ կամուսնանայի: Ուրեմն հասկացեք դա և իմ
ընտրութիւնը մի վերագրեք ձեր արժանիքներին: Ես
դրանք առայժմ չեմ տեսնում: Ես դեռ միայն ուզում եմ
սիրել ձեզ. ինձ հրապուրում է ընտանեկան համեստ կյան-
քը, դա ինձ մի տեսակ դրախտ է թվում: Տեսնում եք,
որ երկընտրանքի մեջ եմ. օգնեցեք, ինձ խրախուսանք
է պետք, կարեկցություն, նուրբ վերաբերվեք ինձ հետ,
փաղաքույշ: Որսացեք այդ բոպենները, բաց մի թողեք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լարիսա Դմիտրիկնա, ես ամենևին էլ ձեզ
չէի ուզում վիրավորել, ես հենց այնպես ասացի...

ԱՐԻՍԱ — Ի՞նչ է նշանակում «հենց այնպես»: Առանց մտա-
ծելո՞ւ: Դուք չեք հասկանում, որ ձեր խոսքերում վիրա-
վորա՞նք կա, ա՛յդ եք ուզում ասել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իհարկե, առանց դիտավորութեան:

ԱՐԻՍԱ — Ավելի վատ: Պիտի մտածեք, թե ինչ եք ասում:
Ուրիշներին հետ շաղակրատեք, եթե դա ձեզ դուր է գա-
լիս, իսկ ինձ հետ զգույշ խոսեք: Մի՞թե չեք տեսնում,
որ վիճակս շատ լուրջ է: Ասածս և լսածս յուրաքանչյուր
խոսք ես ապրում եմ: Շատ զգայուն և տպավորվող եմ
դարձել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այդ դեպքում, խնդրում եմ, ներեցեք ինձ:

ԱՐԻՍԱ — Աստված ձեզ հետ. միայն թե այսուհետև զգույշ
եղեք: (Մտախոհ): Գնչուների թափառախումբ... դա, թեր-
ևս, ճիշտ է... Բայց այդ թափառախումբում նաև լավ, ազ-
նիվ մարդիկ կային:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ովքե՞ր են այդ ազնիվ մարդիկ: Զլինի Սեր-
գեյ Սերգեյիչ Պարատովը:

ԱՐԻՍԱ — Ո՛չ, ես ձեզ խնդրո՞ւմ եմ, դուք նրա մասին մի
խոսեք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր ինչո՞ւ:

ԱՐԻՍԱ — Դուք նրան չեք ճանաչում, եթե ճանաչեիք էլ, միև-
նույն է... Ներեցեք, դուք չէ, որ պիտի դատեք նրա մա-
սին:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Մարդկանց մասին նրանց արարքներով են
դատում: Մի՞թե նա լավ վարվեց ձեզ հետ:

ԱՐԻՍԱ — Դա արդեն իմ գործն է: Եթե ես վախենում եմ,
չեմ համարձակվում դատապարտել նրան, ուրեմն ձեզ էլ
թույլ չեմ տա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լարիսա Դմիտրիկնա, ասացեք ինձ, միայն
թե, խնդրում եմ, անկեղծ:

ԱՐԻՍԱ — Ի՞նչ եք կամենում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր ես ինչո՞վ եմ վատ Պարատովից:

ԱՐԻՍԱ — Ո՛չ, ո՛չ, թողե՛ք դա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Թո՛ւյլ տվեք, ախր, ինչո՞ւ:

ԱՐԻՍԱ — Պետք չէ, պետք չէ: Դա ի՞նչ համեմատութիւն է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ ինձ համար հետաքրքիր էր լսել ձեզ-
նից:

ԱՐԻՍԱ — Մի հարցրեք, պետք չէ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր ինչո՞ւ:

ԱՐԻՍԱ — Որովհետև համեմատությունը ձեր օգտին չի: Ինք-
նին դուք աննշան մարդ չեք, լավն եք, ազնիվ, բայց
Սերգեյ Սերգեյիչի համեմատությամբ կորցնում եք ամեն
ինչ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Բայց դրանք խոսքեր են միայն, ապացույց-
ներ են պետք: Դուք մի լավ քննեք մեզ:

ԱՐԻՍԱ — Ախր մի մտածեք, թե ում հետ եք համեմատվում:
Ձեմ պատկերացնում այդպիսի կուրուքուն: Սերգեյ Սեր-
գեյիչը տղամարդու իդեալ է: Դուք հասկանո՞ւմ եք, թե
ինչ բան է իդեալ: Դուցե թե ես սխալվում եմ, դեռ չա-
հել եմ, մարդկանց չեմ ճանաչում. բայց այդ կարծիքն
իմ մեջ փոխել հնարավոր չէ, դա կմեռնի ինձ հետ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ձե՞մ հասկանում, չե՞մ հասկանում, թե ինչ
մի առանձին բան կա այդ մարդու մեջ: Ո՞չ մի բան, ո՞չ
մի բան չեմ տեսնում: Ասե՛նք ինչ-որ համարձակություն,
խիզախություն... Բայց դա ամեն մարդ կարող է, եթե
ուզենա:

ԱՐԻՍԱ — Իսկ դուք գիտե՞ք, թե դա ինչ խիզախություն է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր ի՞նչ պիտի լինի, ի՞նչ կա դրա մեջ
անսովոր: Ձևանում ես և՛ վերջ:

ԱՐԻՍԱ — Ասե՛մ, թե ինչ կա, ձեզ մի դեպք պատմեմ: Այս-
տեղ մի կովկասցի սպա էր եկել, Սերգեյ Սերգեյիչի ծա-
նոթը, գերազանց հրաձիգ: Մեր տանն էին: Սերգեյ Սեր-
գեյիչն ասում է. «Լսել եմ, որ լավ եք կրակում»: «Այո,
ոչինչ», — ասում է սպան: Սերգեյ Սերգեյիչը տալիս է
նրան ատրճաճակը, բաժակը դնում է գլխին և գնում
մյուս սենյակում կանգնում: Մի տասներկու քայլ: «Կրա-
կե՞ք», — ասում է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Եվ նա կրակե՞ց:

ԱՐԻՍԱ — Կրակեց և, հասկանալի է, դիպավ, բայց միայն
թե փոքր-ինչ գունատվեց: Սերգեյ Սերգեյիչն ասում է.
«Դուք հիանալի եք կրակում, բայց գունատվեցի՞ք, կրա-
կելով տղամարդու և այն էլ ձեզ ոչ մտ մեկի վրա: Նա՛-

յեք, ես հիմա կիրակեմ մի աղջկա վրա, որն ինձ համար
ամենից թանկն է աշխարհում, և չեմ գունատվի»: Ձևոքս
ինչ-որ մետաղադրամ է տալիս, սառնասիրտ, ժպտալով,
կրակում է նույն հեռավորությունից և թոցնում մետա-
ղադրամը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Եվ դուք լսեցի՞ք նրան:

ԱՐԻՍԱ — Իսկ մի՞թե կարելի է չլսել նրան:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այդքան վատա՞հ էիք նրա վրա:

ԱՐԻՍԱ — Ի՞նչ եք ասում: Մի՞թե կարելի է նրան չվատահել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այդքան խիզախ է, որովհետև սիրտ չունի:

ԱՐԻՍԱ — Ո՞չ, սիրտ էլ ունի: Ես ինքս եմ տեսել, թե ինչպե՞ս
էր օգնում աղքատներին, ինչպես էր տալիս մոտը եղած
ամբողջ փողը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լավ, ասե՛նք թե Պարատովը որոշ արժա-
նիքներ ունի, գոնե ձեր աչքում, իսկ ի՞նչ է իրենից ներ-
կայացնում այդ վաճառական Վոժեվատովը, ձեր այդ
Վասյան:

ԱՐԻՍԱ — Չլինի՞ խանդում եք: Ինչդուրեք եմ, թողեք այդ հի-
մարությունները: Դա գոհակություն է, ես դա չեմ հան-
դուրժում, ես ձեզ նախապես եմ ասում: Մի՞ վախեցե՞ք,
ես չեմ սիրում և չեմ սիրի ոչ մեկին:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ եթե Պարատովը նորի՞ց հայտնվեր:

ԱՐԻՍԱ — Իհարկե, եթե Սերգեյ Սերգեյիչը հայտնվեր և
ազատ լիներ, նրա մի հայացքն էլ բավական էր... Հան-
գրատացե՞ք, նա չվերադարձավ, իսկ հիմա եթե գա էլ,
արդեն ուշ է... Երևի մենք երբեք այլևս չենք տեսնվի:

Վոլգայի վրա բեղաճեթային կրակոց:

Սա ի՞նչ բան է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Որևէ խելառ վաճառական ափ է իջնում իր
լատանավից և ահա, ի պատիվ նրա, կրակում են:

ԱՐԻՍԱ — Ա՛հ, ինչպե՞ս վախեցա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչո՞ւ, աստված սիրե՞ք:

ԱՐԻՍԱ — Նյարդե՞րս քայքայված են: Ես նոր այս նստարա՛-

նից ներքև էի նայում, գլուխս պտտվեց: Մարդ որ ընկնի
 այստեղից, շատ կվնասվի:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Կվնասվի: Անխուսափելի մահ է. ներքեք
 բարով սալարկված է: Բայց դե այնքան բարձր է, որ գետ-
 նին չհասած կմեռնես:
ԼԱՐԻՍԱ — Գնանք տուն, ժամանակն է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես էլ պիտի գնամ, ճաշկերույթ եմ, ախր,
 տալու:
ԼԱՐԻՍԱ — (Մտտենալով ցանկապատին): Մի քիչ սպասեք
 (Նայում է ներքև): Ա՛յ, ա՛յ, բռնե՛ք ինձ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Թռնում է կարիսայի քեր): Մա ի՞նչ երեխա-
 յություն է, գնա՛նք: (Գնում են):

Գալբիտե և Իվանը զուրա են գալիս սրճարանից:

Տեսարան հինգերորդ

Գալբիտ և Իվան:

ԻՎԱՆ — Թնդանո՞թ: Պարոնը եկա՞վ, պարոնը եկա՞վ. Սերգեյ
 Սերգեյիչը:
ԳԱՎՐԻԼՈ — Ասում էի չէ՞, որ նա է: Ես հո գիտեմ, բազեն
 թռչչբից է երևում:
ԻՎԱՆ — Կառքը դատարկ է բարձրանում, պարոններն, ուրե-
 մըն, ոտքով են գալիս: Ահա և նրանք: (Վազում է սր-
 ճարան):
ԳԱՎՐԻԼՈ — Բարով են եկել: Թե ինչով պիտի հյուրասիրենք,
 խելքս բան չի կարում:

Ներս են մտնում Պարտավը (կիպ նստած սե, միակզմ
 կոճակներով սերբուկ, բարձրաճիտ լաֆե կոշիկներ, օտի-
 տակ գլխարկ, ուտին նամփոռոզական պայուսակ), Ռոբիե-
 զոնը (քիկնոցով, օրի աչ փեշը գցել է ձախ ուտին, բիճ
 դրած փափուկ բարձր գլխարկով), Կնուրովը, Վոժեվատա-
 վը: Իվանը փոքրիկ ավելը ձեռքին զուրա է վազում օր-
 ճարանից և փորձում Պարտավի հագուստը մաքրել:

Տեսարան վեցերորդ

Պարտավ, Ռոբիեզոն, Կնուրով, Վոժեվատավ, Գալբիտ և
 Իվան:

ՊԱՐԱՏՈՎ — (Իվանին): Ի՞նչ եք անում: Ես ջրով եմ եկել...
 Հո Վոլգայի վրա փոշի չկա՞:
ԻՎԱՆ — Այնուամենայնիվ, պարոն, ախր, չի կարելի... կարդ
 է: Մի ամբողջ տարի ձեզ չենք տեսել, թող ձեր... Բա-
 րով եք եկել, պարոն:
ՊԱՐԱՏՈՎ — Դե լավ, շնորհակալ եմ: Վերցրու: (Ռուրլիանը
 քրքադրամ է տալիս):
ԻՎԱՆ — Խոնարհաբար շնորհակալ ենք: (Հեռանում է):
ՊԱՐԱՏՈՎ — Ուրեմն դուք ինձ, Վասիլի Դանիլիչ, «Սամուլ-
 յոտո՞վ» էիք սպասում:
ՎՈՅԵՎԱՏՈՎ — Ախր ես չգիտեի, որ դուք ձեր «կաստորկա-
 յով» կթռչեք կգաք. կարծում էի, «կաստորկան» լաստա-
 նավերի հետ է գալիս:
ՊԱՐԱՏՈՎ — Չէ, լաստանավերը ես ծախեցի: Մտածում էի
 առավոտ շուտ տեղ կհասնեմ, ուզում էի «Սամուլյոտից»
 առաջ անցնել, բայց մեքենավարը վախկոտի մեկն է
 Հնոցապաններին գոռում եմ՝ «հուպ տուր», իսկ նա ձեռք-
 ներից առնում է վառելիփայտը: Դուրս ելավ իր բնից-
 «Յթե դուք,— ասում է,— թեկուզ մի կտոր փայտ էլ
 ավելացնեք, ես ինձ ջուրը կգցեմ»: Վախենում էր կաթ-
 սան շղիմանա, ինչ-որ թվեր էր ինձ համար թղթի վրա
 գրում: Ճնշումն էր հաշվում: Օտարերկրացի էլ հուան-
 դացի, շունչը կարճ է. հոգու տեղ նրանցը թվաբանու-
 թյունն է: Բայց ես, պարոնայք, մոռացա ձեզ ծանոթաց-
 նել ընկերոջս հետ: Պարոններ, Վասիլի Դանիլիչ, ծանու-
 թացեք, խնդրեմ, Ռոբինզոն:

Ռոբիեզոնը ճանդիտավոր գրուկ է տալիս և ձեռք մեկնում
 Կնուրովին և Վոժեվատովին:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Իսկ անուն հայրանո՞ւնն ինչ է:
ՊԱՐԱՏՈՎ — Պարզապես Ռոբինզոն, առանց անուն-հայրա-
 նունի:

ՌՌՐԻՆՁՈՆ — (Պարաբոլիե): Սե՛րժ:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ ես ուզում:

ՌՌՐԻՆՁՈՆ — Կեսօր է, բարեկամս, ես է՛լ չեմ դիմանում:

ՊԱՐԱՏՈՎ — Մի քիչ սպասիր, հյուրանոց կհասնենք, հետո:

ՌՌՐԻՆՁՈՆ — (Յույց տալով սրճարանը): Voila¹:

ՊԱՐԱՏՈՎ — Դե լավ, գնա, սատանան քեզ հետ:

Ռոբիեզոնը գնում է սրճարան:

Գավրիլո, դու այդ պարոնին մի բաժակից ավել չտաս, անհանգիստ բնավորություն ունի:

ՌՌՐԻՆՁՈՆ — (Թոքվելով ուտերը): Սե՛րժ: (Մտնում է սրճարան, Գավրիլոն ետևից):

ՊԱՐԱՏՈՎ — Այս մարդը, պարոնայք, գավառական դերասան է, Սշաստիվցե Արկադի:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Իսկ ինչո՞ւ են Ռոբիեզոն ասում:

ՊԱՐԱՏՈՎ — Ասեմ ինչու. մի անգամ սա ինչ-որ շոգենավով, շգիտեմ, որ, ճանապարհորդում է իր ընկերոջ, վաճառականի որդի նեպոտյովի հետ: Իհարկե, երկուսն էլ հարբած, ոտի վրա շեն կարողանում կանգնել: Եելքների փշածն անում են: Հասարակությունը համբերությամբ տանում է: Վերջում էլ, բոլոր խայտառակություններից հետո, որոշում են դրամատիկական ներկայացում տալ. հանվում են, պատում են բարձր, թավալվում են բմբուլի մեջ և սկսում են վայրենիներ ձևանալ: Այստեղ արդեն նավապետը, ուղևորների պահանջով, իջեցնում է նրանց ամայի կղզում: Անցնում ենք այդ կղզու մոտով, տեսնեմ ինչ-որ մեկը կանչում է՝ ձեռքերը վեր բարձրացրած: Ես շոգենավն իսկույն կանգնեցնել եմ տալիս, նավակ եմ նստում և հասնում դերասան Սշաստիվցեին: Բերում եմ նրան շոգենավ, ոտից գլուխ հագցնում իմ շորերը. լավ է, որ ավելորդ շոր շատ ունեմ: Պարոնայք, ես թուլություն ունեմ դերասանների նկատմամբ... Ահա թե ինչու է նա Ռոբիեզոն:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Իսկ նեպոտյովին կղզու վրա՞ մնաց:

ՊԱՐԱՏՈՎ — Ինչի՞ս էր պետք. թող մաքուր օդ շնչի: Ինքներդ էլ գիտեք, պարոնայք, որ ճանապարհին ձանձրությունց մեռնում ես, երազում ես մի ընկեր ճարել:

ԿՆՈՒՐՈՎ — Ի՞նչ խոսք, իհարկե՛:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Դա այնպիսի բախտավորություն է, այնպիսի բախտավորություն, ասես ոսկի գտած լինես:

ԿՆՈՒՐՈՎ — Տհաճն այն է միայն, որ հարբեցողությամբ հոգի կհանի:

ՊԱՐԱՏՈՎ — Ոչ, ինձ հետ, պարոնայք, չի կարելի, այդ տեսակետից ես շատ խիստ եմ: Փող նա չունի, առանց իմ թույլտվության հրամայել եմ շտալ, իսկ երբ խնդրում է, ֆրանսերեն զրուցագիրքն եմ դեմ տալիս, բարեբախտաբար մոտս է. նախ բարեհաճիր մի էջ սովորել: Առանց դրա չես ստանա: Եվ սովորում է, նստում է: Ինչպե՞ս է ճգնում:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Ի բախտավորություն ձեզ, Սերգեյ Սերգեյիչ: Ես էլ, թվում է, այդպիսի մարդու համար ոչինչ չէի խնայի, բայց ո՞ւր է՝ չկա ու չկա: Լա՞վ դերասան է:

ՊԱՐԱՏՈՎ — Դե ոչ, ի՞նչ լավ: Ամեն տեսակ դեր խաղաց, հուշարար է եղել, իսկ հիմա օպերետում է խաղում: Ոչի՞նչ, էնպես, էլի՛, ծիծաղեցնում է:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Ուրեմն ուրախ մարդ է:

ՊԱՐԱՏՈՎ — Զվարճալի պարոն է:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Եվ հետը կարելի է կատա՞կ անել:

ՊԱՐԱՏՈՎ — Ոչինչ, շուտ վիրավորվող չէ: Կարող եմ մի երկու-երեք օրով տրամադրել ձեզ. հոգիներդ թեթևացրեք:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Շատ շնորհակալ եմ: Թե որ լեզու գտանք, դժգոհ չի մնա:

ԿՆՈՒՐՈՎ — Ինչպե՞ս է, որ չեք ափսոսում, Սերգեյ Սերգեյիչ, «կատոռչկան» ծախում եք:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ է նշանակում «ափսոսալ», ես դա չեմ հասկանում: Ինձ համար, Մոկիչ Պարմենիչ, նվիրական ոչինչ չկա. շահ ունեցա, ամեն բան կծախեմ: Իսկ հիմա, պարոնայք, ես ուրիշ գործեր ունեմ և ուրիշ հաշիվներ: Ես մի շատ հարուստ աղջկա հետ եմ ամուսնանում, որպես օժիտ՝ ոսկե հանքեր եմ վերցնում:

¹ Ահա — (Ֆրանս.):

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Կա՛մ օժիտ է:

ՊԱՐԱՏՈՎ — Բայց դա էժան չի նստում վրաս. իմ ազատութեանը պիտի հրաժեշտ տամ, իմ ուրախ կյանքին: Ուրեմն պետք է աշխատեմ որքան հնարավոր է ուրախ անցկացնել վերջին օրերը:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ամեն ինչ կանենք, Սերգեյ Սերգեյիչ, ամեն ինչ կանենք:

ՊԱՐԱՏՈՎ — Հարսնացուիս հայրը բարձրաստիճան, կարևոր մարդ է, խստաբարո ծերունի. լսել անգամ չի կարող գնչուների, քեֆերի և այլնի մասին: Նույնիսկ չի սիրում, երբ շատ ծխախոտ են ծխում: Այս դեպքում արդեն ֆրակդ պիտի հագնես և՛ parlez francais!¹ Խընդրեմ, ես էլ հիմա վարժվում եմ Ռոբինզոնի հետ: Միայն թե նա, հանդիսավորության համար, թե ինչ «Լյա-Սերժ» է ասում ինձ, և ոչ թե պարզապես «Սերժ»: Միժաղելի՛ է:

Մեծաբանի գռանը երևում է Ռոբինզոնը, ինչ-որ բան է ծամում, նրա ետևից Գավրիլան:

Տեսարան յոթերորդ

Պարտավ, կնուով, Վոժեվտով, Ռոբինզոն, Գավրիլ և Իվան:

ՊԱՐԱՏՈՎ — (Ռոբինզոնին): Que faites-vous la? Venez!²
ՌՈՐԻՆԶՈՆ — (Հպարտ): Comment?³

ՊԱՐԱՏՈՎ — Հրաշալի է: Ինչպիսի տոն, պարոնայք: (Ռոբինզոնին): Թողեք ձեր այդ գարշելի սովորությունը. կարողին հասարակությունը լքում հեռանում եք պանդոկ գնալու համար:

¹ Խոսք ֆրանսերեն — (ֆրանս.):
² Ի՛նչ եք անում այնտեղ: Եկե՛ք — (ֆրանս.):
³ Ինչպե՛ս — (ֆրանս.):

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Այո՛, այդ սովորությունը կա մեջները: ՌՈՐԻՆԶՈՆ — Լյա-Սերժ, դու արդեն հասցրիր... Շատ էր պետք:

ՊԱՐԱՏՈՎ — Այո՛, ների՛ր, ես բո ծածկանվան գաղտնիքը բացեցի:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Մենք, Ռոբինզոն, քեզ չենք մատնի, դու այստեղ որպես անգլիացի էլ կմնաս:

ՌՈՐԻՆԶՈՆ — Անմիջապես գողա-ի՞ անցաք: Մենք ձեզ հետ բրուդերշաֆտ չենք խմել:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Միևնույն է... ավելորդ ձևականություններ են:

ՌՈՐԻՆԶՈՆ — Բայց ես մտերմություն չեմ սիրում և թույլ չեմ տա, որ ամեն մեկը...

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Դե ես ամեն մեկ չեմ:

ՌՈՐԻՆԶՈՆ — Իսկ ո՞վ եք դուք:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Վաճառական:

ՌՈՐԻՆԶՈՆ — Հարո՞ւստ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Հարո՞ւստ:

ՌՈՐԻՆԶՈՆ — Եվ առատաձե՞ռն:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Եվ առատաձե՞ռն:

ՌՈՐԻՆԶՈՆ — Այ, դա իմ ճաշակով է: (Ձեռք մեկնում է Վոժեվատովին): Շատ հաճելի է: Իսկ հիմա ես քեզ կարող եմ թույլ տալ ինձ հետ վարվել առանց ձևականությունների:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ուրեմն բարեկամներ ենք. երկու մարմին՝ մի հոգի:

ՌՈՐԻՆԶՈՆ — Եվ մի գրպան: Անուն-հայրանո՞ւնդ: Այսինքն Միայն անունդ, հայրանունդ պետք չէ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Վասիլի Դանիլիչ:

ՌՈՐԻՆԶՈՆ — Դե, ուրեմն, Վասյա, առաջին ծանոթության համար վճարի՛ր իմ փոխարեն:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Գավրիլո՛, գրի՛ր: Սերգեյ Սերգեյիչ, մենք այս երեկո զբոսանքի կգնանք Վոլգայի այն ափը: Մի մոտորանավակով շորս գնչու, մյուսով՝ մենք. տեղ կհասնենք, կնստենք գորգին, խմելու համար փունջ կպատրաստենք:

ՔԱՎՐԻԼՈ — Իսկ իմ պահած երկու անանասը, Սերգեյ Սեր-

գեյիչ, վաղուց ձեզ են սպասում. պետք է կտրատել ձեր գալստյան առթիվ:

ՊԱՐԱՏՈՎ — (Գավրիլովին): Լա՛վ, կտրի՛ր: (Վոժեվատովին): Ես ձեր տրամադրության տակ եմ, պարոնայք, արեք, ինչ-որ ուզում եք:

ԳԱՎՐԻԼՈ — Դե, ես, Վասիլի Դանիլիչ, ինչ որ պետք է կպատրաստեմ. մի արծաթյա կաթսա էլ ունեմ նման դեպքերի համար, և դեռ իմ մարդկանց էլ գործի կդնեմ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Դե լավ: Որ ժամը վեցին ամեն ինչ պատրաստ լինի. ավել բանի համար տուժի շենք ենթարկի, պակաս եղավ՝ պատասխան կտաս:

ԳԱՎՐԻԼՈ — Հասկանում ենք:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Իսկ ետ դառնալիս նավահանների վրա գույնը-գույն լապտերներ կվառենք:

ՌՌՐԻՆՋՈՆ — Հենց նոր ծանոթացա սրա հետ, բայց արդեն սիրեցի, պարոնայք: Ա՛յ թեզ հրաշք:

ՊԱՐԱՏՈՎ — Կարևորը ուրախությունն է: Ես հրաժեշտ եմ տալիս ամուրի կյանքին, այնպես որ՝ հիշելու բան կլինի, իսկ այսօր ճաշին, պարոնայք, համեցեք ինձ մոտ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Շատ ափսոս: Հնարավոր չէ, Սերգեյ Սերգեյիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Մենք հրավիրված ենք:

ՊԱՐԱՏՈՎ — Հրաժարվե՛ք, պարոնայք:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ախր հրաժարվել չի կարելի, կարիսա Դմիտրիկնան մարդու է գնում, փեսացուի տանն ենք ճաշելու:

ՊԱՐԱՏՈՎ — Կարիսան մարդո՞ւ է գնում: (Խորհում է): Դե ինչ... Աստված նրա հետ: Դա նույնիսկ լավ է... Ես մի քիչ մեղավոր եմ նրա առաջ, այսինքն այնքան եմ մեղավոր, որ աչքներին էլ չպիտի երևամ: Դե, իսկ հիմա նա ամուսնանում է, հին հաշիվները փակված են: Եվ ես նորից կարող եմ ներկայանալ և համբուրել նրա ու մորաքրոջ ձեռքերը: Ես խարիսա Իգնատևնային մորաքույր եմ ասում, այդպես ավելի կարճ է: Ախր ես քիչ էր մնում ամուսնանալի կարիսայի հետ. ա՛յ թե ծիծաղի առարկա կդառնալի: Այո՛, հիմարություն արած կլինեի: Մարդու

է գնում... Շատ հաճելի է ինձ համար. հոգիս մի քիչ թեթևացավ... և թող աստված նրան առողջություն տա և ամեն բարիք: Կայցեիմ ես նրանց, կայցեիմ, հետաքրքիր է, շատ հետաքրքիր է տեսնել նրան:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Անշուշտ ձեզ էլ կհրավիրեն:

ՊԱՐԱՏՈՎ — Պարզ բան է, առանց ինձ ինչպե՞ս կարելի է:

ԿՆՈՒՐՈՎ — Ես շատ ուրախ եմ, գոնե մեկը կլինի, որի հետ ճաշի ժամանակ կարող ես խոսք փոխանակել:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Այնտեղ էլ կորոշենք, թե ինչպես ավելի ուրախ անցկացնենք ժամանակը. գուցե մի նոր բան էլ մտածենք:

ՊԱՐԱՏՈՎ — Այո, պարոնայք, կյանքը կարճ է, ասում են փիլիսոփաները, ուրեմն պետք է օգտվել կարողանալ: N'est ce pas¹, Ռոբինզոն:

ՌՌՐԻՆՋՈՆ — Ուի, լյա-Սերժ²:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Կաշխատե՛նք, շե՛ք տխրի, ամեն ինչ կանենք: Մի մոտորանավակ էլ կվերցնենք, գնդի երաժշտախումբն էլ կբերենք:

ՊԱՐԱՏՈՎ — Ցտեսություն, պարոնայք: Ես հյուրանոց եմ գնում: Մա՛րջ, Ռոբինզոն:

ՌՌՐԻՆՋՈՆ — (Բարձրացնելով գլխարկը):

Կեցցե ուրախությունը,

Կեցցե վայելքը³:

¹ Այդպես չէ՞ — (ֆրանս.):

² Այո՛, Սերժ — (ազավաղված ֆրանս.):

³ Եկեցցե ուրախությունը... — Ա. Ն. Վերտովսկու «Ասկուզի գերեզմանը» օպերայից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ:

ԼԱՐԻՍԱ:

ԿԱՐԱՆԿԻՇԵՎ:

ՊԱՐԱՏՈՎ:

ԿՆՈՒՐՈՎ:

ՎՈԺԵՎԱՏՈՎ:

ՌՈՐԻՆՉՈՆ:

ԻԼՅԱ-ԳԵՉՈՒ:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱՅԻ ՍՊԱՍԱՎՈՐԸ:

Սենյակ Օգուղաթվայի տանը: Երկու դուռ. մեկը խաբաժմ' ելի՞նք, մյուսը՝ դերասաններից ձախ: Այ կողմում՝ լուսամաս: Բավական լավ կառույց, դաշնամուր, դաշնամուրի վրա կիթառ է դրված:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Խ Ո Ւ Ջ Ի Ն

Օգուղաթվան միայնակ: Մտածում է ձախ դա՞նք՝ տալի՞ք ձեռքին:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Լարիսա՛, Լարիսա՛:

Լարիսան բեմի ետևից. «Հազնվում եմ, մամա՛»:

Մի տես, թե ի՞նչ նվեր է բերել քեզ Վասյան:

Լարիսան բեմի ետևից. «Հետո՛ կնայեմ»:

Ի՞նչ բաներ են, մի հինգ հարյուր կարծեման: «Վաղն առավոտյան, — ասում է, — տարեք նրա սենյակը և մի ասեք, թե ով է բերել»: Ախր գիտի սրիկան, որ չեմ համբերի, կասեմ: Ես նրան խնդրեցի, որ նստի, շմնաց, ինչ-որ

օտարերկրացու է պտտեցնում, քաղաքն է ցույց տալիս: Ենդկատակ է, ախր, գլխի շես ընկնի, շես հասկանա՛ դիտմամբ է ասում, թե ճշմարիտ է: «Այդ օտարերկրացուն, — ասում է, — բոլոր հիանալի պանդոկային հիմնարկությունները պիտի ցույց տամ»: Ուզում էր այստեղ բերել նրան: (Լուսամտից դուրս եայելով): Ահա և Մոսկիյ Պարմենիչը: Դուրս չգաս, ավելի լավ է ես ինքս նրա հետ խոսեմ:

Ներս է մտնում Կեսարով:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Պ

Օգուղաթվա և Կեսարով

ԿՆՈՒՐՈՎ — (Դռների միջից): Տանը ոչ ոք չկա՞:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ոչ ո՛ք, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — (Ներս է գալիս): Է՛հ, հիանալի՛ է:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ինչի՞ն վերագրեմ այս բախտավորությունը: Շնորհակալ եմ, Մոկիյ Պարմենիչ, շատ շնորհակալ եմ, որ արժանի արիք: Ես այնքան ուրախ եմ, գլխուս կորցրեցի, իսկապես... Չգիտեմ էլ, որտեղ նստեցնեմ ձեզ:

ԿՆՈՒՐՈՎ — Միենույն է, մի տեղ կնստեմ: (Նստում է):

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Իսկ Լարիսային ներքե, շորերն է փոխում: Բայց կարելի է և շտապեցնել:

ԿՆՈՒՐՈՎ — Չէ, անհանգստացնելու կարիք չկա:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Այդ ինչպե՞ս մտքներովդ անցավ:

ԿՆՈՒՐՈՎ — Ես, ախր, ճաշից առաջ շատ եմ ոտքով ման գալիս, դե, ահա և մտա:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Համոզված եղեք, Մոկիյ Պարմենիչ, որ մենք մի առանձնակի երջանկություն ենք համարում ձեր այցելությունը. դա ոչ մի բանի հետ համեմատել չի կարելի:

ԳՆՈՒՐՈՎ — Արեմն ամուսնացնում եք Լարիսա Դմիտրի-
 նային:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Այո, ամուսնացնում ենք, Մոկիյ Պարմենիչ:
 ԳՆՈՒՐՈՎ — Առանց փողի կնության առնող փեսացո՞ւ գրա-
 նը վեց:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Այո, Մոկիյ Պարմենիչ: Մեզ փող ո՞վ է տվել:
 ԳՆՈՒՐՈՎ — Ի՞նչ է, նա, ձեր այդ փեսացուն, մե՞ծ կարողու-
 թյան տեր է:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ի՞նչ կարողություն: Շատ համեստ:
 ԿՆՈՒՐՈՎ — Այո... Իսկ ի՞նչ եք կարծում, լա՞վ եք անում,
 որ Լարիսա Դմիտրիենային տալիս եք աղքատ մարդու:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Չգիտեմ, Մոկիյ Պարմենիչ, ես դրան չեմ
 խառնվել, դա Լարիսայի կամքն է:
 ԿՆՈՒՐՈՎ — Դե, իսկ այդ երիտասարդն, ի՞նչ եք կարծում,
 լա՞վ է անում:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ինչո՞ւ չէ, ես կարծում եմ, որ դա գովելի է
 նրա կողմից:
 ԿՆՈՒՐՈՎ — Ոչ մի գովելի բան էլ չկա, ընդհակառակը, դա-
 տապարտելի է: Թերևս իր շահի տեսակետից նա հի-
 մար չէ: Ի՞նչ է իրենից ներփայացնում... Բ՞ով է նրան ես-
 նաչում, ո՞վ նրա վրա աշարհություն կդարձնի: Իսկ հի-
 մա ամբողջ քաղաքի բերանը կրճկե՞նք: Նա խցկվում է
 ամենալավ հասարակություն, նա իրեն թույլ է տալիս
 ինձ ճաշի հրավիրել, օրինակ... Բայց ա՛հա թե ինչ
 է հիմարությունը. նա չի մտածել կամ չի ազդեցել մոտ-
 ծել, թե ինչպես և ինչով պիտի ապրի այդպիսի կենտ հետ:
 Ահա թե մենք ինչի մասին պիտի խոսենք:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Շնորհ արեք, Մոկիյ Պարմենիչ:
 ԿՆՈՒՐՈՎ — Ի՞նչ եք մտածում ձեր աղջկա մասին, ինչպի-
 սի՞ն է նա:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դե, ես չգիտեմ, թե ինչ ասեմ. ինձ մի բան է
 մնացել՝ լսել ձեզ:
 ԿՆՈՒՐՈՎ — Զե՞ որ Լարիսա Դմիտրիենայի մեջ երկբային,
 մեր այս կենցաղայինից ոչինչ չկա: Դե, հասկանում եք:

այն կապտությունը, որ անհրաժեշտ է աղքատ ընտա-
 նեկան կյանքին:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ոչի՞նչ չկա, ոչի՞նչ:
 ԿՆՈՒՐՈՎ — Ախր նա եթեք է:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Եթեք է, Մոկիյ Պարմենիչ:
 ԿՆՈՒՐՈՎ — Նա ստեղծված է փայլելու համար:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Փայլելու համար, Մոկիյ Պարմենիչ:
 ԿՆՈՒՐՈՎ — Դե, իսկ Կարանդիչը կարո՞ղ է տալ նրան այդ
 փայլը:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Չէ, որտեղի՞ց:
 ԿՆՈՒՐՈՎ — Խեղճ, կիսաքաղքենիական կյանքը նա չի տանի:
 Ի՞նչ է նրան մնում անել: Թոշնել, և հետո, գիտեք էլի՞
 թոքախտ:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ա՛հ, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, առա-
 ված պահապան:
 ԿՆՈՒՐՈՎ — Լավ կլինի, եթե գլխի ընկնի, շուտ թողնի ամուս-
 նուն և վերադառնա մեզ մոտ:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դա էլ է շարիք, Մոկիյ Պարմենիչ. ինչպե՞ս
 պիտի ապրենք աղջկա հետ:
 ԿՆՈՒՐՈՎ — Դե, դա շտկվելիք բան է: Ուժեղ, հարուստ մար-
 դու չեք միջամտությունը...
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Լավ, իսկ որտեղի՞ց այդպիսի միջամտու-
 թյուն:
 ԿՆՈՒՐՈՎ — Պետք է ջանալ ձեռք բերել: Նման դեպքերում
 անհրաժեշտ է ունենալ բարի, լուրջ և հաստատուն բա-
 րեկամ:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Այն էլ ինչպե՞ս է անհրաժեշտ:
 ԿՆՈՒՐՈՎ — Դուք հարող եք ինձ ասել, թե նա դեռ չի էլ ամուս-
 նացել, թե դեռ շատ հեռու է այն օրը, երբ կհասու-
 նանա ամուսնուց բաժանվելու ժամանակը: Այո, կա-
 րող է և շատ հեռու է, բայց կարող է և շատ մոտիկ է...
 Արեմն ավելի լավ է նախազգուշացնել ձեզ, որպեսզի
 գուց մի որևէ ուրիշ սխալ շանք, որպեսզի իմանաք, որ
 ես Լարիսա Դմիտրիենայի համար ոչինչ չեմ խնայի...
 Ինչո՞ւ եք ծայրում:
 ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ես շատ ուրախ եմ, Մոկիյ Պարմենիչ, որ
 այդպես բարեհաճ եք մեր նկատմամբ:

ԿՆՈՒՐՈՎ — Երևի մտածում եք, որ նման առաջարկություններն անշահախնդիր չեն լինում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ահ, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Վերավորե՛ք ինձ, եթե ուզում եք, դո՛ւրս արեք:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — (Անհարմար զգալով): Ահ, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Երբ կգտնեք այնպիսի մարդկանց, որոնք ձեզ տասնյակ հազարներ կխոստանան, այն ժամանակ էլ հայհոյեք ինձ... Իզուր նեղություն մի քաշեք, չեք գտնի: Բայց ես շեղվեցի, ես այս խոսակցությունների համար չէի եկել: Այդ ի՞նչ տուփ է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դե, ես, Մոկիյ Պարմենիչ, ուզում էի նվեր տալ աղջկաս:

ԿՆՈՒՐՈՎ — (Իտեղիվ իրերը): Այո...

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Բայց դե թանկ է, իմ գրպանի բանը չէ:

ԿՆՈՒՐՈՎ — (Ետ է տալիս տուփը): Դատարկ բաներ են սրանք, ավելի կարևոր գործ կա: Դուք պետք է կարիսա Դմիտրիենայի համար լավ զգեստներ պատրաստեք, այսինքն քիչ է ասել լավ՝ շատ լավ: Պսակի շոր, դե և մնացած այն ամենը, ինչ որ պետք է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Այո՛, այո՛, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Վերավորական կլինի, եթե նա էնպես էլի՝ մի կերպ հազնված լինի: Ուրեմն այդ բոլորը պատվիրեք ամենալավ խանութում, խնայողություն չանեք, կոպեկների ետևից չընկնեք: Իսկ հաշիվներն ուղարկեք ինձ, ես կվճարեմ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Իսկպպես, խոսք էլ չեմ գտնում, որ շնորհակալություն հայտնեմ:

ԿՆՈՒՐՈՎ — Ահա թե, ըստ էության, որն էր գալուս նպատակը: (Ոտփ է կանգնում):

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Բայց, այնուամենայնիվ, կուզենայի վաղը աղջկաս սյուրպիրզ անել: Մոր սիրտը, գիտեք, էլի...

ԿՆՈՒՐՈՎ — (Վերցնում է տուփը): Դե, ի՞նչ կա այստեղ: Ի՞նչ արժե:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Գնահատեք, Մոկիյ Պարմենիչ:

ԿՆՈՒՐՈՎ — Ի՞նչ կա գնահատելու: Պարզ բան է: Սա արժե

երեք հարյուր ոտրլի: (Դրամապանակից հանում է փողը և տալիս Օգուդալովային): Ցտեսություն: Գնամ մի քիչ էլ ման գամ, ես այսօր լավ ճաշի հույս ունեմ: Ճաշին կտեսնվենք: (Գնում է դեպի դուռը):

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Շատ, շատ շնորհակալ եմ ձեզնից ամեն ինչի համար, Մոկիյ Պարմենիչ, ամեն ինչի համար:

Կնուրովը գնում է: Նրա է մտնում կարիսան զամբյուղը ձեռքին:

Տեսարան երրորդ

Օգուդալովա և կարիսա:

ԱՐԻՍԱ — (Զամբյուղը դնում է սեղանին և դիտում տուփի իրերը): Վասյան է նվիրել: Վատը չեն: Ի՞նչ սիրալիրն է: ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — «Վատը չեն»: Սրանք շատ թանկարժեք բաներ են: Իբր ուրախ չես:

ԱՐԻՍԱ — Մի առանձին ուրախություն չեմ զգում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դու շնորհակալություն հայտնիր Վասյային, այնպես, ականջին շնչա, թե՛ «շնորհակալ եմ»: Կնուրովին նույնպես:

ԱՐԻՍԱ — Իսկ Կնուրովի՞ն ինչի համար:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Էդպես է պետք, ես գիտեմ, թե ինչի:

ԱՐԻՍԱ — Ախ, մամա, քոնն ամբողջ գատնիք է ու խորամանկություն:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դե, դե, խորամանկություն: Առանց խորամանկության աշխարհում չես ապրի:

ԱՐԻՍԱ — (Վերցնում է կիթաոր, նստում է լուսամտի մոտ ու երգում):

Матушка, голубушка, солнышко мое,
Пожалей, родимая, дитятко твое.¹

Յուլիյ Կապիտոնիչն ուզում է հաշտարար դատավոր ընտրվել:

¹ Ա. Լ. Գուրկյովի հանրահայտ ոտանք. Նիդոմսկու խոսքերով:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դե ի՞նչ, հիանալի՛ է: Ո՞ր գավառում:

ԱՐԻՍԱ — Չարոլոտյեում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Վա՛յ, դա ախր անտառներում կորած տեղ է
ինչո՞ւ է խելքին փչել այդքան հեռու գնալ:

ԱՐԻՍԱ — Այնտեղ թեկնածուները քիչ են. հավանաբար կրե-
տրեն:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դե ոչինչ, այնտեղ էլ են մարդիկ ապրում:

ԱՐԻՍԱ — Ինձ՝ թեկուզ անտառ, միայն թե այստեղից շտա-
դուրս պրծնեմ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Խույ տեղը նույնիսկ լավ էլ է: Այնտեղ ք-
կարանդիշեն էլ դուրեկան կերևա, երևի գավառի առաջին
մարդը կլինի: Դու էլ այդպես կամաց-կամաց կընտելա-
նաս նրան:

ԱՐԻՍԱ — Նա այստեղ էլ է լավը, ես նրա մեջ ոչ մի վառ-
բան չեմ տեսնում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ի՞նչ ես խոսում: Այդպիսի՞ լավերն են լի-
նում:

ԱՐԻՍԱ — Իհարկե, ավելի լավերն էլ կան, ինքս էլ դա շատ
լավ գիտեմ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Կան, բայց ոչ մեզ համար:

ԱՐԻՍԱ — Հիմա սա էլ է ինձ համար լավ: Չարժե ավելորդ
խոսել, արդեն վերաջացած բան է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ես, ախր, ուրախանում եմ միայն, որ ես
քեզ դուր է գալիս: Փառք աստծո: Քո առաջ ես նրան
չեմ ուզում դատապարտել, և ոչ էլ ձևանալու կարիք կա,
դու ինքդ էլ կույր չես:

ԱՐԻՍԱ — Ես կուրացել եմ, ես բոլոր զգացողություններ
կորցրել եմ, և ուրախ եմ դրա համար: Վաղուցվանից է
արդեն՝ ասես երազում եմ տեսնում, թե ինչ է կատարվում
շուրջս: Ո՛չ, մեկնել է պետք, պոկվել՝ այստեղից: Ես
Յուլիյ Կապիտոնիչից պոկ չեմ գա: Շուտով ամառն էլ
կանցնի, իսկ ես ուզում եմ անտառում ման գալ, պտուղ
սունկ հավաքել...

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ահա թե ինչի համար ես զամբյուղ պատ-
րաստել: Մղոտե լայնեզր գլխարկ էլ գտիր՝ խեղճան
հովվուհի կլինես:

ԱՐԻՍԱ — Գլխարկ էլ կգտնեմ: (Երգում է):

Не искушай меня без нужды...

Այնտեղ անդորր է, լուռթյուն:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Բայց ահա սեպտեմբերը կգա, այնքան էլ
խաղաղ չի լինի, լուսամուտները կվնգան քամուց:

ԱՐԻՍԱ — Է, հետո՞ ինչ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Գայլերը կոռնան տարբեր ձայներով:

ԱՐԻՍԱ — Այնուամենայնիվ այստեղից լավ է: Համենայն
դեպս՝ հոգիս կհանգստանա:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ինչո՞ւ եմ ես քեզ համոզում, որ չգնաս:
Գնա՛, խնդրե՛մ, հանգստացիր հոգով: Միայն թե իմա-
ցիր՝ Չարոլոտյեն Իտալիա չէ: Դա ես պարտավոր եմ
քեզ ասել, թե չէ կհիասթափվես, հետո ինձ կսկսես մե-
ղադրել, որ չզգուշացրի:

ԱՐԻՍԱ — Շնորհակալ եմ քեզնից: Բայց թող որ այնտեղ և՛
վայրի լինի, և՛ խուլ, և՛ ցուրտ. այն կյանքից հետո, որ
ես այստեղ անցկացրի, ինձ համար ամեն մի խաղաղ
անկյուն դրախտ կթվա: Թե ինչո՞ւ է Յուլիյ Կապիտոնիչը
հապաղում, չեմ հասկանում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Գյուղում ի՞նչ է կորցրել: Նա իրեն ցույց
տալ է ուզում: Եվ զարմանալի էլ չէ. չեղած տեղից հան-
կարժ մարդամեջ մտավ:

ԱՐԻՍԱ — (Երգում է):

Не искушай меня без нужды...

Ափսոս, որ չեմ կարողանում լաբել... (Նայելով լուսամուտ-
ից դուրս): Իլլա՛, Իլլա՛: Մի րոպեով ներս արի: Հեռս
գյուղ ոռմանսներ կտանեմ, ձանձրույթից կնվազեմ ու
կերգեմ:

Մտնում է Իլլան:

1 Ե. Ա. Բարատինսկու խոսքերով գրված Մ. Ի. Գլինկայի ողմանքը:

Տ Ե Ա Ր Ա Ն Հ Ո Ր Ր Ո Ր Ղ

Օգուպալովա, Լարիսա և Իլյա:

ԻԼՅԱ — Տոնդ շնորհավոր: Աստված առողջութիւն տա ու բախտավորութիւն: (Գլխարկը հանում, դնում է դռն մտի արտին):

ԼԱՐԻՍԱ — Իլյա, մի լարիր, «Не искушай меня без нужды», ոտմանն ենք երգելու: (Տալիս է կիրառ):

ԻԼՅԱ — Էս ըոպսերս, օրիորդ: (Վերցնում է կիրառն ու սկսում լարել): Սիրուն երգ է. սա երեք ձայնով է լավ, տենոր է պետք երկրորդ ձայնն է կատաղում... Շա՛տ է լավ: Իսկ զլիններիս փորձանք է եկել, ա՛խ, ի՛նչ փորձանք:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ի՛նչ փորձանք:

ԻԼՅԱ — Մի Անտոն ունենք, տենոր է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Գիտե՛մ, գիտե՛մ:

ԻԼՅԱ — Հենց էդ մեկն է, թե չէ մնացածը բասեր են: Ի՛նչ բասեր, ի՛նչ բասեր: Իսկ տենոր մենակ Անտոնն է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Եվ ի՛նչ:

ԻԼՅԱ — Էլ պետք չէ խմբին, դեն գցելու բան է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Հիվա՛նդ է:

ԻԼՅԱ — Չէ, առողջ է, լրիվ անվնաս:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Իսկ ի՛նչ է պատահել:

ԻԼՅԱ — Երկուտակվել է կողքի վրա, ուղիղ անկյունը քեզ օրինակ, երկրորդ շաբաթն է՝ էդպես ծուռ էլ ման է գալիս: Ա՛խ, փորձա՛նք: Հիմի խմբում ամեն մի անպետք մարդ թանկ արժե, էլ ուր մնաց տենորը. առանց տենորի ո՞նց անես: Բժշկի է գնացել, բժիշկն ասել է. «Մի շաբաթից, երկու շաբաթից բաց կթողնեմ, էլի ուղիղ կլինես»: Իսկ մեզ նա հիմի՛ է պետք:

ԼԱՐԻՍԱ — Դու երգի՛ր, երգի՛ր:

ԻԼՅԱ — Հիմի, օրիորդ: Երկրորդի ձայնը ճիշտ չի: Ա՛յ քեզ փորձանք, ա՛յ քեզ փորձանք: Խմբում ձեռք պիտի կանգնես, իսկ նա կողքի է քաշում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ինչի՛ է այդպես ծովել:

ԻԼՅԱ — Ախմախութիւնից:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ո՞ր ախմախութիւնից:

ԻԼՅԱ — Էդպիսի ախմախութիւն կա մեզներս: Ասում էի՝ «Պահպանիր, Անտոն, էդ զգուշութիւնը»: Իսկ Անտոնը չի հասկանում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Մենք էլ շենք հասկանում:

ԻԼՅԱ — Դե, հետո ձեզից, քե՛ք էր քաշում, էնպե՛ս էր քե՛ք քաշում: Ասում եմ՝ «Անտոն, պահպանիր էդ զգուշութիւնը»: Իսկ ինքը չի հասկանում: Ա՛խ, փորձա՛նք, ա՛խ, փորձանք: Հիմի հարյուր ոտբլի արժի մարդը, ա՛յ թե ոնց քաշվեցինք. էնպիսի՛ մի պարոնի ենք սպասում: Իսկ Անտոնը կողքի է ծովել: Ի՛նչ ձեռք գնում էր, իսկ հիմի ծովել է: (Իստով երգում է): «Не искушай...»:

Ձայն լուսամտից. «Իլյա, Իլյա, չա աղարի՛կ. չա սեզե՛ր»¹ նամո՞: Սո տուկե տրեբե՞²:

Ձայն փողօցից. «Արի, պարոնը եկել է»: Խոխավե՛սա՞³:

Ձայն փողօցից. «Ճիշտ եմ ասում, եկել է»:

Ժամանակ չունեմ, օրիորդ, պարոնը եկել է: (Ցած է դնում կիրառն ու վերցնում գլխարկը):

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ի՛նչ պարոն:

ԻԼՅԱ — Էնպիսի պարոն է, որ սպասելուց աչքներս ջուր կտորեց: Մի տարի է, սպասում ենք. ա՛յ թե ինչ պարոն է: (Գնում է):

Տ Ե Ա Ր Ա Ն Գ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Ղ

Օգուպալովա և Լարիսա:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Տեսնես այդ ո՞վ է եկել: Պետք է որ հարուստ լինի և, Լարիսա, երևի ամուրի է, եթե զնչուններն այդ-

¹ Այստե՛ղ արի: Շո՛ւտ արի: (Փարզ. եղիճակի):

² Ինչո՞ւ: Ի՛նչ ես ուզում: (Փարզ. եղիճակի):

³ Խաբում ես: (Փարզ. եղիճակի):

քան ուրախացել են նրա գալու համար: Ա՛խ, Լարիսա՛, գուցե լավ փեսացու ենք ձեռքից բաց թողել: Ախր ինչո՛ւ էինք շտապում:

ԱՌԻՍԱ — Ա՛խ, մամա՛ ինչ է, քի՛չ եմ տառապել: Ո՛չ, հերի՛ք է՛ ինչքան ստորացանք:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Այդ ի՞նչ սարսափելի խոսք ասացիր՝ «ստորանալ»: Ուզում ես ինձ վախեցնե՛լ, ի՞նչ է: Մենք աղքատ մարդիկ ենք, մենք պիտի ստորանանք ամբողջ կյանքում: Այնպես որ, ավելի չավ է շահել ժամանակ ստորանաս, որ հետո մարդավարի ապրես:

ԱՌԻՍԱ — Ո՛չ, չե՛մ կարող. ծանր է, անտանելի ծանր է: ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Իսկ հեղտությամբ ոչնչի չես հասնի, ամբողջ կյանքում կմնաս դատարկածեմ:

ԱՌԻՍԱ — Նո՛րից ձևանալ, նորի՛ց ստել: ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Ե՛վ ձևացիր, և՛ ստիր: Բախտը ետևիցդ չի գա, եթե ինքդ ես փախչում նրանից:

Մտնում է Կարանդիշը

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Է Գ Ե Ր Ո Ր Գ

Օգուգալովա, Լարիսա և Կարանդիշ:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Յուլիյ Կապիտոնիչ, մեր Լարիսան գլուղ է պատրաստվում գնալ, հրեն ստանկի համար զամբյուղ էլ է պատրաստել:

ԱՌԻՍԱ — Այո, արեք ինձ համար այդ շնորհը, շո՛ւտ գնանք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես ձեզ չեմ հասկանում. ո՛ւր եք շտապում, ինչո՞ւ:

ԱՌԻՍԱ — Ես այնպե՛ս եմ ուզում փախչել այստեղից:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ո՞ւմից փախչել: Ո՞վ է ձեզ քշում: Թե՛ իմ փոխարեն եք ամաչում:

ԱՌԻՍԱ — (Մառը): Ո՛չ, ձեր փոխարեն չեմ ամաչում: Չգիտեմ, թե հետո ինչ կլինի, իսկ առայժմ առիթ չեք ափել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ուրեմն էլ ինչո՞ւ եք փախչում, ինչո՞ւ եք թաքնվում մարդկանցից: Ինձ ժամանակ տվեք գործերս

կարգավորեմ, սթափվեմ, ուշքի գամ: Ես ուրախ եմ, ես երջանիկ եմ... Ինձ հնարավորություն տվեք զգալու վիճակիս ողջ հաճելիությունը:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Պարծենա՛լ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այո՛, պարծենա՛լ, չե՛մ թաքցնում: Իմ ինքնասիրությունը շատ, շատ անգամներ է խոցվել, իմ հպարտությունը բազմիցս վիրավորվել է. հիմա ես ուզում եմ և իրավունք ունեմ հպարտանալու և պարծենալու:

ԱՌԻՍԱ — Դուք ե՛րբ եք մտադիր գլուղ գնալ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Հարսանիքից հետո երբ որ ուղեք, թեկուզ հենց հաջորդ օրը: Միայն թե անպայման այստեղ պիտի պսակադրվենք, միայն թե շասեն, որ մենք թաքնվում ենք, որովհետև ես ձեզ համար փեսացու չեմ, զույգ չեմ, ծղոտ եմ միայն, որից բռնում է խեղզվողը:

ԱՌԻՍԱ — Այդ վերջինը համարյա թե այդպես է, Յուլիյ Կապիտոնիչ, դա ճիշտ է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Հուզված): Այդ ճշմարտությունը դուք ձեռք մեջ պահեք: (Արցունքների միջից): Ինչպե՞ս եք ինձ գոնե մի քիչ: Գոնե թող ուրիշները կարծեն, թե դուք սիրում եք ինձ, թե դուք ազատ ընտրություն եք կատարել:

ԱՌԻՍԱ — Դա՞ ինչի համար է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչպե՛ս թե ինչի: Դուք բոլորովի՞ն չեք ընդունում, որ մարդ ինքասիրություն ունի:

ԱՌԻՍԱ — Ինքնասիրություն: Դուք միայն ձեր մասին եք մտածում: Բոլորն էլ իրենց սիրում են: Իսկ ինձ երբեք մեկը սիրելի՞ս է: Մահվան դուռը կհասցնեք դուք ինձ:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Հերի՛ք է, Լարիսա՛, ինչե՛ր ես խոսում:

ԱՌԻՍԱ — Մամա՛, ես վախենում եմ, ես ինչ-որ բանից վախենում եմ: Դե, լսեցեք. եթե հարսանիքն այստեղ է լինելու, ուրեմն, խնդրում եմ, որ ժողովուրդ քիչ լինի, որքան կարելի է անաղմուկ ու համեստ:

ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Ո՛չ, երևակայությանդ զոռ մի տուր: Եթե հարսանիք է, ուրեմն հարսանիք է. ես Օգուգալովան եմ, ես աղքատություն թույլ չեմ տա: Դու այնպե՛ս պիտի փայլես, որ կյանքներում տեսած չլինեն:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես ոչինչ չեմ խնայի:

ԱՌԻՍԱ — Դե, ես լուր եմ: Տեսնում եմ, որ տիկնիկ եմ

ձեզ համար. կխաղաք հետս, կկտրեք ու դեն կշարք-տեք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այսօրվա ճաշկերույթն էլ, ահա, վրաս էժան չի նստի:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Իսկ այդ ճաշկերույթը ես լրիվ ավելորդ եմ համարում, իզուր ծախսեր են:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Եթե ինձ վրա երկու-երեք անգամ ավել էլ նստեր, ես փող չէի խնայի:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ո՛չ մեկին դա պետք չէ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՛նձ է պետք:

ԱՐԻՍԱ — Ախր ինչի՞ համար, Յուլիյ Կապիտոնիչ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լարիսա Դմիտրիևնա, երեք տարի ես հան-դուրժել եմ ստորացումները, երեք տարի ես տարել եմ

ձեր ծանոթների ծաղրը՝ աչքերիս նայել ու ծաղրել են. պետք է, որ ես էլ իմ հերթին ծիծաղեմ նրանց վրա:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Էլի այդ ինչե՞ր եք մտածում: Կոիվ եք, ինչ է, ուզում սարքել: Մենք Լարիսայի հետ չենք էլ գա:

ԱՐԻՍԱ — Ա՛հ, խնդրում եմ, ո՛չ մեկին չվիրավորեք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — «Չվիրավորե՛ք»: Իսկ ինձ վիրավորել կա-րելի՞ է: Դե հանգստացեք, ոչ մի կոիվ էլ չի լինի, ամեն

ինչ շատ խաղաղ կանցնի: Ես ձեր կենացը կառաջարկեմ և հրապարակավ շնորհակալութուն կհայտնեմ այն եր-

ջանկություն համար, որ պարզում եք ինձ ձեր ընտրու-

թյամբ, այն բանի համար, որ դուք ինձ հետ այնպես շվե-րաբեբվեցիք, ինչպես մյուսները, որ դուք ինձ գնահատե-

ցիք և հավատացիք իմ զգացմունքների անկեղծությանը: Ահա՛ և բոլորը, ահա՛ և իմ ամբողջ վրեժը:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Եվ այդ բոլորը ամենևին էլ պետք չէ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ո՛չ, այդ գատարկախոսներն հոգիս հանել են իրենց պարծենկոտությունը: Իրե՞նք են կուտակել այդ հարստությունը, որ այդպես գլուխ են գովում: Տասնհինգ

դուրբի են նետում մի բաժին թեյի համար:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Այդ բոլորը խեղճ Վասյային է ուղղված:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Միայն Վասյան չէ, բոլորն էլ նույնն են: Ահա տեսեք, թե ինչ է կատարվում քաղաքում, ինչպիսի եր-

ջանկություն կա դեմքներին: Բոլոր կառապաններն ուրա-խացել են, փողոցից փողոց տրտինգ են տալիս. կան-

չում իրար. «Պարո՛նն է եկել, պարո՛նն է եկել»: Պան-

դոկներում սպասավորներն էլ են փայլում, փողոց են վազում, իրար ձայն տալիս. «Պարո՛նն է եկել, պարո՛նն է եկել»:

Գնչուները խելքները թոցրել են, բոլորն հան-կարծ աղաղակում են, ձեռքները թափահարում: Հյու-

րանոցի մոտ հսկա բազմություն է կիտվել, հավաքույթ է: Քիչ առաջ շորս գնչուհի զուգված-զարդարված կաու-

քով հյուրանոց եկան՝ ողջունելու գալուստը: Հրաշք է, հո տեսարան չէ: Իսկ այդ պարոնը, ինչպես ինձ ասացին,

ամբողջ կարողությունը մսխել է, վերջին շոգենավն է ծախել: Եկողն ով է, մի սնանկացած, խմող ու անառակ

մարդ, և ամբողջ քաղաքն ուրախացել է: Ա՛յ թե բար-քեր են:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ո՞վ, ո՞վ է եկել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Սերգեյ Սերգեյիչ Պարատովը:

Լաբիսան վախեցած առի է ելնում:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ա՛, ահա՛ թե ով:

ԱՐԻՍԱ — Գնանք գյուղ, անմիջապե՛ս գնանք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Հիմա է, որ չպետք է գնալ:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ի՛նչ ես ասում, Լարիսա, երանից պետք չէ թաքնվել: Նա ավազակ չէ:

ԱՐԻՍԱ — Ինչո՞ւ ինձ չեք լսում: Խորտակո՛ւմ եք դուք ինձ, հրո՛ւմ անդունդ:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Դու խելագա՛ր ես:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այդ ինչո՞ւ եք վախենում:

ԱՐԻՍԱ — Ես ինձ համար չեմ վախենում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Հապա ո՞ւմ համար:

ԱՐԻՍԱ — Ձեզ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Օ՛, ինձ համար մի վախեցեք: Ես չեմ թող-

նի, որ ինձ վիրավորեն: Թող մի փորձի՛ ինձ դիպել՝ կտեսնի:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Չէ, ի՛նչ եք ասում: Աստված ձեզ պահա-

պան: Դա հո Վասյան չէ: Դուք զգույշ եղեք նրա հետ, թե չէ կյանքում ուրախություն չեք տեսնի:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Լուսամուտի մոտ): Ահա, համեցեք, ձեր

տանը մտեցան շարքով լծված շորս ձի և մի գնչու էլ կառապանի կողքին: Ինչպիսի է թող փշում մարդկանց աշքերին: Դրանից, իհարկե, ոչ մեկին վնաս չի գա, թող ուրախանա, բայց, ըստ էության, և՛ զզվելի է, և՛ հիմար:

ԱՐԻՍԱ — (Կարանդիչին): Գնանք իմ սենյակը, գնանք: Մամա՛, այստե՛ղ ընդունիր, խնդրո՛ւմ եմ, և որևէ ձևով ազատվիր նրա այցելութուններից:

Լաբոան և Կարանդիչը գնում են: Եես է մտնում Պարտով:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ե Ր Ո Ր Գ

Թզուդալու և Պարտով:

ՊԱՐԱՏՈՎ — (Ամբողջ տեսարանը վարում է կես-լուրջ, կես-կատակ տոնով): Մորաքո՛ւյր, ձեր ձե՛ռքը, խնդրո՛ւմ եմ: **ԾՆՈՒԴԱԼՈՎԱ** — (Տարածելով ձեռքերը): Ա՛խ, Սերգեյ Սերգեյի՛չ, ա՛խ, հարազատս:

ՊԱՐԱՏՈՎ — Ուզում եք գրկե՞լ: Կարելի է: (Գրկախառնվում ու համբուրվում են):

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Այդ ի՞նչ քամի է ձեզ այստեղ բերել: Երևի մեր քաղաքո՛վ եք շարունակելու ճանապարհը:

ՊԱՐԱՏՈՎ — Հենց այստեղ եմ եկել, և առաջին այցելութունը ձեզ, մորաքո՛ւյր:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Շնորհակա՛լ եմ: Ինչպի՞ս եք ապրում, ինչպե՞ս են ձեր գործերը:

ՊԱՐԱՏՈՎ — Աստու ղեմ բան չունեմ, մորաքույր, ապրում եմ ուրախ, իսկ գործերս լավ չեն:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — (Չնկելով Պարտովին): Սերգեյ Սերգեյի՛չ, ասացե՛ք, հարազատս, ինչո՞ւ այն ժամանակ այնպես հանկարծակի անհայտացաք:

ՊԱՐԱՏՈՎ — Վատ հեռագիր ստացա, մորաքույր:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Ի՞նչ հեռագիր:

ՊԱՐԱՏՈՎ — Իմ գործավարներն ու կառավարիչները բացակայությանս ժամանակ տունս քանդել էին: Իրենց գործարքներով բանն էնտեղ էին հասցրել, որ իմ պատիկ շոգենավերը, ամբողջ շարժական ու անշարժ գույքը պիտի վաճառվեր: Եվ ահա ես թո՛ւս փրկելու իմ ունեցած-չունեցածը:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Եվ, իհարկե, բոլորը փրկեցիք և ամեն ինչ կարգի բերիք:

ՊԱՐԱՏՈՎ — Բնավ երբեք. կարգի բերի, բայց ոչ ամեն ինչ, բավականին մեծ ճեղքվածք մնաց: Սակայն, մորաքույր, չեմ վհատվում և ուրախ տրամադրությունս չեմ կորցրել:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Տեսնում եմ, որ չես կորցրել:

ՊԱՐԱՏՈՎ — Մի տեղ կորցնում ենք, մեկ այլ տեղ՝ շահում, մորաքո՛ւյր. մեր գործն էլ դա է:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Որտե՞ղ եք ուզում շահել: Նոր գործարքե՞ր եք ձեռնարկել:

ՊԱՐԱՏՈՎ — Նոր գործարքները մեզ, թեթևամիտ շենտլմեններիս խելքի բանը չեն: Դրա համար պարտապանների բաժանմունք են քշում, մորաքույր: Ազատությունս եմ ուզում ծախել:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Հասկանում եմ. շահավետ ամուսնություն եք ուզում: Իսկ ինչքա՞ն եք գնահատում ձեր ազատությունը:

ՊԱՐԱՏՈՎ — Կես միլիոն:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Բավականին մեծ գումար է:

ՊԱՐԱՏՈՎ — Ավելի էժան, մորաքույր, չի կարելի, մեզը հաշիվ չկա, մեզ վրա թանկ է նստում, ինքնիրոգ գիտեք:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Կտրի՛ճ տղամարդ ես:

ՊԱՐԱՏՈՎ — Այդ կարծիքին էլ մնացեք:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Իսկական բազե: Մարդ նայի՞ քեզ ու ուրախանա:

ՊԱՐԱՏՈՎ — Շատ հաճելի է լսել ձեզից: Չեր ձեռքը, խրնդ-րում եմ: (Համբուրում է ձեռքը):

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Իսկ գնորդներ, այսինքն՝ գնորդուհիներ կա՞ն:

ՊԱՐԱՏՈՎ — Որ փնտրես, կգտնվեն:

ԾՆՈՒԴԱԼՈՎԱ — Կներեք, մի անհամեստ հարց տամ...

- ՊԱՐԱՏՈՎ** — Եթե շատ է անհամեստ, մի սովեք. ես ամալ:
կոտ եմ:
- ՕԳՈՒԳԱՆՈՎԱ** — Դե, հերիք է կատակես: Հարսանացու կա՞,
թե՞ չկա: Եթե կա, ո՞վ է:
- ՊԱՐԱՏՈՎ** — Որ մորթեք էլ, չեմ ասի:
- ՕԳՈՒԳԱՆՈՎԱ** — Դե, դո՛ւ գիտես:
- ՊԱՐԱՏՈՎ** — Ես կուզենայի հարգանքս հավաստել կարիսս
Գմիտրիկնային: Կարո՞ղ եմ նրան տեսնել:
- ՕԳՈՒԳԱՆՈՎԱ** — Ինչո՞ւ չէ: Ես հիմա նրան կուղարկեմ ձեզ
մոտ: (Վերցնում է տուփը): Ուրեմն, Սերգեյ Սերգեյիչ,
վաղը կարիսայի ծնունդն է, կուզենայի սրանք նրան նվի-
րել, բայց փողոց շատ է պակասում:
- ՊԱՐԱՏՈՎ** — Մորաքո՞ւյր, մորաքո՞ւյր: Ախր, արդեն մի երեք
հոգուց վերցրած կլինեք: Ես ձեր տակտիկան չեմ մոռա-
ցել:
- ՕԳՈՒԳԱՆՈՎԱ** — (Քննում է Պարատովի պակեջը): Ա՛խ դու,
չարածհի՛:
- ՊԱՐԱՏՈՎ** — Վաղն ինքն նվեր կրերեմ, դրանից լավը:
- ՕԳՈՒԳԱՆՈՎԱ** — Ես կարիսային կուղարկեմ ձեզ մոտ:
(Գնում է):

Գալիս է կարիսան:

Տեսարան ութերորդ

Պարատով է կարիսա:

- ՊԱՐԱՏՈՎ** — Չէի՞ք սպասում:
- ԼԱՐԻՍԱ** — Ո՛չ, հիմա չէի սպասում: Ես ձեզ երկար սպասեցի,
բայց վաղուց է արդեն՝ էլ չեմ սպասում:
- ՊԱՐԱՏՈՎ** — Իսկ ինչո՞ւ չեք սպասում:
- ԼԱՐԻՍԱ** — Հույսս կտրեցի, թե կգաք: Դուք այնպես անսպա-
սելի անհայտացաք, և ոչ մի նամակ...
- ՊԱՐԱՏՈՎ** — Ես չէի գրում, որովհետև ոչ մի հաճելի բան
չունեի ձեզ հաղորդելու:
- ԼԱՐԻՍԱ** — Ես այդպես էլ մտածում էի:

- ՊԱՐԱՏՈՎ** — Իսկ թույլ տվեք ձեզ հարցնել. ինձ երկա՞ր սպա-
սեցիք:
- ԼԱՐԻՍԱ** — Ինչո՞ւ եք ուզում իմանալ:
- ՊԱՐԱՏՈՎ** — Հենց այնպես չեմ հարցնում, կարիսս 'Իմիտրի-
կնա. ինձ հետաքրքրում են զուտ տեսական նկատառում-
ները: Ուզում եմ իմանալ՝ շո՞ւտ է կինը մոռանում իր
սիրած տղամարդուն. բաժանման հաջորդ օրը, մեկ շա-
բաթ, թե մեկ ամիս անց... Իրավո՞ւնք ունեի Համլետն
ասելու մորը, թե նա «ոտնամանները դեռ չի մաշել» և
այլն:
- ԼԱՐԻՍԱ** — Ձեր հարցին ես չեմ պատասխանի: Սերգեյ Սեր-
գեյիչ, կարող եք մտածել իմ մասին, ինչ ուզում եք:
- ՊԱՐԱՏՈՎ** — Ձեր մասին ես միշտ հարգանքով եմ մտածե-
լու, բայց կանայք ընդհանրապես ձեր վարմունքից հետո
չատ բան են կորցնում իմ աչքում:
- ԼԱՐԻՍԱ** — Այդ իմ ո՞ր վարմունքից հետո: Դուք ոչինչ չգի-
տեք:
- ՊԱՐԱՏՈՎ** — Այդ «հեզ, քնքույշ հայացքները», այդ քաղցր
սիրային շշուկը, երբ յուրաքանչյուր բառին հաջորդում
է խոր հոգոցը, այդ երգումները... Եվ այդ ամենը մեկ
ամիս հետո կրկնվում է ուրիշին, որպես սերտած դաս:
Օ՞, կանա՛յք:
- ԼԱՐԻՍԱ** — «Կանա՛յք» ի՞նչ:
- ՊԱՐԱՏՈՎ** — Ոչնչու՞թյուն է ձեր անունը¹:
- ԼԱՐԻՍԱ** — Ահ, ինչպե՞ս եք համարձակվում վիրավորել ինձ:
Մի՞թե դուք կարծում եք, թե ձեզանից հետո սիրել եմ
ուրիշին: Դուք համոզված եք դրանում:
- ՊԱՐԱՏՈՎ** — Համոզված չեմ, բայց ենթադրում եմ:
- ԼԱՐԻՍԱ** — Այդպես դաժանորեն հանդիմանելու համար հար-
կավոր է իմանալ և ոչ թե ենթադրել:
- ՊԱՐԱՏՈՎ** — Դուք ամուսնանո՞ւմ եք:
- ԼԱՐԻՍԱ** — Բայց ի՞նչը ինձ ստիպեց... Եթե տանն ապրել հնա-
րավոր չէ, եթե ահավոր, մահացու ճանճույթի պահերին
ստիպում են սիրաբանել, փեսացուներ են կապում գըլ-
խիդ, որոնց վրա առանց զզվանքի չես կարող նայել:

¹ Ենթադրի «Համլետ» ողբերգության համանուն հերոսի խոսքերը:

տանը սկանդալներ են, եթե փախչել է պետք տնից և նույնիսկ քաղաքից...

ՊԱՐԱՏՈՎ — Լարիսա, ուրեմն դուք...

ԼԱՐԻՍԱ — «Ես» ի՞նչ: Դե, ի՞նչ էիք ուզում ասել:

ՊԱՐԱՏՈՎ — Ներեցեք, ես մեղավոր եմ ձեր առաջ: Ուրեմն դուք ինձ դեռ չե՞ք մոռացել... դուք դեռ... ինձ սիրում եք:

Լարիսան լուռ է:

Դե ասացե՛ք, անկե՛ղծ եղե՛ք:

ԼԱՐԻՍԱ — Ի՜հարկե, այո՛: Կարիք չկա հարցնելու:

ՊԱՐԱՏՈՎ — (Քնքշորեն համբուրում է Լարիսայի ձեռքը): Շնորհակա՛լ եմ ձեզնից, շնորհակա՛լ եմ:

ԼԱՐԻՍԱ — Ձեզ միայն դա էր պետք, դուք հպարտ մարդ եր:

ՊԱՐԱՏՈՎ — Զիջել ձեզ ես կարող եմ, հանգժանքներն են ստիպում, բայց ձեռ սերը զիջելը՝ ծանր կլինեք ինձ համար:

ԼԱՐԻՍԱ — Ծի՛րթե:

ՊԱՐԱՏՈՎ — Եթե որևէ մեկին գերադասեիք ինձնից, դու խորը վիրավորած կլինեիք, և ես ձեզ հեշտությունը չէի ների:

ԼԱՐԻՍԱ — Իսկ հիմա՞:

ՊԱՐԱՏՈՎ — Իսկ հիմա ամբողջ կյանքում ամենահաճելի հիշողությունը կպահպանեմ ձեր մասին, և մենք կբաժանվենք որպես լավագույն բարեկամներ:

ԼԱՐԻՍԱ — Ուրեմն թող կինը լա, տառապի, միայն թե սիրի՞ ձեզ:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ արած, Լարիսա Դմիտրիևնա: Միրո մեջ հավասարություն չկա, դա արդեն ես չեմ որոշել: Միրողը երբեմն պետք է նստ լա:

ԼԱՐԻՍԱ — Եվ անպայման կինը:

ՊԱՐԱՏՈՎ — Դե, հասկանալի է, ո՛չ թե տղամարդը:

ԼԱՐԻՍԱ — Ախր ինչո՞ւ:

ՊԱՐԱՏՈՎ — Շատ պարզ. որովհետև եթե տղամարդը լաց է պինում, նրան կնիկ են ասում, իսկ այդ անունը տղա-

մարդու համար ամենավատն է այն ամենից, ինչ կարող է հնարել մարդկային ուղեղը:

ԼԱՐԻՍԱ — Եթե սերը երկկողմանի հավասար լիներ, արցունքներ էլ չէին լինի: Երբեք եղե՞լ է այդպես:

ՊԱՐԱՏՈՎ — Հազվադեպ է պատահում: Միայն թե դա ինչ-որ հրուշակեղենի, քաղցրավենիքի նման է լինում:

ԼԱՐԻՍԱ — Սերգեյ Սերգեյիչ, ինչ որ շպետք է ասելի, ասացի. հուսով եմ, որ իմ անկեղծությունը ի շար չեք գործադրի:

ՊԱՐԱՏՈՎ — Ներեցեք, դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում: Ուրիշ բան է, եթե կինը ազատ լինի... Ես, Լարիսա Դմիտրիևնա, իմ օրենքներն ունեմ, ամուսնությունն ինձ համար սրբություն է: Ես այդ ազատամտությունը չեմ հանդուրժում: Թույլ տվեք հետաքրքրվել. ձեր ապագա ամուսինը շա՞տ արժանիքներ ունի:

ԼԱՐԻՍԱ — Ո՛չ, միայն մեկը:

ՊԱՐԱՏՈՎ — Շատ չէ:

ԼԱՐԻՍԱ — Բայց շատ թանկարժեք:

ՊԱՐԱՏՈՎ — Այսի՞նքն:

ԼԱՐԻՍԱ — Նա սիրում է ինձ:

ՊԱՐԱՏՈՎ — Իսկապես շատ թանկարժեք. դա տնային գործածություն համար շատ լավ է:

Մտնում են Օգուդալովան և Կարանդիչը:

Տ Ե Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ղ

Պարտով, Լարիսա, Օգուդալովա, Կարանդիչ, ճեստ սպասավոր:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Թույլ տվեք ձեզ ծանոթացնել, պարոնայք (Պարտովին): Յուլիյ Կապիտոնիչ Կարանդիչը: (Կարանդիչին): Սերգեյ Սերգեյիչ Պարտով:

ՊԱՐԱՏՈՎ — (Անոխ մեկնելով Կարանդիչին): Մենք արգեն ծանոթ ենք. Մեծ բեղերի և փոքր ընդունակությունների տեր մեկն եմ: Խնդրում եմ սիրեք և հաքգեք: Խարիտա

Իգնատևնայի և Լարիսա Դմիտրիկևայի հին բարեկամը
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Ջուսպ): Շատ հաճելի է:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Սերգեյ Սերգեյիչը մեր տանը հարազատի
 պես է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Շատ հաճելի է:
ՊԱՐԱՏՈՎ — (Կարանդիշեխ): Դուք խանդոտ չե՞ք:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Հուսով եմ, որ Լարիսա Դմիտրիկևան ոչ
 մի առիթ չի տա խանդելու:
ՊԱՐԱՏՈՎ — Բայց, ախր, խանդոտ մարդիկ խանդում են
 առանց որևէ առիթի:
ԼԱՐԻՍԱ — Ես երաշխավորում եմ, որ Յուլիյ Կապիտոնիչը
 ինձ չի խանդի:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այո, իհարկե, բայց եթե...
ՊԱՐԱՏՈՎ — Օ՛, այո՛, այո՛, երևի դա շատ սարսափելի բան
 կլիներ:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Այդ ի՞նչ գրույց է, պարոնայք: Մի՞թե խան-
 դից բացի ուրիշ խոսելու բան չկա:
ԼԱՐԻՍԱ — Մենք, Սերգեյ Սերգեյիչ, շուտով գյուղ ենք
 գնալու:
ՊԱՐԱՏՈՎ — Այս հիանալի վայրերը թողա՞ծ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՞նչ կա այստեղ, ձեր կարծիքով, հիանալի
ՊԱՐԱՏՈՎ — Նայած ո՞ւմ համար. ճաշակին, ինչպես ասում
 են, ընկեր չկա:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Ճիշտ է, ճիշտ է, մեկին քաղաքն է դուր
 գալիս, մյուսին՝ գյուղը:
ՊԱՐԱՏՈՎ — Մորաքույր, ամեն մարդ իր ճաշակն ունի. մեկը
 ձմերուկ է սիրում, մյուսը խոզի կրճիկ:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Ա՛խ, շարաճճի՛: Որտեղի՞ց այդքան ասաց-
 վածք գիտեք:
ՊԱՐԱՏՈՎ — Բուռլակների մեջ եմ եղել, մորաքույր, նրան-
 ցից սովորել եմ ոռուաց լեզուն:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Բուռլակներից ոռուաց լեզո՞ւ:
ՊԱՐԱՏՈՎ — Իսկ ինչո՞ւ նրանցից չսովորել:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Որովհետև մենք նրանց համարում ենք...
ՊԱՐԱՏՈՎ — Այդ ովքե՞ր՝ մենք:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (ԲարբոՎելով): Մենք, այսինքն՝ կրթված
 մարդիկս, և ոչ թե բուռլակները:

ՊԱՐԱՏՈՎ — Դե, իսկ ի՞նչ եք համարում բուռլակներին: Ես
 նավատեր եմ և պաշտպանում եմ նրանց. ես ինքս էլ
 նրանց պես մի բուռլակ եմ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Մենք նրանց համարում ենք կոպտության ու
 տգիտության տիպար:
ՊԱՐԱՏՈՎ — Էլ ուրի՞շ, պարոն Կարանդիշեխ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Վե՛րջ, ուրիշ ոչի՛նչ:
ՊԱՐԱՏՈՎ — Ո՛չ, չվերջացրիք, հիմնականը մնաց, դուք պետք
 է ներողություն խնդրեք:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ե՛ս ներողություն խնդրեմ:
ՊԱՐԱՏՈՎ — Այո, ուրիշ ելք չկա, պե՛տք է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր, ինչի՞ համար: Դա իմ համոզմունքն է:
ՊԱՐԱՏՈՎ — Դե՛-դե՛-դե՛: Խուսափել չի կարելի:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Պարոնա՛յք, պարոնա՛յք, ի՞նչ պատահեց
 ձեզ:
ՊԱՐԱՏՈՎ — Մի՛ անհանգստացեք, ես դրա համար մենա-
 մարտի չեմ կանչի. ձեր փեսացուն ողջ կմնա, ես նրան
 միայն դաս կտամ: Իմ սկզբունքն է՝ ոչ մեկին ոչինչ չնե-
 րել. թե չէ ահը կմոռանան, շափր կանցնեն:
ԼԱՐԻՍԱ — (Կարանդիշեխ): Այդ ի՞նչ եք անում: Իսկույն նե-
 րողություն խնդրեք, ես ձեզ հրամայում եմ:
ՊԱՐԱՏՈՎ — (Օգուղալովային): Ժամանակն է, որ ինձ ճա-
 նաչեք: Եթե ես մեկին ուզում եմ դաս տալ, մի շաբաթ
 փակվում եմ տանը և պատժի ձեռք մտածում:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Պարատովին): Չեմ հասկանում:
ՊԱՐԱՏՈՎ — Նախ հասկանալ սովորեք, հետո նոր խոսեք:
ՕԳՈՒԴԱՆՈՎԱ — Սերգեյ Սերգեյիչ, ես ծնկի կգամ ձեր առաջ,
 դե, իմ խաթեր ներեք նրան:
ՊԱՐԱՏՈՎ — (Կարանդիշեխ): Ենորհակալություն հայտնեք
 Խարիտա Իգնատևնային: Ես ձեզ ներում եմ: Միայն, հա-
 րազատս, ճանաչեք մարդկանց: Ես կոխվ ման չեմ գա-
 լիս, բայց որ սկսեցի...

Կարանդիշեխ ուզում է պատասխանել:

ՓԳՈՒԴԱԼՈՎԱ — Մի՛ առարկեք, մի՛ առարկեք, թե չէ ես ձեզ հետ կկովեմ: Լարիսա՛: Կարգադրիր, թող շամպայն մաւ տուցեն, մի-մի բաժակ էլ լցրու, թող խմեն, հաշտվեն:

Լարիսան գնում է:

Դե, պարոնայք, խնդրում եմ այլևս չվիճեք: Ծա խաղաղ բնավորության տեր կին եմ. սիրում եմ, որ ամեն ինչ հաշտ ու խաղաղ լինի:

ՊԱՐԱՏՈՎ — Ինքս էլ խաղաղ բնավորության տեր եմ, հավի՞ն էլ չեմ նեղացնի, երբեք առաջինը չեմ սկսի. իմ կողմից ապահով եղեք:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Յուլիյ Կապիտոնիչ, դուք դեռևս երիտասարդ եք, պետք է համեստ լինեք, տաքանալ պետք չէ: Խնդրում եմ բարի եղեք Սերգեյ Սերգեյիչին հրավիրել ճաշի, անպայման հրավիրեք, մեզ շատ հաճելի է նրա հետ լինել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ծա ինքս էլ էի ուզում: Սերգեյ Սերգեյիչ, չե՞ք հաճի այսօր իմ տանը ճաշել:

ՊԱՐԱՏՈՎ — (Սառը): Հաճույքո՛ւմ:

Ներս է մտնում Լարիսան, ետեից սպասավորը՝ ջամպայ-նի շքը ձեռքին և բաժակները սկստեղի վրա:

ԼԱՐԻՍԱ — (Լցնում է): Պարոնայք, խոնարհաբար խընդրում եմ:

Պարտավն ու Կարանդիշեր վերցնում են բաժակները:

Խնդրում եմ բարեկամներ լինեք:

ՊԱՐԱՏՈՎ — Ձեր խնդրանքն ինձ համար հավասարազոր է հրամանի:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — (Կարանդիշեին): Դուք էլ, ահա, օրինակ վերցրեք Սերգեյ Սերգեյիչից:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իմ մասին խոսելն իսկ ավելորդ է. Լարիսա Դմիտրիևայի յուրաքանչյուր խոսքն օրենք է:

Մտնում է Վոսեվատովը:

Տեառան տասնէքորդ

Օգուդալովա, Լարիսա, Պարտավ, Կարանդիշե, Վոսեվատով, Ներս Ռոբինզոն:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Որտեղ շամպայնը, այնտեղ էլ մենք: Ի՛նչ հոտառություն: Խարիտա Իգնատևնա, Լարիսա Դմիտրիևանա, թույլ տվեք շիկահերին ներս մտնի:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ի՛նչ շիկահեր:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Հիմա կտեսնեք: Մտի՛ր, շիկահեր՛:

Ռոբինզոնը ներս է գալիս:

Պատիվ ունեմ ներկայացնելու իմ նոր բարեկամին. լորդ Ռոբինզոն:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Շատ հաճելի է:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — (Ռոբինզոնին): Համբուրի՛ր ձեռքը:

Ռոբինզոնը ճամբուրում է Օգուդալովայի և Լարիսայի ձեռքը:

Դե, միլորդ, հիմա արի այստեղ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ինչո՞ւ եք այդպես հրամայում ձեր ընկեա-րոջը:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Նա գրեթե չի եղել կանանց հասարակության մեջ, այնքա՛ն ամաչկոտ է: Ավելի շատ ճանապարհորդել է՝ կ'ըրով, կ'ցամաքով, իսկ վերջերս լրիվ վայրենացել է մի անմարդաբնակ կղզում: (Կարանդիշեին): Թույլ տվեք ձեզ ծանոթացնել: Լորդ Ռոբինզոն, Յուլիյ Կապիտոնիչ Կարանդիշև:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Ձեռքը մեկնելով Ռոբինզոնին): Դուք վաղո՞ւց եք դուրս եկել Անգլիայից:

ՌՈՐԻՆԶՈՆ — Yes: (Յես):

ՎՈՓԵՎԱՏՈՎ — (Պարտավին): Ծա նրան մի երեք անգլերեն բառ սովորեցրի, անկեղծ ասած՝ ինքս էլ դրանից ավելի չգիտեմ: (Ռոբինզոնին): Ի՛նչ ես աչքդ գցել գիտուն: Խա՛րիտա Իգնատևնա, կարելի՞ է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Շնորհ արեք:

¹ Այո — (անգլ.):

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Անպիացիներն, ախր, ամբողջ օրը գինի են խմում, առավոտվանից:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — (Ռոբինզոնին): Մի՞թե դուք ամբողջ օրը խմում եք:

ՌՌՐԻՆՉՈՆ — Yes.

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Նրանք երեք անգամ նախաճաշում են, հետո էլ վեցից ճաշում են մինչև տասներկուսը:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դա հնարավոր բան է:

ՌՌՐԻՆՉՈՆ — Yes.

ՎՈՓԵՎԱՏՈՎ — (Ռոբինզոնին): Դե՛, լցրո՛ւ:

ՌՌՐԻՆՉՈՆ — (Լցնելով բաժակները): If you please! (Ի՞նչ յափիզ)¹: (խմում են):

ՊԱՐԱՏՈՎ — (Կարանդիշկին): Նրա՛ն էլ հրավիրեք ճաշի: Մենք նրա հետ ամենուր միասին ենք, ես առանց նրա չեմ կարող:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՞նչ է նրա անունը:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՛վ է նրանց անունով կոչում: Լո՛րդ, միլիո՛րդ...

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Մի՞թե նա լորդ է:

ՊԱՐԱՏՈՎ — Իհարկե, լորդ չէ. նրանք այդպես սիրում են: Կամ էլ ուղղակի՝ սըր Ռոբինզոն:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Ռոբինզոնին): Սըր Ռոբինզոն, խոնարհաբար խնդրում եմ այսօր գաք իմ տուն ճաշի:

ՌՌՐԻՆՉՈՆ — I thank you: (Այ բանք յու)²:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Օգուղալովային): Խարիտա Իգնատևնա, ես տուն եմ գնում, մի բանի մանր-մունր գործեր ունեմ: (Իսլոբին գլուխ տալով): Ես սպասում եմ ձեզ, պարոնայք: Պատիվ ունեմ հրաժեշտ տալու: (Գնում է):

ՊԱՐԱՏՈՎ — (Վերցնում է գլխաբլր): Մեր գնալու ժամանակն էլ է, ճանապարհից ենք, մի քիչ հանգստանանք:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Եվ պատրաստվենք ճաշի:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Սպասե՛ք, պարոնայք, բոլորը միանգամից մի գնացեք:

Օգուղալովան և Լաբանան Կարանդիշի ետեից գնում են նախասենյակ:

¹ Խնդրեմ — (անգլ.):

² Շնորհակալ եմ: — (անգլ.):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն տ ա ս ն մ ե կ ե Ր Ո Ր Ղ

Պարաժով, Վոժեվատով և Ռոբինզոն:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ձեզ դուր եկա՞վ փեսացուն:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչը պիտի դուր գար: Ո՞ւմ կարող է դուր գալ: Դեռ խոսում էլ է: Ստահա՛կ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Բա՛ն է պատահել:

ՊԱՐԱՏՈՎ — Մի թեթև խոսակցություն եղավ: Փքվել, իրեն մարդու տեղ է դրել, աքլորանալ է ուզում: Դեռ սպասիր, բարեկամս, աքլորանալը հետո կտեսնես: (Խփելով նակատին): Փայլուն գաղափար է: Դե, Ռոբինզոն, քեզ դրժվար աշխատանք է սպասվում. տեսնենք պատվով դուրս կգա՞ս...

ՎՈՓԵՎԱՏՈՎ — Ի՞նչ է պատահել:

ՊԱՐԱՏՈՎ — Ահա՛ թե ինչ: (Ականջ դնելով): Գալի՛ս են, Հետո՛ կասեմ, պարոնայք:

Ներս են գալիս Օգուղալովան և Լաբանան:

Պատիվ ունեմ հրաժեշտ տալու:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

ԵՅՐԱՍԻՆՅԱ. ՊՈՏԱՊՈՎՆՍ, Կարանդիշի հորաքույր:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ:

ԼԱՐԻՍԱ:

ՊԱՐԱՏՈՎ:

ԿՆՈՒՐՈՎ:

ՎՈՓԵՎԱՏՈՎ:

ՌՌՐԻՆՉՈՆ:

ԻՎԱՆ:

ԻՋԱ-ԳՆՉՈՒ:

Կարեղիշի առանձնատեղիքը. հավակնու, բայց անհաշակ կանավորված սենյակ. պատերից մեկին, բազմոցի վերևը զորք է, որի վրա գեներե են կախված: Երեք դուռ, մեկը մեջտեղում, երկուսը կողմերից:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Եփրատի նյա Պոտապոլեան և Իվան (զալիս է ձախ գոճից):

Իվան — Լիմոն սովեք:

ԵՖՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Ի՞նչ Լիմոն, ի՞ժի ծնունդ:

Իվան — Մեսիսյան:

ԵՖՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Ինչի՞դ է պետք:

Իվան — Ճաշից հետո պարոն կա սուրճ է ուզում, պարոն կա՝ թեյ, էնպես որ թեյի համար պետք է:

ԵՖՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Այսօր դուք իմ հոգին հանեցիք: Լոտամրգի օշարակ տուր, մեկ չէ՞: էնտեղից գրաֆինը վերցրու. զգո՞ւյշ, հա՛, հին գրաֆին է, խցանը հազիվ է պահում, զմուռսով է ամրացված: Գնանք, ես ի՛նքս կտամ: (Գնում է մեջտեղի դռնով, Իվանը ետևից):

Ձախից ետև են գալիս Օգուդալովան և Լարիսան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Օգուդալովա և Լարիսա:

ԼԱՐԻՍԱ — Ա՛խ, մամա՛, չգիտեի, թե ուր փախչեմ:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ես այդպես էլ գիտեի:

ԼԱՐԻՍԱ — Այդ ի՞նչ ճաշ է: Եվ դեռ Մոկիչ Պարմենիչին էլ հրավիրում է: Ախր ի՛նչ է անում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Լա՛վ է հյուրասիրում, խոսք չունեմ:

ԼԱՐԻՍԱ — Ա՛հ, ի՛նչ վատ ստացվեց: Այս ամոթից վատ բան չկա, երբ ստիպված ես ուրիշի փոխարեն ամաշել: Մենք ահա ոչ մի մեղք էլ չունենք, բայց ամո՛թ է, ամո՛թ, այն-

պե՛ս կփախչեի որևէ տեղ: Իսկ նա կարծես ոչինչ չի նկատում, նույնիսկ ուրախ է:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Չի էլ կարող նկատել. ոչինչ չգիտի, երբեք չի էլ տեսել, թե կարգին մարդիկ ինչպես են ճաշում: Նա նույնիսկ մտածում է, որ բոլորին զարմացրել է իր ճոխությամբ. հենց դրա համար էլ ուրախ է: Մի՞թե դու չես նկատում: Նրան դիտմամբ են խմեցնում:

ԼԱՐԻՍԱ — Ա՛խ, ա՛խ, մի՛ թող նրան, մի՛ թող:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ինչպե՞ս շթողնեմ: Նա երեխա չէ, ժամանակն է, որ առանց դայակի ապրի:

ԼԱՐԻՍԱ — Ախր հիմար չէ, ինչպես չի տեսնում այդ բոլորը:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Հիմար չէ, բայց ինքնասեր է: Նրան ձեռ են առնում, գինիները գոժում են, իսկ նա ուրախանում է. իրենք ձեռացնում են, թե իբր խմում են, իսկ նրա համար շարունակ լցնում են:

ԼԱՐԻՍԱ — Ա՛հ, ես վախենում եմ այդ ամենից, վախենո՞ւմ եմ: Ինչո՞ւ են այդպես անում:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Հենց այնպես, զվարճանում են:

ԼԱՐԻՍԱ — Ախր չէ՞ որ ինձ տանջում են:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Իսկ ո՞ւմ պետքն է, որ դու տանջվում ես: Ահա, սիրելիս, դեռ բան չտեսած, արդեն տանջվում ես իսկ հետո՞ ինչ է լինելու:

ԼԱՐԻՍԱ — Ա՛հ, արդեն ամեն ինչ եղել-վերջացել է. մնում է միայն ափսոսալ, իսկ շտկել հնարավոր չէ:

Ետև է մտնում Եփրատի նյա Պոտապոլեան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Օգուդալովա, Լարիսա և Եփրատի նյա Պոտապոլեան:

ԵՖՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Կերաք-պրծա՞ք: Իսկ թեյ չէ՞ք ուզի:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ո՛չ, պետք չէ՛:

ԵՖՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Իսկ տղամարդի՞կ ինչ գործի են:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Նրանք այնտեղ են նստել, խոսում են:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Դե, կերան, վեր կենային, էլի, էլ ինչի՞ են սպասում: Հոգիս հանեց էս ճաշկերույթը, ինչքան շարշարանք, ինչքան ծախս: Խոհարարն էլ ավադակի մեկն է, էնպես է խոհանոց մտնում, ոնց որ կոլվը նոր հաղթել, տուն է մտել. բերանդ բացելու իրավունք չունես:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Նրա հետ ի՞նչ խոսես: Եթե լավ խոհարար է, սովորեցնել պետք չէ:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Սովորեցնելու մասին չէ խոսքըս, մի՞թեք շատ են փշացնում: Եթե սեփականս լինե՞ր՝ տնակա՞ն, գյուղի՞ց, ծպտուն չէի հանի: Ախր առնովի է, թա՛նկ, ափսոսս գալիս է: Մի տես, շաքար է ուզում, վանիլ, ձկնասոսիսնձ. իսկ էդ վանիլը թանկ արժե, իսկ ձկնասոսիսնձը դրանից էլ թանկ: Դե մի պտղունց հոտի համար գցի, իսկ նա՞ չէ, անտեղի թափում է. նայելիս սիրտս սառում է:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Այո՛, խնայող մարդկանց համար, իհարկե՛...
ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Ախր ի՞նչ խնայողություն, թե որ մարդը խելքը թոցրել է: Վերցնենք ստերլետ ձուկը.

մեծ թե փոքր՝ համը նույնը չի՞: Իսկ գնի մեջ սարուձորի տարբերություն կա: Տասը հատին հիսուն կոպեկը դեռ մի բան էլ շատ է, իսկ նա հատին է հիսուն տվել:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Վատ չէր լինի, որ ճաշի սեղանի այդ ձկները Վոլգայում դեռ լողային ու մեծանային:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Կա՛, ինչի՞ չէ, մի ուրբիանոց էլ կա, երկու էլ. տուր, թե որ փողիդ հաշիվ չկա: Կարևոր հյուրի կամ էլ արքեպիսկոպոսի համար լինե՞ր՝ հասկացանք, կարգն էդպես է, թե չէ ինչի՞ իզուր տաս: Գինին էլ էր ուզում թանկանոց առնի, մի ուրբի, դեռ մի բան էլ ավելի: Լավ է խղճով վաճառական հանդիպեց. առեք, ասում է, շիշը վաթսուն կոպեկով, պիտակ կկրպցրենք, որը որ ուզում եք: Եվ ի՞նչ գինի տվեց: Կարելի է ասել՝ պատվական: Մի բաժակ փորձեցի. հա՛մ միխակի հոտ է գալիս, հա՛մ վարդի, հա՛մ էլ ինչ-որ ուրիշ բանի: Էլ ի՞նչ էժանանոց, թե որ մեջը էգբան անուշահամ բան է լցված: Քիչ փող էլ չի՞ շիշը վաթսուն կոպեկի: Բայց արժի տալ: Իսկ ավելի տալ՝ ուժներս չի պատում,

ոտնիկով ենք ապրում: Հարևանս էր պասակում, քեզ օրինակ: Բմբուլի բարձն ու դոշակն ասեմ, բերին հա բերին, և բոլորը իսկական: Հետո մորթեղեն՝ և՛ աղվես, և՛ կղաքիս, և՛ սամույր: Էդ բոլորը տուն մտցրին. ուրեմն մարդը ծախսելու տեղ ունի: Իսկ նրա կողքի շինովնիկի բերած ամբողջ օժիտը մի հին դաշնամուր էր: Դրանով քե՛ք չե՞ք քաշի: Մեկ է, մենք էլ գլուխ գովելու տեղ չունենք:

ԱՐԻՍԱ — (Օգուղալովային): Գլուխս առնե՛ի փախչելի այստեղից:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Հնարավոր չէ, դժբախտաբար:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Թե վատ եք գգում ձեզ, համեցեք գնանք իմ սենյակը, հիմի տղամարդիկ կգան, էնքան կծխեն, որ շունչ առնել չի լինի: Ի՞նչ եմ կանգնել մնացել: Վազեմ արծաթեղենը հաշվեմ, դնեմ փակեմ, հիմիկվա մարդկանց երեսին մեռոն չկա:

Օգուղալովան և Լարիսան գնում են աչ դռով, Եֆրասիյա Պոտապովնան՝ մեջտեղի: Զախ դռնից դուրս են գալիս Պատաովը, Կեուովը, Վոժեվասովը:

Տեսարան չորրորդ

Պարտավ, Կեուով, Վոժեվասով:

Կեուով — Ես, պարոնայք, ակումբ ճաշելու գնամ, ես ոչինչ չկերա:

ՊԱՐԱՏՈՎ — Սպասե՛ք, Մոկիյ Պարմենիյ:

Կեուով — Կյանքումս առաջին անգամն է ինձ հետ այսպիսի բան պատահում: Հայտնի մարդկանց հրավիրում են ճաշի, իսկ ուտելու բան չկա... Նա հիմար մարդ է, պարոնայք:

ՊԱՐԱՏՈՎ — Մենք չենք վիճում: Պետք է արդարացի լինել նրա նկատմամբ. նա իրոք հիմար է:

Կեուով — Եվ ամենից առաջ ինքը հարբեց:

ՎՈՅՎԱՏՈՎ — Մենք նրան բավականին նախապատրաստեցինք:

ՊԱՐԱՏՈՎ — Այո, ես իմ մտադրությունն իրագործեցի: Դեռ

վաղուց էի մտածել. մի լավ խմեցնել նրան և տեսնել, թե ինչ է լինելու:

ԿՆՈՒՐՈՎ — Ուրեմն դա մտածված բան էր:

ՊԱՐԱՏՈՎ — Մենք նախապես պայմանավորվել էինք: Ահա, պարոնայք, այսպիսի դեպքերի համար Ռոբինզոններն անգնահատելի են:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Մարդ հո չէ՝ ոսկի է:

ՊԱՐԱՏՈՎ — Տանտիրոջը խմեցնելու համար ինքդ էլ պիտի հետը խմես: Իսկ հնարավոր է կուլ տալ այդ թույնը, որին նա գինի է ասում: Վարժվել է յարոսլավական արտադրության արտասահմանյան գինիներին, նրա պետքը չէ: Նա խմում ու գովում է, փորձում մեկ այս, մեկ այն, համեմատում է, գիտակի տեսք ընդունած ըմբռնում է, բայց առանց տանտիրոջ չի համաձայնվում խմել: Եվ կարանդիշը խաբվեց: Մարդը սովոր չէ, նրան ինչքա՞ն է պետք որ, և շատ շուտ երանության գիրկն ընկավ:

ԿՆՈՒՐՈՎ — Զվարճալի է: Միայն թե ես, պարոնայք, լրջորեն ուտել եմ ուզում:

ՊԱՐԱՏՈՎ — Դեռ կհասցնենք: Մի քիչ սպասեք, մենք հիմա կարիսա Դմիտրիենային կխնդրենք որևէ բան երգի:

ԿՆՈՒՐՈՎ — Դա ուրիշ բան է: Իսկ ո՞ւր է Ռոբինզոնը:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Նրանք այնտեղ դեռ շարունակում են խմել:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ Ի Ն Չ Ե Ր Ո Ր Դ

Պարտով, Կեռով, Վոժելատով և Ռոբինզոն:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ պատահեց քեզ, հարբած ես, ի՞նչ է:

ՌՈՐԻՆԶՈՆ — Հարբած: Երբևէ ես դրանից գանգատվե՞լ եմ: Հիանալի կլիներ, եթե հարբած լինեի, դրանից լավ բան էլ ի՞նչ էր պետք: Ես այդ բարի մտադրությամբ այստեղ եկա, այդ բարի մտադրությամբ էլ ապրում եմ աշխարհիս երեսին: Դա իմ կյանքի նպատակն է:

ՊԱՐԱՏՈՎ — Հապա ի՞նչ է պատահել:

ՌՈՐԻՆԶՈՆ — Ես թունավորված եմ, ևս հիմա ոստիկան կկանչեմ:

ՊԱՐԱՏՈՎ — Իսկ ի՞նչ ավելի շատ խմեցիր, ո՞ր գինուց: ԻՌՐԻՆԶՈՆ — Ո՞վ գիտե: Քիմիկո՞ս եմ, ինչ է: Ոչ մի դեղագործ դրանից գլուխ չի հանի:

ՊԱՐԱՏՈՎ — Շշի վրա ի՞նչ էր գրված, ի՞նչ պիտակ էր:

ԻՌՐԻՆԶՈՆ — Շշի վրա «Բուրգոնյան» էր, իսկ շշի մեջ ինչ-որ «քինդեր-բալզամ»: Մանր է նստելու վրաս այդ բալասանը, զգում եմ:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Այդպես պատահում է, գինի պատրաստելիս մի բան շափից ավելի են գցում: Ինչ մի դժվար բան է սխալվելը: Մարդ են, էլի, հո մեքենա չեն: Ճանճասպան ավել զցած չլինե՞ն:

ԻՌՐԻՆԶՈՆ — Ի՞նչ ես ուրախանում: Մարդը մեռնում է, իսկ դու բերանդ բացել ես:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Վե՛րջ: Մեռնելո՞ւ ես, Ռոբինզո՞ն:

ԻՌՐԻՆԶՈՆ — Հիմարություն է դա, մեռնելուն ես համաձայն չեմ... Ախ, գոնե իմանայի, թե ինչ հաշմություն է լինում այդ գինուց:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Մի աչքդ անպայման պայթելու է, այդպես էլ իմացիր:

Քեմի ետևից Կարանդիշի ձայնը՝ «Հե՛յ, բուրգոնյան տվեք մեզ»:

ԻՌՐԻՆԶՈՆ — Դե, ահա, բարի եղբք լսեք, էլի՛ բուրգոնյան: Փրկե՛ք, մեռնում եմ: Սերժ, գոնե դու ինձ խղճա: Ախր ես ծաղիկ հասակում եմ, պարոնայք, մեծ հույսեր եմ ներշնչում: Ինչո՞ւ պիտի արվեստը զրկվի...

ՊԱՐԱՏՈՎ — Դե, լաց մի լինի, ես քեզ կբուժեմ, ես գիտեմ քեզ փրկելու միջոցը. միանգամի՛ց կանցնի:

Նեռ է գալիս Կարանդիշը՝ մի առիթ սփար ձեռքի:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ո Ր Դ

Պարտով, Կեռով, Վոժելատով, Ռոբինզոն և Կարանդիշ:

ԻՌՐԻՆԶՈՆ — (Նայելով զարգին) — Այս ի՞նչ է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Սիգա՛ր:

ՈՌԲԻՆՁՈՆ — Չէ՛, կախվածներն եմ ասում: Բուտաֆորական իրե՞ր են:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՛նչ բուտաֆորական իրեր: Թուրքական զենք է:
ՊԱՐԱՏՈՎ — Ա՛յ, թե ով է մեղավոր, որ ավստրիացիք չեն կարողանում հաղթել թուրքերին:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչպե՞ս թե: Դա ի՛նչ կատակ է: Կներեք, ի՛նչ անմտություն: Ես ինչո՞վ եմ մեղավոր:
ՊԱՐԱՏՈՎ — Դուք նրանցից վերցրել եք բոլոր հին ու անպետք զենքերը, նրանք էլ ճարահատյալ անզլիական լավ զենք են ձեռք բերել:
ՎՈԹԵՎԱՏՈՎ — Այո՛, այո՛, ահա թե ով է մեղավորը: Հիմա պարզվեց: Դե, ավստրիացիները դրա համար ձեզ շնորհակալություն չեն ասի:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ախր ինչո՞ւ է անպետք: Այս ատրճանակն, օրինակ: (Պատից վերցնում է ատրճանակը):
ՊԱՐԱՏՈՎ — (Անոխից առնում է ատրճանակը): Այս ատրճանակը:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Չգո՛ւյշ, լցվա՛ծ է:
ՊԱՐԱՏՈՎ — Մի՛ վախեցեք: Լցրած, լցրած՝ սրանից վտանգ չկա. մեկ է չի կրակի: Հինգ քայլից կրակեք վրաս, ես թույլ եմ տալիս:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դե ո՛չ, այս ատրճանակը դեռ կարող է պետք գալ:
ՊԱՐԱՏՈՎ — Այո՛, պատին մեկ խփելու համար: (Նետում է ատրճանակը սեղանին):
ՎՈԹԵՎԱՏՈՎ — Է, չէ՛, մի՛ ասեք, ուսական առածն ասում է՝ «Բանը որ թարսվեց, փայտն էլ կկրակի»:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Պարատովին): Միգար չէի՞ք կամենա:
ՊԱՐԱՏՈՎ — Երևի շատ թանկանոց են: Հարյուրին մի յոթ ուրբի կուզեն, կարծում եմ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այո, մոտավորապես այդքան, բարձր տեսակի է, շատ բարձր տեսակի:
ՊԱՐԱՏՈՎ — Ես այդ տեսակին ծանոթ չեմ. ռեզալիս կաղամբիսիմա dos amigos, դրանք ես բարեկամներիս համար եմ պահում, ինքս չեմ ծխում:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Չէի՞ք հրամայի:

ԿՆՈՒՐՈՎ — Չեմ ուզում ես ձեր սիգարը, ի՛մը կծխեմ:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լա՛վ սիգարներ են, լա՛վ:
ԿՆՈՒՐՈՎ — Դե որ լավն են, ինքներդ էլ ծխեք:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Վոթեվատովին): Դուք չէի՞ք կամենա:
ՎՈԹԵՎԱՏՈՎ — Ինձ համար դրանք շատ են թանկարժեք. վատ կսովորեմ: Մեր քթի բանը չէ արոս կոտցելը, դա նուրբ հատապտուղ է:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ դուք, սըր Ուոքինգտն, ծխո՞ւմ եք:
ՈՌԲԻՆՁՈՆ — Ե՛ս: Տարօրինակ հարց: Տվեք հինգ հատ (Հինգ հատ ընտրում է, քույր է հանում գրպանից և խնամֆով փաթաթում):
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ ինչո՞ւ չեք ծխում:
ՈՌԲԻՆՁՈՆ — Չէ, ինչպե՞ս կարելի է: Այս սիգարները բնության գրկում պիտի ծխել, հարմար տեղում:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ ինչո՞ւ որ:
ՈՌԲԻՆՁՈՆ — Որովհետև եթե սրանք կարգին տան մեզ ծխեալ մեկ էլ տեսար ծեծ տվին, մի բան, որ ես տանել չեմ կարող:
ՎՈԹԵՎԱՏՈՎ — Ծեծ ուտել չե՞ս սիրում:
ՈՌԲԻՆՁՈՆ — Չէ, դեռ մանկությունից զզվանք եմ պոում:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՛նչ ինքնատիպ մարդ է: Հը՛, պարոնա՛յք, ի՛նչ ինքնատիպն է: Հիմա երևում է, որ անզլիացի է (Քարծրաձայն): Իսկ ո՞ւր են մեր տիկիները: (Ավելի բարձր): Տիկիներն ո՞ւր են:

Ներս է գալիս Օգուդալովան:

Տեսարան յոթերորդ

Պարատով, Կեուռով, Վոթեվատով, Ռոբինզոն, Կարանդիշև և Օգուդալովա:

ՕԳՈՒԴԱՎՈՎԱ — Տիկիներն այստեղ են, մի՛ անհանգստացեք: (Կարանդիշևին ցածրաձայն): Այս ի՛նչ եք անում: Մի ձե՛ղ նայեք:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես, կներեք, ես ինձ ճանաչում եմ: Տեսեք՝

բոլորը հարբած են, ես եմ միայն ուրախ: Ես երջանիկ եմ այսօր, ես հրճվում եմ:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Հրճվեք, միայն ոչ այդքան բարձրաձայն (Մտտե՛նում է Պարատովին): Սերգեյ Սերգեյիչ, հերիք է ծաղրեք Յուլիյ Կապիտոնիչին: Դա մեզ ցավ է պատճառում. դուք վիրավորում եք ինձ և Լարիսային:

ՊԱՐԱՏՈՎ — Ա՛խ, մորաքո՛ւյր, ես չեմ համարձակվի:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Մի՞թե դուք չեք մոռացել երեկվա վեճը Ամոթ չէ՞:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՛նչ եք ասում: Ես, մորաքույր, հիշաշար չեմ: Ահա, խնդրեմ, որպեսզի հաճույք պատճառեմ ձեզ, միանգամից կվերջացնեմ այս ամենը: Յուլիյ Կապիտոնիչ:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ի՛նչ կկամենայիք:

ՊԱՐԱՏՈՎ — Ուզո՞ւմ եք ինձ հետ բրուդերշաֆտ խմել:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Ա՛յ դա լավ է: Շնորհակա՛լ եմ ձեզնից:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Բրուդերշաֆտ, ասում եք: Խնդրե՛մ, հաճույքո՛վ:

ՊԱՐԱՏՈՎ — (Օգուղալովային): Մի այստեղ կանչեք Լարիսա Դմիտրիևնային: Այդ ինչո՞ւ է մեզնից թաքնվում:

ՕԳՈՒԳԱՆՈՎԱ — Լա՛վ, ես կբերեմ նրան: (Գնում է):

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Իսկ ի՛նչ ենք խմելու: Բուրգոնյա՞ն:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՛չ, բուրգոնյանից ազատեք ինձ: Ես հասարակ մարդ եմ:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ուրեմն ի՛նչ:

ՊԱՐԱՏՈՎ — Գիտե՞ք ինչ. հետաքրքիր կլինի հիմա կոնյակ խմել: Կոնյակ կա՞:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ինչպե՞ս չկա: Իմ տանն ամեն ինչ կա: Հե՛յ, Իվա՛ն, կոնյակ:

ՊԱՐԱՏՈՎ — Ինչո՞ւ այստեղ, մենք այնտեղ կխմենք. միայն կարգադրեք թող բաժակներ բերեն, թե չէ ըմպանակը հեշ քան է:

ԻՌՈՒՆԶՈՆ — Ինչո՞ւ դուք սկզբից շասացիք, որ կոնյակ ունեք: Ինչքա՞ն թանկ ժամանակ կորցրիք:

ՎՈԹԵՎԱՏՈՎ — Ինչպե՞ս աշխուժացավ:

ԻՌՈՒՆԶՈՆ — Այդ խմիչքի հետ ես վարվել գիտեմ, ես հարմարվել եմ դրան:

Պարատովն ու Կարանդիչը գնում են ձախ զոճով:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Դ

Կեուզով, Վոժեվատով և Ռոբինզոն:

ԻՌՈՒՆԶՈՆ — (Չախ դռնից ներս նայելով): Կործանվեց Կարանդիչը: Ես սկսեցի, իսկ Սերժը կվերջացնի: Լցնում են, պողա են ընդունում՝ կենդանի պատկեր է ուղղակի: Մի տեսեք, թե Սերժն ինչպես է ժպտում: Իսկական Բերտրամ¹: (Նրզում է «Ռոբերտից»): «Դու իմ փրկիչն ես:— Ես քո փրկիչն եմ:— Եվ հովանավորը:— Եվ հովանավորը»: Դե, կուլ տվեց: Համբուրվում են: (Նրզում է): «Ի՛նչ երջանիկ եմ:— Ի՛մ զոհն է»: Ա՛յ, Իվանը կոնյակը տանում է: (Բարձրաձայն): Ի՛նչ ես անում, ի՛նչ ես անում, թո՛ղ: Ես դրան վաղուց եմ սպասում: (Փախչում է):

Սերտեղի դռնից ներս է մտնում Իլյան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Կեուզով, Վոժեվատով, Իլյա, Ենտո Պարատով:

ՎՈԹԵՎԱՏՈՎ — Ի՛նչ ես ուզում, Իլյա:
ԻՋԱ — Մերոնք արդեն պատրաստ են, բոլորը հավաքվել են, բուլվարում սպասում են: Ե՞րբ կհրամայեք գնալ:

ՎՈԹԵՎԱՏՈՎ — Հիմա բոլորս միասին կգնանք, մի քիչ սպասեք:

ԻՋԱ — Լա՛վ: Ինչպես կհրամայեք, այնպես էլ կլինի:

Ներս է գալիս Պարատովը:

ՊԱՐԱՏՈՎ — Կիթառը մո՞տդ է:

ԻՋԱ — Չվերցրի, Սերգեյ Սերգեյիչ:

ՊԱՐԱՏՈՎ — Կիթառը պե՛տք է, լսո՞ւմ ես:

ԻՋԱ — Վազեմ բերեմ, Սերգեյ Սերգեյիչ: (Գնում է):

ՊԱՐԱՏՈՎ — Ես ուզում եմ Լարիսա Դմիտրիևնային խնդրել որևէ բան երգի մեզ համար, հետո կգնանք Վոլգայի այն ափը:

ԿՆՈՒՐՈՎ — Ուրախ չի լինի մեր զբոսանքը առանց Լարիսա Դմիտրիևնայի: Այ եթե... Կարելի է թանկ վճարել այդպիսի հաճույքի համար:

¹ Զ. Միլերի «Ռոբերտ Սատանան» օպերայի հերոսներից:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Եթե լարիսա Գմիտրիենան գար, ես հաճույքով բոլոր թիավարներին մի-մի ուղբի արծաթ կտայի:

ՊԱՐԱՏՈՎ — Պատկերացրեք, պարոնայք, ես էլ էի դրա մասին մտածում. բոլորիս ցանկությունն էլ, պարզվում է նույնն է:

ԿՆՈՒԻՐՈՎ — Իսկ հնարավորություն կա՞ որ:

ՊԱՐԱՏՈՎ — Աշխարհում անհնարին ոչինչ չկա, ասում են փիլիսոփաները:

ԿՆՈՒԻՐՈՎ — Իսկ Ռոբինզոնը, պարոնայք, ավելորդ է: Զվարճացանք, վերջացրինք: Նա այնտեղ վայրենավարի հարբելու է, դրա մեջ ի՞նչ լավ բան կա: Այս գրոսսանքը լուր գործ է, նա մնզ ի՞նչ ընկեր: (Ցույց տալով դռնից ներս): Տեսեք, ինչպե՞ս է կոնյակից կպել, պոկ չի գալիս:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ուրեմն շվերցնենք նրան:

ՊԱՐԱՏՈՎ — Որևէ ձև կգտնի գալու:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Սպասեք, պարոնայք, ես նրանից կազատվեմ: (Գունից): Ռոբինզոն:

Ներս է մտնում Ռոբինզոնը:

Տեսարան տասներորդ

Պառատով, Կեուրով, Վոժեվատով և Ռոբինզոն:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Ի՞նչ կա:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ուզո՞ւմ ես Փարիզ գնալ:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Ինչպե՞ս թե Փարիզ, ե՞րբ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Այսօր երեկոյան:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Իսկ մենք Վոլգայի այն ափն էինք ուզում գնալ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ինչպես կուզես. դու Վոլգայի այն ափը գեա, իսկ ես՝ Փարիզ:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Ախր ես անձնագիր չունեմ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Դա արդեն իմ գործն է:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Ես համաձայն եմ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ուրեմն այստեղից միասին ենք գնում. ես քեզ կտանեմ մեր տուն, այնտեղ էլ կսպասես ինձ՝ հա՛ն:

գրատացիր, քնի՛ր: Գործով մի երկու տեղ պիտի մտնեմ:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Բայց հետաքրքիր կլինի նաև գնուններին լսել:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Անունն էլ արտիստ է: Ամաչի՛ր: Գնչուական երգ. ախր դա հետամնացություն է: Ուրիշ բան է խաղական օպերան կամ էլ ուրախ օպերետը: Ահա թե դու ի՞նչ պիտի լսես: Երևի ինքդ էլ խաղացել ես:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Բա ո՞նց: «Երգող թռչնակներում»՝ եմ խաղացել:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Ո՞ւմ դերը:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Նոտարի:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Դե, ինչպե՞ս կարող է այդպիսի արտիստը Փարիզում չլինել: Փարիզից հետո գիտե՞ս ինչ գին կունենաս:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Տո՛ւր ձեռքդ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Գալի՞ս ես:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Գալի՛ս եմ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — (Պառատովին): Ի՞նչպես էր նա այստեղ երգում «Ռոբերտից»: Ինչ ձայն է:

ՊԱՐԱՏՈՎ — Նիժնիի տոնավաճառում մենք նրա հետ լավ գործ կանենք:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Դեռ մի հարցրու, տես գալի՞ս եմ:

ՊԱՐԱՏՈՎ — Ինչո՞ւ որ:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Տգիտություն ես առանց տոնավաճառի էլ բավական շատ եմ տեսնում:

ՊԱՐԱՏՈՎ — Օհո՛, տե՛ս ինչպե՞ս սկսեց խոսել:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Հիմի կրթված մարդիկ Եվրոպա են գնում և ոչ թե տոնավաճառներում քարշ գալիս:

ՊԱՐԱՏՈՎ — Եվրոպայի ո՞ր պետութայուններն ու ո՞ր քաղաքներն եք ուզում բախտավորեցնել:

ՌՈՒԹԵՎԱՏՈՎ — Փարիզը, իհարկե, ես վաղուց եմ պատրաստվում Փարիզ գնալ:

ՎՈՒԹԵՎԱՏՈՎ — Մենք նրա հետ այսօր երեկոյան գնում ենք:

ՊԱՐԱՏՈՎ — Ահա՛ թե ինչ, Բարի՛ ճանապարհ: Փարիզ քեզ իրոք անհրաժեշտ է գնալ: Այնտեղ միայն դու էիր պակաս: Իսկ ո՞ւր է տանտերը:

¹ «Երգող թռչնակներ» («Պերիկոլա») — Ժ. Օֆենբախի հայտնի օպերետը:

ԻՌՈՐԻՆՁՈՆ — Նա այնտեղ է, ասաց, որ անահնկալ է պատ-
րաստում մեզ համար:

Աջից ներս են մտնում Օզոդայովան և Լարիսան, ձախից՝
Կարանդիշեր և Իվանը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի տ ա ս ն մ Ե Կ Ե Ր Ո Ր Պ

Օզոդայովա, Լարիսա, Պարատով, Կուրով, Վոժեվատով,
Ռոբինզոն, Կարանդիշեր, Իվան, ճեռա Իլյա և Եֆրասիյա
Պատասպովան:

ՊԱՐԱՏՈՎ — (Լարիսային) Այդ ինչո՞ւ եք մեզ մենակ թողել:

ԼԱՐԻՍԱ — Մի տեսակ լավ չեմ դգում:

ՊԱՐԱՏՈՎ — Իսկ մենք հիմա ձեր փեսացուի հետ բրուգեր-
շաֆտ խմեցինք: Այլևս ցմահ ընկերներ ենք:

ԼԱՐԻՍԱ — Շնորհակալ եմ ձեզնից: (Սեղմում է Պարատովի
ձեռքը):

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Պարատովին): Սե՛րժ:

ՊԱՐԱՏՈՎ — (Լարիսային): Ահա տեսնո՞ւմ եք, ինչքան ենք
մտերմացել: (Կարանդիշիկին): Ի՞նչ ես ուզում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Քեզ ինչ-որ մեկը հարցնում է:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՞վ է:

ԻՎԱՆ — Գնչու Իլյան:

ՊԱՐԱՏՈՎ — Կանչի՛ր նրան այստեղ:

Իվանը գնում է:

Պարոնայք, ներեցեք, որ Իլյային հրավիրում եմ: Նա իմ
լավագույն ընկերն է: Որտեղ ինձ ընդունում են, պետք է
ընդունեն նաև իմ ընկերներին: Դա իմ սկզբունքն է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — (Լարիսային՝ ցածրաձայն): Ես նոր երգ գի-
տեմ:

ԼԱՐԻՍԱ — Լա՞վն է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Աննաման: «Կոշիկի կապը, ախ կապը, օրիոր-
դի կոշիկի այն կապը»...

ԼԱՐԻՍԱ — Զվարճալի է:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Կսովորեցնեմ ձեզ:

Ներս է մտնում Իլյան՝ կիրառք ձեռքին:

ՊԱՐԱՏՈՎ — (Լարիսային): Թույլ տվեք, Լարիսա Դմիտրիև-
նա, խնդրել, որ երջանկացնեք մեզ: Երգեք որևէ ոտմանս
կամ երգ: Ես ձեզ չեմ լսել մի ամբողջ տարի և, հավա-
նաբար, այլևս չեմ էլ լսի:

ԿՆՈՒՐՈՎ — Թույլ տվեք ինձ էլ կրկնելու նույն խնդրանքը:
ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Զի՛ կարելի, պարոնայք, չի՛ կարելի, Լարի-
սա Դմիտրիևնան չի երգի:

ՊԱՐԱՏՈՎ — Դո՞ւ որտեղից գիտես, որ չի երգի: Իսկ գուցե և
երգո՞ւմ է:

ԼԱՐԻՍԱ — Ներեցեք, պարոնայք, այսօր ոչ տրամադրություն
ունեմ, ոչ էլ ձայնս է տեղը:

ԿՆՈՒՐՈՎ — Որևէ բան, ինչ որ ուզում եք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես որ ասացի չի երգի, ուրեմն չի՛ երգի:

ՊԱՐԱՏՈՎ — Դև կտեսնենք: Մենք շատ ենք խնդրում, մենք
ծունկի կիջնենք:

ՎՈՑԵՎԱՏՈՎ — Ես հիմա, ես ճկուն մարդ եմ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ո՛չ, ո՛չ, մի՛ էլ խնդրեք, չի՛ կարելի. ես ար-
գելում եմ:

ՕԿՈՒԴԱԼՈՎԱ — Ինչե՛ր եք խոսում: Կարգելեք այն ժամա-
նակ, երբ իրավունք կունենաք, իսկ հիմա դեռ մի շտա-
պեք արգելել, շո՛ւտ է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ո՛չ, ո՛չ: Ես կտրականապես արգելում եմ:

ԼԱՐԻՍԱ — Դուք արգելո՞ւմ եք: Ուրեմն ես կերգեմ, պարո-
նայք:

Կարանդիշեր խոսված անկյուն է քաշվում ու նստում:

ՊԱՐԱՏՈՎ — Իլյա՛:

ԻՅԱ — Ի՞նչ ենք երգելու, օրի՛որդ:

ԼԱՐԻՍԱ — «Не искушай»:

ԻՅԱ — (Լարելով կիրառք): Ա՛յ, հիմի երրորդ ձայն էր պետք:
Ա՛խ, փորձանք: Ի՞նչ տեսնո՞ր էր: Ի՛ր հիմարությունից:
(Երգում են երկու ձայնով):

Не искушай меня без нужды
Возвратом нежности твоей!
Разочарованному чужды
Все обольщения прежних дней.

Յարախանջարե իր ձեռք հիացմանն է արտանայում:
Պարտավոր նստած է՝ մատները մազերի մեջ խրած:
Երկրորդ ասեր երգիս Թորինգոնը բերևակի ծայնակ-
ցում է:

Уж я не верю увереньям,
Уж я не верю в любовь
И не хочу предаться вновь
Раз обманувшим сновиденьям.

ԻՆՅԱ — (Թորինգոնին): Ա՛յ, շնորհակալ ե՛մ, պարո՛ն: Փըր-
կեցի՛ր:

ԿՆՈՒՐՈՎ — (Լարիսային): Մեծ հաճույք է ձեզ տեսնելը, իսկ
ավելի մեծ հաճույք՝ լսելը:

ՊԱՐԱՏՈՎ — (Մոսյալադեմ): Ինձ թվում է, ես կխենթանամ:
(Համբուրում է Լարիսայի ձեռքը):

ՎՈՃԵՎԱՏՈՎ — Լեսա ու մեռնես, ահա թե ինչ: (Կարանդի-
շեին): Իսկ դուք ուզում էիք զրկել մեզ այս հաճույքից:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես, պարոնայք, ձեզանից պակաս չեմ հիա-
նում Լարիսա Դմիտրիևնայի երգով: Մենք հիմա շամ-
պայն կխմենք, նրա կենացը:

ՎՈՃԵՎԱՏՈՎ — Խելոք խոսքը հաճելի է լսել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Բարձրաձայն): Շամպա՛յն բերեք:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — (Ցածր): Կամա՛ց, Ի՛նչ եք գոռում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Կենրեք, ես իմ տանն եմ: Ես գիտեմ, ինչ եմ
անում: (Բարձր): Շամպա՛յն բերեք:

Ինչ է մտնում սիրահրեյա Պոտապովան:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — էլի ի՛նչ շամպայն: Բոպեն մեկ՝
է՛ս բեր, է՛ն բեր:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Մի՛ խառնվեք ուրիշի գործերին: Ինչ որ ձեզ
հրամայում են, կատարեք:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Ուրեմն գնա ի՛նքդ բեր: Ոտքերս
էլ չեն շարժվում: Ես, կարող է, առավոտվանից բան չեմ
դրել բերանս: (Գնում է):

Կարանդիշե զնում է՝ ձախ զոնով:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Լսե՛ք, Յուլիյ Կապիտոնիչ... (Գնում է Կա-
րանդիշեի ետևից):

ՊԱՐԱՏՈՎ — Իլլա՛, դու գնա՛: Որ նավակները պատրա՛ստ
լինեն: Մենք հիմա կգանք:

Իլյան գնում է մեշտեղի դռով:

ՎՈՃԵՎԱՏՈՎ — (Կնուրովին): Նրան Լարիսա Դմիտրիևնայի
հետ մենակ թողնենք: (Թորինգոնին): Թորինգոն, նայի՛ր,
իվանը կոնյակը տանում է:

ԹՈՒՐԻՆՉՈՆ — Ես նրան կսպանեմ: Ինձ համար կյանքից հրա-
ժարվելն ավելի հեշտ է:

Ձախ զոնով հեռանում են Կնուրովը, Վոժեպտովը և
Թորինգոնը:

Տ Ե Ս Բ Ա Ն տ ա ս ն եր կ ու Է ր ո ղ

Լարիսա և Պարտավ:

ՊԱՐԱՏՈՎ — Կախարդուհի եք դուք: (Կրկնա նայում է Լարի-
սային): Երբ դուք երգում էիք, ես անիծում էի ինձ:

ԼԱՐԻՍԱ — Ինչո՞ւ:

ՊԱՐԱՏՈՎ — Ես հո փայտ չեմ. ձեր նման կնոջը կորցնելը
կարծում եք հե՞շտ է:

ԼԱՐԻՍԱ — Իսկ ո՞վ է մեղավոր:

ՊԱՐԱՏՈՎ — Իհարկե՛ ես, և շատ ավելի եմ մեղավոր, բան
դուք կարծում եք: Ես պիտի արհամարհեմ ինձ:

ԼԱՐԻՍԱ — Ինչո՞ւ, ասե՛ք:

ՊԱՐԱՏՈՎ — Ա՛խ, ինչու: Իհարկե փոքրոգություն: Անհրաժեշտ
էր կարգավորել ունեցվածքս: Աստված այդ ունեցվածքի
հետ: Ես ունեցվածքից շատ բան կորցրի, ես կորցրի
ձեզ: Ի՛նքս էլ եմ տառապում, ձե՛զ էլ եմ ստիպում տա-
ռապել:

ԼԱՐԻՍԱ — Այո, պետք է ճիշտն ասել, դուք երկար ժամա-
նակով թունավորեցիք իմ կյանքը:

ՊԱՐԱՏՈՎ — Սպասեք, դեռ մի շտապեք մեղադրել ինձ: Ես
դեռ չեմ կորցրել իմ արժանապատվությունը, ես դեռ
լրիվ չեմ անզգայացել: Իմ մեջ բնածին շարժություն
չկա, ազնիվ զգացումները դեռևս շարժվում են իմ հոգում:

Եվս մի քանի այսպիսի բոսք, այո... ևս մի քանի այսպիսի բոսք...

ԱՍՐԻՍԱ — (Յածրածայն): Դե՛, ասե՛ք:

ՊԱՐԱՏՈՎ — Ես մի կողմ կթողնեմ բոլոր հաշիվները, և էլ ոչ մի ուժ չի պոկի ինձ ձեզնից, քանի դեռ բերանումս շունչ կա:

ԱՍՐԻՍԱ — Ձեր ուզածն ի՞նչ է:

ՊԱՐԱՏՈՎ — Տեսնե՛լ ձեզ, լսե՛լ ձեզ... Ես վաղը մեկնում եմ:

ԱՍՐԻՍԱ — (Գլուխը կախելով): Վաղը:

ՊԱՐԱՏՈՎ — Լսել ձեր հմայիչ ձայնը, մոռանալ ամբողջ աշխարհն ու երազել միայն երանության մասին:

ԱՍՐԻՍԱ — (Յածրածայն): Ո՞ր երանության:

ՊԱՐԱՏՈՎ — Ձեր ստրուկը դառնալու, ձեր ոտներն ընկնելու երանության մասին:

ԱՍՐԻՍԱ — Բայց ինչպե՞ս:

ՊԱՐԱՏՈՎ — Լսեցեք, ամբողջ խմբով գնում ենք Վոլգայով զբոսնելու, գնա՛նք:

ԱՍՐԻՍԱ — Ա՛հ, իսկ այստե՛ղ: Ես չգիտեմ, իրոք... Ինչպե՞ս թողնեմ գամ:

ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ է այդ «այստեղը»: Հիմա այստեղ կգան Կարանդիշկի հորաքույրը, մետաքս ներկած շորերով կանայք ու աղ դրած սունկի մասին կսկսեն խոսել:

ԱՍՐԻՍԱ — Իսկ ե՞րբ գնանք:

ՊԱՐԱՏՈՎ — Հիմա՛:

ԱՍՐԻՍԱ — Հիմա՞:

ՊԱՐԱՏՈՎ — Հիմա կամ երբեք:

ԱՍՐԻՍԱ — Գնա՛նք:

ՊԱՐԱՏՈՎ — Ինչպե՞ս, դուք որոշում եք գալ Վոլգայի այն ա՛փը:

ԱՍՐԻՍԱ — Ուր որ կամենաք:

ՊԱՐԱՏՈՎ — Մեզ հե՞տ, հիմա՞:

ԱՍՐԻՍԱ — Երբ որ ուզում եք:

ՊԱՐԱՏՈՎ — Դե, խոստովանում եմ, գրանից աճելի բարձր ու ազնիվ բան երևակայել անգամ չեմ կարող: Հմայի՛չ արարած, ի՛մ տիրուհի:

ԱՍՐԻՍԱ — Դե՛ղ եք իմ տերը:

Ներս ևն գալիս Օգուլալովան, Կեուրովը, Վոժեվառովը, Ռոբինգոնը, Կարանդիշկի և Իվանը՝ սկսեցողով, սրի վրա շամպայնի բաժակներ են:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ե Ր Ե Ք Ե Ր Ո Ր Պ

Օգուլալովա, Կարիսա, Պարատով, Կեուրով, Վոժեվառով, Ռոբինգոն, Կարանդիշկի և Իվան:

ՊԱՐԱՏՈՎ — (Կեուրովին և Վոժեվառովին): Նա գալիս է:

ԿԱՐԱՆԴԻՇԿԻ — Պարոնայք, ես առաջարկում եմ Լարիսա Դմիտրիևնայի կենացը: (Բոլորը վերցնում են բաժակները): Պարոնայք, դուք քիչ առաջ հիացաք Լարիսա Դմիտրիևնայի տաղանդով: Ձեր գովասանքները նրա համար նորություն չեն. մանկուց է նա շրջապատված երկրպագուներով, որոնք յուրաքանչյուր հարմար առիթով գովասանքի խոսք են ասում ուղղակի երեսին: Այո, տաղանդ, իսկապես, նա շատ ունի: Բայց դրա համար չէ, որ ուզում եմ ես նրան գովել: Լարիսա Դմիտրիևնայի գլխավոր, չգնահատված արժանիքն այն է, պարոնայք... այն է, պարոնայք...

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Խառնելու է իրար:

ՊԱՐԱՏՈՎ — Տակից դուրս կգա, անգիր է արել:

ԿԱՐԱՆԴԻՇԿԻ — Այն է, պարոնայք, որ նա կարողանում է գնահատել և ընտրել մարդկանց: Այո՛, Լարիսա Դմիտրիևնան գիտե, որ ամեն փայլող բան ոսկի չէ: Նա կարողանում է տարբերել ոսկու կեղծն ու իսկականը: Փայլուն շատ երիտասարդներ են շրջապատել նրան, բայց նա կեղծ փայլից շղացավ: Նա փնտրեց իր համար ոչ թե փայլուն, այլ արժանի մարդ...

ՊԱՐԱՏՈՎ — (Խրախուսելով): Բռա՛վո, բռա՛վո:

ԿԱՐԱՆԴԻՇԿԻ — Եվ ընտրեց...

ՊԱՐԱՏՈՎ — Ձե՛զ: Բռա՛վո, բռա՛վո:

ՎՈՅԵՎԱՏՈՎ ԵՎ ՌՈՐԻՆՋՈՆ — Բռա՛վո, բռա՛վո:

ԿԱՐԱՆԴԻՇԿԻ — Այո, պարոնայք, ես ոչ միայն համարձակվում եմ, այլև իրավունք ունեմ պարծենալու և պարծենում եմ: Նա ինձ հասկացավ, գնահատեց և գերադասեց

բուրից: Կնեքեք, պարոնայք, գուցե ոչ բուրիդ է հաճելի լսել այդ, բայց ես իմ պարտքն համարեցի հրապարակավ շնորհակալութիւն հայտնել Լարիսա Դմիտրիկեանային ինձ տված այդպիսի հաճելի գերադասութեան համար: Պարոնայք, ինքս խմում եմ և առաջարկում եմ խմել իմ հարսնացուի կենացը:

ՊԱՐԱՏՈՎ, ՎՈԺԵՎԱՏՈՎ ԵՎ ՌՌՐԻՆՁՈՆ — Ուռա՛:

ՊԱՐԱՏՈՎ — (Կարանդիչեի): Էլի գինի կա՞:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Իհարկե՞ կա, ինչպե՞ս շինի: Ի՞նչ ես ասում: Որտեղից էլ լինի՝ կգտնեմ:

ՊԱՐԱՏՈՎ — Մի կենաց էլ պետք է խմել:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ո՛ւր կենացը:

ՊԱՐԱՏՈՎ — Մահկանացուներից ամենաերջանիկի՝ Յուլի Կապիտոնիչ Կարանդիչեի կենացը:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ա՛խ, հա՛, Ուրեմն դո՞ւ ես առաջարկում: Դո՛ւ էլ առաջարկիր, Սե՛րժ: Իսկ ես զնամ գինի ճարեմ: (Գնում է):

ՎՈԺԵՎԱՏՈՎ — (Յույց տալով մեջտեղի դուռ): Այստեղո՞վ, Մոկի՛յ Պարմենիչ: Այստեղից ուղիղ դուրս կգաք նախաւենյակ, ոչ ոք ձեզ չի տեսնի:

Կնուովը գնում է:

ՊԱՐԱՏՈՎ — (Վոժեվատովին): Մենք էլ ենք հիմա գնում: (Լարիսային): Պատրաստվե՛ք:

Լարիսան գնում է աչ գռով:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Կենացը շխմա՞ծ:

ՊԱՐԱՏՈՎ — Այդպես ավելի լավ է:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Ինչո՞վ:

ՊԱՐԱՏՈՎ — Միծաղելի է:

Դուրս է գալիս Լարիսան գլխարկը ձեռքին:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Ճիշտ որ ավելի ծիծաղելի է: Ռոբինզոնո՛ն: Գնացի՛նք:

ՌՌՐԻՆՁՈՆ — Ո՛ւր:

ՎՈԺԵՎԱՏՈՎ — Տո՛ւն, պատրաստվենք Փարիզ գնալու:

Ռոբինզոնը և Վոժեվատովը երածեղա են տալիս ու գնում:

ՊԱՐԱՏՈՎ — (Լարիսային, ցածրաձայն): Գնացի՛նք: (Գրեւում է):

ԱՐՐԻՍԱ — (Օգուդալովային): Մնաս բարո՞վ, մամա՛:

ՕԳՈՒԳԱԼՈՎԱ — Ի՞նչ ես անում: Այդ ո՞ւր:

ԱՐՐԻՍԱ — Կա՛մ կուրախանաս, մամա, կա՛մ էլ փնտրիր ինձ Վոլգայում:

ՕԳՈՒԳԱԼՈՎԱ — Աստվա՛ծ քեզ հետ: Ինչե՞ր ես խոսում:

ԱՐՐԻՍԱ — Երևում է ճակատագրիցդ շեւ փախչի: (Գնում է):

ՕԳՈՒԳԱԼՈՎԱ — Ահա թե բանն ինչի հասավ, համընդհանուր փախուստ: Ա՛խ, Լարիսա՛... Գնամ ե՛տ բերեմ, թե՛ ոչ: Ձէ, ինչի՛... Ինչ էլ որ լինի այնտեղ, շուրջը մարդիկ են, իսկ այս տունը թեկուզ թողնի էլ, մեծ կորուստ չէ:

Ներս են մտնում Կարանդիչը և Իվանը՝ շամպայեք ձեռքին:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ն Ն Ո Ր Ս Ե Ր Ո Ր Դ

Օգուդալովա, Կարանդիչ, Իվան, ճետո եֆրոսիկա Պոտապովան:

ԿԱՐԱՆԳԻՇԵՎ — Ես, պարոնայք... (Շուրջբուրն է նայում):

Էս ո՞ւր են: Գնացի՛ն: Համա՛ թե քաղաքավարութիւն է, բան չունեմ ասելու: Դե, ավելի՛ լավ: Բայց, ախր, ե՛րբ հասցրին: Դուք էլ, թերևս, զնաք: Ոչ, դուք դեռ Լարիսա Դմիտրիկեանայի հետ սպասեք: Վիրավորվե՛լ են: Հասկանո՛ւմ եմ: Դե՛, ավելի՛ լավ: Մենք էլ կմնանք ընտանեկան նեղ շրջանով... Իսկ ո՞ւր է Լարիսա Դմիտրիկեան: (Աջ դրան մտ): Հորաքո՛ւյր, Լարիսա Դմիտրիկեան քեզ մո՞տ է:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Ոչ մի կարիսա Դմիտրիենա էլ
 ինձ մոտ չկա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Բայց, իսկապես, սա ի՞նչ է նշանակում:
 Իվան, ո՞ւր կորան բոլոր պարոններն ու կարիսա Դմիտ-
 րիենան:

ԻՎԱՆ — կարիսա Դմիտրիենան, պետք է ենթադրել, պարոն-
 ների հետ միասին գնաց... Որովհետև պարոնները Վոլ-
 գալի մյուս ափն էին պատրաստվում գնալ, խնջուլքի պես
 բան էին անելու...

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչպե՞ս՝ այն ափը:

ԻՎԱՆ — Մոտորներով: Է՛լ ամանեղեն, է՛լ գինի, բոլորը մեզ-
 նից գնաց, դեռ սկզբից էին ուղարկել. դե, սպասավոր-
 ներն էլ հետները, ինչպես որ կարգն է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Նստում ու բռնում է գլուխը): Այս ի՞նչ բան
 է, ախր, այս ի՞նչ բան է:

ԻՎԱՆ — Գնչուները, երաժշտությանն էլ հետները, ինչպես որ
 կարգն է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Քարբովելով): Խորիտա Իգնատենա, ո՞ւր է
 ձեր աղջիկը: Պատասխանե՛ք ինձ, ո՞ւր է ձեր աղջիկը:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Ես ձեր տուն բերեցի իմ աղջկան, Յուլյա
 Կապիտոնիչ. դո՛ւք ինձ ասացեք՝ ո՞ւր է իմ աղջիկը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Եվ այս բոլորը կանխամտածված է, դիտա-
 վորյալ. բոլորդ սկզբից պայմանավորվել էիք... (Արցունքն
 աչքերին): Դաժան է, անմարդկայնորեն դաժան:

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Դեռ շուտ էր հաղթանակ տոնելը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այո, ծիծաղելի է... Ես ծիծաղելի մարդ եմ:
 Ինքս էլ գիտեմ, որ ծիծաղելի մարդ եմ: Բայց մի՞թե
 մարդկանց խոշտանգում են այն բանի համար, որ նրանք
 ծիծաղելի են: Ես ծիծաղելի եմ. դե ի՞նչ, ծիծաղի՛ր վրաս,
 ծիծաղի՛ր երեսիս: Եկեք իմ տուն ճաշելու, խմեք գինիս
 և հայհոյեք, ծիծաղեք վրաս, ես դրան արժանի եմ: Բայց
 պատռել ծիծաղելի մարդու կուրծքը, հանել սիրտը, ոտքի
 տակ գցել ու կոխկրակել... Օ՛հ, օ՛հ, ես ինչպե՞ս ապրեմ,
 ինչպե՞ս ապրեմ:

ԵՅՐՈՍԻՆՅԱ ՊՈՏԱՊՈՎՆԱ — Դե հերի՛ք է, վե՛րջ տուր: Լա՞-
 ցուկո՞ծ դնելու բան էլ չկա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Չէ, դուք մի խումբ եք, իրար լավ եք հաս-
 կանում: Բայց իմացեք, Խարիտա Իգնատենա, որ ամենա-
 հեզ մարդուն էլ կարելի է կատաղության հասցնել: Ո՛չ
 բոլոր մեղապարտներն են հանցագործ, խելոք մարդն էլ
 հանցագործության կղիմի, թե որ ուրիշ ելք չունի: Եթե
 այս արևի տակ ինձ մնում է միայն ամոթից ու հուսա-
 հատությանից կախվել կա՛մ վրեժ լուծել, ես վրեժ կլու-
 ծեմ: Ինձ համար հիմա ո՛չ վախ կա, ո՛չ օրհնք, ո՛չ
 գուժ, հիմա միայն դաժան ոխն ու վրեժխնդրության ծա-
 րավն է ինձ տանջում: Ես վրեժս կառնեմ նրանցից յու-
 րաքանչյուրից, մինչև որ ինձ էլ չսպանեն: (Սեղանից
 վերցնում է ատրեանակն ու դուրս վազում):

ՕԳՈՒԴԱԼՈՎԱ — Վազի՛ր, վազի՛ր նրա ետևից, կանչիր թող
 կանգնեցնեն:

ԳՐԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

- ՊԱՐԱՏՈՎ:
- ԿՆՈՒՐՈՎ:
- ՎՈՑԻՎՍՏՈՎ:
- ՌՈՐԻՆՁՈՆ:
- ԼԱՐԻՍԱ:
- ԿԱՐԱՆԴԻՇԵՎ:
- ԻՅԱ:
- ԳԱՎՐԻԱ:
- ԻՎԱՆ:
- ԳՆՁՈՒՆԵՐ ԵՎ ԳՆՁՈՒՆԻՆԵՐ
- Առաջին գործողության ղեկավարիան: Ամռան լուսավոր գի-
 շեր:

Տ Ե Ա Ր Ա Ն ա ո ա ջ Ի ն

Կիչը ձեռքի՛ն Ռոբի՛նգոնը և Իվանը դուրս են գալիս սը-
ճարանից:

ԻՎԱՆ — Կի՛ւր, խնդրո՛ւմ եմ:

ՌՈՐԻՆՉՈՆ — Չե՛մ տա: Ինձ հետ պիտի խաղաս: Ինչո՞ւ չես
խաղում:

ԻՎԱՆ — Ո՞նց խաղամ ձեզ հետ, փող չեք տալիս:

ՌՈՐԻՆՉՈՆ — Հետո՛ կտամ: Փողերս Վասիլի Դանիլիչի մոտ
են, հետը տարել է: Չե՞ս հավատում, ինչ է:

ԻՎԱՆ — Էդ ինչո՞ւ հետները պիկնիկի չգնացիր:

ՌՈՐԻՆՉՈՆ — Քնել էի, իսկ նա չի համարձակվում անհանգըս-
տացնել, արթնացնել, դե, էդպես էլ թողել ու մենակ գնա-
ցել է: Արի՛ խաղանք:

ԻՎԱՆ — Չի՛ կարելի, հավասար խաղ չի. ես փող եմ դնում,
իսկ դուք՝ չէ: Տանում եք՝ վերցնում եք, իսկ որ տարվում
եք՝ չեք տալիս: Տվե՛ք փողը:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ի՞նչ է, ես վարկի իրավունք չունեմ այստեղ:
Տարօրինակ է: Էսպիսի քաղաք ես առաջին անգամ եմ
տեսնում. ամեն տեղ, ամբողջ Ռուսաստանով մեկ, մեծ
մասամբ, ես ապառիկ եմ վերցնում:

ԻՎԱՆ — Բան չունեմ ասելու: Թե որ մի բան պետք է, մենք
կտանք: Ճանաչելով Սերգեյ Սերգեյիչին և Վասիլի Դա-
նիլիչին, թե ինչ տեսակ պարոններ են, մենք պարտավոր
ենք ձեզ ապառիկ տալ: Իսկ խաղի մեջ փող պիտի դրվի:

ՌՈՐԻՆՉՈՆ — Էդպես էլ ասեիր: Վերցրու կիցն ու մի շիշ բան
տուր... որի՞ց ասեմ:

ԻՎԱՆ — Պորտվեյնը վատ չի:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ես, ախր, էժանանոց չեմ խմում:

ԻՎԱՆ — Թանկանոցը կտանք:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ասա թող ինձ համար պատրաստեն... ախի՛
էլի... Ի՞նչ էր անունը...

ԻՎԱՆ — Կտցարներ կարելի է տապակել. չէի՞ք կամենա:

ՌՈՐԻՆՉՈՆ — Այո՛, հենց կտցարներ:

ԻՎԱՆ — Լսո՛ւմ եմ:

ՌՈՐԻՆՉՈՆ — Կատակ էին ուզում անել հետս, դե լավ, ես էլ

կլատակեմ իրենց հետ: Մի քսան ուրլի պարտք կանեմ,
թող վճարեն: Կարծում են, որ իրենց շրջապատն ինձ շատ
պետք է: Սխալվում են. ինձ միայն ապառիկ է պետք,
թե չէ մենակ էլ չեմ տխրի, ես solo էլ կարող եմ շատ
ուրախ խաղ խաղալ: Որ հաճույքը կատարյալ լինի, վատ
չէր լինի փող էլ պարտք անեի...

Ներս է գալիս Իվանը շիշը ձեռքին:

ԻՎԱՆ — (Դեռում է շիշը): Կտցարները պատվիրված են:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ես այստեղ թատրոն եմ վարձում:

ԻՎԱՆ — Լա՛վ գործ է:

ՌՈՐԻՆՉՈՆ — Չգիտեմ, թե բուֆետն ո՞ւմ հանձնեմ: Քո տերը
չի՞ վերցնի:

ԻՎԱՆ — Ինչո՞ւ չի վերցնի:

ՌՈՐԻՆՉՈՆ — Միայն թե կարգին պիտի պահի: Եվ որ վստահ
լինեմ, անմիջապես մեծ կանխավճար պիտի տա:

ԻՎԱՆ — Չէ, արդեն խրատվել է, կանխավճար չի տալիս. եր-
կու հոգի նրան արդեն էդպես խաբել են:

ՌՈՐԻՆՉՈՆ — Երկու հոգի արդե՞ն: Դե, որ երկու հոգի արդեն...

ԻՎԱՆ — Երրորդին, ուրեմն, էլ չի հավատա:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ի՞նչ ժողովուրդ է: Չարմանում եմ: Ամեն տեղ
հասցնում են. որտեղից որ կարելի է վերցնել, արդեն
վերցրել են, ձեռք շտված տեղ չկա: Դու նրան ոչ մի
բան մի ասա, թե չէ կմտածի, որ ես էլ եմ ուզում խաբել,
իսկ ես հպարտ եմ:

ԻՎԱՆ — Դե, բա ոնց... Իսկ քիչ առաջ պարոն Կարանդիշևը
ո՞նց էր կատաղել, որ տեսավ, որ բոլոր հյուրերը հան-
կարծ գնացել են: Շատ էր կատաղել, մինչև անգամ չգի-
տեմ ում էր ուզում սպանել, էդպես ատրճանակը ձեռքին
էլ դուրս եկավ տանից:

ՌՈՐԻՆՉՈՆ — Ատրճանակը ձեռքի՞ն: Դա լավ չէ:

ԻՎԱՆ — Քեֆը մի քիչ լավ էր, բայց պիտի որ կամաց-կա-
մաց անցնի: Բուլվարով մի երկու անգամ եկավ-գնաց...
չրե՛ն, գալիս է էլի:

ԻՌԻԲԻՆՁՈՆ — (Երկյապաճ): Ասում ես՝ ատրճանակո՞ւմ: Այդ
ո՞ւմ է ուզում սպանել, չլինի՞ր ինձ:
ԻՎԱՆ — էդ արդեն չեմ կարող ասել: (Գնում է):

Ներս է գալիս Կարանդիշեր: Ռոբինզոնն աշխատում է
բախնելի շի ետեր:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Ռոբինզոն, Կարանդիշ, ճետո Իվան:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Մտախնում է Ռոբինզոնին): Ո՞ւր են ձեր ըն-
կերները, պարոն Ռոբինզոն:

ՌՈՐԻՆՁՈՆ — Ի՞նչ ընկերներ: Ես ընկեր չունեմ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ այն պարոնները, որ ձեզ հետ միա-
սին ճաշում էին իմ տանը:

ՌՈՐԻՆՁՈՆ — Դրանք ի՞նչ ընկերներ: Դա հենց այնպես...
թուրքիկ ծանոթություն էր:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ չգիտե՞ք, թե որտեղ են հիմա նրանք:

ՌՈՐԻՆՁՈՆ — Չեմ կարող ասել, ես աշխատում եմ հեռու
մնալ այդ ընկերությունից... ես խաղաղ մարդ եմ,
գիտեք... ընտանիքի...

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դո՞ւք եք ընտանիքի մարդ:

ՌՈՐԻՆՁՈՆ — Շատ... Ինձ համար խաղաղ ընտանեկան
կյանքն ամեն ինչից վեր է: Իսկ դժգոհություն կամ էլ
վեճեր՝ աստված մի արասցե: Ես զրուցել էլ եմ սի-
րում, բայց միայն թե խելացի խոսակցություն լինի,
քաղաքավարի, արվեստի մասին, օրինակ... Դե, ազ-
նիվ մարդու հետ էլ, ինչպիսին դուք եք, կարելի է և մի
քիչ խմել: Չէի՞ք հրամայի:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Չե՞մ ուզում:

ՌՈՐԻՆՁՈՆ — Ինչպես կամենաք: Գլխավորն այն է, որ տհա-
ճություններ չլինեն:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դուք, ախր, պետք է որ իմանաք, թե որ-
տեղ են նրանք:

ՌՈՐԻՆՁՈՆ — Որևէ տեղ քե՞ք են անում, ուրիշ ի՞նչ պիտի
անեն:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ասում են, Վոլգայի այն ափն են գնացել:
ՌՈՐԻՆՁՈՆ — Շատ հնարավոր է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ձեզ չկանչեցի՞ն իրենց հետ:

ՌՈՐԻՆՁՈՆ — Ո՛չ, ես ընտանիքի մարդ եմ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ ե՞րբ կգան:

ՌՈՐԻՆՁՈՆ — Դա արդեն, իմ կարծիքով, իրենք էլ չգի-
տեն: Լուսադեմին կվերադառնան:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լուսադեմի՞ն:

ՌՈՐԻՆՁՈՆ — Գուցե ես ավելի շուտ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այնուամենայնիվ, սպասել է պետք, նրան-
ցից մեկի հետ ես պետք է բացատրվեմ:

ՌՈՐԻՆՁՈՆ — Թե որ սպասելու եք, ավելի լավ է նավահան-
դրստում սպասեք. այստեղ գալիս են ի՞նչ անեն: Նա-
վահանգստից նրանք ուղիղ տուն կգնան: Էլ- ի՞նչ է
պետք, առանց այն էլ կուշտ են:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ ո՞ր կայանում: Կայաններն այստեղ
չառ են:

ՌՈՐԻՆՁՈՆ — Որն ասես, միայն ո՛չ այստեղ. այստեղ նրանց
չք հանդիպի:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դե լավ, ես նավահանգիստ կգնամ: Մնաք
բարով: (Ձեռքը մեկնում է Ռոբինզոնին): Չե՞ք ուզում
ինձ հետ գալ:

ՌՈՐԻՆՁՈՆ — Ո՛չ, ներո՞ղ եղեք, ես ընտանիքի մարդ եմ:

Կարանդիշը գնում է:

Իվան, Իվան:

Ներս է գալիս Իվանը:

Սենյակում ինձ համար սեղան բաց արա և գինին տար
այնտեղ:

ԻՎԱՆ — Սենյակում, պարոն, շոգ է: Ինչի՞ց եք նեղվում:

ՌՈՐԻՆՁՈՆ — Ոչ, երեկոյան բացօդյան ինձ համար վնասա-
կար է, բժիշկն արգելել է: Իսկ եթե այդ պարոնն ինձ
հարցնի, ասա, որ այստեղ չեմ: (Գնում է սրճարան):

Սրճարանից դուրս է գալիս Գավրիլան:

Տեսարան երրորդ

ԳԱՎՐԻԼՈ — Նայե՞լ ես Վոլգայի կողմը: Մերոնք շե՞ն երևում:

ԻՎԱՆ — Պետք է որ եկած լինեն:

ԳԱՎՐԻԼՈ — Ինչի՞ց իմացար:

ԻՎԱՆ — Ներքևում աղմուկ է, գնչուներն սկսեցին ճղճղալ
(Սեղանից վերցնում է շիշն ու գնում սրճարան):

Ներս էն գալիս Իլյան և գնչուների երգախումբը:

Տեսարան չորրորդ

ԳԱՎՐԻԼՈ — Լավ գնացիք-եկա՞ք:

ԻԼՅԱ — Շա՛տ լավ: Էնպես լավ, որ էլ չսասած:

ԳԱՎՐԻԼՈ — Պարոններն ուրա՞խ են:

ԻԼՅԱ — Քեֆ արին, էն էլ ո՞նց քեֆ արին, աստված առողջու-
թյուն տա: Էստեղ են գալիս. երեխ մինչև լույս քեֆ են
անելու:

ԳԱՎՐԻԼՈ — (Շփեյով ձեռները): Դե, գնացեք, տեղավոր-
վեք: Կասեմ կանանց թեյ տան, իսկ դուք գնացեք բու-
ֆետ, մի բան դրեք բերաններդ:

ԻԼՅԱ — Ասա, թող պառազներին թեյի հետ ուժ տան, սի-
րում են:

Իլյան, գնչուներն ու գնչուիները, Գավրիլոն գնում են սր-
ճարան: Գալիս են Կեռավը և Վոժեվալովը:

Տեսարան հինգերորդ

Կեռավ և Վոժեվալով:

ԿՆՈՒՐՈՎ — Դրաման կարծես սկսվում է:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Այդպես է երևում:

ԿՆՈՒՐՈՎ — Ես արդեն լարիսա Դմիտրիկնայի աչքերում
արցունք տեսա:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Կանանց համար դա մեծ բան չէ:

ԿՆՈՒՐՈՎ — Թող ձեր ասածը լինի, բայց նրա դրուժյունը
նախանձելի չէ:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Որևէ ձևով կհարթվի:

ԿՆՈՒՐՈՎ — Ո՛չ, հազիվ թե:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Կարանդիշկը մի քիչ կնեղանա, կկոտրատվի,
ինչքան իրեն պետք է, հետո էլի նույնը կլինի:

ԿՆՈՒՐՈՎ — Լարիսա Դմիտրիկնայն է մի տեսակ: Ախր հա-
մարյա թե հարսանիքի նախօրյակին փեսացուին թող-
նելու համար հիմք պետք է ունենալ: Պատկերացնո՞ւմ
եք. Սերգեյ Սերգեյիչն ընդամենը մի օրով է եկել, և
լարիսա Դմիտրիկնայն նրա համար թողնում է փեսա-
ցուին, որի հետ պետք է ամբողջ կյանքն ապրի: Ուրեմն
Սերգեյ Սերգեյիչի վրա հույս ունի. թե չէ ինչի՞ն էր
պետք:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Ուրեմն դուք կարծում եք, որ այստեղ խա-
բեությո՞ւն կա, որ Սերգեյ Սերգեյիչը խոսքերով նորի՞ց
է գայթակղել նրան:

ԿՆՈՒՐՈՎ — Այո՛, անպայմա՛ն: Եվ որոշակի ու լուրջ խոս-
տումներ պետք է որ տված լինի, թե չէ նա ինչպե՞ս
պիտի հավատար մի մարդու, որն իրեն արդեն մի ան-
գամ խաբել է:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Զարմանալու բան չկա: Սերգեյ Սերգեյիչը
ոչ մի բանի մասին չի մտածում. համարձակ մարդ է:

ԿՆՈՒՐՈՎ — Բայց ինչքան էլ համարձակ լինի, միլիոնանոց
հարսնացուին լարիսա Դմիտրիկնայի հետ չի փոխի:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Իհարկե, հաշիվ չկա մեջը:

ԿՆՈՒՐՈՎ — Ուրեմն երևակայեք, թե ինչ վիճակում է խեղճ
աղջիկը:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Ի՞նչ կարող ես անել: Մենք մեղավոր չենք,
դա մեզ չի վերաբերում:

Սրճարանի դռներ երևում է Ռաբինգոն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Վ Է Գ Ե Ր Ո Ր Գ

Կնուրով, Վոժեվատով և Ռոբինզոն:

- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ա՛, միլո՛րդ, երազումդ ի՞նչ տեսար:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Հարուստ հիմարների. նույնը, ինչ որ արթմնի եմ տեսնում:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Դե, աղքատ իմաստուն, ինչպե՞ս ես այստեղ ժամանակ անցկացնում:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Հիանալի՛: Ապրում եմ հանուն հաճույթի, ըստ որում, պարտքով, քո հաշվին: Դրանից լավ ի՞նչ կարող է լինել:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Մարդու նախանձ գալիս է: Եվ երկա՞ր ես մտադիր վայելել այդ հաճելի կյանքը:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Խենթ ես դու, ինչպես տեսնում եմ: Ազատաժիր՝ ի՞նչ իմաստ կա հրաժարվելու նման հաճույթներից:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ես ինչ-որ լավ չեմ հասկանում. կարծես ես քեզ իրավունք չեմ տվել իմ հաշվին ազատ ծախսելու:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Դու խոստացար Փարիզ տանել ինձ, նույն բանը չէ՞:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ո՛չ, նույնը չէ՛: Ինչ որ խոստացել եմ, կտեսնեմ, ինձ համար խոսքը օրենք է. ինչ ասված է, սուրբ է: Դու հարցրու՝ երբե՛կ ես խաբած կա՞մ:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Իսկ մինչ դու Փարիզի պատրաստութուն կտեսնես՝ ես, ինչ է, օդո՞վ եմ սնվելու:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Այդպիսի պայման չի եղել: Իսկ Փարիզ՝ թեկուզ հիմա:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Հիմա ուշ է, Վասյա, արի վաղը գնանք:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Դե լավ, վաղը՝ վաղը: Լսիր, ահա թե ինչ ավելի լավ է դու մենակ գնա, ես գնալ-գալուդ ծախսը կտամ:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Ինչպե՞ս թե մենակ: Ես ճանապարհը կկորցնեմ:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Տեղ կհասցնեն:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Լսիր, Վասյա, ես ֆրանսերեն այնքան էլ ազատ չեմ խոսում... Ուզում եմ սովորել, ժամանակ չի լինում:

- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ախր ինչի՞դ է պետք ֆրանսերենը:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Ինչպե՞ս թե, Փարիզում ֆրանսերեն չխոսե՞ս:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Բոլորովին էլ պետք չէ, ոչ մեկն էլ այնտեղ ֆրանսերեն չի խոսում:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Ֆրանսիայի մայրաքաղաքն է, և այնտեղ ֆրանսերեն չե՞ն խոսում: Հիմարի տե՞ղ են դրել ինձ, ինչ է:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ախր ի՞նչ մայրաքաղաք: Խելքդ հո չե՞ս թոցրել: Ո՞ր Փարիզի մասին ես մտածում: «Փարիզ» անունով մի պանդոկ ունենք հրապարակի վրա, ահա թե որտեղ էի ուզում քեզ հետ գալ:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Բռա՛վո, բռա՛վո:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Իսկ դու կարծում էիր իսկակա՞նը: Մի քիչ գոնե մտածիր: Եվ դեռ խելոք մարդ ես քեզ համարում: Ախր, ինչո՞ւ պիտի քեզ այնտեղ տանեի, որ ի՞նչ: Վասեղակ շինեի, քեզ այնտեղ ցո՛ւյց տայի, ինչ է:
- ՌՈՐԻՆՉՈՆ** — Լա՛վ դպրոց ես անցել, Վասյա, շա՛տ լավ: Քեզանից խոշոր վաճառական դուրս կգա:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Դե, ոչինչ, կողքից լսել եմ, հավանութուն ես տալիս:
- ԿՆՈՒՐՈՎ** — Վասիլի Դանիլիչ, թողեք դրան: Ես ձեզ բան ունեմ ասելու:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — (Մոտենալով): Ի՞նչ կկամենայիր:
- ԿՆՈՒՐՈՎ** — Ես ամբողջ ժամանակ կարիսա Դմիտրիևայի մասին էի մտածում: Ինձ թվում է, նա հիմա այնպիսի վիճակում է, որ մենք, մոտիկներս, ոչ միայն պետք է, այլև պարտավոր ենք մասնակից դառնալ նրա ճակատագրին:

Ռոբինզոնը ակառջ է դնում:

- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Այսինքն, դուք ուզում եք ասել, որ հիմա հարմար առիթ է ներկայացել նրան հետներս Փարիզ տանելու:
- ԿՆՈՒՐՈՎ** — Այո, թերևս, եթե կուզեք. դա նույն բանն է:
- ՎՈՑԵՎԱՏՈՎ** — Ուրեմն էլ ինչո՞ւ ենք սպասում: Ո՞վ է խանգարում:
- ԿՆՈՒՐՈՎ** — Դուք ինձ եք խանգարում, ես՝ ձեզ: Գուցե դուք չե՞ք վախենում մրցակցութունից: Ես էլ այնքան չէ:

բայց, այնուամենայնիվ, անհարմար է, հանգիստ չես գտում քեզ: Շատ ավելի լավ է, երբ դաշտն ազատ է: **ՎՈՐԺԵՎԱՏՈՎ** — Հրածարագին ես չեմ վերցնի, Մոկիյ Պարմենի:

ԿՆՈՒՐՈՎ — Ինչո՞ւ հրածարագին: Կարելի է այլ կերպ: **ՎՈՐԺԵՎԱՏՈՎ** — Ահա, սա ամենից լավն է: (Գրպանից մի մետաղադրամ է հանում և դնում բռան մեջ): Արծի՛վ, թե՞ գիր:

ԿՆՈՒՐՈՎ — (Մտախոն): Եթե ասեմ «արծիվ», կտարվեմ. արծիվը, իհարկե, դուք եք: (Վճռական): Գի՛ր:

ՎՈՐԺԵՎԱՏՈՎ — (Բարձրացնելով ձեռքը): Ձե՛րն է: Ուրեմն ես Փարիզ մենակ եմ գնում: Ես վնաս չեմ կրում. ծախս քիչ կլինի:

ԿՆՈՒՐՈՎ — Միայն թե, վասիլի Դանիլիչ, խոսք ես տվի՛ կատարիր, չես տվել՝ դիմացիր: Դուք վաճառական եք, դուք պետք է իմանաք, թե ինչ բան է խոսքը:

ՎՈՐԺԵՎԱՏՈՎ — Դուք ինձ վերավորում եք: Ես ինքս գիտեմ, թե ինչ է նշանակում վաճառականի խոսք: Ձե՞ որ ես ձե՛զ հետ գործ ունեմ և ոչ թե Ռոբինզոնի:

ԿՆՈՒՐՈՎ — Ահա Սերգեյ Սերգեյիչն է գալիս Լարիսա Դմիտրիևայի հետ: Մտնենք սրճարան, չխանգարենք նրանց:

Կնուրովն ու Վոժեվատովը մտնում են սրճարան: Գալիս են Պարատովը և Լարիսան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ղ Ք Ե Ր Ո Ր Ղ

Պարատով, Լարիսա և Ռոբինզոն:

ԱՐԻՍԱ — Ա՛հ, ինչպե՛ս եմ հոգնել: Սպասվում են ուժերս, հազիվհազ սարը բարձրացա: (Նստում է բեմի խորձով ցանկապատի տակ դրված նստարանին):

ՊԱՐԱՏՈՎ — Ա՛, Ռոբինզոն: Դե ի՞նչ, շուտով Փարի՞զ ես գնում:

ՌՈՐԻՆԶՈՆ — Ո՞ւմ հետ: Քեզ հետ, լյա Սերժ, ուր ուզում ես, իսկ վաճառականի հետ ես չեմ գնա: Վաճառականների հետ հաշիվներս փակեցի:

ՊԱՐԱՏՈՎ — Այդ ինչո՞ւ:

ՌՈՐԻՆԶՈՆ — Անկիրթ եմ:

ՊԱՐԱՏՈՎ — Իբր սո՞ւտ է: Վաղո՞ւց ես գլխի ընկել:

ՌՈՐԻՆԶՈՆ — Միշտ էլ գիտեի: Ես միշտ էլ ազնվականների կողմն եմ:

ՊԱՐԱՏՈՎ — Դա քեզ պատիվ է բերում, Ռոբինզոն: Բայց քո հպարտությունը տեղին չէ: Հարմարվիր պայմաններին, իմ խեղճ բարեկամ: Լուսավորյալ հովանավորների, մեկենասների ժամանակն անցել է, հիմա բուրժուազիայի հաղթանակի ժամանակն է, հիմա արվեստը ոսկով է գնահատվում, ուղղակի իմաստով գալիս է ոսկեդարը: Բայց, ներողամիտ եղիր, երբեմն վաքս էլ կխմեցնեն, սեփական հաճույքի համար տակառի մեջ կխոթեն ու սարից կզլորեն, նայած թե ինչպիսի միջնորդի ես հանդիպել: Հեռու չգնաս, ինձ պետք ես գալու:

ՌՈՐԻՆԶՈՆ — Քեզ համար հրի ու ջրի միջով կանցնեմ: (Գնում է սրճարան):

ՊԱՐԱՏՈՎ — (Լարիսային): Թույլ տվեք հիմա շնորհակալություն հայտնել այն հաճույքի, ո՛չ, դա քի՛չ է, երջանկության համար, որ դուք մեզ պարգևեցիք:

ԱՐԻՍԱ — Ո՛չ, ո՛չ, Սերգեյ Սերգեյիչ, դուք ինձ դատարկ խոսքեր մի ասեք: Դուք միայն ինձ ասեք՝ ես ձեր կի՞նն եմ, թե՞ ոչ:

ՊԱՐԱՏՈՎ — Ամենից առաջ, Լարիսա Դմիտրիևնա, պետք է տուն գնալ: Վաղը մենք դեռ կհասցնենք հանգամանորեն խոսել:

ԱՐԻՍԱ — Ես տուն չեմ գնա:

ՊԱՐԱՏՈՎ — Բայց այստեղ էլ մնալ ձեզ չի կարելի: Վուգայի վրա ցերեկով զբոսնել մեզ հետ, դա դեռ թույլատրելի է, բայց ամբողջ գիշեր քեֆ անել պանդոկո՞ւմ, քաղաքի կենտրոնում քեֆ անել վատ վարքի տեր մարդկանց հե՛տ: Հասկանո՞ւմ եք, թե խոսակցությունների ի՞նչ նյութ եք տալիս:

ԱՐԻՍԱ — Ի՞նձ ինչ խոսակցությունները: Ես ձեզ հետ կարող եմ լինել ամենուր: Դուք ինձ տնից դուրս եք բերել, դուք էլ ինձ պետք է տուն տանեք:

ՊԱՐԱՏՈՎ — Դուք իմ կառքով կգնաք, նույն բանը չէ՞:
ԱՐԻՍԱ — Ո՛չ, նույնը չէ: Դուք ինձ փախցրիք իմ նշանածից, մայրիկը տեսավ, թե մենք ինչպես գնացինք: Նա չի անհանգստանա, որքան էլ որ ուշ վերադառնանք... Նա հանդիստ է, նա վստահում է ձեզ, նա միայն կրուպասի մեզ, կսպասի... որ օրհնի: Ես կամ ձեզ հետ պիտի վերադառնամ, կամ էլ բոլորովին տուն չգնամ:
ՊԱՐԱՏՈՎ — Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է նշանակում քաղրորովին տուն չգնամ»: Հապա ո՞ր պիտի գնաք:

ԱՐԻՍԱ — Դժբախտ մարդկանց համար ազատ տեղ շատ կա այս աշխարհում. ահա այդին, ահա Վոլգան: Այստեղ ամեն ճյուղից կարելի է կախվել. 'Աղագյում' ընտրի՛ր ուղածդ տեղը: Ամենուր խեղդվելը հեշտ է, եթե ցանկութուն կա, և ուժերդ կհերքեն:

ՊԱՐԱՏՈՎ — Ինչպիսի՞ մոլեռանդութուն: Դուք կարող եք ապրել և պետք է ապրեք: Ձեզ ո՞վ չի սիրի ու չի հարգի: Հենց նույն ձեր փեսացուն շատ արախ կլինի, եթե նորից փաղաքձեք իրեն:

ԱՐԻՍԱ — Ի՞նչ եք ասում: Եթե ես իմ ամուսնուն չսիրեմ էլ, գոնե պիտի հարգեմ: Իսկ ես ինչպե՞ս կարող եմ հարգել մի մարդու, որն անտարբեր տանում է ծաղրե ու ամեն տեսակի անարդանքը: Դա վերջացած բան է, նա ինձ համար գոյութուն չունի: Ես մի փեսացու ունեմ. դո՞ւք եք:

ՊԱՐԱՏՈՎ — Ներեցեք, չվիրավորվեք իմ խոսքերից, բայց հազիվ թե դուք իրավունք ունեք այդպես պահանջիտ լինելու իմ նկատմամբ:

ԱՐԻՍԱ — Ի՞նչ եք ասում: Մի՞թե դուք մոռացել եք: Ես ամեն ինչ նորից կկրկնեմ: Մի տարի տառապեցի, մի տարի չէի կարողանում մոռանալ ձեզ, կյանքն ինձ համար անիմաստ էր դարձել. ես, ի վերջո որոշեցի ամուսնանալ Կարանդիշևի՝ գրեթե առաջին պատահած մարդու հետ: Ես մտածում էի, որ ընտանեկան պարտականությունները կլցնեն իմ կյանքը և կհաշտեցնեն ինձ կյանքի հետ, Հայտնվում եք դուք և ասում՝ «Ամեն ինչ թող, ես քոնն եմ»: Մի՞թե սա իրավունք չէ: Ես կարծում էի,

ձեր խոսքն անկեղծ է, որ ես դա տառապանքով եմ նվաճել:

ՊԱՐԱՏՈՎ — Այդ բոլորը հիանալի է, և ամեն ինչի մասին մենք կխոսենք վաղը:

ԱՐԻՍԱ — Ո՛չ, այսօ՛ր, հիմա՛:

ՊԱՐԱՏՈՎ — Դուք պահանջո՞ւմ եք:

ԱՐԻՍԱ — Պահանջում եմ:

Մեծառնի դռներ երևում են Կեւորդը և Վոժվատովը:

ՊԱՐԱՏՈՎ — Խնդրե՛մ: Լսեք, Լարիսա Դիմարիկեմ: Դուք ընդունո՞ւմ եք վայրկենական հրապուրանքը:

ԱՐԻՍԱ — Ընդունո՞ւմ եմ: Ես ինքս էլ ընդունակ եմ հրապուրվելու:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՛չ, ես այնպես շարտահայտվեցի, ընդունո՞ւմ եք, որ ձեռքերն ու ոտքերը շղթայած մարդը կարող է այնպես հրապուրվել, որ մոռանա աշխարհում ամեն ինչ. մոռանա և՛ իրեն ճշող իրականությունը, և՛ իր շղթաները:

ԱՐԻՍԱ — Ի՞նչ կա որ: Եվ լավ է, որ մոռանում է:

ՊԱՐԱՏՈՎ — Դա շատ լավ հոգեկան վիճակ է, չեմ վիճում ձեզ հետ, բայց դա երկարատև չէ: Բուն հրապուրանքի հուրը շուտով մարում է, մնում են շղթաներն ու առողջ դատողությունը, որն ասում է, թե այդ շղթաները փրշրել չի լինի, թե դրանք անբակտելի են:

ԱՐԻՍԱ — (Մտախոհ): Անբակտելի շղթաներ: (Արագ): Դուք ամուսնացա՞ծ եք:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՛չ:

ԱՐԻՍԱ — Իսկ մյուս բոլոր շղթաներն արգելք չեն: Միասին կկրենք. ես բաժանում եմ ձեզ հետ այդ բոլոր, ծանրություն մեծ մասը վերցնում եմ ինձ վրա:

ՊԱՐԱՏՈՎ — Ես նշանված եմ:

ԱՐԻՍԱ — Ա՛հ:

ՊԱՐԱՏՈՎ — (Ցույց տալով նշանի մատանին): Ահա այն ոսկե շղթան, որով ես շղթայված եմ ամբողջ կյանքում:

ԱՐԻՍԱ — Հապա ինչո՞ւ էիք լռում: Անաստված բան է սա, անաստված: (Նստում է արդիւն):

ՊԱՐԱՏՈՎ — Մի՞թե ես ի վիճակի էի որևէ բան հիշելու
ես տեսա ձեզ, և ուրիշ ոչինչ ինձ համար գոյութիւն
չունեի:
ԱՐԻՍԱ — Նայե՛ք ինձ:

Պարտովը նայում է նրան:

«Աչքերը լուսավոր են երկնքի նման...»: Հա՛-հա՛-հա՛:
(Հիստերիկ ծիծաղում է): Հեռացե՛ք ինձանից: Բավա-
կա՛ն է: Ես ինքս իմ մասին կհոգամ: (Գլուխը նետում
ձեռքերին):

Կնուրովը, Վոժեվատովը և Ռոբինզոնը դուրս են գալիս
սրահանի առջ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ո Ւ Ք Ե Ր Ո Ր Ղ

Պարտով, Լարիսա, Կնուրով, Վոժեվատով և Ռոբինզոն:

ՊԱՐԱՏՈՎ — (Մտտենալով սրահաբանին): Ռոբինզոն, գնա
կառքս գտիր: Այստեղ է, բուլվարի մոտ: Լարիսա Դմիտ-
րիկնային կտանես տուն:

ՌՈՐԻՆԶՈՆ — Լյա Սերժ: Նա այստեղ է, նա ման է գալիս
ատրճանակը գրպանում:

ՊԱՐԱՏՈՎ — Ո՞վ՞ «նա»:

ՌՈՐԻՆԶՈՆ — Կարանդիշկը:

ՊԱՐԱՏՈՎ — Իսկ իմ ի՞նչ գործն է:

ՌՈՐԻՆԶՈՆ — Նա ինձ կսպանի:

ՊԱՐԱՏՈՎ — Էլ ո՞նց կլինի: Կատարիր, ինչ որ հրամա-
յում են: Առանց դատողութիւնների: Ես դա չեմ սի-
րում, Ռոբինզոն:

ՌՈՐԻՆԶՈՆ — Ես քեզ ասում եմ. հենց որ տեսավ ինձ նրա
հետ միասին, ինձ կսպանի:

ՊԱՐԱՏՈՎ — Կսպանի քեզ, թե չի սպանի՞ դեռ հայտնի չէ՞
Բայց, ահա, եթե դու անմիջապէս չկատարես իմ հրա-

մանը, ևս քեզ հաստատ կսպանեմ: (Գնում է սրահան):
ՌՈՐԻՆԶՈՆ — (Բռունցքով սպառնալով): Օ՛, բարբարոսնե՛ր,
օ՛, ավազակնե՛ր: Լա՛վ շրջապատ եմ ընկել: (Գնում է):

Վոժեվատովը մտտեում է Լարիսային:

ԱՐԻՍԱ — (Նայելով Վոժեվատովին): Ես կործանվում եմ:
ՎՈՅԵՎԱՏՈՎ — Լարիսա Դմիտրիկնա, աղավնյակա: Ի՞նչ պի-
տի անես, ոչինչ չես կարող անել:

ԱՐԻՍԱ — Վարյա, մենք իրար մանկութիւնից գիտենք, հա-
մարյա հարազատ ենք, ի՞նչ անեմ ես, սովորեցրու:
ՎՈՅԵՎԱՏՈՎ — Լարիսա Դմիտրիկնա, հարգում եմ ձեզ և
ուրախ կլինեի... Ես ոչինչ չեմ կարող անել: Հավատա-
ցե՛ք խոսքիս:

ԱՐԻՍԱ — Դե ես ոչինչ էլ չեմ պահանջում քեզնից. խընդ-
րում եմ միայն խղճաս ինձ: Դե՛, գոնե լա՛ց եղիր հետո:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Չե՛մ կարող, ոչի՛նչ չեմ կարող:

ԱՐԻՍԱ — Դո՞ւ էլ ես շղթայված:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Երկաթե կապանքով, Լարիսա Դմիտրիկնա:
ԱՐԻՍԱ — Ի՞նչ կապանք:

ՎՈՅԵՎԱՏՈՎ — Վաճառականի ազնիվ խոսքը: (Գնում է
դեպի սրահան):

ԿՆՈՒՐՈՎ — (Մտտենում է Լարիսային), Լարիսա Դմիտրիկ-
նա, լսեք ինձ և մի վիրավորվեք: Մտքովս էլ չի անց-
նում ձեզ վիրավորել: Ես ձեզ միայն բարիք եմ ցան-
կանում և բախտավորութիւն, որին դուք միանգամայն
արժանի եք: Չէի՞ք կամենա ինձ հետ Փարիզ մեկնել,
ցուցահանդեսի:

Լարիսան բացասական շարժում է գլուխը:

Եվ լրիվ ապահովութիւն ամբողջ կյանքում:

Լարիսան լուռ է:

Ամոթից մի վախեցեք, դատապարտող չի լինի: Մի
ասհման կա, որից այն կողմ չեն դատապարտում: Ես

ձեզ կարող եմ առաջարկել այնպիսի հսկայական ունեցվածք, որ ուրիշի բարոյականութեան ամենաշար քննադատներն էլ ստիպված կլինեն լռել և զարմանքից բերան չբանալ:

Լարիսան գլխից շրջում է մյուս կողմ:

Ես ոչ մի բոպե չէի վարանի առաջարկելու ձեզ իմ ձեռքը, բայց ամուսնացած եմ:

Լարիսան լռում է:

Գուց հուզված եք, պատասխանի համար չեմ համարձակվի շտապեցնել ձեզ: Մտածե՛ք: Եթե կկամենաք բերե՛հաճորեն ընդունել իմ առաջարկը, իմաց արեք ինձ, և այդ բոպեից ես կդառնամ ձեր ամենահավատարիմ ծառան և ամենաճշտապահ կատարողը բոլոր ձեր ցանկությունների և նույնիսկ քմահաճույքների, որքան էլ դրանք տարօրինակ լինեն և թանկ նստեն: Ինձ համար անհնար բան չկա: (Հարգալից գլուխ է տալիս և գնում սրճարան):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Ղ

Լարիսան միայնակ:

ԿԱՐԻՍԱ — Առավոտյան, երբ ներքև էի նայում, գլուխս պտտվեց, և քիչ մնաց ընկնեմ: Իսկ եթե ընկար, ասում են... անխուսափելի մահ է: (Մտածելով): Ի՞նչ լավ կլիներ նետվել ցած: Կանգնեմ ցանկապատի մոտ ու նայեմ ներքև, գլուխս կպտտվի ու կընկնեմ... Այո՛, այդպես լավ է... ուշագնաց կլինես, ո՛չ ցավ... ոչ ի՞նչ չես դա: (Մտե՛նում է ցանկապատին ու նայում ներքև: Կռանում է, ամուր բռնում ճաղից, ճեռո սարսափով հո փաշվում): Ի՞նչ սարսափելի է: (Քիչ է մնում ընկնի, բռնում է ճաղերից): Գլուխս ինչպե՛ս է պտտվում: Ես

ընկնում եմ, ընկնում եմ, օ՛յ: (Նստում է սեզանի մատ, տաղավարի կողքին): Ա՛խ, ո՛չ... (Արցունքներ միջից): Կյանքից հրաժարվելն այնքան էլ հեշտ չէ, ինչպես կարծում էի: Այդքան ուժ չունեմ: Այս ի՞նչ դժբախտն եմ: Բայց մարդիկ կան, չէ՞, որոնց համար հեշտ է: Երևի դրանք էլ ապրելու հնար չունեն. նրանց ոչինչ չի հրապտրում՝ ո՛չ սիրելու բան ունեն, ո՛չ ափսոսալու: Ա՛հ, այս ի՞նչ եմ ասում: Ախր ես էլ սիրելու բան չունեմ, ես էլ հնար չունեմ ապրելու, իմ ապրելն էլ անիմաստ է: Էլ ինչո՞ւ չեմ համարձակվում: Ի՞նչ է ինձ պահում այս անդունդի վրա: Ի՞նչն է խանգարում: (Մտածում է): Ահ, ո՛չ, ո՛չ... Կնտրո՞վը... ո՛չ... շքեղություն, փա՛յլ... ո՛չ, ո՛չ... ես հեռու եմ այդ ամենից (Ցնցվելով): Անառակություն... օ՛հ, ո՛չ... Պարզապես վճռականություն չունեմ: Ողբալի թուլություն, ապրել մի կերպ, բայց ապրել... Երբ չի կարելի և պետք էլ չէ: Ի՞նչ խեղճ եմ ես, դժբա՛խտ: Գոնե մեկն հիմա ինձ սպաներ... Ի՞նչ լավ է մեռնելը... քանի դեռ ինձ կշտամբելու բան չունեմ... Կամ էլ հիվանդանաս ու մեռնես... Բայց, ահա, կարծես հիվանդանում եմ: Ի՞նչ վատ եմ զգում... Հիվանդանաս երկար ժամանակ, հանգստանա՛ս, բոլորի հետ հաշտվե՛ս, բոլորին ներես ու մեռնես... Ա՛խ, ի՞նչ վատ եմ: Ինչպե՛ս է պտտվում գլուխս: (Գլուխը ճե՛նում է ձեռքին ու ինքնամոռաց նստում):

Գլուխ են Ռոբինզոնն ու Կարանդիչը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Մ Ա Ն Ե Ր Ո Ր Ղ

Լարիսա, Ռոբինզոն և Կարանդիչը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ասում եք, որ ձեզ հրամայված է նրան տո՞ւն տանել:

ՌՈՐԻՆԶՈՆ — Այո՛, հրամայված է:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Եվ ասում էիք, որ նրանք վիրավորեցի՞ր Լարիսա Դմիտրիենային:

ՌՌԲԻՆՋՈՆ — Դրանից վատ չի լինում, դրանից վատ վիրավորանք չկա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Նա ինքն է մեղավոր. նրա արարքը արժանի է պատժի: Ես իրեն ասում էի, որ դրանք մարդ չեն. ի վերջո ինքն էլ կարող էր, ինքն էլ ժամանակ ուներ նկատելու իմ ու նրանց միջև եղած տարբերությունը: Այո՛, նա մեղավոր է, բայց դատել նրան ինձանից բացի ոչ մեկը իրավունք չունի, առավել ևս՝ վիրավորողը: Դա արդեն իմ գործն է՝ կներե՞մ նրան, թե՞ ոչ: Բայց նրան պաշտպան կանգնել ես պարտավոր եմ: Նա ո՛չ եղբայր ունի, ո՛չ մերձավորներ. միայն ես, միայն ես եմ պարտավոր պաշտպան կանգնել նրան և պատժել վիրավորողներին: Որտե՞ղ է նա:

ՌՌԲԻՆՋՈՆ — Այստե՞ղ էր: Ահա՛ նա:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Մեր բացատրվելու ժամանակ կողմնակի մարդ չպետք է լինի. դուք ավելորդ եք: Թողե՛ք մեզ:

ՌՌԲԻՆՋՈՆ — Մեծագույն հաճույքով: Ես կասեմ, որ ձեզ հանձնեցի լարիսա Դմիտրիենային: Պատիվ ունեմ ողջունելու: (Գնում է սրճարան):

Կարանդիչը մտնում է սեղանին և նստում կարճափ դիմաց:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Մ Ա Ս Ն Ա Մ Ե Կ Ե Ր Ո Ր Ղ

Կարճա և Կարանդիչ:

ԱՐԻՍԱ — (Բարձրացնելով գլուխը): Որքա՛ն եմ նողկում ձեզնից, և թե իմանայիք: Ինչո՞ւ եք այստեղ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Իսկ որտե՞ղ լինեի:

ԱՐԻՍԱ — Զգիտե՛մ: Որտեղ ուզում եք, միայն ո՛չ այնտեղ, որտեղ ես եմ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դուք սխալվում եք, ես միշտ ձեզ կողքին պետք է լինեմ, որ պաշտպանեմ ձեզ: Եվ հիմա ես այստեղ եմ, որպեսզի վրեժ լուծեմ ձեզ հասցրած վիրավորանքի համար:

ԱՐԻՍԱ — Ինձ համար ամենածանր վիրավորանքը ձեր հովանավորությունն է. ոչ մեկից և ուրիշ ոչ մի վիրավորանք ես չեմ ստացել:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դուք չափից ավելի ներողամիտ եք: Կնուրովն ու Վոժնիատովը վիճակ են գցում, թե ում բաժին կհասնեք, գիր ու դուշ են գցում. դա վիրավորանք չէ՞: Լա՛վ բարեկամներ ունեք: Ինչպիսի՞ հարգանք ձեր նկատմամբ: Նրանք ձեզ չեն նայում որպես կնոջ, որպես մարդու, — մարդն ինքն է տնօրինում իր ճակատագիրը, — նրանք ձեզ նայում են որպես իրի, և թե դուք իր եք, դա ուրիշ բան է: Իրը, իհարկե, նրան է պատկանում, ով խաղի մեջ տարել է, իրը վիրավորվել էլ չի կարող:

ԱՐԻՍԱ — (Խորապես վիրավորված): Ի՞ր... այո՛, ի՛ր եմ: Նրանք իրավացի են, ես իր եմ և ոչ թե մարդ: Ես հիմա համոզվեցի դրանում, ես ինձ փորձության ենթարկեցի... Ես իր եմ: (Բարբոճված): Վերջապես ինձ համար բառը գանվեց, դո՛ւք գտաք այն: Հեռացե՛ք, խնդրում եմ ձեզ, թողեք ինձ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Թողնե՛մ ձեզ: Ես ձեզ ինչպե՞ս թողնեմ, ես ձեզ ո՞ւմ թողնեմ:

ԱՐԻՍԱ — Յուրաքանչյուր իր տեղ պետք է ունենա, կզնամ տիրոջս մոտ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Բարբոճված): Ես ձեզ վերցնում եմ, ե՛ս եմ ձեր տերը: (Բռնում է նրա ձեռքը):

ԱՐԻՍԱ — (Նստնալնով նրան): Օ՛, ո՛չ: Ամեն մի իր ունի իր գինը... Հա՛, հա՛, հա՛... Ես չափազա՛նց թանկ եմ ձեզ համար:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ինչե՛ր եք խոսում: Ես երբեք չէի սպասի ձեզնից այդպիսի անամոթ խոսքեր:

ԱՐԻՍԱ — (Արտասովելով): Եթե իր պիտի լինես, միակ միթարությունն այն է, որ թանկ լինես, շա՛տ թանկ: Մատուցեք ինձ ձեր վերջին ծառայությունը. գնացեք և ինձ մոտ ուղարկեք Կնուրովին:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում, ուշքի՛ եկեք:

ԱՐԻՍԱ — Դե, ուրեմն ե՛ս կզնամ:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Լարիսա Գմիտրիկենա: Կանգ առեք: Ես
 ձեզ ներում եմ: Ես ձեզ ներում եմ:

ԼԱՐԻՍԱ — (Դառը ծայտալով): Դուք ինձ ներում եք: Շնորհակալ եմ ձեզնից: Միայն թե ե՛ս ինձ չեմ ներում, որ
 մտածում էի բախտս կապել այնպիսի ոչնչութեան հետ,
 ինչպիսին դուք եք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Հեռանա՛նք, անմիջապես հեռանանք այս
 քաղաքից, ես ամեն ինչի համաձայն եմ:

ԼԱՐԻՍԱ — Ո՛ւշ է: Ես ձեզ խնդրեցի, որքան հնարավոր է
 շուտ հանել ինձ գնչունների թափառախմբից: Դուք չկա-
 րողացաք այդ անել: Ինչպես երևում է, ինձ վիճակ-
 ված է ապրել և մեռնել գնչունների թափառախմբում:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դե՛, ես ձեզ աղաչում եմ, երջանկացրե՛ք
 ինձ:

ԼԱՐԻՍԱ — Ո՛ւշ է: Հիմա արդեն իմ աչքերի առաջ փայլեց
 ոսկին, շողշողացին ադամանդները:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ես պատրաստ եմ ամեն մի զոհողութեան,
 պատրաստ եմ ձեզ համար կրել ամեն մի ստորացում:

ԼԱՐԻՍԱ — (Ձգվաճեղով): Հեռացե՛ք, դուք շա՛տ եք մանր,
 շա՛տ եք շնչին ինձ համար:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Դե ասեք, ինչո՞վ կարող եմ արժանանալ
 ձեր սիրուն: (Սուսկի է իջնում): Ես ձեզ սիրո՞ւմ եմ,
 սիրում եմ:

ԼԱՐԻՍԱ — Մտո՞ւմ եք: Ես սեր որոնեցի և չգտա: Ինձ վրա
 նայում էին ու նայում են որպես զվարճանքի: Ոչ մեկը
 երբեք չփորձեց նայել հոգու խորքը, ոչ մեկից ես կա-
 րեկցանք չտեսա, չսեցի ջերմ, սրտազին խոսքեր: Իսկ
 այդպես անկրակ ապրել չի լինի: Ես մեղավոր չեմ, ես
 սեր որոնեցի և չգտա... սեր չկա աշխարհում... չարժի
 էլ որոնել: Ես սեր չգտա, կսկսեմ ոսկի որոնել: Հեռա-
 ցե՛ք, ես ձերը լինել չեմ կարող:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Ոտքի կանգնելով): Օ՛, չփոշմանե՛ք:
 (Ձեռք տանում է դեպի սերբուկի գրպանը): Դուք ի՞մը
 պետք է լինեք:

ԼԱՐԻՍԱ — Ումն ուզում է լինեմ, բայց ո՛չ ձերը:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — (Բորբոխված): Ո՞չ իմը:

ԼԱՐԻՍԱ — Երբե՛ք:

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Ուրեմն մի՛ եղիր և ուրիշ ոչ մեկինը:
 (Կրակում է նրա վրա):

ԼԱՐԻՍԱ — (Բռնելով կուրծքը): Ա՛հ, շնորհակա՛լ եմ ձեզ-
 նից: (Ունկնում է արտոխն):

ԿԱՐԱՆԴԻՇԵՎ — Այս ի՛նչ արի, այս ի՛նչ արի... ա՛հ, խելա-
 գա՛ր: (Ատրճանակն ընկնում է ձեռքից):

ԼԱՐԻՍԱ — (Քնկշորեն): Սիրելի՛ս, այս ի՛նչ լավութուն
 արիք դուք ինձ: Ատրճանակն այստե՛ղ, այստեղ, սեղա-
 նի՛ն գրեք: Այդ ես ինքս: Ահ, ի՛նչ լավութուն... (Բարձ-
 րացնում է ատրճանակն ու դնում սեղանին):

Մեռածների դուրս են գալիս Պարտավը, Կնուրավը, Վա-
 ժեկատավը, Ռոբիճոգը, Գալբիոն և Իվանը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Լ Ե Ր Ո Ր Դ

Լարիսա, Կարանդիշև, Պարտավ, Կնուրավ, Վաժեկատավ,
 Ռոբիճոգ, Գալբիոն և Իվան:

ՔՈՒՐՔ — Ի՛նչ է պատահել, ի՛նչ է պատահել:
 ԼԱՐԻՍԱ — Ես ինքս... Ոչ ոք մեղավոր չէ, ոչ ոք... ես ինքս:

Քեմի ետևից երգում են գնչուները:

ՊԱՐԱՏՈՎ — Ասե՛ք թող լռեն: Ասե՛ք թող լռեն:
 ԼԱՐԻՍԱ — (Հետզհետե նվաղող ձայնով): Ո՛չ, ո՛չ, ինչո՞ւ...
 Թող ուրախանան, ով ուրախ է... Ես ոչ մեկին չեմ ուզում
 խանգարել: Ապրեցե՛ք, ապրեցե՛ք բոլորդ: Դուք պետք
 է ապրեք, իսկ ես... պետք է... մեռնեմ... Ես ոչ մեկից
 գանգատ չունեմ, ես ոչ մեկից չեմ նեղանում... Դուք
 բոլորդ էլ լավ մարդիկ եք... Ես ձեզ բոլորի՞դ... բոլորի՞դ
 սիրում եմ: (Համբույր է ուղարկում):

Բարձր հնչում է գնչուների խմբերգը:

Դրանա (կատակերգություն) չորս գործողությամբ

ԳՈՐԾՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Նախաբանի փոխարեն

ԱՆՁԻՆՔ

ԼՅՈՒՐՈՎ ԻՎԱՆՈՎՆԱ ՕՏՐԱԿԻՆԱ — ազնավազարմ օրիորդ:
ՏԱԻՍԱ ԻԼՅԻՆՇՆԱ ՇԵԼԱՎԻՆԱ — Օտրադինայի ընկերու-
հին:

ԳՐԻԿՈՐԻ ԼՎՈՎԻՉ ՄՈՒՐՈՎ — երիտասարդ նահանգական
աստիճանավոր:

ԱՆՆՈՒՇԿԱ — Օտրադինայի աղախինը:

ԱՐԻՆԱ ԳԱԼՉԻՆԱ — քաղքեհուհի:

Գործողությունը կատարվում է ճանապարհի վրա:
Համեստ բնակարանի մի սենյակ վաղաքի ամենաճեղճ
ժայռամասում: Աջից ու ձախից ներսի սենյակները տանալ
դռներն են: Խորքում լուսամուտն է և մուտքի դուռը: Կանաչ-
ֆր հասարակ է, բայց կարգի, սենյակում մաքուր է և ճար-
մարավետ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ո Ղ Ի Ն

Օտրադինան նստած է սեղանի մոտ և օձիք է կարում:
Աննուշկան նրա կողքին ջրազգեստ է կարում:

ԱՆՆՈՒՇԿԱ — (Ատամով կտրում է քելը): Ահա և, օրիորդ,
պատրաստ է: Չեցիք էլ, կարեցիք էլ. դերձակի կա-
րածից ինչո՞վ է պակաս:

ՕՏՐԱԿԻՆԱ — Իհարկե, պակաս չէ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Եվ ի՞նչ աննման շոր ստացվեց:

ՕՏՐԱԿԻՆԱ — Չէ մի՞ աննման... Երեկ օձիքի ձեկածքի հա-
մար դերձակի մոտ էի գնացել և այնտեղ, ահա մի շոր
տեսա... ա՛յ դա, իրոք որ, աննման էր: Տախսա Իլլինիչ-
նայի համար պակաս շոր են կարում:

ԱՆՆՈՒՇԿԱ — Լսել եմ, լսել եմ, բայց շորը չեմ տեսել: Թան-
կարժեք է, իհարկե:

ՕՏՐԱԿԻՆԱ — Այո, թանկարժեք է. մի վեց հարյուր կարծենա,
եթե ոչ ավել:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ի՞նչ եք ասում: Վեց հարյուր... Վեց հատ
հարյուրանոց թուղթիոդ, ուրեմն:

ՕՏՐԱԿԻՆԱ — Սպիտակ ֆայ է ախր. սրա վրա ինչքա՞ն
գնաց: Այն էլ իսկական բրյուսելյան ժանյակով:

ԱՆՆՈՒՇԿԱ — Վեց հարյուրանոց: Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ... Այդ-
քան փողով, ախր, մի ամբողջ բաժինք կարելի էր կա-
րել, մի կարգին աղջկա ազնվականուհի կարելի էր
դարձնել, իսկ նա՞ մի շոր ու վերջ:

ՕՏՐԱԿԻՆԱ — Իսկ ինչո՞ւ չհագնվի, եթե այդքան հարուստ է:

ԱՆՆՈՒՇԿԱ — Այնուամենայնիվ, մարդ մի քիչ պետք է
ամոթ ունենա և ոչ թե միանգամից իր հարստությունը
ուրիշների աչքը խոթի:

ՕՏՐԱԿԻՆԱ — Ի՞նչ ես հիմար-հիմար դուրս տալիս:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ախր մարդ չի հասկանում, թե ինչ բաներ են
կատարվում իր շուրջը:

ՕՏՐԱԿԻՆԱ — Ի՞նչ կա այստեղ անհասկանալի: Շատ սո-
վորական բան է. մարդն իր հարուստ ազգականներից
ժառանգություն է ստացել:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ախր ինչ ժառանգություն, եթե նա երկու մո-
րաքույրներից բացի ուրիշ ոչ մի ազգական չունի:

ՕՏՐԱԿԻՆԱ — Դու այդ որտեղի՞ց գիտես:

ԱՆՆՈՒՇԿԱ — Աշխարհն է խոսում:

ՕՏՐԱԿԻՆԱ — Չէ՞ որ դատարկ բաներ էլ են շատ խոսում,
Աննուշկա:

ԱՆՆՈՒՇԿԱ — Չէ, չեղած բանի մասին չեն խոսում... Ո՞ւմ
է պետք: Աղքատ էին, չէ՞, ապրում այստեղ շուր Տախսա
Իլլինիչնան իր մորաքրոջ հետ, ո՞վ չէր ճանաչում նրանց,
իսկ ես հո լավ գիտեի... Ինչքան է անցել որ՝
ընդամենը երեք տարի: Եվ այն ժամանակ էլ դրանց
հետ մի հարուստ պարոն ժանոթացավ. ծերուկ էր, Սի-
բիրից էր եկել... Ասում էին, այնտեղ ոսկու մեծ հանքերի
տեր է... Դե, նա էլ վերջրեց սրանց ու տարավ հետը...
Մորաքույրը Մոսկվայից անմիջապես ետ վերադարձավ,

Իսկ Տախա Իլլինիշնաներա հետ տաք ջրեր գնաց: Սե-
րուկը հենց այնտեղ էլ մեռավ ու իր բուրբ փողերն ու
ոսկու հանքերը Տախա Իլլինիշնային կտակեց: Էդպես
է հարստացել: Վերադարձավ, հիմա էլ կյանք է քաշում:
Մորաքրոջն էլ տանը աղախին է պահում:

ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ դու շահել աղջիկ ես, ամեն լսած բան
չեն կրկնի, ամոթ է:

ԱՆՆՈՒՇԿԱ — Բայց որ ճիշտ է, էլ ի՞նչ ամոթ: Անողը պիտի
ամաչի և ոչ թե խոսողը:

ՕՏՐԱԳԻՆԱ — Մեկ է՝ ավելի լավ է լեզուդ քեզ քաշես: Նա
իմ ընկերուհին է, միասին ենք սովորել: Մինչև օրս էլ
իրար չենք մոռացել:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ախր նա չի կարող քեզ հասկանալ, կարծում
եք գնահատում է ձեր ծանոթությունը: Մի ամիս կլի-
նի՝ ոտ էլ չի դրել այստեղ:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ժամանակ չունի, գլուխը խառն է, ամու-
նանում է:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ամուսնանալն էլ դուք դերձակուհուց իմ-
ցաք: Եվ դեռ ընկերուհի է կոչվում: Իսկ առաջինը ձեզ
պիտի դիմեր. թե ահա էսպես ու էսպես, այսինչի հետ
մտադիր եմ ամուսնանալ, ի՞նչ խորհուրդ կտաս: Կար-
գին մարդիկ էդպես են անում:

ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ ո՞ւմ հետ է ամուսնանում, չե՞ս լսել:

ԱՆՆՈՒՇԿԱ — Մեկն ասում է՝ սպայի, մի ուրիշն էլ թե՛ հա-
տուկ հանձնարարությունների աստիճանավորի:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչպե՞ս թե... ի՞նչ հատուկ հանձնարարու-
թյուններ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Էդպիսի աստիճանավորներ կան: Մարդ դը-
րանց հարսանիքը տեսներ... և հետո, ասում են, կալ-
վածքում են պսակվելու. 50 վերստ երկաթուղով, և դեռ
մի քսան վերստ էլ մյուս կողմ պիտի թեքվես...

ՕՏՐԱԳԻՆԱ — Որտեղի՞ց քեզ այդ տեղեկությունները:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ամեն բան էլ մենք ձեզանից շուտ ենք իմա-
նում: Դերձակուհու մոտ աշխատող կանանցից եմ
լսել: Թե մեզը խարդախություն չլիներ, չէր գնա գյու-
ղում պսակվի, աչքից հեռու, գողտուկ:

ՕՏՐԱԳԻՆԱ — Եվ, այնուամենայնիվ, կարիք չկա նրա մասին

վատ խոսելու. հանկարծ գործին վնաս կտա, կխան-
գարի:

ԱՆՆՈՒՇԿԱ — Բա չե՞ս խանգարի: Ո՞վ նրա փողին աչք չի
տնկի, ինքն ինչպիսին էլ ուզում է լինի: Չէ, բախտը
դրանց հետ է, իսկ լավերն ի՞նչ՝ սպասիր հա սպասիր:
Դուք, օրինակ, ե՞րբ եք արժանանալու մի լավ փեսա-
ցուի: Հավանող կլինի, իհարկե, հենց թեկուզ, օրինակ,
ասենք, Գրիգորի կվովիչը, բայց...

ՕՏՐԱԳԻՆԱ — Ի՞նչ ռեալցիստ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Բայց թե օժիտ չունեք:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ուրեմն, կարծում ես, թե հենց դա՞ է խան-
գարողը:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ուրիշ էլ ի՞նչ: Չե՞ք ճանաչում հիմիկվա մարդ-
կանց: Փողի ետևից են ընկած. չեն էլ ուզում հասկա-
նալ, որ, ճիշտ է, օժիտ չունեք, բայց հո լավ ընտանիքից
եք, կրթություն ունեք, ձեռներիցդ ամեն ինչ գալիս է:
Իսկ որ ձեր ծնողները մահացել ու ձեզ բան չեն թո-
ղել՝ ո՞վ է մեղավոր:

ՕՏՐԱԳԻՆԱ — Այդպես ուրեմն... Հիանալի ես դատում:
Բայց դեռ սպասիր, ես էլ հարստություն տեր կդառ-
նամ ու կամուսնանամ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Բայց ձեզ համար ինչ մի դժվար բան է հա-
րստանալը: Հրեն հարուստ տատիկ ունեք:

ՕՏՐԱԳԻՆԱ — Նախ՝ նա շատ հեռավոր ազգական է, և երկ-
րորդ՝ մոտիկ ժառանգներ շատ ունի: Ի դեպ, նա ինձ
գյուղից գրել է, որ այսօր քաղաքում է լինելու և կգա
թե՛յ խմելու: Եռացրած սեր է պետք պատրաստել, խել-
քը գնում է դրա համար: Չէ, ես առանց տատիկների
օգնության էլ կհարստանամ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Դաս տալո՞վ եք հարստանալու: Էն էլ մեր
կողմերո՞ւմ: Անկարելի բան է:

ՕՏՐԱԳԻՆԱ — Այո, ճիշտը դու ես, այստեղ, վաճառական-
ների մեջ, ուսումը հարգի չէ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ինչնե՞րի՞ն է պետք ուսումը: Փող ունեն և
առանց դրա էլ կարող են յուրա գնալ:

ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ թե չհարստացա, գուցե մի բարի մարդ
առանց օժիտի էլ կնություն անի:

ԱՆՆՈՒՇԿԱ — Աստված տա: Միայն թե հիմիկվա տղամար-
դիկ էլ...

ՕՏՐԱԴԻՆԱ — Իսկ ի՞նչ է որ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Սկզբից շատ լավն են երևում, հետո էլ,
է՛, ինչքան է պատահում, խաբերա են դուրս գալիս:

ՕՏՐԱԴԻՆԱ — Իսկ դո՞ւ որտեղից գիտես:

ԱՆՆՈՒՇԿԱ — Ախր ես էլ կենդանի մարդ եմ, տեսնում եմ,
չէ, թե ինչ է կատարվում աշխարհում... (Մալում է
զգեսալը): Կախե՞մ պահարանում, թե՞ մնա:

ՕՏՐԱԴԻՆԱ — Թող մնա: Մի անգամ էլ կփորձեմ, նոր կպա-
հեմ:

ԱՆՆՈՒՇԿԱ — Որ էդպես է, գնամ իմ գործին: Խոհանոցում
մարդ չկա, հանկարծ մեկը չմտնի:

ՕՏՐԱԴԻՆԱ — (Լուսամուտից նայելով): Նախ դուռը բաց
արա, Գրիգորի Լվովիչն է գալիս, նոր հետո գնա գործիդ:

Աննուշկան բացու՛մ է դուռը, ներս բողնում Մուրավին և ապա
զնայ՛մ աչ կազմի՛ զոնով:

Տեսարան երկրորդ

Օտարգիճա և Մուրավ

ՕՏՐԱԴԻՆԱ — (Դիմազարեղով Մուրավին): Ահ, սիրելիս, որքան
ուրախ եմ...

ՄՈՒՐՈՎ — Բարև, կյուբա... Այսօր երևի շուտ ես վեր կա-
ցել. հազնված, սանրված ես, ոնց որ մեկին սպասելիս
լինես:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինչո՞ւ ես գարմանում՝ չեմ հասկանում. ես
միշտ էլ շուտ եմ վեր կենում: Ախր դու ինքդ ասացիր,
որ այսօր ինձ մոտ վաղ ես գալու, հետս ինչ-որ խոսե-
լու բան ունես:

ՄՈՒՐՈՎ — Ահ, բոլորովին մոռացել էի: Այո, իսկապես,
ասել էի քեզ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Եվ առհասարակ, սկսել ես շատ վաղ գալ ինձ
մոտ, ինչ-որ մեկից կարծես վախենում ես:

ՄՈՒՐՈՎ — Ահ, տե՛ր աստված: Իհարկե՛ վախենում եմ, մի-

այն թե ոչ ինձ, այլ քեզ համար: Պարզ բան է, չեմ
ուզում, որ քո մասին վատ խոսեն:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ենորհակալ եմ, սիրելիս, շնորհակալ եմ:
Բայց դու առաջ դրանից չէիր վախենում: Եվ հետո՞
այդ ինչպե՞ս ես աննկատ մնալու: Մարդիկ արդեն ակ-
նարկում են՝ «Ե՞րբ է, օրիորդ, Գրիգորի Լվովիչը ձեզ
հետ ամուսնանալու»: Ավելի լավ է չթաքնվես և այդ ասե-
կոսեներին էլ վերջ դնես:

ՄՈՒՐՈՎ — Իհարկե, ամենալավը դա է, բայց, դժբախտա-
բար, բարեկամս, դա առայժմ հնարավոր չէ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինչպե՞ս թե հնարավոր չէ: Ինչո՞ւ: Ի՞նչ ես
ասում: Հավատս չի գալիս:

ՄՈՒՐՈՎ — Մայրիկս չի համաձայնի: Եվ ընդհանրապես՝
կհամաձայնի՞ երբևէ, չգիտեմ: Իսկ ես նրա կամքին հա-
կառակ մի քայլ անգամ չեմ կարող անել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ուզածն ի՞նչ է:

ՄՈՒՐՈՎ — Նա ուզում է, որ ես հարուստ ու ազդեցիկ ազ-
գակնություն ունեցող աղջկա հետ ամուսնանամ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Այդ բոլորը նորություն է ինձ համար. ես քեզ
չորս տարի է գիտեմ, դու ինձ ոչ մի խոսք չես ասել:

ՄՈՒՐՈՎ — Մինչև հիմա այդ մասին մայրիկիս հետ չեմ էլ
խոսել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինչպե՞ս թե... Դու իրավունք չունեիր լռելու,
դու պարտավոր էիր խոսել իմ մասին:

ՄՈՒՐՈՎ — Ինչ արած... Այս ամենի պատճառն իմ դաստիա-
րակությունն է. քաշված, խեղճ մարդ եմ: Ներքի ինձ.
Ի՞նչ ասեմ՝ պարզապես վախենում էի: Բայց, ի վերջո,
ձանձրացա շարունակ խնամակալության տակ լինելուց:
Ի՛նքդ դատիր: Զափահաս մարդ եմ, բայց առանց թույլ-
տվության ոչ մի քայլ անելու իրավունք չունեմ, ոչ մի
հարցում ինքնուրույն չեմ. յուրաքանչյուր ռուբլին նրա-
նից պետք է խնդրեմ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Հետո, հետո...

ՄՈՒՐՈՎ — Խնդրեցի, որ կալվածքի մի մասն ինձ համար
առանձնացնի կամ էլ մի պատշաճ գումար տա. տարե-
կան մի երեք-չորս հազար: Նա ասաց, որ մի կոպեկ էլ
չի տա, մինչև իր ընտրությամբ չամուսնանամ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Իսկ դու, դո՛ւ ինչ ասացիր:

ՄՈՒՐՈՎ — Ահ, մի հարցրու, խնդրում եմ: Գլուխս ուղղակի պտտվում է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Բայց, հասկացիր, խնդրում եմ, ինձ համար որոշակի պիտի լինեն քո մտադրություններն ու մտքերը. այլապես ես ո՞նց պիտի ապրեմ:

ՄՈՒՐՈՎ — Իմ մտադրությունները:

ՕՏՐԱԴԻՆԱ — Այո՛, այո՛, քո մտադրությունները:

ՄՈՒՐՈՎ — (Շփոթված): Դե, ինչ... Դե, դու գիտես... Կարո՞ղ եմ ես, արդո՞ք, ի վիճակի՞ եմ... Իմ պարտականությունն է...

ՕՏՐԱԴԻՆԱ — Այո՛, այո՛: Հուսով եմ, որ լավ գիտես քո պարտականությունը: Ես կասկած չպետք է ունենամ քո նկատմամբ, թե չէ տանջանք է արք սա, տանջանք... Դու ոչ մի վայրկյան չպետք է մոռանաս, որ մենք երեսխա ունենք: Դու հազվադեպ ես տեսնում նրան, իսկ ես երեկ էլ եմ եղել Գալլիխայի մոտ: Չէ՞ որ նա արդեն սկսել է հասկանալ: Փարվում է ինձ, մամա՛, մայրի՛կ է ասում: Եվ նա ինձնից բաժան է ապրում մի տղետ, շահամուլ կնոջ մոտ... Հոգիս դուրս է գալիս, գիշերները շեմ քնում, միշտ մտածում եմ՝ տեսնես կո՞ւշտ է, հանգի՞ստ է քնել: Գրիշա, գոնե մի անգամ այցելիիր նրան, տեսնեիր, թե ինչ հրեշտակ նրեխա է:

ՄՈՒՐՈՎ — Դու շա՞տ ես սիրում մեր Գրիշային:

ՕՏՐԱԴԻՆԱ — (Ձաբմանով): Իհարկե, սիրում եմ: Դա ի՞նչ հարց է: Շատ եմ սիրում, ինչպես որ մայրերն են սիրում:

ՄՈՒՐՈՎ — Այո, այո... Իհարկե... Իսկ ի՞նչ կլինի, Լյուբա, եթե հանկարծ այդ դժբախտ երեխան զրկվի հորից:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինչպես թե՛ զրկվի:

ՄՈՒՐՈՎ — Ահ, աստված: Ամեն բան էլ կարող է պատահել: Ես շատ եմ ճանապարհորդում, մեկ էլ տեսար ձին փախս ընկավ ու ջարդուփշուր արեց, դե, ասեմք... երկաթուղի է, մի բան պատահեց:

ՕՏՐԱԴԻՆԱ — Բայց սա ինչ խոսակցություններ են, շեմ հասկանում: Դու այսօր ինձ հատուկ տանջելու ես եկել, ինչ է:

ՄՈՒՐՈՎ — Ահ, Լյուբա, միշտ պետք է ամենալատթարը աչքի տակ ունենաս, որ պատրաստ լինես: Դե ես էլ, ահա, մտածում եմ. ի՞նչ ես անելու Գրիշայի հետ, Լթե ես ձեզ հետ շիխեմ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Օ՛հ, վե՛րջ տուր, խնդրում եմ: Խնայի՛ր իմ ներվերը:

ՄՈՒՐՈՎ — Ախ, ներվեր, ներվեր: Ցավն էլ հենց այն է, որ ձեր ներվերը շատ են թույլ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Եթե լուրջ ես հարցնում, ես քեզ կպատասխանեմ: Դու մի անհանգստացիր. նեղություն չի քաշի: Օր ու գիշեր կաշխատեմ, որ ոչ մի բանի կարիք չզգաս: Մի՞թե ես թույլ կտամ, որ նա սոված լինի կամ էլ տկլոր: Այ, ե՛ գրքեր կունենա, ե՛ խաղալիքներ, այո, խաղալիքներ, թանկարժեք խաղալիքներ: Որ ինչ ուրիշներն ունեն, նա էլ ունենա: Ուրիշներից ինչո՞վ է պակաս: Ո՞րն է նրա մեղքը: Դե, եթե ուժ չունենամ ալլես աշխատելու, ոտից-ձեռից ընկնեմ... Դե ինչ, շեմ ամաշի նրա համար... ողորմություն խնդրել (Լաց է լինում):

ՄՈՒՐՈՎ — Ախ, Լյուբա, պետք չէ, պետք չէ...

ՕՏՐԱԴԻՆԱ — Բայց դու ինքդ ես հարցնում, դու ինքդ ես ուզում, որ խոսեմ: Ի՞նչ էիր սպասում ինձնից, ուրիշ ի՞նչ պատասխան: Մի՞թե մտածում էիր, թե ես նրան կլքեմ:

ՄՈՒՐՈՎ — Ահ, սիրելիս: Ներիր ինձ: Մտքովս էլ չի անցել վրդովել քեզ... թողնենք այս գրույցները, ուրիշ բանից խոսենք:

ՕՏՐԱԴԻՆԱ — Այո՛, այո՛, խնդրում եմ, ուրի՛շ: Խղճա՛ ինձ:

ՄՈՒՐՈՎ — Ինչո՞վ էիր գբաղված:

ՕՏՐԱԴԻՆԱ — Շոր էի կարում:

ՄՈՒՐՈՎ — Ո՛ւմ համար:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինձ համար:

ՄՈՒՐՈՎ — Լա՞վն է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Էժանագին: Ինձ համար դա էլ լավ է. ես ոսկու հանքեր չունեմ:

ՄՈՒՐՈՎ — Ոսկին ինչ՞ ինքդ հենց տեղով ոսկի ես: Իսկ այդ ի՞նչ հանքերի մասին ես խոսում:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչ հանքե՞ր... Երեկ մի շոր տեսա, իսկական
 հրաշք: Պսակի շոր, մետաքսե ժանյակներով:
ՄՈՒՐՈՎ — Իսկ ո՞ւմն էր:
ՕՏՐԱԳԻՆԱ — Տախսա Իլլիհիշնա Շելավիհայինը:
ՄՈՒՐՈՎ — Ի՞նչ: Ո՞ւմը: Ի՞նչ ասացիր:
ՕՏՐԱԳԻՆԱ — Տախսա Իլլիհիշնայինը, ասում եմ: Ինչ է,
 նրան ճանաչո՞ւմ ես:
ՄՈՒՐՈՎ — Չէ, այնպես... լսել եմ նրա մասին:
ՕՏՐԱԳԻՆԱ — Լավիկն է ու հարուստ, ոչ թե ինձ նման: Աղ-
 քատ աղջիկ էր այն ժամանակ. մենք վաղուց ենք ծա-
 նոթ, միասին դպրոց էինք վազում:
ՄՈՒՐՈՎ — Մի՞թե:
ՕՏՐԱԳԻՆԱ — Ծուլլի մեկն էր ու վատ էր սովորում, բայց
 ահա հարստացավ ու ամուսին գտավ: Դեռ այն ժամա-
 նակ էր նա մեզ զարմացնում:
ՄՈՒՐՈՎ — Ինչո՞ւ:
ՕՏՐԱԳԻՆԱ — Նրանով, որ մի տեսակ ամոթ ասածը պակաս
 էր նրա մեջ: Բայց պետք է խոստովանել, որ սիր-
 տը, այնուամենայնիվ, բարի է: Մի երեք տարի չէինք
 տեսնվել, իսկ դիմավորեց ինձ համարյա արցունքնե-
 րով. երկու անգամ մոտս է եկել, փող առաջարկել...
 Ես չվերցրի, իհարկե: Լավն այն է, որ խոստացավ եր-
 կու աշակերտ ճարել ու մշտական աշխատանք: Դա ինձ
 համար շատ կարևոր է, ես կարող եմ շփախել իմ փոք-
 րիկ աշխատավարձը, պահել Գրիշկայի համար կամ էլ...
 օժիտի: Լսի՞ր, ինձ ցույց տուր քո մորը, գուցե դուր եմ
 գալիս, ընդունակություններից զուրկ չեմ: Ես այստեղ
 ձեռքից զնացել եմ: Եթե ուզենամ՝ կ' խելքով կ' փայլեմ,
 կ' գիտելիքներով, ու կ' համայնմ պառավին:
ՄՈՒՐՈՎ — Այո, այո, չեմ կասկածում:
ՕՏՐԱԳԻՆԱ — Դե, ուրեմն, հիանալի է: Ես վերջերս մի ըն-
 տանիքի հետ եմ ծանոթացել, այնտեղ է լինում նաև
 քո մայրը:
ՄՈՒՐՈՎ — Այդ բոլորը շատ լավ է, միայն թե՛ ո՛չ հիմա,
 հետո, մի ուրիշ անգամ...
ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ ինչո՞ւ:
ՄՈՒՐՈՎ — Ահա թե ինչ, բարեկամս: Ես քեզ մի նորություն

պիտի հաղորդեմ, այնքան էլ հաճելի չէ, բայց պիտի
 ասեմ:
ՕՏՐԱԳԻՆԱ — Էլի ի՞նչ կա: Շո՞ւտ ասա: Այս ի՞նչ տանջալի
 օր է:
ՄՈՒՐՈՎ — Մի՛ վախենա: Առանձնապես ոչինչ չկա: Մենք
 միառժամանակ պիտի բաժանվենք իրարից:
ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչո՞ւ:
ՄՈՒՐՈՎ — Ես մեկնում եմ:
ՕՏՐԱԳԻՆԱ — Մեկնո՞ւմ ես: Իսկ ո՞ւր:
ՄՈՒՐՈՎ — Սմոլենսկի նահանգ, հետո Պետերբուրգ, մայ-
 րիկի գործերով:
ՕՏՐԱԳԻՆԱ — Երկա՞ր ժամանակով:
ՄՈՒՐՈՎ — Դեռ ինքս էլ չգիտեմ, մի երկու ամսով, իսկ
 գուցե և ավել: Մինչև որ սենատում գործը վերջանա...
 Արդեն արձակուրդ էլ եմ վերցրել:
ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ ե՞րբ ես գնում:
ՄՈՒՐՈՎ — Այսօր երեկոյան:
ՕՏՐԱԳԻՆԱ — Այդպես շո՞ւտ: Իսկ ինչո՞ւ ինձ չնախազգու-
 շացիր: Ես բոլորովին չեմ նախապատրաստվել. այն-
 քա՞ն ուրախ էի այսօր, բաժանման մասին չէի մտա-
 ծում, և հանկարծ... Ա՛յ քեզ դժբախտություն: (Լաց է
 լինում):
ՄՈՒՐՈՎ — Ախր ի՞նչ դժբախտություն: Ինչո՞ւ ես լաց լի-
 նում: Գուցե և շատ շուտ վերադառնամ:
ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ Գրիշան: Չե՞ս խղճում նրան:
ՄՈՒՐՈՎ — Մի՞թե քո սերը նրան բավական չէ: Եվ, վեր-
 ջապես, հո չեմ պատրաստվում մեռնելու: Դե, վերջ
 տուր, խնդրում եմ: Առանց այն էլ դժվար է ինձ համար
 քեզից բաժանվելը, իսկ որ լաց էլ լինես...
ՕՏՐԱԳԻՆԱ — Դե լավ, լավ, էլ լաց չեմ լինի: (Փարվելով
 նրան): Դու երկար չես տանջի ինձ այսպես, ճի՛շտ է:
 Շուտով մենք այլևս բոլորովին չենք բաժանվի... Հը՞:
 Շուտով, ճի՛շտ է: Դե՛, խոսի՛ր:
ՄՈՒՐՈՎ — Այո, իհարկե, շուտով:
ՕՏՐԱԳԻՆԱ — Ահ, խեղճ Գրիշա: Ծանապարհի փողը կբա-
 վականացնի՞:
ՄՈՒՐՈՎ — Կբավականացնի: Ինձ հերիք է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Չե՛մ հավատում, չե՛մ հավատում. մայրիկդ
այնքան էլ առատածեռն չէ: (Սեղանի դարակից հեռում
է դրամապանակը): Ահա, մի հարյուր ուրիշ վերցրու,
ավե՛լ վերցրու: Ինձ պետք չէ, դասերի փողը կստանամ,
աշխատանք էլ կունենամ: Առանց քեզ ի՞նչ եմ անելու
Չանձրույթից կաշխատեմ:

ՄՈՒՐՈՎ — Չէ, ի՛նչ ես ասում, չեմ կարող և չեմ էլ ուզում
քեզնից փող վերցնել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Բայց ինչո՞ւ չո օտար մարդ չեմ: Մի՞թե
մենք պարտավոր չենք իրար օգնել: Լսիր: (Սեճուռն ետ-
յում է Մուրովին): Դու ինձ չե՛ս սիրում, թե՛ ուզում ես
լքել:

ՄՈՒՐՈՎ — Այդ ի՛նչ հիմարություններ ես մտքրել գլուխդ
ՕՏՐԱԴԻՆԱ — Ուրեմն վերցրու... Մի՞թե դու քո կնոջից չէիր
վերցնի: Դե, սա իմ նվերն է քեզ:

ՄՈՒՐՈՎ — Լավ, կվերցնեմ: Միայն թե, եթե տեսնեմ, որ
փողս հերիքում է, թույլ տուր ինձ վերադարձնել քո
նվերը:

ՕՏՐԱԴԻՆԱ — Դե լավ, դա հետո կերևա: Մեկ էլ, սիրելիս,
վերցրու այս մեղալիտներ: (Վզից հաճում է մեղալիտը):
Վզիցդ չհանես: Այստեղ մեր Գրիշայի մագերն են. սա
քեզ միշտ հիշեցնել կտա մեր մասին:

ՄՈՒՐՈՎ — (Վերցնում է մեղալիտը): Լավ, լավ, բարեկամս

ՕՏՐԱԴԻՆԱ — Ախ, այս ի՛նչ տանջանք է, ի՛նչ տանջանք...
ՄՈՒՐՈՎ — Քանի որ տանջանք է, շուտ պիտի վերջացնիր
Մնաս բարով, կյուբա, ես գնում եմ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Հենց որ հասնես Պետերբուրգ, գրի՛ր:
ՄՈՒՐՈՎ — Իհարկե, անմիջապես կգրեմ:

ՕՏՐԱԴԻՆԱ — Դե, գնաս բարով: Աստված քեզ հետ: (Գր-
կում է նրան):

ՄՈՒՐՈՎ — Հերիք է, կյուբա, հերիք է: (Լուսամուտից նայե-
լով): Այս ի՛նչ է, Կառեթով ինչ-որ մեկն եկավ:

ՕՏՐԱԴԻՆԱ — (Լուսամուտից նայելով): Շելավիճան է: Դա
նրա կառեթն է:

ՄՈՒՐՈՎ — (Վախեցած): Օհ, ինչ վատ բան եղավ:
ՕՏՐԱԴԻՆԱ — Ի՛նչ է որ... ի՛նչ ես անհանգստանում: Նրա-
նից շարժե վախենալ, նա չի դատապարտի:

ՄՈՒՐՈՎ — Ինչպե՞ս չվախենամ: Ոչ, ես չեմ ուզում, որ նա
ինձ այստեղ տեսնի: Կարիք չկա: Նա այնպիսի բացբե-
րանն է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ուրեմն դու նրան գիտե՛ս: Իսկ ասում էիր, որ
ծանոթ չես:

ՄՈՒՐՈՎ — Ինձ ասել են, լսել եմ... Գալիս է, թաքցրու ինձ:
ՕՏՐԱԴԻՆԱ — Բայց ինչո՞ւ պիտի թաքնվես: Տարօրինակ է:

ՄՈՒՐՈՎ — Ահա... ես կանցնեմ այս սենյակը: (Մտնում է
ձախ կողմի սենյակը):

ՕՏՐԱԴԻՆԱ — Խնդրեմ, միայն թե ես չեմ հասկանում...

Մտնում է Շելավիճան՝ ձեռքին մի տուփ բռնած:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Օտարդեա և Շելավիճա:

ՇԵԼԱՎԻՆԱ — Բարե, հոգյակս:

ՕՏՐԱԴԻՆԱ — Բարե, Տախա: Այդ ի՛նչ տուփ է:

ՇԵԼԱՎԻՆԱ — Պսակաշոր է: Ամուսնանում եմ ախր, մի՞թե
քեզ չեմ ասել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ոչ: Բայց ես գիտեմ, լսել եմ. շորն էլ եմ տե-
սել դերձակուհու մոտ:

ՇԵԼԱՎԻՆԱ — Հիանալի շոր է, Հրաշք է պարզապես: Չե՛ս
ուզում հագիս տեսնել: Ես հիմա, հենց այստեղ կհագնեմ:
(Ուզում է հանվել):

ՕՏՐԱԴԻՆԱ — Պետք չէ, կարիք չկա: Մեկ էլ տեսար մեկը
ներս մտավ:

ՇԵԼԱՎԻՆԱ — Արի, ուրեմն, քո ննջարտե՞ր մանե՞նք: (Գնում
է ձախ դռան կողմը):

ՕՏՐԱԴԻՆԱ — Կարիք չկա, ասում եմ: Առանց այդ էլ գի-
տեմ, որ լավն է:

ՇԵԼԱՎԻՆԱ — Դե լավ, պետք չէ, ուրեմն, պետք չէ: Այսօր
ինչո՞ւ ես մի տեսակ... Ձախ ոտքո՞վ ես վեր կացել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Մի տեսակ լավ չեմ զգում ինձ, շուտ էլ վեր

եմ կացել, նստած աշխատում էի: (Ցույց է տալիս շորք):

ՇեկԱՎԻՆԱ — Շո՞ր ես կարել քեզ համար: Խեղճ կյուրաւ Ես ուրախութիւնից թռչկոտում եմ, իսկ նա նստած աշխատում է: Ի՞նչ անարդար է ճակատագիրը: Դու ինձ... նից հազար անգամ խելացի ես, բայց աղքատ ես ապրում: Իսկ ես, ահա, չեղած տեղը հարստացա:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ինչպե՞ս թե՛ չեղած տեղը:

ՇեկԱՎԻՆԱ — Այո, իհարկեւ: Հանկարծ հարստութիւնը դուռ եկավ. օր ծերութիւն խելքը թոցրեց մարդն ու շնորհեց: Երախտապարտ եմ նրան, միշտ բարի կհիշեմ: Նրա ողորմութիւնը ամուսնու տեր էլ դառա:

ՕՏՐԱԴԻՆԱ — Շնորհավորում եմ:

ՇեկԱՎԻՆԱ — Շնորհավորելու բան չկա, հոգյակա:

ՕՏՐԱԴԻՆԱ — Նշանածիդ շե՞ս սիրում, ի՞նչ է:

ՇեկԱՎԻՆԱ — Ախր ինչպե՞ս սիրեմ: Սատանան գիտե, թե ինչ տեսակ մարդ է: Նրա խոսքին չեմ հավատում և, ընդհանրապէս, նրանց հավատալ չի կարելի:

ՕՏՐԱԴԻՆԱ — Հարու՞ստ է:

ՇեկԱՎԻՆԱ — Ի՞նչ հարուստ, տկլորի մեկն է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ուրեմն, գեղեցիկ է:

ՇեկԱՎԻՆԱ — Դժվար է ասել, էնպէս էլի...

ՕՏՐԱԴԻՆԱ — Ուրեմն, լավ տոհմից է ու բարձր աստիճանին:

ՇեկԱՎԻՆԱ — (Միծաղում է): Այո, աստիճանավոր... Զերդ բարձր-ոչինչ, ահա և նրա ունեցած աստիճանը:

ՕՏՐԱԴԻՆԱ — էլ ի՞նչն է քեզ գայթակղել: Ինչո՞ւ ես հետն ամուսնանում:

ՇեկԱՎԻՆԱ — Բացատրեմ, թե ինչու: Ես հիմա հարուստ եմ, իսկ հարուստին վայել ապրել չգիտեմ: Այսինքն՝ փողը խանութներում մսխել գիտեմ միայն, խելքս այդքան հերիքում է, իսկ հաշիվներից ու կալվածք կառավարելուց զաղափար չունեմ: Ակցիաներ, խաղատոմսեր են ձեռք ընկել. նայում եմ, շուռումուռ եմ տալիս, նորից դնում տեղը: Թե ինչքան փող է, կյանքումս գլխի չեմ ընկնի: Մատներով հաշվել սովորել եմ, բայց մատներս, հասկանում ես, հերիք չեն անում: Իսկ կալվածքներից ու

գործարաններից ինչպե՞ս գլուխ հանեմ: Թե որ հույսս դրի կառավարիչների ու գործավարների վրա, իսկույն կհասկանան, որ անտեղյակ եմ և ուզածների պէս կկողոպտեն: Իսկ այսպէս ես շահում եմ. կառավարիչը ձրի է և իմ ամուսինը՝ երիտասարդ, ճարպիկ: Ինձ ուշիշ ի՞նչ է պետք: Նաև երգվել է կամքիս հակառակ ոչինչ շանել:

ՕՏՐԱԴԻՆԱ — Կտեսնես՝ քեզ հարգող, լավ ամուսին կլինի: **ՇեկԱՎԻՆԱ** — Ինչ էլ լինի, արդեն ամեն ինչ որոշված է: Հարսանիքից հետո անմիջապէս Պետերբուրգ կգնանք. նա այնտեղ ծառայութեան կանցնի: Ես դեռ շահել եմ, տեսքս էլ՝ ոչինչ, անգուր չեմ. տես, թե դեռ ինչ գործեր ենք անելու:

ՕՏՐԱԴԻՆԱ — Նշանածդ աստիճանավոր է:

ՇեկԱՎԻՆԱ — Այո, աստիճանավոր:

ՕՏՐԱԴԻՆԱ — Իսկ որտե՞ղ է ծառայում:

ՇեկԱՎԻՆԱ — Ծիշտն ասած՝ չգիտեմ: Քաշ է գալիս ինչ-որ տեղ, ինչ-որ մեկի հանձնարարութիւններ պիտի որ կատարելիս լինի... Ահա, ուզում ես ցույց տամ նրան: Նկարը մոտս է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ցո՛ւյց տուր, ցո՛ւյց տուր:

ՇեկԱՎԻՆԱ — Կարծես զրպանս խոթեցի: (Որոճում է գրպանում): Ահա: Ծմրթվել է մի քիչ: (Օտրադիեանյին է տալիս նկարը): Նայի՛ր:

ՕՏՐԱԴԻՆԱ — (Նայելով նկարին), Ահ...

ՇեկԱՎԻՆԱ — Ի՞նչ պատահեց:

ՕՏՐԱԴԻՆԱ — Հենվել էի սեղանին, ձեռքս ասեղք ծակեց:

ՇեկԱՎԻՆԱ — Խեղճ աղջիկ: Ցավո՞ւմ է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Ա՛ռ, վերցրո՛ւ: (Վերադարձնում է նկարը):

ՇեկԱՎԻՆԱ — Դե, ինչպիսի՞ն է:

ՕՏՐԱԴԻՆԱ — Չգիտեմ, ինչ ասեմ: Մարդկանց արտաքինն այնքան խաբուսիկ է: (Նստում է աթոռին):

ՇեկԱՎԻՆԱ — Այո, ճիշտ է: Բայց եթե նա ինձ խաբի, ավելի վատ ի՛ր համար: Ինձ հետ կատակել չի կարելի: Երկարբարակ չեմ մտածի, ես նրան, սիրելի բարեկամ Գրիգորի կվովիչին, դոնից դուրս կնետեմ: Դե, արդեն ծամանակն է գնալու: էլի կմնայի, բայց այնքան գործեր ունեմ քաղաքում: Կգաս հարսանիքի, շատ եմ խնդրում:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ո՛չ, ո՛չ, շնորհակալ եմ:

ՇԵՆԱՎԻՆԱ — Դու վատառողջ ես, սիրելիս: Գնա պառկիր
ես բժիշկ կուղարկեմ: Եթե որևէ բանի կարիք ունես,
դու միայն ասա, մարդ ուղարկիր ետևիցս. քեզ համար
ամեն ինչի պատրաստ եմ... Դե, մնաս բարով, աղավ-
նյակս: (Համբուրում է Օտրադինային ու գնում):

Օտրադինան ուղեկցում է ճրան մինչև դուռը, հետո, հազիվ
ոտքի վրա կանգնելով, մտնում է սեղանին, հենվում է աջ
ձեռքով և լարված նայում նեշարանի դռանը: Դռան մեջ
հայտնվում է Մուրովը:

ՕՏՐԱԳԻՆԱ — (Ցույց տալով մեջտեղի դուռը): Հեռացե՛ք:

ՄՈՒՐՈՎ — Լյուբոշկա՛, լսի՛ր ինձ:

ՕՏՐԱԳԻՆԱ — Հեռացե՛ք:

ՄՈՒՐՈՎ — (Պարզելով փողերը): Քո փողերը...

ՕՏՐԱԳԻՆԱ — (Վերցնում է փողերը ու գնում սեղանին):
Հեռացե՛ք, ասում եմ:

Ներս է մտնում Գալչիխա:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Յ

Օտրադինա, Մուրով, Գալչիխա, հեռա Աննազկա:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչո՞ւ ես եկել, Արխիպոսովնա:

ԳԱԼՉԻՅԱ — Ձեր հոտնից, տիրուհի:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչո՞ւ ես երեխային մենակ թողել: Ինչո՞ւ ես
քաղաքում:

ԳԱԼՉԻՅԱ — Ախր, տիրուհի (զոզմոզով սրբում է արցունե-
ները), երեխան...

ՕՏՐԱԳԻՆԱ — Ի՞նչ է, ի՞նչ է եզել:

ԳԱԼՉԻՅԱ — Մեռնում է, տիրուհի:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ինչպե՞ս: Ի՞նչ: Աննազկա՛, Աննազկա՛:

Այ դո՛ւնից ներս է գալիս Աննազկան:

Շուլո, շալս տալու հետապ վազիք կառք քեզ:

ԳԱԼՉԻՅԱ — Ես հենց կառքով եմ եկել:

Աննազկան գնում է:

ՕՏՐԱԳԻՆԱ — Ի՞նչ է պատահել, ի՞նչ: Խոսիր, աստու ու սի-
րուն: Երեկ նա առողջ էր:

ԳԱԼՉԻՅԱ — Հանկարծ եղավ, տիրուհի... Խոխացրեց, խըռ-
խըռացրեց ու լրիվ սևացավ:

ՕՏՐԱԳԻՆԱ — Բժի՛շկ, շտապ բժիշկ կանչե՛ք:

ԳԱԼՉԻՅԱ — Բժիշկը տանն է, տիրուհի: Չեմառվոյի բժիշկն
էր գյուղ եկել, նրան էլ կանչեցի: Նա՛ է ինձ ուղարկել:

ՕՏՐԱԳԻՆԱ — Իսկ ի՞նչ է ասում:

Ներս է մտնում Աննազկան շար ձեռքին:

ԳԱԼՉԻՅԱ — Վատ է, ասում է, ամենավատագավոր հիվան-
դուժյունն է: (Սրբում է արցունքները): Մի ժամ էլ,
ասում է, չի ապրի:

ՕՏՐԱԳԻՆԱ — Այ, այ... (Շալով փարսփում է): Վաղե՛նք,
վաղե՛նք: (Մուրովին): Դե, հիմա դուք լրիվ ազատ եք:

ՄՈՒՐՈՎ — Ես կգամ ձեր ետևից: (Գնում են):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՉԻՆԵ

ՅԼԵՆԱ ԽՎԱՆՎԱՆ ԿՐՈՒԳՆԻՆԱ — զավտական հայտնի
դերասանուհի:

ՆԻՒ ՄՏՐԱՅԱՆԻԳ ԳՐԻԳՐԻՆ — հարուստ պարոն:

ՆԻՆԱ ՊԱՎԼՈՎՆԱ ԿՐԻՆԿԻՆԱ — դերասանուհի:

ԳՐԻԳՐԻ ՆԵՋՆԱՄՈՎ } զավտական թատրոնի
չՄԱԳԱ } դերասաններ:

ԱՐԻՆԱ, ԱՐԻԵՊՈՎՆԱ, ԳԱԼՉԻՅԱ:

ԽՎԱՆ — հյուրանոցի սպասավոր:

Լավ կահավորված, բուխարիով մի սենյակ հյուրանո-
ցում: Խորհով՝ միջանցք տանող դուռ: Դերասաններից
դեպի աջ՝ մյուս սենյակ տանող դուռ:

Առաջին և երկրորդ գործողությունների միջև անցնում է
առանցք տարի:

Տ Ե Ա Ր Ա Ն Ա Ո Ո Ջ Ի Ն

Իվանը մաքրում է կահույցի փոշին: Դուրսվի՞ր բացում է դուռը:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — (Դունից): Կարելի՞ է ներս գալ:

ԻՎԱՆ — Համեցե՞ք, տեր իմ, նիլ Ստրատոնիչ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — (Մտնելով մի կապոց ձեռքին): Ելենա Իվանովնան վե՞ր է կացել:

ԻՎԱՆ — Սուրճն էլ են արդեն վերջացրել:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Հարցրու, կարո՞ղ է ինձ ընդունել:

ԻՎԱՆ — Բայց նա արդեն գնացել է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ա՛հ, ափսոս: Իսկ ես նրա համար թեյ եմ բերել, տոնավաճառից նոր են ստացել, և ստերլինտի հատիկավոր խավիար. նա շատ է սիրում:

ԻՎԱՆ — Հասկանալի է: Թույլ տվե՞ք, ես կհանձնեմ աղախներն: Դուք, տեր իմ, նիլ Ստրատոնիչ, սպասեցե՞ք, նրանք շուտով կվերադառնան: (Վերցնում է կապոցը, աջ դրոնից ներս մտնում և անմիջապես էլ վերադառնում):

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ո՞ւր է գնացել Ելենա Իվանովնան, չգիտե՞ս:

ԻՎԱՆ — Նահանգապետի մոտ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ինչո՞ւ:

ԻՎԱՆ — Չեմ կարող ասել, տեր իմ: Պետք է ենթադրել՝ բենեֆիսի գործով, քանի որ դերասաններն ու դերասանուհիները... քանի որ, առաջին հերթին, միշտ էլ հասկանում եք...

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ի՞նչ ես դուրս տալիս: Ի՞նչ բենեֆիս: Բենեֆիսի մասին դեռ խոսք էլ չկա: Բենեֆիսի մասին առաջինը ես եմ իմանում: Ո՞ւմ հետ է գնացել: Ստյոպկայի:

ԻՎԱՆ — Ստյոպկայի, տեր իմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Կողածին դարչնագո՞ւյնն էր:

ԻՎԱՆ — Դարչնագույնը, տեր իմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Լավ է: Թե չէ մի դեղնակարմիր վախկոտն էլ ունի, քամակով խփում է, շարունակ քացի է տալիս: Որ տղամարդու հետ է, ոչինչ, թե չէ կինը փխրուն արարած է: Ներվեր ունեն միայն:

ԻՎԱՆ — Ի՞նչ եք ասում, աստված մի արասցե:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ճաշի համար որե՞կ կանաչեղեն ունե՞ք:

ԻՎԱՆ — Ոչ մի կանաչեղեն էլ չկա: Սալաթ է միայն, այն էլ կարծես կաշի ուտես... Կարծում եք սա խելքը գլխին հյուրանոց է: Չէ՛ մի, քի՞չ հայհոյանք ենք լսում այցելուներից: Բայց մեր մեղքը ո՞րն է, եթե տերը գաղափարից զուրկ մարդ է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դե, ուրեմն, ես ձեզ և՛ սալաթ կուղարկեմ, և ծաղկակաղամբ: Կմատուցե՞ք միայն Ելենա Իվանովնային. ես ձեր հյուրերի կերակրողը չեմ: Խոհարարին այդպես էլ ասա:

ԻՎԱՆ — Լսում եմ: Ձեզ նեղութուն մի տվե՞ք, տեր իմ: Թե որ մեր տերը չգիտի, թե ինչ է հարկավոր լավ հյուրերի համար, իրենից բացի ուրիշ ոչ մեկին էլ վնաս չի գա:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Բայց, ախր, դա խոզութուն է, սիրելի բարեկամ:

ԻՎԱՆ — Հենց էդպես էլ է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Հայտնի դերասանուհի է:

ԻՎԱՆ — Հրամանք ձեզ, էնպես են գովում պարոնները, ուրեմն, որ խելքները իրենցը չէ...

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Չե՞ր հյուրանոցի տիրոջ հետ ես գործ չունեմ. մեր քաղաքի համար է ամոթ, մենք նրա բնակիչներն ենք: Մի ուրիշ նահանգական քաղաքում Ելենա Իվանովնան կպատմի, որ ոչ տեղավորել, ոչ էլ կերակրել էին կարողանում. հաճելի՞ կլինի մեզ համար:

Ներս է մտնում Կորեկի՞նան, Իվանը գնում է:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Պ

Դուրսվի՞ճ և Կորեկի՞նա:

ԿՈՐԵՆԿԻՆԱ — Ա՛հ, դուք այստե՞ղ եք: Դե, իհարկե, էլ ուրիշ որտե՞ղ պետք է լինեիք:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ա՛հ, սիրունիկս:

ԿՈՐԵՆԿԻՆԱ — Դա՞ ինչ բան է՝ «սիրունիկս»: Ի՞նչ ընտանեկարութուն է: Ծա ա՛նուն ու հայրանուն ունեմ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Թույլ տվեք զեկուցել ձեզ, Նինա Պավլովնա, որ իզուր եք զայրանում: Ես նույնիսկ պարտավոր եմ այստեղ լինել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ասացե՛ք խնդրեմ: Պարտավոր է: Այդ ինչո՞ւ թույլ տվեք հարցնել:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Հայտնի դերասանուհի է եկել. նա առաջին անգամն է մեր քաղաքում, այստեղ ոչ մեկին չի ճանաչում: Ես, որպես տեղի մտավորականությունից ներկայացուցիչ...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ահ, թողեք այդ հիմարությունները: Ի՞նչ մտավորականություն: Պարզապես նոր փեշ է հայտնուվել քաղաքում, դուք էլ զուխներդ կորցրել եք: (Միծաղելով): Պարտականություններ: Հիանալի պարտականություններ են:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Խանդո՞ւմ եք, անգինա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ձե՞զ խանդեմ: Միծաղելի բաներ մի ասեք, խնդրում եմ: Ես ուղղակի ամաչում եմ ձեր փոխարեն. հենց որ կին եք տեսնում՝ բերաններդ բաց է մնում: Զզվելի է:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Դուք հենց դրա համար եք եկել այստեղ, իմ երջանկություն:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Նորից՝ ռիմ երջանկություն: (Ուռլը խփում է հատակին): Հսեք, խնդրում եմ: Հիմա ինձ մոտ մի քանի դերասաններ են հավաքվելու. մենք ուզում ենք լրջորեն խոսել մի գործի մասին, և դուք պետք է ներկա լինեք: Ես ձեզ ամեն տեղ փնտրել եմ, քաղաքը ոտնատակ եմ տվել:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Այդ ի՞նչ կոնգրես է հավաքվում և ի՞նչ հարց է քննարկելու:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Լսե՛լ եք, թե երեկ ինչ է արել Նեզնամովը:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ոչ միայն լսել եմ, այլև համարյա ներկա եմ եղել այդ ուսանելի ներկայացմանը. մի քիչ ուշացա՞ր, որի համար շատ ցավում եմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — ԲուՖետում, ներկայացման ժամանակ ծեծել է Մուխոբուհին:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Եվ շատ էլ լավ է արել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Բայց, Մուխոբուհն, ախր, պատվական մարդ է, քաղաքացուի էր ուզում դառնալ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ինքը, իհարկե, կուզենա: Իսկ հասարակությունը կուզենա՞:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Բայց չէ՞ որ դա բենեֆիտի ժամանակ երկու օթյակ է դատկոնում և մի քանի բազկաթոռ: Հիմա նա ոտք էլ չի դնի թատրոն: Մենք էլ, ահա, պատրաստվում ենք նամակ գրել Մուխոբուհին, որ Նեզնամովին մենք մեզ ընկեր չենք ճանաչում և անտրեպրենյորից կպահանջենք, որ ազատի նրան պաշտոնից: Ես ինքս էլ վերջապես, չեմ ուզում, որ Նեզնամովն ինձ հետ միասին ծառայի:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Իսկ դուք ինչո՞ւ եք այդքան զայրանում նրա մրա, սքանչելիս:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ահ, նա անտանելի է, անհանդուրժելի: Նա սուր ու շար լեզու ունի և շատ վատ բնավորություն. հենց որ դերասանները միասին հավաքվում են և, մանավանդ, եթե նա մի բաժակ ավել է կոնժած լինում, սկսում է ու էլ վերջ չկա... որևէ մեկից անպայման կպշիւու է: Իսկ կանանց ինչե՞ր է ասում: Անտանելի է, անտանելի: Տեղնուտեղն ուղղակի կսպանելի նրան:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Եթե վիրավորում է ձեզ, սուտ բաներ է հորինում ձեր մասին, դուրս է տալիս, դրա համար իսկապես որ արժե սպանել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Բայց ընդունենք, թե չի հորինում, թող որ ճիշտ է ասում, ինչի՞ համար է այդ բոլորը: Ո՞վ է խնդրում: Նա խմբում ամենաչափահիս է, ինչ է՞ նա պետք է մյուսներին խեղճ սովորեցնի: Մենք հավաքվում ենք, որ ուրախ ժամանակ անցկացնենք, և ոչ նրա համար, որ լսենք նրա քարոզները: Իմացածը թող իրեն պահի: Նա միայն թունավորում է մեր ընկերությունը: Ինչքան ուրախ կլինեմ, եթե նրանից ազատվենք: Այդքան ջահել, համարյա թե երեխա, և այդքան դյուրագրգիռ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Գրգռել են, և նա էլ դյուրագրգիռ է դարձել: Իսկ մի հարցրե՞ք՝ կյանքը քա՞ղցր է նրա համար:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Մի պաշտպանեք, խնդրում եմ: Դուք կմնաք այստեղ, իհարկե: Տալիս եմ ձեզ կես ժամ կրուչինինա-

յի հետ զրուցելու համար, բայց, կարծում եմ, քառորդ ժամն էլ բավական է: Հետո խանութից կվերցնեք կոշիկներս, հրուշակեղենից կոնֆետ կգնեք և ժամը տասներկուսին ինձ մոտ կլինեք՝ ո՛չ շուտ, ո՛չ ուշ: Լսո՞ւմ եք՝ տասներկուսին: Եթե թեկուզ հինգ րոպե ուշացաք՝ դուռս փակ կլինի ձեր առաջ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Եվ երկա՞ր ժամանակով:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Մեկընդմիջտ: Ես ձեզ հետ խոսքով ընկա, իսկ Միլովզորովն ինձ սպասում է կառքում:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Առանց ուղեկցողի յուր չե՞ք գնում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչ է՞ խանդո՞ւմ եք: Դա՞ ինչ նորութիւն է նա մեր առաջին սիրեկանն է թատրոնում, մենք նրա հետ ամեն օր սեր ենք բացատրվում, ժամանակն է, որ վարժվեք դրան:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Բեմի վրա թող ձեր սիրեկանն էլ մնա: Իսկ որպես ուղեկցող, ավելի լավ է, կոմիկների վերցրեք, նրանց հետ ավելի ուրախ կլինի:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ուրախութիւնը ձեզ է շատ պետք, դուք դատարկ բաներով եք միայն զբաղվում, իսկ ես լուրջ կին եմ: Չեզ ասվեց, ուրեմն, ժամը տասներկուսին, և վերջ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Դե ի՛նչ, թո՛ած կգամ:

Կորեկիբան գնում է: Մտնում է Իվանը:

Տ Ե Ա Ս Ր Ա Ն Ե Ր Ր Ո Ր Ղ

Դուգուկին, Իվան, հետո Կուլիբինա:

ԻՎԱՆ — Ելենա Իվանովնան եկավ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Շատ լավ:

Մտնում է Կուլիբինա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Նիլ Ստրատոնիչ, շատ ուրախ եմ, որ այստեղ եք: Ներեցեք, մի րոպեով ձեզ մենակ եմ թողնում, միայն գլխարկս հանեմ:

ԻՎԱՆ — էստեղ, ուրեմն, դերասանները ձեզ երկու անգամ հարցրին:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ի՞նչ դերասաններ:

ԻՎԱՆ — Լավերից, էնպես՝ առաջին տեսակի շեն...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ որտե՞ղ են հիմա:

ԻՎԱՆ — էստեղ են, բիլիարդ են խաղում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Լավ, թող խաղան. հետո ներս կհրավիրես (Մտնում է աջ կողմի սենյակը):

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ամոթ է, եղբայր, դերասաններին էլ չես ճանաչում:

ԻՎԱՆ — Անուններն ի՛նչ էր... Դրանք էլ... Հիշում էի է, մոռացա: Մեկն էլ դեռ ուրիշի վերարկուով է՝ վրան մեծ, բոյով մարդու է եղել:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Շմադա՞ն:

ԻՎԱՆ — Նա է, որ կա:

Մտնում է Կուլիբինա: Իվանը գնում է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ամոթ չէ՞, Նիլ Ստրատոնիչ: էլի նվերներով եք եկել. դուք ինձ շատ եք երես տալիս: Ճիշտ եմ ասում, խիղճս տանջում է. օրը մի բան, այսօր էլ թիչ, խավիար եք բերել:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Որն է բանով պիտի սնվե՞ք, թե՞ ոչ. մեր հյուրանոցը վատ վիճակում է: Իսկ սրանք մանր-մունր բաներ են՝ թեյն ու խավիարը, մեր բոլոր ծաղկեփնջերն ու դափնիները: Դրանց մասին խոսել էլ չարժե: Այդ ամենը շնչին հատուցում է այն երջանկության, այն վայելքի դիմաց, որ դուք մեզ եք պարգևում ձեր տաղանդով:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Բոլորն ասում են, որ դուք շատ բարի մարդ եք:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Դա իմ մեջ կա, միայն թե ժառանգական է. ծնողներիցս է անցել, ես դրանում ոչ մի վաստակ չունեմ: Եվ ոչ էլ այնքան կարևոր է այդ շնորհքը: Եթե բարութիւն էլ չլիներ մեջս, էլ ինչի՞ էի պետք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Չէ, դա լավ, շատ լավ հատկութիւն է:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Էժանագին է, ինձնից ոչ մի ջանք չի պահանջում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Հենց դրանով էլ թանկ է:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Թող ձեր ասածը լինի, չեմ համարձակվի վիճել: Ես սահմանափակ մարդ եմ, ոչ մի բանի, նույնիսկ տնտեսության մեջ շնորհք չունեմ, և՛ որպեսզի բուլտրովին անգործ չմնամ, ինձ համար մասնագիտություն եմ ընտրել՝ քաղցրացնել դերասանների կյանքը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Եվ դերասանուհիների՞:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Եվ դերասանուհիներին: Թեկուզ մեր քաղաք, ասենք, թատերական խումբ է գալիս զվարճացնելու բացարձակապես ոչինչ չանող, ոչնչով չհետաքրքրվող և ոչ մի ցանկություն չունեցող մարդկանց, և ստիպված է լինում, ինչպես ասում են, ջուր ծեծել: Մինչդեռ մեր քաղքենիները մեծ մասամբ պատկառելի, ծանրակշիռ, հարուստ, բարեգործ, լրջմիտ, նույնիսկ առաջնակարգ մարդիկ են:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Էլ ի՞նչ եք ուզում:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Բայց բարքերի ու մտավոր զարգացման տեսակետից դեռևս գտնվում են նախնական տգիտության մեջ և դրամատիկական արվեստի գոյություն մասին շատ աղոտ պատկերացում ունեն: Իսկ դերասաններն, ահա, ապահովված ժողովուրդ չեն, եվրոպացիների լեզվով ասած՝ պրոլետարներ, իսկ մերով, ռուսերենով՝ երկնային թռչուններ. որտեղ կորեկ կա թափված՝ կտցում են, որտեղ չկա՝ սոված են մնում: Էլ ինչպե՞ս չխղճաս նրանց:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ դեպի դերասանուհիներն եք մղվում, կարծում եմ, ոչ միայն խղճահարությունից դրդված:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Այո՞, այո՞: Միանգամայն իրավացի եք: Աստվածային որևէ բան մեջս չկա, իսկ մեղք՝ ինչքան ասեք: Սովորական ծերուկ եմ, շարքային, իմ նմաններին ամեն քայլափոխի կհանդիպեք: Նահանգապետի՞ն եք բարեհաճել այցելել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո, շնորհակալություն հայտնելու էի գնացել: Երեկ ներկայացման ժամանակ թատրոնի բուֆետում ինչ-որ սկանդալ է եղել, որի համար դերասան

Նեզնամովին են մեղադրում: Անտրեպրենյորը հուզված ներս վազեց իմ հանդերձասենյակ և հայտնեց, որ Նեզնամովին վտանգ է սպառնում, որ նա մեր խմբում է միայն նահանգապետի ներողամտության շնորհիվ: Նահանգապետն արդեն սպառնացել է վտարել նրան քաղաքից, եթե սկանդալներ սարքի, ինչպես առաջնորդում, և բացի այդ, նրա անձնագիրն էլ տեղը տեղին չէ: Ներկայացումից հետո նահանգապետը եկավ բեմ. այնտեղ էլ ես Նեզնամովի համար բարեխոսեցի: Նա ասաց, որ Նեզնամովին դաս տալ է պետք, բայց որ ես եմ միջնորդում, պատրաստ է անհետևանք թողնել, էթե ամեն ինչ լավ վերջանա: Խաղաղ էլ, կարծես, վերջացել է: Ասացեք, խնդրեմ, այդ ինչ պատմություն է, և ի՞նչ մարդ է այդ Նեզնամովը: Նա, որքան գիտեմ, դեռ շատ երիտասարդ է:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ես կշարադրեմ ձեզ նրա համառոտ կենսագրությունը, ինչպես ինքն է ինձ պատմել: Ո՛չ հորը, ո՛չ մորը նա չի հիշում և չի ճանաչում, մեծացել ու դաստիարակվել է մեր կողմերից շատ հեռու, համարյա Սիբիրի սահմանների մոտ, անզավակ, բայց աստիճանավորների աշխարհից ինչ-որ հարուստ ամուսինների ընտանիքում, որոնց նա երկար ժամանակ իր ծնողներն է համարել: Նրան սիրել են, նրա հետ լավ են վերաբերվել, շնայած զղայնացած ժամանակ չեն քաշվել՝ երեսով են տվել նրա ապօրինի ծագումը: Իհարկե, ծնողների ասածի իմաստը նա սկզբում չի ըմբռնել, հասկացել ու գնահատել է հետագայում միայն: Նրան նույնիսկ ուսման են տվել. հաճախել է ինչ-որ էժանագին պանսիոն և ստացել գավառական դերասանի համար բավականաչափ լավ կրթություն: Այդպես, նա ապրել է մինչև տասնհինգ տարեկանը, հետո սկսվել են տառապանքները, որոնց մասին նա առանց ցավի հիշել չի կարողանում: Աստիճանավոր հերացուն մահացել է, իսկ այրին ամուսնացել է մի պաշտոնաթող հողաչափի հետ: Սկսվել են անվերջ հարբեցողությունները, վեճերն ու կոիվները, և դրանցից ամենից շատն իրեն է բաժին ընկել: Նրան խոհանոց են քշել և կերպարել աղախնի

հետ միասին, գիշերները հաճախ նրան դուրս են արել տանից, և ստիպված է եղել գիշերել բաց երկնքի տակ: Իսկ երբեմն էլ ինքն է փախել հայհոյանքից ու ծեծկրտուփից: Եվ այդ ժամանակից սկսած, ամօթալի հայհոյանքից բացի, նա ուրիշ խոսքեր չի լսել մարդկանցից: Այդ կյանքից նա շարացել ու գազազել է այն աստիճան, որ սկսել է գազանի նման կծել մարդկանց: Ի վերջո, մի գեղեցիկ օր, նրան մեկընդմիջտ են քշել տանից. այդ ժամանակ նա միացել է ինչ-որ թափառական թատերախմբի և նրա հետ փոխադրվել մեկ այլ քաղաք: Այնտեղից նրան, օրինական գրանցում չունենալու պատճառով, էտապով ետ են ուղարկել իր բնակության վայրը: Փաստաթղթերը կորցրած է եղել. տարել-բերել են, ի վերջո, տվել ինչ-որ ապրելու արտոնագրի պատճեն, որով և նա անտրեպրենյորների հետ քաղաքից քաղաք է շրջել, մշտական վախը սրտում, որ ամեն րոպե ոստիկանությունը իրեն ետ կուղարկի սկզբնական բնակավայրը:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Անունը Գրիգորի՞ է...

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Այո, Գրիգորի է:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Իսկ քանի՞ տարեկան է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Մոտ քսաներեք:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Պակաս չի՞:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Պակաս լինել չի կարող: Իսկ ինչո՞ւ է դա ձեզ հետաքրքրում:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այնպես, որոշ զուգադիպություն կա... Բայց դուք ուշադրություն մի դարձրեք. երեպկայական խաղ է: Կներեք, որ ընդհատում եմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ինչ վերաբերում է երեկվա պատմությանը՝ սովորական բան է, այդպիսի պատմություններ մեզ մոտ հաճախ են պատահում: Երեկ մեր հարգելի քաղաքներից մեկը՝ Մուխոբուր, այնպես էր ոգևորվել ձեր խաղով, որ առաջին գործողությունից իսկ սկսել էր կոնծել: Ազմկել էր բուֆետում, սկսել սրան-նրան կպչել, հյուրասիրել բոլորին, համբուրել: Նեղնամովն էլ է այնտեղ լինում, նրան էլ է բաժին հասնում: Նեղնամովը գլխացավանքից ազատվելու համար ուզում է

հեռանալ բուֆետից, այդ ժամանակ Մուխոբուրը սկսեց է հայհոյել ու անպատվել Նեղնամովին ամենավիրավորական խոսքերով:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Բայց ինչո՞ւ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Նրա համար, որ Նեղնամովը հրաժարվել է: Ես, ասում է, նրան պատիվ եմ անում, ուզում եմ հետ խմել, իսկ նա, այդ ընկեցիկը, դեռ համարձակվում է հրաժարվել:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — «Ընկեցիկը» ո՞րն է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ուրիշի դռանը, ուրիշի ցանկապատի տակ նետված երեխա:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ի՞նչ հիմարություն: Մի՞թե դեռ մարդիկ կան, որ իրենց թույլ են տալիս նման արարքներ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դժբախտաբար դեռ շատ կան: Այդ վիրավորանքին հետևեց արժանի հատուցումը. հարգարժան Մուխոբուրից Նեղնամովը ծեծած կոտլետի նման մի բան սարքեց: Սկզբում Մուխոբուրը կատաղել էր, ուզում էր բողոքել, ուզում էր Նեղնամովին Սիբիր ուղարկել, բայց բարի մարդիկ համոզեցին, և ամեն ինչ վերջացավ հաշտությունում ու կերուխումով: Բայց ահա աղմուկի վրա հայտնվեց ոստիկանությունը, և բանը շատ վատ կվերջանար Նեղնամովի համար, եթե չլինեք ձեր միջամտությունը: Իսկ ինչպե՞ս էիք երեկ խաղում: Զարմանալի չէ, որ մարդիկ հիացմունքից հարբում են: Ի՞նչ ճիշտ էիք արտահայտում մոր զգացմունքները:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Էլ ինչո՞ւ եմ դերասանուհի, նիլ Ստրատոնիչ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Բայց վիճակը ճիշտ ներկայացնելու համար զգալ է պետք, վերապրել, եթե ոչ նույնը, ապա գոնե նման մի բան:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ահ, նիլ Ստրատոնիչ, ես այնքան եմ ապրել ու զգացել, որ հազիվ որևէ դրամատիկական վիճակ նորություն լինի ինձ համար:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ուրեմն դափնիներն այնքան էլ էժան չեն տրվում:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Նախ վիշտն ու արցունքն են լինում, հետո նոր միայն՝ դափնիները:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Բայց մար զգացմունքները, այդ բուն սերը որդու նկատմամբ, այդ հուսահատութիւնը...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես էլ եմ մայր եղել, իմ որդին էլ է մահացել, ինչպես լեզի Միքելսֆիլդինը¹, որի դերը երեկ խաղում էի: Միայն թե իմ որդին երեսա ժամանակ է մահացել: (Մտում է արցունքներ):

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ահա, ձեզ էլ լացացրի, ներեցեք, խնդրում եմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ոչինչ, երբեմն լացելն էլ լավ է. ես հիմա այնքան էլ հաճախ լաց չեմ լինում: Ես նույնիսկ շեքահակալ եմ ձեռնից, որ անցյալի հիշողութիւններ արթնացրիք իմ մեջ. դրանցում դառը բան շատ կա, բայց այդ դառնութիւն մեջ էլ հաճելի բան կա ինձ համար: Ես հիշողութիւններից չեմ փախչում, ես դիտմամբ արթնացնում եմ դրանք իմ մեջ: Իսկ թե լաց եմ լինում, ոչինչ, կանայք սիրում են լացել: Ես երեկ շրջեցի ձեր քաղաքում. քիչ է փոխվել, ծանոթ շենքերի և նույնիսկ ծառերի հանդիպեցի, շատ բան հիշեցի իմ հին կյանքից, և՛ լավ, և՛ վատ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ուրեմն դուք մեր քաղաքում առաջին անգամ չե՞ք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ո՛չ, ես այստեղ եմ ծնվել, այստեղ անցկացրել գրեթե ողջ երիտասարդութիւնս: Սկզբում ուզում էի շրջանցել այս քաղաքը՝ ինձ սպասում են Սարատովում ու Ռոստովում, բայց ձեր անտրեպրենյորն իմացել էր, որ անցնելու եմ այս կողմերով, և համոզեց մի քանի ներկայացում տալ, որ ժողովուրդ հավաքի, չեն գալիս թատրոն, և ես չեմ զղջում մնալուս համար:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Վաղո՞ւց եք թողել այս քաղաքը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ուղիղ տասնյոթ տարի առաջ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ծանոթներից ու հարազատներից ոչ մեկին չհանդիպեցի՞ք, ոչ ոք ձեզ չճանաչե՞ց:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Հարազատներ չունեմ. համեստ էի ես ապրում, ծանոթութիւն գրեթե չունեի, այնպես որ ճանա-

չող էլ չունեմ: Երեկ ես անցա այն տան մտտով, որտեղ ապրում էի, կառքը կանգնեցրի և հանգամանորեն դիտեցի բոլորը՝ սանդղամուտքը, լուսամուտները, փեղկերը, ցանկապատը, նույնիսկ պարտեզ մտա: Աստված իմ, գլխումս տարբեր որքան հիշողութիւններ առկայծեցին: Զափից ավելի ուժեղ է, կարծես, երեակայութիւնս՝ ի վնաս բանականութիւնս:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Դա արատ չէ, կանանցից շատերն են այդպիսին:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ինձ համար ոչինչ շարժե մտովի տասնյոթ տարի ետ քնալ, երեակայել, թե նստած եմ իմ բնակարանում, աշխատում եմ. հանկարծ տխրութիւն է իջնում վրաս, վերցնում եմ շալը, գցում վրաս և վազում տղայիս տեսնելու: Խաղում եմ հետը, խոսում: Ես նրան կենդանի տեսնում եմ աչքիս առաջ: Դա երեկ նրանից է, որ նրան մեռած չեմ տեսել, չեմ տեսել դագաղում, գերեզմանում:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ինչպե՞ս եղավ: Կներեք, որ ձեզ անկեղծութիւն եմ կոչում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես ձեզ հետ անկեղծ լինելուց չեմ վախենում. դուք այնքան փաքի եք: Ահա թե ինչպես պատահեց. ինձ ասացին, որ որդիս հիվանդացել է հենց այն նույն ժամանակ, երբ ես իմացա, որ նրա հայրը ինձ դավաճանում է և թաքուն ամուսնանում մեկ ուրիշի հետ: Ես առանց այդ էլ ցնցված էի ու ջախջախված, և ահա՛ երեսայի հիվանդութիւնը: Ես նետվեցի նրա մոտ և երեսային տեսա արդեն անկենդան. իմ առջև կապտած մի դիակ էր, շնչառութիւն արդեն չկար, հագիվ միայն խոխոտց էր լսվում փոկորդում: Ես գրկեցի, համբուրեցի և ուշագնաց ընկա: Այդպես ուշագնաց էլ ինձ տուն հասցրին, իսկ երեկոյան սկսվեց ծանր դիֆթերիա: Ամիս ու կես պառկեցի և դեռ հագիվ էի ոտքի վրա կանգնում, երբ իմ տատը, իմ միակ ու հեռավոր ազգականուհին, ինձ իր մոտ՝ գլուղ տարավ: Այնտեղ ինձ, ի վերջո, նամակով տեղեկացրին, որ տղաս մահացել է, ֆաղել է նրան հայրը, որ մանկիկը հիմա երկնքում է, և աղոթում է ծնողների համար: Հետո մենք տատիկիս

¹ Միքելսֆիլդ — Կ. Գուցկովի «Թիշորդ Սեֆեր» դրամայի գլխավոր հերոսների:

հետ Ղրիմ գնացինք, որտեղ նա մի փոքրիկ կալվածք ուներ, և այնտեղ երեք տարի ապրեցինք լրիվ մենու-
թյան մեջ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Իսկ ձեր հետագա՞ կյանքը:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Դա այնքան էլ հետաքրքրական չէ: Տատի-
կիս հետ շատ ճամփորդեցի, ապրեցի արտասահմա-
նում և՛ բավական երկար: Հետո նա մահացավ և ինձ
թողեց ժառանգության մեծ մասը: Ես դարձա բավա-
կանին հարուստ և բացարձակապես անկախ, բայց ձանձ-
րույթից չգիտեի ինչ անել: Մտածեցի, մտածեցի ու
դարձա դերասանուհի: Խաղում էի մեծ մասամբ հարա-
վում, այս կողմերում ոչ մի անգամ չեմ եղել: Եվ ահա
պատահականորեն այստեղ եկա ու պարզորոշ հիշեցի
և՛ պատանեկությունս, և որդուս, որի համար և, ինչ-
պես տեսնում եք, լալիս եմ. ախր ես տարօրինակ կին
եմ, զգացումը լիովին տիրում է ինձ, գերում է ամբող-
ջությամբ, հաճախ ընկնում եմ հալլուցիանացիայի մեջ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Բուժվել է պետք, Ելենա Իվանովնա, հիմա
երևալության դեմ բավականին արդյունավետ դեղամի-
ջոցներ կան և հաջողությամբ ներգործում են:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ես չեմ էլ ուզում բուժվել, ինձ հաճելի է
իմ հիվանդությունը: Ինձ հաճելի է ոգեկոչել որդուս
պատկերը, հաճելի է խոսել նրա հետ, հաճելի է մտածել,
որ նա կենդանի է: Երբեմն ես մի տեսակ վախով, մի
տեսակ դողերոցքով սպասում եմ, որ ահա նա կմտնի
իմ սենյակը:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Բայց որ մտնի էլ, դուք նրան, միևնույն է,
չեք ճանաչի:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ո՛չ, ինձ թվում է, կճանաչեմ, սիրտս կվը-
կայի:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Դուք ախր երեխա եք պատկերացնում, իսկ
նա հիմա, եթե կենդանի լիներ, քսան տարեկան կլի-
ներ: Դե պատկերացրեք, որ ձեր երազանքներն իրա-
կանացի են, որ դուք տեսնելու եք ձեր որդուն... Ահա
ձեզ ասել են, որ հիմա նա կմտնի այստեղ...

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ա՛հ, ա՛հ, (Ձեռներով ծածկում է դեմքը):

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Դուք պատկերացնում եք ժպտացող, հրեշ-

տակային մի դեմք՝ սպիտակ, մետաքսյա խոպոպիկներով:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Այո՛, այո՛, մետաքսյա խոպոպիկներով:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Եվ հանկարծ ներս է ընկնում նեղնամովի
նման գիսախոլ մի դատարկապորտ, էժանագին գլա-
նակի ու կոնյակի խառը բուրմունքով:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ա՛հ, ո՛չ: Ա՛հ, բավական է, վե՛րջ տվեք
Այդպիսի կատակ չեն անի:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ես չեմ էլ կատակում, ես ձեզ ասում եմ
բացարձակ ճշմարտությունը: Չի կարելի, Ելենա Իվա-
նովնա, մտածել և արցունք թափել տասնյոթ տարի
առաջ եղածի համար, վնասակար է: Շատ եք տանը
նստում, ձեզ զվարճանալ է պետք, ավելի ուրախ կյանք
է պետք վարել: (Նայելով ժամացույցին): Ա՛յ, ա՛յ,
շատ երկար զբաղեցրի ձեզ: (Ոտքի է կանգնում, նայե-
լով բուխարիկին): Տեսնում եմ, այցելուներ շատ եք
ունեցել:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Այցետոմսեր են միայն: Իվանը բուխարի-
կի վրա է շարում, իսկ ես համարյա ոչ մեկին չեմ ըն-
դունում:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — (Նայելով մի այցետոմսի): Գրիգորի կվովիչ
Մուրով:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ի՞նչ... Ի՞նչ ասացի՞ք:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Մուրով, Գրիգորի կվովիչ: Եթե առաջ նրան
ճանաչել եք, հիմա չեք ճանաչի: Ազդեցիկ պարոն է դար-
ձել, սարսափելի հարստացել է, հիմա նահանգի հիմ-
նական գործավարներից մեկն է: Ցտեսություն, կատա-
րելագույն տիկին: (Համբուրում է Կրուչինինայի ձեռքը):
Այդպես էլ ձեզ կոչելու եմ՝ կատարելություն:

ԿՐՈՒԳՐԻՆԻՆԱ — Ցտեսություն, նիլ Ստրատոնիչ:

Դուպլիկեթ գնում է:

Իվա՛ն:

Մտնում է Իվանը:

Տանը կլինեմ, շեմ լինի, երբեք չընդունես Մուրովին, խո՞ւմ ես:

ԻՎԱՆ — Խու՞մ եմ: (Գնում է):

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մուրովը հարստացել է, ազդեցիկ պարոն, կարևոր դեմք է դարձել նահանգում, իսկ որքան խեղճ, գլուխը կորցրած, որքան ողորմելի էր մեր վերջին հանդիպման ժամանակ, երբ նրան դուրս արի իմ բնակարանից: Այդ բոլորն այնքան պարզ աչքիս առաջ է, կարծես երեկ է տեղի ունեցել: Այդ խոսակցության նախօրյակին ես այցելել էի Գրիշալին: (Զեռհերով փակում է աչքերը): Արխիպովնան կանգնած էր նրա հետ լուսամուտի առջև, կիսով շափ ծածկելով նրան շալով: Երբ ես մոտեցա, նա մատիկներով թմբկահարեց ապակին և շալը քաշեց գլխին. հետո նայեց ու ծիծաղեց: Այնպես էր թռչկոտում, որ Արխիպովնան հազիվ էր պահում. ձեռքերն էր թափահարում, թշկեները կարմրել էին: Ահա նա, ահա, կարծես աչքիս առջև է:

Ներս էն մտնում նեզնամով ու Եմագան, սուեղով բուտերոտի վեջին պատուր:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ Ո Ր Ր Ո Ր Պ

Կրուչիևա, Նեզնամով և Եմագա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Վախեցած ետ է քաշվում): Ա՛հ:

ՆԵԶՆԱՄՈՎ — Ի՞նչ է, ինչո՞ւ եք վախենում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ներեցե՞ք:

ՆԵԶՆԱՄՈՎ — Մի վախեցեք, ես ձեր գործընկերն եմ արվեստի կամ, ավելի լավ է ասել, արհեստի: Ի՞նչ եք կարծում՝ արվեստի, թե՞ արհեստի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ինչպես կամենաք: Տեսակետի հարց է:

ՆԵԶՆԱՄՈՎ — Ձեզ, թեթևա, հաճելի է ձեր խաղը արվեստ համարել. մենք դա ձեզ շենք կարող արգելել: Ես, անկեղծ ասած, արհեստ եմ համարում իմ մասնագիտությունը, բավականին ցածրորակ մի արհեստ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իուք այնպես անսպասելի ներս մտաք...

ՆԵԶՆԱՄՈՎ — Մենք այսօր էլի ենք եղել այստեղ...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո, ինձ ասացին:

ՆԵԶՆԱՄՈՎ — Ուրեմն այնքան էլ անսպասելի չէր: Ասում եմ՝ մենք, որովհետև ընկերոջս հետ եմ: Ահա, խնդրեմ Գերասան Եմագա: Կոմիկ կյանքում և շարագործ՝ բեմի վրա: Զկարծեք, թե նա շարագործներ է խաղում. դա նրա ամպլուան չէ: Զանազան դերեր է խաղում և, նույնիսկ, բարեհոգի հայրերի: Բայց, այդուհանդերձ, նա շարագործ է բոլոր այն պիեսների հանդեպ, որոնց մեջ խաղում է: Գլո՛ւխ տուր, Եմագա՛:

Եմագան գլուխ է տալիս:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ի՞նչ եք կամենում, պարոնայք:

ՆԵԶՆԱՄՈՎ — Կամենում ենք խոսել ձեզ հետ: Գուք, իհարկե, կարող եք անմիջապես ձեզ դուրս վճռել, դուք դրա լրիվ իրավունքն ունեք: Մեզ հից մի՛ քաշվեք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ոչ, ինչո՞ւ: Ենորհ արեք, խնդրեմ: Նստեցեք, պարոնայք:

ՆԵԶՆԱՄՈՎ — Նստե՛նք, Եմագա, հազվադեպ են ձեզ այսպես հարգանքով ընդունում:

Նստում են: Եմագան անկաշկանդ փռվում է բազկաթոռի:

Հարցը, ճիշտն ասած, ինձ է վերաբերում, բայց խոսքը Եմագային եմ տալիս, որովհետև նա ավելի պերճախոս է:

ՇՄԱԳԱ — Մենք մեր պատրոնից լսեցինք, որ դուք բեմի վրա խոսել եք նահանգապետի հետ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո՛, խոսե՛լ եմ:

ՇՄԱԳԱ — Գուք բարեխոսել եք Գրիշա Նեզնամովի համար:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո, և նահանգապետը խոստացավ, որ ինքն այս անգամ պարոն Նեզնամովի համար անհաճո ոչ մի միջոց չի ձեռնարկի:

ՇՄԱԳԱ — Բայց ներեցեք, ներեցեք... Ձեզ այդ ո՞վ է իրավունք տվել Գրիշայի համար բարեխոսել: Նա ձեզ չի հրավիրել իր փաստաբանը լինելու:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես չեմ հասկանում, պարոնայք, ի՞նչ եք ուզում ինձանից: Ինձ ասացին, որ պարոն Նեղնամովին մեծ տհաճություն է սպասվում...

ՆԵՋՆԱՄՈՎ — Է, հետո՞ ինչ: Ձե՞ր ինչ գործն է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Բայց եթե ես հնարավորություն ունեմ առանց դժվարությունների մեկին ազատելու տհաճությունից, անպայման կօգնեմ: Ես դա ոչ միայն իմ իրավունքը, այլ պարտականությունը, նույնիսկ պարտքն եմ համարում:

ՆԵՋՆԱՄՈՎ — (Ժպտալով): Երջանկացնել մարդկանց, բարեգործություն անել:

ՇՄԱԳԱ — Ըստ որում, առանց որևէ դժվարության: Ո՛չ, երջանկացրեք ում որ կամենաք, միայն թե (մատով ըսպառնալով)՝ ո՛չ դերասաններին: (Ավելի ազատ է մեկնելով): Դերասանը... հպարտ է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Ոտի կանգնելով): Դե, ինչ արած: Կներեք: Ես անում եմ այն, ինչ իմ խիղճն է թելադրում, ինչ կամենում է իմ սիրտը: Ուրիշ զրդապատճառներ ես չունեմ: Հարկ չեմ համարում արդարանալ. կարող եք իմ մասին մտածել, ինչ ուզում եք:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ես ձեզ առաջարկում եմ վռնդել մեզ: Այդպես դուք ձեզ ավելի հանգիստ կզգաք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Չէ, ինչո՞ւ վռնդել: Ես հիմա ձեզ չեմ վռնդի: Ե՛վ վիրավորանք, և՛ անպատվություն, և՛ ամեն տեսակի վիշտ ես կյանքում շատ եմ տեսել, վարժվել եմ դրան: Ցավալի է ինձ համար, բայց և միաժամանակ հետաքրքիր. ես պետք է իմանամ այն մարդկանց բարքերն ու մտածելակերպը, որոնց հետ բախտ է վիճակվում հանդիպելու: Ասացե՛ք, ասացե՛ք ինձ բոլորը, ինչ որ զգում եք:

ՆԵՋՆԱՄՈՎ — Այո, ես կասեմ: Ահա և դուք արդեն գանձատվում եք, արդեն ցավ եք զգում: Բայց չէ՞ որ ձեզ ծանոթ են նաև ուրիշ զգացողություններ. դուք և՛ քաղցրություն եք ապրել, և՛ հաճույք: Ուրեմն արժե, որ հանուն բազմազանության, ցավ էլ ապրեք: Իսկ պատկերացրեք մեկին, որ ծնված օրից ցավից բացի ուրիշ զգացողություն չի ունեցել, միշտ և ամենուր ցավ է ապրել:

Հողիս այնքան է ցավել, որ ցավ եմ զգում ամեն մի հայացքից, ամեն մի խոսքից: Ցավ եմ զգում, երբ իմ մասին խոսում են, լավ, թե վատ, միևնույն է: Իսկ ավելի եմ ցավ զգում, երբ ինձ խղճում են, երբ բարերարություն են անում: Դա ուղղակի սուր դանակ է սրտիս: Մարդկանցից ես մի բան եմ միայն խնդրում, որ ինձ հանգիստ թողնեն, որ մոռանան իմ գոյության մասին: ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես դա չգիտեի:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե, ուրեմն, իմացեք և այդպես առատորեն մի շոյալեք ձեր բարերարությունները, զգույշ եղեք: Դուք ուզում եք ազատել ինձ արտականների հետ ճամփորդելուց: Դա ձեր ինչի՞ն է պետք: Դուք կարծում եք, որ ինձ ծառայություն մատուցեցիք: Բնա՛վ: Ինձ ծանոթ է այդ զբոսանքը. դրանով ինձ չեք զարմացնի: Աքոռ զնացել եմ, երբ դեռ համարյա երեսա էի, առանց որևէ մեղքի:

ՇՄԱԳԱ — Անձնագիր չունենալու պատճառով: Հետը չի վերցրել ո՛չ անունը, ո՛չ հոր անունը, ոչ էլ գիտես, թե կերտվումի ու զրույցի ժամանակ ինչի տեղ դնես:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ահա տեսնո՞ւմ եք: Սա էլ է ինձ ձեռ առնում: Եվ իրավունք ունի. ես ոչինչ եմ, ամենափոքր մեծությունից էլ փոքր: Իսկ նա ինչ-որ բան ներկայացնում է, միավոր է, կոչում ունի, անձնագիր: Դրանում նշված է. «պաշտոնաթող գրասենյակայինի որդի: Վտարված է գավառական ուսումնարանից վատ վարքի պատճառով: Շարունակել է ծառայությունը որբերի դասարանում որպես պատճենահանող և ազատվել անփութության պատճառով: Եղել է դատի տակ կամլոտե շինելի կորլուտյան գործով և շարունակում է մնալ կասկածելի»: Դե, մի՞թե բախտավոր չէ այսպիսի փաստաթղթի տերը: Նրա անձնագիրը մաքուր է, նա հրջանիկ մարդ է, ուղիղ կարող է նայել մարդկանց աչքերին, յուրաքանչյուրին կարող է ասել, թե ով և ինչ է ինքը: Իսկ ես ի՞նչ: Ուրախանա՞մ, որ ձեր ողորմածությանը այստեղ եմ մնալու, այս խղճով քաղաքում: Թատրոնից ինձ քշում են ու կքշեն. ո՞վ եմ, ի՞նչ եմ ինձնից ներկայացնում: Ազգուտակը մոռացած թափառաշրջիկ, որոշակի զբաղ-

մունքից զուրկ մարդ: Իսկ այդպիսի կոչումով ոչ մի տեղ հնարավոր չէ ապրել, ոչ մի քաղաքում, կամ էլ՝ որտեղ ասես, միայն թե պետական բնակարաններում, այսինքն բանտարկության վայրերում: Ես գող չեմ և այդ գրադունքի նկատմամբ հակում չունեմ: Ավազակ, մարդասպան չեմ, արյունարբու բնագրներ մեզս չկան: Բայց, այնուամենայնիվ, զգում եմ, որ կամքիս հակառակ ինչ-որ գաղտնիքով սրբնթաց բանտ եմ գլորվում: Այդպիսիներից ավելի լավ է հեռու մնալ. բարերարությունը դրանց ավելի է կատաղեցնում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Բայց ախր, ինչո՞ւ, ինչո՞ւ...

ՆԵՋՆԱՄՈՎ — Ահա, օրինակ, ինձ բոլորովին չի հետաքրքրում՝ ապրո՞ւմ եք դուք աշխարհում, թե՞ ոչ, ինձ համար բացարձակապես միևնույն է. մենք օտար ենք իրար, և մեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհով թող գնա: Իսկ դուք վզիս եք փաթաթում ձեր բարերարությունը և պարտադրում շնորհակալ լինել: Դե, ասենք, շնորհակալություն ես ձեզ չհայտնեցի, բայց միևնույն է, բնկերներս ինձ հանգիստ չեն տա: Ոչ մեկը հարմար առիթը բաց չի թողնի հիշեցնելու ինձ ձեր բարերարությունը. «Շնորհակալ եղիր Կրուչինինայից, որ մեզ հետ ես: Կրուչինինան չլիներ, հիմա ո՞վ գիտե ո՞ւր էիր»: Եվ այնպես կձանձրացնեն ինձ, որ ստիպված կստեմ ձեզ: Իսկ դա ես չէի ցանկանա, ես ուզում եմ անտարբեր մնալ ձեր նկատմամբ: Ես հասկանում եմ, որ բարերարություն անելը շատ հրապուրիչ բան է, մանավանդ, եթե ձեր նկատմամբ բոլորը սիրալիր են և ոչինչ չեն մերժում: Բայց միշտ չէ, որ կարելի է շնորհակալություն ակնկալել, երբեմն հանգիստում ես նաև անխորժություն:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Եվ բավականին հաճախ: Ես դա գիտեմ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Եվ չե՞ք հրաժարվում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Երբեք չեմ հրաժարվի, որովհետև բարություն անելու պահանջ եմ զգում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Շատ տարօրինակ է: Լավ կլիներ խաղաղգիծի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Գե, ահա թե ինչ, պարտաւայր: Ես ձեզ համբերությամբ լսեցի. որ իմ ծառայություններ ձեզ տհաճու-

թյուն եմ պատճառել՝ ներողություն եմ խնդրում: Բայց, պարոն Նեզնամով, դուք վատ պատասխանեցիք իմ ներողամտությանը. դուք կարող էիք միայն ձեր գործից խոսել, մինչդեռ թույլ տվիք ձեզ քննարկել իմ արարքներն ու խորհուրդներ տալ ինձ: Դուք դեռ երիտասարդ եք, բնավ կյանքը չեք ճանաչում. մանկությունից ձեզ շրջապատել և դեռ հիմա էլ շրջապատում են վատ մարդիկ: Ընդհանրապես մարդկանց մասին եզրակացություն անելու իրավունք դուք չունեք, որովհետև լավ մարդիկ համարյա չեք տեսել և նրանց մեջ չեք ապրել: Դուք կյանքը տեսել եք միայն...

ՇՄԱԳԱ — Դարպասատակի ճեղքի՞ց:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես դա չէի ուզում ասել:

ՇՄԱԳԱ — Ինչո՞ւ: Չէ, էդպես ավելի լավ է, ճիշտ է:

ՆԵՋՆԱՄՈՎ — Միևնույն է, կարևորը խոսքերը չեն:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես ձեզնից փորձված եմ և ավելի շատ եմ ապրել աշխարհում. գիտեմ, որ մարդկանց մեջ ազնվություն, սեր ու անձնազոհություն շատ կա, մանավանդ կանանց:

ՆԵՋՆԱՄՈՎ — Մի՞թե:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Նման բանի չե՞ք հանդիպել:

ՆԵՋՆԱՄՈՎ — Չի՞ պատահել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Շատ ավստոս:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ ո՞ւր են այդ հազվադեպ նմուշները:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ամենուր, միայն թե՛ փնտրել է պետք: Դրանք հազվադեպ չեն, շատ են: Բայց հեռու գնալ պետք չէ, գիտե՞ք, թե ինչ բան է գթությունը:

ՆԵՋՆԱՄՈՎ — Գիտե՞մ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ի՞նչն է մղում նրանց դեպի զրկանքները, անասելի դժվարություններն ու վտանգը:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ես դա չգիտեմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Եվ ոչ միայն գթության քայրերը, շատ կանայք կան, որոնք իրենց կյանքի նպատակն են դարձրել օգնել որբերին, հիվանդներին, աշխատելու հնարավոր-

րությունից գրկվածներին և ընդհանրապես նրանց, ովքեր տառապում են անմեղ տեղը... Բայց դրանք դեռ ի՞նչ... Այնպիսի սիրող հոգիներ կան, որոնք չեն տարբերում ուրիշի՞, թե՞ իր մեղքով է տառապում մարդը, և որոնք պատրաստ են օգնելու նույնիսկ այնպիսի մարդկանց, նույնիսկ...

ՆեջնԱՄՈՎ — Բառե՞ր եք փնտրում: Ձևականություններ պետք չեն, ասացե՞ք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Նույնիսկ անհույս փշացած մարդկանց: Դուք գիտե՞ք, թե ինչ բան է սերը:

ՆեջնԱՄՈՎ — Վեպերից գիտեմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ձեզ որևէ մեկը սիրե՞լ է:

ՆեջնԱՄՈՎ — Ինչպե՞ս ասեմ... Անկեղծ սիրով՝ ոչ... Ինձ սիրել չի կարելի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ինչո՞ւ:

ՆեջնԱՄՈՎ — Ախր, ինչո՞ւ սիրես անհուսալիորեն փշացած մարդուն: Որ ի՞նչ: Ուղղակի նպատակով: Նախ, ոչ բուրբիս է հնարավոր ուղղել, և երկրորդ՝ ոչ բուրբը թույլ կտան, որ իրենց ուղղեն:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այդպիսի մարդուն էլ կարելի է սիրել:

ՆեջնԱՄՈՎ — Կասկածում եմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մի՞թե գթության քույրերն ամենայն սիրով խնամում են միայն նրանց, ում կարելի է բուժել: Ի՞նչ նրանք է՛լ ավելի մեծ սիրով հոգ են տանում նաև անհուսալիների, անբուժելիների նկատմամբ: Դուք երկի կհամաձայնեք, որ լինում են կանայք, որոնք բարություն են անում առանց որևէ հաշիվների, ազնիվ նկատումներով: Պատասխանեք: Լինո՞ւմ են:

ՆեջնԱՄՈՎ — (Նրկվտելով): Այո՛, լինո՞ւմ են:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այդքանն էլ ինձ բավական է: Դուք գրգռված եք, հուզված. գնացեք հանգստացեք և մտածեք ձեր այդ ասածի մասին:

ՆեջնԱՄՈՎ — Դե, Շմազա, գնացինք: Մենք մեր գործն արեցինք՝ եկանք ու կոպտեցինք մի լավ կնոջ: Մեզնից ուրիշ ի՞նչ կարել է սպասել:

ՇՄԱԳԱ — Կոպտելը քո գործն է, իսկ ես նրբազգաց մարդ եմ: Մեր խոսակցությունը դեռ ի՞նչ: Սա նախաբանն էր մի-

այն, կարևորը դեռ չի ասվել: Ես ուրիշ թեմա ունեմ, տխուր մի մեղեդի: Բայց առանց վկաների ինձ ավելի լավ կզգամ:

ՆեջնԱՄՈՎ — Ո՛չ, ոչ, իմ ներկայությամբ ասա, թե չէ ես քեզ գիտեմ:

ՇՄԱԳԱ — Մադամ, մենք հյուրանոց եկանք խոսելու ձեզ ծանոթ մի գործի մասին, բայց դուք զբաղված էիք: Դե, հասկանում եք, խանդավառ շահելություն, բուֆետ, բիլիարդ... գայթակղություն... և այդ բոլորի հետ էլ դրամական պակասություն: Դուք, իհարկե, գիտեք, թե ինչ է նշանակում աղքատ դերասան: Մի խոսքով, բուֆետում պարտք ենք մնացել:

ՆեջնԱՄՈՎ — (Խիստ): Ի՞նչ, ի՞նչ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մի անհանգստացեք, ես հիմա կուղարկեմ վճարելու: (Նեզնամովին): Չառարկեք, մի զրկեք, խընդրում եմ, ինձ այդ հաճույքից:

ՇՄԱԳԱ — Դե... մերսի: Այդպես էլ պետք է լիներ. դո՛ւք պետք է վճարեիք: Մենք մեղավոր չենք, որ չկարողացաք մեզ ընդունել: Դուանը հո չի՞նք սպասելու... Մենք դերասան ենք, մեր տեղը բուֆետում է:

ՆեջնԱՄՈՎ — Դե, խոսեցիր արդեն, հերիք է: Գնացինք, մա՛րչ:

ՇՄԱԳԱ — Ա՛հ, Գրիշկա, թող: Թո՛ղ, ասում եմ: (Կրուչինի-նային): Բայց ես ձեզ պետք է ասեմ, մադամ, որ հետագա մեր գոյությունն էլ ապահովված չէ: Դուք հուշակավոր դերասանուհի եք, դուք ստանում եք ներկայացման մուտքի համարյա կեսը, մինչդեռ հայտնի չէ, թե ո՞ւմից է կախված հաջողությունը և ով է ժողովուրդ հավաքում՝ դո՛ւք, թե՞ մենք: Այնպես որ չէր խանգարի, եթե մեզ էլ բաժին հանեիք:

Նեզնամովը լուռ ետևից բռնում է Շմազայի օձիքը և տանում նրան դեպի դուռը:

ՇՄԱԳԱ — (Քայլելիս մեկ այս կողմ է շրջվում, մեկ՝ այն): Գրիշա՛, Գրիշա՛:

ՆեջնԱՄՈՎ — (Տանելով նրան մինչև դուռը): Գնա՛:

Շմազան իսկույն անհետանում է:

Տ Ե Ա Ր Ա Ն Գ Ի Ն Չ Ե Ր Ր Պ

Կրուչիբեա և Լեզեամով:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ամաչո՞ւմ եք ձեր ընկերոջ արարքից:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ո՛չ, ինձնի՛ց եմ ամաչում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ ինչո՞ւ եք այդպիսի մարդու հետ ընկերութիւն անում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իմ այս վիճակով ուրիշ ո՞ւմ գտնեմ: Բարոյականութեան տիպար չէ, իհարկեւ, լավագույն ընկերոջն ու բարեբարին մի վայրկյանում կծախի, բայց, որքան ինձ հայտնի է, դերասաններից շատ-շատերը զերծ չեն այդ թուլութիւնից: Իսկ փոխարենը նա ունի անգնահատելի արժանիքներ. նա դաժան սառնամանիքին չի ցրտահարվում թեթեւ վերարկուով, սովից չի տըրտընջում, երբ ուտելիք չունի. չի բարկանում, երբ հայհոյում կամ նույնիսկ ծեծում են: Այսինքն, գուցե և հոգու խորքում բարկանում է, բայց ոչնչով չի արտահայտում իր դայրույթը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Նա ձմռա՞նն էլ է ամառային վերարկու հագնում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ինչ որ տեսաք, դա է նրա ողջ հանդերձանքը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Գրամապանակից տալիս է տասը ռուբլիանոց մի քրթադրամ): Իմ կողմից, խնդրում եմ, հանձնեք նրան:

ՆԵՋՆԱՄՈՎ — Պետք չէ... պետք չէ... Նա անմիջապես խմելու կտա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դե, ինչպես որ կամենա:

ՆԵՋՆԱՄՈՎ — Քամուն տված փող է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Բայց հաճելի կլինի նրա համար:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ի՞նչ խոսք, իհարկեւ, հաճելի կլինի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Երբ պատկերացնում եմ, թե որքան հաճելի կլինի նրա համար, ինքս էլ եմ հաճույք զգում: Սիրում եմ նվիրել: Ահա թե ինչ կխնդրեմ ձեզ: Չե՞ք կորոզ նրա համար մի պատրաստի վերարկու գնել, լա՛վը՞ Փող, ինչքան որ պետք է, կվճարեմ: Նեղութիւն կկրե՞ք:

ՆԵՋՆԱՄՈՎ — Նեղութիւն կրելու ի՞նչ կա: (Գլուխ է տալիս):
ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Յտեսութիւն:

ՆԵՋՆԱՄՈՎ — (Կարճ լուսբանից հետո): Թույլ տվեք համարուել ձեր ձեռքը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ա՛հ, խնդրե՛մ, խնդրե՛մ...

ՆԵՋՆԱՄՈՎ — Այսինքն, պարզում եք որպես ողորմութիւն: Չէ, եթե դուք իմ նկատմամբ զզվանք եք զգում, պարզ ասեք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ո՛չ, ի՞նչ եք ասում, ո՛չ: Ես շատ ուրախ եմ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ախր ես, ըստ էութեան, աղբ եմ, և դեռ՝ ընկեցիկ: (Բռճում է Կրուչիբեայի ձեռքը):

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Դեմքը շրջելով, ցածրածայն): Այդ բառը մի ասեք, լսել չեմ կարողանում:

Նեզեամովը համբուրում է երա ձեռքը: Կրուչիբեան երա գլուխը սեղմում է կրծքին և ամուր համբուրում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում: Ինչի՞ համար:
ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ներեցե՛ք:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դեռ ինքներդ էլ ներողութիւն եք խնդրում:
է՛հ, աստված ձեզ հետ:

Իվանը դնից՝ «Գնա, գնա, ասացի՛ն, որ չի ընդունում»:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Իվան:

Ներս է մտնում Իվանը:

Տ Ե Ա Ր Ա Ն Վ Ե Գ Ե Ր Ր Պ

Կրուչիբեա, Իվան, հետ Գալչիսա:

ԻՎԱՆ — Էստեղ, տիրուհի, մի կիսախելառ ուղևոր է թրև գալիս, ձեզնմաններին զզվացնում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Հիմա մի բան կտամ:

ԻՎԱՆ — Որ տեղն իմացավ, պրծում ըկա: Չէ, ավելի լավ է ճամփեմ: (Գնում է):

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Դռնից դուրս նայելով): Ա՛հ, ո՞վ է սա նա՛ է, նա՛ է: Բե՛ր, ներս բեր դրան, Իվա՛ն:

Մտնում են Իվանն ու Գալչիխան:

Արխիպովնա՛: Ճանաչեցի՞ր ինձ:

ԳԱԼՉԻԻՆԱ — Ինչպե՞ս չճանաչեմ, ձերդ պայծառափայլուն թյուն. անցյալ տարի էլ փայ հանեցիք ինձ ձեր ողորմածությունից, խեղճ ու անտեր պառավիս:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դու նայի՛ր ինձ, լա՛վ նայիր:

ԳԱԼՉԻԻՆԱ — Մեղավոր եմ, տիրուհի, մտահան էի արել. նախանցած տարի, ախր, կոշիկներ նվիրեցիք... Ինչպես չէ, հիշում եմ...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Սա ո՞վ է, Իվան: Անունն ի՞նչ է: Արինա Գալչիխա՛:

ԻվԱՆ — Ինքն է որ կա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Լավ, գնա:

Իվանը գնում է:

Որտե՞ղ թաղեցիր իմ Գրիշկային: (Բռնում է Գալչիխայի ուսերից): Երեխայի՛ս, որդո՛ւս:

ԳԱԼՉԻԻՆԱ — Էդ գործը թողել եմ, տիրուհի, տասնհինգ տարի կլինի, թողել եմ: Մի ժամանակ էրեխեք էի վերցնում, փող էի վերցնում. առո՞ք-փառո՞ք ապրում էի: Իսկ հիմի աղքատ եմ, անտեր-անտիրական:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մի երեսիս նայիր, լա՛վ նայիր:

ԳԱԼՉԻԻՆԱ — Տեր աստված... էդ դուք եք... ո՞նց թե... Լյուբով Իվանովնա՞ն եք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո՛, ե՛ս եմ, ե՛ս եմ, ես ինքս...

ԳԱԼՉԻԻՆԱ — Ինչպես չէ, հիշում եմ, իմ բարի տիրուհի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դե, գնանք գերեզմանը տեսնենք, գնա՛նք:

ԳԱԼՉԻԻՆԱ — Ո՛ւր, տիրուհի, ի՞նչ գերեզման:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Որդի ունեի, հիշո՞ւմ ես, որդի:

ԳԱԼՉԻԻՆԱ — Հա, հա, տղա էր, հաստատ... Անունն ի՞նչ էր... էրեխեք շատ ունեի, շատ: Գեներալ Բիստրովին հիշո՞ւմ եք: Նրա բոլոր էրեխեքին պահել եմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դա չէ, որի՞շ բան եմ ասում, հասկացի՛ր ԳԱԼՉԻԻՆԱ — Հարուստ վաճառականներ էլ կային, հա, Խաչվերաց եկեղեցու էն կողմը... դրա կնիկն ատանց ինձ հեղ բան էր... Գրան էլ եմ օգնել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ո՛չ, ո՛չ, ի՛մ որդին, ի՛մը...

ԳԱԼՉԻԻՆԱ — Ծա էլ էդ եմ ասում էլի. ձեր որդին էլ... Մի որբևայրի կար, տունը գետի էն փիին էր. էնպես մեծ, բալխանայով... և էդ բալխանայով...:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դա չէ... Որդի՛ս, Գրիշա՛ն...

ԳԱԼՉԻԻՆԱ — Գրիշա՞ն: Հա, հա, հիշում եմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Գալչիխային նստեցնելով աթոռին): Դեռ այն ժամանակ հիվանդացավ. հանկարծ ծանր հիվանդացավ: Խոխացնում էր, հիշո՞ւմ ես: Ու մեռավ:

ԳԱԼՉԻԻՆԱ — Լավացավ, տիրուհի: Աստված տվեց, լավացավ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ի՞նչ ես խոսում, Արխիպովնա: Խղճա ինձ:

ԳԱԼՉԻԻՆԱ — Լավացա՛վ, լավացա՛վ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ հետո՞, հետո ի՞նչ եղավ:

ԳԱԼՉԻՆԱ — Հետո աղքատացա: Էն ժամանակ ի՞նչ լավ էի ապրում, պակաս տեղ չկար. իսկ հիմի դափ-դատարկ: Գոնե շորից-մորից մի բան տայիք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ահա քեզ փող, վերցրո՛ւ: Բոլորը քեզ, միայն թե ասա: (Փողը դնում է սեղանին): Որտե՞ղ է Գրիշան, ի՞նչ արիք նրան:

ԳԱԼՉԻԻՆԱ — Ահ, հիշեցի... Աստված ինձ պատժեց, պատճառը էդ էր, հենց դրա համար էլ պատժեց:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — «Հենց դրան» ո՞րն է: Ասում ես՝ առողջացա՞վ:

ԳԱԼՉԻԻՆԱ — Առողջացավ, առողջացավ, բա ո՞նց: Շատ շուտ էլ առողջացավ: (Աչիք գցում է փողին): Մարդ կա՞ աստծու աչքը վրան է, իսկ ես էսպես անտեր...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ասացի, որ այս փողերը քոնը կլինեն, եթե ասես: Խնդրում եմ քեզ, աղաչում եմ:

ԳԱԼՉԻԻՆԱ — Ախր չգիտեմ ինչ ասեմ, տիրուհի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Գրիշայի, ի՛մ Գրիշայի մասին:

ԳԱԼՉԻԻՆԱ — Սպիտակ երեխա չէ՞ր:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Սպիտա՛վ էր, սպիտա՛վ: Ասում ես, որ աստված նրա պատճառով քեզ պատժեց: Ինչի՞ համար:

ԳԱԼՉԻՆԱ — Հիշեցի, տիրուհիս, հիշեցի:
ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Աստված իմ: Ասում ես հիշեցիր: Դե ասա՛,
ասա՛: (Մուկի է գալիս Գալչիսայի առջև և ուղիղ նա-
յում նրա աչքերին):

ԳԱԼՉԻՆԱ — Հենց որ, ուրեմն, լավանալ սկսեց, մորն էր
հա ձեն տալիս ու կանչում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Հեկեկալով): Ասում ես՝ մո՞րը:

ԳԱԼՉԻՆԱ — Հա: Թաթիկները կպարզեր ու կասեր՝ «մամա՛»,
մամա՛»:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ախ, տեր աստված, տեր աստված: Մամա՛,
մամա՛, իսկ հետո՞, հետո՞:

ԳԱԼՉԻՆԱ — Մտածում եմ՝ ի՞նչ անեմ սրան: Մո՞տս պա-
հեմ, ախր ո՞վ գիտի, փող կտա՞ն... կասկածում եմ: Ազ-
գանունները մտիցս թռել է... Մարդ ու կնիկ են, մենակ
թե, աստված երեխա չի տվել: Կնիկը մի օր թե՛ մի որբ
ճարի ինձ համար, հարազատ որդու պես կսիրեմ: Ես
էլ տվեցի. փող, ինչ մեղքս թաքցնեմ, շատ վերցրի...
Երկու տարվա դաստիարակության վարձը, ասում եմ,
մուծված չի, պիտի մուծես, ուրեմն: Մուծեց: Գրիգորի...
ոնց էր հայրանունը... հա, հիշեցի՞ Գրիգորի կվովիչին
էլ ասացի, թե էսպես ու էսպես, ուրիշի եմ տվել: Լավ
էլ արել ես, ասում է: Եվ դեռ մի երեքանոց էլ բաշխեց:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ հետո՞, հետո՞:

ԳԱԼՉԻՆԱ — Ու ամեն ինչ էդպես լավ վերջացավ, առանց
գլխացավանքի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ դու տեսնո՞ւմ էիր նրան, հաճախ էիր
այցելում:

ԳԱԼՉԻՆԱ — Ինչպես չէ, տեսնում էի... տեսնում... Վերջերս
էլ եմ տեսել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Վերջե՞րս: (Վախեցած):

ԳԱԼՉԻՆԱ — Վազվզում է պարտեզում, սայլակ է բշում.
բլուզն էլ կապույտ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Ետ քաշվելով): Ինչե՞ր ես խոսում, հիմա
նա քսան տարեկան է արդեն:

ԳԱԼՉԻՆԱ — Ի՞նչ քսան: Զէ՛, փոքր է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո՛, Արխիպովնա՛: Արինա, Արինա, ախր
այդ ինչեր ես խոսում:

ԳԱԼՉԻՆԱ — Ա՛հ, տիրուհի՛, ներող եղիր, խնդրում եմ: Էդ
փողերը խելքահան արին... Իուք հրամայում եք խոսել,
դե ես էլ խոսում, հա խոսում եմ, մխիթարում եմ ձեզ,
ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ դուրս տալիս... Ուղեղս
պղտորվել է, բան չեմ շոկում: Մի քիչ հանգստանայի
գոնե:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դե, գնա հանգստացի՛ր: (Գալչիսային ուղեկ-
ցում է մյուս սենյակ):

ԳԱԼՉԻՆԱ — Էսպես չի մնա, իմացածս միտս կբերեմ...
(Գնում է):

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Նստում է սեղանի մոտ): Ինչպիսի՞ ոճրա-
գործություն, ինչպիսի՞ ոճրագործություն: Տառապում,
ինձ սպանում եմ որդուս կարոտից, իսկ ինձ հավատացնում
են, որ նա մահացել է: Ողբում, արցունք եմ հեղում,
հեռուններն եմ փախչում, թափառում աշխարհում ու մի
անկյուն եմ փնտրում, որտեղ կարողանամ մոռանալ
վիրտս, իսկ նա թաթիկներով ինձ է կանչում՝ «մամա՛»,
մամա՛»: Ինչպիսի՞ ոճրագործություն: (Հեկեկալով գլուխն
իջեցնում է սեղանին):

ԳՐՈՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐ

ԱՆՁՆԸ

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ:

ՄՈՒՐՈՎ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ:

ՆԵՋԱՄՈՎ:

ՇՄՍԳՅ:

ՄԻՈՎՉՈՐՈՎ ԳԵՏՅԱ — առաջին սիրահար:

Կանացի հանդերձարան. պատասանները տեղ-տեղ պա-
տաստված են, տեղ-տեղ՝ պղկված: Խորում քիմ տանող
դուռն է: Սեղան է, առջե՛ր՝ փափուկ, բայց մաշված բազ-
կաթոս: Մնացած իրեր տարբեր ոճի են:

Կորիկիեան մտախոն մեկնվել է բազկաքոռի: Մտնում է Միլովգորովը:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ո՞վ է:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ես եմ, բարեկամս:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դու ուր փակիր:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ինչո՞ւ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ականջները սրած քարը են գալիս էստեղ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ձեր նյարդերը գրգռված են, բարեկամս:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Հասա ինչ. նյարդ կդիմանա էստեղ: Ձեմ հասկանում: Ուղղակի բոլորը խանգարվել են: Սթափ գլխով էդպիսի բաներ չեն անում:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Այդ ո՞ւմ մասին եք խոսում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Հասարակության, երեկվա ներկայացման մասին: Դե, ինչ մի առանձնահատուկ բան կա այդ Կրուչինյանյի մեջ, որ գլուխներն այդպես կորցնում են: Դե, ասա՛, Քեզ եմ հարցնում, ի՞նչ կա նրանում առանձնահատուկ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Նուրբ ֆրանսիական խաղ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Հիմա՛ր: Հեռացի՛ր ինձանից: Ինչո՞ւ եք խցկրվում իմ հանդերձարանը: Որպեսզի տխմարությունե՞ր դուրս տաք: Դրա կարիքը ես չունեմ, հասկացի՛ր: Դու ինձ կատաղեցնում ես, կատաղեցնում ես դիտմա՛մբ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Մի՞թե ես չեմ կարող իմ կարծիքն ունենալ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իհարկե չես կարող, որովհետև ոչինչ չես հասկանում: Եվ հետո դա ի՞նչ ընկերություն է: Թող հասարակությունը խելքահան լինի, ձե՞զ ինչ: Դուք ձեր դերասանուհին ունեք, որին պետք է բարձրացնեք: Դուք ո՛չ ինձ, ո՛չ իմ վերաբերմունքը գնահատել չգիտեք: Եվ դո՞ւ, դո՞ւ: Թվում էր, դու պետք է որ...

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ահ, բարեկամս, ես շատ, շատ լավ եմ ըզգում ձեր վերաբերմունքը:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Շարժուձևն էլ եմ ես քեզ սովորեցրել: Ինչպե՞ս էիր քեզ պահում, ինչպե՞ս էիր կանգնում, ինչպե՞ս էիր քայլում: Մի տեսնեիր քեզ բեմի վրա: Իսկական վարսավիր:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ես ձեզնից շատ շնորհակալ եմ, բայց այդ ինչե՞ր եք ասում: Խիստ է հնչում, բարեկամս: (Ուզում է համբուրել Կորիկիևայի ձեռքը):

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչպիսի՞ քնքշանք: Հեռացի՛ր ինձանից (Ելնում է): Առանձնապես ոչինչ չկա, ոչի՛նչ: Զգացմունք կա: Իսկ ի՞նչ բան է զգացմունքը: Սովորական բան. զգացմունք կանանցից շատերն ունեն: Իսկ ո՞ւր է խաղը: Ես տեսել եմ ֆրանսիացի դերասանուհիներին. ո՛չ մի այդպիսի բան: Եվ ամենից վատն այն է, որ ձեռնում է համեստություն է խաղում, ուսանողուհու նման է իրեն պահում, տեսեք-տեսեք՝ միանձնուհի եմ... Եվ բոլորը նրան հավատում են. ահա թե որն է վիրավորականը:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Անհամեստության մեջ նրան չեմ մեղադրի:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Նորի՞ց պաշտպանում ես: Դու նրա համեստության մասին ավելի լավ է ուրիշներին պատմիր, իսկ ես նրա արկածներին շատ լավ ծանոթ եմ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ես էլ եմ ծանոթ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դո՞ւ ինչ գիտես:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Այո, հավանաբար նույնը, ինչ որ դուք: Նիլ Ստրատոնիչն է պատմել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Համա՞ թե տիպն է: Ինձ երդում տալ տվեց, որ լռեմ, իսկ ինքը բոլորը պատմում է: Շատ էլ լավ է, թող պատմի, ե՛ս էլ լռելու մտադրություն չունեմ, շատ պետքս է ուրիշների գաղտնիքները պահեմ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Բայց դա շատ վաղուց է եղել, իսկ դրանից հետո նա...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — «Դրանից հետո նա» ի՞նչ: Չէ, դու ինձ համբերությունից հանելու ես: Մի՞թե դուք բոլորդ այնքան հիմար եք, որ նրան հավատում եք: Դա ծիծաղելի է նույնիսկ: Նա պատմում է, որ ինչ-որ հարուստ տիկնոջ հետ երկար ժամանակ եղել է արտասահմանում, և երախտապարտ տիկինը նրան է թողել իր ողջ կարողությունը: Ախր ո՞ր ապուշը դրան կհավատա: Պարոնի հետ եղած լինեիր, ուրիշ բան է: Ա՛յ դա խելքին մոտիկ է: Բոլորս գիտենք, որ այդպիսի հիմարներ կան, և դրանց պղծում են: Թե չէ՝ տիկնոջ հետ: Տիկիններն իրենց կարողությունը թողնում են արտասահմանում, օրի-

նակ՝ ինչքան ասես, բայց միայն թե ոչ իրենց գործընկերուհիներին: Իսկ թե նա փող ունի, էլ ինչո՞ւ է դերասանութիւն անում, ինչո՞ւ է քարշ գալիս Ռուսաստանով մեկ և մեկ հետ հացի նստում: Ուրեմն նույն տեղում նրան մնալ չի կարելի, ինչ-որ պատմութեան մեջ է ընկել: ուրիշ տեղ է պետք քոչել, իսկ ուրիշ տեղում ուրիշ պատմութիւն, երրորդ տեղում՝ երրորդ պատմութիւնը:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Նա շատ բարեգործութիւններ է անում. ականջիս հասել է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Խոսքուզրույցի համար: Փողով իրեն հաճույք է պատճառում: Նեղնամովի համար էլ, ահա, միջնորդեց: Մի իրեն հարցրեք՝ ինչի՞ համար: Հենց այնպես, ինքն էլ չգիտի: Ինքը կգնա, իսկ մենք այստեղ մնալու ենք այդ անուշիկի հետ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ափսոս, որ նա շուտով մեկնելու է, թե չէ Նեղնամովն իրեն ցույց կտար:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դա հիմա էլ կարելի է կազմակերպել. դեռ երեկվանից գլխումս մի միտք է պատվում: Միայն թե ձեզնից ոչ մեկի վրա հույս դնել չի կարելի:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ահ, ինչո՞ւ եք այդպիսի խոսքեր ասում, բարեկամս: Ես ձեզ համար ի՞նչ ուզեք կանեմ...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Լսիր, ես ուզում եմ նիւ Ստրատոնիչին խընդրել, որ նա այսօր երեկոյան իր տուն հրավիրի Կրուչի-նինային. ներկայացում, ինչպես գիտես, շունենք: Կհրավիրենք և Նեղնամովին: Մի լավ կխմեցնենք. մնում է միայն լարես, մնացածը ինքը կանի:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Բայց Նեղնամովը հազիվ թե նիւ Ստրատոնիչի տուն գա, նա հասարակութիւնից խուսափում է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Որևէ ձեռով կհամոզեմ: Իսկ դու նախապատրաստիր նրան, խոսելու նյութ տուր: Այնպես նկարագրիր Կրուչիենային, որ խզճում ես այդ կնոջը: Հստեղ պոչ խաղացնել շե կարող. ես հաստատապես պիտի իմանամ՝ բարեկա՞մ ես դու ինձ, թե՞ թշնամի:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Նրա հետ խոսելը մի քիչ վտանգավոր է, նա ուժեղ է ինձանից:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դա արգեն քո գործն է: Էլ ինչպե՞ս ես հա-

մարձակվում դրամատիկ սիրահարի դեր խաղալ, եթե վախենում ես կյանքում գոնե մեկ անգամ զոհարեցիք քեզ ինձ համար: Հիշիր, թե ես ինչեր եմ արել...

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Գե, լավ, բարեկամս, լա՛վ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Կարո՞ղ ես երևակայել, թե ինչ ներկայացում է լինելու: Ի՞նչ հրաշալի ներկայացում:

Դուզուկի՞նք դուռն ետևից. «Կարելի՞ է մտնել»:

Այո՛, իհարկե՛, դա ի՞նչ հարց է: (Յաժմանայն Միլով-գորովին): Հեռացի՛ր:

Ներս է գալիս Դուզուկի՞նք:

Տեսարան երկրորդ

Կորիեկինա, Միլովգորով և Դուզուկին:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Բարե, Նիւ (Դուզուկիին գրպանից հանում է ծխախոտատուփը, վերցնում է մի քանի գլանակ և դնում իր ծխախոտատուփի մեջ, արին Դուզուկինը ոչ մի ուշադրություն չի դարձնում):

ԴՈՒԴՈՒԿԻՆ — (Կորիեկինային): Ինչպե՞ս է ձեր առողջութեանը, սքանչելիս: Երեկ կարծես մի քիչ հուզված էիք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչի՞ց եղրակացրիք: Ես լիովին առողջ եմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դե, ավելի լավ, ավելի լավ: Շատ ուրախ եմ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ա՛յս է քո պաշարը:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Վերցրու, շնորհ արա, առանց ձևականութեան:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ե՛րբ եմ ես քեզ հետ ձևականութիւն արել,

Նիւ. դու ինձ վիրավորում ես: (Դուզուկիինը ծխախոտատուփը ետ է դնում գրպանը):

ԴՈՒԴՈՒԿԻՆ — (Կորիեկինային): Քույլ տվեք ձեր ճյուճա-

փառ ձեռքը սեղմել իմ անարժան շուրթերին: (Համբուրում է Կորիեկինայի ձեռքը):

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ես առողջ եմ, Նիւ Ստրատոնիչ, միանգամայն առողջ, իսկ ահա դուք, լավ կլինեիր, որ դիմեիք բժշկի

խորհրդին. Ես սկսել եմ լրջորեն մտահոգվել ձեզ համար:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Այդ ինչո՞ւ: Հոգուս մեղք արած կլինեմ, եթե բողոքեմ, ոչ մի թույլ տեղ իմ մեջ չեմ տեսնում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ես վախենում եմ, որ դուք վերջնականապես կխենթանաք: Երեկվանից հետո ձեռքներդ չի՞ ցավում:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ա՛, հասկանո՞ւմ եմ, հասկանո՞ւմ: Հրճվում էի, էքստազի մեջ էի: Բայց դե խաղ էր, ոչինչ չես կարող ասել: Դու ասա, Պետյա, ինքդ բեմի վրա էիր: Քեզ հետ խաղի տեսարանում, օրինակ:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ինձ հետ, Նիլ, բոլոր դերասանուհիների համար էլ հեշտ է խաղալը: Իմ մեջ կրակը շատ է:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Կրա՞կ: Բայց դու երեկ երկու անգամ այնպես խռոնեցիր, որ...

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ա՛հ, Նիլ, ես տաքարյուն եմ. շտապում ես, չէ, հասկանալի է, ակամա դուրս ես տալիս:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ բառե՞րն ինչպես ես արտասանում: Աստված գիտի, թե ինչեր ես ասում:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Դերերը վատ են արտագրում: Հետո էլ, մի հարցնող լինի, ո՞ւմ համար շարշարվես, Նիլ: Լավ, դու հասկանում ես, իսկ մյուսները: Ինչ ուզում ես ասա, մեկ է: Ախր սա ինչ հասարակություն է, որ...

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Բայց դե ով էլ հասկանում է, զարմանքից ուղղակի ապշում է: Մտածում ես, ողորմած աստված, որտեղի՞ց է վերցնում սա այդ խոսքերը: Այդպիսի հընչյուններ գուցե թե միայն իրոկեզների լեզվում լինեն: Դու, խնդրում եմ, մի նեղացիր:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Չէ, ինչո՞ւ պիտի նեղանամ: Դու, Նիլ, իրավացի ես. միայն դու չես, նույնը ուրիշներն էլ են ասել: Բայց դե, հասկանում ես, տվածները մեծ բան չի, շարժի կաշվից դուրս գալ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ դուք, անմասնս, իզուր շարկանաք: Նըրբագեղությունը ես սիրում եմ ամեն ինչում: Ճաշակով մարդկանց վերաբերմունքը դրա նկատմամբ բոլորովին

այլ է, առանձնահատուկ, բնավ էլ այն չէ, ինչ բնական գեղեցկության նկատմամբ: Այստեղ խանդն անտեղի է: **ԿՈՐԻՆԿԻՆԱ** — Իսկ ձեզ ո՞վ ասաց, որ ես խանդում եմ: Հիմա ես ձեզ հակառակը կապացուցեմ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ապացուցե՛ք, ի՞մ երանություն:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դուք Կրուչինինայով հիանում եք, ժաղկեպսակներ եք մատուցում նրան, նվերի համար փող եք հավաքում. կարծում եք դա նրան պե՞տք է: Այդ բոլորը նա շատ անգամներ է տեսել: Բայց, ահա, չգիտեք, թե ինչպես նրան հաճույք պատճառեք: Նա վատ հյուրանոցում է ապրում, կեղտոտ համարում, այսօր ներկայացում չկա. ի՞նչ է անելու նա տանը երեկոյան: Կայցե՛լեն նրան մի երկու-երեք քարթու թատերասեր իրենց, ներեցեք ինձ, անմիտ հրճվանքով, կարծում եք դա շա՞տ է ուրախալի: Դուք նրան հասարակության հետ շփանթացրեք, դերասանների հետ նույնիսկ տեսնվում էր միայն փորձերի ժամանակ: Ի՞նչ վատ կլինի, եթե ձեր տանը մի երեկույթ կազմակերպեք լավ ընթրիքով և հրավիրեք նրան, միայն թե ընտիր հասարակություն լինի: Դուք հրավիրեք ձեր ժանտիներից որևէ մեկին, իսկ դերասաններին ինձ թողեք, ես գիտեմ, թե ում հրավիրեմ: Դո՞ւր է գալիս ձեզ իմ առաջարկը: Նմա՞ն է սա խանդի...

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Օ՛, ոչ, ի՞նչ խանդ: Ա՛յ դա գաղափար է, գաղափա՛ր: Merci, թանկագինս: Ինչպես են ասում. կինը...

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ամեն բանի գինը գիտի կինը:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է: Ինչպե՞ս մտքով չանցավ: Ես, Պետյա, կարծում եմ, մենք ապերախտ ենք, որ քիչ ենք կանանց ձեռքերը համբուրում:

Մտնում է Շմաբան նոր վերադառված և քեզ դրած ջլապալով: Ողջունում է:

Տ Ե Ա Մ Ի Ա Ն Ե ր ր ո ղ

Կարիկիհեա, Միլովզորով, Գուդուկին և Շմազա:

ՇՄԱԳԱ — (Գուդուկիին): Մեկենասին, արվեստների և ամենայն գեղարվեստների լուսավորյալ հովանավորին ողջո՛ւյն: Ապա, մեկենաս, մի սիգար, խնդրում եմ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Որի՞ց ես ուզում:

ՇՄԱԳԱ — Իմ ծխածը միշտ էլ մի տեսակի է:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Իսկ ո՞րը:

ՇՄԱԳԱ — Ուրիշինը:

Գուդուկինը նրան սիգար է տալիս, որը Շմազան փաթարում է բլթի մեջ և դնում գրգռեր:

Սա հետո, նախաճաշի ժամանակ:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Շմազա, նեղնամովին չե՞ս տեսնել: Փորձի գալո՛ւ է:

ՇՄԱԳԱ — Ո՞վ գիտի, ես նրա դայակը չեմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դուք, ախր, անբաժան ընկերների էիք:

ՇՄԱԳԱ — Աշխարհում ինչ ասես, որ չի պատահում: Ամուսիններն էլ են իրարից բաժանվում, էլ ուր մնաց՝ ընկերները...

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ա՛յ քեզ հրաշք: Այդ ի՞նչ կատու է անցել ձեր արանքով:

ՇՄԱԳԱ — (Հանդիսավար): Մեր համոզմունքներն իրար շքոնեցին:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Միծաղելի բաներ մի ասեք: Ախր ձեզ ի՞նչ համոզմունքներ:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Իսկապես, Շմազա, ես առաջ ինչ-որ չեմ նկատել քո մեջ համոզմունք:

ՇՄԱԳԱ — Իզո՛ւր, ես հաստատուն համոզմունքների տեր եմ: Երեկ բոլորովին անսպասելի ձեռքս փող ընկավ, էնպես էի, քամու բերած:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Այո, տեսնում ենք, տեսնում ենք, հազել՝ կպպել ես:

ՇՄԱԳԱ — Ես այն համոզմանն եմ, որ դրանք անպայման պետք է խմել-վերջացնել: Իսկ դուք ասում եք, որ ես

համոզմունքներ չունեմ: Մի՞թե սա համոզմունք չէ: Եվ ես համոզում էի Գրիշկային գնալ «Ուրախ ընկերների հավաքույթ» պանդոկը: Բայց իմ հորդորները չազդեցին:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Հրաժարվե՛ց: Մի՞թե:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Մի հավատացեք, ի սեր աստժո, հեթաթններ է պատմում:

ՇՄԱԳԱ — Եվ ոչ միայն հրաժարվեց, այլև անպատվեց ինձ խոսքով և քիչ էր մնում անպատվեք նաև գործողությամբ. աստված մի քիչ ողորմաց: Իհարկե, Գրիշկան զոհվեց մեր ընկերության համար:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ի՞նչ ընկերություն:

ՇՄԱԳԱ — «Ուրախ ընկերների հավաքույթի»: Ես կորցրի իմ լավագույն ընկերոջը:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Ախր ի՞նչ է պատահել նրան:

ՇՄԱԳԱ — Շատ պարզ. կյանքի թելն է կորցրել:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Այդ ինչպե՞ս է թելը կորցրել: Ի՞նչ թել:

ՇՄԱԳԱ — Հիմի էլ թե՛ ի՞նչ թել: Ամեն մեկն իր թելն ունի: Դու, ահա, սիրեկան ես և՛ բեմում, և՛ կյանքում, դու հենց քո թելն էլ քաշում ես, մենք էլ պետք է մերը քաշեինք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — «Ուրախ ընկերների հավաքույթում»:

ՇՄԱԳԱ — Իհարկե: Մարդ որ թելը կորցրեց՝ կորած է: Նա, սովորության համաձայն, պանդոկ պիտի գնա, իսկ ահա փրկսոփայության ետևից է ընկել: Փրկսոփայությունից տխրություն է իջնում վրադ, իսկ տխրությունից վատ բան չկա:

ԳՈՒԳՈՒԿԻՆ — Նեղնամովը և՛ փրկսոփայություն... Տարօրինակ է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Աչքո՞վ են տվել, ինչ է:

ՇՄԱԳԱ — Տվել են:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իսկ ո՞վ:

ՇՄԱԳԱ — Հոշակավոր եկվորը:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Փչո՞ւմ ես: Չբլի՛ր այստեղից:

ՇՄԱԳԱ — Ոչ մի փշել, ճիշտ եմ ասում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Միլովզորով, սա պետք է նկատի առնել:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Կառնե՛նք:

ՇՄԱԳԱ — Իհարկե... Հաջողութուն, աղավնյակս: Թեև կորցրիր:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Իսկ դու շե՛ս կորցնում:

ՇՄԱԳԱ — Բոլորովին: Ինչի՞ս է պետք: Ուզում եմ, ահա ծառայություններս առաջարկել մեկեհասին:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Շնորհակալ եմ: Ի՞նչ ծառայություններ, բարեկամս:

ՇՄԱԳԱ — Ինձ թվում է, մտադրվել եք հյուրասիրել մեզ՝ գլխավոր դերակատարներին. այդ առթիվ դուք ինձ փող կտաք, դե ես էլ, թող էդպես լինի, ձեզ կծառայեմ. կգնամ կարկանդակ կառնեմ, երշիկ, խավիար և այլն:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Միայն թե. խնդրում եմ, ոչ այստեղ:

ՇՄԱԳԱ — Դուք էլ բան ասացիք: Նախաճաշը գլխավոր դերակատարներին համար է, և մենք էլ կգնանք այնտեղ, որտեղ առաջին գլխավոր դերակատարներն են հագնվում:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Այսինքն՝ ո՞ր:

ՇՄԱԳԱ — Վերև, ձեզնահարկ, ընդհանուր հանդերձարան, որտեղ ստատիստներին միբուք են կպցնում:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Դե լա՛վ, լա՛վ: Մի քիչ սպասիր բեմի վրա, ես միայն տեսնեմ Նլենա Իվանովնային:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Նեզնամովին էլ որ տեսնես՝ ուղարկիր այստեղ:

ՇՄԱԳԱ — (Բեմի կողմը ցույց տալով): Ահա՛ նա:

Դուքուկինն ու Շմագան գնում են:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — (Դռնից): Նեզնամով, մի բոպեով եկեք:

Նեզնամովը ներս է մտնում:

Տեսարան չորրորդ

Կորինկինա, Միլովգորով և Նեզնամով:

Նեզնամով — Ի՞նչ եք կամենում:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Բա՛րև, Գրիշա՛:

Նեզնամով — Բա՛րև:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչո՞ւ եք մեզնից փախում:

Նեզնամով — «Մեզնից»՝ ո՞ւմից:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Թեկուզ ինձնից:

Նեզնամով — (Չափելով նրան ռոտից գլուխ): Բայց ձեզ հետ ես երբեք չեմ եղել: Այդ բախտին չեմ արժանացել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իսկ ո՞վ է մեզավոր: Ինքներդ չեք ուզել. սիրալիրություն ձեր մեջ բուրրովին չկա: Իսկ զուցե սպասում եք, որ կանայք իրենք ձեզ մոտենան: Թեև այդպես է լինում, բայց շատ հազվադեպ: Դուք ինքներդ պետք է...

Նեզնամով — Չեմ կարող: Այդ դերի համար ես անպետք եմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ո՞ր դերի:

Նեզնամով — Մանկավիհի և շնիկի: Դա արդեն սրանց գործն է: (Ցույց է տալիս Միլովգորովին): Ի՞նչ եք ուզում ինձնից:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ահ, առանձնապես ոչինչ. միայն թե այդքան նոթոս մի եղեք, մի փախեք մեզնից: Ախր Շմագան ձեզ ի՞նչ ընկեր:

Նեզնամով — Ներեցեք, խնդրում եմ... Շմագային հանգիստ թողեք: Նախ, որ նա ուրախ է և սրամիտ, իսկ դուք բուրդ տաղտկալի եք: Եվ երկրորդ՝ նա շնայած փուշ մարդ է, բայց անկեղծ է. ինքն իրեն հենց փուշ մարդ էլ ներկայացնում է: Իսկ դուք բուրդ, կներեք, կեղծ եք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ահ, աստված իմ, ես հո չեմ ասում, թե մենք սրբեր ենք. մենք էլ մեր թերություններն ունենք՝ և՛ կեղծիք, և ուրիշ ինչ որ մտքներովդ անցնի: Ներեցեք մեզ մեր մեղքերի համար, ինչպես Շմագային եք ներում. մեզ խիստ մի դատեք:

Նեզնամով — «Ներեցեք, մի դատեք»: Ես ոչ դատել եմ ուզում և ոչ էլ ներել. ես ի՞նչ դատավոր: Ես միայն խուսափում եմ ձեզնից և խուսափելու եմ, որովհետև դուք անմիջապես կհիմարացնեք ինձ և կծիծաղեք վրաս:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ահ, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ահ, Գրիշա: Ինչո՞ւ ես այդքան կասկածա միտ, եղբայրս:

Նեզնամով — Չուզեցի՞՞ անցաք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դուք այնքան համակրելի եք, բայց Շմապարի խելքին եք բնկել:

ՆԵՋՆԱՄՈՎ — Համակրելի՛: Վաղուցվանի՛ց: Այդ ի՛նչ եք երգում: Չէ՞ որ դուք ինձ չեք սիրում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Այսինքն... չէի սիրում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ հիմա սիրեցի՞ր:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Շատ բան ուզեցիք: Այդպես ուզակի հարց կտա՞ն: (Միծաղում է): Վկաների ներկայութեամբ չեմ խոստովանում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե լավ, մի օր առանց վկաների կբռնացնեմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դա ուրիշ բան է:

ՆԵՋՆԱՄՈՎ — Պարզ ասեք, անկեղծ, ի՛նչ եք ուզում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Կասեմ, կասեմ... Միայն թե ես ձեզ գիտեմ, խենթ եք ու շատ համառ... Բայց այս անգամ, խնդրում եմ, մերժում չլինի:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Այո, հոգյակս, շնորհ արա:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե, ասեք վերջապես:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Զգիտեմ, թե ինչպես սկսեմ, շատ եմ վախնում ձեզին: Բանն այն է, որ Նիլ Ստրատոնիչն այսօր մեզ իրենց տուն է հրավիրել:

ՆԵՋՆԱՄՈՎ — Հետո՞: Ի՛նչ ինչ, թե հրավիրել է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Չէ, վախենում եմ, իրոք վախենում եմ: Բայց ասեմ՝ ինչ ուզում է լինի... Ուրեմն լսեք, ուղեկցեք ինձ նրա մոտ, մնացեք մեզ հետ ամբողջ երեկո և տարեք ինձ տուն: Դե, որոշեք: Ա՛հ, ի՛նչ եք երկարացնում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Էլի ի՛նչ եք մտածել:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դե, հոգյակս, դե, սիրելի Նեզնամով:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Դե, Գրիշա: Սիրելիս, պարզվիր ինձ այդ հաճույքը: (Գրկում ու համբուրում է Նեզնամովին):

ՆԵՋՆԱՄՈՎ — Ի՛նչ եք անում, ի՛նչ եք անում: Սա ի՛նչ նորութուն է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Սրտանց է, հոգյակս, սրտանց:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե, եթե սրտանց է, ուրիշ բան: Իսկ սա: Չէ՞ որ ձեր մշտականն ու անփոխաբխնելին է...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Նա ուրիշ տիկնոջ է ուղեկցում, բացի այդ էլ հոգնեցրել է ինձ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե լավ, ես այսօր ազատ եմ: Միայն թե այնտեղ, ախր, շատ է ձանձրալի:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Մենք կաշխատենք զվարճացնել ձեզ: Հիմա արդեն ուրիշ բան... Ա՛յ հիմա հոգի մարդ ես: (Ձեռնով հրածեղտ է տալիս և անցնում քեմի ետևը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ Ի Ն Պ Ե Ր Ո Ղ

Նեզնամով և Մինովորով:

ՆԵՋՆԱՄՈՎ — Սա ի՛նչ կոմեդիա է: Ասա՛, խնդրե՛մ:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ո՛չ մի կոմեդիա, սիրելիս, ամեն ինչ պարզ է:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ախր ինչո՞ւ հենց ես պետք եկա նրան: Մի՞թե չէր կարող մեկ ուրիշին վերցնել:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ո՛ւմ, օրինակ: Ռեզոնյուրների՛ց, թե՛ կոմիկներից: Մի՞թե կարելի է նրանց վրա հույս դնել: Նրանք իրենք էլ չգիտեն, թե ինչ է սպասում իրենց երեկոյան: Իսկ գուցե, սիրելիս, կանացի քմահաճույք է: Նրանց խելքին երբեմն անսպասելի բաներ են փչում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Քմահաճույք: Ծս չեմ սիրում այդ քմահաճույքները:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ահ, սիրելիս, առանց քմահաճույքների կին կլինի՞:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ դու որտեղի՞ց գիտես: Շա՞տ կին ես տեսել: Եվ ինչպիսիների՞ն: Դու կանանց մասին վողեկիլներով ես դատում, որտեղ ամեն խոսքից հետո ժպտում են հասարակութեանն ու քառյակներ երգում: Ի՛նչ կա այսօր Նիլ Ստրատոնիչի տանը:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Առանձնապես ոչինչ: Քարծրաշխարհիկ հյուրեր են լինելու և դերասաններ: Քոլորն էլ մերոնք են: Կրուչինինան էլ է լինելու:

ՆԵՋՆԱՄՈՎ — Կրուչինինա՞ն: Ինչո՞ւ ինձ նախապես շատացիր:

ՄԻՆՈՎՋՈՐՈՎ — Ինչո՞ւ պիտի ասեի: Ի՛նչ կա այդտեղ արտասովոր:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ ի՛նչ ես կարծում, Կրուչինինան սովորական կին է, թե՛ ոչ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դերասանուհի է և վերջ:
ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ որպես դերասանուհի, սովորակա՞ն է:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Հասարակությանը դուր է գալիս:
ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ քե՞զ:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ասում են Սառա Բեռնարն ավելի լավն է:
ՆԵՋՆԱՄՈՎ — Ասում են... Իսկ դու, ինչ է, ոչ աչք ունես,
ոչ խեղճ: Դե, ահա, լսիր, նա և՛ արտասովոր դերասա-
նուհի է, և՛ արտասովոր կին:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դերասանուհի՞ թերևս: Դե, իսկ որպես
կին... (Ժպտում է և թոթվում ուտերը):
ՆԵՋՆԱՄՈՎ — (Խիստ): Ի՞նչ՝ «կին»: Մտքի՞նդ ասա:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Կարծում եմ, մյուսների նման սովորակա՞ն
կին է:
ՆԵՋՆԱՄՈՎ — Դու հո ինձ լավ գիտես, ես գովեստ շալլող
մարդ չեմ: Բայց ահա թե ինչ եմ ուզում քեզ ասել. ես
մի անգամ եմ միայն հետը խոսել, և ամբողջ մեր նիս-
տուկացը, կտրիճուկունը, լոթիուկունը, մարդկանց
նկատմամբ շինծու արհամարհանքը այնքան մանր ու
չնչին թվացին, ինքս էլ ինձ այնքան ողորմելի թվացի,
որ գետինը մտնելու բան է: Մենք նրա մոտ խոսելու
իրավունք էլ չունենք: Մենք՝ հիմարներս, գլուխներս
կախ լուռ պիտի կանգնենք նրա մոտ և, որպես երկ-
նային մանանա, որսանք նրա հեզահամբույր ու խելացի
խոսքերը:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Չէ, ես ոչ մեկից էլ չեմ քաշվում:
ՆԵՋՆԱՄՈՎ — Օ, դժբա՛խտ:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ախր սա փիլիսոփայություն է, սիրելիս:
ՆԵՋՆԱՄՈՎ — Լոիր: Համարիր, որ խոսքերս չես լսել, որ
այս պատի հետ եմ խոսել: Չգիտե՞ս, Կրուչինինան եր-
կա՞ր է այստեղ մնալու:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Կարծում եմ, որ շուտով կմեկնի:
ՆԵՋՆԱՄՈՎ — Ինչո՞ւ:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Այնպես, նոր հանգամանքներ են ի հայտ
եկել, հին մեղքեր:
ՆԵՋՆԱՄՈՎ — Ես քեզ հրամայում եմ այդ կնոջ մասին հար-
գանքով խոսել: Լսո՞ւմ ես:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ես ուրախությամբ հարգանքով կխոսեմ:

եթե դա քեզ հաճելի է, բայց բոլորին չես ստիպի լռել
ես միայն ուրիշների խոսքերն եմ կրկնում:
ՆԵՋՆԱՄՈՎ — Դուք ինքներդ որևէ ստորություն եք հորի-
նել և տարածում եք ամենուր: Ես ձեզ գիտեմ, դուք
ընդունակ եք դրան: Դու բոլորին ասա, որ թույլ չեմ
տա նրան նեղացնել, որ ես նրա համար...
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Կծեծե՞ս: Քեզնից, սիրելիս, ուրիշ ի՞նչ
կարելի է սպասել:
ՆԵՋՆԱՄՈՎ — Չէ, չեմ ծեծի...
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Չե՞ս ծեծի, կներե՞ս:
ՆԵՋՆԱՄՈՎ — Չէ՛, շանսատա՛կ կանեմ:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — (Վախեցած): Ահա, խնդրեմ, սիրելիս: Քեզ
հետ չի կարելի խոսել: Է՛հ: Թո՛ղ ինձ, մի՛ հարցրու Ես
գնա՛մ:
ՆԵՋՆԱՄՈՎ — Ո՛չ, սպասի՛ր: Սկսել ես, վերջացրու: Միայն
թե ճշմարտությունն ասա, չհորինես:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դու ես, ահա, ստիպում, որ խոսեմ, բայց
հենց բերանս բացեցի, նորից կսկսես...
ՆԵՋՆԱՄՈՎ — Ո՛չ, խոսի՛ր, խոսի՛ր: Ես պետք է իմանամ
բոլորը: Դրանից է կախված... Դու դա չես հասկանա,
ահա թե ինչից եմ վախենում: Ախր ես լրիվ որբ եմ,
նետված քարսիրտ մարդկանց հորձանուտը, որոնք մի
պատառ հացի համար կոկորդ են կրծում, մի ուրբու
համար ծախում իրար: Եվ հանկարծ կարեկցանքի եմ
հանդիպում, գուրգուրանքի, և այն էլ ո՞ւմ կողմից: Մի
կնոջ, որի համբավը դղրդում է, որի հետ թեկուզ զրու-
ցելը երջանկություն է յուրաքանչյուրի համար: Կհա-
վատա՞ս, երեկ ես կյանքումս առաջին անգամ մայրա-
կան գուրգուրանք տեսա:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Հրապուրանք է դա, սիրելիս: Գրիշա, դու
սիրահարավա՞ծ ես:
ՆԵՋՆԱՄՈՎ — Չէ, տեսնում եմ, որ հետդ խոսել հնարա-
վոր չէ: Գոնե մի րոպեով դուրս արի քո այդ հիմար
վիճակից: Սա սեր չէ, ակնածանք է սա:
ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ասում ես, որ առաջին անգամն ես մայ-
րական գուրգուրանք զգացել: Հենց դրանում էլ սխալ-
վում ես:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ի՞նչ: Այդ ի՞նչ հիմարութեան ես դուրս տալիս:
ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Մայրական սեր դու կարող ես փնտրել ամեն տեղ, միայն թե ոչ նրա մեջ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դու իմ համբերութեանը մի փորձիր:
ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Նրան հիմնականում հենց մեղադրում են, որ լքում է իր երեխաներին:

ՆԵՋՆԱՄՈՎ — Ինչպե՞ս թե լքում է:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Հենց այստեղ, օրինակ, մի քանի տարի առաջ նա իր երեխային բախտի քմահաճույթին է թողել և հեռացել ինչ-որ պարտնի հետ: Եվ ասում են, որ դա միակ դեպքը չէ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ ո՞վ է նրան մեղադրում:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Բուրբը, սիրելիս: Բայց ավելի լավ է հարցրու Նիլ Ստրատոնիչին, նա խոսել է Կրուչինինայի հետ այդ հարցի շուրջ, և Կրուչինինան ինքն է նրան խոստովանել:

ՆԵՋՆԱՄՈՎ — Սպասի՛ր, սպասի՛ր: Անկարելի բան է. դա նման չէ նրան: Նրա ձայնի, խոսելու, շարժուձեռի մեջ այնքա՛ն անկեղծություն կա, այնքա՛ն ջերմություն:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Դու էլ իսկույն հալվել ես, բերանդ բաց է մնացել: Դերասանուհի է, լավ դերասանուհի:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դերասանուհի է, այո... բայց ես, այնուամենայնիվ, քեզ չեմ հավատում...

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Չեմ էլ փորձի համոզել. քո՞ կամքն է:

ՆԵՋՆԱՄՈՎ — (Մտախոն): Դերասանուհի: Դերասանուհի: Այդպես էլ խաղա բեմի վրա: Այնտեղ լավ կեղծելու համար փող են վճարում: Իսկ խաղալ կյանքում պարզ, դյուրահավատ սրտերի հետ, որոնց խաղ պետք չէ, որոնք ճշմարտություն են հայցում... դրա համար մահապատժի պետք է ենթարկել... Մեզ խաբուսություն պետք չէ: Մեզ ճշմարտություն է պետք, զուտ ճշմարտություն: Դերասանուհի: (Նորհում է): Ո՛ւր է Շամզան:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Վերը, հանդերձարանում, օղի է խմում:

ՆԵՋՆԱՄՈՎ — Լավ զգացմունք է: Օ՛, որքա՛ն կուզենայի, որ այդ բոլորը սուտ լիներ:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Իսկ եթե ճիշտ է:

ՆԵՋՆԱՄՈՎ — Դե, այդ դեպքում կկարողանամ պատժել ինձ հիմար դյուրահավատության համար: Եվ դեռ ուրիշ մեկին էլ բաժին կհասնի: (Գնում է):

Ներս է մտնում Կորեկիբեան:

Տեսարան վեցերորդ

Միավազում, Կորեկիբեա, նետ Կրուչինինա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Գնա, Կրուչինինան այստեղ է գալիս, նա ուզում է հանգստանալ: Նեղնամովն ի՞նչ էր ասում:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Ազդեց:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դրա համար այստեղից մոտիկները կախ դուրս եկավ: Ուրեմն երեկոյան ներկայացում է լինելու:

ՄԻՆՈՎՉՈՐՈՎ — Այո, երեկոյի վերջը հետաքրքիր կլինի: Նեղնամովք սիրում է վերջում բացվել: (Գնում է):

Ներս է մտնում Կրուչինինա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Համեցեք: Ես գնում եմ: Կներեք, բայց մեր բոլոր հանդերձասենյակներն էլ վատն են: Այստեղ գոնե կարելի է հանգստանալ, իսկ մյուսներում շարժվելու տեղ չկա:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այո, իմ սենյակում անհարմար է և սաստիկ փշում է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Այստեղ, այնուամենայնիվ, ծանոթներին կարելի է ընդունել:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ես ընդունելու մարդ չունեմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ի՞նչ իմանաս: Այստեղ միշտ էլ մարդիկ են թրև գալիս բեմում, պատահում է, որ ներս էլ ե՞ս մտնում: Դե, մինչ հանդիպում Նիլ Ստրատոնիչի տանը: Չեր ետևից կգա Միլովզորովը:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այո՛, ես նրան խնդրել եմ:

Կորեկիբեան սեղմում է ձեռքն ու զնում: Կրուչինեան երջանակ է սեղանի մոտ, հանում է գրե՛ն ու սկսում կարգալ: Ներս է մտնում Մուրալը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ղ Ք Ե Ր Ո Ր Դ

Կրօնիկներն և Մուսուլ:

Կրօնիկներն շրջվում է, վեր է կենում արտոնք և Մուսուլի
նզրոյնին լուս գլուխ տալիս:

ՄՈՒՐՈՎ — (Ժպտալով): Մուրով, Գրիգորի կվովիչ: Պատիվ ունեմ ներկայանալու: (Խոնարհվում է): Երեկ երկու անգամ ձեր ետևից հյուրանոց եմ եկել, բայց բախտ չեմ ունեցել ձեզ հանդիպելու: Երեք օր առաջ թատրոնում էի: Ավելորդ է խոսել այն տպավորության մասին, որ ստանում է հանդիսատեսը ձեր խաղից: Դա առանց իմ ասելու էլ ձեզ հայտնի է, բայց ես ապշած էի այն արտակարգ նմանությունից, որ կա ձեր և ինձ ժամանակին ժանոթ մի կնոջ միջև:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Բայց ո՞րն է ձեր գալու նպատակը:

ՄՈՒՐՈՎ — Կուզենայի իմանալ, սխալվո՞ւմ եմ ես, թե՞ ոչ: Թատերական լուսավորությունը, ներկը, գրիմը — այս ամենն այնպես են կերպարանափոխում մարդուն, որ նմանություն ես գտնում նույնիսկ չեղած տեղը:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Դե ի՞նչ, հիմա ես առանց գրիմի եմ: Ի՞նչ կասեք:

ՄՈՒՐՈՎ — Ես է՛լ ավելի եմ զարմացած: Բնության այդպիսի խաղ չի կարող լինել: Երբ նայում եմ ձեզ կամ սեփական աչքերիս շպետք է հավատամ, կամ էլ ներեցեք ինձ, չեմ կարող զսպել հարցս:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Հարցրե՛ք:

ՄՈՒՐՈՎ — Դուք կյուրով Իվանովնա Օտրադինան եք:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այո, ես կյուրով Իվանովնա Օտրադինան եմ:

ՄՈՒՐՈՎ — Բայց որտեղի՞ց հայտնվեցիք, ո՞ւր էիք մինչև հիմա, ի՞նչ էիք անում, ինչպե՞ս էիք ապրում:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Կարծում եմ, որ ձեզ հարկ չկա այդ բոլորն իմանալու, որովհետև դա ձեզ ամենևին չի վերաբերում:

ՄՈՒՐՈՎ — Բայց որտեղի՞ց ձեզ այդ անունը: Ինչո՞ւ հայտնվեցիք այստեղ ուրիշի ազգանունով:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ես բեմ բարձրացա, նոր կյանք սկսեցի, այդ պատճառով էլ փոխեցի ազգանունս. դա սովորական բան է: Ես վերցրի մորս անունն ու ազգանունը:

Դուք վերջացրի՞ք ձեր հարցերը:

ՄՈՒՐՈՎ — Դուք ուզում եք որքան հնարավոր է շուտ ազատվել ինձնից, վերջացնել խոսակցությունը և ցույց տալ ինձ դո՛ւրը:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ո՛չ, ես սպասում եմ, թե երբ կվերջացնեք ձեր հարցերը:

ՄՈՒՐՈՎ — Ես վերջացրի:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Դե, հիմա իմ հարցին պատասխանեք: Ո՞ւր է որդիս, ի՞նչ արիք նրան:

ՄՈՒՐՈՎ — Բայց ես ձեզ գրել եմ, որ նա մահացավ: Մի՞թե դուք իմ նամակը չեք ստացել:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ո՛չ, ստացա՛, բայց դուք ինձ խաբել եք: Նա առողջացել է, և երբ դուք ինձ գրում էիք նրա մահվան մասին, նա ողջ էր:

ՄՈՒՐՈՎ — Եթե դուք այդ գիտեիք, ինչո՞ւ չեկաք ու շտարաք նրան:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ես երեկ միայն իմացա: Իսկ այն ժամանակ ես չէի կարող գալ, ես ծանր հիվանդ էի. ինձ տարան կիսամեռ վիճակում: Դուք դա լավ գիտեք: Ինձ ինչո՞ւ խաբեցիք:

ՄՈՒՐՈՎ — Մի արարքին միշտ մյուսն է հետևում: Ես վախեցա, որ դուք կվերադառնաք, խոսակցություն կբացվի, կհասնի կնոջս, և հենց սկզբից վեճ կընկնի մեջներս:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Դե, հիմա արդեն միևնույն է, ամեն ինչ վերջացած է: Ո՞ւր տարաք իմ երեխային: Ասեք միայն ճշմարտությունը: Ինքս էլ արդեն որոշ բաներ գիտեմ:

ՄՈՒՐՈՎ — Մեներ շատ լավ, ունևոր մարդիկ գտանք, ես իմ ձեռքով նրանց հանձնեցի երեխային և, բաժանվելիս, վզից կախեցի այն մեղալիտներ, որ դուք թողեցիք ինձ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ուրեմն մեղալիտներ կա՞, որդուս մո՞տ է: Դրա մեջ նրա ոսկեթել մազերն են, այնտեղ ես մի գրություն էլ եմ գրել:

ՄՈՒՐՈՎ — Ի՞նչ գրություն:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Մի փոքրիկ նշում. գրել եմ ծննդյան օրը:

ՄՈՒՐՈՎ — Եվ ուրիշ ոչի՞նչ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Հիմա արդեն չեմ հիշում:

ՄՈՒՐՈՎ — Ես չգիտեի. կարծում էի հենց այնպես, ոսկե սովորական զարդ է և ոչնչի վկայություն չի կարող լինել: Բայց դա արդեն անցած բան է: Բարի մարդիկ խոստացան ինձ մեղալիտնը երբեք նրա վզից չհանել: Նրանք, հավանաբար, մտածեցին, թե դա ինչ-որ խորհրդավոր գործության թալիսման է, հմայիլ, կամ էլ վզնոց, որ կապում են երեխայի վզի իջվածքը կանխելու: նպատակով:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Հետո ի՞նչ եղավ:

ՄՈՒՐՈՎ — Նրանք երեխային մեծացնում էին, սովորելու տալիս, դաստիարակում, իսկ իրենք՝ հարստանում: Ընդարձակեցին իրենց առևտուրը, նահանգական մի քանի քաղաքներում խոշոր խանութներ բացեցին, իրենց համար մեծ տուն կառուցեցին, հիմա լավ շեմ հիշում, թե որտեղ՝ Սիզրանում, Իրբիտում, թե՞ Սամարայում: Չէ, կարծեմ Տագանրոգում, և տեղափոխվեցին այնտեղ բնակվելու:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Վաղա՞յց են այնտեղ տեղափոխվել:

ՄՈՒՐՈՎ — Մի ութ տարի առաջ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ հետո դուք նրանից լուր ունեի՞ք:

ՄՈՒՐՈՎ — Ո՛չ: Նրանք խնդրեցին ինձ երեխայի հետ ոչ մի հարաբերություն չունենալ: Մենք ենք, իբր, դաստիարակել նրան, մեր ազգանունն է կրում, մեր ժառանգն է լինելու, այնպես որ՝ մեզ հանգիստ թողեք: Եվ իբր, եթե առողջ դատելու լինենք, ավելի լավ ի՞նչ կարելի է օպասել անանուն երեխայի համար: Ես կարող էի միանգամայն հանգիստ լինել. նախանձելի բախտի արարացով:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այդ վաճառականի ազգանունը:

ՄՈՒՐՈՎ — Մոռացել եմ արդեն՝ Իվանով էր, թե՞ Պերեկուխին: Իվանովի և Պերեկուխինի արանքում էր ինչ-որ՝ կարծես Պոդառովսկիով: Եթե ցանկանում եք, կարող եմ տեղեկություններ հավաքել: Այսօր ևեթ կտեսնեմ մի եկվորի, որը ճանաչում է հարավային բոլոր քաղաքների վաճառականներին, և հենց այսօր էլ կհայտնեմ ձեզ: Դուք լինելու եք, չէ՞, Նիլ Ստրատոնիչի տանը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո՞, լինելու՞ է եմ:

ՄՈՒՐՈՎ — Կարելի՞ է ձեզ ևս մի քանի խոսք ասել, թույլ կտա՞ք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ասե՛ք:

ՄՈՒՐՈՎ — Այն դառնության համար, որ պատճառել եմ ձեզ, դաժանորեն պատժվել եմ. հանգուցյալ կինս կարողացավ իմ կյանքը դարձնել անընդմեջ տանջանք: Բայց ես, այնուամենայնիվ, շեմ կարող նրա հիշատակը վատաբանել. այդ պատժին ես արժանի էի, և դեռ ինձ է թողել նաև մի հսկայական ժառանգություն: Իմ անուրախ կյանքից հետո, երբ նորից տեսա ձեզ, հին կիրքը նորից բորբոքվեց իմ մեջ: Ես չէ՞ որ պատանի շեմ, շեմ չափազանցնում իմ զգացմունքները և սովորել եմ կըշտադատել իմ արտահայտությունները. եթե ասում եմ, որ բորբոքվեց, ուրեմն, իրո՞ք, բորբոքվեց, և իմ զգացմունքներն արտահայտելու համար ուրիշ բառ չկա: Այստեղ ես միայն հասկացա, թե ինչպիսի երջանկություն եմ կորցրել. դա այնքան մեծ երջանկություն է, որ վերադարձնելու համար կանգ չեմ առնի և ոչ մի զոհողության առջև: Դուք հաղթեցիք ինձ, ջախջախեցիք վերջնականապես: Ես ներում եմ խնդրում, հաշտություն: Հաշտություն կնքենք: Ես պարտաված եմ, դուք իրավունք ունեք թելադրելու ձեր պայմանները. ես խոնարհությամբ կընդունեմ, առանց առարկության: **ԿՐՈՒԶԻՆԻՆԱ** — Որքա՞ն դառն է այդ լսելը: Դուք որևէ արժեք չեք տալիս մի պարզ սիրող աղջկա թարմ ու անարատ զգացմունքներին և պատբաստ եք ստորանալու կյանք տեսած մի կնոջ առջև, որի հոգին պաղել է արդեն, և հանուն այն բանի միայն, որ այդ կինը հուշակ ունի:

ՄՈՒՐՈՎ — Բայց, կյուբա, մի՞թե բո մեջ ոչ մի կայծ չի մնացել նախկին զգացմունքներից:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այստեղ կյուբա չկա. ձեր առջև Ելենա Իվանովնա Կրուչինան է:

ՄՈՒՐՈՎ — Քո զգացմունքն այնքան հարուստ էր սիրով, այնքան շույլ...

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես նման խոսքեր այլևս չեմ հասկանում:

ՄՈՒՐՈՎ — Ներեցեք, ես առաջ կին էի տեսնում, իսկ հիմա

իմ առջև դերասանուհի է: Ես այլ կերպ կխոսեմ: Չե՞ք բարեհաճի այցելել ինձ իմ կալվածքում: Չե՞ք բարեհաճի մնալ այնտեղ և դառնալ նրա տիրուհին: Վերջապես չե՞ք բարեհաճի դառնալ տիկին Մուրովա:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ձեր բոլոր հարցերին ես կպատասխանեմ նույնպես հարցով: Որտե՞ղ է իմ որդին: Եվ մինչև նրան շտեմանեմ, ուրիշ ոչ մի խոսակցություն մեր միջև չի լինի: Արդեն բեմ ելնելու ժամանակն է: (Գնում է):

ՄՈՒՐՈՎ — Ցտեսություն: (Գնում է Կրուչինայի ետևից): Ես համբերատար եմ և հույս երբեք չեմ կորցնում (Գնում է):

Երես է մտնում Եզգամովը, մոռլ կանգնում է դռն մոտ և սևեռում նայում բեմին:

Տեսարան ութերորդ

Եզգամով, Ենտա՝ Շմազա:

ՆեջնԱՄՈՎ — (Գոհից): Շմազա՛, Շմազա՛, արի՛ այստեղ: Քեզ հետ չե՞ն, արի՛ այստեղ:

Շմազան դռն ետևից. «Չե՞ս ծեծի»:

Չէ, շատ պետքս է՝ ձեռքերս կեղտոտեմ:

Շմազան Ենտա է մտնում: Եզգամովը բռնում է նրա օձիկից:

Դե խոսի՛ր, խոսի՛ր: Ի՞նչ են այնտեղ փսփսում, ի՞նչ են խոսում իմ մասին:

ՇՄԱԳԱ — Սպասի՛ր, խեղդում ես: Բա՛ց թող մի բոպե, թող շունչ առնեմ: Կասեմ, ամբողջ ճշմարտությունը կասեմ:

ՆեջնԱՄՈՎ — (Բաց բողբոջով Շմազային): Դե՛, ասա՛:

ՉՄԱԳԱ — Ինչ են ասո՞ւմ: Հիմարություններ են ասում:

ՆեջնԱՄՈՎ — Դա ես գիտեմ:

ՇՄԱԳԱ — Թե որ գիտես, էլ ինչո՞ւ ես ջղայնանում:

ՆեջնԱՄՈՎ — Դատողություններդ թո՛ղ, լսածդ ասա:

ՇՄԱԳԱ — Դե, ես, անկեղծ ասած, չէի լսում: Ինչո՞ւ լսես Ախր, հիմարությունից բացի, ես սրանցից ոչինչ չեմ սովորում, իսկ դրանից մեր տանն էլ շատ կա:

ՆեջնԱՄՈՎ — Նրանք կարծես իմ ու Կրուչինինայի անունն էին տալիս ու փսփսում:

ՇՄԱԳԱ — Փսփսոցով թե բարձրաձայն՝ մեկ չէ՞, թե ինչպես են հիմարություններ դուրս տալիս:

ՆեջնԱՄՈՎ — Ախր նրանք ծիծաղում են: Դա սարսափելի է, անտանելի: Համենայն դեպս, իմ կողմից խորը, անկեղծ զգացմունք էր, և թե ինչո՞ւ պատմեցի...

ՇՄԱԳԱ — Դե, ահա, տեսնո՞ւմ ես:

ՆեջնԱՄՈՎ — Եվ նիլ Ստրատոնիչի տանն այդ երեկույթը, որի համար այնքան մտահոգված են: Որևէ ինտրիգ, ստորություն չկա՞ այդտեղ: Չե՞ն ուզում ծաղրել արդյոք մի կնոջ, որն արժանի է ամենայն հարգանքի:

ՇՄԱԳԱ — Հարգանքի՞, ասում ես:

ՆեջնԱՄՈՎ — (Գլուխը բռնելով): Ահ, ես ինքս էլ չգիտեմ՝ հարգանքի՞, թե՞ արհամարհանքի:

ՇՄԱԳԱ — Թե որ չգիտես, որ նրանց հետ գործ ունեցիր, ոչ էլ Կրուչինինայի:

ՆեջնԱՄՈՎ — Սպասի՛ր: Պատկերացրո՞ւ, որ մարդ աղքատ է, ամենաաղքատը, ամբողջ կյանքում մի գրոշ էլ ձեռքը չի ընկել և հանկարծ ոսկու մի կույտ է գտել...

ՇՄԱԳԱ — Դրանից լավ բան ի՞նչ կարող է լինել:

ՆեջնԱՄՈՎ — Սպասի՛ր: Եվ հանկարծ պարզվում է, որ այդ կույտը աղբ է: Ի՞նչ պիտի անի:

ՇՄԱԳԱ — Դե, եթե մարդն ազա՛հ է և ոսկին սրտին շատ մոտ է ընդունել, այդպիսի փոխակերպությունից հետո անպայման մի օղ կամրացնի մեխից և կսկսի վիզը հարմարեցնել օղին:

ՆեջնԱՄՈՎ — Դե՛, լսի՛ր ուրեմն:

ՇՄԱԳԱ — (Ձեռքը թափ տալով): Սկսվե՛ց փիլիսոփայությունը: Չէ՛, Գրիշա՛, չէ՛, դու քո փիլիսոփայությամբ հոգիս մի հանի:

ՆԵՋՆԱՄՈՎ — Բայց հո տարբերութիւն կա շարի ու բարու միջև:

ՇՄԱԳԱ — Ասում են՝ ինչ-որ փոքր տարբերութիւն կա, բայց դա մեր գործը չէ: Չէ, դու ինձ փիլիսոփայութիւն մի զգվեցրու: Քե չէ ես էլ կտխրեմ քեզ նման: Ավելի լավ է գնանք «Ուրախ ընկերների հավաքույթ» պանդոկ:

ՆԵՋՆԱՄՈՎ — Օ, բարբարոսներ: Ինչպես են տանջում նրանք իմ հոգին: Բայց, միևնույն է, որևէ մեկը պատասխան է տալու իմ տառապանքների համար. կա՞մ նրանք, կա՞մ նա: (Գնում է դեպի դուռը):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆՁԻՆՔ

- ԿՐՈՒՋԻՆԻԱ:
- ԿՐՈՒԿՈՒՄ:
- ԴՈՒԴՈՒԿՈՒՄ:
- ՄՈՒՐՈՎ:
- ՆԵՋՆԱՄՈՎ:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ:
- ՇՄԱԳԱ:
- ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ԱՂԱԿԻՆ:

Լուսնյակ գիշեր: Բացա՞ լորեններով շրջապատված մեծ ազնվականական պարտեզում: Բացատում հացեցու փայտից նստառաններ են և չուզուեն ումբեռով սեղաններ: Ռեմի վրա մեծ առև տեղան է: Տնառի մաս, արանեայի եզրերին, ծաղիկներ են և ոլորանյալու բույսեր: Դեպի տեղաս են բացվում ապակեպատ դուռը և մի ֆանի լուսամուտներ: Տունը լավ լուսավորված է:

Տ Ե ս ա ր ա ն ա ո ա ջ ի ն

Նստառաններից մեկին նստած են Նեգեմսովն ու Միլովորազը՝ մյառի՞ն՝ Շմազան. նա մերք լուսին է նայում, մերք շուրջը, հառաչում է ու տարբեր կեցվածք ընդունում:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ինչո՞ւ ես հառաչում, Շմազա: Ինչի՞ց ես դժգոհ, սիրելիս:

ՇՄԱԳԱ — Լուսնի վրա եմ ջղայնանում:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ինչո՞ւ:

ՇՄԱԳԱ — Ինչո՞ւ է ինձ նայում: Եվ ի՞նչ հիմար արտահայտություն ունի: Ուղղակի կարծես կուշտ ու կլորադեմ գյուղական աղջիկ է, որ, դարպասի առջև կանգնած, չգիտես ինչու է ուրախ, ատամները բացել ու բերանով մեկ ծպտում է:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դու, սիրելիս, պոեզիա չես հասկանում, իսկ ես նստել ու միտք եմ անում՝ ի՞նչ կախարդական գիշեր է:

ՇՄԱԳԱ — Ա՛յ թե այսպիսի գիշերին...

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Վուզայով նավարկե՞ս:

ՇՄԱԳԱ — Չէ, պանդոկում կոնծես:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Հիմարութիւն: Պանդոկում ձմեռն է լավ: Դրսում բուք է կամ սառնամանիք, մեր բնակարանները մեծ մասամբ խոնավ են կամ էլ ցուրտ, իսկ պանդոկում լուսավոր է և տաք:

ՇՄԱԳԱ — Եվ ուրախ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դե, իսկ ամռանը, սիրելիս, տոթ է:

ՇՄԱԳԱ — Իսկ դու լուսամուտները բաց անել տուր. ահա քեզ և՛ օդ, և՛ պոեզիա: Լուսինն ուղիղ ափսեիդ մեջ է նայում, լուսամուտի տակ յասամանը կամ լորենին է ծաղկում, թուրնջենու հոտ է գալիս...

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ինչի՞ց՝ լորենո՞ւց...

ՇՄԱԳԱ — Չէ, սեղանին դրած շշից: Կանչում են դեռևս շտապակված աքաղաղները:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դա պրոզա է, սիրելիս: Երեի ուղում էիր ասել՝ սոխակները:

ՇՄԱԳԱ — Դե դա նայած փողին. փողը շատ է, մինչև սոխակները կնստեն, իսկ թե քիչ է՝ ուրեմն մինչև աքաղաղների կանչելը: Սոխակը այգաբացին է երգում, երեկոյան էլ կերգի, մեկ էլ նորից այգաբացին կշվճվացնի: Իսկ աքաղաղինը կեսգիշերին է, դա մեր խրոնոմետրն է: Հենց որ կանչեց, ուրեմն, աղքատ ախպերս, փասսփուսեդ քաշիր պանդոկից, թե չէ, կքշեն: (Նայում է լուսնին)

ու հառաչում): Բայց չէ, ա՛յ թե տանջանք է, հա, ես քեզ կասեմ: Մենք, թույլ տվեք նկատել, հարուստ մարդու ենք հյուր եկել: Իսկ ինչո՞ւ, ամոթ չլինի հարցնելը: Բնությա՞մբ հիանալու: Նստիր ու լուսնին նայիր, ինչպես գայլը ձմռան սառնամանիք գիշերին: Բայց դե գայլն էլ կնայի, կնայի ու մեկ էլ այնպես աղիողորմ կոռնա: Գրիշա, արի երկձայն ոռնանք: Դու ոռնա, ես էլ կոռնակցեմ տարբեր ելե՛ջներով. գուցե տանտերը գլխի՞ ընկնի:

ՆեջնԱՄՈՎ — Դու, երևում է, այնքան էլ վատ չես զգում. դու դեռ կարողանում ես կատակել, իսկ ես, եղբայր, խեղդվում եմ:

ՇՄԱԳԱ — Դե, ես էլ մի բանի նման չեմ:

ՆեջնԱՄՈՎ — Դու որ բուՖետին հասար, ամբողջ վիշտդ կանցնի:

ՇՄԱԳԱ — Իսկ քեզ ո՞վ է խանգարում:

ՆեջնԱՄՈՎ — Ինձ այդ միշտցը չի օգնի. թերևս ավելի վատ զգամ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Իզուր ես այդպես մտածում, սիրելիս:

ՇՄԱԳԱ — Իսկ դու փորձիր, մի անգամ փորձիր:

ՆեջնԱՄՈՎ — Մի՛ խնդիր, առանց այդ էլ, երևի, փորձելու եմ:

ՇՄԱԳԱ — Իսկապես, սա ի՞նչ բան է: Մարդկանց հյուր է կանչել, իսկ զբաղեցնել չգիտի:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դե, դա արդեն իզուր ես ասում, սիրելիս: Նիլն իր գործը գիտի: Տարիքավորներն այնտեղ թուղթ են խաղում, իսկ շահելները տիկիներին են զբաղեցնում:

ՇՄԱԳԱ — Իսկ դերասաննե՞րը:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դերասանների՞ն ինչով զբաղեցնի: Նրանք իրենք պետք է աշխուժացնեն հասարակությանը:

ՇՄԱԳԱ — Դու նախ մեզ տրամադրիր, ինչպես պետքն է, երևակայություն ներշնչիր. մենք էլ, դրանից հետո, կաշխուժացնենք հասարակությանը:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ամեն ինչ իր հերթին, սիրելիս: Հիմա թե՛ն են խմում, թե՛յ շե՞ս ուզում:

ՇՄԱԳԱ — Չէ, թե՛յ ինքներդ խմեք: (Հառաչում է):

Մտնում է Կարիկիհան:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

Նեզնամով, Միլովզորով, Շմագա և Կարիկիհան:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Պարոնայք, այդ ինչո՞ւ եք անջատվել հասարակությունից: (Նեզնամովից): Իսկ դուք ի՞նչ եք խոռոված նստել, ինչո՞ւ մեզ մոտ չեք գալիս:

ՆեջնԱՄՈՎ — Ես ձեր ինչնեղի՞ն եմ պետք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Կրուչինինան արդեն երկու անգամ հետաքրքրվել է ձեզնով: Նա շատ լավ է խոսում ձեր մասին:

ՆեջնԱՄՈՎ — Լավ է խոսում, թե վատ, միևնույն է ինձ համար: Ես ընդհանրապես չեմ սիրում, երբ իմ մասին խոսում են: Խնդրում եմ ինձ հանգիստ թողեք: Կարծես խոսելու ուրիշ նյութ չունեք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչ դյուրագրգիռ մարդ եք: Ձեր մասին լավ խոսել էլ չի կարելի: Կրուչինինայի կարծիքով ձեր մեջ տաղանդ կա և շատ զգացմունք:

ՇՄԱԳԱ — Դե, հենց զգացմունքն էլ դերասանի համար, թերևս, ավելորդ բան է:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Կոմիկի համար՝ այո, բայց ուրիշ ամպլուայի դերասաններ էլ կան:

ՇՄԱԳԱ — Դու ահա ամեն օր սիրահարներ ես խաղում, ամեն օր սեր ես բացատրում, շա՛տ կա այդ զգացմունքից մեջդ:

ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ես կարծում եմ, որ այստեղի հասարակության համար բավարար է, սիրելիս:

ՇՄԱԳԱ — Հասարակության համար բավարար է, իսկ տնային գործածության համար, եղբայրս, քիչ է:

ՆեջնԱՄՈՎ — Շատ կուզենայի իմանալ, թե իսկական մեծ դերասանուհիներն ինչպե՞ս են իրենց պահում սովո-

րական կյանքում: Մի՞թե նույնպես կեղծում են, ինչպես բեմի վրա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Երևի: Շատ մեծ փորձ է պետք, շատ է հարկավոր ապրել այս երկնքի տակ, որպեսզի կարողանաս զանազանել իսկական զգացմունքը կեղծից:

ՆեջնԱՄՈՎ — Ուրեմն պիտի սպասես մինչև ծերանալը: Իսկ մինչ այդ բոլորը քեզ կխաբեն ու հիմար կանվանեն: Խոնարհաբար շնորհակալ եմ: Ավելի լավ է՝ ոչ մեկին ոչ մի բանում չհավատաս:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Այո, երևի թե այդպես:

ՇՄԱԳԱ — Զգացմունք նեզնամովն ունի, դա ճիշտ է, բայց ցավն էլ հենց այն է, որ խելքի կողմից կաղում է. շղիտի, թե ինչ անի այդ զգացմունքը, որտեղ ծախսի:

ՆեջնԱՄՈՎ — Դու ճիշտ ես ասում:

ՇՄԱԳԱ — Բայց ահա ես ուզում եմ իմանալ, դուք, Նինա Պավլովնա, հոգի ունե՞ք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Էլի հիմարություն ես դուրս տալիս:

ՇՄԱԳԱ — Ես համաձայն եմ, որ ինձ՝ դերասան Շմազայիս, կարգին տուն գուցե շարժե ներս թողնել. դե մի էլ թողեք, ես չեմ նեղանա: Բայց քանի որ թողել եք, առավել ես՝ հրավիրել, ապա պետք է հաշվի առնեք ապրելաձև ու սովորություններս: Եթե հոգի ունեք, ուրեմն ասեք, թող...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Հասկանում եմ, հասկանում եմ: Հոգի ունեմ, ես վաղուց արդեն կարգադրել եմ: Ես հենց եկել եմ, որ հրավիրեմ ձեզ:

ՇՄԱԳԱ — Այդպիսի հաճելի լուր եք բերել և մինչև հիմա լռո՞ւմ եք: Կամ է, որ անհամբերությունից չմեռա, թե չէ քրեական գործ կբացվեր (Մտտենում է Նեզնամովին): Գրիշա, թող փիլիսոփայությունդ, գնանք: Ինչների՞ս է պետք բնությունը՝ անտառներ, լեռներ, լուսին: Մենք հո վայրենիներ չենք, մենք քաղաքակիրթ մարդիկ ենք:

ՆեջնԱՄՈՎ — Իսկապես, եղբայր, ձանձրալի է: Դե, գնացինք, քաղաքակիրթ մարդ, գնանք բուֆետ: Գնանք այնտեղ, ուր ինձ իմ խեղճ բախտն է առաջնորդում:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — (Միլովզորովին՝ ցածրաձայն): Այսօր կարծես տրամադրված է: Մի լավ տաքացրու դրան:

ՄԻՆՈՎԶՈՐՈՎ — Կաշխատեմ:

Բոլորը շարժվում են դեպի տուն, նրանց ընդառաջ են գալիս Կուլիկան և Դալովին:

Տ Ե Մ Ք Ա Ն Է Ր Ր Ո Ր Ղ

Նեզնամով, Միլովզորով, Շմազա, Կորինկեան, Կուլիկեան և Դալովին:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այդ ո՞ւր, պարոնայք: Չլինի՞ թե ինձանից եք փախչում:

ԿՐՈՐԻՆԿԻՆԱ — Օ, ոչ, նրանք անմիջապես կվերադառնան: Ես նրանց կբերեմ ձեզ մոտ:

ՇՄԱԳԱ — Բուպեներ են լինում դերասանի կյանքում, երբ նա սրընթաց դեպի իր նպատակն է սուրում, ինչպես աղեղից արձակված նետ: Իզուր բան է նրան կանգնեցնել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ե՞րբ են լինում այդ բուպեները:

ՇՄԱԳԱ — Երբ կզնգացնեն դանակներն ու պատառաքաղները և կասեն՝ ուտելիքը պատրաստ է:

ՆեջնԱՄՈՎ — Գնանք: Հերի՞ք է խեղկատակություն անես:

Կորինկեան, Նեզնամով, Միլովզորովը և Շմազան մտնում են տուն:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Շմազան բարձր պաթոսով է ուտելիքի մասին խոսում, նա ախորժակ է գրգռում. հենց զրա համար էլ մենք նրան հրավիրում ենք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո, դա էլ յուրատեսակ տաղանդ է, բայց հազիվ թե հարկ կա խրախուսելու նման ընդունակությունները:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Բայց ի՞նչ կարող ես անել: Մեր կյանքն այստեղ, գավառում, շատ տաղտկալի է, այնպես որ՝ Շմազայով էլ պիտի ուրախանաս: Ես քարոզիչ չեմ, իմ

համոզմունքն է սա՛ ապրիր և թող որ ուրիշներն էլ ապրեն: Դուք դեռ չե՞ք ձանձրացել այստեղ, սիրտներդ չի՞ նեղվում:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Իսկ որտե՞ղ է ավելի ուրախ: Ամեն տեղ էլ նույնն է: Բայց այստեղից ես, այնուամենայնիվ, շուտ պետք է մեկնեմ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ինչո՞ւ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Չափից ավելի շատ եմ այստեղ հուզվում, այստեղ ամեն ինչ ինձ իմ տխուր անցյալն է հիշեցնում:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ժամանակն է, որ արդեն անցյալը մոռանաք:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այդպես էլ էր, սկսել էի արդեն մոռանալ, բայց ահա պատահաբար իմ ծննդավայրն ընկա, և ամեն ինչ նորից կենդանացավ հիշողությանս մեջ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Մոռացե՛ք, մոռացե՛ք: Ժամանակն է, որ վայելեք ձեր փառքը, ձեր հաջողությունները, ժամանակն է հանգստանալու դափնիների վրա:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ուրախությամբ կհանգստանայի, բայց չեն թողնում: Երեկ քիչ էր մնում մեռնելի:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Մի՞թե, իսկ ի՞նչ էր պատահել:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Պարզվում է, որ ես խաբված եմ եղել ամենաանխիղճ ձևով: Երբ ինձ գրել են, թե որդիս մահացել է, նա կենդանի է եղել, նա առողջացել է: Նրան, որպես հոգեզավակ, տվել են ինչ-որ մեկին:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ո՞ւմ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ոչինչ հայտնի չէ, ոչ մեկը չգիտի: Ում որ կարելի էր հարցնել, հարցրել եմ: Ոմանք հիշում են, որ, իրոք, ինչ-որ եկվոր վաճառականներ են եղել կամ քաղթենիներ, ոմանք էլ ասում են՝ կալվածատերեր էին, և վերցրել են երեխային ու գնացել: Իսկ ուր՝ ոչ ոք չգիտի: Այդպես էլ հետքերը կորել են:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Հետքերն հիմա որտե՞ղ պիտի որոնեք: Ում որ երեխան խանգարում էր, ում որ պետք էր նրան թաքցնել, հավատացեք, թաքցրել են, ոնց որ պետքն է:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ուրեմն դուք կարծում եք, որ դիտմամբ են արել, ուզեցել են գլուխներն ազատե՞ն:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Անկասկած: Թե չէ ինչո՞ւ էին ձեզ գրում, որ նա մահացել է:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այո՛, իհարկե: Դե, տեսնո՞ւմ եք... Իսկ դուք դեռ խորհուրդ եք տալիս հանգստանալ:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Նույն բանի մասին անընդհատ մտածելն էլ լավ չէ: Ոչ մի օգուտ չկա, ոչինչ չեք կարող ձեռնարկել, իսկ խենթանալը դժվար բան չէ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Այո, իհարկե՛, իհարկե՛, ես հիմա հասկանում եմ, որ մարդ շատ հեշտ կարող է խենթանալ:

Տե՛ստում երևում է Մարտը:

Իսկ առայժմ ապրենք ու ուրախանանք: Կյանքը ուրախությամբ համար է տրված:

Մտնում է Մարտը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ն Ո Ր Ր Ո Ր Գ

Կուլիճիճա, Դուրուլիճ և Մարտ:

ՄՈՒՐՈՎ — Այնտեղ վերջին ոտքերն՝ ավարտեցին. նորից են ուզում սկսել:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Ներեցեք: Վազեմ տեղավորեմ թուղթ խաղացող պարոններին և անմիջապես վերադառնամ: (Գնում է):

ՄՈՒՐՈՎ — Թույլ կտա՞ք ինձ զրուցել ձեզ հետ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Դուք որե՛ք բա՞ն ունեք ինձ հաղորդելու:

ՄՈՒՐՈՎ — Ունեմ, բայց, ցավոք, այնքան էլ հաճելի լուր չէ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ոչի՞նչ, ասե՛ք: Ես սովոր եմ տհաճ լուրերի:

ՄՈՒՐՈՎ — Ես տեսա այն մարդուն, որի մասին ձեզ ասել էի:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Եվ ի՞նչ իմացաք նրանից:

ՄՈՒՐՈՎ — Որ այդ վաճառական Պրոստոկվաշինը...

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Դուք, կարծեմ, իվանով էիք ասում:

1 Թղթախաղի ձև

ՄՈՒՐՈՎ — Սխալ էի ասում, իսկ հետո հիշեցի: Ուրե՛մն այսպես, վաճառական Պրոստոկվաշինն իր հոգեզավակի հետ երեք թե շորս տարի սրանից առաջ իր առևտրական գործերով մնկնել է Աստրախան. երկուսն էլ այնտեղ վարակվել են ինչ-որ վարակիչ հիվանդությամբ ու մահացել:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Եթե դա ճիշտ էլ է, ապա չէ՞ որ այրին մնացել է: Այնպես որ, ավելի լավ է ասեք, որ բոլորն էլ մահացել են:

ՄՈՒՐՈՎ — Չէ, ինչպես կարելի է: Այրին ինչո՞ւ պիտի մահանար: Այրին մնացել է, անպայման մնացել է:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Իսկ ո՞ւր է նա, ի՞նչ է անում:

ՄՈՒՐՈՎ — Իսկ նա պետք է որ վշտից ամուսնացած լինի իր երիտասարդ գործավարի հետ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ինչպե՞ս է նրա ազգանունը:

ՄՈՒՐՈՎ — Հայտնի չէ, բայց դժվար չէ իմանալ. հարցնել է պետք միայն, թե ում հետ է ամուսնացել այրի վաճառականուհի Նեպրոպյոկինան:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դուք հենց նոր ասացիք, որ այդ վաճառականի ազգանունը Պրոստոկվաշին է, հիմա էլ Նեպրոպյոկի՞ն դարձավ:

ՄՈՒՐՈՎ — Ինչպե՞ս, մի՞թե: Սակայն չեմ վիճի. ես շատ հաճախ եմ խոսում ազգանունները:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մի հարց ևս. այն ամենի մեջ, ինչ-որ ասացիք ինձ երեկ և այսօր, որևէ ճշմարտություն կա՞:

ՄՈՒՐՈՎ — (Միձաղում է): Կտրական հարց է: Մի՞ կասկածեք, կա՞:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ո՞րն է:

ՄՈՒՐՈՎ — Այն, որ ձեր որդին մահացել է, որ նա վաղուց չի ապրում աշխարհում և ժամանակն է մոռանալու այդ ամենը:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Մոռացեք, ես ձեզ չեմ խանգարում:

ՄՈՒՐՈՎ — Ոչ, ես ձեզ խորհուրդ եմ տալիս: Զբաղվեք ձեր դերասանական գործերով, որ այնքան հաջողությամբ առաջ են գնում: Դուք տասնյոթամյա աղջիկ չեք, ժամանակն է հրաժարվելու սենտիմենտալությունից,

ժամանակն է, որ դատադուժյամբ առաջնորդվեք և կյանքին նայեք լրջությամբ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ինչպե՞ս եք համարձակվում ինձ խորհուրդներ տալ:

ՄՈՒՐՈՎ — Դուք ինքներդ ինձ ստիպեցիք: Դուք այստեղ շրջում եք քաղաքում, հարցուփորձ անում, գտել եք ինչ-որ կիսախելառ պառավի: Հաճելի՞ է դա ինձ, ապա մի մտածեք: Ես ամենախոշոր հողատերերից մեկն եմ, մեզ մոտ շուտով ընտրություններ են լինելու, ես քվեարկության եմ առաջադրվելու մի շատ կարևոր պաշտոնի, իսկ դուք այստեղ բամբասանքների առիթ եք տալիս: Բան չի մնում անելու՝ նստես ու սպասես սկանդալի:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Բայց ես ի՞նչ գործ ունեմ ձեզ հետ: Ես իմ որդուն եմ փնտրում, արգելել ինձ ոչ մեկը չի կարող:

ՄՈՒՐՈՎ — Ահա թե ինչ: Մեկ անգամ ևս առաջարկում եմ թողնել այս ամբողջ մեղդրաման և ձեզ համար ամենաձեռնաուղից արգելադրում հաշտվել ինձ հետ: Իսկ եթե չեք ուզում, ապա գոնե հեռացեք այստեղից:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես ոչ մեկն եմ ուզում, ոչ էլ՝ մյուսը: Ես պարտավոր եմ այստեղ ևս երկու ներկայացում խաղալ, և կխաղամ, և կմեկնեմ այստեղից, երբ որ ուզեմ:

ՄՈՒՐՈՎ — Պարտավո՞ր եք: Այդ ի՞նչ պարտավորություն է: Լիքը դահլիճնե՞րն են ձեզ հրապուրում: Ես ձեզ կվրձարեմ, կվճարեմ նաև անտրեպրենյորին:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դուք արդեն իմ բարության դիմաց շարությանք վճարել եք, իսկ այն շարությունը, որ դուք ինձ եք արել, ձեր կարողությունը չի հեքթի վճարելու: Ես այնքան հարուստ չեմ, որքան դուք, բայց անա պատրաստ եմ ամեն ինչ վճարելու, միայն թե ձեզ շտեսնեի, միայն թե ինձ հրեք չհանդիպեիք: Ես փախում էի ձեզնից, դուք ինքներդ ինձ գտաք:

ՄՈՒՐՈՎ — Գիտե՞ք ինչ, ես հանուն ձեզ ձրի էլ կհեռանայի այստեղից, առանց սրևէ վարձի, բայց ինձ չի կարելի: Ես այստեղի բնակիչ եմ, ամեն ինչով կապված եմ այստեղի հետ, իսկ դուք այստեղ ի՞նչ ունեք: Միայն

երևակայական բաներ: Այդպես երևակայել կարելի է որտեղ ուզես: Լսե՛ք ինձ, մի՛ վիճեք ինձ հետ: Դա ձեզ ձեռնառու չէ, ես ուժեղ մարդ եմ և կողմնակիցներ շատ ունեմ:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ես չեմ վախենում ձեզնից: Ես գիտեմ, որ դուք ամեն ինչի ընդունակ եք, բայց ավելի վատ բան, որ արդեն արել եք, չեք կարող մտածել:

ՄՈՒՐՈՎ — (Ուսերը բռնվելով): Դե, դուք գիտեք:

Մտնում է Դուրսից:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ Ի Ն Ղ Ե Ր Ո Ր Ղ

Կույրհիմա, Մուրով և Դուրսից:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ահա և նորից ես խոնարհվում եմ ձեր առաջ: Չե՞ք ուզում զբոսնել պարտեզում:

ԿՐՈՒՉԻՆԻՆԱ — Ոչ, այստեղ զով է: Ես ներս կգնամ: Մի՛ ուղեկցեք ինձ, ես մենակ էլ ճանապարհը կգտնեմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դե, ինչպես կամենաք:

Կույրհիման գնում է:

ՄՈՒՐՈՎ — Ասացեք, խնդրեմ, նիլ Ստրատոնիչ, այն երկտասարդ դերասանը, որին քիչ առաջ տեսա այստեղ, ընդունակութուններ ո՞ւնի:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Կարծես թե՛ այո: Ափսոս, չկա մեկը, որից բան սովորի, ընդորինակելի մարդ չի տեսնում և այդպես էլ կխրվի-կմնա գավառում: Իսկ սովորելու ժամանակը հիմա է, քանի դեռ երիտասարդ է:

ՄՈՒՐՈՎ — Բայց դե տեսքից այնքան էլ երիտասարդ չէ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Անկանոն կյանքը, կերուխումը, անքուն գիշերները դրանց շուտ են ծերացնում:

ՄՈՒՐՈՎ — Իսկ ի՞նչ եք կարծում, քանի՞ տարեկան է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Մի քսան-քսաներկու, ո՛չ ավելի:

ՄՈՒՐՈՎ — Զի՛ կարող պատահել: Կարծում եմ երեսունին մոտ է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ինչո՞ւ եք հարցնում նրա մասին:

ՄՈՒՐՈՎ — Շատ է իրեն սանձարձակ պահում, բարձր է խոսում, կտրական դատողութուններ անում:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դե, դուք մի նեղացեք: Դա նրանց ոճն է, իրենց պահել չգիտեն:

ՄՈՒՐՈՎ — Տաղավարը վերակառուցեցիք-վերջացրի՞ք:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Վերակառուցեցի և երաժիշտների համար էլ էստրադա շինեցի:

ՄՈՒՐՈՎ — Իսկ ո՞վ է դա, այդ դերասանը, և որտեղի՞ց է եկել:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ազգանունը նեղնամով է, իսկ թե որտեղի՞ց է, ո՞վ գիտի: Ինչո՞ւ է նա ձեզ այդքան հետաքրքրում:

ՄՈՒՐՈՎ — Չէ, ես հենց այնպես հարցրի: Ինչ-որ բան կա նրա մեջ: Երևում է, որ հասարակ ծագում չունի:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դե, իր ծագման մասին նա ինքն էլ չգիտի: **ՄՈՒՐՈՎ** — Իզուր եք դուք դրանց ընդունում:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Դրանց հետ մի տեսակ ուրախ է: Եվ հետո՞ ո՞ւմ են խանգարում: Չգիտեմ, ինձ հետ դրանք միշտ քաղաքավարի են:

ՄՈՒՐՈՎ — Դա դեռ քիչ է: Բոլորի հետ պետք է քաղաքավարի լինեն: Ես նրան ասացի, որ առաջ երիտասարդներն անհամեմատ ավելի հարգալից էին մեծերի նկատմամբ, իսկ նա հանդուժելուն ունեցավ առարկելու: Հավանաբար, ասում է, ծերերն առաջ ավելի խելացի ու պատկառելի էին: Հիմար պատասխան: Ասում եք, ուրեմն, որ քսան-քսաներկու տարեկա՞ն է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Այո՛, մոտավորապես այդքա՞ն:

ՄՈՒՐՈՎ — Լիճը մաքրեցի՞ք:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Մաքրեցի ու ձկներ բաց թողի, ուղղակի չեք ճանաչի:

ՄՈՒՐՈՎ — Հետաքրքիր է նայել:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Գնանք: (Գնում են դեպի պարտեզի խորհրդ):

Տե՛րց դուրս է գալիս Կուրիկինան, ետևից՝ Միովզորով:

Տ Ե Ա Ր Ա Ն Վ Է Գ Ե Ր Ո Ր Գ

Կորինկիեա, Միովգորով:

- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ո՞ւր եք այդպես շտապում:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Մի երկու խոսք պիտի ասեմ նիլ Ստրատոնիչին:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Դեռ կհասցնեք:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դու, ի՞նչ է, լիրիկական տրամադրութեան մե՞ջ ես:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ի՞նչ թաքցնեմ, այո. հիմա ես և՛ քնքույշ եմ, և՛ պերճախոս, և՛, կարծես, խելացի, իսկ դուք ինձանից փախչում եք:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — է, հետո՞ ինչ: Պատկերացրու, որ քեզնով զբաղվելու ժամանակ շունեմ: Նեզնամովն, ինչ է, պե՞տ քաշված է իրեն պահում:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Չէ, բացվել է արդեն: Ինքն ու Շմագան ուղղակի շին հեռանում սեղանից: Շուրջները մեծ հասարակութուն է հավաքվել. Շմագան սրամտում է, իսկ նեզնամովն էլ, ով որ քիթը վեր է տնկում, փորձում է վերևից խոսել կամ էլ ծաղրել նրանց, ածելու նման կտրում է: Նրանց շրջապատած մարդիկ ուղղակի հըռհըռում են: Իսկական խրախճանք է, գինարբուք: Մեկը թե՛ «Միասին խմենք, պարոն նեզնամով», մյուսը թե՛ «Միասին»: Իսկ Շմագան կրկնում է անընդհատ՝ «Ես էլ ձեզ կքնկերակցեմ»:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Քեզ հետ այստեղ գրույցի եմ բռնվել, մինչդեռ ինձ հարկավոր է տեսնել նիլ Ստրատոնիչին:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ահա նա, կարծես այստեղ է գալիս: Կրուչինինան մի երկու անգամ ճաշասենյակ մտավ. նեզնամովի մենախոսութունները լսում էր ու ետ դառնում:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Պետք է նրա մոտ ուղարկել նիլ Ստրատոնիչին, թե չէ երևի թողնի-հեռանա: Արդեն նկատել եմ, սկսում է ձանձրանալ:

Մտնում է Շմագան:

Տ Ե Ա Ր Ա Ն Ե Ր Ք Ե Ր Ո Ր Գ

Կորինկիեա, Միովգորով և Շմագա:

- ՇՄԱԳԱ — Այ, հիմա բնությամբ հիանալու ժամանակն է: Հիմա արդեն լուսինն էլ է խելացի նայում:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Իսկ նեզնամովն ուր է:
- ՇՄԱԳԱ — էլի էնտեղ:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Իսկ ինչո՞ւ ես, սիրելիս, նրան մենակ թողել:
- ՇՄԱԳԱ — Թե ուզում ես, ինքդ գնա մոտը. շնայած ընկերս է, բայց այսպիսի բողբոջներին աշխատում եմ հեռու մնալ նրանից:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ընկերդ է և վախենո՞ւմ ես. կեցցե՛ս, սիրելիս:
- ՇՄԱԳԱ — Դե, բախտդ փորձիր: Ահա գալիս է, ուզո՞ւմ ես քսի տամ վրադ:
- ՄԻՆՈՎՁՈՐՈՎ — Ոչ, ոչ, սիրելիս, ձեռ քաշիր, խնդրում եմ, ձեռ քաշիր:

Մտնում է նեզնամովը:

Տ Ե Ա Ր Ա Ն Ո Լ Ք Ե Ր Ո Ր Գ

Կորինկիեա, Միովգորով, Շմագա և նեզնամով:

- ՆԵՋՆԱՄՈՎ — (Կորինկիեային): Ա՛, դուք այստե՞ղ եք:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Այստեղ եմ: Իսկ որտե՞ղ կհրամայեք լինել:
- ՆԵՋՆԱՄՈՎ — Դե, ինձ համար միևնույն է: Եվ, այնուամենայնիվ, ես ձեզ սիրում եմ, ես սիրահարված եմ ձեզ:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Խոնարհաբար շնորհակալ եմ:
- ՆԵՋՆԱՄՈՎ — Իսկ դուք ինձ սիրո՞ւմ եք:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իսկ դուք ի՞նչ եք կարծում:
- ՆԵՋՆԱՄՈՎ — Ի՞նչ եմ կարծում: Որտեղի՞ց իմանամ:
- ԿՈՐԻՆԿԻՆԱ — Գուշակե՛ք:

ԵնթնԱՄՈՎ — Դե, այդ էր պակաս, շատ պետքս է գուշակել: Ուղղակի ասեք, առանց թաքցնելու:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչպե՞ս չէ, կասե՛մ: Այդ ինչո՞ւ որոշեցիք ինձ հետ այդպես խոսել:

ԵնթնԱՄՈՎ — Իսկ ինչո՞ւ չխոսեմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Չհամարձակվեք, և վերջ:

ԵնթնԱՄՈՎ — Համարձակվել, ասե՛նք, թե համարձակվում եմ: Իսկ գիտե՞ք, որ դուք ավելի լավն եք, քան ես ձեր մասին մտածում էի:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իսկ ի՞նչ էիք մտածում իմ մասին:

ԵնթնԱՄՈՎ — Հարցնո՞ւմ եք:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Այո՛, հարցնո՞ւմ եմ:

ԵնթնԱՄՈՎ — Կարծում էի, թե դուք արդեն ոչ մի հետաքրքրություն չեք ներկայացնում, կաք, չկաք՝ մեկ է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ա՛հ, ասովա՛ծ իմ: Ասացե՛ք խնդրեմ: Առաջինը, ուղորմած պարոն, դուք դեռ շատ երիտասարդ եք մարդկանց քննելու և գնահատելու համար. դուք դեռ երեսնա եք...

ԵնթնԱՄՈՎ — Այո, դա առաջինը, իսկ երկրորդն ինչ: Երկրորդը չե՞ք ասի: Ուզում եք, ես կսովորեցնեմ:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Դրա կարիքը չունեմ:

ԵնթնԱՄՈՎ — Ախր չեք ասի: Երբ կինը ջղայնանում է, երևակայում է, թե կարող է ասել սարսափելի, շատ դառը ճշմարտություններ: Հանդիսավոր սկսում է՝ «առաջինը», բայց մի հինգ բառով վերջացնում է, ասելիքն այլևս չի հերիքում: «Երկրորդ», «երրորդ», իսկ ասելու բան չկա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ա՛հ, ի՞նչ նողկալի է:

ԵնթնԱՄՈՎ — Բայց այստեղ էլ նրանք իրենց չեն կորցրնում: Երբ խոսքն ու ասելիքը չեն հերիքում, սկսում են հայհոյել: Եվ երկրորդ, կասեն՝ «դու հիմար ես, տգետ»: Այդպես չէ՞:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ճիշտ այդպես: Եվ երկրորդ, դու տգետ ես:

ԵնթնԱՄՈՎ — Ա՛յ, դրա համար մերսի: Ի՞նչ բնական եք ջղայնանում, դա լավ է:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Իսկ եթե մյուս անգամ հիմարություններ

դուրս տաք, ավելի բնական կլինեմ, այնպիսի ապտակ կհասցնեմ...

ԵնթնԱՄՈՎ — Իսկ ինչո՞ւ մյուս անգամ և ոչ հիմա:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ջղայնությունս արդեն անցավ, հիմա դա կատակ կլինի, իսկ ես լուրջ եմ ուզում:

ԵնթնԱՄՈՎ — Դե, գոնե կատակով:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ինչ եք կպել, պոկ չեք գալիս: Դե, ասա՛՛ ձեզ: (Քնփռեմ խփում է նեզեմամբի այտին):

ԵնթնԱՄՈՎ — Ահա, այդպես ուրեմն: Դե, հիմա պաշտպանվեք: Ես հիմա լիովին իրավունք ունեմ...

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Էլի ի՞նչ: Ի՞նչ իրավունք:

ԵնթնԱՄՈՎ — Համբուրելու ձեզ: Էլ ինչո՞վ կարող եմ պատասխանել կնոջը վիրավորանքի դիմաց:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ի՞նչ եք ասում: Դժվե՛լ եք, ի՞նչ է:

ԵնթնԱՄՈՎ — Դե, վերջ, էլ ոչ մի խոսակցություն:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Ուշքի եկեք, նեզնամով, ի՞նչ հիմարություններ են: Ահա, նիլ Ստրատոնիչը գալիս է:

ԵնթնԱՄՈՎ — Ափսոս նիլ Ստրատոնիչը խանգարեց, թե չէ... Բայց դե մեկ է, տուն միասին ենք գնալու...

Մտնում է Դուլուկինը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Ղ

Կորնելիեա, Միլովգորով, Շմագա, Նեզեմամ և Դուլուկին:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Նիլ Ստրատոնիչ, այդ ինչո՞ւ Կրուչինինայի մենակ թողեցիք. նա կարծես պատրաստվում է տուն գնալու:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ինչպե՞ս թե տուն: Ո՛չ, ո՛չ, առանց ընթրիքի չի կարելի: Թանկագինս, որե՛ք ձևով պահեք նրան:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Բայց նա ինձ չի լսի:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ուրեմն միասին գնանք համոզելու:

ԿՈՐԻՆԿԻՆԱ — Գնա՛նք, Բայց մի ըոպե սպասեք: (Դիմելով նեզեմամբին և Շմագային): Պարոնայք, ընթրիքի ժամանակ, և ընդհանրապես Կրուչինինայի ներկայությամբ,

խնդրում եմ, երեխաների մասին ոչ մի խոսակցություն չբացեք:

ՆեջնԱՄՈՎ — Երեխաների: Դա ի՞նչ բան է: Ինչո՞ւ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ահ, այո՛, այո՛, այո՛: Ո՛չ մի դեպքում, պարոնայք, ո՛չ մի դեպքում:

ՆեջնԱՄՈՎ — Շատ տարօրինակ է: Իսկ եթե տեղը դա: Դե, ի վերջո, կարո՞ղ է խելթիս այդպիսի մի բան փշել:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ո՛չ, ես ձեզ խնդրում եմ, համարեք, որ ինձ անձնակաճան լավութուն եք անում: Ես, իբրև տանտեր, աշխատում եմ, որ իմ հյուրերի համար ոչ մի տհաճ բան չլինի:

ՆեջնԱՄՈՎ — Երեխաների մասին չի կարելի, իսկ շափահասաների մասին կարելի՞ է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Շնորհ արեք:

ՇՄԱԳԱ — Չէ, Գրիշա, ավելի լավ է տատիկների ու պապիկների մասին խոսենք:

ՆեջնԱՄՈՎ — (Բարձրաձայն ծիծաղում է): Հա՛-հա՛-հա՛: Ճիշտ է: Դե, դուք կարող եք հանգիստ լինել: մենք այնպիսի տարիքի մասին կխոսենք, որը շատ հեռու է մանկականից:

Գուպուկինն ու Կորեկինան զնամ են:

Սա՞ ինչ նորություն է, ի՞նչ վայրենի կարգադրություն: Չլինի ինչ-որ նոր խաղ է: Ընթրիք՝ զրույցի հատուկ ծրագրով:

ՄԻՆՈՎԶՈՐՈՎ — Մի՞թե դու արդեն մոռացել ես, սիրելիս, թե ինչ էի քեզ ասում:

ՆեջնԱՄՈՎ — Ա՛հ, այո՛: Հիմա հասկանում եմ: (Գլուխն առնում է ձեռների մեջ):

ՄԻՆՈՎԶՈՐՈՎ — Նշանակում է ճիշտ է. իսկ դու ինձ, սիրելիս, ուզում էիր սպանել:

ՆեջնԱՄՈՎ — էլ ո՞նց կլինի: Թեկուզ սպանելի էլ: Մեծ բան ես, էլի:

Շմագն բավական հեռանում է:

Ես ահա շատ գոհ կլինեի, եթե մեկն ու մեկն ինձ սպաներ: Հե՛յ, Շմագա՛, ի՞նչ ես փախչում ինձանից, ի՞նչ ես վախենում:

ՇՄԱԳԱ — (Հեռվից): Խրատվել եմ, դրա համար էլ փախչում եմ:

ՆեջնԱՄՈՎ — Այստե՛ղ արի, որևէ բան դուրս տուր:

ՇՄԱԳԱ — Ախր ի՞նչ դուրս տամ: Սրամտությունը բաց օդում ցնդել է սկսում, որևէ բան է պետք ավելացնել:

ՆեջնԱՄՈՎ — Մի քիչ սպասիր, կավելացնենք: Եղբա՛յր, Շմագա՛, առիթից օգտվել է պետք: Միշտ չէ, որ մեզ կարգին հասարակություն են հրավիրում, միշտ չէ, որ մեզ հետ մարդավարի են վերաբերվում: Չէ՞ որ մենք այստեղ նույնպիսի հյուրեր ենք, ինչպես բոլորը:

ՇՄԱԳԱ — Ճիշտ է, սա որևէ ճնորին պատվարժանությունն տան կերուխումներից չէ, երբ ամեն ինչ անպայման վերջանում է տանտիրոջը քոթակելով, ոչ մի կերպ հնարավոր չի լինում առանց դրա:

ՆեջնԱՄՈՎ — Այո, այստեղ մեզ համար լավ է: Բայց, ախր, մենք մեզ այնքան էլ կարգին չենք պահում, մեկ էլ տեսար՝ սկանդալ սարքեցինք: Այսինքն՝ սկանդալ, իհարկե, չէ, բայց որևէ հիմարություն բացառված չէ:

ՇՄԱԳԱ — Ոնց որ թե: Բայց ի՞նչ անես: Կաշվիցդ հո դուրս չե՛ս գալու:

Մտնում են Գուպուկիք, Կուլիբինան, Կորեկինան, երեսնց ետևից՝ երկու սպասավոր. մեկը շամպայնի շշերով, մյուսը՝ սկստեղին բաժակներ շարած: Շշերն ու բաժակները դնում են սեղաններին: Պարտեզի խորից գալիս է Մուրավը, տնից դուրս են գալիս հյուրերը, որոնց մի մասը մնում է առաստաղ, իսկ մյուս մասն առանձին խոթերով տեղավորվում են պարտեզի բացատում:

Տ Ե Ս Ա Ր Ի Ն տ ա ս ն Ե Ր Ո Ր Դ

Նեզնամով, Միլովզորով, Շմագա, Գուպուկին, Կուլիբինա, Կորեկինա, Մուրավ, հյուրեր և սպասավորներ:
ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ի՞նչ եք ասում, Ելենա Իվանովնա, հազարից մի անգամ այսպիսի երջանկության արժանացանք,

տեսանք ձեզ մեր հասարակութեան մեջ. ձեր գալստյան մասին ես ոսկե տառերով գրելու եմ պատիւն, իսկ դուք ուզում եք լքել մեզ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես ձեզնից շատ շնորհակալ եմ, նիւ Ստրատոնիչ, և հաճույքով կամնայի, բայց չեմ կարող: Զէ՞ որ ես այսօր երեկոյան եմ միայն ազատ, իսկ մյուս բոլոր օրերին ներկայացում կա, ինձ հանգստանալ է պետք:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Բայց դեռ կհասցնեք, կհասցնեք և՛ տանը լինել, և՛ հանգստանալ. հատկացրեք մեզ գոնե կես ժամ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Զեմ կարող, նիւ Ստրատոնիչ, չեմ կարող: Ես ահա հրածեղտ կտամ ընկերներին, կգտնեմ իմ կազալերին ու կգնամ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ո՛չ, ո՛չ, առանց ձեզ արժանավայել հրածեղտի, այնուամենայնիվ, բաց չենք թողնի: Միակատարութիւնը ինչպես հարկն է պիտի կատարվի: Նըստեք, ահա, այս բազմոցին: Ինչ որ պետք է, ասել եք: Նինա Պավլովնա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո՞, պատրաստ է: (Սպասավորին): Բեհրե՛ք:

Շամպայն եմ մատուցում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Սա ավելորդ է, նիւ Ստրատոնիչ, ես գինի չեմ խմում, ինձ վնաս է:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Առանց սրա չի լինի. այստեղ պատվարժան հյուրերին միշտ էլ այսպես են ճանապարհում: Շնորհ արեք: Դե, գոնե մի քիչ, ինչքան կարող եք:

Կուլիբինան վերցնում է գինու բաժակը:

Պարոնայք, վերցրեք բաժակները, խնդրում եմ: Խմենք Նինա Իվանովնայի կենացը:

ՄՈՒՐՈՎ — Միրով ընդունում եմ ձեր առաջարկը. ես դեռ չեմ հասցրել շնորհակալութիւն հայտնել այն հիւանդների համար, որ նա պատճառեց մեզ իր տաղանդով:

Բոլորը վերցնում են բաժակները:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Պարոնայք, ես առաջարկում եմ խմել մի գերասանուհու կենաց, որը կյանքի կոչեց մեր հետա-

մնաց կյանքի լքյալ ու անշարժ ճահիճը: Պարոնայք, հոնտորիկան խորթ է ինձ, ես պարզ կխոսեմ: Մեզ, մտավորականներին համար, գավառում երկու զբաղմունք կա միայն՝ թղթախաղն ու դատարկախոսութիւններն ակումբում: Եկեք հարգենք, ուրեմն, այն տաղանդը, որը ստիպեց մեզ մոռանալ մեր սովորական ժամացը: Մենք քնած ենք, պարոնայք, ուրեմն երախտապարտ լինենք այն ընտրյալ մարդկանց, որոնք երբեմն արթնացնում են մեզ և հիշեցնում այն իդեալական կյանքը, որի մասին մենք մոռացել էինք:

Ձայներ՝ «Բուպո՛ւ, բուպո՛ւ»:

Տաղանդն ինքնին թանկ բան է, իսկ մյուս հատկանիշներին՝ խելքի, հոգեկան բարութեան, հոգեկան մաքրութեան հետ միասին մեզ է ներկայանում արդեն իբրև այնպիսի մի երևույթ, որի առջև մենք պետք է զուլխ խոնարհենք: Պարոնայք, խմենք հազվադեպ տաղանդի և լավ կնոջ՝ Նինա Իվանովնայի կենացը:

Բոլորն իրենց գավաթները գարկում են Կուլիբինայի գավաթին և խմում:

ՆեջնԱՄՈՎ — (Խփելով Շամպայի բաժակին): Շամպա, լավ դերասանուհու կենացը խմենք, իսկ լավ կանանց կենացը խմելը մեր գործը չէ: Եվ հետո՛ ով գիտի, լավն են նրանք, թե վատը:

ԳՈՒԴՈՒԿԻՆ — Նեզնամով, ինչե՛ր եք խոսում:

ՆեջնԱՄՈՎ — Ներեցեք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Ես իմ ծառայութիւնների համար արդեն բավականաչափ վարձատրված եմ և՛ բարոյապես, և՛ նյութապես: Պարոնայք, այն պատիվը, որ դուք եք ինձ ցույց տալիս, ես պարտավոր եմ կիսել իմ ընկերների հետ: Պարոնայք, ես առաջարկում եմ արվեստի բոլոր սպասավորների, այս ազնիվ բնագավառի բոլոր մշակների կենացը՝ անկախ աստիճանից ու տաղանդից:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Արդարացի՛ է, հիանալի՛, ազնի՛վ: Նինա Պավլովնա, Միլովզորո՛վ, Նեզնամով, Շամպա՛, ձեր կենացը:

ՄՈՒՐՈՎ — Չե՛ր կենացը, պարտնա՛յք:
ՇՄԱԳԱ — Ի վերջո, ես էլ արժանացա իմ կենացը խմելուն:
ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Դե, նիլ Ստրատոնիչ, հիմա արդեն ես կգնամ, ժամանակն է:

ՆեջնԱՄՈՎ — Ո՛չ, այդ ո՛ւր եք գնում: Ո՛չ, թույլ տվեք: Այդպես չի կարելի: էլի կենաց է պետք առաջարկել: (Բարձրաձայն): Հե՛յ, գինե՛ր տվեք: Դուք թույլ կտա՛ք ինձ գոնե մի քանի խոսք ասել. ես ձեզ չե՛մ ուշացնի, չե՛մ ուշացնի: Միայն թե ասեմ հոգուս մեջ եղածը. չեմ ուզում, որ այդպես էլ շասված մնա:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Շնորհ արեք: Ինձ համար շատ հաճելի է ձեզ լսելը, և հուսով եմ, որ մյուսներին նույնպես:

ՆեջնԱՄՈՎ — Պարոնայք, ես խոսելու թույլտվություն եմ ստացել և խնդրում եմ չընդհատել ինձ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Խոսե՛ք:
ՄԻՆՈՎՉՈՐՈՎ ԵՎ ՇՄԱԳԱ — Խոսի՛ր, խոսի՛ր:

ՆեջնԱՄՈՎ — Պարոնայք, ես առաջարկում եմ այն մայրերի կենացը, որոնք լքում են իրենց զավակներին:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Վե՛րջ տվեք, այդ ինչե՛ր եք խոսում, վե՛րջ տվեք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Ապշած): Ո՛չ, խոսե՛ք, խոսե՛ք:

ՆեջնԱՄՈՎ — Թող նրանք ուրախ ու խնդուն լինեն, և թող նրանց ճանապարհը ծածկված լինի վարդերով ու շուշաններով: Թող ոչ մեկը և ոչինչ չթունավորի նրանց ուրախ գոյությունը: Թող ոչ մեկը և ոչինչ չհիշեցնի նրանց դժբախտ որբերի գառը ճակատագրի մասին: Ինչո՞ւ անհանգստացնել նրանց: Ինչո՞ւ վրդովել նրանց հանգիստը: Այն ամենը, ինչ կարողացել են, ինչ ձեռքներից եկել է՝ նրանք արել են իրենց զավակի համար: Նրանք արցունք են թափել նրա վրա՝ ում ինչքան վիճակվել է, մի քիչ ավելի, մի քիչ պակաս քնքշությամբ համբուրել են: Եվ, մնաց բարո՛վ, աղավնյա՛կս, ապրի՛ր՝ ինչպես կուզես: Իսկ ավելի լավ կլիներ, եթե, ահա, մեռնեիր: Իսկ ինչ որ ճիշտ է, ճիշտ է, մեռնելն ամենալավ բանն է, որ կարելի է ցանկանալ աշխարհ եկած այդ նոր հյուրին: Բայց այդպիսի երջանկություն բուրդին չի վիճակվում: (Խոնարհում է գլուխը ու մի պահ մտա-

ծում): Իսկ լինում են նաև ավելի դժայուն մայրեր. նրանք չեն սահմանափակվում արցունքներով ու համբույրներով, իրենց երեխայի վզից են կախում որևէ աննշան ոսկեզարդ. կրի որ հիշի ինձ: Իսկ ի՞նչ հիշի խեղճ երեխան: Ինչո՞ւ հիշի: Ինչո՞ւ են երեխային թողնում նրա դժբախտության ու խայտառակության մշտական հուշը: Առանց այն էլ տեղից վեր կացողը նրան հիշեցնում է, որ նա ընկեցիկ է, ցանկապատի տակ թողնված: Իսկ տեսնես գիտե՛ն նրանք, թե երբեմն ինչպես է այդ դժբախտը, անտեղի անարգվածն ու ստորացվածը արցունքներով ողողում մայրիկի նվերը: Թե, ահա, որտե՞ղ ես ցնծում հիմա, ձա՛յն տուր: Մի արցունք գոնե թափիր ինձ վրա: Այդ հուշանվերներն, ախր, մարդու կուրծք են այրում:

Կրուչինեան նետվում է դեպի նեզամուրը և հանում երա կրճից մեղալիներ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Նա՛ է, նա՛ է: (Օրոշվում է և ուշագնաց ընկնում բազմոցին, բազուրը շրջապատում են նրան):

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ահ, աստված իմ, նա մեռնում է: Բժշկին, բժշկին: Դուք նրա որդին եք: Դուք սպանեցիք նրան:

ՆեջնԱՄՈՎ — Ես նրա որդի՞ն եմ:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Այո: Քանի՛ տարի է նա ձեզ փնտրել: Նրան հավատացրել են, թե դուք մեռել եք: Բայց նա ինչ-որ հրաշքի է սպասել: Նա մշտապես տեսել է ձեզ իր երազներում, խոսել է ձեզ հետ:

ՆեջնԱՄՈՎ — Նա ուրիշ երեխաներ չի՞ ունեցել:
ԴՈՒԴՈՒԿԻՆ — Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում:

ՆեջնԱՄՈՎ — Իսկ ինձ ուրիշ բան էին ասում: Պարոնայք, ախր, ինչո՞ւ էիք դուք ինձ խաբում:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Լոնցե՛ք, լոնցե՛ք, նա ուշքի է գալիս:
ՆեջնԱՄՈՎ — Պարոնայք, ես ձեզնից վրեժ չեմ լուծի, ես գազան չեմ: Ես հիմա երեխա եմ: Ես դեռևս երեխա չեմ եղել: Այո, ես երեխա եմ: (Մունկի է գալիս Կրուչինեի նայի առջև): Մայրիկ: Մամա՛, մամա՛:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — (Ուշքի գալով): Այո, նա պարզում էր իր

Քաթիկոսներն ու ասում՝ մամա՛, մամա՛:
ՆեջնԱՄՈՎ — Ես այստեղ եմ:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Այո, նա է... Գրիշա՛, իմ Գրիշա՛: Ի՛նչ
երջանկութիւն: Ի՛նչ լավ է աշխարհում ապրելը: (Շոյում
է Նեգեամովի գլուխը): Պարոնայք, մի վիրավորեք նրան,
նա լավ մարդ է: Իսկ հիմա նա գտել է իր մորը և ավելի
լավը կլինի:

ՆեջնԱՄՈՎ — (Յածաւայն): Մայրիկ, իսկ որտե՞ղ է
հայրս:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Հա՛յրդ... (Նայում է շուրջը):

Մտաւը շրջում է ետեւը:

Հայրդ... (Քեհշաձայն): Քո հայրը արժանի չէ, որ դու
նրան փնտրես: Բայց ես կուզենայի, որ հիմա նա տես-
ներ մեզ: Միայն նայեր: Բայց մեր երջանկութիւնից
մենք նրան բաժին չենք հանի: Ինչի՞դ է պետք հայրը:
Դու լավ դերասան կդառնաս, մենք կարողութիւն
ունենք... Իսկ ազգանուն... Կվերցնես իմ աղպանունը և
կարող ես հպարտութեամբ կրել. ոչնչով պակաս չէ բո-
լոր մյուսներին:

ԴՈՒԴՈՒԿԻՆ — Իսկ ես կարծեցի, թե մահացել եք:

ԿՐՈՒԶԻՆԻՆԱ — Երջանկութիւնից չեն մեռնում: (Գրկում է
որդուն):

Ա. Ն. ՕՍՏՐՈՎՍԿԻ

Ալեքսանդր Նիկոլանիչ Օստրովսկին, ռուս դասական դրամատուրգիայի
խոշորագույն ներկայացուցիչը, նոր դարագլուխ բացեց ռուս դրամատուր-
գիայի պատմութեան մեջ:

Օստրովսկին ծնվել է Մոսկվայի Զամոսկվորեչիե թաղամասում, 1823
թվի ապրիլի 12-ին, մանր պաշտոնայի ընտանիքում:

Գիմնազիայում Օստրովսկին սկսեց սովորել 1835 թվից, իսկ 1840
թվի աշնանից մինչև 1843 թվի դարունը սովորել է համալսարանում և
երրորդ կուրսից Ռոզևի ուսումը: 1843 թվին նա աշխատանքի է անցել
դատական գրասենյակում:

Միջավայրը նրան անսպասելի էր տալիս սնանկացող վաճառական-
ների, դաժան պարտատերերի, խորամանկութիւնների դիմող պարտա-
պանների և բազմաթիվ կեղծիքների ու անիրավութիւնների մասին:

1847-ից մինչև 1849 թթ. հեղինակը աշխատում է իր առաջին՝ «Մենք
ու մենք ենք՝ կհարմարվենք» կատակերգութեան վրա, որը 1850 թվին
տպագրվեց «Մոսկվիտյանինում»: Այդ պիեսով դրամատուրգի անունը
հռչակվեց գրական-թատերական աշխարհում: «Մոսկվիտյանինում» առա-
ջին կատակերգութեանից հետո Օստրովսկին տպագրում է «Աղքատ հարս-
նացուն», «Ուրիշի սահնակը մի նստիր», «Աղքատութիւնը արատ չէ» և
այլ գործեր:

«Ուրիշի սահնակը մի նստիր» կատակերգութիւնը առաջին անգամ բե-
մադրվեց 1853 թվին, Մոսկվայի Փոքր թատրոնում: Այստեղ իրար ետեփ
բեմադրվում են հեղինակի պիեսները, իսկ 1857 թվին լույս է տեսնում
«Եկամտաբեր պաշտոն» կատակերգութիւնը, որտեղ հեղինակը անխեղ
քննադատում է նախառեֆորմյան Ռուսաստանի լինովնիկութեան բար-
բերն ու կենցաղը:

Վոլգայով ճանապարհորդելիս, Օստրովսկին որոշում է գրել «Ամպրո-
պը» և մի շարք այլ գործեր: Այդ ուղևորութիւնը նրա մեջ մեծ ցանկու-
թիւն է առաջացնում՝ գրելու պատմական պիեսներ:

1862 թվին «Սովրեմեննիկում» տպագրվում է «Կուզմա Զախարիչ Մի-
նին-Սուխոուկ» պատմական պիեսը և մի քանի այլ երկեր: Նույն ժամա-

նակաշըշանում «Սովորմաննիկում» Օստրովսկին լույս է ընծայում Շեքսպիրից կատարած իր թարգմանությունը՝ «Կամակոր կնոջ սանձահարումը»։ Անվանի դրամատուրգը նաև աչքի ընկնող թատերական գործիչ էր 1866 թվին Մոսկվայում կազմակերպվում է արտիստական մի խմբակ, որի նպատակն էր զարգացնել հասարակության գեղարվեստական ճաշակն ու գիտելիքները։ Այս «Արտիստական խմբակի» գործունեության մեջ Օստրովսկին կատարել է մեծ դեր։ Նա իր հասարակական և գրական գործունեության համար գնահատվել և արժանացել է ժողովրդի շքեղ վերաբերմունքին։

«Պարզապես ասացեք, ժամանակն է որևէ բան անել Օստրովսկու համար. նա գրել է մի ամբողջ ռուսական թատրոն՝ կազմված երեսուց պիեսներից և մեկ միլիոն ռուբլուց ավելի եկամուտ է բերել դիրեկցիային։ Եղբք հայր և բարեգործը։ Հիմա ես ծայրահեղ նեղություն եմ քաշում իմ երեխաների հետ. բայց չէ՛ որ ես ազնվությամբ քոսն տարի աշխատել եմ թատրոնի համար և ամբողջ հոգով ծառայել եմ նրան»։ 1869 թվին այսպիսի նամակով է դիմում Նեկրասովին ռուսական թատրոնի պարծանքը՝ Օստրովսկին, կառավարող շրջանների կողմից մոռացված, նյութական ծայրահեղ կարիքի մեջ, ֆիզիկապես հյուսված ու հոգնած։

Սակայն նյութական կարիքը երբեք չմթաղեց նրա պայծառ միտքը, և ձեռան ցուրտը չընկճեց հալածվածների համար բարբառող նրա շքեղ սիրտը։ 1873 թվին նա գրում է «Մենգուրդկան»։ Այնուհետև դրամատիկական կրկերի մի ամբողջ շարք, որոնց թվում «Գալլեր և ոչխարներ», «Եղմարտությունը լավ է, իսկ երջանկությունը՝ ավելի լավ», «Վերջին զոհը» թատերգությունները։ Օստրովսկին ստեղծագործական վերելք է ապրում, իրականության արատավոր կողմերը մերկացնելու անմարելի տենչը նորանոր երկեր ստեղծելու լիցք է տալիս։ 1878 թվին նա գրում է «Անծոխոր», երկու տարի հետո՝ «Տաղանդներ և երկրպագուները»։ Ապա գրչի անխոնջ մշակը գրեց «Անմեղ մեղավորները», որը նրա վերջին աչքի ընկնող երկն է։

Ալեքսանդր Նիկոլայևիչ Օստրովսկին ընթերցողի և հանդիսատեսի առաջ բացեց մի նոր աշխարհ՝ դրամի և սեփականության տիրապետության աշխարհը։

Օստրովսկին հանդես եկավ նախառեֆորմյան շրջանում, երբ ռուսական իրականության մեջ սոցիալական հակասությունները հասել էին ծայր աստիճանի, երբ գյուղացիական հարցը լուծված չէր, մյուս կողմից էլ նոր աճող բուրժուազիան համառ կերպով ճանապարհ էր հարթում իր տիրապետության համար։ Նախառեֆորմյան և դրան հաջորդող շրջանն իր բազմակողմանի և ռեալիստական գեղարվեստական պատկերումն ստացավ Օստրովսկու ստեղծագործություններում։

Բնական է, որ ժամանակի պահպանողական քննադատությունը ընդունեց Օստրովսկու տաղանդի մեծությունը։ Մի քանի քննադատներ, որոնց թվում և Ա. Գրիգորևը, փորձում էին Օստրովսկու ստեղծագործությունները մեկնաբանել միանգամայն սխալ տեսանկյունով, իբրև տիրող

իրականության նկատմամբ համեմատելիություն բարոյազ երկեր։ Դանդիցին նաև քննադատներ, որոնք Օստրովսկուն համարեցին կենցաղագիր, նրա ստեղծագործության առանձնահատկությունը տեսնելով բարբառության մեջ։

Սակայն Դոբրոլյուբովը, իրեն հասուկ խորաթափանցությամբ, բացահայտեց տիրող բնականությունը, կարգերը, ամբարտավանությունները մերկացնող ու քննադատող Օստրովսկու ստեղծագործության ուժը։ Դոբրոլյուբովի կարծիքով, Օստրովսկին խորաթափանցությամբ պատկերել է մարդկանց նյութական և ընտանեկան հարաբերությունները։ Մեծ քննադատը սպառնիչ կերպով բնութագրում է Օստրովսկու դրամատուրգիայի առանձնահատկությունը, այսինքն՝ նրա ռեալիզմը և հասարակական մտանքի աշխատական մոտեցումը կյանքին։ Օստրովսկուն նվիրված իր առաջին հոգվածը վերնագրելով «Նավարի թագավորություն», քննադատը դրանով իսկ բացահայտել է դրամատուրգի ստեղծագործության հիմնական գծերից մեկը՝ կամակոր և րուբ իշխանավորների, բիրտ վաճառականների տիրապետության աշխարհի պատկերը։

Ընդհանրապես Օստրովսկու աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել հեղափոխական դեմոկրատներ Գերցենը, Բեկինսկին, Դոբրոլյուբովը։ Նրան այդ հոսանքի հետ կապողը եղել է նրա խոր ժողովրդասիրությունը և բունակալության դեմ ունեցած ատելությունը։ Սակայն 50-ական թվականների առաջին կեսերին Օստրովսկու վրա որոշ ազդեցություն է ունենում սլավոնաֆիլ հոսանքը։ Հեղափոխական զեռկրատ քննադատները մտահոգվեցին հեղինակի ճակատագրով և 1854 թվին Չերնիշևսկին հրատարակեց Օստրովսկուն ռեալիստ հոսանքից նախազուգուցնող մի հոգված, գրելով՝ «Տաղանդի ուժը եղմարտության մեջ է, սխալ ուղղությունը կործանում է ամենամեծից տաղանդը»։ Օստրովսկին ինքն էլ ճշմարտությունը գերադասում էր ամեն ինչից, ահա թե ինչու նա աղատագրվեց սլավոնաֆիլների ազդեցությունից, և ընդմիջտ ամբապնդվեց քննադատական ռեալիզմի առաջավոր դիրքերում։ Չեռնիշևսկին գերազույն բավականությամբ ողջունում է Օստրովսկուն՝ նրա ընտրած «ուժեղ և ազնիվ ուղղության համար»։

50-ական թվականների երկրորդ կեսից սկսած ավելի և ավելի է աճում դրամատուրգի կապը «Սովորմաննիկի» խմբագրության, մասնավորապես Նեկրասովի հետ։ Սկսած 1857 թվից «Սովորմաննիկում» տրպագրվում են Օստրովսկու բոլոր պիեսները, իսկ «Սովորմաննիկի» փակվելուց հետո դրամատուրգը շարունակում է տպագրվել Սալտիկով-Շչեդրինի խմբագրած «Օտեչեստվեննիյ» զապիսկիում։

Դրամատուրգի ռեալիստական ստեղծագործությունը ուղղված էր տիրող կամայականության, բունությունների, մարդկային արժանապատվությունը ռուսահարողների դեմ՝ օգնելով հեղափոխական դեմոկրատիային ինքնակալության դեմ մղվող պայքարում։

Օստրովսկու ստեղծագործությունները անցյալում պատշաճ ընդունելություն չեն գտել զեկապար շրջաններում։ Դրամատուրգը խոր դառնու-

Քյամբ հայտնել է, որ «տեղ չունի բեմադրելու իր «Ժողովրդական ոգով» պիեսները», «ոուս գրողի համար Ռուսաստանում բեմ չկա»:

Ցարական գրաքննությունն իր հերթին ամեն կերպ հետապնդում էր գրամատուրգին, դժվարին խոշորոտներ ստեղծելով նրա ստեղծագործական վերելքի ճանապարհին, Գրաքննությունը արգելեց «Եկամտաբեր պաշտոն», «Ամպրոպ», «Ընտանեկան դրվագ», «Մենք ու մենք ենք՝ կհարմարվենք» պիեսները՝ դրանց մեջ եղած ընդհանրացումների, տիրող իրականության սպանիչ քննադատության համար:

Այս վերջին պիեսի դեմ խոշոր վաճառականները զեկուցագիր ուղարկեցին Պետերբուրգ, որտեղ որոշվեց կարգի հրավիրել անզուսպ հեղինակին: Նրկույա I հարգում է վաճառականների բողոքը: Օստրովսկուն հանում է աշխատանքից, ոստիկանության հսկողության տակ առնում, իսկ կատակերգության բեմադրությունը թույլատրվում է միայն 1861 թվին, երբ հեղինակին հարկադրում են պիեսի ֆինսյուս թրարնախառնությունը մտցնել: Նման պարագաներում բնական էր գրողի ցաստանալից բողոքը. «Ես խելովել ու խելովում եմ առանց լավ թատրոնի, ինչպես ձուկը ջրից դուրս: Իմ պայծառ օրերը անցել են, բայց արդեն խիստ երկար է տևում գիշերը, գոնե կյանքիս վախճանին արշալույս տեսնեի»:

Իր հերոսներից մեկի՝ Ժաղովի բերանով Օստրովսկին ընդգծում է, որ սեփականատիրական աշխարհը աղավաղում է մարդու մեջ եղած սքանչելին և ազնիվը («Եկամտաբեր պաշտոն»):

Օստրովսկին ցայտուն կերպով ցույց է տվել, թե ինչպես տղետ և հիմար մարդիկ կարողանում են իրենց նպատակին հասնել՝ մեծավորի առջև սողալով: Յուսուով կարողանում է ապրել ըստ պահանջի, որովհետև սոստում է Արխատարի Վիշնևսկու առաջ՝ Օնիսիմ Բելոգորովը նույն ձևով ստորաբարշտություն է անում Յուսովի առաջ՝ եկամտաբեր պաշտոնը ձեռք բերելու համար: Եվ ահա այդ կեղտոտ միջավայրում երևան է գալիս բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ ուսմանտիկ Ժաղովը: Վերջինս հակադրվելով ցարական հիմնարկություններում տիրող կաշառակերությանը, ստին ու կեղծիքին, ցանկանում է իր գոյությունը պահպանել իբրև ազնիվ ծառայող: Սակայն Ժաղովի գեղեցիկ իդեալները բախվում են տիրող դաժան իրականությանը և կործանվում: Օստրովսկին իբրև ռեալիստ գրող, ցույց է տալիս, որ միջավայրն ավելի հզոր է, քան դրան հակադրվող անհատը: Որքան շրջապատում տիրող կենցաղային ու աշխատանքային բարքերը անտեսանելի էին Ժաղովին, նույնքան վերջինիս բարի ցանկությունները տարորինակ ու անհանդուրժելի էին շրջապատի համար: Ժաղովին ծաղրում են և համարում ցնորված: Այս է կատակերգության մեջ ծավալված դրամատիկական բախումների հիմքը: Ազնիվ հերոսը մենակ է այդ դժնի միջավայրում: Նախկին շինովնիկի ազնիվ Պոլինան (Ժաղովի կինը) դժգոհ է իր ամուսնուց, որովհետև ուզում է նույնպես շույլ ապրել, ինչպես արդյունավոր պաշտոն ունեցող Բելոգորովի հետ ամուսնացած իր քույր Յուլինկան, Ժաղովին աղքատության համար անվերջ հանդիմանում է իր միջավայրի հարազատ ծնունդ Պոլինայի մայրը՝ փառասեր Կուկուշկինան: Նրա ազնիվ հոգին այդ միջավայ-

րում սկսում է ալյակերպվել, նա հակադրությունից անցնում է համակերպման: Իր ազնիվական գեներալ քնուց՝ Վիշնևսկուց նա ուրիշների նման խնորում է եկամտաբեր պաշտոն: Գրամատուրգը մեծ վարպետության վեր է հանում Ժաղովի հոգեկան այդ դրաման, որ ապրում է նա իր ստորացած վիճակի, իր համակերպման պատճառով:

Օստրովսկին իր ստեղծագործություններում ցույց է տվել, որ տիրող բարքերին հակադրվող մարդիկ մեծ մասամբ կործանվում են: Այդպիսին է նրա գրամատուրգիայի պսակը կազմող «Ամպրոպ»-ի հերոսուհի Կատերինան:

«Ամպրոպը» ավելի շուտ ողբերգություն է, քան դրամա: Կատերինան վաճառականական միջավայրի ծնունդ լինելով և կրելով նրա նախապաշարումները, միաժամանակ հակադրվում է իր շրջապատին: Նա այն սովորական ուսուցանանքից է, որոնք ձգտում են երջանկություն գտնել գոնե ընտանեկան կյանքում: Սակայն դաժան աշխարհում անհնարին էր իրականացնել այդ ձգտումը, որովհետև ոչ միայն հասարակական, այլև ընտանեկան հարաբերությունները խարսխված էին դրամի վրա: Սերը, անկեղծությունը, անխառն զգացմունքը, որ պետք է կաղմեն ընտանիքի հիմքը, վտարված են: Իսկական զգացմունքը գոյություն ունի ընտանեկան ճնշող շրջանակից դուրս (Կատերինա, Բորիս):

Կատերինայի ողբերգության հիմքն այն էր, որ նա գիտակցաբար չէր համարձակվում խախտել ամուսնական պարտականության ընդունված ավանդույթները: Իսկ մյուս կողմից անկեղծ զգացմունքը Բորիսի նկատմամբ և առաքինությունն ու ճշմարտասիրությունը իույլ չէին տալիս նրան վարվառայի նման խաբել, թողարկել իր իսկական զգացմունքները:

Հերոսուհու ուղբերգությունը հենց պարտականության և սիրո զգացմունքի հակադրության մեջ էր, և նա վիճակի չէր դա լուծել: Նա իր բարոյական վեճ կերպարով հակադրվում էր կաթնախիսաների և դիկոյների աշխարհին՝ ազաղակելով. «Ախ, թեք, թեք տվեք ինձ, ես ուզում եմ թուշել»:

Հերոսուհու ինքնասպանությունը բողոքի մի ցնցող ճիշ էր՝ ուղղված տիրող իրականության դեմ: Եվ այդ էր պատճառը, որ Գորբուլուբովը Կատերինայի կերպարում տեսավ «Լույսի մի շող մուսլ թագավորության մեջ»: Գորբուլուբովը տվել է Օստրովսկու պատկերած մուսլ աշխարհի հույակապ բնութագիրը: Այդ անհունորին ծանր աշխարհում, ինչպես դեպուկ բնութագրում է նա, Օստրովսկին տեսավ «Ժամացուկ կամացուկ ճաշի, բուք, տնքացող ցավի աշխարհ, բանտի գերեզմանային լուծյան աշխարհ, որ հազարագեպորեն էր միայն կենդանանում խուլ, անզոր հառաշելով: Մի հառաշ, որ երկշտորեն մարում են ձնվելուն պես: Ոչ լույս կա, ոչ շերմություն, ոչ տարածություն, նեխվածք ու խոնավություն է արձակում այդ խավար ու նեղ բանտը»:

Իթե Կատերինան ողբերգություն էր ապրում իր ընտանեկան կյանքում, ապա երջանիկ ամուսնության ձգտող զեռատի աղջիկները նույնպես, ամուսնանալով պատահական մարդկանց հետ, ողբերգական վախճանով ավարտում էին իրենց դժբախտ կյանքը: Այդ է «Անօթիտի» հիմնական

գաղափարը և նրա գլխավոր հերոսուն՝ Լարիսայի էութունը: «Անօժիտը» սքանչելի պիեսի մեջ Օստրովսկին հանդես է բերել խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ Կնուրովին և Վոժձևտովին, այս կարգի մարդկանցից է նաև բուժօճականացած Պարատովը, որը ցանկանում է իր կորցրած դիրքը վերականգնել՝ օժիտ ունեցող աղջկա հետ ամուսնանալով:

Նմաներին հեղինակը հակադրել է անօժիտ, աղքատ հարսնացու Լարիսային: Վերջինս գծագրված է իբրև հարուստ ներաշխարհ ունեցող մի աղջիկ: Նրա համար սերը լուր կրթի պոռթկում չէ, այլ վեճ, գեղեցիկ, անկաշառ և ողջ էութունից բխող մի զգացում: Սակայն եսամուլ, դրամապաշտ, այլասերված մարդկանց շրջապատը հնարավորություն չի տալիս Լարիսային գոհացնելու իր պատկերացրած և փնտրած նվիրական զգացումը: Ազնիվ, սակայն անօժիտ աղջկա փոթորիկահույզ սիրտը հանդրստանում է միայն մահվան գրիում:

Այսպիսով, Օստրովսկու երկերի միջով կարմիր գծի նման անցնում է այն միտքը, որ սեփականատիրական աշխարհում մարդը երբեք երջանիկ չի կարող լինել ոչ ընտանիքում, և ոչ էլ նրանից դուրս:

Օստրովսկու երկերում ազնվականությունը ներկայացված է որպես այլասերվող մի դասակարգ, որը պատմականորեն պետք է իր տեղը զիջի ավելի կենսունակ ու գործունյա բուրժուազիային: Սակայն չպետք է եզրակացնել, որ Օստրովսկին իդեալականացնում է քաղաքակիրթ, կուլտուրական արդյունաբերողներին ու ֆարքիկանտներին:

Դեմոկրատական պաթոսով համակված մտավորականությունը՝ արվեստագետները, ծառայողները գտնուում են Օստրովսկու ստեղծագործությունների առանցքային հերոսները: Այս կարգի բազմաթիվ կերպարներից վեճորեն բարձրանում է ողբերգակ դերասան Նեսչաստիվցևը «Անտառում»: Նա կեղծիքի, խաբուսության, ստորաքաղաքային, ամբարտաժան վաճառականների, կալվածատերերի, վաշխառուների աշխարհին հակադրվում է շիտակությամբ, ազնվությամբ, արժանապատվությունը գիտակցող մարդու հպարտությամբ, անձնազոհությամբ, հակադրվում է իր ջերմ մարդասիրությամբ: Իսկական մարդկանց դաժան սառնասրտությամբ արհամարհող բուլանովներին, գործիծակյաններին է Նեսչաստիվցևն ուղղում իր ցատունալից, հեզնախառն խոսքը. «Կոմեդիանտներ»: Ոչ, մենք արտիստներ ենք, ազնիվ արտիստներ, իսկ կոմեդիանտները դուք եք: Մենք եթե սիրում ենք՝ սիրում ենք, եթե չենք սիրում, վիճում ենք կամ կոպում, եթե օգնում ենք՝ ուրեմն աշխատած վերջին գրողով: Իսկ դո՛ւք: Դուք ձեր ողջ կյանքում հասարակության բարօրությունից եք խոսում, մարդկության նկատմամբ սիրուց: Իսկ ի՞նչ եք արել: Ո՞ւմ եք կերակրել: Ո՞ւմ եք մխիթարել: Դուք ինքներդ միայն ձեզ եք մխիթարում, ինքներդ ձեզ եք զվարճացնում: Դո՛ւք եք կոմեդիանտները, խեղդատակները, և ոչ թե մենք» (5-րդ գործող. 8-րդ պատկեր):

«Տաղանդներ և երկրպագուներ» կատակերգությունը զեղարվեստորեն ներկայացնում է այն ծանր պայմանները, այն աննախանձելի վիճակը, որի մեջ կապիտալիզմի օրով ապրում էին գավառական թատրոնի աշխատողներն ու դերասանները:

Առհասարակ թառերահան աշխարհի մարդկանց հոգեբանության վերաբարտադրությունը եղել է Օստրովսկու հետևեցողական շրջանի ստեղծագործության ուղադրության կենտրոնում: Այս պիեսից երկու տարի հետո լույս է տեսնում «Անմեղ մեղավորներ» կատակերգությունը, որի պերճախոս վերնագիրն իսկ շատ բան է ասում միջավայրն ու այնտեղ ապրող հերոսներին բնութագրելու և հեղինակի համակարանը բնորոշելու համար: Պիեսում հեղինակը հակադրում է հիմնականում երկու կարգի մարդկանց, դավառական շինովնիկներին՝ հանձին դրամասեր ու անարարյունակ Մուրովի, և ազնիվ աշխատանքով ապրողներին՝ հանձին մարդկային գեղեցիկ ու շերմ զգացմունքների տեր դերասանուհի Կրուչինինայի ու Նեզնամովի: Կրուչինային, որ նշանավոր ընտանիքից չէր ու զուրկ էր հարստությունից, լքում է սիրելիանը, որից արգեն երեխա ուներ: Դրամատուրգը վարպետությամբ ցույց է տվել, թե ինչպես սեփականատերերի աշխարհում չքավոր մարդիկ հարուստ են իրենց հոգեկան և բարոյական բարեմասնություններով: Կրուչինիան ոչ սովորական մի դերասանուհի է, կյանքից հրասթափված, փոքր-ինչ ինքնամոռի, սակավախոս, բարձր, վերին աստիճանի զգայուն: Նրա՝ մեջ շտեմված ուժով բոցավառվում են մայրական կարոտն ու սերը: Դաժան մարդկանց սառնասրտության պատճառով իրենից բաժանված է սիրասուն որդին: Գրվածքի մյուս հերոսը՝ Նեզնամովը, նույնպես հեղինակի զազափարակիրներից է: Նա, ճիշտ է, գաղափարական միջավայրում ձեռք է բերել վարվելակերպի գունճկություններ, վառական միջավայրում ձեռք է բերել վարվելակերպի գունճկություններ, սակայն նույնպես մարուր հոգու տեր է. բոլոր շրջապատը չի կարողացել սպանել ազնիվ վաստակով ապրող մարդու հոգեկան գեղեցկությունները: Նեզնամովը խորապես զգում է այն արհամարհանքը, որ տածում են շերտապատի մարդիկ իր՝ ընկեցիկ մարդու նկատմամբ: Հեղինակը ռեալիստական գունճրով ցույց է տվել, թե ինչպես ցարական Ռուսաստանում ապօրինի ծնված, արհամարհված ընկեցիկները շատ ավելի բարձր մարդկային արժանիքներ ունեն, քան շինովնիկ Մուրովն ու իր նմանները:

Այսպիսով, Օստրովսկին իր երկարատև և բեղնավոր գրական գործունեության ընթացքում զորշակ ունենալով իրականության և հետևեցողական արտադրությունը, անխնա մերկացրել է նախանեֆորմյան և հետևեցողական Ռուսաստանի տիրող դասակարգի տարբեր ներկայացուցիչներին իրենց Ռուսաստանի տիրող դասակարգի տարբեր ներկայացուցիչներին, սեռական սանտոյ այլանդակության, կենցաղային այլանդակ բարքերով և փող կուտակելու ձարճակության, կենցաղային այլանդակ բարքերով և փող կուտակելու անհագուրդ տենչով: Այդ մի աշխարհ է, ուր տիրապետողների մեջ բթացել են մարդկային գեղեցիկ զգացմունքները՝ անկաշառ սերը, անձնազոհությունը, ընկերասիրությունը, մարդասիրությունը:

Օստրովսկու համակարանը միշտ էլ եղել է իր սեփական աշխատանքով ապրող ազնիվ և շիտակ աշխատավորի, մտավորականի, կյանքից մերժվածների կողմը (Կուլիգին, Նեսչաստիվցև, Արկաշևա, Նեդիխա, Կրուչինինա, Նեզնամով, Լարիսա և այլն): Այս մարդկանց համար աշխարհը մի անանցանելի անտառ է, ուր տիրապետում են ամբարտաժան գուրմիծակյանները, սամոգուր վոսմիրատուները, գիշատիչ կորշունովները, թեթևալիկ, թերուս բուլանովները և այլն:

Ակադա արդարացի կյանքի իր հույսերը Օստրովսկին կապում էր սեփական աշխատանքով ապրող հասարակ մարդկանց հետ, որոնց մեջ ըստ վերնախավերին հատուկ եսապաշտությունը, դրամի պաշտամունքը, բարոյական այլասերվածությունը: Ահա այդ ճնշված, բայց բարոյական անբեռն անձնավորությունների մեջ նա տեսնում էր արդարացի մարդկային կյանք ստեղծելու տենչանքը, որոնք, սակայն, այն պայմաններում լրիվ կերպով չէին կարող իրենց դրսևորել: Դրամատուրգի ուսուցիչի հզորությունը այդ սովորական, սակայն բարոյական մեծ ուժի տեր մարդկանց հոգու վեհությունն պատկերման մեջ է:

Օստրովսկու գրական ժառանգությունը հսկայական է. «կյանքից առնելով» կենցաղային պիեսներ, պատմական պիեսներ ու պատմական խրոնիկա-դրամաներ, կատակերգություններ, ֆոկլորային սյուժեների հիման վրա հեքիաթ-դրամաներ: Սակայն նա մեծ ուշադրություն է դարձրել հատկապես կատակերգության ժանրին և իր անկրկնելի մեծությունը ցույց է տվել այդ բնագավառում՝ մարմնավորելով իրականությունից վերցրած բավաբխիվ կերպարներ:

Օստրովսկին ուսական դրամատուրգիա բերեց ոչ միայն նոր բովանդակություն, այլև՝ նոր ձև: Նա վերջնականապես քանդեց ողբերգական և կոմիկական ժանրի պայմանական բաժանումը և ստեղծեց թատերգություն նոր, միանգամայն թարմ տեսակ, որի մեջ կյանքի ողբերգականն ու կոմիկականը սերտորեն միաձուլված են. առաջինը՝ «խավարի թագավորություն» մեջ լուստ շողքեր փնտրողները՝ ներաշխարհը պատկերելու, իսկ երկրորդը՝ տիրող բռնակալներին ապարտությունացնող ազնվականությունները, բիրտ ու կամակոր ավազակներին ծաղրելու համար: Նրա երկերի մեջ դրամատիկական կոնֆլիկտի հետ առկա են կոմիկական դրություններ և տիպարներ («Օրինակ՝ Կուրյաշը «Ամպրոպում», Սլաստիվցկը «Անտառում», Շմազան «Անմեղ մեղավորներում»):

Ժամանակին Օստրովսկին գրել է, որ «ուս հեղինակներն ուզում են իրենց ուժերը փորձել հասարակության առաջ... որի համար պետք է ուժեղ դրամատիզմ, մեծ կոմիզմ, չեք ու անկեղծ դրացմունքներ, կենդանի և ուժեղ բնավորություններ: Եվ իրոք՝ նրան վիճակվեց իր թատերգությունների մեջ ներկայացնել Ռուսաստանում ազնվականական-վաճառականական տիրող սոցիալական կարգերի և կենցաղային հետամնաց արադիցիաների դեմ պայքարող մարդկանց դրաման: Օստրովսկին իր պիեսներում սաստիկ անողբություններ ձաղկում է տերուղների կենցաղն ու հասարակական դիրքը, նրանց բացասական էությունը, իսկ նուրբ հումորով գծագրում է մանր բուրժուական քաղցրեհիությունը և աշխատանքային մտավորականությունը: Օստրովսկին եզակի արվեստով պատկերեց Կատերինայի նման կենդանի և ուժեղ բնավորություններ՝ չեք ու անկեղծ զգացմունքներով, առանց արտաքին պաճուճանքի: Հազար անգամ իրավացի էր Գորբուչուբովը, երբ գրում էր. «Օստրովսկին կարողանում է նայել, տեսնել մարդու հոգու խորքը, կարողանում է բնական դանազանել դրսից ստացված բոլոր այլանդակություններից ու գերաճուկներից»:

Օստրովսկու պիեսների մեծ հաջողության նախապայմաններից մեկն էլ նրա լեզուն է: Նեկրասովը դեռ 1859 թվին գրել է. «Օստրովսկին կարողանում է հասարակ ժողովրդի լեզվի հետ վերարտադրել և նրա տրամաբանությունը: Այս տեսակետից նրա երկերը առանձնապես ուշագրավ են, լեզուն նրանց զլխավոր արժանիքն է»: «Պիեսների մասին» գրած իր հոդվածում Գորկին թատերական ստեղծագործությունը համարելով ամենադժվարին ճյուղը՝ գրում է, որ լեզուն թատերգության հաջողության մեծագույն նախապայմանն է. «Պիեսի գործող անձինք ստեղծվում են բացառապես և միմյանց իրենց խոսքով, այսինքն, զուտ խոսակցական, և ոչ թե նկարագրական լեզվով: Դա շատ կարևոր է հասկանալ, որովհետև որպեսզի պիեսի գործող անձինք, մարմնացնող դերասանների միջոցով բեմի վրա ստանան գեղարվեստական արժեք և սոցիալական համոզություն, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դերակատարի խոսքը լինի լափազանց ինքնուրույն, առավելագույն չափով արտահայտիչ»:

Օստրովսկու պիեսների մեծ մասը աչքի է ընկնում ոչ այնքան արագ զարգացող գործողություններով, հաճախակի փոփոխվող պատկերներով, որքան ցայտուն, բնորոշ խարակտերներով, որոնք սպառնի կերպով գծագրվում են իրենց խոսակցական ոճով, լեզվական ֆակտուրայով: Դրամատուրգի ստեղծագործության մեջ առանձնանում են աշխույժ, սրամիտ դիալոգները: Ցուրաքանչյուր նոր նախադասությունը հերոսի նկարագիրը բացահայտող մի նոր էական դիմ է պարունակում:

Նրա նման գրչի մեծ վարպետներին է հատուկ կերտել սուր, ցայտուն բազմաթիվ ու բավազան կերպարներ, որոնց թիվը 547-ի է հասնում: Տիպերի կատարյալ մի պատկերաբան, հասարակական տարբեր շերտեր, առև ազնվականություններ թեթևամիտ ու թեթևարար ներկայացուցիչներ, անբարոյական, անառակ, բամբասանք, մանր հոգու տեր կալվածատերեր, ազան ու արժանիքներ վաճառականներ:

Օստրովսկին իր դրամատիկական երկերով դերակատարի առաջ դնում է բավականին բարդ՝ գեղարվեստական, սոցիալական, հոգեբանական խրեդիրներ, բոլոր դեպքերում էլ ուղեցույց ունենալով կյանքի ուսուցողական նշանաբանի վերադարձը: Այդ նշանաբանով մեծ դրամատուրգը կատարի պայքար մղեց օտարամուտ, գաղափարազուրկ թատերական ստեղծագործությունների դեմ:

Նա գտնում էր, որ նման թեթևամիտ և թեթևարար գործեր վայել էին միայն բուրժուազիայի ճաշակին. «Բուրժուական հասարակությունը հարկավոր է շքիլ թատրոն, թարգմանական խաղացանկով... «Ենչու մենք պետք է բավարարվենք բուրժուական անճաշակությունները միայնաբար գեղականություններով»: Այս հարցում Օստրովսկու տեսակետը համընկնում է Բելինսկու տեսակետին: Բելինսկին նույնպես գտնում էր, որ ֆրանսիական վոդեվիլների ազդեցությամբ թիված ուսական վոդեվիլը եռ մի բանի պետք է բավարարվենք բուրժուական անճաշակությունները միայնաբար գեղականություններով»: Այս հարցում Օստրովսկու տեսակետը համընկնում է Բելինսկու տեսակետին: Բելինսկին նույնպես գտնում էր, որ ֆրանսիական վոդեվիլների ազդեցությամբ թիված ուսական վոդեվիլը եռ մի բանի պետք է բավարարվենք բուրժուական անճաշակությունները միայնաբար գեղականություններով»: Այս հարցում Օստրովսկու տեսակետը համընկնում է Բելինսկու տեսակետին: Բելինսկին նույնպես գտնում էր, որ ֆրանսիական վոդեվիլների ազդեցությամբ թիված ուսական վոդեվիլը եռ մի բանի պետք է բավարարվենք բուրժուական անճաշակությունները միայնաբար գեղականություններով»: Այս հարցում Օստրովսկու տեսակետը համընկնում է Բելինսկու տեսակետին: Բելինսկին նույնպես գտնում էր, որ ֆրանսիական վոդեվիլների ազդեցությամբ թիված ուսական վոդեվիլը եռ մի բանի պետք է բավարարվենք բուրժուական անճաշակությունները միայնաբար գեղականություններով»:

Ռուսական կուլտուրան ու գրականությունը 19-րդ դարի ընթացքում ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Ռուս առաջավոր կլասիկ գրականությունն անխզելի կապերի մեջ էր գտնվում բունկուլտուրային դեմ պայքարող ռուս ժողովրդի հետ: Ռուս գրականության հիմնական ստեղծագործական սկզբունքները ձևակերպվել են հենց այդ ստեղծարար կապի շնորհիվ:

1836 թվին Մելերոյ դը Վոլգուն հրեց. «Ռուս մեծ գրողների ազդեցությունը փրկարար կլինի մեր սպառված արվեստի համար»: Ռուս կուլտուրայի մեծ զարթոյնը, բարձր գեահաստիղով ռուս գրականությունը, գրեց, որ «Գեղարվեստական գրականությունը կիսաստիական բունառիական պետություն համար տեղ եմանց համաշխարհային կուլտուրայի մեջ, ինքնակալության շինած շինական պարսպը ճեղքեց և կամուրջ կառուցեց Արևմուտքի և Ռուսաստանի միջև, որպեսզի հայտնվի այնտեղ ոչ թե որպես անող, այլ տվող, ոչ միայն իրեն աշակերտ, այլ գաստիարակալ»:

Յուրացնելով Գրիբոյեդովի, Պուշկինի, Գոգոլի ստեղծագործությունների մեջ եղած ռուս ազգային կլասիկ դրամատուրգիայի լավագույն տրագիցիաները, Օստրովսկին իր ողջ ստեղծագործական հզորությունը կենտրոնացրեց հասարակական կյանքին ներհատուկ հակասությունները խտանող կերպարների կերտելու վրա: Գոնչարովի ճշմարտացի գեահաստիղամբ Օստրովսկին ժամպոստեց այն շինքը, որի հիմքի անկյունաքարը դրել էին Ֆոմկինի, Գրիբոյեդովը, Գոգոլը:

Մեծ դրամատուրգի ստեղծագործության մեջ ևս ցույց ռուս գրականության գաղափարական և բարոյական ուժը՝ հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը, տիրող իրականությունը մերկացնող և անարգանքի սյունիին գամող ուժը:

Օստրովսկու ստեղծագործության նշանակությունը ոչ միայն նրա գաղափարների հըմաբառությունն է, այլև գրամատուրգիական արվեստի կատարելության մեջ:

Օստրովսկու գործերը տպագրվել և բեմադրվել են Մովետական Միության ժողովուրդների գրեթե բոլոր լեզուներով: Նրա երկերը թարգմանվել են նաև բազմաթիվ այլ լեզուներով: Մեր օրերում մեծ դրամատուրգի թատերությունների բեմադրության ժամանակ ցույց է տրվում միանգամայն նոր և առողջ մտածողում ու մեկնաբանություն՝ բեմադրողները ցայտուն գծերով բացահայտում են հեղինակի պատկերած միջավայրի սոցիալական ներհակությունները, որ իր ժամանակ կարողացավ տեսնել և շեշտել Դորրոլլոբովը՝ գրելով. «Օստրովսկու պիեսների մեջ դրամատուրգիական կուլիգիաները տեղի են ունենում երկու պարտիաների՝ ծերերի և երիտասարդների, հարուստների և աղքատների, ինքնազուրկների և անբարբառների բայման հետևանքով...»:

Մովետական թատրոնը սիրով և լավագույն կատարողների մասնակցությամբ է բեմադրում Օստրովսկու գործերը՝ վեր հանելով նրա երկերի սոցիալական բովանդակությունը և մարդկային բեմադրությունների բազմահարուստ գծերը: Եվ որքան շատ են բեմադրում Օստրովսկուն, այնքան այլիկ ամրանում են մեր համոզումները, որ դրամատուրգի ստեղծագործությունները միշտ թարմ են ու անմեռ:

Հայ նոր թատրոնի սկզբնավորման հետ Օստրովսկու պիեսները երեւում են մեր բեմի վրա և դառնում նրա անբաժանելի զարդը:

1864 թվին Թիֆլիսի դրամատիկ խումբը Գ. Չմշկյանի ղեկավարությամբ բեմադրեց «Ուրիշի սահնակը մի նստիլ» պիեսը՝ Գևորգ Տեր-Ալեքսանդրյանի թարգմանությամբ՝ «Ով քու բարը չէ, հիդը մի ձգվի» անունով, այնուհետև «Եկամտաբեր պաշտոնը», «Բելուզինի ամուսնությունը», «Անտառը», «Ամպրոպը», «Անմեղ մեղավորները» պարբերաբար բեմադրվել են նախասովետական հայ թատրոնում:

Օստրովսկու պիեսների մուտքը հայ բեմ նկատուհան հայ թատրոնի զարգացմանը: Փաստ է, որ 60-ական թվականներից սկսած Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ս. Մանդինյանը, Պ. Պոռչյանը, Գ. Սունդուկյանը, Գ. Չմշկյանը, Ն. Ամիրխիյանը, Ն. Փոլինյանը, Ն. Ալազախյանը պայքարում էին պատմական ողբերգությունների դեմ և ամեն կերպ աշխատում ամրապնդել ռեալիստական թատրոնի և դրամատուրգիայի հիմքերը: Հայերեն թարգմանվել և խաղացվել են Օստրովսկու 14 պիես, որոնք ունեն մոտ 40 թարգմանություն: Կան թատերական երկեր, որ թարգմանվել են մի քանի անգամ: Օրինակ՝ «Անմեղ մեղավորները» ունեցել է 5 թարգմանություն, անց կատարել է 2. Աբելյանը, Ամոն Խարազյանը, Ա. Արմենյանը, Մ. Զամաթը: «Ամպրոպը» ունեցել է 4 թարգմանություն: Շիրվանդադեն էլ է թարգմանել «Ամպրոպը»՝ «Փոթորիկ» վերնագրով:

Օստրովսկու պիեսները հայ բեմի վրա դրվում էին առանձին խնամքով և հոգատարությամբ: Նրա պիեսների բեմադրությանը մասնակցել են հայ ակնավոր դերասաններից՝ Սիրանույզը (Կրուլինիկա, Յուլիևկա), Հ. Աբելյանը (Նեզնամով, Բելուզին, Ժաղով, Նեստալովիցա, Յուսով), Պետրոս Ադամյանը (Ժաղով), Ա. Մանդինյանը (Շամազ, Յուսով), Սաբինիկ Ադամյանը (Լարիսա), որին այդ օրվանից անվանեցին հայկական Կոմիսարժենսկայա, Գ. Ավետյանը (Սաախովիցա): Կատերինայի դերում հանդես են եկել հայ բեմի ակնավոր դերասաններ՝ Օ. Մայսուրյանը, Ա. Ոսկանյանը, Ժամանը, Կրուլինիկայի դերում՝ Սիրանույզը, Մայսուրյանը, Ոսկանյանը, Ժամանը:

Օստրովսկու պիեսներում սովետահայ բեմի վրա փայլուն մասնակցություն են ունեցել Համիկը, Օ. Գուլազյանը, Ս. Գուրյան-Արմենյանը, Հ. Ներսիսյանը, Գ. Մայսյանը, Ալիտ Ավետիսյանը: Նրա գործերը հայ թատրոնում բեմադրվել են անվանի ռեժիսորներ ու տաղանդավոր արտիստներ:

Ինքը, դրամատուրգն իր գրունտակուլություն է հայտնել իր պիեսները հայ բեմում ներկայացնելու և լավագույն դերակատարների կողմից խաղացվելու առթիվ: Այդ է վկայում «Եկամտաբեր պաշտոնի» բեմադրությունից հետո Օստրովսկու և Պետրոս Ադամյանի Մոսկվայում ունեցած հանդիպումը:

Մեծ դրամատուրգի թողած ազդեցությունը հայ թատրոնի և թատերգության վրա ռուս-հայ գրական կապերի ամենափայլուն էջերից է: Գ. Սունդուկյանը ընդգծում է, որ իր մտավոր և բարոյական սնունդը ստացել է ռուս գրականությունից և կուլտուրայից: Յուրի Վեռնովսկու ուղարկած հարցաթերթին նա պատասխանում է, որ ծնված ու կրթված լինելով Ռուսաստանում, անցած լինելով ռուս գիմնազիոնի, համալսարանի դասընթացները, լսած լինելով ռուս ուսուցչապետներին՝ «ես բնականորեն սլոպի գտնվելի ռուս մտավոր կյանքի ազդեցության ներքո»:

Սակայն, իհարկե, Սունդուկյանի գրական ճաշակի, նրա աշխարհայացքի և բեղհանրապես նրա ստեղծագործությունների վրա ամենամեծ ազդեցությունը թողել է Օստրովսկին, որի հետ Սունդուկյանը «բախտ է ունեցել ծանոթանալ» նրա Թիֆլիսում եղած ժամանակ: «Իմ ու նրա մեջ անմիջապես սկսվեց մտերմական-բարեկամական զրույց գրականության, թատրոնի, ժողովրդի լուսավորության գործի և այլ խնդիրների մասին»:

Առաջին հանդիպումից հետո նրանց մեջ առաջանում է փոխադարձ խոր հարգանք: Օստրովսկին Մոսկվա մեկնելուց առաջ իր հետ վերցնում է Սունդուկյանի մոտ եղած «Պեպոլի» առաջին թարգմանությունը՝ խոստանալով Մոսկվայում բեմադրել «Սակայն», ինչպես գրում է Սունդուկյանը, «Ա. Ն.-ի ցանկությունը չէր կարող իրագործված լինել նրա հիմանադրանալու և դրանից հետո շուտով վախճանվելու (1886 թ.) պատճառով՝ ի մեծ ցավ Ռուսաստանի բովանդակ մտավորականության»:

ԱՐՄԱՆԻՅԱ ԱՐՄԱՆԱ

ՔԱՆՈՒՄԱՆ ԲԱՆՈՒՄ

Ամպրոպ բարգամ.	Տ. Հախումյան	5
Անտառը բարգամ.	Ֆ. Մելոյան	81
Գայլեր և ոչխարներ	բարգամ. Ֆ. Մելոյան	195
Նկամտարհր պաշտոն	բարգամ. Լ. Աբրահամյան	316
Անօժիտը բարգամ.	Ֆ. Մելոյան	412
Անմեղ մեղավորներ	բարգամ. Ֆ. Մելոյան	508
Ա. Ն. Օստրովսկի	Ա. Բաբայան	597

Ռուս դասականների գրադարան

Ալեքսանդր Նիկոլայևիչ Օստրովսկի

ՊԵՍԵՆԵՐ

Библиотека русской классики
Александр Николаевич Островский

ПЬЕСЫ

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван — 1987

Խմբագիր՝ Է. Ռ. Մասումյան: Նկարիչ՝ Ռ. Ս. Զուլֆայան: Գեղ. խմբագիր՝
Հ. Ս. Մալխասյան: Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճաննապանյան: Վերստուգող
սրբագրիչներ՝ Օ. Ղ. Թերզյան, Ե. Ա. Ազատյան:

ИБ 5685

Հանձնված է շարվածքի 18. 12. 86 թ.: Ստորագրված է տպագրության 3.
06. 87 թ.: Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ «Գրքի
սովորական»: Տպագրություն՝ բարձր: 31,92 պայմ. տպ. մամ., 32,23 պայմ.
ներկ. թերթ, 25,8 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 50000: Պատվեր՝ 351: Գինը՝
2 ա. 40 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ,
Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегаларата Госкомитета Арм. ССР
по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9,
ул. Теряна, 91.